ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Է. Ա. ՁՈՒՐԱԲՅԱՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

1920 Թ. ՄԱՅԻՍ - 1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Զ 768

Տպագրված է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝ փիլ. գիտ. դոկտ. պրոֆ. Հ. Ղ. Միրզոյան

Զոհրաբյան Է. Ա.

Զ 768 Նախիջևանյան հիմնահարցը 1920-1921թթ./Է. Ա. Զոհրաբյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 430 էջ + 1 թ. ներդիր:

Համակողմանի լուսաբանվում են Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Նախիջևանյան հիմնահարցում տեղի ունեցած զարգացումները, խնդրի լուծման ուղղությամբ ծավալված ռազմական ու դիվանագիտական գործընթացները, ցույց է տրված հիմնահարցի տեղն ու դերը հայ-ադրբեջանական, հայ-ռուսական և հայ-թուրքական հարաբերություններում, որոնց արդյունքում Խորհրդային Հայաստանը զուրս մղվեց հիմնահարցի լուծման դիվանագիտական գործընթացից և այն փոխադրվեց ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտ:

Աչխատության առանցքային հարցերն են՝ Նախիջևանյան հիմնախնդրի արծարծումները Մոսկվայի 1920թ. հայ-ռուսական և ռուս-թուրքական բանակցություններում, ՀՀ մուսուլմանաբնակ ապստամբ չրջանների հնազանդեցումը և Նախիջևանի խնդիրը Թիֆլիսի օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրում, ռազմական գործողությունները Շարուրի ճակատում թուրք-հայկական պատերազմի ժամանակ և Շարուր-Նախիջևանն ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի, թուրք-ադրբեջանյան հակահայկական խժդժությունները Շարուր-Նախիջևանում և հիմնահարցի ադրբեջանանպաստ լուծման պատճառները Մոսկվայի ու Կարսի կոնֆերանսներում և այլն:

Նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, դիվանագետների, քաղաքագետների և Նախիջևանյան հիմնահարցով հետաքրքրվողների լայն չրջանի համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1329-0

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.
© Է. Ա. Զոհրաբյան, 2010 թ.

Նվիրում եմ որդուս՝
ՎԱՐԴԱՆ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ
պայծառ հիշատակին

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ընթերցող լայն հասարակության ուշադրությանը ներկայացվող այս աշխատությունը Նախիջևանյան հիմնահարցին նվիրված մեր եռամաս ուսումնասիրության երրորդ՝ վերջին գիրքն է, որը նախապես ծրագրել էինք լույս ընծայել 2003թ. և այդ մասին նշել էինք 2002թ. լույս տեսած երկրորդ գրքում (Նախիջևանյան հրմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտեմբեր – 1920թ. ապրիլ)։ Սակայն առողջական վիճակի կտրուկ վատթարացման և մի չարք այլ հանգամանքների պատճառով ստիպված եղանք երկար ժամանակով դադարեցնել աշխատանքը գրքի վրա։ Ահա ինչու այս գիրքը լույս աշխարհ է գալիս բավականին ուշացած, ինչի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը։

Լինելով երկրորդ գրքի օրգանական շարունակությունը՝ ժամանակագրական առումով այս աշխատությունն ընդգրկում է 1920թ. մայիսից մինչև 1921թ. հոկտեմբերն ընկած ժամանակաշրջանը։ Բավականին կարճ մի ժամանակամիջոց (մեկ և կես տարուց էլ պակաս), որի ընթացքում սակայն տեղի ունեցան այնքան բախտորոշ իրադարձություններ՝ ինչպես ողջ հայ ժողովրդի, այնպես էլ Նախիջևանի քաղաքական ճակատագրում, որ կբավականացներ մի ամբողջ դարաշրջանի համար։ Այս գրքում ընթերցողը կգտնի պատասխանը բոլոր այն հարցերի, թե ինչպե՞ս և ինչո՞ւ Ադրբեջանի խորհրդայնացումով Նախիջևանի հիմնահարցը փաստորեն դուրս մղվեց հայ-ադրբեջանական հարաբերությունների ոլորտից և այնուհետև հաջորդաբար հայտնվեց նախ հայ-ռուսական և ապա հայ-թուրքական ու ռուս-թուրքական բարդ ու հակասական հարաբերությունների հորձանուտում։ Կծանոթանա հարցի դրվածքին ինչպես մինչև Հայաստանի խորհրդայնացումը (հատկապես Մոսկվայի, Թիֆլիսի և Երևանի հայ-ռուսական բանակցություններում ու Ալեքսանդրապոլի թուրք-հայկական կոնֆերանսում), այնպես էլ խորհրդայնացումից հետո (Նարիմանովյան դեկլարացիայի լույս աշխարհ գալու իրական շարժառիթներին, Հայհեղկոմի անիրատեսական մոտեցումներին, թուրք-ադրբեջանյան հակահայկական խարդավանքներին, Մոսկվայի ռուս-թուրքական և Կարսի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսներում Նախիջևանյան հիմնա-

հարցի չուրջ ծավալված դիվանագիտական պայքարին և այլն):

Գերազանցապես արխիվային վավերագրերի, հրապարակի վրա եղած փաստաթղթերի ժողովածուներից ու նաև ժամանակի մամուլից քաղված նյութերի հիման վրա գրված այս աշխատության մեջ ընթերցողը նաև կտեսնի ու կհամոզվի, թե այդ բախտորոշ ժամանակաշրջանում հայության համար ինչպիսի կործանարար հետևանքներ ունեցավ քեմալ-բոլշևիկյան համագործակցությունը՝ թուրք քեմալականներին ամեն կերպ սիրաշահելու, նրանց բոլոր պահանջները բավարարելու գնով իբրև հակաանտանտական ուժ իր կողմում պահելու Մոսկվայի ձգտումը: Եվ եթե դրան ավելացնենք նաև այն դժբախտ իրողությունը, որ կովկասյան գործերի տնօրինությունը գտնվում էր Ստալինի ու նրա արբանյակների ձեռքում, որոնց հակահայկական կեցվածքի մասին գիտեին ոչ միայն Մոսկվայում, այլև Անկարայում, ապա պատկերը միանգամայն պարզ կդառնա:

Հանգամանքների պատահակա՞ն զուգադիպություն էր դա թե՞ մեկ այլ բան, թող ընթերցողը դատի: Իսկ մենք կխոսենք փաստերի լեզվով, քանզի համոզված ենք, որ դրանք են ճշմարտության բացահայտման միակ միջոցը: Նաև ավելացնենք, որ ելնելով այն իրողությունից, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Նախիջևանյան հիմնահարցը հաջորդաբար գտնվել է նախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ոլորտում և վերջինիս խորհրդայնացումից հետո միայն դարձել Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի հարաբերությունների խնդիր, նպատակահարմար գտանք աշխատությունը բաժանել երկու մասի.

1. Նախիջևանյան հիմնահարցը ՀՀ արտաքին քաղաքականության համատեքստում (1920թ. մայիս – դեկտեմբեր)

2. Շարուր-Նախիջևանի խնդիրը թուրք-խորհրդային հարաբերություններում (1920թ. դեկտեմբեր – 1921թ. հոկտեմբեր)

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1920 Թ. ՄԱՅԻՍ – ԴԵԿՏԵՄԲԵՐ)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ադրբեջանի խորհրդայնացումը և վիճելի տարածքների հարցը հայ-ադրբեջանական և Մոսկվայի ռուս-հայկական բանակցություններում: Շարուրի վերամիավորումը Հայաստանին (1920թ. մայիս-հուլիս)

Ադրբեջանի խորհրդայնացումը, ռազմա-քաղաքական նոր իրադրությունը տարածաշրջանում: Բաքվի ղեկավարության ագրեսիվ նկրտումները, Հայաստանի կառավարությանը ներկայացրած վերջնագրային պահանջները: Տարածքային վեճերը խաղաղորեն լուծելու ՀՀ կառավարության պատրաստակամությունը, հայ-ադրբեջանական կոնֆերանս գումարելու շուրջ դիվանագիտական գրագրությունները: Զենքի ուժով Հայաստանը խորհրդայնացնելու Օրջոնիկիձե-Նարիմանով խմբի գործունեությունը, Մոսկվայի դիրքորոշումը:

Լ. Շանթի առաքելությունը և հայ-ադրբեջանական տարածքային վեճերի խնդիրը Մոսկվայի հայ-ռուսական բանակցություններում: Չիչերինի դիրքորոշումը: Բանակցությունները ձախողելու ուղղությամբ Ադրբեջանի ղեկավարության ծավալած գործունեությունը:

ՀՀ ներքին դրության կայունացման խնդիրը, ադրբեջանական ապստամբ շրջանների հնազանդեցման անհրաժեշտությունը 1920թ. հունիս-հուլիսին: Իրադարձությունները Զանգիբասարում և Վեղիբասարում: Շարուրի ազատագրումը Թուրք-ադրբեջանական հրոսակախմբերից: Բանակցությունները Նախիջևանի մուսուլմանական խորհրդի հետ, ՀՀ կառավարության առաջարկած հաշտության պայմանները: Մուսուլմանական խորհրդի երկդիմությունը, կարմիր բանակի զորամասերի հրավիրումը Նախիջևան: Հայկական ուժերի առաջխաղացման դադարեցումը:

1920թ. գարնանը արմատապես փոխվեց ռազմաքաղաքական իրադրությունը հարավկովկասյան տարածաշրջանում: Մի կողմից՝ Ադրբեջանի խորհրդայնացումը և ռուսական 11-րդ կարմիր բանակի

հայտնվելը Հայաստանի և Վրաստանի արևելյան սահմանների վրա, իսկ մյուս կողմից՝ Անատոլիայում քեմալական կառավարության կազմավորումը, խիստ ծանր ու սպառնալից վիճակ ստեղծեցին Հայաստանի և մասամբ էլ Վրաստանի համար: Եթե դրան ավելացնենք և այն իրողությունը, որ այդ շրջանում Անդրկովկասում արդեն բրիտանական ռազմական ուժեր համարյա թե չէին մնացել (1920թ. ամռան սկզբին միայն մի փոքր ջոկատ կար Բաթումում), ապա պատկերը միանգամայն պարզ կդառնա:

Թե՛ քեմալական Թուրքիան և թե՛ Խորհրդային Ադրբեջանը տարածաշրջանում ագրեսիվ քաղաքականություն վարելու գիծ էին որդեգրել, որի կոնկրետ արտահայտությունը արտաքին քաղաքականության ասպարեզում նրանց ձեռնարկած առաջին իսկ քայլերն էին: Ընդամենը երեք օր էր անցել Անկարայում Թուրքիայի ազգային մեծ ժողովի գումարումից (ապրիլի 23), երբ Մուստաֆա Քեմալը Վ. Ի. Լենինին ուղարկած նամակում առաջարկում է Անդրկովկասի փաստական բաժանում կատարել (Ադրբեջանը և Վրաստանը մեծահոգաբար թողնելով Ռուսաստանին, նա իր վրա էր վերցնում ռազմական գործողությունները «իմպերիալիստական Հայաստանի» դեմ)[1]: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նրա խորհրդայնացումը սկզբում նույնիսկ որոշ լավատեսական տրամադրություններ առաջացրեց Հայաստանի կառավարող շրջաններում: Նման ենթադրության համար նյութ են տալիս 29-ին և 30-ին Բաքու ուղարկած երկու փաստաթուղթ, որոնցից առաջինում՝ ուղղված ժողկոմխորհի նախագահ Ն. Նարիմանովին, խոսելով այն մասին, որ մուսավաթական կառավարությունը բազմիցս փորձել է զենքի ուժով գավթել հայկական Ղարաբաղը և Զանգեզուրը և որ մարտի 22-ից սկսած հրի ու սրի է մատնում Ղարաբաղի հայկական գյուղերը, հույս է հայտնվում, որ «Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը, որը հռչակել է ժողովրդի ազատ կամարտահայտության սկզբունքը, Ղարաբաղի հարցում չի գնա մուսավաթական կառավարության հետքերով, որն իր գործողությունների համար ձեր ժողովրդի և Ձեր կողմից գլխավորվող կառավարության կողմից հայտարարված է Ադրբեջանական հանրապետության աշխատավոր ժողովրդի շահերի դավաճան և չի հապաղի ամենաշտապ միջոցներ ձեռնարկել Ղարաբաղում և Զանգեզուրում ռազմական գործողությունները դադարեցնելու ու նշված շրջաններից ադրբեջանական զորքերը հետ կանչելու համար»[1]: Երկրորդը հասցեագրված էր Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանին: Նրանում ասված էր, որ «Ադրբեջանական հանրապետության տապալված կառավարությունը քաղաքական նկատառումներով ամեն կերպ արգելակում էր նավթամթերքների արտահանումը Հայաստան, որի հետևանքով կանգ էին առնում երկաթուղիները, ալրաղացները, փռերը, բաղնիքները և արդյունաբերական ձեռնարկությունները՝ ծանր դրություն ստեղծելով Հայաստանի դեմոկրատիայի համար: **Այժմ՝ Ադրբեջանում իրական դեմոկրատական կարգի հաստատումով, Հայաստանի կառավարությունը վստահ է, որ նավթի արտահանման ամեն կարգի խոչընդոտները այսուհետ ամբողջովին կվերացվեն:** Այդ համոզումով կառավարությունը լիազորում է Ձեզ անմիջապես բանակցություններ սկսել Ադրբեջանի նոր կառավարության հետ նշված հարցի շտապ լուծման համար»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ձենք կարծում, թե Հայաստանի ղեկավարությունը զենքի ուժով հաստատված խորհրդային իշխանությունը, իսկապես, դեմոկրատական էր համարում: Ավելի շուտ դա դիվանագիտական քայլ էր՝ որոշակի նպատակ հետապնդող: Ամեն դեպքում թե՛ Նարիմանովին հասցեագրված ապրիլի 29-ի նոտան և թե՛ Մ. Հարությունյանին ուղղված ապրիլի 30-ի հեռագիրը վկայում են, որ Հայաստանի կառավարությունը փորձում էր Ադրբեջանի նոր իշխանությունների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել, վերջ տալ չհայտարարված պատերազմին Ղարաբաղում, առևտրատնտեսական փոխշահավետ կապեր հաստատել: Սակայն սպասելիքները ոչ միայն չարդարացան, Ադրբեջանի խորհրդային կառավարությունը ոչ միայն չընդառաջեց Հայաստանի խաղաղասիրական առաջարկությանը, այլև հոխորտաց, հանդես եկավ վերջնագրով ու սպառնաց պատերազմով. «Ադրբեջանյան խորհրդային հանրապետության բանվորա-գյուղացիական կառավարությունը, – ասված է Հայաստանի կառավարու-

[1] Այս նամակը Մոսկվա էր հասել միայն հունիսի 1-ին և նրան պատասխանել էր ոչ թե Վ. Ի. Լենինը, այլ արտգործժողկոմ Գ. Չիչերինը, որը հավանություն չէր տվել Մ. Քեմալի առաջարկին, այլ առաջ էր քաշել իր միջնորդությունը հայ-թուրքական կնճռի լուծման համար:

[1] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Ֆ.278,ց.1,գ.38,թ.1: «Հառաջը» չգիտես ինչու ապրիլի 29-ով թվագրված այս նոտան ներկայացրել է որպես ՀՀ արտգործնախարարի պատասխանը Ն. Նարիմանովին այն դեպքում, երբ նույն համարում տպագրել է ապրիլի 30-ով թվագրված Ադրբեջանի վերջնագիրը (տես՝ «Հառաջ», 5 մայիսի 1920թ.):

[2] Նույն տեղում, թ. 85:

թյանն ուղղած ապրիլի 30-ի նոտայում, – հանձինս հեղափոխական կոմիտեի, պահանջում է.

Մաքրել ձեր զորքերից Ղարաբաղի և Զանգեզուրի տերիտորիան,

Քաշվել դեպի ձեր սահմանները,

Դադարեցնել ազգամիջյան կոտորածը:

Հակառակ դեպքում Ադրբեջանական խորհրդային հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կհամարի պատերազմական դրության մեջ Հայաստանի Հանրապետության հետ: Վերջնագրի պատասխանի համար տրվում է 3 օր ժամանակ»[1]:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ ժողովուրդների պատմության մեջ հազիվ թե նախադեպը գտնվի, երբ ընդամենը երկու օրվա կյանք ունեցող, դեռևս չկազմավորված և սեփական բանակ չստեղծած կառավարությունը հանդես գա վերջնագրերով ու սպառնա պատերազմով: Ուրեմն, Բաքվի ղեկավարությունը հույսը դրել էր ոչ թե սեփական ուժերի, այլ ռուսական 11-րդ կարմիր բանակի վրա, ինչի մասին են վկայում այդ նույն օրը՝ ապրիլի 30-ին, ադրբեջանական զորքերին իջեցված հրամանի հետևյալ տողերը. **«Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վերջնագրի չկատարման դեպքում ձեզ օգնության կուղարկվի դաշնակցային, եղբայրական խորհրդային կարմիր բանակը, որը պատրաստ է ամբողջ աշխարհը ազատագրել բռնությունից և շահագործումից»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Եվ կարծես ի հաստատումն Ադրբեջանի կառավարության այս սպառնալիքի, մայիսի 1-ին 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը ևս վերջնագիր ներկայացրեց Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով հայկական զորքերը դուրս բերել Ադրբեջանի տարածքից, վերջ տալ ազգամիջյան կոտորածներին և բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով: **«Դա պետք է արվի 24 ժամվա ընթացքում ներկա առաջարկությունը ստանալու օրվանից,** – ասված է այդ վերջնագրում:- **Սույնի չկատարումը կդիտվի որպես հայկական կառավարության մարտահրավեր Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ խորհրդային հանրապետությանը: Առաջարկությունը կիրագործվի ռուսական կարմիր բանակի ուժերով**, հետևանքների համար պատասխանատվությունը ամբողջովին կընկնի հայկական կառավարության վրա»[3] (ընդգծումը մերն է– Է. Զ.):

[1] «Հառաջ», 5 մայիսի 1920թ.:

[2] «К истории образования НКАО Аз. ССР, 1918-1925», документы и материалы, Баку, 1989, с. 42.

[3] ՀԱԱ, Ֆ. 278, ց. 1, գ. 35, թ. 15:

Դժվար չէ պատկերացնել այն ծանր վիճակը, որ ստեղծվեց հայկական կողմի համար՝ կապված հատկապես այս վերջին վերջնագրի հետ, քանի որ նրա հեղինակները (Օրջոնիկիձե, Կիրով, Մեխոնիշին, Լևանդովսկի) խոսում էին Ռուսաստանի անունից և սպառնում Կարմիր բանակի ուժով: Ահա թե ինչու՝ ձգտելով խուսափել վտանգավոր հետևանքներից, Հայաստանի կառավարությունն այդ նույն օրը՝ մայիսի 1-ին, չտապեց պատասխանել 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության վերջնագրին, փաստելով այն իրողությունը, որ Ադրբեջանի տարածքում հայկական զորքեր երբեք չեն եղել և ներկայումս էլ չկան, այլ հակառակը՝ ադրբեջանական զորքերն են, որ հայկական Ղարաբաղում պատերազմում են աշխատավոր հայ գյուղացիության դեմ, ավերում գյուղերն ու ավաններն այն դեպքում, երբ այդ գյուղացիությունը իր մի շարք համագումարներում արտահայտել է իր անհողդողդ կամքը՝ չճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը և չմտնել նրա կազմի մեջ: «Հայաստանի կառավարությունը խնդրում է Ձեզ առաջարկել Ադրբեջանի նոր կառավարությանը դուրս բերել զորքերը հայկական Լեռնային Ղարաբաղից և այնուհետև արդեն 10-րդ անգամ կազմակերպել այդ մարզի բնակչության կամաարտահայտություն և գործել համաձայն բնակչության կամքի, – ասված է այդ նոտայում:- ...Հայաստանի կառավարությունը առաջարկում է Խորհրդային Սոցիալիստական Ռուսաստանի ներկայացուցիչներին չեզոք հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ գործի իրական դրությունը պարզելու համար»[1]: Նոտայի վերջում հույս է հայտնվում, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը թույլ չի տա ճնշում գործադրել հայ աշխատավոր ժողովրդի նկատմամբ և որ տվյալ դեպքում վերջնագրի համար ոչ մի հիմք չկա:

Ադրբեջանի կառավարության ապրիլի 30-ի վերջնագիրը ևս Երևանում մայիսի 1-ին էր ստացվել, սակայն պատասխանը անմիջապես չէր տրվել, ինչպես դա արվեց 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության վերջնագրի դեպքում, այլ հետաձգվեց մինչև մայիսի 3-ը: Դրա փոխարեն վերջնագրի բովանդակությունը շտապ հաղորդվել էր Մոսկվա՝ Վ. Լենինին և Գ. Չիչերինին՝ տեղեկացնելու նրանց Բաքվի ղեկավարության վարքագծի մասին: Դա նշանակում է, որ Հայաստանի կառավարությունը լուրջ նշանակություն չէր տվել Ադրբեջանի սպառնալիքներին, քաջ գիտակցելով, որ առանց Մոսկվայի հավանության

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 38, թ. 84:

Բաքուն չի կարող տեղից շարժվել: Այնուամենայնիվ վերջնագրի ժամկետի ավարտին՝ մայիսի 3-ին[1], պատասխան նոտա ուղարկվեց Բաքու (պատճենը Լենինին, Չիչերինին և Օրջոնիկիձեին), որտեղ կետ առ կետ հերքվում էին ներկայացված մեղադրանքները, ցույց տրվում, որ ոչ թե հայկական զորքերն են մտել Ադրբեջանի տարածք, այլ հակառակը՝ ադրբեջանական զորքերն են ներխուժել հայաբնակ շրջաններ, որոնք չեն ուզում լինել Ադրբեջանի կազմում: Բայցևայնպես «կանգնած լինելով բոլոր վիճելի հարցերի խաղաղ լուծման տեսակետի վրա և բացարձակապես դեմ լինելով որևէ ռազմական գործողության, – ասված էր նոտայում, – Հայաստանի կառավարությունը՝ համաձայնելով ապագայում նոր ընդհարումների ծագման հնարավորությունների վերացման մասին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի վերոհիշյալ կարծիքի հետ, Ձեր կառավարությանն առաջարկում է. **առաջին՝** դադարեցնել ամեն կարգի ռազմական գործողությունները, **երկրորդ՝** Հայաստանի Հանրապետության հետ բանակցություններ սկսել երկու հարևան հանրապետությունների միջև սահմանների և նորմալ հարաբերությունների վերջնական հաստատման համար»[2]:

Հայաստանի խորհրդարանի մայիսի 3-ի նիստում լսվեց արտգործնախարար Համո Օհանջանյանի հաղորդումը Ադրբեջանի նոր իշխանությունների վերջնագրի և կառավարության պատասխանի մասին ու հավանություն տրվեց վերջինիս գործունեությանը՝ հանձնարարելով «բոլոր միջոցները ձեռք առնել ապահովելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և ազատ հայրենիքի անկախությունը»[3]:

Հայաստանի կառավարության վերոհիշյալ պատասխան նոտաները բավականաչափ հիմնավոր էին կոնֆլիկտը հարթելու և ռազմական առճակատումից խուսափելու համար: Սակայն ձգտելով ամբողջովին ապահովագրվել ամեն մի արկածախնդրությունից՝ հայկական կողմը դիվանագիտական մի հաջողված քայլ էլ է կատարում. մայիսի 4-ին արտգործնախարար Հ. Օհանջանյանը շտապ հեռագրում է ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինին (պատճենը՝ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վլ. Լենինին), հայտնում, որ հենվելով Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքի մասին Խորհուրդների համառուսաստանյան երրորդ

[1] Այդպես է թվագրված արխիվային փաստաթղթում, մինչդեռ «Հառաջ»-ի մայիսի 5-ի համարում հրապարակված տեքստը կրում է մայիսի 4 ամսաթիվը:

[2] ՀԱԱ, ֆ. 278,ց.1.գ.35,թ. 24-25:

[3] **«Հառաջ»,** 5 մայիսի 1920թ.:

համագումարի որոշման և Լենինի համապատասխան դեկրետի վրա, Հայաստանի կառավարությունը Խորհրդային Ռուսաստանի կառավարությանն «առաջարկում է բանակցություններ սկսել երկու հանրապետությունների միջև պայմանագրային հարաբերություններ հաստատելու համար՝ Հայաստանի Հանրապետության անկախության և սուվերենության ճանաչման հիման վրա»[1]: Նաև հայտնվում է, որ հայկական պատվիրակությունն արդեն ուղևորվել է Մոսկվա և գտնվում է Ռուսաստանի տարածքում:

Դժվար չէ գուշակել, որ հայտնելով իր պատվիրակության մեկնելու մասին, դրանով իսկ Հայաստանի կառավարությունը ձգտում էր կանխել բանակցությունները հետաձգելու հնարավորությունը, ինչը քիչ հավանական չէր մայիսի առաջին օրերին Հայաստանի ներքին և արտաքին իրադրության պայմաններում: Ինչևիցե, Հայաստանի կառավարության դիվանագիտական քայլերը անհետևանք չեն մնում: Բացի այդ, Խորհրդային Ադրբեջանի ռազմատենչ վարքագիծը (այդ նույն օրերին վերջնագիր էր ներկայացվել նաև Վրաստանին և 11-րդ Կարմիր բանակի զորամասերին ներքաշել արյունոտ կոնֆլիկտների մեջ վրացական բանակի հետ) նաև չէր կարող արժանանալ Մոսկվայի հավանությանը ոչ միայն որովհետև, որ վերջինս չէր ցանկանում միաժամանակյա պատերազմներ մղել թե արևմուտքում (լեհական ճակատ), թե հարավում, այլև որովհետև, որ կպսակազերծվեր համաշխարհային հանրությանը որպես խաղաղարար ներկայանալու ձգտումը: Ուրեմն, նա պիտի չափավորեր Բաքվի ղեկավարության ախորժակը: Մայիսի 6-ին Ստալինը հեռագրում է Օրջոնիկիձեին՝ «մեր զորամասերի որոշ գործողությունները, ինչպես և Ադրբեջանի զորամասերի... խառնում են քարտերը և... խանգարում մեր քաղաքականության իրագործմանը»[2]: Իսկ Չիչերինի տեղեկալ Լևոն Կարախանը, Օրջոնիկիձեին ուղարկած առանձին նամակում հայտնելով Հայաստանին ուղղված Ադրբեջանի նոտայի և վերջնագրի մասին Լենինի կարծիքը, գրում է. **«Իլյիչը հանձնարարել է հաղորդել Ձեզ, որ պետք չէ շտապել մեր հետագա տարածմամբ** նախ՝ ամրապնդելու համար Ադրբեջանը, իսկ մյուս կողմից, ընդարձակումը, որը չի հարուցվել անհապաղ անհրաժեշտությամբ, ավելի լավ է հետաձգել՝ նկատի առնելով լուրջ խնդիրները արևմտյան ճակատում և զգուշություն ցուցաբերելու անհրաժեշ-

[1] ՀԱԱ, ֆ.200,ց.1.գ.556 I մաս,թ.181:

[2] Коммунист, 23 дек. 1989г.

տությունը՝ հաշվի առնելով մեր միջազգային դրությունը: Իրականում Հայաստանը մեզ համար առաջնահերթ հետաքրքրություն չի ներկայացնում, մինչդեռ շատ անհանգստություն կպատճառի: ***Հարկավոր է չանցնել նրա հետ հին Ադրբեջանի հաստատած սահմանները, վիճելի տարածքներն էլ չդրավել վերջնագրի կարգով, այլ վիճելի հարցերը լուծել խաղաղ ճանապարհով, օրինակ, երկու պետությունների խառը հանձնաժողով՝ մեր նախագահությամբ:*** *Դուք մոտիկից գիտեք հարաբերությունների բարդությունը՝ նոր փոխադարձ կոտորածի վտանգը, գումարած թուրքական փոխհարաբերությունները: Եթե մեր առաջխաղացման արդյունքում լինեն նոր փոխադարձ ջարդեր, դա լրջորեն կվնասի մեզ Անգլիայում և Ամերիկայում,* ***դրա համար էլ առաջարկում ենք սահմանափակվել Ադրբեջանով»***[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.): Մոսկվայի նման դիրքորոշումը, հասկանալի է, պետք է զգաստացներ Բաքվի տաքգլուխներին և հարկադրեր առժամանակ զերծ մնալ Հայաստանի դեմ զենք ճոճելուց: Ադրբեջանը պատերազմ չհայտարարեց Հայաստանին, Դրոյի գլխավորած հայկական զորամասերն էլ Ղարաբաղից հեռացան ոչ թե երեքօրյա ժամկետում, այլ միայն մայիսի 25-ին, իսկ Զանգեզուրը մաքրելու պահանջը գոնե գարնանային այդ օրերին օրակարգից հանվեց: Ավելին. Բաքվի ղեկավարությունը մայիսի 8-ին Հայաստանի կառավարությանը բանակցություններ սկսելու առաջարկություն արեց՝ չմոռանալով միաժամանակ մեղադրել նրան մուսուլմանական ազգաբնակչության դեմ գործած բռնությունների ու ջարդերի համար: Վերջինս էլ մայիսի 9-ի նիստում լսեց վարչապետ*[2] *և արտգործնախարար Համո Օհանջանյանի «զեկուցումը Ադրբեջանի նոթայի մասին, որով կառաջարկվեր մայիսի 15-ին նշանակել բանակցություններ Բաքվում» և որոշեց «ընդունել բանակցելը, ժողովի վայր նշանակել ոչ թե Բաքուն այլ Ղազախը: Մեր կողմե նշանակել ներկայացուցիչներ Մ. Յարութիւնեան, Պապովեան և Իւզբաշեան: Պատասխանելուց առաջ համաձայնության գալ վրաց կառավարության հետ»*[3]*: Սակայն պատասխան նոտան ուղարկվեց միայն 3 օր հետո՝ մայիսի 12-ին: Նման ուշացման պատճառը հավանաբար վրացիների հետ բանակցելն էր, ինչի մասին խոսվում է կառավարության որոշման մեջ*[1]*:*

Ինչևէ, մայիսի 12-ին ուղարկվեց պատասխան նոտա, որում ասված էր, որ Հայաստանի կառավարության դեմ Ադրբեջանի առաջ քաշած մեղադրանքները հարկադրում են հայտարարելու, որ հեղաշրջման միջոցով խանբեգական, մուսավաթական կառավարությանը փոխարինելու եկած, այսպես կոչված հեղափոխական, սոցիալիստական կառավարությունն ըստ էության ոչ մի փոփոխություն չի մտցրել Ադրբեջանի պետական և քաղաքական կյանքում, որ Հայաստանին ներկայացված վերջնագրային բնույթի նոտաները ոչնչով չեն տարբերվում նախկին կառավարության համանման նոտաներից: Այնուհետև հիմնավորապես հերքվում էին Հայաստանում մահմեդականների նկատմամբ բռնություններ գործադրելու վերաբերյալ Ադրբեջանի մեղադրանքները, ցույց էր տրվում, որ վերջինս է Նուխիում, Արեշում, Ելիզավետպոլում, Շամախում, Ղարաբաղում և Գողթանում մասսայական գազանություններ կատարել, բայցևայնպես, Հայաստանի կառավարությունը՝ իր մշտական խաղաղասիրությունից ելնելով, ընդունում է բանակցություններ սկսելու և բոլոր վիճելի հարցերը խաղաղորեն լուծելու առաջարկը «որպես լիազոր ներկայացուցիչներ նշանակելով Բաքվում դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանին, Ղարաբաղ մեկնած Անդրկովկասյան կոնֆերանսի պատվիրակներ Պապովյանին ու դոկտոր Յուզբաշյանին...»[2]*: Որպես բանակցությունների վայր առաջարկվում էր Ղազախ քաղաքը:*

Հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ այս նոտայի պատճենները ևս ուղարկվել էին Մոսկվա՝ Լենինին և Չիչերինին: Սակայն ժամանակն անցնում էր, իսկ Բաքվից պատասխան չէր ստացվում: Պատճառն այն էր, որ մայիսյան այդ օրերին Բաքվի ղեկավարությունը և 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը՝ խրախուսվելով Օրջանիկիձեի կողմից, փորձում էին օգտագործել Հայաստանում ծայր առած բոլշևիկյան շարժումները և զենքի ուժով խորհրդային կարգեր հաստատել այնտեղ, առանց նախապես Մոսկվայի համաձայնությունը ստանալու: Նման ինքնագործունեության արդյունք էր մա-

---

[1] *Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր. 2000թ., էջ 190:*

[2] *ՀՅԴ բյուրոյի որոշումով 1920թ. մայիսի 5-ին Ալ. Խատիսյանի փոխարեն վարչապետի պաշտոնը ստանձնեց արտգործնախարար Հ. Օհանջանյանը:*

[3] *ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ.133 I մաս, թ.78:*

[4] *Հայաստանի և Վրաստանի միջև դաշնակցային որևէ պարտավորություն չկար: Ուղղակի Կարմիր բանակի Ադրբեջան մտնելուց հետո մայիսին որոշ բանակցություններ վարվեցին ռազմական գործողությունների համաձայնեցման հնարավորության ուղղությամբ, որոնք ավարտվեցին անարդյունք:*

[2] *ՀԱԱ,Ֆ. 278, ց.1, գ.35, թ. 5-6:*

յիսի 20-ին Կարմիր բանակի մի զորաջոկատի մուտքը Քարվանսարա և Դիլիջան: Նպատակը, անշուշտ, միմիայն հայ կոմունիստներին օգնության հասնելը կամ էլ խորհրդային սահմանների ընդարձակումը չէր, ոչ էլ հայ ժողովրդի նկատմամբ տածած սերը: Նարիմանովին և նրա շուրջը համախմբված թուրք ազգայնականներին Հայաստանի շուտափույթ խորհրդայնացումը պետք էր նաև նրա համար, որ կանխվի ապրիլին Սան-Ռեմոյի կոնֆերանսում նախագծված և առաջիկայում Սևրում կնքվելիք պայմանագրով մեծ Հայաստանի ստեղծումը:

Զորքեր մտցնելով Հայաստան, Օրջոնիկիձեն միայն երկու օր հետո է հեռագրում Մոսկվա և Հայաստանում ռազմական գործողություններ ծավալելու իրավունք խնդրում: Պատասխանելով Օրջոնիկիձեին (մայիսի 23-ին) Լևոն Կարախանը հայտնում է, թե Ստալինը Հայաստանի մասին տեղեկությունները անբավարար է համարում և համոզված չէ, որ հայկական զորքերը դիմադրություն ցույց չեն տա, ուստի և այդ ուղղությամբ ձեռնարկվող գործողությունները անժամանակ է համարում, քանի որ ամեն ինչ հատկացվում է լեհական ճակատին: Կարախանը միաժամանակ առաջ է քաշում վիճելի տարածքների գրավման միջոցով Թուրքիայի հետ կապի հաստատման խնդիրը. «Ես անձամբ գտնում եմ, որ մեր զորքերը Թուրքիայի հետ չփման լիակատար հնարավորություն պետք է ստանան, - ասված է հեռագրում:- Այդ խնդիրը պետք է իրականացվի, բայց անհրաժեշտ է ընտրել ռազմական ուժերի ամենաքիչ վատնման ուղին: Ես հայտնել եմ քեզ, որ հարկավոր է Հայաստանի կառավարությունից պահանջել ռուսական զինվորական ուժերով հայ-մուսուլմանական խառը բնակչությամբ տարածքները գրավելու համաձայնություն»[1]: Այնուհետև ընդգծելով, թե դա նշանակում է, որ ռուսական զորքերին պետք է թույլատրվի դուրս գալու թուրքական սահմանի վրա, Կարախանը ավելացնում է, թե դա պետք է բացահայտ անել, «որպեսզի ողջ Հայաստանը իմանա մեր այդ պահանջի մասին և հասկանա մեր ցանկությունը՝ կանխելու ամեն մի պրովոկացիա և ազգային կոտորած»: Իսկ վերջում, թե «հայտնեցեք Ձեր նկատառումները, և գլխավորը՝ տվեք Ստալինի համար նկատառումներ հոգուտ այն բանի, որ հայկական զորքերը և բնակչությունը մեզ կընդունեն առանց դիմադրության կամ, եթե դիմադրություն լինի, Դուք հարցը կլուծեք առանց դժվարության և առանց ռուսական նոր զորամասերով ձեզ ուժեղացնելու անհրաժեշտության»[2]:

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1-2, 1993, էջ 212:
[2] Նույն տեղում:

Օրջոնիկիձեն Կարախանին (պատճենը՝ Լենինին և Ստալինին) պատասխանում է հաջորդ օրը՝ մայիսի 24-ին: «Հայաստանը կարելի է պայթեցնել, - գրում է Օրջոնիկիձեն, - բայց, ինչպես ես նշել եմ, դա առաջ կբերի չափազանց մեծ մթերային դժվարություններ: **Ձեմ կարծում, թե դաշնակները համաձայնեն թույլ տալ մեր զորքերի և զենքի անցում Թուրքիա**: Ամեն դեպքում այն, ինչ դուք առաջարկում եք՝ Թուրքիա անցնելու բացահայտ պահանջ ներկայացնել Հայաստանին, հայ զանգվածների մեջ դայրույթ կառաջացնի: **Առայժմ, կգրավենք Նախիջևանի շրջանը, Օրդուբադը, Ջուլֆան, իսկ հետո կտեսնենք**»[1] (ընդգծումը մերն է- Է. Զ.): Ինչպես տեսնում ենք, դեռևս մայիսին բոլշևիկյան իշխանությունները մտածում էին Թուրքիա ոչ միայն զենք, այլև զորք ուղարկելու մասին՝ հույների դեմ պատերազմում թուրք ազգայնականներին օգնելու համար: Անհետաքրքիր չէ նաև Նախիջևանը, Օրդուբադը, Ջուլֆան գրավելու Օրջոնիկիձեի ինքնավստահ հայտարարությունն այն առումով, որ այդ օրերին Դրոյի կորպուսը դեռևս Ղարաբաղում էր (հեռացել է մայիսի 25-ին), բացի այդ, վերը նշված շրջանները գրավելու համար նախ պետք է գրավվեր Զանգեզուրը, որն այնքան էլ հեշտ գործ չէր:

Հեռագրում Օրջոնիկիձեն հայտնում է նաև, որ նամակ է ստացել Քեմալ փաշայից, որը օգնություն է խնդրում և առաջարկում դաշինք, որ նամակ կա նաև Խալիլի համար և ավելացնում. «...մեր ընկերների միջոցով հայերն առաջարկում են մեր նախագահությամբ լուծել Թուրքա-Հայաստանի մարզում հայերի և թուրքերի միջև վիճելի հարցերը: Այդ հարցի վերաբերյալ համաձայնության գալու դեպքում Հայաստանը Թուրքիայի հետ ազատորեն հաղորդակցվելու հնարավորություն կտա»[2]:

Հեռագրից պարզ չէ, թե ո՞ր հայերի մասին է խոսքը, թեև պարզ է, որ չէր կարող իշխող կուսակցությունից լինել: Ուշագրավ է սակայն, որ Օրջոնիկիձեի հաղորդած այդ լուրը Մոսկվայում ուշադրության չի էլ առնվել: Հաջորդ օրը՝ մայիսի 25-ին, ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն քննարկման հարց դարձրեց Հայաստանի խորհրդայնացման հարցը և որոշեց. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ՝ մեզ վրա ռուսական զորքերի օգնությամբ անհապաղ խորհրդայ-

[1] "Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества". Документы и коментарии. Составитель и редактор Ю. Барсегов, т. 2, ч. 1, М. 2003, стр. 60-61.
[2] Նույն տեղում, էջ 61:

նացման նախաձեռնություն չվերցնելով: **Միջոցներ ձեռնարկել Նախիջևանը հին Թուրքական կառավարության և Անտանտի ազդեցությունից ապահովելու համար»**[1] (ընդգծումը մերն է- Է. Զ.):

Քաղբյուրոյի այս որոշումը վկայում է, որ Մոսկվան գերադասում էր Անատոլիայի հետ կապը իրականացնել Նախիջևանի վրայով և ոչ Հայաստանի, որի խորհրդայնացումը հեշտ խնդիր չէր համարում: Իսկ թե ինչու էր կարծում, որ Նախիջևանը Անտանտի ազդեցության տակ կարող է ընկնել, անհասկանալի է, քանի որ վերջինս այդ ժամանակ Անդրկովկասում չնչին ուժեր ուներ: Առավել անհասկանալի է հին Թուրքական կառավարության մասին ասվածը, որի իշխանությունը փաստորեն Ստամբուլից այն կողմ չէր տարածվում:

Քաղբյուրոյի այս որոշումը խառնեց Հայաստանը անհապաղ խորհրդայնացնելու ջատագովների հաշիվները, և նրանք հարկադրված եղան առժամանակ տեղի տալ: Մայիսի վերջին օրերին տեղեկանալով, որ հայկական զորքեր են մոտենում Դիլիջանին, Օրջոնիկիձեն հարկադրված եղավ Կարմիր բանակի զորամասերը հետ կանչել Ադրբեջան, որոնք հեռանալով՝ իրենց հետ բռնությամբ տարան նաև ՀՀ ներքին գործերի նախարարի օգնական Մանասյանին, գեն. Բաղդասարովին և մի շարք այլ պաշտոնատար անձանց: Իսկ Բաքվում էլ ձերբակալվել էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը:

Զախողվելով Հայաստանը անհապաղ խորհրդայնացնելու հարցում՝ Օրջոնիկիձեն, Նարիմանովը և նրանց շրջապատը որոշում են ձեռքերը ծալած չնստել, այլ ձեռնարկել վիճելի հռչակած տարածքների գրավումը, մանավանդ որ Նախիջևանի վերաբերյալ ՌԿ(բ) ԿԿ Քաղբյուրոյի մայիսի 25-ի որոշումը նման հնարավորություն ընձեռում էր: Մայիսի վերջերին[2] Մոսկվա՝ Լենինին, Ստալինին, Չիչերինին ուղարկած հեռագրում՝ խոսելով այն մասին, որ հայ և մահմեդական ազգաբնակչությունները ուրախությամբ են ընդունում ռուսական Կարմիր բանակին, միաժամանակ ավելացնում է. «...կարծում եմ, որ Շուշու, Նախիջևանի, Օրդուբադի, Ջուլֆայի շրջանները կգրավվեն առանց հայերի կողմից դիմադրության»[3]: Բաքվի շահագրգռվածությունը՝ ռուսական զորքերով այդ տարածքների գրավման խնդրում, պատճառաբանվում է նաև նրանով, որ դրանով իսկ կկանխվեր վիճելի տարածքների պատկանելիության հարցի քննարկումը Մոսկվայում մայիսի վերջին սկսված ռուս-հայկական բանակցություններում: Իսկ թե ինչպես է վերաբերվել Գ. Չիչերինը Օրջոնիկիձեի և Բաքվի ղեկավարության կողմից տարվող այդ քաղաքականությանը, պարզ երևում է Լենինին հասցեագրած նրա հունիսի 29-ի նամակից, որտեղ անդրադառնալով մայիսի 25-ին Ադրբեջանում ծագած հակախորհրդային ապստամբությանը և Նախիջևանի մոտ Թուրքական ուժերի հայտնվելու վերաբերյալ Մդիվանու հաղորդմանը, ավելացնում է. «Իրերի նոր դրությունը պետք է անդրադառնա մեր պլանների վրա Անդրկովկասում և հարկադրի մեզ ավելի զգուշորեն վերաբերվել հարձակողական պլաններին. ընկ. Օրջոնիկիձեն, Մդիվանին, Նարիմանովը և մյուս **ընկերները սկզբնապես ձգտում էին զենքը ձեռքներին և՛ Վրաստանում, և՛ Հայաստանում խորհրդային կարգեր մտցնելուն,** և ծայր աստիճան հիասթափվեցին, երբ մեր ԿԿ դա մերժեց: Մինչև այժմ ընկ. Նարիմանովը իր հեռագրերում վերադառնում է անհապաղ ամբողջ Վրաստանը և Հայաստանը խորհրդայնացնելու իբրև թե անհրաժեշտության մտքին: Երբ Բաքվի ընկերները ստիպված եղան հրաժարվել այդ պլանից, նրանց մոտ, այդուհանդերձ, պահպանվեց Վրաստանի և Հայաստանի դեմ հարձակողական գործողությունների մարտավարություն: **Մենք հարկադրված էինք շատ էներգիա վատնել համարյա ամենօրյա միջամտությունների վրա՝ մեր ընկերներին հարձակողական գործողություններից ետ պահելու նպատակով»**[1] (ընդգծումը մերն է- Է. Զ.):

Թե որքանով է Չիչերինին հաջողվել Նարիմանովի խմբին հետ պահել Հայաստանի նկատմամբ հարձակողական գործողություններից կտեսնենք հետագա շարադրանքում: Իսկ հիմա ուզում ենք ասել, որ Համո Օհանջանյանի կառավարությունը, կողմնակից լինելով վիճելի հարցերը խաղաղ բանակցությունների միջոցով լուծելուն, այնուամենայնիվ չէր կարող Ադրբեջանի կառավարության ագրեսիվ գործողությունները թողնել անպատասխան: Մայիսի 25-ին վարչապետ և արտգործնախարար Համո Օհանջանյանը հեռագրով դիմում է Բաքվում Պարսկաստանի հյուպատոսին, խնդրում իր վրա վերցնել Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության չենքի, ծառայողների, Ադրբեջանում ապրող Հայաստանի քաղաքացիների հովանավորությունն ու պաշտպանությունը[2]: Իսկ մայիսի 31-ին Ադրբեջանի

---

[1] Նույն տեղում, էջ 212-213:

[2] Արխիվային այդ փաստաթղթի վրա ամսաթիվ չի նշված, բայց դատելով նրա բովանդակությունից՝ պետք է դրված լինի մայիսի վերջին օրերին:

[3] РГАСПИ, ф. 85, оп. 13, д. 41, л. 1.

---

[1] «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1-2, 1993թ., էջ 224:

[2] Տե՛ս „Геноцид армян...", т. 2, ч. 1, стр. 62.

արտգործժողկոմ Հուսեյնովին ուղարկած նոտայում բողոքելով Իջևանում պաշտոնատար անձանց գերեվարելու և Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանին ձերբակալելու համար, Հայաստանի արտգործնախարարը միաժամանակ հայտնում է, որ ի պատասխան Բաքվի վերոհիշյալ գործողությունների՝ Երևանում տնային կալանքի տակ են վերցված նախկին ադրբեջանական ներկայացուցչության բոլոր անդամները[1]:

Հանրապետությունների միջև նման լարված իրադրության պայմաններում բնական է, որ կոնֆերանսի գումարման մասին խոսք լինել չէր կարող: Եվ միայն այն բանից հետո, երբ Բաքուն ազատ արձակեց դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանին, Հայաստանի կառավարությունը նորից բարձրացրեց հայ-ադրբեջանական կոնֆերանս գումարելու հարցը: Հունիսի 21-ին Մ. Հարությունյանը իր կառավարությունից ստանում է հետևյալ ռադիոհեռագիրը.

«Ձեր հեռագիրը ստանալուն պես կառավարությունը անհապաղ կարգադրություն արեց հանելու տնային կալանքը նախկին ադրբեջանական միսիայից: Խնդրում եմ որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ կապվել ադրբեջանական կառավարության հետ և ստանալ մեր հեռագրերի պատասխանը. **առաջին,** կոնֆերանսի գումարման վերաբերյալ՝ խաղաղ բանակցություններ վարելու համար, **երկրորդ,** Մանասյանի, Ջաղեթյանի և մյուսների ազատման հարցի մասին:

Անհրաժեշտ է պարզել նախկին ադրբեջանական ներկայացուցչության իրավական դրությունը, որին մենք առայժմ պաշտոնապես չենք ճանաչում՝ նոր կառավարությունից լիազորությունների բացակայության պատճառով...»[2]:

Թեև Մ. Հարությունյանը Հուսեյնովին խնդրել էր ռադիոհեռագրում բարձրացված հարցերին պատասխանել հնարավորինս շուտ, բայց ադրբեջանական կողմը բոլորովին չէր շտապում: Հունիսյան այդ օրերին Բաքվի ուշադրությունը ամբողջովին բևեռված էր Մոսկվայի վրա, որտեղ ընթացող հայ-ռուսական բանակցություններում պետք է լուծում ստանար նաև վիճելի տարածքների հարցը: Խոսքը Լևոն Շանթի և Գ. Չիչերինի գլխավորած պատվիրակությունների միջև ընթացող բանակցությունների մասին է, որոնք սկսվեցին մայիսի վերջին և շարունակվեցին մինչև հուլիսի սկիզբը:

[1] ՀԱԱ, Ֆ. 278, ց. 1, գ. 38, թ. 100:

[2] Նույն տեղում, թ. 29:

* * *

Լևոն Շանթի առաքելության և Մոսկվայի ռուս-հայկական բանակցությունների ընթացքն ու արդյունքները լուսաբանված են դեռևս 1997 թ. լույս տեսած մեր «1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները» գրքում[1]: Ուստի այստեղ մենք կանգ չենք առնի բոլոր այն հարցերի վրա (Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչում, նրա ներքին գործերին չմիջամտելու պարտավորվածություն, արևմտահայ նահանգները Հայաստանի Հանրապետությանը միացնելու սկզբունքի ընդունում, ռուսահայերի Հայաստան գաղթելու իրավունքի ճանաչում, Առաջին աշխարհամարտի հետևանքով հայ ժողովրդին հասցված վնասների հատուցում և այլն), որոնք քննարկման նյութ են դարձել, այլ կանդրադառնանք հայ-ադրբեջանական տարածքային վեճերի և հատկապես Նախիջևանի հարցում Ռուսաստանի դիրքորոշմանը:

Նախ՝ արձանագրենք, որ Շանթի պատվիրակությունը կառավարությունից ցուցում էր ստացել Մոսկվայից պահանջել Հայաստանի մաս ճանաչելու Ադրբեջանի կողմից վիճելի հայտարարված Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը: Դատելով հունիսի 1-ին Լևոն Շանթի Թիֆլիս՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին ուղարկած հեռագրից, բոլշևիկյան կառավարությունը բարյացակամորեն էր տրամադրված և Հայաստանի «պահանջները համարում էր արդարացի», բայց Բաքվի ճնշման տակ տատանվում էր և հապաղում պայմանագրի կնքման հարցում: «Կառավարությունն այստեղ երկար տատանումներից ու խորհրդակցություններից հետո վերջապես երեկ երեկոյան հայտնեց մեզ իր որոշումը, – ասված է հեռագրում, – որը, ըստ էության, հանդիսանում է Բաքվի պահանջը, այն է վիճելի համարել Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը և Շարուր-Դարալագյազը, գրավել այդ մարզերը ռուսական զորքերով մինչև վեճի ավարտը, խառը հանձնաժողովով Կովկասում հաստատել վերջնական սահմաններ»[2]: Այնուհետև չնչտելով, որ պատվիրակությունը վճռականապես մերժել է այդ առաջարկությունը՝ վիճելի համարելով միմիայն Ղարաբաղը, Շանթը ավելացնում է, թե «այժմ մեր կարծիքով, երեք ելք կա. **Առաջին,** կնքել պայմանագիր՝ վիճելի հայտարարելով Ղարաբաղը և Զանգեզուրը Ելիզավետպոլի,

[1] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, «1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները», Երևան 1997թ. էջ 47-77:

[2] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 112:

Ղազախի և Աղստաֆայի հետ միասին՝ պայմանով, որ զորքերը մնան իրենց տեղերում և առաջ չանցնեն: Այդ դիրքը, հավանաբար, կընդունեն: **Երկրորդ**, պայմանագրում Հայաստանի տարածքը հիշատակելով ընդհանուր բառերով՝ կազմված Կարսի, Երևանի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի և Բաթումի մարզերի մասերից, սահմանների որոշման հարցը հանձնելով ռուսների միջնորդությամբ խառը հանձնաժողովին մի կողմից Վրաստանի, մյուս կողմից Ադրբեջանի հետ՝ պայմանով, որ զորքերը մնան այնտեղ, որտեղ ներկայումս են: Այդ դեկլարատիվ ձևը իսկույն ևեթ կընդունվի: Կարող է նույնիսկ հնարավոր լինի մի քիչ ավելի կոնկրետացնել տարածքը: **Երրորդ**, պնդել միայն Ղարաբաղի վիճելի լինելու վրա, որով, հավանաբար, համաձայնությունը կհետաձգվի, մենք կվերադառնանք, իսկ բանակցությունները կշարունակվեն մեզ մոտ՝ նրանց նշանակված ներկայացուցչի հետ:

Այդ երեքից չարիքի փոքրագույնն մենք համարում ենք առաջինը՝ եթե պայմանագիրը դուք համարում եք անպայման անհրաժեշտ: Ձեր որոշումը և հրահանգները շտապ հեռագրեցեք հեռագրաթելով և ռադիոյով...»[1]:

Ստանալով Շանթի հեռագիրը՝ Տ. Բեկզադյանը այն հաղորդեց Երևան (Երևանի և Մոսկվայի միջև ուղիղ հեռագրակապ չկար) և այնտեղից ստացած հրահանգների հիման վրա հունիսի 16-ին պատասխան հեռագիր ուղարկեց Շանթին, որում ասված էր.

«**Առաջին**, խնդրում եմ անհապաղ պարզաբանել Խորհրդային կառավարությանը Բաքվի հայ բոլշևիկների իրական պատկերը, որոնք Հայաստանի մասին ամբաստանագրեր և կեղծ տեղեկություններ են ուղարկում Մոսկվա: Մատնանշեք, որ Հայաստանում երբեք չաշխատած այդ մարդիկ, անծանոթ նրա իրական կարիքներին և դրությանը, քողարկվում են կոմունիզմի դրոշով՝ հետապնդելով իրենց շահադիտական նպատակները: Թիֆլիսում կոմունիստական կուսակցության երկրային կենտրոնի հայ գաղափարական կոմունիստները վճռականորեն դեմ են արտահայտվել Հայաստանում կոմունիստների ելույթներին և հայտնել են նրանց իրենց կշտամբանքը: **Երկրորդ**, հնարավոր բոլոր միջոցներով ձգտեցեք արագացնել մեր անկախության և Հայաստանի սահմանների պաշտոնական ճանաչումը: Պնդեցեք Ղարաբաղից խորհրդային զորքերի անհապաղ դուրս բերման վրա: Հայտնում եմ Ձեզ ի գիտություն, որ նրանց ներկայությունը կազմալուծող ազդեցություն է ունենում մեր գյուղացիության վրա Ղարաբաղում և նույնիսկ կից Զանգեզուրում և այդ հարցում ամեն մի հապաղում կարող է լուրջ բարդություններ առաջացնել Հայաստանի մյուս մասերում ևս: Դրոն իր ջոկատով Ղարաբաղից հետ է քաշվել Զանգեզուր:

Երրորդ, Հայաստանի և նրա շրջապատող պետությունների միջև միջնորդությունը համարում ենք ընդունելի:

Չորրորդ, նկատի առնելով ֆինանսական ծանր ճգնաժամը, ձգտեցեք օգտագործել Հայաստանի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը ստանալու մեզ համար հնարավոր և ընդունելի օգնություն: Այդ հարցը առաջ քաշեք ծայրահեղ զգուշությամբ, առանց մեր կողմից քաղաքական պարտավորության՝ նրան հաղորդելով բացառապես ֆինանսական բնույթ»[1]:

Տպագիր այս փաստաթղթի վերջում ձեռագրով կետեր են ավելացված նավթի, հացի և այլ պահանջների մասին:

Ինչպես տեսնում ենք, Բաքվի բոլշևիկների ակտիվ միջամտությունը Մոսկվայում ընթացող բանակցություններին անհանգստացնում էր նաև Հայաստանի կառավարությանը: Ցավալին այն է, որ դրանց շարքում քիչ չէին նաև հայ կոմունիստները: Սակայն այդ հարցի մանրամասնումը մեր խնդիրը չէ, առավել ևս, որ բանակցությունների այդ փուլում (մինչև հուլիս), Խորհրդային կառավարությունը, ինչպես վերը նշվեց, բարյացակամորեն էր տրամադրված և ձգտում էր անպայմանորեն գործն ավարտել պայմանագրի կնքումով:

Խորհրդային Ռուսաստանի կառավարության բարյացակամության, Հայաստանի պահանջները ճանաչելու և համապատասխան պայմանագիր ստորագրելու պատրաստակամության մասին վկայում է նաև Շանթի պատվիրակության անդամ Համբարձում Տերտերյանը 1954թ. «Հայրենիք» ամսագրում տպագրած իր հուշերում:

Նա գրում է, որ երկրորդ տեսակցության ժամանակ[2], որը տեղի էր ունեցել հավանաբար հունիսի կեսերին, կայացվեց համաձայնություն՝ Ղարաբաղը վիճելի, իսկ Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին: Ուրիշ ուղղակի վկայություններ չկան այս մասին, բայց Տերտերյանին էլ չհավատալ՝ չենք կարող: Առավել ևս, որ բանակցությունների հաջող ընթացքի մասին խոսվում է նաև պատվիրակության մեկ այլ անդամի՝ Լևոն Զարաֆյանի հունիսի 10-ի հեռագրում. «Օրերս կձևակերպվի մեր

[1] Նույն տեղում, թ. 112-113:

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 88:

[2] Բանակցությունները կրել են տեսակցությունների բնույթ, հրավիրվել են ռուսական պատվիրակության կողմից և վարվել բանավոր:

միսիայի քաղաքական մասը, – ասված է հեռագրում, – որի մասին կհայտնենք կիրակի օրը...»[1]: Ուստի պետք է ընդունենք, որ Շանթի պատվիրակությունը պնդել է հունիսի 1-ի հեռագրում նշված երրորդ տարբերակի վրա (միայն Ղարաբաղը վիճելի, իսկ Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին), իսկ ռուսական կողմն էլ ընդառաջել է: Ընդհանրապես Հ. Տերտերյանը այս տեսակցությունը համարում է ամենաարդյունավետը, դրականորեն էին լուծվելու մյուս հարցերը ևս (Չիչերինը ստանձնելու էր միջնորդությունը Հայաստանի և քեմալական Թուրքիայի միջև՝ ապահովելու ելք դեպի Սև ծով և Արևմտյան Հայաստանի որոշ մարզերի միացումը Հայաստանի Հանրապետությանը[2], դրականորեն պետք է լուծվեին նաև մշակութային և տնտեսական խնդիրները): Պայմանավորվել էին նաև, որ ռուսական կողմը կնախապատրաստի պայմանագրի նախագիծը և կներկայացնի ստորագրության երկու օրվա ընթացքում: Սակայն կայացած համաձայնությունը գործի չվերածվեց. օրերն անցնում էին, իսկ ռուսական կողմը շարունակում էր խորհրդավոր լռություն պահպանել: Նա կարծես թե մոռացել էր թե՛ Շանթի պատվիրակության, թե՛ կնքվելիք պայմանագրի մասին: Հ. Տերտերյանը այս կապակցությամբ գրում է. «Պարզ էր, որ կայացած համաձայնությունը անակնկալ և անախորժ արգելքների էր հանդիպել թանձր վարագույրի ետևում»:

Իսկապես որ, հունիսի երկրորդ կեսին Մոսկվան սկսեց հեղեղվել Բաքվից և Կովկասում գործող ղեկավար կոմունիստներից ստացված հեռագրերով, որոնք՝ խոսքները մեկ արած, պահանջում էին պայմանագիր չստորագրել Հայաստանի հետ: Մանոթանանք դրանցից մեկերկուսին: Հունիսի 19-ին Չիչերինը ստանում է Օրջոնիկիձեի հետևյալ հեռագիրը Վլադիկավկազով.

«Ադրբեջանը հավակնում է Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառների վրա: Ղարաբաղում և Զանգեզուրում հայտարարված է խորհրդային իշխանություն և վերոհիշյալ տարածքները իրենց համարում են Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության մաս: Նախիջևանը արդեն մի քանի ամիս է ապստամբ մուսուլմանների ձեռքում է: Շարուր-Դարալագյազի վերաբերյալ ես տեղեկություններ չունեմ:

Ադրբեջանը առանց Ղարաբաղի և Զանգեզուրի ոչ մի կերպ չի կարող մնալ: **Ընդհանրապես, իմ կարծիքով հարկավոր էր Մոսկվա հրավիրել Ադրբեջանի ներկայացուցչին և նրա հետ միասին լուծել Ադրբեջանին և Հայաստանին վերաբերող բոլոր հարցերը: Դա պետք է անել մինչև Հայաստանի հետ պայմանագրի ստորագրումը, զաքաթալչչինայի[1] կրկնությունը նաև հայերի հետ այստեղ մեզ վերջնականորեն կտապալի»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Մեկ այլ գրության մեջ՝ ուղղված Լենինին, Ստալինին, Չիչերինին, որտեղ Օրջոնիկիձեն խոսում է այն մասին, որ եթե Նախիջևանը և Շարուր-Դարալագյազը խոստացվի Հայաստանին, ապա վերջինս կհամաձայնի ստորագրել պայմանագիր Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին անցնելու մասին, ավելացնում է. «Կարող եմ Ձեզ հավաստիացնել, որ մենք բավականին պարզ պատկերացնում ենք մեր խաղաղության քաղաքականությունը և իրագործում ենք այն, բայց ես վստահ եմ և իմ խորը համոզմունքն է, որ Ադրբեջանում խորհրդային իշխանության ամրապնդման և Բաքուն մեզ պահելու համար անհրաժեշտ է միացնել Լեռնային Ղարաբաղը... **Այդ հարցի այլ լուծումը մեր դրությունը Ադրբեջանում դարձնում է խախուտ և ոչինչ չի չահում Հայաստանում:** Ես գերազանց հասկանում եմ, որ հայտնի քաղաքական իրադրության դեպքում Հայաստանը կարող է մեզ պետք գալ: Որոշեք, ինչպես հարմար եք գտնում: Մենք կիրագործենք ամենը, ինչ մեզ կկարգադրվի, բայց թույլ տվեք տեղեկացնել ձեզ, որ **Ադրբեջանի նկատմամբ վերաբերմունքը խիստ վարկաբեկում է մեզ Ադրբեջանի լայն զանգվածների աչքում և ստեղծում վերին աստիճանի նպաստավոր հող մեր՝ հակառակորդների աշխատանքի համար»**[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Օրջոնիկիձեից, Նարիմանովից և Ադրբեջանի մյուս ղեկավարներից բացի հունիսյան այդ օրերին զգալի ակտիվություն ցուցաբերեցին նաև մայիսյան ապստամբությունից հետո Բաքվում ապաստանած հայ կոմունիստները: Զայնակցելով Նարիմանովին, Հուսեյնովին և մյուսներին՝

---

[1] **Ս. Ալիխանյան**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921), Եր., 1966, էջ 108:

[2] Բանակցությունների առաջին իսկ օրը պարզ դարձավ, որ Չիչերինին ավելի չատ հետաքրքրում էր հայ-թուրքական կնճիռը և առաջարկում էր իր միջնորդությունը նրա լուծման գործում: Մինչդեռ Շանթի պատվիրակությունը այդ հարցը քննարկելու լիազորություն չէր ստացել և ամեն ջանք գործադրում էր խուսափելու Չիչերինի առաջարկությունից (մանրամասն տես **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 48-60):

[1] Ռուս-վրացական պայմանագրով (1920թ. մայիս) Ադրբեջանի կողմից վիճելի հայտարարված Զաքաթալայի շրջանը հանձնվել էր Վրաստանին, ինչը և առաջ էր բերել Բաքվի ղեկավարության դժգոհությունը:

[2] «К истории образования НКАО Аз. ССР, 1918-1925.» стр. 49-50.

[3] Նույն տեղում, էջ 32-33:

նրանք Մոսկվա ուղարկեցին մի չարք նամակներ ու հեռագրեր, որոնցում ամեն կերպ վատաբանում էին Հայաստանի կառավարությանը, պահանջում նրա հետ պայմանագիր չկնքել ու ոչ մի զիջում չանել: Ոմանք նույնիսկ իրենց ստորագրությունը դրեցին վիճելի տարածքների վերաբերյալ Ադրբեջանի ղեկավարության Մոսկվա ուղարկած գրությունների տակ: Սակայն այդ ապազգայնացած կոմունիստների կարծիքին Զիչերինը ուշադրություն չէր դարձնում: Հունիսի 26-ին Օրջոնիկիձեի հետ հեռախոսային խոսակցության ժամանակ Զիչերինն այդ կապակցությամբ ասել էր. «Նկատի ունեցեք, որ Երրորդ ինտերնացիոնալի հայկական խմբի տեսակետը վճռականորեն տարբերվում է Բաքվի ընկերներից: Մենք պետք է բացարձակապես անկողմնակալ դեր խաղանք, ես Հայկունու հետ երկար խոսակցություններում ինձ համար պարզել եմ այդ տարաձայնությունները, որոնց մասին լավ գիտեմ Նարիմանովից: Վերջինիս հետ ես չատ ընկերացել էի նրա այստեղ գտնվելու ժամանակ և գիտեմ նրա միակողմանիությունները...»[1]:

Փորձելով հակազդել Բաքվի ճնշումներին, Զիչերինը հատուկ գրությամբ դիմում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրո, առաջարկում «սանձահարել Բաքվի ընկերներին», որոնք իրենց անկարգապահությամբ առաջ են բերում խոսքի և գործի հակասություն, խախտում են Կենտկոմի կողմից հաստատված քաղաքական գիծը: «Բաքվի ընկերները իրենց գործողություններով խափանում են կոմպրոմիսները, – ասված է այդ գրությունում, – մերժում են Հայաստանի հետ համաձայնագիր ստորագրելու Կենտկոմի պահանջը, օժանդակում են ապստամբություններին, պնդում են Ադրբեջանին միացնել այն վիճելի տարածքները, որոնք որոշված է գրավել մեր ուժերով և որոնց միացումը Ադրբեջանին, միանգամայն անհնարին են դարձնում Հայաստանի հետ համաձայնությունը»[2]: Այդ ամենը կանխելու և Բաքվի ղեկավարության գործունեությունը վերահսկելու նպատակով Զիչերինն առաջարկում է հատուկ հեղինակավոր ներկայացուցիչ ունենալ Բաքվում, որն ի վիճակի կլինի տեղական գործիչներին հետ պահել կամայականություններից:

Հունիսի 22-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն քննության առավ Զիչերինի առաջարկը և որոշեց հանձնարարել Արտգործժողկոմատին

[1] „Геноцид армян...", стр. 74.

[2] ՀՀ-Ն 1918-1920թթ., փաստաթղթերի..., էջ 212:

հստակ հրահանգներ մշակել Արևելքում գործող աշխատակիցների համար և պատասխանատու ռազմական գործիչներին պարտավորեցնել իրենց գործողությունները համապատասխանեցնելու Քաղբյուրոյի հաստատած որոշումների ու ցուցումների հետ: Հատուկ ընդգծված էր Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամներին և Կիրովին ու Լեգրանին այդպիսի ցուցումներ տալու անհրաժեշտությունը[1]:

Ի՞նչ ցուցումների մասին է խոսքը, փաստաթղթում ոչինչ չի ասված: Բայց, որ ռազմական գերատեսչությունը հաճախ էր գործում ինքնագլուխ, առանց իր քայլերը Արտգործժողկոմատի հետ համաձայնեցնելու, դա ակնհայտ է: Հենց այդ օրը՝ հունիսի 22-ին Կարմիր բանակի գլխավոր հրամանատարությունը 11-րդ Կարմիր բանակին Զանգեզուրը, Նախիջևանը, Օրդուբադը և Ջուլֆան գրավելու հրաման էր տվել: Իսկ վերջինս էլ իր հերթին երեք հոգուց բաղկացած մի պատվիրակություն էր ուղարկել Հայաստանի կառավարությանը համոզելու, որ այդ գրավումների նպատակը Նախիջևանը Թուրքական ներխուժումից փրկելն է[2]:

Ահա թե որքան հակասական է եղել Մոսկվայի քաղաքականությունը: Մինչ արտգործժողկոմ Զիչերինը հայ պատվիրակներին խոստանում էր Զանգեզուրը և Նախիջևանը թողնել Հայաստանին, զինվորականներն այդ նույն գավառները գրավելու հրաման են ստանում:

Անփոփոխ չի մնում նաև Զիչերինի դիրքորոշումը: Հ. Տերտերյանը վկայում է, որ հունիսի վերջերին Զիչերինը հայ պատվիրակներին նորից հրավիրեց տեսակցության և հայ-ադրբեջանական սահմանագծման հարցում ներկայացրեց նոր առաջարկ. «Ղարաբաղը Ադրբեջանին, Զանգեզուրը վիճելի, Նախիջևանը Հայաստանին»: Հ. Տերտերյանը նաև նշում է, որ ինքը և Զարաֆյանը համաձայն էին այդ սկզբունքով համաձայնագրի ստորագրմանը. «Լևոն Զարաֆյանը և տողերիս գրողը այն կարծիքին էինք, որ անմիջապես պետք է ընդունել Զիչերինի առաջարկը և ստորագրել պատրաստված ռուս-հայկական դաշնագրությունը, որով նախ ապահոված կլինենք Հայաստանի անկախության պաշտոնական ճանաչումը Խորհրդային Միության (Ռուսաստանի – Է. Զ.) կողմից, և երկրորդ՝ թաթարաբնակ Նախիջևանի չրջանը կդառնար մեր հանրապետության անվիճելի հողամասը: Ինչ վերաբերում է Զանգեզուրի խնդրին, նրա վիճելիության պարագան համարում էինք զուտ

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 211:

[2] Տե՛ս **Ս. Ալիխանյան**, նշվ. աշխ., էջ 124-125:

ձևական և ժամանակավոր բնույթ ունեցող, որովհետև այդ խնդիրը լուծվելու էր տեղական բնակչության ցանկության համաձայն: Ղարաբաղի խնդրում, գտնելով հանդերձ Խորհրդային Միության առաջարկը միանգամայն անիրավացի, համամիտ էինք ժամանակավորապես համակերպվելու, ունենալով այն խորը համոզումը, որ Ղարաբաղի ազատասեր և ըմբոստ հայությունը վաղ թե ուշ պիտի միանար իր Մայր Հայրենիքին՝ Հայաստանի Հանրապետությանը»[1]: Սակայն այլ կարծիքի էր պատվիրակության նախագահ Լևոն Շանթը: Վկայակոչելով կառավարության հրահանգը, ըստ որի՝ պատվիրակությունը լիազորված չէր զիջելու Ղարաբաղը, նա պահանջեց նախ հարցում անել կառավարությանը և դրական պատասխանի դեպքում միայն ընդունել Զիչերինի առաջարկը: Իզուր անցան Տերտերյանի և Զարաֆյանի ջանքերը՝ համոզելու Շանթին, որ Երևան դիմելը կձգձգի հարցը, իսկ այդ ընթացքում Ռուսաստանի դիրքը կարող է նորից փոփոխվել, որ բանակցություն վարող պատվիրակությունը պետք է որոշ ազատություն ունենա և գործի ստեղծված պայմաններին համապատասխան: Շանթը անդրդվելի էր և որոշեց ծածկագիր-հեռագրով դիմել Երևան՝ համաձայնագրի ստորագրելու համար կառավարության հավանությունը ստանալու նպատակով:

Տերտերյանի և Զարաֆյանի գուշակությունը ճիշտ դուրս եկավ. Համո Օհանջանյանի կառավարությունը հարցումին պատասխանեց շուրջ մեկ ամիս հետո, որում ոչ միայն մերժում էր Զիչերինի նոր առաջարկությունը, այլև տարածքային նոր պահանջ էր առաջ քաշում, այս անգամ Դաշտային Ղարաբաղի մասին: Արտգործնախարարության թիվ 10 տեղեկագրում (1920թ. հուլիսի 25-ով թվագրված) «Մենք և Սովետական Ռուսաստանը» բաժնում կարդում ենք. «Կառավարությունը հրահանգել է մեր Մոսկվայի պատվիրակությանը, որ պայմանագրի կնքելը ցանկալի է: **Վիճելի կարող են նկատվել Ղարաբաղը իր դաշտային մասով, Գանձակի շրջանը, Ղազախ քաղաքը և Աղստաֆան իր երկաթուղային ելքով**: Այդ վիճելի տեղերից ռուսական զորքերը պիտի հեռանան և այդ հողամասերը պիտի կառավարվեն տեղական ժողովրդի կողմից: **Հայաստանի Հանրապետությունը չի կարող ընդունել Ռուսաստանի իրավախոհությունը Ադրբեջանի հետ ունեցած վեճերի համար, եթե վճռող կողմերը իրենք համաձայնության չգան, արբիտրը լինելու է հաշտարար կոնֆերանսը**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

[1] «Հայրենիք» ամսագիր, 1954թ., թիվ 2, էջ 16:
[2] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 54:

Հայաստանի կառավարության այս նոր հրահանգը այնքան տարօրինակ էր ու զարմանալի, որ հայ պատվիրակները որոշեցին այդ մասին չհայտնել ռուսներին. «**Անչափ զարմանք պատճառեց մեզ մեր կառավարության նման հրահանգը**, – գրում է Տերտերյանը, – **քանի որ Դաշտային Ղարաբաղի մասին մեր կողմից երբեք խոսք չէր եղել:** Եվ այսօր հանկարծ նոր հարց էր հարուցվում: Հազար ու մի ենթադրություններ արինք ու վերջը եկանք այն եզրակացության, որ հաղթական դաշնակիցները ինչ-որ երաշխիքներ են տվել մեր կառավարությանը բոլշևիկների հանդեպ, և մեր կառավարությունը՝ իրեն չատ զորավոր զգալով, արհամարհում է Զանգեզուրի վրայով դեպի Նախիջևան արշավող Կարմիր բանակը և **Դաշտային Ղարաբաղի հարց հարուցանելով ցանկանում է Մոսկվայի բանակցությունները ձգձգել ու հետաձգել: Ստեղծված պայմաններում պատվիրակությունը բարվոք համարեց որևէ խնդիր չհարուցանել մեր կառավարության նոր առաջարկի մասին**»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Որ Համո Օհանջանյանի կառավարությունը տարված էր պատրանքներով և չէր տեսնում, թե ինչ է կատարվում հանրապետության շուրջը ու չէր փորձում իրատեսական քաղաքականություն վարել, այլ անվերապահորեն հայացքն ուղղել էր Արևմուտքին, դա անառարկելի է և այդ հանգամանքը արձանագրել են բոլոր ուսումնասիրողները: Եվ իսկապես. 1920թ. ամռանը անգլիական վերջին զինվորները հեռացել էին Անդրկովկասից, Ադրբեջանը վաղուց խորհրդայնացել էր, Վրաստանը հաշտության պայմանագիր էր ստորագրել Ռուսաստանի հետ, իսկ 11-րդ Կարմիր բանակի զորամասերը պատրաստվում էին Զանգեզուրի վրայով մտնել Նախիջևան: Այսպիսի պայմաններում ո՞ւմ կամ ինչի՞ վրա էր դրել իր հույսը Հայաստանի կառավարությունը նման քաղաքականություն վարելով ու խուսափելով Ռուսաստանի հետ պայմանագրի ստորագրումից: Բայց մենք այն կարծիքին չենք, թե Մոսկվյան բանակցությունների ձախողման պատճառը միայն Հայաստանի կառավարության այդ վերջին պահանջն էր Դաշտային Ղարաբաղի մասին: Ո՛չ ինչպես տեսանք այդ պահանջի մասին Զիչերինին նույնիսկ չէր հայտնվել: Իսկ վերջինս էլ չէր սպասել մինչև Երևանից պատասխան ստացվի, այլ Բաքվի և Անկարայի ճնշման տակ տեղի էր տվել և որոշել բանակցությունները փոխադրել Երևան:

Բանն այն է, որ հունիսի վերջերին կովկասյան կոմունիստները և

[1] «Հայրենիք» ամսագիր, 1954թ., թիվ 2, էջ 16:

Ադրբեջանի ղեկավարությունը ավելի ու ավելի մեծացրել էին ճնշումը Մոսկվայի վրա: Դա աներկբա հաստատում են արխիվային փաստաթղթերը: Միայն Օրջոնիկիձեն հունիսի երկրորդ կեսին վիճելի տարածքների հարցով երեք հեռագիր է ուղարկել Մոսկվա՝ Լենինի, Ստալինի, Չիչերինի հասցեով, որոնցում պաշտպանում էր Ադրբեջանի իրավունքը Հայաստանի հետ վիճելի տարածքների հարցում: Իսկ 27-ին Լենինը ստանում է Նարիմանովի ընդարձակ հեռագիրը, որում ոչ միայն խոսվում էր վիճելի տարածքների մասին, փաստորեն մերժում Չիչերինի դիրքորոշումն այդ խնդրում, այլև այդ հարցը կապում Արևելքում հեղափոխական շարժումների հեռանկարի հետ: Դա տիպիկ նարիմանովյան փաստաթուղթ է՝ հեղեղված և՛ սպառնալիքներով, և՛ կեղծ բարեպաշտությամբ: Կարծում ենք արժե այդ փաստաթուղթը ներկայացնել ամբողջությամբ, որպեսզի ընթերցողն էլ տեսնի, թե ում հետ գործ ուներ հայ ժողովուրդը. «Թանկագին ընկ. Լենին, – գրում է Նարիմանովը, – ընկ. Չիչերինի հեռագրերից երևում է, որ Կենտրոնի տեղեկատվությունը միակողմանի է: **Կենտրոնն ընկել է նրանց ազդեցության տակ, ովքեր մինչև այժմ դենիկինյանների հետ մեկտեղ գործում են Ադրբեջանի խորհրդային իշխանության դեմ: Եթե Կենտրոնին ցանկալի է Ադրբեջանը զոհաբերել և իրեն պահել միայն Բաքուն, նավթը և ամբողջովին հրաժարվել արևելյան քաղաքականությունից, թող դա անի, բայց զգուշացնում եմ. Բաքուն չի կարելի պահել առանց ամբողջ Ադրբեջանի՝ դավաճան դաշնակների և վրացական մենշևիկների հարևանությամբ:** Մյուս կողմից ես կուզենայի իմանալ, թե Կենտրոնը ինչպե՞ս է նայում մեզ՝ մուսուլման-կոմունիստներիս վրա և ինչպես նա կարող է այդպիսի կարևոր հարցերը լուծել առանց մեզ: Կենտրոնը կարող է մեզ անվստահությամբ վերաբերվել, բայց չէ որ կենտրոնի որոշմանը համաձայն չեն (այնպիսի) պատասխանատու աշխատակիցներ, ինչպես Օրջոնիկիձեն և Մդիվանին: Ես ուզիղ կասեմ. կենտրոնը մեր ձեռքից խլեց զենքը և Ղարաբաղի մասին իր որոշումով ուժեղացրեց, հիմնավորեց Մուսավաթի պրովոկացիան, որը անընդհատ ասում է, իբր մուսուլման-կոմունիստները Ադրբեջանը ծախել են Ռուսաստանին, այն Ռուսաստանին, որը միաժամանակ ճանաչում է Հայաստանի և Վրաստանի ինքնուրույնությունը և չգիտես ինչու մինչև Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը անվիճելի մարզերը, այժմ համարում է վիճելի: Ընկ. Չիչերինը խոսում է կենտրոնին ենթարկվելու մասին, բայց արդյո՞ք կենտրոնը միաժամանակ հաշվի է առնում այն, որ նա հարկադրում է մեզ վարագույր լինել: **Հակահեղափոխությունը ճնշված է, բայց նա չնչում է և պատրաստ է նոր ուժով բռնկվել, քանի որ կենտրոնը մեզ դրել է այնպիսի պայմաններում, որ չուտով ի վիճակի չենք լինի գործել խոսքի ուժով, այլ միայն զենքի ուժով:** Ահա մեր դրության ողբերգությունը: Այն, ինչ ամիս առաջ մեզ հնարավորություն էր տալիս ջախջախել մուսավաթականների պրովակացիաները, հիմա մենք զրկված ենք այդ հնարավորությունից: Մեզ ասում են, դուք չեք կարողանում Ադրբեջանին ամրակցել միանգամայն անվիճելի տարածքները, իսկ խոսում եք Արևելքի ազատագրության մասին: Մենք անպայման կենթարկվենք ԿԿ-ի որոշմանը, միաժամանակ հայտարարում ենք. **մենք, կորցնում ենք ազդեցությունը զանգվածների մեջ, մենք օգտվում էինք հսկայական ազդեցությունից և կարող էինք միանգամայն անցավագին իրականացնել երկու հանրապետությունների միավորման մասին դեկրետները,** բայց այժմ դա հնարավոր է միայն զենքի ուժով: Ճանապարհվում է մեր ներկայացուցիչը, ուստի խնդրում և աղաչում եմ ժամանակավորապես կանգնեցնել Ադրբեջանի մասին կենտրոնի որոշումը: Նարիմանով»[1] (ընդգծումները մերն են – Է. Զ.):

Նահվթ, մուսուլմանական Արևելք, հեղափոխություն, իշխանության կորուստ և այդ ամենը «դավաճան դաշնակների» պատճառով, որոնք դենիկյանների հետ միասին պայքարում են Ադրբեջանի դեմ, և որոնց, ըստ Նարիմանովի, միացել է նաև Չիչերինը: Ի՞նչ տպավորություն թողեց այս հեռագիրը Լենինի վրա: Պարզվում է, որ երկու օր պահելուց հետո ուղարկել է Չիչերինին՝ առաջարկելով «երկու խոսքով կարծիք» գրել և հայտնել, թե հնարավոր չէ՞ Նարիմանովի հետ հարցերը խաղաղությամբ լուծել:

Չիչերինի պատասխանը բավականին ընդարձակ է ու չափազանց հետաքրքիր: Նրանում ոչ միայն վիճելի տարածքների վերաբերյալ Արտգործժողկոմատի դիրքորոշումն է հիմնավորված, այլև բացահայտված է նարիմանովյան քաղաքականության էությունը, կովկասյան կոմունիստների (Օրջոնիկիձե, Մդիվանի և այլն) գործելակերպը և որ առամձնապես կարևոր է՝ Գ. Հայկունու գլխավորած Հայաստանի կոմունիստական կուսակցության դրքորոշումը վիճելի տարածքների հարցում: Ուստի հարկ է, որ Չիչերինի կարծիքը ևս ներկայացնենք ամբողջությամբ: Նա գրում է. «Ադրբեջանից ոչ ոք ոչինչ չի խլում: Ղարաբաղը և այդպես կոչված **վիճելի** տարածքները **ժամանակավորապես** գրավվում են ռուսական խորհրդային զորքերով, և մենք **ժամա-**

[1] „Геноцид армян...", стр. 75.

Նակավորապես դրանք չենք տալիս ո՛չ Հայաստանին, ո՛չ Ադրբեջանին: Դա չի կողոպտում ո՛չ մեկին, ո՛չ մյուսին: ***Ամեն մի այլ լուծում մեզ կդներ մեկին՝ ի վնաս մյուսի, հովանավորելու կեղծ ուղու վրա:*** Ես այդ մասին շատ եմ խոսել Երրորդ Ինտերնացիոնալի հայկական խմբի ներկայացուցիչների, այժմ այնտեղից եկած հայ կոմունիստների ԿԿ-ի ներկայացուցիչների, Էլիվայի, Կիրովի և մյուսների հետ: ***Մեր լուծումը միակ հնարավորն է:*** Ղարաբաղը վաղեմի հայկական տարածք է, բայց հայերի ջարդերից հետո հարթավայրերում բնակվեցին թաթարները, իսկ հայերը մնացին լեռներում: Մենք այժմ ***այդ շրջանը չենք տալիս հայերին,*** որպեսզի չնեղացնենք թաթարներին: Բայց մենք այն չենք տալիս թաթարներին, ինչը խորապես սխալ քայլ կլինի՝ խաղաղարների մեր անհրաժեշտ քաղաքականությանը հակասող: Բայց Նարիմանովը ուզում է Բաքվի թաթարների զավթողական հավակնություններին գոհացում տալ: Դա անթույլատրելի է: Բայց Նարիմանովը հեռուն է գնում, նա դեմ է բուրժուական Վրաստանի և բուրժուական Հայաստանի հետ կոմպրոմիսի մեր քաղաքականությանը: Բայց Վրաստանի և Հայաստանի խորհրդայնացումը ԿԿ-ի կողմից նրա համար է մերժվել, որ **գերազանցում է** մեր ներկայիս ուժերը: Մենշևիկները և դաշնակները չեն հանձնվի առանց կատաղի կռվի: Մենք ընտրել ենք նրանց աստիճանական քայքայման ուղին, որն արդեն դրսևորվում է: Տրոցկին էլ ինձ հանդիմանեց արևելյան քաղաքականությամբ չափից ավելի տարվելու համար: Հայ կոմունիստների ԿԿ-ի անդամները ասում են, որ մայիսի 1-ին Հայաստանում զանգվածների տրամադրությունը ամենախորհրդայինն էր, և այդ օրը ստացվում է Ադրբեջանի վերջնագիրը Ղարաբաղի և Զանգեզուրի մասին. խկույն ամեն ինչ փոխվեց, խկույն դաշնակները ամրացան: Մուսուլմանական տենդենցների քաջալերման նարիմանովյան քաղաքականությունը, որին միանում է Օրջոնիկիձեի և Մդիվանու ***հարձակողական*** քաղաքականությունը, տանում է դեպի դաշնակների ուժեղացում, արյունալի կոնֆլիկտների, ճգնաժամերի սրացում: Խալիլ փաշան այնտեղ մերոնց ասել է, եթե հայերը մեր ճանապարհին են, նրանց կարելի է կոտորել: Այդ արյունալից լարվածություններին է տանում մուսուլմանական բաղձանքների հովանավորման քաղաքականությունը: Ելքը մեկն է՝ ***օբյեկտիվ*** երրորդի մեր դերը: Գալիս է պահը Վրաստանի և Հայաստանի խորհրդայնացման համար, այդ ժամանակ այդ ամենը կվերանա: Չիչերին»[1] (ընդգծումները Չիչերինինն են):

[1] Նույն տեղում, էջ 75-76:

Չիչերինյան այս տողերը կարդացողը չի կարող չընդունել, թե որքան ճիշտ էր նա հասկացել նարիմանովյան քաղաքականության էությունը և հեռահար նպատակները: Խորհրդային պետական բարձրաստիճան գործիչների շարքում փաստորեն նա միակն էր, որ տեսնում էր այն վտանգը, որ կարող է կախվել հայոց գլխին՝ «մուսուլմանական բաղձանքներին» և Թուրք փաշաներին հովանավորելու հետևանքով: Միայն ափսոսալ կարելի է, որ խորհրդային պետական համակարգի պայմաններում էականորեն ազդել արտաքին քաղաքականության ձևավորման վրա նա չէր կարող: Հետագա շարադրանքում դեռ կտեսնենք, որ բոլշևիկների որևեյան քաղաքականությունն ամբողջովին տնօրինում էր Ստալինը և իրականացնում կովկասյան իր արբանյակների միջոցով: Կտեսնենք նաև, թե նա ինչպես էր վերաբերվում Հայկական հարցին և հայերին ընդհանրապես: Իսկ առայժմ, որպես նախերգանք, ծանոթանանք Չիչերինին ուղարկած նրա նամակին, որ գրել էր Սմոլենսկից դեռևս մեկ տարի առաջ՝ 1919թ. օգոստոսի 16-ին, և որում պահանջում էր Լևոն Կարախանին հեռացնել արտգործժողկոմատից, որովհետև նա ծագումով հայ է: Նամակի սկզբնամասում երկար դատողություններ անելով այն մասին, թե ինքը զարմացած է, որ մուսուլման պատվիրակները՝ շրջանցելով Արտգործժողկոմատը, գերադասում են իր հետ գործ ունենալ, իր հետևից գնում են Պիտեր, Սմոլենսկ և այլն, հետևություն է անում, թե երկար մտածելով գտավ, որ պատճառը Արտգործժողկոմատում ազգությամբ հայ Կարախանի առկայությունն է, ինչը իբրև թե խանգարում է իրենց «մուսուլմանական» քաղաքականությանը: «Քանի որ մեր «մուսուլմանական» քաղաքականությունն արդարացվել է, արդարացվում է և դեռ կարդարացվի (մենք նվաճել ենք պարսիկների, Թուրքերի, աֆղանների և մյուսների համակրանքը), - գրում է Ստալինը, - այդքանով Կարախանի ներկայությունը Արտգործժողկոմատում՝ ազգությամբ հայ, միակ «արևելյան մարդը», որ կոչված է արտաքին աշխարհի համար ներկայացնել Արևելքի ժողովուրդները՝ ծակում է լսողությունը և խախտում մեր արևելյան քաղաքականության ներդաշնակությունը, թուլացնում Արևելքի ժողովուրդների և առաջին հերթին մուսուլմանների աչքում մեր քաղաքականության ուժն ու էֆեկտը»[1]: Զարգացնելով այն միտքը, որ չկա իրենց արևելյան քաղաքականությունը ձախողելու ավելի հարմար միջոց, քան այդ նպատակի համար հայերի օգտագործումն է, որոնց «մուսուլմաններն ընդհանրապես, իսկ Թուրքերը հատ-

[1] Նույն տեղում, էջ 33:

*կապես, մաքսիմում անվստահություն են տածում», Ստալինը շարունակում է. «Ելնելով այդ նկատառումներից, ես՝ **Մոսկվայում գտնվելու ժամանակ, առաջարկել եմ ընկեր Լենինին, հարց հարուցել ԿԿ-ում Կարախանին մուսուլմաններից որևէ մեկով՝** թեկուզ միջին կուսակցական նախապատրաստությամբ, **փոխարինելու մասին»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

*Նամակի հետագա շարադրանքից պարզվում է, որ Ստալինն արդեն ուներ այդպիսի թեկնածու և այդ մուսուլմանը Նարիմանովն է: «Նարիմանովն ինձ համար այդ բազմաթիվ մուսուլմաններից մեկն է, – կարդում ենք նամակում, – ըստ որում **դժբախտություն չէ, եթե նրա մոտ բացակայում է լայն քաղաքական հեռանկարը. քաղաքականությունը նա չի անելու իհարկե, այլ ԿԿ-ն, և Արտգործժողկոմատը, – Նարիմանովը կարևոր է որպես դրոշակ:** Դեկորացիաների այդպիսի փոփոխությունը, կամ ամեն դեպքում Արևելքի հարցերում Կարախանին ստվերում պահելը և մուսուլմանի առաջքաշումը առաջին պլան՝ ես գտնում եմ բացարձակապես անհրաժեշտ: Եթե դա հետաքրքիր է, կարող եմ հայտնել, որ ընկ. Լենինը այդ առթիվ արտահայտել է իր լիակատար համաձայնությունը: Այդպիսի փոփոխությունը իսկույն մուսուլմանների կողմից հաշվի կառնվեր, կբարձրացներ մեր քաղաքականության կուրսը վերջիններիս մեջ, կտար մի շարք պլյուսներ: **Առարկությունն այն մասին**, որ Նարիմանովը ծանոթ չէ Հեռավոր Արևելքին, որ նա ծեր է և դանդաղ է կողմնորոշվում, ինձ համար վճռական նշանակություն չունի, քանզի ես երբեք չեմ մտածել, որ Նարիմանովը պետք է ղեկավարի արևելյան քաղաքականությունը, նա ինձ համար, կրկնում եմ, միայն դրոշակ է, դեկորացիա»*[2] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Այսպիսին է Ստալինի գործելաոճը: Նրան անհրաժեշտ են միայն «դրոշակներ», և ոչ մտածող ու բանիմաց գործիչներ: Ծայրահեղ դեպքում կարող է համաձայնել, որ այդ «դրոշակների» կողքին լինեն նաև մեկ կամ երկու ռուսներ կամ ընդհանրապես «արևելյան» աշխատակիցներ, բայց ոչ երբեք հայեր: «Բոլոր այս նկատառումների վերաբերյալ, – եզրափակում է Ստալինը, – ես ստիպված եմ պնդել իմ հին առաջարկության վրա, որը ես անհրաժեշտ եմ համարում ԿԿ-ի պլենումի քննարկմանը դնել»[3]*:*

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 34:*

Չենք կարող ընթերցողի ուշադրությունը չհրավիրել Ստալինի բնավորության մեկ այլ կողմի վրա ևս. դա այն տիրական և առարկություններ չընդունող տոնն է, որով նա խոսում է Չիչերինի հետ: Կարծես թե ինքն է կառավարության նախագահը: Մինչդեռ խորհրդային պետական համակարգում նա այն ժամանակ ընդամենը զբաղեցնում էր Ազգությունների գործերի ժողկոմի պաշտոնը: Ճիշտ է, նա նաև ՌԿ(բ)ԿԿ Քաղբյուրոյի անդամ էր, և վայելում էր Լենինի վստահությունը, բայց չուներ այն դիրքը, ինչ ձեռք բերեց հետագայում՝ Լենինի մահվանից հետո: Պետական համակարգում և Քաղբյուրոյի կազմում կային շատ հայտնի գործիչներ՝ Տրոցկին, Զինովևը, Կամենևը և ուրիշներ: Հատկապես առաջինը, որը համարյա Լենինին հավասար հեղինակություն ուներ և զբաղեցնում էր ՌԽՖՍՀ ռազմահեղափոխական խորհրդի նախագահի պաշտոնը: Կարծում ենք Նարիմանովի հունիսի 27-ի գրության վերաբերյալ Լենինին ուղարկած կարծիքով Չիչերինը պատահական չէր հիշեցնում Տրոցկու կարծիքը՝ արևելյան քաղաքականությամբ չափից ավելի տարվելու մասին: Ի դեպ, վերադառնալով այդ կարծիքին, ուզում ենք մատնանշել մի հանգամանք ևս: Բանն այն է, որ մեր պատմաբանները, նաև տողերիս հեղինակը, հայ-ադրբեջանական և հայ-թուրքական տարածքային վեճերի կապակցությամբ Չիչերինի դիրքորոշումներին անդրադառնալիս, որպես կանոն այն կապում ենք Կարախանի անվան հետ՝ կարծելով, որ անհրաժեշտ տեղեկատվությունը Չիչերինը նրանից էր ստանում: Հնարավոր է, որ դրանում որոշ ճշմարտություն կա, թեև կոնկրետ փաստեր չունենք: Մինչդեռ վերը նշված կարծիքում, ինչպես նաև Օրջոնիկիձեի հետ հունիսի 26-ի հեռախոսազրույցում Չիչերինը բացահայտել է տեղեկատվության իր աղբյուրը: Դա Գուրգեն Հայկունին է, և նրա գլխավորած կուսակցության ԿԿ-ի անդամները, որոնց հետ Չիչերինը երկարատև զրույցներ է ունեցել նշված հարցերի շուրջ:

Դատելով այն բանից, որ Չիչերինը չէր բավարարվել Նարիմանովի հեռագրի մասին կարծիք գրելով, այլ նաև մի ընդարձակ նամակ էր ուղարկել (նույն օրը) Լենինին, պետք է ենթադրել, որ նա խիստ ազդվել էր այդ հեռագրի ոճից և վիրավորական տոնից: Նամակում Չիչերինը կրկին մեկ առ մեկ հերքում է Նարիմանովի տեսակետներն ու առաջարկությունները, ցույց տալիս, որ Ադրբեջանը հարևանների նկատմամբ «հարձակողական գործողությունների տակտիկա» է որդեգրել և «հավակնում է Ղարաբաղի, Զանգեզուրի և Շարուր-Դարալագյազի գավառի վրա՝ Նախիջևանի, Օրդուբադի և Ջուլֆայի հետ միասին»:

Չիչերինը նշում է, որ Ադրբեջանին բավարարելու երկու ուղի կա, որոնցից առաջինն այն է, որ Ադրբեջանը իր թաթարական ուժերը ուղղի հայերի դեմ, ինչը «բացարձակապես անընդունելի է և մեծագույն հանցագործություն կլինի», մյուս ուղին՝ ռուսական զորքերով այդ տարածքների գրավումը և նվիրելն է Ադրբեջանին, ինչին ձգտում է Նարիմանովը: «Կատարել այդ կոմբինացիան ռուսական զորամասերի ձեռքերով, միանգամայն անթույլատրելի է, – գրում է Չիչերինը: – Մեր դերը պետք է բացարձակապես օբյեկտիվ և խիստ անաչառ լինի: Արևելքում մեր ամբողջ քաղաքականության համար ճակատագրական սխալ կլիներ, եթե մենք սկսեինք հենվել մի ազգային տարրի վրա՝ ընդդեմ մյուս ազգային տարրի: Խլել Հայաստանից ինչ-որ մասեր և մեր ձեռքերով տալ դրանք Ադրբեջանին՝ կնշանակեր Արևելքում մեր ամբողջ քաղաքականությանը միանգամայն կեղծ երանգ հաղորդել: Դա կխախտեր մեր քաղաքականության մասին պատկերացումը՝ որպես միանգամայն անաչառ և օբյեկտիվ»[1]: Այնուհետև ընդգծելով, որ հենց դրա համար է վիճելի վայրերը ռուսական զորամասերով գրավելու և դրանք ռուսական օկուպացիոն իշխանություններին ենթարկելու որոշում կայացվել, որպեսզի այդ տարածքները չտրվեն ոչ Ադրբեջանին և ոչ էլ Հայաստանին, մինչև որ բարենպաստ քաղաքական իրադրություն կստեղծվի և հնարավորություն կառաջանա խաղաղ ու բոլորին բավարարող ելք գտնել, Չիչերինն ավելացնում է, թե մինչև հիմա մեր զորքերի կողմից գրավված են միայն Շուշին և Ջեբրաիլը, իսկ «այսպես կոչված վիճելի տարածքների մեծագույն մասը գտնվում է Հայաստանի Հանրապետության ձեռքին: Թուրքերի հարձակումը[2] հարկադրում է մեզ հրաժարվել այդ պլանի հետագա իրագործումից: Հանրապետության Ռազմհեղխորհուրդը վճռականապես հայտարարում է մեր զորքերով որևէ նոր տարածքներ գրավելու անհնարինության մասին: Թուրքական վտանգը հարկադրում է մեզ սահմանափակվել արդեն ունեցածի պաշտպանությամբ՝ նկատի ունենալով գլխավորապես Բաքվի պաշտպանությունը: Մերն ուժերն այնտեղ անբավարար են, որպեսզի գրավենք նոր տարածքներ և չարժվենք Հայաստանի խորքը: Այսպիսով պարզ է, որ մենք ստիպված ենք սահմանափակվել մեր կողմից արդեն գրավված տարածքների օկուպացիայով և հրաժարվել Հայաստանի որևէ նոր մասեր գրավելուց՝

[1] Բանբեր Հայաստանի արխիվների, 1993թ., N 1-2, էջ 225:

[2] Այդ օրերին Մդիվանին հեռագրել էր, թե թուրքական մի զորամաս չարժվում է դեպի Նախիջևան:

թեկուզև որակված որպես վիճելի»[1]: Լենինին ուղարկած Չիչերինի այս նամակը ուշագրավ է նաև այն առումով, որ նրանում հստակ կերպով ներկայացված է նաև Հայաստանի հետ պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը՝ առանց սակայն հայ-ադրբեջանական սահմանագծումը նախապես իրականացնելու: «Հայաստանի գերիշխանության տակ գտնվող տարածքների հետագա օկուպացումից ձեռնպահ մնալը կհեշտացնի վերջինիս հետ պայմանագրի կնքումը, – ասված է նամակում: – Հայկական պատվիրակությունը ոչ մի կերպ չցանկացավ համաձայնել կամավոր կերպով ռուսական օկուպացիայի հանձնելու Հայաստանի տիրապետության տակ գտնվող տարածքները, բացի Ղարաբաղի օկրուգից: Միայն ռազմական ստատուս-քվոյի հիման վրա կարելի է Հայաստանի հետ պայմանագրի կնքման հույս ունենալ, որն անհրաժեշտ է հանուն Անդրկովկասում մեր խաղաղարար քաղաքականության իրագործման: Այսպիսով, ամեն ինչ խոսում է այն մասին, որ մենք պետք է հրաժարվենք այնտեղ որևէ այլ տարածքներ գրավելուց, բացի արդեն գրավածից»[2]:

Ինչպես տեսնում ենք, Չիչերինը ճիշտ էր հասկացել Ադրբեջանի ղեկավարության իրական նպատակները և փորձում էր դրանում համոզել նաև Լենինին՝ նրա միջոցով ազդելու Ռուսաստանի կովկասյան քաղաքականության վրա: Դժբախտաբար, ո՛չ կառավարության և ո՛չ էլ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի կազմում Չիչերինի պես մտածողներ համարյա չկային (Չիչերինը քաղբյուրոյի անդամ չէր): Ինչ վերաբերում է Կովկասում գործող բոլշևիկ ղեկավարներ Օրջոնիկիձեին և Կիրովին, ապա սրանք թեև հասկանում էին ադրբեջանական ղեկավարության ազգայնական նկրտումների ներքին ծալքը, բայց ղեկավարվելով «դասակարգային համերաշխության» սկզբունքով, պաշտպանում էին Ադրբեջանին, ինչն ավելի ու ավելի անպատկառ էր դարձնում Նարիմանովի խմբին ու նպաստում Չիչերինի վրա ճնշում գործադրելուն: Դա այնքան բացահայտ էր արվում, որ զգացել էին նաև հայ պատվիրակները: Հուլիսի 1-ին Երևան ուղարկած հեռագրում Շանթը նշում էր, թե «միակ դժվարությունը Ադրբեջանի սահմանն է. որովհետև Բաքվից ամեն կերպ աշխատում են խանգարել պայմանագրի կնքումը: Խորհրդային կառավարությունը ընդունում է մեր պահանջները իրավացի, չի փափագում գոհացում տալ Խորհրդային Ադրբեջանի և հայ բոլշևիկների բոլոր բաղձանքներին, այնուամենայնիվ, վերջիններիս

[1] Բանբեր Հայաստանի արխիվների, 1993թ., N 1-2, էջ 226:

[2] Նույն տեղում:

համառ պնդումների ազդեցության տակ պայմանագրի կնքումը դանդաղում է»[1]:

Հ. Տերտերյանը ևս իր հուշերում նախնական համաձայնությունից Զիչերինի աստիճանական նահանջը և ի վերջո բանակցությունների խզումը՝ դրանց Երևան փոխադրելու պատրվակով, բացատրում է Ադրբեջանի ղեկավարության գործունեությամբ: Նա գրում է, որ երբ Զիչերինը տեղեկացավ Ադրբեջանի պահանջների մասին, իրենց ներկայությամբ ջղայնացած բացականչեց. «Օհհ, Ջուլֆան ու Նախիջևանն էլ են ուզում, շատ են երես առել»[2]: Երես առնելու և առավելագույն պահանջներ առաջ քաշելու մասին ուշագրավ տեղեկություն կա նաև ՀՀ արտգործնախարարության N-12 տեղեկագրում.

«Ադրբեջանի ներկա քաղաքականության գլխավոր ուշադրությունը ուղղված է դեպի ռուս-հայկական բանակցությունները, - ասված է նրանում: - Ամենահեռավոր և թույլ հավանականությունը, որ Ղարաբաղը և Զանգեզուրը կարող են անցնել Հայաստանին, ոտքի է հանում ամբողջ Ռևկոմը և թուրքական ակտիվ շրջանակները:

Նրանք ամեն կերպ աշխատեցին և աշխատում են խանգարել ռուս-հայկական դաշնագրի ստորագրումը՝ հատուկ պատվիրակներ ուղարկելով Մոսկվա, շտապեցրին Զանգեզուրի գրավումը՝ նպատակ ունենալով Նախիջևանի, Շարուրի և Սուրմալուի վրայով միանալ տաճկական ուժերի հետ: Իսկ Մոսկվայի կոմունիստները նույն ծրագրի իրագործումը պատճառաբանում են «Կարմիր Անատոլիայի» հետ միանալու անհրաժեշտությամբ:

Մոսկվայում իրենց տեսակետները պաշտպանելու համար բացի իրեն՝ Հուսեյնովից (որն արդեն վերադարձել է Բաքու) ուղարկել են մի հատուկ պատվիրակություն, որի մեջ մտնում են գլխավորապես ոչ կոմունիստ տարրեր՝ Մամադ Հասան Հաջինսկու նախագահությամբ: Այդ պատվիրակության գլխավոր նպատակն է պահանջել Մոսկվայում իրենց տերիտորիալ ծրագրի իրագործումը՝ պատճառաբանելով, որ Ադրբեջանի մուսուլմանության համակրանքը գրավելու միակ միջոցն այն է, որ Ադրբեջանին միացվեն ոչ միայն Ղարաբաղն ու Զանգեզուրը, այլև Նախիջևանը, Շարուրը և Սուրմալուն»[3]:

Առանց Օրջոնիկիձեի օգնության Լեգրանը որևէ հաջողության չէր կարող հասնել: Դա քաջ գիտակցում էր Զիչերինը: Դրա համար Լեգրանին գործուղելով Հայաստան, նա միաժամանակ մեկը մյուսի հետևից հեռագրեր է ուղարկում Օրջոնիկիձեին, հիմնավորում Հայաստանի հետ պայմանագրի կնքման անհրաժեշտությունը, խնդրում ազդել Բաքվի ղեկավարության վրա, չափավորել նրանց պահանջները: Հուլիսի 2-ին[1] Վլադիկավկազում գտնվող Օրջոնիկիձեին հասցեագրած ճեպագրում Զիչերինը գրում է. «Մեզ անհրաժեշտ է կոմպրոմիսի հասնել հայկական դաշնակցական կառավարության հետ: Մինչդեռ Ադրբեջանական կառավարությունը վիճելի է հայտարարում ոչ միայն Ղարաբաղն ու Զանգեզուրը, այլև Շարուր-Դարալագյազի գավառը: Վերջինս երբեք ոչ մեկի կողմից վիճելի չի հայտարարվել և նույնիսկ մուսավաթական կառավարությունը միշտ այն համարել է Հայաստանինը: Առանց նրա Հայաստանից համարյա ոչինչ չի մնում»[2]: Այնուհետև նշելով, որ Շանթի պատվիրակությունը երկար դիմադրությունից հետո համաձայնել է վիճելի հայտարարել Ղարաբաղն ու Զանգեզուրը, բայց ոչ երբեք Շարուր-Դարալագյազը, Զիչերինը շարունակում է. «Մյուս կողմից մեզ անհրաժեշտ է համաձայնության գալ ադրբեջանական կառավարության հետ, որպեսզի Հայաստանի հետ մեր պայմանագիրը Ադրբեջանի պահանջների հետ հակասության մեջ չլինի: Նկատի ունենալով Բաքվում Ձեր հսկայական ազդեցությունը, խնդրում ենք Ձեզ օգտագործել այն, որպեսզի ստանանք ադրբեջանական կառավարության համաձայնությունը վիճելի հայտարարելու Ղարաբաղը և Զանգեզուրը, բայց ոչ Շարուր-Դարալագյազի գավառը»[3]:

Ինչպես տեսնում ենք, Զիչերինը նույնիսկ փորձում է չոյել Օրջոնիկիձեի փառասիրությունը՝ խոսելով Բաքվում նրա «հսկայական ազդեցության» մասին, միայն թե հաջողվի ազդել Ադրբեջանի ղեկավարության վրա՝ հրաժարվելու Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նկրտումներից: Ճեպագրի այս մասում Զիչերինը կարծես թե չրջանցում է Նախիջևանի հարցը, Շարուր-Դարալագյազի հետ մեկտեղ չի հիշատակում Նախիջևանի անունը՝ ստեղծելով տպավորություն, թե նա չի ուզում բացորոշ արտահայտել իր վերաբերմունքը այդ գավառի պատ-

[1] «Մշակ», 17 հուլիսի 1920թ.:

[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն 1954թ., թիվ 2, էջ 15:

[3] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 31-32:

[1] Փաստաթուղթը թվագրված է հունիսի 2-ով և այդպես էլ այն ներկայացված է փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում: Մինչդեռ նրա բովանդակությունից դժվար չէ գուշակել, որ պետք է լինի հուլիսի 2 (թուրքական ջոկատները Նախիջևանի մոտ հայտնվել են հունիսի վերջին օրերին, Զանգեզուրը վիճելի ճանաչելու վերաբերյալ Շանթի պատվիրակությունը իր համաձայնությունը տվել է Ս. Տեր-Գաբրիելյանի հետ հանդիպման ժամանակ հունիսի վերջին օրերին և այլն):

[2] РГАСПИ, ф. 85, оп. 13, д. 32, л. 1-2.

[3] Նույն տեղում:

*կանելիության խնդրում: Սակայն ճեպագրի վերջնամասից դժվար չէ կռահել, որ նա մտադիր չէր հագուրդ տալ Նարիմանովի խմբի նկրտումներին և վիճելի հայտարարել նաև այդ գավառը: «**Միաժամանակ մեր ռազմական ուժերի անբավարարությունը և Նախիջևանի մոտ մեզ սպառնացող Թուրքական ջոկատների հայտնվելը** (հարկադրում են մեզ) **հրաժարվել մեր զորամասերով Հայաստանի Հանրապետության զբաղեցրած ինչ-որ նոր տարածքներ գրավելու մտքից**, – ասված է ճեպագրում: – Մեր զորքերը տիրում են Շուշին և Ջեբրաիլը, **մենք հարկադրված եղանք հրաժարվել Նախիջևանը և Ջուլֆան գրավելուց**: Մատնանշեք Ադրբեջանի կառավարությանը, որ մենք անհրաժեշտաբար հարկադրված ենք սահմանափակվել Շուշու և Ջեբրաիլի գրավումով և փաստորեն հնարավորություն չունենք մեր զորքերն ավելի առաջ չարժելու: Դա անառարկելիորեն հաստատված է Հանրապետության ռազմահեղափոխական խորհրդի կողմից: **Խնդրում եմ հայտնել Բաքվի կառավարությանը մեզ համար ներկայումս Նախիջևանը և Ջուլֆան գրավելու անհնարինության մասին և մատնանշեք օբյեկտիվ պատճառները, որոնք հարկադրում են մեզ սահմանափակվել ռազմական ստատուս-քվոյով»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Զիչերինյան այս տողերում ուշագրավը նախ այն է, որ նա Թուրքական ջոկատներին դեռևս չի համարում դաշնակից ուժեր և հետո՝ Նախիջևանի ու Ջուլֆայի գրավումը համարում է ռազմական ստատուս-քվոյի խախտում: Այլ կերպ ասած Զիչերինն այդ տարածքները համարում է Հայաստանի Հանրապետության մաս:

*Թե որքան մեծ կարևորություն էր տալիս Զիչերինը Հայաստանի հետ փոխզիջումային համաձայնության հասնելուն և այդ խնդրում Օրջոնիկիձեի դիրքորոշմանը, վկայում է թեկուզ այն փաստը, որ հաջորդ օրը՝ հուլիսի 3-ին, դարձյալ դիմում է Օրջոնիկիձեին, խնդրում օգտագործել իր ազդեցությունը՝ համոզելու Ադրբեջանի ղեկավարությանը վիճելի ճանաչել միայն Ղարաբաղը և Զանգեզուրը և «չդիպչել» մյուս տարածքներին՝ Նախիջևանին, Շարուր-Դարալագյազին, Օրդուբադին և Ջուլֆային: Իսկ հուլիսի 4-ին գործի մեջ է ներքաշում նաև Վրաստանում ՌԽՖԱՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովին: Վերջինիս տեղեկացնելով այն մասին, որ Հայաստանի հետ պայմանագրում ամենաէական կետերն են լինելու Ադրբեջանի հետ սահմանագծման, Թուրքա-Հայաստանի սահմանների և Հայաստանում կոմունիստների դրության հարցերը, միաժամանակ ավելացնում է. «**Հայկական պատվիրակությունը համաձայն է վիճելի ճանաչելու Ղարաբաղը և Զանգեզուրը, բայց բացարձակապես հրաժարվում է վիճելի համարել Շարուր-Դարալագյազի (գավառը), Նախիջևանը, Օրդուբադը և Ջուլֆան**: Մեզ անհրաժեշտ է այդ հարցում համաձայնության գալ և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի հետ: Հայերը հաստատում են, որ **նույնիսկ մուսավաթականները երբեք չեն հավակնել այդ մարզերի վրա, ըստ որում Նարիմանովյան կառավարության ներկայիս հավակնությունների ծայրակետը գտնվում է հենց Էրիվանի մոտ»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Զիչերինը տեղեկացնում է Կիրովին, որ ինքը հեռագիր է ուղարկել Օրջոնիկիձեին՝ խնդրելով ազդել Բաքվի կառավարության վրա սահմանափակվելու Ղարաբաղը և Զանգեզուրը վիճելի հայտարարելով, բայց պատասխան դեռ չի ստացել: «Դուք Օրջոնիկիձեի հետ կապի մեջ եք, խնդրում եմ հաղորդեք նրան մեր խնդրանքը, – գրում է Զիչերինը և ավելացնում, թե մատնանշեք Օրջոնիկիձեին, որ նրա երկարատև լռությունը երբեմն ողբերգական վիճակներ է ստեղծում»[2]:

*Զենք կարող ընթերցողի ուշադրությունը չհրավիրել մի էական տարբերության վրա, որ առկա է Կիրովին ուղարկած ճեպագրում: Բանն այն է, որ Օրջոնիկիձեին հղած բոլոր գրություններում Ադրբեջանի ագրեսիվ նկրտումները չբավարարելու երկու հիմնական պատճառ էր նշում. 1. Հայկական պատվիրակությունը վիճելի է համարում միայն Ղարաբաղը և Զանգեզուրը, 2. Նորանոր տարածքների գրավման համար անհրաժեշտ ուժերի բացակայությունը: Մինչդեռ Կիրովին ուղարկած ճեպագրում Զիչերինը մի նոր պատճառ էլ էր առաջ քաշում. դա համաշխարհային քաղաքականությունն է: «Բաքվի ընկերները պետք է հաշվի նստեն ներկա պահին ուժերի հարաբերության և համաշխարհային կոնյունկտուրայի հետ, – գրում է Զիչերինը: – Ընդհանրապես կովկասյան ընկերներին պետք է մշտապես մատնանշել **համաշխարհային քաղաքականության նկատառման առաջնային բնույթը և Ռուսաստանյան Հանրապետության գոյության հիմնական պահանջմունքները, իսկ առաջնային պահանջների համեմատ մյուս երկրորդայինները կարող են իրականացվել միայն առաջինների բավարարմանը զուգընթաց»**[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Ինչո՞ւ Զիչերինն այս խնդիրների մասին Օրջոնիկիձեին չի գրում,

[1] *Նույն տեղում:*

[1] *„Геноцид армян...", стр. 86.*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

ինչո՞ւ էր կովկասյան ընկերներին լուսավորելու գործը դնում Կիրովի վրա, որն ընդամենը դեսպանի կարգավիճակ ուներ, և ոչ կովկասյան գործերը տնօրինողի՝ Օրջոնիկիձեի: Սրանք հարցեր են, որոնց պատասխանը միայն Չիչերինը կարող է տալ: Փաստորեն անհայտ է մնում նաև այն հարցը, թե Հայաստանի հետ պայմանագրի կնքման կապակցությամբ առաջ քաշելով համաշխարհային քաղաքականության առաջնահերթությունները հաշվի առնելու գաղափարը, նա նկատի ուներ միայն «Ռուսաստանյան Հանրապետության գոյության պահանջմունքնե՞րը» թե՞ նաև Հայկական հարցը, որը վաղուց միջազգային դիվանագիտության հարց էր դարձել: Ինչ վերաբերում է Չիչերինի՝ Կիրովին տված հանձնարարականին, ապա Կիրովը կատարել է իր վերադասի հանձնարարականը, թեև այդ բանը նա արել է որոշ ուշացումով: Յու. Բարսեղովի խմբագրությամբ հրապարակված փաստաթղթերի ժողովածուում տեղ է գտել Կիրովի՝ հուլիսի 17-ով թվագրված մի հեռագիրը Օրջոնիկիձեին, որում բառացիորեն ասված է. «Չիչերինը շատ է խնդրում հակել ադրբեջանական ընկերներին չափավորելու իրենց հավակնությունները Հայկական հարցում: Նա, ըստ երևույթին, հակված է վիճելի ճանաչել Ղարաբաղ-Զանգեզուրը. Նախիջևանի գավառը, Օրդուբադը զիջել հայերին: Չիչերինը բազմիցս ընդգծում է այդ հարցը չուտով լուծելու անհրաժեշտությունը»[1]:

*Մենք վերը տեսանք, որ Չիչերինն իր կարծիքը չատ հստակ էր արտահայտել՝ վիճելի ճանաչել միայն Ղարաբաղը և Զանգեզուրը, մինչդեռ Կիրովը որոշ չափով փոխում է երանգը՝ օգտագործելով «ըստ երևույթին» բառակապակցությունը: Իսկ Օրջոնիկիձեին դուր չէին գալիս Չիչերինի համառ պնդումները. դա երևում է բոլոր այն գրություններից, որ այդ օրերին նա հասցեագրել է Լենինին և Ստալինին: Դրանց մի մասին դեռ կանդրադառնանք, իսկ այստեղ մեջբերենք միայն մեկը, որում բացորոշ արտահայտում էր իր դժգոհությունը Չիչերինի նկատմամբ և խնդրում Ստալինին աջակցել իրեն: Ն. Ալելուևային ուղարկած հեռագրում նա գրում է. **«Որտե՞ղ է ներկա պահին Ստալինը: ...Ինձ չատ է հետաքրքրում, և ընդհանրապես մեզ բոլորիս, նրա կարծիքը այդ հարցի վերաբերյալ:** Թեև մենք գիտենք, որ այդ ամենը նրան քիչ է հետաքրքրում: **Հաղորդեք նրան, որ Չիչերինը և Կարախանը նորից ինձ այստեղ անելանելի դրության մեջ են դնում: Նրա պատասխանը հաղորդեք մինչև իմ մեկնումը»**[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.):*

[1] *Նույն տեղում, էջ 99:*

[2] *Նույն տեղում, էջ 90:*

*Կարծում ենք, Օրջոնիկիձեն պատահական չէ Չիչերինի հետ մեկտեղ հիշատակել նաև Կարախանի անունը՝ քաջատեղյակ վերջինիս նկատմամբ Ստալինի վերաբերմունքին: Ինչևէ, ահա այն պատասխանը, որ ուղարկել է Ստալինը հուլիսի 8-ին. «Իմ կարծիքն այսպիսին է, **որ չի կարելի անվերջ խուսանավել կողմերի միջև, անհրաժեշտ է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, տվյալ դեպքում, իհարկե Ադրբեջանին Թուրքիայի հետ: Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):*

Թե որքան կոգևորեր Ստալինի այս կարծիքը Նարիմանովի խմբին և բոլոր նրանց, ովքեր վիճելի տարածքների հարցում միանշանակ հակահայկական դիրքորոշում ունեին, դժվար չէ հասկանալ: Ամեն դեպքում, ինչպիսի որակում էլ որ չտանք Ադրբեջանի ղեկավարության վարքագծին՝ ռուս-հայկական բանակցությունները ձախողելու գործում, մի բան այնուամենայնիվ պետք է արձանագրենք. նա հասավ իր նպատակին, կանխեց պայմանագրի ստորագրումը, որով կկարգավորվեին հայ-ռուսական հարաբերությունները և գուցե վերջ գտնեին հանրապետության սահմանների վրա տեղի ունեցող բախումները:

Սակայն կար մի ուրիշ պատճառ ևս, որի մասին ո՛չ Շանթը, և ո՛չ էլ Տերտերյանը այդ օրերին իմանալ չէին կարող: Խոսքը քեմալական Թուրքիայի մասին է, որի տարածքային հավակնությունների մասին մինչ այդ Չիչերինը պատկերացում չուներ (դա պարզ երևում է հունիսի 3-ին Անկարա ուղարկած նրա նամակից) և կարծում էր, թե Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններ Հայաստանի Հանրապետությանը հանձնելու միջոցով հնարավոր կլինի լուծել Թուրք-Հայկական կնճիռը: Հուլիսի 4-ին նրա այդ հույսերը ի դերև ելան. այդ օրը Մոսկվայում ստացվեց Անկարայի կառավարության արտգործկոմիսար Բեքիր Սամի բեյի նամակը, որտեղ առաջին անգամ պաշտոնապես տեղեկացվում էր, որ իր կառավարությունը ընդունում է Ռուսաստանի միջնորդությունը հայ-թուրքական կնճռի հարցում, բայց միաժամանակ ավելացվում էր, որ սահմանազատման հարցում իրենք կանգնած են Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի սկզբունքի վրա[2]: Իսկ դա նշանակում է, որ Անկարան ոչ միայն չի ցանկանում ոչ մի թիզ զիջել Թուրքա-Հայաստանից, այլև հավակնում է Հայաստանի Հանրապետության տարածքի չուրջ կեսին (Կարսի մարզին): Ուրեմն, Շանթի պատվիրակության հետ

[1] *Նույն տեղում, էջ 92:*

[2] *Տե՛ս «Документы внешней политики (ДВП) СССР», т. 2, М., 1958, с. 556:*

բանակցությունների չարունակումը դառնում էր անհեռանկար, հարկավոր էր հետաձգել այն, սպասել Անկարայի պատվիրակության Մոսկվա ժամանելուն (այդ մասին ևս հայտնվում էր Բեքիր Սամի բեյի նամակում) և նոր որոշել անելիքը: Հենց այդ օրերին էլ (ըստ Տերտերյանի՝ հուլիսի սկզբին) Չիչերինը և Կարախանը նորից հայ պատվիրակներին հրավիրում են տեսակցության և կարճատև զրույցից հետո հայտնում, որ որոշվել է վիճելի համարվող տարածքների և հատկապես Զանգեզուրի ազգաբնակչության կարծիքի ուսումնասիրման և նրանց ճակատագրի վերջնական լուծման նպատակով Բ. Լեգրանի գլխավորությամբ հատուկ պատվիրակություն գործուղել և ընդհանրապես բանակցությունները փոխադրել Երևան: Կարծում ենք, ընթերցողն էլ կընդունի, թե որքան կեղծ է հնչում «վիճելի համարվող տարածքների» կարծիքի ուսումնասիրման վերաբերյալ պատճառաբանությունը: Այդ ինչպե՞ս պետք է կարծիք ուսումնասիրվեր. արդյո՞ք հանրաքվեի միջոցով և ո՞վ դա պետք է աներ այնպիսի տարածքներում, որտեղ ազգամիջյան կռիվները այդպես էլ չէին դադարում: Որ Չիչերինը անկեղծ չէր, դա հասկացան նաև հայ պատվիրակները, հասկացան ու դժգոհ մնացին, որ դրանով իսկ պայմանագրի ստորագրումը հետաձգվում էր անորոշ ժամանակով: Հետաքրքրությունից զուրկ չէ նաև այն փաստը, որ այդ օրերին Կովկաս ուղարկած և ոչ մի հեռագրում Չիչերինը վերը նշված պատճառաբանությունը չի հիշատակում: Ի դեպ է նշել, որ հունիսի 29-ին Լենինին ուղարկած նամակում նա արդեն, ըստ էության, ներկայացրել էր բանակցությունները հետաձգելու առաջարկ: Խոսելով այն մասին, որ Հայաստանի հետ իսկապես անհրաժեշտ է հնարավորինս շուտ պայմանագիր կնքել, Չիչերինը միաժամանակ ավելացնում է, թե վիճելի տարածքների հետագա օկուպացումից հրաժարվելը չի վերացնի պայմանագրի կնքման ճանապարհին եղած արգելքները, քանի որ «հայկական պատվիրակությունը ձգտում է նրան, որ մենք որոշենք, թե որտեղով է անցնում սահմանը Հայաստանի և Ադրբեջանի միջև, ինչը մեզ համար կնշանակեր այնտեղ ամեն մի տարածք անհապաղ Ադրբեջանին կամ Հայաստանին զիջելու անհրաժեշտություն: Մենք հիմա դա չենք կարող անել՝ մեկի կամ մյուսի նկատմամբ մեր քաղաքականությանը մեծագույն վնաս չպատճառելով: Դրա համար էլ **մենք ստիպված կլինենք ամեն կերպ խուսափել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմաններ հաստատելու պարտականությունից**[1]» (ընդգծումը մերն է – Է. Զ.):

[1] Բանբեր Հայաստանի արխիվների, 1993, N 1-2, էջ 226:

Ասված է պարզ և հասկանալի. Սահմանները ճշտել չենք կարող, հետևապես բանակցությունները պետք է հետաձգել, ժամանակ շահել մինչև որ նպաստավոր պայմաններ կստեղծվեն խնդրի լուծման համար»: Եվ քանի որ Շանթի պատվիրակությանն այդքան երկար Մոսկվայում պահել չեն կարող, ուրեմն բանակցությունները պետք էր տեղափոխել Երևան: Այդ գաղափարը նամակում հստակ ձևակերպում չի ստացել, բայց նրա վերջին տողերը հանգեցնում են այդ մտքին: Անդրադառնալով քեմալականների հետ հարաբերությունների հարցին և մատնանշելով Անկարայում ներկայացուցիչ ունենալու անհրաժեշտությունը, Չիչերինը գրում է. «Ներկայումս անհրաժեշտ է արագացնել նրա (Էլիավայի – Է. Զ.) մեկնումը: Ճիշտ այդպես էլ չպետք է հետաձգել ընկ. Լեգրանի մեկնումը: Այդ ընկերները կհետևեն իրադրությանը Անկարայում և Երևանում և այն ժամանակ մենք որոշում կընդունենք՝ իրադրության իսկական իմացության հիման վրա: Ներկա պահին գլխավորը մեր ներկայացուցիչների չուտափույթ այնտեղ ժամանելն է»[1]:

Լեգրանի առաքելությանը և մեզ հետաքրքրող խնդրում նրա դերքորոշումներին դեռ կանդրադառնանք, իսկ այստեղ ուզում ենք արձանագրել, որ Մոսկովյան բանակցությունները թեև չավարտվեցին պայմանագրի ստորագրումով, բայց դա չի նշանակում, թե դրանք բոլորովին անարդյունք էին և անհետևանք, ինչպես հաճախ հանդիպում ենք մեր պատմագիտական գրականության մեջ: Ո՛չ, այդ բանակցությունները կողմերին հնարավորություն տվեցին ծանոթանալու և պարզելու փոխադարձ դիրքորոշումները մի չարք հարցերում, այդ թվում մեզ հետաքրքրող Շարուր-Նախիջևանի պատկանելիության խնդրում: Հայկական կողմը համոզվեց, որ Մոսկվան հակված չէ պաշտպանելու իր դաշնակցի՝ Խորհրդային Ադրբեջանի տարածքային բոլոր պահանջները: Եթե վերջինիս ճնշման տակ Գ. Չիչերինի գլխավորած պատվիրակությունը նահանջեց իր սկզբնական դիրքորոշումից և Ղարաբաղի հարցում բռնեց Ադրբեջանի կողմը, իսկ Զանգեզուրը հռչակեց վիճելի, ապա Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի խնդրում հաստատապես կանգնած մնաց Հայաստանի կողմում:

[1] Նույն տեղում, էջ 227:

* * *

1920թ. ամռան սկզբին Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը դեռևս բավականին բարդ էր: Բոլշևիկների մայիսյան շարժումները[1] թեև ամբողջովին լիկվիդացվել էին, իսկ Կարմիր բանակի զորամասերն էլ հյուսիս-արևելքում հետ էին քաշվել Ադրբեջան (մայիսի վերջերին մտել էին Քարվանսարայի շրջան), սակայն հարավ-արևելքում նրանց առաջխաղացումը շարունակվում էր: Ռուսական կառավարությունը բանակցություններ վարելով Շանթի պատվիրակության հետ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի հռչակված Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի հարցի լուծման շուրջ, միաժամանակ Ադրբեջանում գտնվող 11-րդ կարմիր բանակի միջոցով աստիճանաբար օկուպացնում էր այդ նույն վիճելի տարածքները՝ ազգամիջյան ընդհարումներին վերջ տալու չինծու պատճառաբանությամբ: Խոսքի և գործի կատարյալ հակասություն. Մոսկվայում ասում էին մի բան, տեղերում կատարում մեկ այլ բան: Բաքվի ղեկավարությունն էլ, օգտվելով առիթից, գրավված տարածքները հռչակում էր Ադրբեջանի մաս:

Հանգիստ չէր նաև Հանրապետության արևմտյան սահմանների վրա: Ճիշտ է, քեմալական Թուրքիան Գ. Չիչերինի միջամտությունից հետո ստիպված եղավ կանգնեցնել հունիսի սկզբի համար ծրագրված հարձակումը Հայաստանի վրա[2], բայց վտանգը դրանով չէր վերացել: Արևմտյան սահմանների հարևանությամբ տեղաբաշխված թուրքական շուրջ 22 հազարանոց բանակը կազմ ու պատրաստ սպասում էր հարմար պահի՝ Հանրապետության տարածք ներխուժելու համար: Ճիշտ է նաև, որ Հայաստանի կառավարությունը, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, ճշգրտված տեղեկություններ չուներ թուրքական ուժերի իրական թվի ու հնարավորությունների մասին (կարծում էին, թե դրանց թիվը 5 հազարից ավելի չէ): Բայցևայնպես, թուրքքրդական հրոսակախմբերի հաճախակի հարձակումները և սահմանի խախտումները Կարսի և Սուրմալուի հատվածում, առաջ էին բերում մշտական լարվածություն ու ստեղծում պատերազմական վիճակ: Հանրապետության կյանքի կնճռոտ հարցերի թվում էր նաև մուսուլմանաբնակ ապստամբ շրջանների հնազանդեցման խնդիրը, որոնց առկայությունը ոչ միայն ներքին անկայունության պատճառ էր դառնում, այլև արտաքին ուժերի միջամտության առիթ ծառայում: Ադրբեջանն ու Թուրքիան բացահայտորեն օգնում էին դրանց՝ ուղարկելով զենք, զինամթերք, ֆինանսներ, սպաներ ու ասկյարներ, և նաև ամեն առիթ օգտագործում միջազգային հանրության առաջ վարկաբեկելու Հայաստանի կառավարությանը, որն իբր մուսուլմանների նկատմամբ բռնության ու հալածանքի քաղաքականություն է վարում:

Այդպիսի պայմաններում էր հայտնվել Հայաստանի Հանրապետությունը 1920թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին: Անհրաժեշտ էր վճռական քայլեր ձեռնարկել ինչպես արտաքին վտանգը չեզոքացնելու, այնպես էլ Հանրապետության ներքին դրությունը կայունացնելու ուղղությամբ: Եվ Համո Օհանջանյանի կառավարությունը[1], գիտակցելով այդ հարցերի լուծման կարևորությունը Հանրապետության գոյապահպանության հարցում, ինչպիսի վճռականությամբ որ գործել էր մայիսյան օրերին, նույն վճռականությամբ հունիսին ձեռնամուխ եղավ ծառացած խնդիրների լուծմանը:

Երկրի ներքին դրության կայունացման համար կառավարությունը անհրաժեշտ էր համարում լուծել հետևյալ խնդիրները. 1. Վճռական գործողություններով հնազանդեցնել ադրբեջանական այն շրջանները (Զանգիբասար, Վեդիբասար, Շարուր-Նախիջևան), որոնք 1919թ. հուլիս-օգոստոսին Ադրբեջանի և Թուրքիայի օգնությամբ ապստամբել էին և Հայաստանի իշխանությունը չէին ճանաչում, 2. Գրավել Ալաշկերտի հովիտը, բնակեցնել այն արևմտահայերով և դրանով իսկ հանրապետության մուսուլմանաբնակ շրջաններին զրկել Անատոլիայում բուն դրած քեմալական ուժերի հետ կապվելու և նրանից օգնություն ստանալու հնարավորությունից:

Երկրորդ խնդիրը Հայաստանն ինքնուրույն լուծել չէր կարող անհրաժեշտ չափով զենք, զինամթերք ու զորք չունենալու պատճառով և հույսը դրել էր Անտանտի տերությունների օգնության վրա՝ կարծելով, թե նրանք ևս պետք է շահագրգռված լինեն այդ խնդրում: Արդարաց-

---

[1] Ադրբեջանի խորհրդայնացումով և աշխատավորների մայիսմեկյան ցույցերով ոգևորված՝ հայ բոլշևիկները մայիսին ապստամբություններ էին բարձրացրել Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և մի շարք այլ վայրերում՝ հույս դնելով ոչ այնքան ապստամբական ուժերի, որքան 11-րդ Կարմիր բանակի օգնության վրա:

[2] Քեմալական Թուրքիայի՝ Հայաստանի վրա հարձակման գարնանային նախապատրաստությունների և Գ. Չիչերինի միջամտության մասին մանրամասն տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան, 1920թ., Թուրք-հայկական պատերազմը և տերությունները,** Եր. 1997, էջ 18-41:

[1] Կազմավորվել է 1920թ. մայիսի 5-ին: Ամբողջովին բաղկացած էր Հ.Յ.Դ. Բյուրոյի անդամներից, որի համար էլ հաճախ անվանվում էր բյուրո-կառավարություն:

վա՞ծ էր այդ հույսը, թե՞ ոչ, կտեսնենք հետո: Ինչ վերաբերում է առաջին խնդրին, ապա Հայաստանի կառավարությունը այն, հատկապես հունիսյան համընդհանուր զորահավաքից հետո, սեփական ուժերով կարող էր լուծել: Ավելի ճիշտ կլինի ասել՝ պարտավոր էր լուծել, քանի որ հանդուրժել այդ վիճակը այլևս չէր կարելի: Դա միմիայն ներքին հարց չէր, երկրում կարգն ու խաղաղությունը վերականգնելու հարց չէր, այլև արտաքին՝ օտարի աչքում թույլ ու անկազմակերպ պետության համբավ չվաստակելու հարց էր: Մի հանգամանք, որը Սևրի պայմանագրի ստորագրման նախօրեին առանձնակի կարևորություն էր ստանում:

Զանգիբասար (ներկայիս Մասիսի շրջանը) էր անվանվում Զանգու գետի ստորին հոսանքում (Երևանի մոտ գտնվող Զարբախ գյուղից մինչև Արաքս գետը) ընկած հարթավայրային ընդարձակ տարածքը, որը ոռոգվում էր Զանգուի ջրերով: 17-րդ դարի սկզբին Շահ Աբբասի կողմից Արարատյան դաշտավայրի հայ բնակչության բռնի գաղթեցումից հետո ժամանակի ընթացքում Իրանի հյուսիսային շրջաններից (Ատրպատական) այստեղ էին թափանցել մահմեդական տարրեր, որի հետևանքով կազմավորվել էին չուրջ 15 թաթարաբնակ (ադրբեջանաբնակ) գյուղեր:

Երևանից ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա գտնվող Զանգիբասարը օսմանյան զորքերի հետ քաշվելուց հետո դարձել էր թուրք-ադրբեջանական էմիսարների հավաքատեղի, չէր ճանաչում Հայաստանի իշխանությունը, բացահայտ զինվում էր, հաճախ փակում ճանապարհները, վնասում երկաթգիծը և այլն: Հայաստանի Հանրապետության մուսուլմանաբնակ ազգաբնակչության՝ 1919թ. հուլիս-օգոստոսյան համընդհանուր ապստամբությունից հետո Ադրբեջանի կառավարությունը ոչինչ չխնայեց Զանգիբասարը Վեդիբասարի հետ մեկտեղ Շարուր-Նախիջևանի թրքության առաջապահ ջոկատի վերածելու ուղղությամբ: Զենքը և զինամթերքը Նախիջևանից էին ստանում, իսկ ֆինանսները՝ Բաքվից:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումը բնավ չազդեց զանգիբասարցիների հակահայկական դիրքորոշման վրա: Ավելին, բոլշևիկների մայիսյան ապստամբությունների ժամանակ կրկին հայտարարեցին Երևանի կառավարությանը չենթարկվելու իրենց որոշման մասին և սկսեցին բացահայտորեն օգնել ապստամբներին (պայթեցրին երկաթգիծը՝ զորքերի տեղաշարժը խոչընդոտելու նպատակով և այլն): «Զանգիբասարցիների հանդգնությունը և թշնամությունը մանավանդ զորեղացավ Հայաստանում մայիս ամսին տեղի ունեցած դեպքերի ժամանակաշրջանում, – ասված է Զանգիբասարի մասին հունիսի 23-ի կառավարական հաղորդագրության մեջ, – երբ նրանք բացարձակորեն օգնում էին խռովարարներին, նյութում էին ամեն տեսակի խոչընդոտներ Ալեքսանդրապոլ ուղարկած կառավարական զորքերի դեմ, վնասելով երկաթուղային գիծը և կամուրջները: Մյուս կողմից՝ նրանք տենդորեն զինվում էին և կազմակերպում էին մարտիկ խմբեր՝ ղեկավարությամբ թուրք-ադրբեջանական սպաների»[1]: Մայիսի 13-ին նրանք հանկարծակի հարձակվեցին Վարմազիար, Ջաֆարաբադ և Փարաքար գյուղերի վրա և Փարաքարից տարան 8 լծկան եզ[2]: Հանդուրժել նման իրավիճակը, հատկապես բոլշևիկյան շարժումները ճնշելուց հետո, այլևս չէր կարելի: Հունիսին կառավարությունը որոշեց վերջ տալ այդ անբնական վիճակին և զանգիբասարցիներին առաջարկեց զինաթափվել, վերջ տալ թշնամությանը, ճանաչել Հայաստանի իշխանություններին, վճարել պետական հարկերը և այլն: Սակայն զանգիբասարցիները հարցը խաղաղորեն լուծելու կառավարության առաջարկը թողեցին անհետևանք: Այդժամ որոշվեց վճռական միջոցների դիմել, և հունիսի 18-ին վերջնագիր ներկայացվեց՝ պատասխանի համար տալով 6 ժամ: Սակայն բացի Ուլուխանլուից (այժմ՝ Մասիս) մնացած գյուղերից պատասխան չստացվեց: Այլ ելք չէր մնում, քան զենքի դիմել:

Զանգիբասարը ռազմական տեսակետից բավականին լավ էր ամրացված, թուրք սպաների և ասկյարների ղեկավարությամբ փորվել էին խրամատներ, ստեղծվել պաշտպանական ամրություններ: Հայկական բանակի չտարի տվյալներով Զանգիբասարն ուներ չուրջ 4000 տեղացի մարտիկ, 600-800 ասկյար, 3 թնդանոթ և 8 գնդացիր[3]: Ռազմական գործողությունները սկսվեցին հունիսի 19-ին և ավարտվեցին հունիսի 21-ին, ինչը ևս խոսում է թշնամու ցուցաբերած համառ դիմադրության մասին: Իսկ թե ինչպես ընթացան մարտական գործողությունները, վկայաբերենք Զանգիբասարի օպերացիան իրականացրած Վաղարշապատի զորախմբի հրամանատար գնդ. Ա. Շահմազյանին.

«Հունիսի 19-ին Նորագավթի զորայունը ճեղքեց հակառակորդի դիրքերը Աղջա-Ղչլաղ – 425 բարձունք – 411 բարձունք ճակատի վրա և գրավեց Հաջի-Էյլաղ գյուղը: Այսպիսով ողջ զանգիբասարյան

[1] «Մշակ», 4 հուլիսի 1920թ.:
[2] Տե՛ս «Նոր աշխատավոր», 23 մայիսի 1920թ.:
[3] Տե՛ս «Հառաջ», 27 հունիսի 1920թ.:

դիրքերի բանալին խլվեց խռովարարների ձեռքից, որով և Զանգիբասարի բախտը նախորոշվեց:

Փարաքարի զորայունը գրավեց Գոյքիվմբեթ, Քելալի և Արբաթ գյուղերը: Ղարխունի զորայունը գրավեց Թաղա Ղարխուն գյուղը և ակտիվ գործողություններ վարեց Զոբան-Քեարա և Շողու-Մեխմանդար գյուղերի դեմ:

Հակառակորդը մաքրեց երկաթուղագծից հյուսիս ընկած բոլոր գյուղերը, բացի Ղարաղչլաղ, Շողու-Մեխմանդար և Զոբան-Քեարա գյուղերից և սկսեց փախչել դեպի հարավ, երկաթուղագծի այն կողմը:

Ինձ հանձնված զորախմբին հրամայեցի վերջնականապես մաքրել խռովարարներից երկաթուղագծի հյուսիսային կողմում ընկած գյուղերը՝ և հետո հարձակվել հարավային գյուղերի վրա:

Հունիսի 20-ին մեր զորամասերը շարունակեցին հետապնդել խռովարարներին: Հունիսի 21-ի լուսաբացին կարճ և վճռական կռվից հետո գրավեցինք Սարաջալար գյուղը, որով և կատարվեց զորախմբին հանձնարարված խնդիրը»[1]:

Զանգիբասարի հունիսյան կռիվների մասին մամուլում և արխիվներում այլ նյութեր էլ են պահպանվել, բայց, կարծում ենք, վերը ներկայացվածն էլ բավարար է թշնամական այդ որջի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար: Միայն ավելացնենք, որ որպես ռազմական ավար հայերի ձեռքն անցան 2 թնդանոթ, 3 գնդացիր, մի քանի հազար փամփուշտ և այլ ռազմամթերք[2], թեև այս դեպքում կարևորը ոչ թե ռազմավարի քանակն է կամ թշնամու կենդանի ուժին հասցված վնասը, այլ այն բարոյահոգեբանական ու նաև քաղաքական նշանակությունը, որ ստանում է Զանգիբասարի ենթարկումը Հայաստանի իշխանություններին: Առավել ևս, որ ռազմավարի մասին մամուլում եղած տվյալները միշտ չէ, որ համընկնում են: Օրինակ, եթե «Մշակը» գրում է, թե 3 գնդացիր է անցել հայերի ձեռքը, ապա «Ռազմիկը»՝ 4, իսկ «Ժողովուրդը»՝ 5: Այս վերջինը տվյալներ է հաղորդում նաև մեր կորուստների մասին. «մինչև այսօր մեր կորուստներն են. սպանված երկու սպա՝ Ղարիբյան և Քաջազնունի, 20 զինվոր, վիրավորված 7 սպա և 100 զինվոր: Թուրքերի կորուստները դեռ հայտնի չեն: Ուրեմն մինչև այժմ թուրքերից խլված են ընդամենը երկու թնդանոթ, 150 ռումբ, 5 գնդացիր, մեծաքանակ փամփուշտի պաշար և

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս «Մշակ», 4 հուլիսի 1920թ.:

պարապ փամփուշտներ, որոնց ժողովելու համար այսօր երկաթուղով հայ սկաուտներ ճանապարհվեցին Զանգիբասար»[1]: Ավելացնենք նաև, որ կառավարությունն իր խոստման տերը եղավ և ապահովեց այն գյուղերի անվտանգությունը (օր. Ուլուխանլու), որոնք նախապես հայտնել էին իրենց հպատակությունը: Բարյացակամություն դրսևորվեց նաև ապստամբ գյուղերի խաղաղ բնակչության նկատմամբ՝ ապահովության և անվտանգության երաշխիքներ տալով բոլոր այն մուսուլմանաբնակ գյուղերին, որոնք կհայտարարեին Հայաստանի կառավարությունը ճանաչելու մասին և կանցնեին խաղաղ աշխատանքի:

Զանգիբասարի և գրեթե նույն օրերին Կարսի զորախմբի ուժերով իրականացված Օլթիի գրավումը հայրենասիրության մեծ վերելք առաջացրեց հանրապետությունում: Հասարակական-քաղաքական շրջաններում խոսում ու պահանջում էին զորքերն էլ ավելի առաջ շարժել, հպատակեցնել նաև Վեդիբասարը, Շարուր-Նախիջևանը, գրավել Ալաշկերտը և այլն: Սակայն կառավարությունը չէր կարող չգիտակցել, որ թեև հունիսյան ընդհանուր զորահավաքը հնարավորություն էր տվել հանրապետական զորքերի թիվը որոշ չափով մեծացնել, բայց-ևայնպես սեփական ուժերով Թուրքա-Հայաստանի այս կամ այն տարածքի գրավումը առանց եվրոպական տերությունների օգնության ծանր և անկանխատեսելի հետևանքներ կարող էր ունենալ: Դա պարզ երևաց Օլթիի դեպքերից անմիջապես հետո, որոնց մենք մանրամասն չենք անդրադառնա, բայց մի փոքր անդրադարձ անհրաժեշտ ենք համարում՝ ընթերցողին որոշ պատկերացում տալու նպատակով:

Օլթիի գավառը նախկինում վարչականորեն մտնում էր Կարսի մարզի մեջ: Սակայն անգլիացիները, Կարսը տալով Հայաստանի Հանրապետությանը, Օլթիի գավառը անջատել էին նրանից՝ պատճառաբանելով, թե այն հիմնականում մուսուլմանաբնակ է: Հայաստանը շահագրգռված էր Օլթիի հարցում, քանի որ այնտեղ քարածխի հարուստ պաշարներ կային, որոնք կարող էր ինչ-որ չափով մեղմել վառելիքային սուր ճգնաժամը: Հարկ ենք համարում նաև նշել, որ թեև Օլթիի վրա հարձակման համար առիթ ծառայեց հունիսի 18-ին թուրք-քրդական հրոսակախմբերի հայտնվելը Փանջուրեթ-Դորթ-Քիլիսեի հատվածում, բայց ճշմարտությունն այն է, որ մինչ այդ Հայաստանի կառավարությունն արդեն որոշում ուներ Օլթիի քարածխի հանքերը գրավելու մասին և այդ միջադեպը պարզապես օգտագործեց նախապես ծրագրած

[1] «Ժողովուրդ», 23 հունիսի 1920թ.:

հարձակումն իրագործելու համար: Ճի՞շտ էր վարվել արդյոք կառավարությունն Օլթին գրավելու որոշում կայացնելով՝ թե ոչ, դա ևս այստեղ քննարկելու հարց չէ: Ուղղակի նշենք, որ Հայաստանի կառավարությունը գտնում էր, որ Օլթիի շրջանի գրավումը չպետք է համարվի ագրեսիա, քանի որ մտնում էր Ռուսաստանի՝ 1914թ. սահմանների մեջ: Դրա համար էլ Օլթի մտնելուն պես Կարսի զորախմբի հրամանատարությունը հեռագրով տեղեկացրեց Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատար Կարաբեքիր փաշային, թե հայկական զորքերը չեն անցնի 1914թ. սահմանը: Սակայն դա չհանգստացրեց Թուրքերին և արդեն հունիսի 21-ին Կարաբեքիր փաշան՝ Հայկական բանակի հրամանատարությանն ուղղած հեռագրով, իսկ 24-ին Անկարայի կառավարության արտաքին գործոց կոմիսար Բեքիր Սամի բեյը՝ ՀՀ արտգործնախարարին հասցեագրած նոտայով, պահանջում են զորքերը դուրս բերել գրաված շրջաններից[1]: Կողմերի միջև նոտաների փոխանակություն կատարվեց նաև հետագայում, բայց կոնֆլիկտը չհարթվեց. եթե հայկական կողմը իր գործողություններն արդարացնելու համար վկայակոչում էր 1914թ. սահմանները և Մուդրոսի զինադադարը, որով Թուրքիան պարտավորվել էր իր զորքերը հետ քաշել այդ սահմաններից արևմուտք, ապա Թուրքերը վկայակոչում էին Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը: Այդ է պատճառը, որ Օլթիի դեպքերով ծայր առած սահմանային ընդհարումները, մերթ ժամանակավորապես հանդարտվելով, մերթ մեծապես բորբոքվելով, շարունակվեցին ընդհուպ մինչև Թուրքական բանակի սեպտեմբերյան ընդհանուր հարձակումը: Այդ ընդհարումներին այստեղ իհարկե չենք անդրադառնա, բայց հարկ ենք համարում նշել, որ դրանք բավականին դաժան բնույթ են կրել և պետք է որ անհանգստացնեին Հայաստանի կառավարությանը ու բանակի հրամանատարությանը: Առավել ևս, որ Զանգիբասարի և Օլթիի դեպքերից կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ քեմալական ղեկավարությունը, աջ և ձախ աղմկելով Հայաստանում մուսուլմանների նկատմամբ բռնությունների և քեմալական շարժման թիկունքին սպառնացող վտանգի մասին, սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել ռուսական Կարմիր բանակին ևս Հայաստանի դեմ ռազմական գործողությունների մեջ ներքաշելու, հանրապետությունը բոլոր կողմերից օղակելու ուղղությամբ: Արդեն հունիսի 27-ին Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան հատուկ նամակով դիմեց 11-րդ բանակի հրամանատարությանը՝ խնդրելով Թուրքական բանակի հետ կապ հաստատելու նպատակով արագացնելու Զանգեզուրի գրավումը: Թուրք հրամանատարը նման միջոցառման նպատակահարմարությունը պատճառաբանում էր նրանով, որ հայկական զորքերի կողմից Զանգիբասարի և Օլթիի գրավման հետևանքով երկու բանակների միջև կապը կարող է խզվել: Անշուշտ դա կեղծ պատճառաբանություն էր, որովհետև բավական է նայել քարտեղին՝ համոզվելու համար, որ Արարատյան դաշտում գտնվող Զանգիբասարը և Կարսից հյուսիս-արևմուտք ընկած Օլթին ռուսական և Թուրքական բանակների միջև կապի հաստատման գործում որևէ դեր ունենալ չեն կարող: Ուրեմն Կարաբեքիրին տվյալ դեպքում անհանգստացնողը ոչ թե կապի խզման վտանգն էր, այլ ռուսական զորամասերին հնարավորինս շուտ հայերի հետ պատերազմի մեջ ներքաշելը: Դրա համար էլ Բայազետում կանգնած Թուրքական դիվիզիայի հրամանատարին կարգադրեց մի զորամաս մտցնել Նախիջևան: Հուլիսի 2-ին 300 ասկյարներից բաղկացած մի զորամաս մտավ Նախիջևան, որի ներկայացուցիչը շուտով հայտնվեց Շուշիում և դարձյալ առաջ քաշեց Նախիջևանի շրջանում երկու զորքերի միավորման խնդիրը: Սակայն Կարաբեքիրի ջանքերն այս անգամ իզուր անցան. հունիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն քննության առնելով այդ հարցը, Հայաստանում ռուսական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու որոշում կայացրեց հետևյալ ուշագրավ ձևակերպումով. «Առաջարկել ընկ. Չիչերինին հրահանգ տալ այն մասին, որ ռուսական զորամիավորները առաջ չչարժվեն դեպի Հայաստան: **Այդ կապակցությամբ ներշնչել կովկասյան ընկերներին կրկնապատկել զգուշությունը, խուսափելու համար Թուրքական հարձակումը հրահրելուց»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ադրբեջանը ևս անմասն չմնաց հակահայկական հիստերիայից: Հուլիսի 6-ին Ադր. ԽՍՀ արտգործժողկոմ Հուսեյնովը, ՀՀ արտգործնախարար Օհանջանյանին (պատճենը՝ արտգործժողկոմ Չիչերինին և Վրաստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Կիրովին) ուղղած նոտայում մեղադրելով Հայաստանին, որ նրա զորքերը «Զանգիբասարը ջախջախելուց և այն մուսուլման գյուղացիությունից մաքրելուց հետո հարձակում են գործում Շարուր-Նախիջևանի շրջանի վրա» և որ հուլիսի 5-ին հարձակումներ են իրագործել նաև Ղազախի

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 1:

[1] ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի..., էջ 216:

գավառում, եզրափակում է. «...**իմ կառավարությունը չի կարող այդ ամենը չդիտել որպես Խորհրդային Ադրբեջանի դեմ ռազմական գործողությունների սկսում** և պահանջում է հայկական զորամիավորումների կողմից ամեն մի հարձակման անհապաղ դադարեցում: Հակառակ դեպքում իմ կառավարությունը հարկադրված է արձանագրել, որ հուլիսի 2-ին կայացած համաձայնությունը[1] լուծարված է և իրեն ազատ կհամարի հետագա գործողություններում[2]» (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Հուլիսի 6-ի դրությամբ ոչ Վեդիբասարի և ոչ էլ Շարուր-Նախիջևանի ուղղությամբ հայկական զորքերը որևէ շարժում չէին ձեռնարկել: Կեղծ էր նաև Ղազախի շրջանում հարձակման մասին նոտայում նշվածը, ինչը հիմնավոր ցույց է տրվում Հ. Օհանջանյանի հուլիսի 7-ի պատասխան նոտայում[3]: Մնում է հետևություն անել, որ կա՛մ Ադրբեջանը Զանգիբասարի նկատմամբ հավակնություն է ներկայացնում, կա՛մ էլ առիթն օգտագործում է խուսափելու հուլիսի 2-ին կայացած համաձայնությունից և հրահրելու ու առաջ բերելու պատերազմ, ինչը հնարավորություն կտար նորանոր տարածքներ նվաճել, անշուշտ, ռուսական Կարմիր բանակի օգնությամբ: Բայց ինչպես և մայիսյան օրերին, այս անգամ էլ Մոսկվան հավանություն չտվեց Բաքվի տաքգլուխների ագրեսիվ նկրտումներին: Հուլիսի 7-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն, անդրադառնալով Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամների և Վրաստանում, Հայաստանում և Թուրքիայում խորհրդային դիվանագիտական ներկայացուցիչների համար Զիչերինի մշակած հրահանգների նախագծին, որոշեց հաստատել այն: Նախագիծը բաղկացած էր 9 հոդվածներից, որոնցից 7-ը ուղղակի առնչվում են մեր թեմային: Նրանում ասված է. «Քանի որ մեր ռազմական դրությունը մեզ հնարավորություն չի տալիս ռուսական զորամասերով ամբողջությամբ գրավել Ղարաբաղը, Զանգեզուրի գավառը, Նախիջևանը, Ջուլֆան, Շարուր-Դարալագյազի գավառը, ռուսական ռազմական իշխանությունները պետք է սահմանափակվեն զբաղեցնելով Հայաստանի և Ադրբեջանի միջև այն վիճելի տարածքները, որոնք նրանց կողմից այժմ գրավված են, այսինքն՝ Շուշին և Ջեբրաիլը՝ բացառելով այս կամ այն հարևան հանրապետության զորքերի միջամտությունը, ինչպես որ ռուսական կառավարությունը արդեն որոշել էր և հայտնել Կովկասի խորհրդային իշխանություններին: Ոչ մի ադրբեջանական և հայկական իշխանություններ նշված տեղերում չեն կարող թույլատրվել: Այդ տեղերում ռուսական զորամասերի խնդիրների մեջ պետք է մտնեն. ա) ընդհանուր կարգի պահպանումը, բ) թաթարների և հայերի միջև ընդհարումներ չթույլատրելը, ըստ որում հատուկ ուշադրություն պետք է դարձվի խառը բնակչությամբ շրջաններին, որտեղ նշված ազգություններից մեկը փոքրամասնություն է կազմում...»[1]: Նախագծում խոսվում է նաև այն մասին, որ ռուսական զինվորական հրամանատարությունը չպետք է միջամտի տեղական բնակչության կողմից վարչական մարմինների ստեղծման գործին, պետք է ազգաբնակչության մեջ բացատրական աշխատանք տանի այն մասին, որ ռուսական զորքերի կողմից վիճելի տարածքների գրավման նպատակը ազգամիջյան թշնամանքի վերացումն է, որ այդ տարածքների պատկանելիությունը այս կամ այն հանրապետությանը կորոշվի խառը հանձնաժողովի կողմից՝ Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ և որ «խառը հանձնաժողովը կղեկավարվի բնակչության ազգագրական կազմով ու նրա կամքով»[2]:

Զիչերինի կազմած հրահանգների նախագծի տակ իր ստորագրությունը կդներ ամեն մի լրջախոհ մարդ, բայց ոչ երբեք Նարիմանովի խմբի անդամները, որոնց ո՛չ բնակչության ազգագրական կազմն էր հետաքրքրում, ո՛չ էլ նրա կամքը: Միակ չափանիշը, որով նրանք ղեկավարվում էին, զենքի ուժով բոլոր վիճելի տարածքների գրավումը և Թուրքիայի հետ անմիջական կապի հաստատումն էր: Դրա համար էլ խուսափում էին ոչ միայն եռակողմ, այլև երկկողմ՝ հայ-ադրբեջանական կոնֆերանսի գումարումից, թեև հուլիսի 10-ին և 11-ին կողմերի միջև նոտաների փոխանակություն կատարվեց քննարկվելիք հարցերի շուրջը, այն է՝ միմյանց նկատմամբ ագրեսիվ գործողությունների դադարեցում, ձերբակալվածների (Ադրբեջանում դաշնակցականների և Հայաստանում՝ կոմունիստների) փոխանակում, վիճելի բոլոր հարցերի լուծում կոնֆերանսում և այլն: Բայց եթե Հայաստանը առաջարկում էր կոնֆերանսը գումարել Թիֆլիսում, ապա Ադրբեջանը պնդում էր

[1] Խոսքը հուլիսի 15-ին հայ-ադրբեջանական կոնֆերանս գումարելու մասին էր, որտեղ պետք է քննարկվեին բոլոր վիճելի հարցերը: Հուսեյնովի հետ այդ համաձայնությունը կայացվել էր Թիֆլիսում Տ. Բեկզադյանի նախաձեռնությամբ և Ս. Կիրովի միջնորդությամբ:

[2] ՀԱԱ, Ֆ. 278, ց. 1, գ. 35, թ. 32:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 38, թ. 117:

[1] ՀՀ-ն 1918-1920թթ. փաստաթղթերի..., էջ 219-220:

[2] Նույն տեղում, էջ 220:

Ղազախի կամ Վլադիկավկազի վրա[1]:

Ներքին և արտաքին ճակատներում պատերազմական դրության առաջացումը, զենքի ու զինամթերքի սուր պակասը հարկադրեցին Հայաստանի կառավարությանը մի անգամ ևս օգնության խնդրանքով դիմել Անտանտի տերություններին: Հենց այդ նպատակն էին հետապնդում նախկին վարչապետ Ալ. Խատիսյանի բանակցություններն Անդրկովկասում արևմտյան տերությունների ներկայացուցիչների հետ 1920թ. մայիս-հունիսին: Ֆրանսիայի գերագույն կոմիսար, գրաֆ դե Մարտելի հետ մայիսի 20-ին կայացած հանդիպումը առանձնակի հետաքրքրություն չի առաջացրել, ուստի դրան չենք անդրադառնա: Առավել հետաքրքիր է Բաթումի մարզի անգլիացի նահանգապետ գեն. Կուկ-Կոլլիսի հետ ունեցած նրա զրույցը, որը տեղի է ունեցել Բաթումում մայիսի 24-ին: Այն նաև սղագրվել է, որից և պարզ է դառնում, որ Խատիսյանը գեներալի առաջ իր կառավարության անունից երկու կարևոր հարց է դրել՝ 1. ռազմական, 2. քաղաքական:

Առաջին հարցի մասին խոսելիս Խատիսյանը ներկայացրել է այն ծանր վիճակը, որ ստեղծվել է Հայկական բանակում զենքի և զինամթերքի պակասի պատճառով, և հայտարարել, որ «Հայկական բանակը դրանց սուր կարիքն է զգում և ամբողջովին կկորցնի մարտունակությունը, եթե ամենակարճ ժամանակամիջոցում դրանք չստանա: Մենք ունենք բավականաչափ երեքգծանի հրացան, բայց չունենք նրանց համար փամփուշտ: Ունենք 40 միլիոն Լեբելի փամփուշտ, բայց չունենք հրացան: Մինչդեռ 10 հազար Լեբելի հրացանը և ռուսական երեքգծանու մի քանի միլիոն փամփուշտը մեզ հնարավորություն կտան ստեղծել նոր բանակ, որի ընդհանուր թիվը, ինչպես Լորդ Քերզոնն է նշել, կարող է հասնել 40 հազար մարդու»[2]:

Առավել տպավորիչ է եղել Խատիսյանի խոսքը քաղաքական իրադրության մասին. «**Հայ ժողովուրդը անվեհեր ժողովուրդ է և երբեք գլուխը չի կորցնում: Բայց նա ուզում է ճշմարտությունն իմանալ. մտադի՞ր են դաշնակիցները իրական օգնություն ցույց տալ նրան, թե՞ ոչ:** Զպետք է մոռանալ, որ մեր նկատմամբ դաշնակիցների ներկա անորոշ վերաբերմունքը Հայաստանում բոլշևիզմի պրոպագանդմանը նպաստող գործոններից մեկն է: Այսպես օրինակ, անգլիացիների կողմից Բաթումից մեր երկու ինքնաթիռների դուսբերման վրա դրած արգելքը, բոլշևիկներին հնարավորություն է տալիս հաստատելու, որ դաշնակիցները ոչ միայն մտադիր չեն մեզ օգնելու, այլև ուղղակի խանգարում են: Եվ այդ կերպ նրանք համոզում են բնակչությանը, որ Հայաստանի ժողովուրդը և կառավարությունը պետք է կողմնորոշվեն բացառապես դեպի Խորհրդային Ռուսաստանը, որը միակն է, որ կարող է մեզ օգնել»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, Անգլիայի ներկայացուցչի առաջ Խատիսյանը հարցը դրել է պարզ ու հստակ, առանց դիվանագիտական սեթևեթանքների. «Հայկական բանակը կորցնում է մարտունակությունը զենք և զինամթերք չունենալու պատճառով, Անգլիան ոչ միայն չի օգնում, այլև խանգարում է՝ Հայաստանի ինքնաթիռները արգելափակելով Բաթումում»: Սակայն որքան էլ տարօրինակ է, գեն. Կուկ-Կոլլիսը, մի կողմից համաձայնում է Խատիսյանի հարցադրումների հետ, մյուս կողմից դիվանագիտորեն խուսափում պարտավորեցնող պատասխան տալուց՝ մեկ վկայակոչելով այն, որ «զենք մատակարարելը իր ուժերից վեր է և իր իրավասության շրջանակներից դուրս է», մեկ այն, որ «Սան-Ռեմոյում ուղեղները դանդաղ են աշխատում, իսկ իրադարձություններն այստեղ խիստ արագ են ծավալվում», և վերջապես այդ ծանր խոսակցությունից գլուխը պրծեցնելու համար հայտարարում. «Ես գրում և ուղարկում եմ զեկուցագիր զեկուցագրի հետևից, բայց դրանք բոլորը մնում են անհետևանք: Դրա համար ես գտնում եմ, որ Դուք անձամբ պետք է տեսնվեք և խոսեք Կոնստանտինոպոլում Գերագույն կոմիսար ադմիրալ Դե-Ռոբեկի հետ»[2]: Գործին չօգնեց նաև Խատիսյանի ակնարկը բոլշևիկների և Թուրք-քեմալականների հնարավոր միավորման հեռանկարի մասին. «Էնզելիից բոլշևիկները կհասնեն Պարսկաստանի խորքերը՝ Թեհրան և Թավրիզ, և կձգտեն ամբողջ Մերձավոր Արևելքը վարակել բոլշևիզմով[3]: Այդ նպատակով նրանք մտադիր են և Հայաստանը հատել երկու ուղղությամբ. 1. Ղարաքլիսի, 2. Ղարաբաղի: Իսկ թուրքերը, որոնց հետ միավորվելու են նրանք գնում, բացի այդ, մեզ սպառնում են ևս երկու կողմից՝ Էրզրումի և Բայազեդի: Այնպես որ, մենք մեր միլիոն փամփուշտով նստած ենք

[1] Տե՛ս «Մշակ», 15 հուլիսի 1920թ.:

[2] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 73:

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, թ. 74:

[3] Մայիսյան այդ օրերին Կասպից ծովի խորհրդային նավատորմը անգլիացիների համար անսպասելի դեսանտ էր ափ հանել Էնզելիում, գրավել քաղաքն ու շրջակայքը և հարկադրել անգլիացիներին հեռանալու Իրանի հյուսիսային այդ շրջանից:

մեջտեղում՝ Երևանում, չիմանալով, թե ո՞ր կողմ ստիպված կլինենք դրանք ուղարկել»[1]:

Սղագիր այս փաստաթուղթը վկայում է, որ Խատիսյանը բավականաչափ համառություն է ցուցաբերել՝ ձգտելով որևէ խոստում կորզել անգլիացի գեներալից. «Այսպիսով, – եզրափակել է իր խոսքը Խատիսյանը, – ամեն դեպքում, Ձերդ գերազանցություն, հարկավոր է բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի ես կարողանամ դրական պատասխան տալ իմ կառավարությանը և ժողովրդին՝ դաշնակիցների կողմից մեզ իրական օգնություն ցույց տրվելո՞ւ է, թե՞ ոչ: Այնպես որ, Հայաստանում բոլշևիզմ կլինի թե ոչ, կախված է ձեր պատասխանից»[2]: Ավելացնենք նաև, որ Խատիսյանը պատրաստակամություն էր հայտնել իսկույն ևեթ մեկնել Ստամբուլ՝ բարձրացված հարցերի չուրջ ադմիրալ Դե-Ռոբեկի հետ բանակցելու, եթե Կուկ-Կոլլիսը հեռագրակապի միջոցով պարզի, որ ադմիրալը դա նպատակահարմար է համարում: Նման մտավախության առիթ էր տվել այն հանգամանքը, որ հենց Խատիսյանի հանձնարարությամբ Ստամբուլում Հայաստանի ներկայացուցիչ Թախտաջյանը մայիսի 12-ին և 21-ին ներկայացել էր Դե-Ռոբեկի օգնական, ադմիրալ Վեբբին, հանձնել Խատիսյանի երկու նոտաները, քննարկել Բաթումում գտնվող ինքնաթիռների և զենքի մատակարարման հարցը, բայց դեռևս կոնկրետ պատասխան չէր ստացել[3]:

Արխիվային վավերագրերը վկայում են, որ Խատիսյանը դաշնակիցների ներկայացուցիչների հետ զենք և զինամթերք ստանալու, ինչպես նաև ռազմաքաղաքական մի շարք կարևոր հարցերի չուրջ առավել ուշագրավ բանակցություններ վարել է Թիֆլիսում: Դրանց մասին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունից Երևան՝ ՀՀ արտգործնախարարություն, ուղարկված հունիսի 29-ով թվագրված զեկուցագրում ասված է. «Կառավարության արտակարգ լիազոր պ. Խատիսյանը Թիֆլիսում գտնվելու ժամանակ դաշնակիցների ներկայացուցիչներին արել է հետևյալ հայտարարությունը. Հայաստանի կառավարությունն անհրաժեշտ է համարում մոտ ապագայում, այսինքն մինչև օգոստոս ամիսը, տեղավորել Թուրքահայերին, որոնք վեց տարուց ավելի թափառում են տարբեր երկրներում, գլխավորապես Հայաստանում, որտեղ նրանց թիվը հասնում է մոտ

[1] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 74:
[2] Նույն տեղում, թ. 75:
[3] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 368, ց. 1, գ. 4, թ. 50-51:

300 հազարի: Բացի նրանցից, Հայաստանի սահմաններից դուրս կան բազմաթիվ գաղթականներ, որոնք սպասում են հարմար պահի (կամ կառավարության կոչին), որպեսզի վերադառնան հայրենիք: Այդ վերադարձը պետք է տեղի ունենա հնարավորին չափ շուտ, որպեսզի նրանք մինչև ձմեռ կարողանան ապահովվել ցանքսով: Այդ նպատակով **կառավարությունն անհրաժեշտ է համարում հենց հիմա գրավել Հայաստանի ներկա սահմաններին սահմանակից նախկին Թուրքահայաստանի հողերը և առաջին հերթին Ալաշկերտի հովիտը և Բայազեդը**՝ պայմանով, որ դաշնակիցները Հայաստանին ցույց կտան որոշակի աջակցություն և ռազմական օգնություն: Վերջինը պետք է արտահայտվի նրանով, որ դաշնակիցները սեփական ուժերով կգրավեն Էրզրումի և Տրապիզոնի շրջանները և այդպիսով հայկական զորքերին հնարավորություն կտան գրավելու մոտակա շրջանները»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, Ա. Խատիսյանի հայտարարության այս մասում առաջ է քաշված երեք խնդիր. 1. Թուրքահայ գաղթականների տեղավորում, 2. Ալաշկերտի և Բայազեդի գրավում հայկական զորքերով, 3. Էրզրումի և Տրապիզոնի գրավում Անտանտի տերությունների կողմից:

Որքանո՞վ իրատեսական և հիմանվորված էր այս խնդիրների կատարումը: Ինչ խոսք, եթե Ալաշկերտի հովիտը գրավվեր ու բնակեցվեր հայերով, ապա դրանով լուրջ նախադրյալ կստեղծվեր ոչ միայն Շարուր-Նախիջևանը զրկելու Անատոլիայի հետ կապի հնարավորությունից, այլև Կարմիր բանակին, որն այդ նույն ժամանակ շարժվում էր դեպի Զանգեզուր այնտեղից Նախիջևան մտնելու մտադրությամբ: Ճիշտ է, հունիսին հայկական կառավարությունը դեռ չէր կարող կանխատեսել Կարմիր բանակի կողմից Նախիջևանի գրավում, քանի որ Գ. Չիչերինը Լ. Շանթի պատվիրակության հետ բանակցություններում իր կառավարության անունից բազմիցս հավաստիացրել էր, որ Նախիջևանը համարում են Հայաստանի անբաժանելի մասը:

Կարո՞ղ էին արդյոք հայերը սեփական ուժերով գրավել Ալաշկերտի հովիտը, որտեղ կանգնած էր թուրքական 9-րդ դիվիզիան: Գուցեև կարող էին, եթե Անտանտի տերությունները իրապես օգնեին հայկական բանակին, բայց պահել այդ տարածքները հեշտ չէր լինի, ինչի մասին են վկայում թեկուզ 1919թ. հուլիս-օգոստոսյան դեպքերը Շարուր-

[1] **Է. Ա. Զոհրաբյան**, 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1977, էջ 95:

Նախիջևանում: Այդ դեպքերը նաև վկայում էին, որ դաշնակից տերությունների վրա հույս դնել պետք չէ: Մինչդեռ, դատելով Խատիսյանի հայտարարությունից, Հայաստանի կառավարությունը շարունակում էր հավատալ դաշնակիցներին. «Կառավարությունը, – ասված է Խատիսյանի հայտարարության մեջ, – դա համարում է դաշնակիցների ընդհանուր գործը՝ Թուրքիայի հետ կնքված պայմանագրի իրագործման տեսանկյունից[1] և ցանկանում է իմանալ վերջիններիս կարծիքը այդ գործողությունների հնարավորության մասին: Դրական կարծիքի դեպքում՝ գործողությունների կոորդինացման նպատակով, կարող է ծագել անհրաժեշտություն ստեղծելու կապ մեր և դաշնակիցների գլխավոր շտաբների միջև»[2]: Ալ. Խատիսյանը, անշուշտ, այնքան միամիտ չէր, որ չհասկանար՝ Անտանտի տերություններն առանց քաղաքական շահի չեն ներքաշվի նման գործողությունների մեջ: Եվ կարծելով, թե նրանք իսկապես շահագրգռված են քեմալական շարժման դեմ պայքարի հարցում, ներկայացրեց նաև իր կառավարության հետևյալ ռազմաքաղաքական նկատառումները. «Նախ և առաջ, ստրատեգիական տեսակետից, **գրավելով Ալաշկերտի հովիտը և Բայազեդը, մենք մեզ համար հնարավորություն կստեղծենք վերջնականապես կտրել մեր սահմաններում գտնվող մուսուլմանությունը և Թուրք-քրդական հրոսակախմբերը Թուրքական ազգային ուժերից** (Մ. Քեմալի): Երկրորդ, **նպատակասլաց կօգտագործենք Թուրքահայերից կազմված զինված ուժերը,** որոնք ակնառու դեր խաղացին վերջին բոլշևիկյան շարժման ճնշման գործում՝ իրենց վրա վերցնելով ապստամբության անմիջական ճնշման ամբողջ ծանրությունը: **Այդ ուժերը երկար անգործության հետևանքով կարող են չարիք դառնալ երկրի հանգստության համար՝** վերածվելով ավազակների հրոսակախմբի: Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ելք տալ այդ ուժերին՝ օգտագործելով վերոհիշյալ նպատակի համար»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Նախ ասենք, որ կառավարության մտահոգությունը Թուրքահայ զինված ուժերը հրոսակախմբերի վերածելու հնարավորության մասին, անհիմն չէր: Նման միտումներ նկատվել էին դեռևս 1919-թ., որոնց վրա, բնականաբար, մենք կանգ չենք առնում: Ինչ վերաբերում է

[1] Մուդրոսի զինադադարի պայմանագիրը դաշնակից տերություններին իրավունք էր տալիս օկուպացնել Թուրքիայի այս կամ այն մասը՝ դրանցում անկարգություններ ծագելու դեպքում:

[2] **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ. էջ 95:

[3] Նույն տեղում, էջ 98:

Թուրքահայ ուժերի միջոցով Ալաշկերտի հովտի գրավմանը, ապա կառավարությունը անտարակույս գերագնահատել է նրանց ուժը և, հակառակը, թերագնահատել թշնամու ուժերը, ինչը հետևանք էր Հայաստանի հետախուզական ծառայությունների ոչ բավարար աշխատանքի, որոնք ստուգված և ճշգրիտ տեղեկություններ չունեին սահմանի մյուս կողմում կատարվող իրադարձությունների, Թուրքական ուժերի իրական թվակազմի ու հնարավորությունների մասին:

Իրատեսական չէին նաև կառավարության հաշվարկները Անտանտի տերություններին քեմալականների դեմ ռազմական գործողությունների մեջ ներքաշելու հարցում: Եվ խնդիրը միայն այն մասին չէ, որ դաշնակիցները մինչ այդ էլ մտադիր չէին Հայաստանի համար անգամ մեկ զինվոր զոհաբերել, ինչի մասին բազմիցս հայտարարել էին (օր. Սան-Ռեմոյի կոնֆերանսում), այլև այն, որ իրադրությունը տարածաշրջանում կտրուկ փոխվել էր ոչ ի նպաստ Հայաստանի Հանրապետության: Քեմալական շարժման ամրապնդումը Անատոլիայում, Կարմիր բանակի մուտքն Անդրկովկաս և Ադրբեջանի անասելի արագ ու անսպասելի խորհրդայնացումը ու դրան հոջորդած բոլշևիկյան շարժումները Հայաստանում չէին կարող չազդել Անտանտի տերությունների քաղաքականության վրա: Նրանք չէին կարող չտեսնել ու չհասկանալ, որ Անդրկովկասյան Հանրապետությունները ի վիճակի չեն կանգնեցնելու բոլշևիզմի տարածումը դեպի հարավ, որ այդ դերը առավել հաջողությամբ կարող է կատարել Ռուսաստանի դարավոր ախոյանը՝ ազգայնական կերպարանք ընդունած Թուրքիան, որի դաշինքը բոլշևիկյան իշխանությունների հետ համարում էին ժամանակավոր: «Թողե՛ք գործեն թուրքերը և ռուսները Կովկասում, – ասել է Լլոյդ Ջորջը, – և դուք կտեսնեք, որ շուտով նրանց միջև նորից կզարթնի դարավոր թշնամությունը...: Թող հիշեն թուրքերը, որ Ռուսաստանի հաղթանակը Թուրքիայի մահն է, և որ այդ երկու ժողովուրդները երբեք չեն կարող ընթանալ միասին»[1]:

Ճիշտ է, 1920թ. ամռանը Անգլիան դեռ աջակցում էր Հունաստանին քեմալականների դեմ պայքարում, բայց արդեն վերջիններիս հետ շփման ուղիներ էր փնտրում, ինչը առավել ցայտուն արտահայտվեց Լոնդոնի կոնֆերանսում (1921թ. փետրվար-մարտ): Հենց այդ փոփոխված տրամադրությամբ պետք է բացատրել այն փաստը, որ ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան հետաքրքրություն չցուցաբերեցին Խատիսյանի

[1] ՀԱԱ, Ֆ. 4/414, ց. 1, գ. 65, թ. 93:

ներկայացրած ծրագրի նկատմամբ: Հայաստանի կառավարության այդ ծրագրին հավանություն չտվեց նաև քեմալականների դեմ պատերազմի մեջ գտնվող Հունաստանը: Հ. Օհանջանյանին ուղարկած նամակում, խոսելով Հունաստանի վարչապետ Վենիզելոսի հետ այդ ուղղությամբ իր վարած խոսակցության մասին, Ավ. Ահարոնյանը վկայաբերում է նրա հետևյալ խոսքերը. «Դուք մի սպառնալիք եք, որի լրջությունը կարող է անհայտ լինել թշնամուն, բայց եթե դուք առաջացաք և չհաջողեցիք, կարող եք ամեն ինչ կորցնել, որովհետև ո՛չ մենք՝ հույներս և ո՛չ դաշնակիցները, ձեզ օգնության չենք գալու»[1]: Այսպիսի պայմաններում Հայաստանի կառավարությունը որոշեց հրաժարվել Ալաշկերտը և Բայազեդը գրավելու մտադրությունից և ռազմական գործողությունները շարունակել ներքին ճակատում՝ Վեդիբասարի և Շարուր-Նախիջևանի ուղղությամբ:

Ռազմական տեսակետից Վեդիբասարը (Վեդի գետի ավազանը) շատ ավելի լավ էր ամրացված, քան Զանգիբասարը: Ուներ 5-6 հազար կովողներ, որոնք Թուրք սպաների ղեկավարությամբ մարզվել ու նախապատրաստվել էին երկարատև դիմադրության: Զենքի և զինամթերքի պակաս չկար. սահմանակցելով Շարուր-Նախիջևանին՝ ադրբեջանական այդ գյուղախումբը, որի կենտրոնը Բեյուք-Վեդին էր, բնականաբար ավելի սերտ կապերի մեջ էր և ավելի մեծ օգնություն էր ստանում այնտեղից: Ահա, օրինակ, ինչ է ասել այդ մասին Նախիջևանից Սիսիան անցած ադրբեջանցի մի փախստական. «Նախիջևանում զորահրամանատարն է տաճիկ Խալիլ բեյը, որի հրամանատարության տակ կան հինգ տաճիկ սպաներ, կան և այլ տաճիկ սպաներ ու ասկյարներ, բայց նոքա գտնվում են Բեյուք Վեդու ռազմաճակատում: Բեյուք Վեդում հացը սակավ է. Նախիջևանի Թրքությունից պարբերաբար հարկադրանքի միջոցով հաց են հավաքում և փոխադրում Բեյուք Վեդու զինվորների համար»[2]:

Ինչպես տեսնում ենք, Նախիջևանի հրամանատարությունը Վեդիբասարին ավելի մեծ նշանակություն էր տալիս, և պաշտպանության համար առկա բնական ամրությունները (լեռներ, բարձունքներ, դարավանդներ) Թուրք սպաների ղեկավարությամբ վեր էին ածվել անառիկ ամրոցների: Հայկական բանակի հրամանատարությանը դա քաջ հայտնի էր: Հետևապես, պատրաստվելով հարձակման, հայերը պետք է կուտակեին այնքան ուժ և կիրառեին այնպիսի մարտավարություն,

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 168:

[2] «Հառաջ», 12 մայիսի 1920թ.:

որ չկրկնվեին 1919թ. հուլիս-օգոստոսյան անհաջողությունները:

Կառավարությունը, ինչպես և Զանգիբասարի դեպքում, փորձելով հարցը լուծել խաղաղորեն, նախ հնազանդության առաջարկ արեց, բայց ոչ մի պատասխան չստացավ: Դրան հաջորդեց այդ նպատակի համար առանձնացված հայկական զորամասերի ընդհանուր հարձակումը երկու կողմերից՝ Ղամարլուի (Արտաչատ) և Նոր-Բայազեդի (Գավառ): Ռազմական գործողությունները սկսվեցին հուլիսի 10-ին և ավարտվեցին 12-ին: 11-ին մեր զորքերը գրավեցին մի քանի ամրացված կետեր ու գյուղեր և մոտեցան Բեյուք-Վեդիին, իսկ 12-ին գրոհով վերցվեց նաև Բեյուք-Վեդին: Կռիվները բավական համառ էին, և այստեղ ևս թշնամին մարտի դաշտում թողել էր մեծ թվով սպանվածներ, զենք, զինամթերք և այլն: Ահա ինչ է ասված բանակի գլխավոր շտաբի հուլիսի 12-ի պաշտոնական հաղորդագրության մեջ.

«Հուլիսի 10-ի երեկոյան մեր զորամասերը Ղամարլուից և Նոր Բայազեդից հարձակման դիմեցին Բեյուք-Վեդի գյուղը գրավելու նպատակով:

Հուլիսի 11-ին Ղամարլուի ուղղությամբ համառ կռիվներից հետո գրավեցին Կարայալ, Ճաթղոան, Ալի-Մամեդ, Ենգիջա, Կոթուզ, Աղասի-Բեկլու և Ներքին Կարաբեկլար գյուղերը: Բեյքուր-Վեդիից հյուսիս մի վերստ հեռավորության վրա՝ Գյավուր-Ղալասի լեռան մոտ մենք հանդիպեցինք Թուրքերի կողմից հուսահատ և կատաղի դիմադրության:

Նոր-Բայազեդի ուղղությամբ հուլիսի 11-ին երեկոյան մենք գրավեցինք Աղքիլիսա, Մազյուկ, Գյոլ-Ջիգին, Ջաղին, Ջիրմանիս, Դոխնազ, Գերմանիս գյուղերը:

Մութն ընկնելուց հետո, երեկոյան մոտ ժամը 9-ին Գյավուր-Ղալասի լեռան կողմից Թուրքերը հակահարձակման դիմեցին, բայց 2-րդ գնդի հանդիպակաց գրոհով հետ չպրտվեցին:

Նահանջողներին հետապնդելով՝ 2-րդ գունդը սվինամարտից հետո գրավեց Գյավուր-Ղալասի սարը, ուր Թուրքերը Թողին բազմաթիվ սպանվածներ և մի գնդացիր «Մաքսիմ» սիստեմի:

Հուլիսի 12-ին, առավոտյան ժ. 5 20 րոպեին մեր զորամասերը մտան Բեյուք-Վեդի գյուղը: Թուրքերը փախչում էին Դավալու-Ջինջիրլուի վրայով»[1]:

Հաղորդագրության վերջին նախադասությունից պարզ երևում է, որ այս անգամ հայկական ուժերը չեն փորձել օղակի մեջ առնել Վեդի-

[1] «Հառաջ», 13 հուլիսի 1920թ.:

բասարը, ինչպես դա արել էին 1919թ. հուլիսյան դեպքերի ժամանակ, այլ, այսպես կոչված, «մարդասիրական միջանցք» են թողել, որպեսզի տեղում մնալ չցանկացող բնակիչները հեռանալու հնարավորություն ունենան: Սակայն առավել մեծ խուճապով փախչում էին կռվող ուժերը, այնքան մեծ, որ հրամանատարությունը չի հասցրել տանել շտաբի արխիվը: Ի դեպ, հենց այդ արխիվի նյութերից էլ պարզվել էր, որ Ադրբեջանի ղեկավարության և Նախիջևանում գործող օսմանյան սպայության միջև Զանգիբասարի և Վեղիբասարի հարցում որոշ տարակարծություն է եղել: «Թե այս դոկումենտները և թե մի շարք կենդանի դոկումենտների վկայություններ,- կարդում ենք «Նոր աշխատավոր»-ի հուլիսի 29-ի համարում, - գալիս են հաստատելու մի բան. այդ այն է, որ թեև Շարուր-Նախիջևանի ավանտյուրան կազմակերպված է թե Թուրքիայի և թե Նախիջևանի կողմից միասին, համերաշխ ուժերով, սակայն թող տարօրինակ չթվա, որ իր ձգտումների և նպատակների մեջ այդ շրջանների վերաբերմամբ Թուրքիան և նրա գործակալները եղել են ավելի զիջող, քան նորելուկ սատրապիայի՝ Ադրբեջան «հանրապետության» դավադիր գործակալները: **Թուրքիայի գործակալները՝ տաճիկ սպաները, պնդելիս են եղել, որ գոնե Զանգիբասարը և Վեղիբասարը ցած դնեն զենքերը և ընդունեն Հայաստանի իշխանությունը: Դրան հակառակ՝ ադրբեջանցիները պնդել են մինչև վերջ, որ Ադրբեջանի սահմանները անցնում են Երևանի տակով** (Զանգիբասարը չորս վերստի վրա է Երևանից) և որ թե՛ Զանգիբասարը, թե՛ Վեղիբասարը պիտի զենքը ձեռքին դիմադրեն Հայաստանի Կառավարության ձգտումներին՝ մտցնել այդ շրջաններում հայկական իշխանություն: Եվ ստիպել են, որ թե՛ Զանգիբասարը և թե՛ Վեղիբասարը կռվեն» (ընդգծումը մերն է- Է. Զ.):

Կարծում ենք, այստեղ տարօրինակ ոչինչ չկա. Թուրքերը իրատեսական չէին համարում այդ շրջանների անջատումը Հայաստանից, ուստի և չէին ուզում ավելորդ ծախսեր անել այդ ուղղությամբ: Իսկ որ Ադրբեջանն ավելի ախորժակով էր, երևաց դեռ Բաթումի կոնֆերանսի օրերին, որտեղ Երևանի նկատմամբ էլ պահանջ առաջադրվեց:

* * *

Բեյուք Վեղին գրավելուց հետո հայկական ուժերը չարունակեցին առաջխաղացումը, հուլիսի 14-ին անցան Գայլի Դրունքը (Արարատյան դաշտը Շարուրի դաշտից բաժանող մասը) և 3-4 օրվա ընթացքում գրավեցին մի շարք գյուղեր Շարուրի դաշտում: Հաղթանակը կատարյալ էր, և Շարուրում գտնվող Ադրբեջանից եկած հեծելազորը, թուրքական ջոկատը և տեղական ուժերը (ընդհանուր թվով՝ չուրջ 8-10 հազար) խուճապահար նահանջում էին. մի մասը՝ դեպի Նախիջևան, մի մասն էլ՝ Արաքսի մյուս ափը: «Հառաջ»-ի 1920թ. հուլիսի 29-ի համարում զետեղված Հայաստանի հեռագրական գործակալության հատուկ թղթակցի հաղորդագրության մեջ ասված է. «Զանգիբասարի, Վեղիբասարի և Գայլի Դրունքի մոտ կրած ջարդերից հետո Նուրի փաշան տաճկական աղաների և ասկյարների հետ քաշվել է Բայազեդ, ուր կենտրոնացնում է իր ուժերը: Թուրքական (ադրբեջանական - Է. Զ.) հեծելագունդը, որին մի ժամանակ ղեկավարում էր կնյազ Մաղալովը և որի անունից այնքան պարծենում էր Ադրբեջանը, մեր զորքերի հետ ունեցած վերջին ընդհարումների ժամանակ մեծ կորուստներ է կրել և Նախիջևանի վրայով անցել է Մակու»:

Շարուրը (Շարուր-Դարալագյազի գավառի դաշտային մասը) և Նախիջևանի գավառը Հայաստանի Հանրապետության այն շրջաններն են, որոնք 1919թ. հուլիսյան ապստամբության օրերին տեղի հայ բնակչության նկատմամբ գործադրած բռնություններով ավարտին էին հասցվել երկրամասի հայաթափության գործը, որի սկիզբը դրվել էր 1918թ. օսմանյան օկուպացիայի ժամանակ: Սակայն Շարուր-Նախիջևանի վերագրավումը հայոց համար կարևորվում էր ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական գործոնով: Դա Երևան-Ջուլֆա երկաթուղու գործարկումն էր, առանց որի Իրանի հետ առևտրատնտեսական կապերի զարգացումը դառնում էր անհնար:

Վեղիբասարի գրավումը և հայկական զորքերի մուտքը Շարուր այնպիսի չփոթ և սարսափ էին առաջացրել Նախիջևանում, որ այդ դեպքերի ազդեցության տակ լուծարվեցին նաև Ադրբեջանի հաստատած նահանգային իշխանությունները, և կրկին սկսեց գործել Մուսուլմանական ազգային խորհուրդը, այսպես կոչված՝ «միլլի շուրան»: Հենց սա էլ իսկույն երկու պատվիրակ ուղարկեց Երևան՝ զինադադար խնդրելու և հպատակության պայմանների մասին բանակցելու: ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը կառավարության անունից Նախիջևանի պատվիրակներին հանձնեց վերջնագրի բնույթ կրող 15 կետից բաղկացած «պայմաններ Նախիջևանի գավառի մուսուլմանական ազգաբնակչության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության իշխանությունը ճանաչելու մասին» փաստաթուղթը, որի առաջին կետում ասված էր, որ «Նախիջևանի Ազգային կոմիտեն (խորհուրդը - Է. Զ.) Նախիջևանի և Շարուրի գավառների ողջ ազգաբնակչության անունից հայտարարում է, որ այդ գավառները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության անբաժան մասը և

որ բոլոր բնակիչները իրենց համարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի»: Երկրորդ կետում ասված էր, որ Նախիջևանի ազգային խորհուրդը, ինչպես նաև գավառի բնակիչները պարտավորվում են չընդունել Թուրքերին, Զանգիբասարի, Վեդիբասարի, Շարուրի փախստականներին և Ադրբեջանի ագիտատորներին: Գավառի վարչությունը գերազանցապես մուսուլմաններից է նշանակվում, բացառությամբ Գողթանի, որտեղ այն կազմվում է հայերից (3), ազգաբնակչությունը՝ կրոնական և մշակութային հարցերում լիակատար ինքնավարություն է ստանում (4) և կարող է դատվել ըստ շարիաթի (5):

Ներկայացված պայմաններում կային նաև տնտեսական ու ռազմական պահանջներ: Այսպես. երկու շաբաթվա ընթացքում Նախիջևանը Հայաստանի կառավարությանը պետք է վաճառեր 300 ձի՝ յուրաքանչյուրի համար ստանալով 50.000 ռուբլի, 200 գլուխ քարշող անասուն՝ 30.000-ական ռուբլով, մեկ ամսվա ընթացքում դարձյալ Հայաստանի կառավարությանը պետք է հանձնվեր 300.000 փութ ցորեն, որից 150.000-ը անվճար, իսկ մնացած 150.000-ը՝ վճարով՝ փութը 2000 ռուբլով (6): Ջուլֆայից մինչև Շահթախթի ընկած հատվածում երկաթգծի պահպանությունը և քանդված հատվածների նորոգումը իրականացնում է Նախիջևանի ազգային խորհուրդը (7 և 15), վերադարձնում է 1919թ. գավթած պետական գույքը, հանձնում բոլոր թնդանոթները, գնդացիրները և ոչ պակաս քան 10.000 հրացան: Զենքի հանձնումը պետք է սկսվի այս պայմանների ընդունումից 24 ժամ հետո և ավարտվի 10 օրվա ընթացքում, ըստ որում ռազմական կազմավորումները զենքերը պետք է հանձնեն առաջին իսկ օրը (9): Կետեր կային նաև համընդհանուր ներման (11), Հայաստանի կառավարության կողմից Նախիջևանի ազգային խորհրդին ցուցաբերվելիք աջակցության մասին (12): 10-րդ կետում էլ ասված էր, որ Նախիջևանի պատվիրակների՝ Շահթախթի կայարանից մեկնելուց հետո 24 ժամվա ընթացքում ներկայացված պայմանների ընդունման մասին պատասխան չստացվելու դեպքում Հայաստանի Հանրապետության հրամանատարությունը իրենից վայր է դնում ամեն մի պատասխանատվություն[1]*:*

Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Նախիջևանի պատվիրակները Երևանից դուրս են եկել հուլիսի 19-ին և խոստացել երեք օրվա ընթացքում ներկայացնել պատասխանը (Երևան-Շահթախթի երկաթգիծը 1919թ. հուլիս-օգոստոսյան իրադարձությունների ժամանակ մի քանի տեղերում քանդվել էր ու չէր աշխատում): Հուլիսի 20-ին վարչապետ և արտգործնախարար Համո Օհանջանյանը՝ Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին ուղարկած նամակում գրում է.

«Զանգիբասարից հետո վերցրինք և Բեյուք-Վեդին, Շարուրը: Նախիջևանը հայտնեց իր հպատակությունը՝ ուղարկելով Երևան իր երկու ներկայացուցիչներին, որոնց հետ մշակվում են պայմաններ, որոնց պատճենը ուղարկում եմ Ձեզ՝ անձնական գիտության համար: ***Մենք չենք ուզում և զուցե չենք էլ կարող զինվորական ուժով գրավել այդ ամբողջ շրջանը և որ գլխավորն է, պահպանել նրան՝ ունենալով 200 վերստի մի նոր ֆրոնտ: Վերջնական գրավումը մենք կկատարենք մոտիկ ապագայում, երբ կազատվենք մյուս ֆրոնտներից:*** *Նախիջևանցիներին տրված պայմանները նպաստավոր են մեզ համար, նամանավանդ տնտեսականի տեսակետից. Նոքա ստիպված են տալ մոտավորապես երկու միլիարդ ռուբլու կոնտրիբուցիա՝ եթե մենք գնահատելու լինենք տրվելիք պարենը և ռազմամթերքը: Այդ օպերացիան տվեց մեզ ժողովրդի և զորքի տրամադրության բարձրացում, հնարավորություն կազմակերպվել և կռվել Զանգեզուրի և Ղարաբաղի վերագրավելու համար, բարձրացրեց մեր պրեստիժը թե Թուրքերի և թե եվրոպացիների առաջ և կը բաց անի Ջուլֆայի երկաթուղագիծը:*

Նախիջևանի այդ օպերացիան ցույց տվեց միաժամանակ, որ այդ շրջանի Թուրքերի ուժերը, նրանց կապը տաճիկների հետ և վերջիններիս ուժը, չափազանցրած էին»[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Իհարկե, ճիշտ էր Համո Օհանջանյանը՝ ասելով, որ դժվարը այդ երկրամասը հնազանդ պահելն է, ինչի ապացույցը 1919 թվականն էր տվել, երբ մայիսին այնտեղ մնած հայկական զորամասերը հուլիսին ստիպված եղան կռիվներով հետ քաշվել դեպի Դարալագյազ և Արարատյան դաշտ: Բայց, կարծում ենք, ընթերցողն էլ կընդունի, որ վարչապետի ոգևորությունն ու լավատեսությունը այնքան էլ հիմնավոր չէին: Ինչ խոսք, որ ապստամբ շրջանների հպատակեցումը մեծ հաջողություն էր և նպաստեց կառավարության դիրքերի ու հեղինակության ամրապնդմանը: Բայց նաև փաստ է, որ հայկական զորքերը կռվել են ոչ թե կանոնավոր բանակների, այլ անկանոն կազմավորում-

[1] *Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 484, թ. 26:*

[1] *Նույն տեղում, գ. 440, թ. 31:*

ների դեմ, որոնք թեև մարզվել էին թուրք սպաների կողմից, բայցևայնպես մնացել էին աշխարհազորային կարգավիճակում: Ուրեմն ինչպե՞ս կարելի էր այս վերջիններիս և Ղարաբաղ ու Զանգեզուր մտած ռուսական 11-րդ բանակի՝ պատերազմների բովով անցած զորամասերին նույն հարթության վրա դնել: Իսկ որ Համո Օհանջանյանը այդպես էր մտածում, երևում է նամակի շարունակությունից, որտեղ ուղղակի ասված է. «Այժմ հերթական հարցը Զանգեզուրի հարցն է: Չնայած Կիրովի խոստումներին, բոլշևիկների առաջխաղացումը շարունակվում է: Մենք, բացի դիպլոմատիկական քայլերից, պատրաստվում ենք մի լավ հարված տալ բոլշևիկներին Զանգեզուրում»[1]: Եվ ինչպե՞ս պետք է Հայաստանը «մոտիկ ապագայում» ազատվեր «մյուս ֆրոնտներից», երբ արևելքում Կարմիր բանակի զորամասերը Զանգեզուրի վրայով մոտենում էին Նախիջևանին, իսկ արևմուտքում Օլթիի դեպքերով ծայր առած սահմանային ընդհարումները քեմալական ուժերի հետ ոչ միայն վերջ չէին գտնում, այլև ավելի ու ավելի մեծ չափեր էին ընդունում՝ սպառնալով վերածվել լայնամասշտաբ պատերազմի: Տարօրինակ է, բայց փաստ, որ Հայաստանի կառավարությունը, բանակի հետախուզական ծառայությունը թյուր կարծիք ունեին քեմալական շարժման, թուրքական զինված ուժերի և նրանց կողմից Հայաստանին իրապես սպառնացող վտանգի չափերի մասին:

Վերդառնալով Նախիջևանի ազգային պատվիրակների հետ Հայաստանի կառավարության կայացրած համաձայնությանը, ապա ինչպես և պետք էր սպասել, նրանք դրժեցին խոստումը և պայմանավորված ժամկետին ոչ մի պատասխան չուղարկեցին: Այդժամ գեն. Շելկովնիկովի (Շելկովնիկյան) գլխավորած զորամասերը վերսկսեցին ռազմական գործողությունները: «Մեր կառավարության պահանջները թուրքերի կողմից չիրագործելու պատճառով մեր զորքերին ամսի 23-ին հրաման է տրված շարժվել Շահթախթիի վրա, - կարդում ենք «Հառաջ»-ի հուլիսի 27-ի համարում: Երեկ, բավականին ուժեղ կռվից հետո, մեր պանծալի զորքերի կողմից գրավված է Շահթախթի գյուղը և կայարանը, նաև Խոկը, Յուրդ Գերդասար և Ղարաբեգլար կայարանները: Թուրքերի կողմից գործում էր բավականին մեծ ուժ՝ 3 թնդանոթներով: Շահթախթին վերցնելիս թուրքերից գրավված է մեկ հատ լեռնային թնդանոթ և շատ ռումբեր: Թուրքերի մի մասը փախել է դեպի Մակուի խանությունը, մյուս մասը՝ դեպի Նախիջևան: Մնացած

[1] Նույն տեղում:

երկու թնդանոթները նրանք փոխադրեցին Մակուի խանությունը: Թուրքերը շատ նշանակալից կորուստներ են ունեցել»: Թերթի այդ նույն համարում զետեղված բանակի գլխավոր շտաբի մի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ այդ օրերին մեր զորքերը գրավել են նաև Փուսիան, Թազաքենդ, Ղուբուլու և Ղյուրաղ գյուղերը:

Թվում էր, թե այլևս ոչինչ չի կարող խանգարել Հայաստանի իշխանության վերականգնմանը Նախիջևանի երկրամասում, սակայն շուտով դեպքերն այլ ընթացք ստացան: Վարչապետ Համո Օհանջանյանը, Խորհրդարանի օգոստոսի 2-ի նիստում պատգամավորների բուռն ծափահարությունների տակ ունեցած ելույթում անդրադառնալով Հայկական բանակի հուլիսյան հաջողություններին, Նախիջևանի առաջին պատվիրակության հետ վարած բանակցություններին ու ներկայացրած պայմաններին, Մուսուլմանական խորհրդի կողմից դրանց մերժելուն և որպես հետևանք Հայկական բանակի նոր հարձակմանն ու Շահթախթիի գրավմանը, ասել է. **«Այն ժամանակ թուրքերի կողմից եկավ նոր պատվիրակություն: Մենք չծանրացրինք նախկին մեր պայմանները, ոչ մի պահանջ չավելացրինք, այլ ավելի թեթևացրինք**, միայն մի սահմանափակում դնելով, որ գաղթած ազգաբնակչությունը չպիտի վերադառնա Շարուր և Վեդիբասար՝ մինչև նոր կարգադրություն և նոր պայմաններ ստեղծվելը: **Բանակցությունները տևեցին 2-3 օր: Այն ժամանակ, երբ ժողովրդի պատվիրակները համաձայն էին ընդունել պայմանները, ժողովուրդը այս անգամ նոր ազդեցության է ենթարկվում՝ բոլշևիզմի, որի վրա և իրենց հույսն էին դրել:** Այժ մեր դեմ կանգնած են ոչ միայն տեղական կազմակերպված ուժերը, այլև հեռու հյուսիսից եկած կարմիր Ռուսաստանի և հեռու հարավից եկած նույն կարմիր, բայց ոչ խոսքով, այլ արյունով կարմիր Տաճկաստանի թափթփուկները, երեքը իրար միացած, երեքը իրար դաշնակցած»[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Քաղաքականության մեջ թուրքերը (թե օսմանյան և թե ազերի) իսկապես որ ճկուն են, պատրաստ են դաշնակցել անգամ սատանայի հետ, եթե ազգային շահը դա է պահանջում: 18-19-րդ դարերում Օսմանյան Թուրքիան իր գոյությունը պահպանում էր՝ խաղալով արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի հակամարտությունների վրա: Իսկ երբ Առաջին աշխարհամարտից հետո նա հայտնվեց Արևմուտքի կրնկի տակ, չվարանեց բռնել իր դարավոր թշնամու՝ Ռուսաստանի

[1] «Նոր աշխատավոր», 11 օգոստոսի 1920թ.:

փեշը, որը, կարմիր աստառ հագած կռվում էր Անտանտի դեմ: Ադրբեջանը մեկ օրում կարմրեց ու դարձյալ այդ նույն Ռուսաստանի օգնությամբ սկսեց իր օգտին լուծել հարևանների հետ ունեցած վեճերը: Ինչո՞ւ, ուրեմն, Նախիջևանի թուրքերը պետք է հետ մնային իրենց ավագ եղբայրներից: Իսկ գուցե հենց նրանց խորհրդո՞վ են նախիջևանցիները այդ քայլին դիմել, ինչի մասին ակնարկ կա Կիրովին ուղարկած Չիչերինի մի նամակում, «Թուրքերը, – ասված է նրանում, – գրավելով Նախիջևանը, այնտեղ խորհրդային իշխանություն են հայտարարել և առաջարկում են, որ մեր զորքերը մտնեն այնտեղ»[1]:

Բանն այն է, որ Նախիջևանի ղեկավարությունը, կորցնելով զենքի ուժով Հայկական բանակի առաջխաղացումը կանգնեցնելու հույսը ու նաև չցանկանալով ընդունել Հայաստանի կառավարության թելադրած պայմանները, որոշեց չտապեցնել ռուսական զորքերի մուտքը Նախիջևան: Հենց այդ նպատակով էլ Մուսուլմանական խորհուրդը լուծարվեց և նրա փոխարեն ստեղծվեց մի կեղծ հեղկոմ: Որ դա իսկապես կեղծ հեղկոմ էր, վկայում է թեկուզ այն փաստը, որ նրա կազմի զգալի մասը նախկին խորհրդի անդամներն էին: Դրա հետ մեկտեղ իսկույն մի պատվիրակություն ուղարկվեց Զանգեզուր՝ չտապեցնելու այնտեղ գտնվող ռուսական զորամասերի ժամանումը Նախիջևան, իսկ մեկ ուրիշը՝ հայերի մոտ՝ ոչ այնքան Հայաստանի իշխանությունը ճանաչելու ուղղությամբ նոր պայմաններ մշակելու, որքան ժամանակ շահելու, մինչև ռուսական զորքերը կհասնեն Նախիջևան: Եվ նախիջևանցիների այդ խորամանկ քայլը հաջողություն ունեցավ. մինչ հայերի հետ բանակցություններ էին ընթանում, Սիսիան հասած ռուսական 11-րդ բանակի հեծյալ գնդերից մեկը անցնում է Բիչանաղի լեռնանցքը և հուլիսի 28-ին մտնում Նախիջևան: Անչուշտ մեկ գունդը չափազանց քիչ էր զենքի ուժով հայերի առաջխաղացումը կանգնեցնելու համար: Բայց, ինչպես և հետագա դեպքերը ցույց տվեցին, ռուսական հրամանատարությունը հույսը դրել էր ոչ այնքան զենքի, որքան այն բանի վրա, որ հայերը ռուսների դեմ չեն պատերազմի: Այդպես էլ եղավ. տեղ հասնելուն պես այդ զորամասը քայլեր ձեռնարկեց հայերի հետ չփման մեջ մտնելու և նրանց հետագա առաջխաղացումը կանգնեցնելու համար: 28-րդ դիվիզիայի չտարի օգոստոսի 1-ով թվագրված մի գաղտնի հաղորդագրության մեջ հայտնելով այն մասին, որ Խալիլ փաշան

[1] **Գ. Գալոյան**, *Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր. 1999, էջ 248:*

բարեհաջող կերպով հասել է Նախիջևան, միաժամանակ ավելացվում է, որ հուլիսի 29-ի առավոտյան ժամը 6-ին հեծյալ գնդի մի վաշտապետ՝ երեք կարմիր բանակայինների ուղեկցությամբ, սպիտակ դրոշ պարզած, Ջահրի գյուղից ուղարկվել է Պախս գյուղը՝ տեղեկացնելու հայերին խորհրդային զորքերի՝ Նախիջևան մտնելու մասին, սակայն հայերը կրակ են բացել և հարկադրել բանագնացներին վերադառնալու Ջահրի: Այնուհետև հայտնվում է, որ նույն օրը՝ ժամը 18-ին, հաղորդագրություն է ստացվել, որ գեն. Մելիք-Մուրադովի հայկական զորամասը գրավել է Պախսը և շարժվում է Ջահրիի ուղղությամբ, և որ Ջահրին պաշտպանելու համար ուղարկվել է 1-ին հեծյալ գնդի 4 էսկադրոն: Հաղորդագրության մեջ նաև ասվում է, որ «Շահթախթի հատվածում դաշնակները ոչ մեր և ոչ էլ թուրքերի դեմ ակտիվ գործողություններ չեն ձեռնարկում»[1]:

Այս հաղորդագրությունից դժվար չէ հետևություն անել, որ թեև բանակցությունների ընթացքում ռազմաճակատի գլխավոր հատվածում (Շահթախթի-Նախիջևան երկաթգծի) հայկական կողմը դադարեցրել էր ռազմական գործողությունները, բայց մյուս մասերում (Պախսը և Ջահրին գտնվում են Շահթախթիից հյուսիս-արևելք) աշխատում էր ընդլայնել գրավյալ շրջանը և այնպիսի դիրքեր ձեռք բերել, որ բանակցությունների ձախողման դեպքում դյուրին լինի Նախիջևան քաղաքի գրավումը (Ջահրին Նախիջևանից հեռու է չուրջ 20-25 կմ):

Սակայն առավել ուշագրավ է հաղորդագրության այն մասը, որտեղ խոսվում է հայերի հետ բանակցություններ վարած հեղկոմի պատվիրակության մասին: Այնտեղ ասված է, որ Երևան մեկնած Նախիջևանի հեղկոմի պատվիրակությունը վերադարձել է հուլիսի 29-ին ժամը 18-ին և բերել է Հայաստանի կառավարության նոր պայմանները, որոնց գլխավոր կետերն են. Նախիջևանի գավառը անվերապահորեն ենթարկվում է Հայաստանի կառավարությանը, հանձնում է 7 հազար հրացան և յուրաքանչյուր հրացանի համար 80 փամփուշտ, բոլոր գնդացիրները, հրանոթները, 300 հազար փութ հացահատիկ, որից 150 հազարը անվճար, 300 ձի՝ իրենց թամբերով, 200 գլուխ քարշող անասուն: Հաղորդագրության վերջում հայտնելով, որ նշված պայմանների կատարման համար Հայաստանի կառավարությունը տվել է 40 ժամ

[1] *Խորհրդային բանակի կենտրոնական պատմական արխիվ, Ֆ. 195, ց. 3, գ. 456, թ. 136:*

ժամանակ, որը լրացել է հուլիսի 31-ին ժամը 14-ին, միաժամանակ ավելացնում է. որ «Նախիջևանի բնակչությունը՝ վստահ չլինելով, որ իր ուժերով կդիմակայի հայկական հարձակմանը, խուճապի է մատնված: Շատերը անցնում են Պարսկաստան: Նույն պատվիրակությունը հայտնում է, որ **Հայաստանի ռազմական նախարարը հայտարարել է, որ նշված ժամկետից չուտ Նախիջևանի շրջանում խորհրդային զորքեր հայտնվելու դեպքում հայկական հրամանատարությանը հրաման կտրվի դուրս քշել բոլշևիկներին Նախիջևանից»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Նախիջևանի պատվիրակներին Ռուբեն Տեր-Մինասյանի արած այս հայտարարությունից դժվար չէ գուշակել, որ բանակցությունների օրերին Հայաստանի կառավարությունը թեև տեղեկություններ չուներ նախիջևանցիների կողմից ռուսական զորքերի հրավիրման մասին, բայցևայնպես կասկածներ ուներ, ինչը և իրականություն դարձավ: Եվ եթե հուլիսի 29-ին, ինչպես վերը տեսանք, նրանց չհաջողվեց հայկական հրամանատարության հետ կապի մեջ մտնել, ապա հաջորդ օրերին դա հաջողվեց, բայց ոչ թե Ջահրիի, այլ Շահթախթիի հատվածում: «Շարուրի մեր զորամասերի գլխավորի մոտ եկան պատվիրակության անվան տակ երեք բոլշևիկ պատգամավորներ, - կարդում ենք «Հառաջ»-ում հրապարակված մի հաղորդագրության մեջ, - մի ռուս սպա՝ որն իր հայտարարությամբ ներկայացուցիչ է իրեն և տաճկական զորաբանակի, մի տաճիկ և մի ներկայացուցիչ Նախիջևանի ռևկոմի: ...Հիշյալ անձնավորությունները հատուկ պահակներով ուղարկված են Երևան»[2]: Հենց այս բանագնացներն էլ Շահթախթիում հայկական հրամանատարությանն էին հանձնել հուլիսի 30-ով թվագրված մի գրություն, որում ասված էր.

«1920թ. հուլիսի 28-ին ՌԽՖՍՀ կարմիր զորքերը, ինչպես և մեր դաշնակից կարմիր Թուրքիայի զորքերը, տրված հրամանի համաձայն, մտել են բնակիչների կողմից բոլորովին լքված Նախիջևան քաղաքը և նրա շրջանը՝ հայերի դեմ ռազմական գործողությունների նպատակ չունենալով:

Մեր ունեցած տվյալներով, Ձեր ենթակայության տակ գտնվող զորքերը մտադիր են հարձակվել Նախիջևան քաղաքի վրա՝ նրան հրի ու սրի մատնելու համար: Թյուրիմացություններից և անտեղի արյունահեղությունից խուսափելու համար, որոնք կարող են պետական կարևորության հետևանքներ ունենալ, Ձեզ տեղյակ ենք պահում մեր կողմից Նախիջևան քաղաքի և նրա շրջակայքի գրավման մասին:

Նախիջևան քաղաքը և նրա շրջակայքը գրված ՌԽՖՍՀ և կարմիր Թուրքիայի միավորված զորքերի հրամանատար՝ Վ. Տարխով»[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Գուցեև ճիշտ էր ասում հրամանատար Տարխովը, որ հայերի դեմ մարտական գործողություններ սկսելու նպատակ չունեն, բայց ուրիշ ինչպես անվանել, եթե ոչ ռազմական օկուպացիա, մի տարածքի գրավում, որը մինչ այդ ռուսական իշխանությունները՝ ի դեմս Գ. Ջիչերինի, բազմիցս հռչակել էին Հայաստանի անբաժանելի մաս (Լ. Շանթի պատվիրակության հետ Մոսկվայում վարվող բանակցություններում և այլն): Տարօրինակ է նաև, որ Տարխովը ներկայանում է որպես ռուսական և թուրքական միավորված զորքերի հրամանատար: Ճիշտ է, խորամանկ Կարաբեքիրը, Կարմիր բանակին հրապուրելով մտնել Նախիջևան, առաջարկել էր այնտեղ գտնվող թուրքական զորամասը դնել ռուսական հրամանատարության տակ, ինչը սակայն մերժվել էր: Այս դեպքերից երկու տարի անց՝ 1922թ. Վ. Տարխովը «Военный вестник»-ի 8-րդ համարում հրատարակված հոդվածում («Նախիջևան քաղաքի գրավումը և Կարմիր բանակի առաջին հանդիպումը Քեմալ փաշայի զորքերի հետ») գրում է, որ այն բանից հետո, երբ հուլիսի վերջին Կարմիր բանակի հեծյալ գնդերից մեկը մտավ Նախիջևան, հուլիսի 31-ին թուրքական մի ջոկատ մյուս ափից մոտեցավ Արաքսին: Թուրքերը առաջարկեցին այդ ջոկատը դնել խորհրդային հեծելազորային գնդի հրամանատար Վ. Տարխովի հրամանատարության տակ, բայց այդ առաջարկը մերժվեց[2]:

Եթե Տարխովի գրությունը համեմատելու լինենք Նախիջևանի հեղկոմի գրության հետ, որը ևս հանձնվել էր Շահթախթիի հայկական հրամանատարությանը՝ Հայաստանի կառավարությանը փոխանցելու համար, ապա այն կարող ենք համեստ համարել: Իսկապես որ, Նախիջևանի հեղկոմի գրությունը անպատկառության մի դասական օրինակ է, որի տակ դրված է հեղկոմի նախագահ Բեկտաշևի և յոթ այլ անդամ-

[1] Նույն տեղում:

[2] «Հառաջ», 3 օգոստոսի 1920թ.:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 468, թ. 33:

[2] Տե՛ս **А. Н. Хейфец**, Советская Россия и сопредельные страны Востока, 1918-1920, М. 1964, стр. 120-121.

ների ստորագրություն: Հայաստանի կառավարությանը մեղադրելով նախիջևանցիներին ստրկացնելու իմպերիալիստական ձգտման մեջ, ամպագորգոռ հայտարարություն անելով այն մասին, որ «Նախիջևանի աշխատավոր ժողովուրդը իրեն հռչակել է Ադրբեջանի Խորհրդային հանրապետության անբաժան մասը», հեղկոմ կոչվածը այնուհետև, հաղթական կերպարանք ընդունած հայտարարում է, թե Նախիջևանը իր պայքարում «հենվում է փառապանծ, հզոր և անպարտելի ռուսական, թուրքական և ադրբեջանական Կարմիր բանակների վրա», որ «Այսուհետ ձեր բոլոր առաջարկություններով խնդրում ենք անմիջականորեն դիմել Ադրբեջանի կենտրոնական կառավարությանը և ռուսական, թուրքական և ադրբեջանական Կարմիր բանակների միացյալ հրամանատարությանը, որոնք իրենց զորամասերով սույն հուլիսի 28-ից գրավել են Նախիջևանի շրջանը»[1]:

Այսպես ուրիշի ուժով հոխորտալով և Նախիջևանի խնդրում Հայաստանի կառավարության համար նոր հասցեատերեր մատնանշելով հանդերձ՝ հեղկոմ կոչվածը հարմար էր գտել ոչ թե իր նոր տերերի, այլ իր անունից վերջնագրային բնույթի մի պահանջ ներկայացնել Հայաստանի կառավարությանը. «Որպեսզի մեզ Հայաստանի աշխատավոր բնակչության հետ խաղաղ ապրելու հնարավորություն տրվի,- ասված է գրության վերջնամասում,- **մեր կողմից առաջարկում ենք անհապաղ՝ 3-օրյա ժամկետում, դուրս բերել զորքերը Շարուրի շրջանից և թույլատրել Վեդիբասարի և Զանգիբասարի բնակիչների անհապաղ վերադարձը իրենց գյուղերը**: Հակառակ դեպքում պատասխանատվությունը կդրվի Հայաստանի կառավարության վրա: Սրա հետ մեկտեղ կյանքի և գույքի լիակատար երաշխիք ենք տալիս իրենց հարազատ գյուղերը վերադարձող հայերին»[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Ինչո՞վ Նախիջևանի հեղկոմը հարազատ զավակը չէ Նարիմանովի գլխավորած Ադրբեջանի հեղկոմի. նույն կերպ՝ մեկ օրում ստեղծված, ռուսական զենքը սեփական շահերին ծառայեցնելու նույն ուղին բռնած, Հայաստանի գլխին սպառնալիքներ տեղալու նույն ոճը որդեգրած: Ամեն, ամեն ինչում Ադրբեջանի դասերը սերտած, բայց ոչ երբեք յուրացրած: Այլապես կհիշեր, որ եթե Ադրբեջանի հեղկոմի ապրիլի 30-ի վերջնագիրը այդպես էլ թղթի վրա մնաց, ապա նրա զավակինը՝ Նախիջևանի հեղկոմինը, ինչո՞ւ պետք է այլ ճակատագիր ունենար:

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, թ. 34:

Հայաստանի կառավարությունը Նախիջևանի հեղկոմի այդ գրությունը ո՛չ քննարկեց, ո՛չ երբևէ անդրադարձավ, ո՛չ էլ հայկական զորքերը Շահթախթիից ու նրա շրջակայքից հետ քաշվեցին՝ ընդհուպ մինչև Թուրք-հայկական պատերազմի երրորդ փուլը: Բայց նաև առաջ չչարժվեցին, և դա ոչ թե հեղկոմի պահանջով, այլ Խորհրդային Ռուսաստանի կառավարության, որը Թիֆլիսի իր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով հեռագրեց Համո Օհանջանյանին, թե խորհրդային զորքերը գրավել են Նախիջևանը իր շրջակայքով, հետևապես «ամեն մի պատերազմական գործողություն այդ ուղղությամբ պիտի համարվի հարձակում Խորհրդային Ռուսիայի զորքերի դեմ»[1]:

Անհետաքրքիր չէ իմանալ, որ այդ օրերին Հայաստանի կառավարության մոտ հատուկ ներկայացուցիչ էր ուղարկել նաև Մակվի խանը՝ խնդրելով մեկ-երկու օրով դադարեցնել հարձակումը, որպեսզի հնարավորություն ունենա իր բարեկամներին դուրս բերելու Նախիջևանից[2]:

Այսպիսի վախճան ունեցավ հայկական զորքերի նախիջևանյան օպերացիան, այսպես Անկարան և Բաքուն օգտագործեցին ռուսական Կարմիր բանակը՝ փրկելու Նախիջևանը հայոց վրեժխնդրությունից, երկրամասի հայ խաղաղ ու անզեն աղգաբնակչության դեմ 1918-1919թթ. գործած ոճիրների համար, ոճիրներ, որոնք չի կարելի որակել այլ կերպ, քան ցեղասպանություն: Հայաստանի կառավարությունը նոր միայն հասկացավ, որ ինքը խաբված է և խաբված է հենց նախիջևանցիների կողմից, որ բոլոր այդ բանակցությունները միմիայն ժամանակ շահելու նպատակ են հետապնդել: Բայց արդեն ուշ էր, կորցրած ժամանակը ետ բերել անհնար էր: Մնում էր հարցը փոխադրել դիվանագիտության բնագավառ, փորձել Երևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղու գործարկման խնդիրը լուծել Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ նշանակված Բ. Լեգրանի հետ բանակցությունների միջոցով: Հաջողվե՞ց դա անել՝ կտեսնենք հաջորդ գլխում:

[1] «Հայաստանի կոչնակ», 16 մարտի 1921թ., թիվ 13, էջ 446:

[2] Տե՛ս «Հառաջ», 3 օգոստոսի 1920թ.:

* * *

Ավարտելով մեր խոսքը 1920թ. մայիս-հուլիսյան հայ-ադրբեջանական և ռուս-հայկական հարաբերությունների հոլովույթում Նախիջևանյան հիմնախնդրի զարգացրած տեղի ու նրա շուրջը ծավալված զարգացումների մասին՝ կարող ենք արձանագրել, որ

1. *Ադրբեջանի խորհրդայնացումը և 11-րդ Կարմիր բանակի մուտքն Անդրկովկաս իրապես կտրուկ կերպով փոխեց ու սրեց ռազմաքաղաքական իրադրությունը տարածաշրջանում: Հայաստանի Հանրապետությունը և մասամբ Վրաստանը, հայտնվեցին երկու կրակի արանքում՝ արևելքից ռուսական Կարմիր բանակի, արևմուտքից՝ Թուրք ազգայնականների (քեմալականների):*
2. *Խորհրդային Ադրբեջանը՝ օգտվելով ռուսական 11-րդ կարմիր բանակի աջակցությունից, Հայաստանի Հանրապետության կառավարության հետ խոսում էր վերջնագրերի լեզվով, պահանջում մուսավաթական կառավարության կողմից վիճելի հայտարարված տարածքներից դուրս բերել հայկական ուժերը, ըստ այդմ էլ խուսափում վիճելի խնդիրների լուծման նպատակով հայ-ադրբեջանական կոնֆերանսի գումարումից:*
3. *Հայ-ադրբեջանական տարածքային վեճերի հարցը Մոսկվայի ռուս-հայկական բանակցությունների ամենավիճահարույց ու դժվարագույն խնդիրն էր: Ռուսաստանի խորհրդային կառավարությունը, հայկական պատվիրակության պահանջները համարելով իրավացի, միաժամանակ ձգտում էր չնեղացնել իր դաշնակից Ադրբեջանին և նրա ճնշման տակ նախ Ղարաբաղը, հետո նաև Զանգեզուրը առաջարկեց համարել վիճելի:*

Միակ տարածքը, որը՝ չնայած Ադրբեջանի թափած ջանքերին, բանակցությունների ընթացքում վիճելի չհայտարարվեց, Շարուր-Նախիջևանն էր: Ռուսաստանի կառավարությունը՝ հանձին Չիչերինի, այդ գավառները հաստատապես համարում էր Հայաստանի Հանրապետության անբաժան մաս և մինչև վերջ իր այդ դիրքորոշումը չփոխեց: Նարիմանովին ու նրա խմբին ուրիշ ոչինչ չէր մնում անել, եթե ոչ գնալ զարտուղի ճանապարհով և համոզել Մոսկվային գրավելու Նախիջևանը՝ Անատոլիայի հետ անմիջական կապի հաստատման նպատակով:

4. *Բանակցելով Լ. Շանթի պատվիրակության հետ և վիճելի հայտարարված տարածքների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելով, Մոսկվան, այնուամենայնիվ, այդ օրերին դեռևս չէր ուզում հստակ սահմանագիծ հաստատել Հայաստանի և Ադրբեջանի միջև՝ ինչին ձգտում էին հայ պատվիրակները: Նա գերադասում էր այդ տարածքները օկուպացնել ռուսական զորքերով և սպասել «հարմար պահի»՝ դրանց ճակատագրի վերջնական լուծման համար: Ղարաբաղը գրավելուց հետո, մոսկովյան բանակցությունների այդ նույն օրերին՝ ազգամիջյան բախումներին վերջ տալու պատրվակով, 11-րդ Կարմիր բանակի զորամասերը չուտով հայտնվեցին նաև Զանգեզուրում:*
5. *Մուսուլմանաբնակ ապստամբ շրջանների հնազանդեցումը Հայաստանի կառավարության համար ոչ միայն հանրապետության ներքին դրության կայունացման, այլև արտաքին աշխարհում նրա հեղինակության խնդիր էր: Զանգիբասարի և Վեդիբասարի գյուղախմբերի հակահայկական, հակապետական ըմբոստացումները թելադրված էին ոչ թե ազատագրական կամ սոցիալ-տնտեսական նկատառումներով, այլ հայոց պետությանը ներսից թուլացնելու, կազմալուծելու Թուրք-ադրբեջանյան քաղաքականությամբ: Այդ շրջաններում Ադրբեջանի կողմից ֆինանսավորվող և Թուրք սպաների ու ասկյարների ղեկավարությամբ կազմակերպված մարտական ջոկատների առկայությունը լուրջ սպառնալիք էր դարձել հայոց պետականության համար: Պատժիչ գործողությունները, որ ձեռնարկեց Հայաստանի կառավարությունը կարգն ու օրինականությունը վերականգնելու ուղղությամբ, միանգամայն բնական էին և օրինական:*
6. *Խորհրդայնացած Ադրբեջանը՝ շարունակելով մուսավաթի հակահայկական քաղաքականությունը, Թուրք-քեմալականների հետ համախորհուրդ փորձում էր ամրանալ Շարուր-Նախիջևանում ոչ միայն երկու Թուրքական պետությունների միջև կապի ստեղծման, այլև Հայաստանի Հանրապետության շրջափակումը կատարյալ դարձնելու նպատակով: Շարուր-Նախիջևանում Հայաստանի գերիշխանության վերականգնումը և՛ քաղաքական, և՛ տնտեսական անհրաժեշտություն էր: Դա բռնագաղթի ենթարկված հայ ազգաբնակչության հայրենի օջախներ վերադարձնելու, Զանգեզուրի ու Պարսկաստանի հետ հաղորդակցության վերականգնման խնդիր էր: Այլ կերպ ասած՝ Հայաստանի կառավարությունը բոլորովին էլ վրեժխնդրությամբ չէր ղեկավարվում, նախիջևանահայության կո-*

տորածների ու բռնագաղթի համար հատուցելու նպատակ չէր հետապնդում: Այդ է պատճառը, որ Շարուրը գրավելուց հետո անարգել դեպի Նախիջևան չարժվող հայկական ուժերը իսկույն կանգ առան, հենց որ Նախիջևանի մուսուլմանական ազգային խորհուրդը բանակցություններ սկսելու առաջարկ արեց: Սակայն այս անգամ էլ նա խորամանկեց ու խաբեց: Մի քանի օր տևած բանակցությունների ու զինադադարի ժամանակամիջոցը մուսուլմանական խորհուրդն օգտագործեց Զանգեզուր մտած Կարմիր բանակի զորամասերին Նախիջևան հրավիրելու համար: Հայկական ուժերը հարկադրված եղան կանգ առնել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Նախիջևանյան հիմնահարցը Թիֆլիսի օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրում և Մոսկվայի ռուս-թուրքական առաջին կոնֆերանսում

Բ. Լեգրանի առաքելությունը, Նախիջևանյան հիմնահարցում նրա դիրքորոշումը: Վիճելի տարածքների հարցում Օրջոնիկիձեի և Ադրբեջանի ղեկավարության տարբեր մոտեցումները:

Համո Օհանջանյանի կառավարության դիրքորոշումը Լեգրանի հետ բանակցությունների հարցում: Պատերազմական դրությունը Հայաստանի սահմանների վրա: Կռիվները Զանգեզուրում և զինադադարի անհրաժեշտությունը:

Շարուր-Նախիջևանի խնդիրը Լեգրան-Ջամալյան բանակցություններում և ստորագրված համաձայնագրում: Շարուրի ամրակցումը Հայաստանին: Շահթախթի-Ջուլֆա երկաթուղու չահագործման հանձնումը ՀՀ երկաթուղային վարչությանը:

Օգոստոսի 10-ի համաձայնագրի դեմ ուղղված չարժումները: Անգլո-ֆրանսիացիների դժգոհությունը և Ռուսաստանի դեմ պատերազմը չարունակելու պահանջը: Շարուր-Նախիջևանը Հայաստանին հանձնելու անթույլատրելիության վերաբերյալ Բ. Շահթախթինսկու նամակը Լենինին: Կարմիր բանակի հետ կապի հաստատման պատրվակով Շահթախթին և Սարիղամիշը գրավելու թուրքական պահանջի բավարարումը Մոսկվայի կողմից և օսմանյան պառլամենտի ընդունած «Ազգային ուխտի» ճանաչումը:

Շարուրի տնտեսական նշանակությունը Հայաստանի համար. Իրանի հետ առևտրական կապերի վերականգնման և գաղթականներին վերաբնակեցնելու հնարավորությունը:

1920թ. հուլիս-օգոստոսին Նախիջևանի երկրամասում ծավալված ռազմական գործողություններին զուգընթաց ոչ պակաս համառ ու անդիջում պայքար էր ընթանում դիվանագիտական չրջանակներում: Կարմիր բանակի օգնությամբ կանգնեցնելով հայկական բանակի

հաղթական առաջխաղացումը Նախիջևանում՝ Բաքուն և Անկարան միաժամանակ դիվանագիտական ակտիվ քայլեր են ձեռնարկում երկրամասը Հայաստանից անջատելու ուղղությամբ: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ստանալ Խորհրդային Ռուսաստանի համաձայնությունը: Ինչպիսի՞ն էր Կրեմլի դիրքորոշումը Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդրում, ինչպիսի՞ ընթացք ունեցավ այդ հարցը 1920թ. հուլիս-օգոստոսյան հայ-ռուսական և ռուս-թուրքական բանակցություններում: Ահա այն հարցերը, որոնց լուսաբանությանը կանդրադառնանք այս գլխում:

Նախորդ գլխում տեսանք, որ Լ. Շանթի պատվիրակության հետ բանակցություններում ցանկալի արդյունքի չհասնելով, Գ. Չիչերինը որոշեց ընդհատել դրանք և Բ. Լեգրանի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկել Երևան՝ բանակցություններն անմիջականորեն Հայաստանի կառավարության հետ վարելու նպատակով: Վերջինս էլ Կովկաս մեկնելուց առաջ՝ հուլիսի սկզբին, իր խորհրդական Ս. Տեր-Գաբրիելյանի հետ միասին, հանդիպեց Լ. Շանթի պատվիրակությանը և հանգամանալից զրույց ունեցավ հայ-ադրբեջանական հարաբերությունների շուրջ:

Զրույցի ընթացքում հայ պատվիրակները հնարավորություն ունեցան համոզվելու, որ Լեգրանը շատ ավելի բայրացակամորեն է տրամադրված վիճելի տարածքների հարցում, քան նույնիսկ Չիչերինը. նա խոստացավ Երևանում կնքվելիք պայմանագրով Հայաստանին թողնել ոչ միայն Շարուր-Նախիջևանը, այլև Զանգեզուրը: Բայց թե նա ինչպե՞ս պետք է չափավորեր Ադրբեջանի ախորժակը, եթե դա չէր կարողացել անել Չիչերինը, մնացել էր անհայտ: Այդ է պատճառը, որ հայ պատվիրակները առանձնապես չէին ոգևորվել Լեգրանի խոստումներով: Ասենք, շուտով ինքը՝ Լեգրանն էլ դեռ մինչև Կովկաս հասնելը, առիթ ունեցավ համոզվելու, որ հայ-ադրբեջանական տարածքային վեճերը դժվար լուծելի խնդիրներից են, որ Կովկասում գործող կոմունիստներին հետաքրքրում են ոչ թե հարցերի արդարացի լուծումը, այլ դրա քաղաքական հետևանքները և որ այդ արատներից զերծ չէ նաև Կովկասում գործող գլխավոր կոմունիստը՝ Գ. Օրջոնիկիձեն: Վերջինս ի վիճակի էր խեղաթյուրված տեղեկատվությամբ ազդելու Մոսկվայի քաղաքականության վրա: Դրանում համոզվելու առիթ դեռ կունենանք, իսկ այստեղ վկայաբերենք մեկը, որն անմիջականորեն առնչվում է մեր թեմային. «**Նախիջևանը, Օրդուբադը և այդ շրջանի հյուսիսային մասը գրավված են Բայազետի, թուրքական դիվիզիայի կողմից, որի կազմում 9 հազար սվին է հաշվվում**, – ասված է հուլիսի սկզբներին[1] Լենինին, Ստալինին, Չիչերինին ուղարկած նրա մի հեռագրում, – մեր ճշտած տեղեկություններով այդ դիվիզիայի պատվիրակության հետ մենք արդեն հանդիպել ենք: **Լեռնային Ղարաբաղից Դրոյի գլխավորությամբ դաշնակցական զորքերի հեռանալը պատճառաբանվում է բացառապես այդ զորամասերի կողմից Նախիջևանի և նրա շրջանի գրավման վտանգով: Հայաստանի կառավարությունը գիտակցաբար ձեզ սխալ տեղեկատվություն է հաղորդում...»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Եթե հիշենք, որ Դրոյի զորամասը Լեռնային Ղարաբաղից հետ է քաշվել մայիսի 25-ին, իսկ Բայազետի թուրքական դիվիզիայի 300 հոգուց բաղկացած ջոկատը Նախիջևան էր մտել հուլիսի 2-ին և հաստատվել Շահթախթիում, ապա պարզ կլինի, թե ով է գիտակցաբար սխալ տեղեկատվություն տալիս Մոսկվային: Ոչ բուն Նախիջևանում, ոչ Օրդուբադում և հատկապես հայերի հսկողության տակ գտնվող նրա հյուսիսային մասում թուրքական ուժեր չկային և դա հայտնի էր Օրջոնիկիձեին: Միակողմանիորեն պաշտպանելով Ադրբեջանի շահերը, այդ նույն հեռագրում նա հայտնում է. «Այսօր Գաբրիելյանը[3] հայտնեց ինձ, որ Շարուր-Դարալագյազի գավառից և Նախիջևանի շրջանից Ադրբեջանի հրաժարվելու դեպքում, հայկական պատվիրակությունը կհամաձայնի Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը անհապաղ Ադրբեջանին միացնելուն: Մենք նրանց հետ պայմանավորվել ենք, որ Բաքու ժամանելուն պես այդ ոգով խոսակցություն կվարենք Նարիմանովի հետ...»[4]: Այնուհետև խոստացնելով գույները, նա իր խորին համոզմունքն է հայտնում, թե Ադրբեջանում խորհրդային իշխանության ամրապնդման և Բաքուն մեզ պահելու համար անհրաժեշտ է միացնել այդ գավառները, որոնց ինքնավարություն կտրվի և այլն, և այլն: Բայց ոչինչ չի ասում, թե Ս. Տեր-Գաբրիելյանը ո՞ւմ է ներկայացնում, ո՞ւմ անունից է նման երաշխիք տալիս: Դա չի անում նաև Չիչերինին ուղարկած հաջորդ հեռագրում, որտեղ դարձյալ պնդում է վիճելի տարածքների բաժանման իր տարբերակի վրա՝ վկայակոչելով Ս. Տեր-Գաբրիելյանին. «Տեսակցել եմ Լեգրանի և Տեր-Գաբրիելյանի հետ: Հարցը դրված է այսպես. Ադրբեջանը պնդում է Ղարաբաղի և Զանգե-

[1] Հրապարակված փաստաթղթի վրա ամսաթիվը նշված չէ:

[2] «*К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, 1918-1925, документы и материалы*», Баку, 1989, с. 32:

[3] Խոսքը Սահակ Տեր-Գաբրիելյանի մասին է:

[4] ''*К истории образования НКАО...*'', с. 32:

զուրի անհապաղ և անվերապահ միացման վրա: ...Տեր-Գաբրիելյանի խոսքերով հայկական պատվիրակությունը անպայման դրան կգնա: Հարցի նման լուծման դեպքում Ադրբեջանին կարելի է հարկադրել հրաժարվելու մնացած մարզերից»[1]: Ավելորդ չենք համարում նշել, որ իր տեսակետը հիմնավորելու համար Օրջոնիկիձեն մատնանշում էր և՛ Ղարաբաղի ու Զանգեզուրի տնտեսական կապը Բաքվի հետ, և՛ Բայազետի Թուրքական դիվիզիայի կողմից դրանց գրավման ու, որպես հետևանք, հայ բնակչության ջարդը, և այն որ ինքը կհարկադրի Ադրբեջանին այդ մարզերին ինքնավարություն տալ և այլն:

Ինչպես տեսնում ենք, թեև Օրջոնիկիձեն Զանգեզուրի հարցում հակադրվում է վիճելի տարածքների բաժանման Զիչերինի տարբերակին (Ղարաբաղը՝ Ադրբեջանին, Զանգեզուրը՝ վիճելի, Շարուր-Նախիջևանը՝ Հայաստանին), բայցևայնպես Շարուր-Նախիջևանի հարցում այդ օրերին դեռևս կայուն կերպով կանգնած էր Հայաստանին տալու տեսակետի վրա: Դա ակնհայտ երևում է նաև Նարիմանովի հետ նրա հեռախոսազրույցից, որտեղ ի պատասխան Նարիմանովի դժգոհության, թե Մոսկվան Հայաստանի հետ պայմանագիր է կնքել և վիճելի տարածքների հարցում մեծ զիջումներ է արել, ասում է. «Հիմա ես խոսել եմ Զիչերինի հետ Ղարաբաղի և Զանգեզուրի կապակցությամբ: Ես առաջարկում եմ այդ մարզերը անհապաղ և անվերապահորեն միացնել Ադրբեջանին, դուք էլ հրաժարվում եք մյուս մարզերի նկատմամբ հավակնությունից և Լեռնային Ղարաբաղին ու Զանգեզուրին ինքնավարություն եք տալիս»[2]: Այնուհետև առաջարկելով հայտնել, թե որքանով նպատակահարմար է համարում հարցի նման լուծումը ու տեղեկացնելով հաջորդ օրը Բաքու գնալու իր մտադրության մասին, վերջում ամփոփում է. «Առաջին, բացի Ղարաբաղից և Զանգեզուրից դուք ներկայացրել եք հավակնություններ նաև Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի գավառի և Օրդուբադի նկատմամբ: Երկրորդ, որտեղի՞ց է ձեզ հայտնի, որ Հայաստանի հետ արդեն հաշտություն է կնքվել: Երրորդ, ինչպե՞ս է ձեզ մոտ գործը հացի առումով և ընդհանրապես: Չորրորդ, այսօր Տիխորեցկում տեսել եմ Խալիլ փաշային, որը Լեգրանի հետ միասին գալիս է ձեզ մոտ»[3]:

Նախորդ գլխում տեսանք, որ մոսկովյան բանակցություններում, առավելագույնը, ինչին համաձայնել էր Շանթի պատվիրակությունը,

[1] Նույն տեղում, էջ 34:
[2] Նույն տեղում, 33:
[3] Նույն տեղում, էջ 34:

Ղարաբաղը և Զանգեզուրը վիճելի հայտարարելն էր և ոչ Ադրբեջանին հանձնելը: Ուրեմն ո՞վ է խեղաթյուրված ներկայացնում իրականությունը՝ Տեր-Գաբրիելյա՞նը թե՞ Օրջոնիկիձեն: Այս հարցին միանշանակ պատասխան տալ հնարավոր չէ, թեև Օրջոնիկիձեին ուղարկած հուլիսի 9-ի հեռագրում Զիչերինը դա վերագրում է Ս. Տեր-Գաբրիելյանին: «Հայկական պատվիրակությունը մեզ հայտարարել է, որ համաձայն է վիճելի ճանաչել միայն Ղարաբաղը, բայց ոչ Զանգեզուրը և մնացածը, - ասված է հեռագրում: - **Ես տեսել եմ Գաբրիելյանին նրա մեկնելուց անմիջապես առաջ և նա ասաց ինձ, որ հայկական պատվիրակությունը վերջապես համաձայնել է վիճելի ճանաչել և՛ Ղարաբաղը, և՛ Զանգեզուրը, բայց խոսքը գնացել է վիճելիության ճանաչման մասին և ոչ անհապաղ ու լիակատար հանձնման: ...Ինձ թվում է, որ Գաբրիելյանի օպտիմիզմը հիմնված է մեծ թյուրիմացության վրա»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Հեռագրում Զիչերինը նաև կարծիք է հայտնում, թե եթե Լեգրանին հաջողվի հաշտեցնել հայկական և ադրբեջանական կառավարություններին, դա «փայլուն արդյունք կլինի», և բողոքում է այն մեղադրանքի դեմ, որ ինքը «իբրև հաշվի է նստում միայն մի կողմի հետ և ոչ մյուսի»[2]:

Սակայն Բաքուն մտադիր չէր հրաժարվել Շարուր-Նախիջևանից: Նարիմանովը և նրա խումբը շատ խորամանկ քաղաքականություն էին վարում. լուծված համարելով Ղարաբաղի և Զանգեզուրի հարցը (հուլիսի4-ին կարմիր բանակի զորամասերը մտել էին Գորիս), հիմա նրանք առաջ էին քաշում Նախիջևանը ռուսական զորքերով գրավելու տարբերակը, ինչը, իբրև թե կնպաստի Անատոլիայում ազգայնական շարժման ծավալմանն ու զարգացմանը: Հուլիսի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած գրության մեջ երկար-բարակ դատողություններ անելով այն մասին, թե որքան կարևոր է Ադրբեջանում խորհրդային իշխանության ամրապնդման համար Ղարաբաղի և Զանգեզուրի միացումը, Նարիմանովի խմբի անդամները միաժամանակ ավելացնում են. «Զանգեզուրի ամրակցումը խորհրդային իշխանությանը, բացի նշածից, Նախիջևանի շրջանում և Անատոլիայում Թուրքական հեղափոխական շարժման հետ մեր կապը վերականգնելու և ամուր թիկունք ստեղծելու նշանակություն կունենա»: Գրության մեջ ասված է, թե

[1] „Геноцид армян...", стр. 94.
[2] Նման մեղադրանք կար հուլիսի սկզբին Լենինին, Ստալինին, Զիչերինին հասցեագրած Օրջոնիկիձեի հեռագրում:

հակառակ լուծումը մուսուլմանական մասսան «կհամարի դավաճանություն, հայամետություն կամ խորհրդային իշխանության թուլություն: Ե՛վ դա, և՛ մյուսը կարող է խորհրդային իշխանության դեմ լարված ապստամբության պատճառ դառնալ, **Ղարաբաղում և Զանգեզուրում դաշնակների հաստատումը կխախտի հեղափոխության զարգացումը Թուրքիայում՝** զրկելով նրանց մեր օգնությունից և դրանով իսկ ստեղծելով նրանց համար սպառնալից թիկունք»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ Բաքվում գործող բոլշևիկյան ղեկավարների հետ մեկտեղ (Նարիմանով, Մդիվանի, Միկոյան, Նանեյշվիլի) փաստաթղթի տակ կան նաև 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Վեսնիկի, Լևանդովսկու և Միխայլովի ստորագրությունները: Իսկ դա նշանակում է, որ Բաքվի ղեկավարությանը հաջողվել էր զինվորական վերնախավին վարակել հակահայկական ախտով և օգտագործել նրանց իր նվաճողական հեռահար ծրագրերի իրագործման համար:

Մեզ հայտնի չէ, թե Բաքու ժամանած Օրջոնիկիձեն ինչ խոսակցություն է ունեցել Նարիմանովի հետ վիճելի տարածքների շուրջը: Բայց արխիվներում պահպանված են երկու փաստաթուղթ թվագրված հուլիսի 14-ով և 15-ով, որոնք վկայում են, որ անգամ եթե Նարիմանովը համաձայնել է Օրջոնիկիձեի հետ, ապա միայն առերես: Դրանցից առաջինը Օրջոնիկիձեի և Լեգրանի ստորագրությամբ Բաքվից Չիչերինին ուղարկած հեռագիր է, որում ասված է. «Անհրաժեշտ ենք համարում հարցի այնպիսի լուծում, որը մասամբ կարող է բավարարել Ադրբեջանին. **Ղարաբաղը ամբողջովին և անվերապահորեն միացվում է Ադրբեջանին, Զանգեզուրը հայտարարվում է վիճելի, մնացած մարզերը... մնում են Հայաստանին»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, Բաքվում լույս տեսած փաստաթղթերի ժողովածուում տեղ գտած այս հեռագրից դիտավորյալ հանված են մնացած մարզերի անունները: Բայց պարզից էլ պարզ է, որ խոսքը Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի և Օրդուբադի մասին է: Դա պարզ երևում է Չիչերինի պատասխան հեռագրից. «Ստացվել է Ձեր հարցումը Ադրբեջանի և Հայաստանի հետ բանակցությունների մասին: Չիչերինը կողջունի, եթե հայերը ընդունեն այդ որոշումը: Եթե նրանք համաձայնեն իսկույնևեթ հրաժարվել ամբողջ Ղարաբաղից և Զանգեզուրը ճանաչել վիճելի՝ պայմանով, որ Նախիջևանը ճանաչվում է նրանցը, Չիչերինը ուրախ կլինի այդպիսի ելքից: Ձեր խնդիրն է հասնել դրան Էրիվանում»[1]:

Ինչպես տեսնում ենք, Չիչերինը նախկինի պես կանգնած է Շանթի պատվիրակության հետ առաջ քաշված տարբերակի վրա: Մինչդեռ Ադրբեջանը միանգամայն այլ գիծ էր վարում, ինչի մասին է վկայում մյուս փաստաթուղթը, որը մի պարզ քաղվածք է Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոյի հուլիսի 15-ի նիստի արձանագրությունից: Պարզվում է, որ այդ նիստում լսվել է նաև «Հայաստանի հետ հաշտության հարցը» և որ նիստին՝ Կենտկոմի անդամներից բացի, մասնակցել են նաև Օրջոնիկիձեն, Լեգրանը և 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի ներկայացուցիչները: Հայաստանի նկատմամբ նվաճողական տրամադրություններով զինվորականներին նիստին հրավիրելու նարիմանովյան մարտավարությունն արդարացվեց, ընդունված որոշումներն ամբողջովին բխում էին Ադրբեջանի շահերից: Ահա դրանք.

«1. Ղարաբաղը և Զանգեզուրը պետք է միացվեն Ադրբեջանին.

Նախիջևանից և մյուսներից հրաժարվել, առաջարկել օկուպացնել ռուսական զորքերով.

Ընկ. Լեգրանին առաջարկել ժամանակավորապես՝ մինչև Հայաստանում դրության մասին լրիվ ինֆորմացիայի ստացումը, հաշտություն չստորագրել:

Հայաստանին առաջարկել բանակցությունների ընթացքում, ժամանակավորապես, ռազմական գործողությունները դադարեցնել»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Այսպես է Ադրբեջանը լուծում վեճերը. Ղարաբաղը և Զանգեզուրը վերցնում է իրեն, իսկ Նախիջևանից և մյուսներից հրաժարվում է, բայց ոչ հօգուտ Հայաստանի, այլ առաջարկում է օկուպացնել ռուսական զորքերով, որպեսզի հետո իր հայտնի և գաղտնի գործակալների միջոցով անհրաժեշտ աշխատանք տանի դրանց ևս տիրանալու համար՝ չբացառելով նաև կաչառքը, ինչպես որ դա անում էր Զանգեզուրում: Զենք կարծում, թե Օրջոնիկիձեն գոհ է մնացել Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի բյուրոյի այս որոշումից: Նախ՝ որովհետև այն կատեգորիկ բնույթ է կրում և, ըստ էության, պայմաններ է թելադրում Ռուսաստանին՝ Հայաստանի հետ պայմանագրի ստորագրման հարցում: Եվ հետո, ինչոր չափով ջրում է նախորդ օրը Չիչերինին ուղարկած իր հեռագրի

[1] ''К истории образования НКАО...'', с. 55-56.

[2] Նույն տեղում, էջ 56:

[1] «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 2000, էջ 257:

[2] "К истории образования НКАО...", с. 57.

բովանդակությունը: Այդ նիստի սղագրական արձանագրությունը պահվում է Բաքվի արխիվներում, հետևապես չենք կարող ասել, թե քննարկումներն ինչպես են ընթացել, բայց հաջորդ օրը «Լենինին, Ստալինին, Չիչերինին» հասցեագրած Օրջոնիկիձեի հեռագրերից դժվար չէ գուշակել, որ այն անցել է ազգայնականության թունդ մթնոլորտում: Այդ օրը Օրջոնիկիձեն նույն հասցեով երկու հեռագիր է ուղարկել, մեկը՝ հակիրճ, մյուսը՝ ավելի ընդարձակ: Առաջինում ասված է. «Իմ բացակայության մեկ ամսվա ընթացքում այստեղ տրամադրությունը նկատելիորեն փոխվել է: Սիստեմատիկ անտեսումը տվել է իր պտուղները: Բացարձակապես անհրաժեշտ եմ համարում Հայաստանի հետ հաշտության հարցում սպասել մինչև Ադրբեջանի ներկայացուցչի ժամանումը, որը ճանապարհվում է այսօր համաձայն ընկ. Չիչերինի հրավերի»[1]: Երկրորդ հեռագրի առաջին պարբերությունը քիչ է տարբերվում առաջինից: Նրանում ասված է. «Բացարձակապես անհրաժեշտ եմ համարում Հայաստանի հետ հաշտության հարցում սպասել մինչև Ադրբեջանի ներկայացուցչի գալը, որը ճանապարհվել է ընկ. Չիչերինի հրավերով, – ասված է այդ հեռագրում: Առանց Ադրբեջանի մասնակցության Հայաստանի հետ հաշտությունը խիստ նյարդայնացնում է այստեղի ընկերներին: Մեկ ամսվա իմ բացակայության ընթացքում մեծ թեքում է կատարվել դեպի նացիոնալիզմը...»:

Նման նախաբանից հետո տրամաբանական կլիներ, եթե Օրջոնիկիձեն քննադատական խոսք ասեր Ադրբեջանի տարածքային նկրտումների մասին, դատապարտեր այն: Բայց նա ոչ միայն այդպես չի վարվում, այլև, մարդասիրական կեղծ դիմակ հագած, փորձում է հիմնավորել Նախիջևանի երկրամասը ռուսական զորքերով գրավելու Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի հուլիսի 15-ի որոշումը. «**Նախիջևանի շրջանում անխուսափելի է կոտորածը հայերի և թաթարների միջև,** – ասված է Օրջոնիկիձեի վերոհիշյալ հեռագրում: **Կարելի է խուսափել դրանից միմիայն մեր առաջխաղացումով և Նախիջևանի շրջանի օկուպացումով:** Մենք փորձեցինք թեկուզ հետախուզություն կատարել այդ ուղղությամբ, բայց այդ շրջանում մեր ուժերի անբավարարության մասին ՀՌՀԽ հայտարարությունը (կանխեց այն – Է. Զ.)

Քաղաքական իրադրությունը պահանջում է թույլ չտալ կոտորած Նախիջևանի շրջանում, ինչն անխուսափելի է՝ առանց մեր միջամտության: Ես կարծում եմ, որ կարելի է առաջխաղացումը շարունակել՝ հետախուզության նպատակով: Ես այսօր կկապվեմ Չիչերինի հետ և, եթե նա չհամաձայնի, մենք մեր հետախուզությունը ետ կբերենք: Կրկնում եմ, հետախուզությունն անհրաժեշտ է...»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Օրջոնիկիձեի վարքագիծը քաղաքական արկածախնդրության տիպիկ օրինակ է: Առաջխաղացման միջոցով հետախուզություն սովորաբար կատարվում է պատերազմական դրության պայմաններում՝ հակառակորդի ուժերի մասին պատկերացում կազմելու նպատակով: Նախիջևանում այդ օրերին հայկական ուժեր չկային և Ռուսաստանն էլ Հայաստանին պատերազմ չէր հայտարարել: Զորք մտցնել մի տարածք, որը Հայաստանի մաս է ճանաչված հենց իր կառավարության կողմից, նշանակում է հրահրել և առաջ բերել պատերազմական դրություն այդ երկրների միջև: Արդյո՞ք դա արկածախնդրություն չէ: Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական կոտորածի անխուսափելիության խնդրին, ապա հուլիսյան այդ օրերին հայկական զորքերը Վեղիբասարի գրավումից հետո դեռ նոր անցել էին Գայլի Դրունքը և մտել Շարուրի դաշտ: Ըստ որում, ազգամիջյան կոտորած չէր եղել ոչ միայն այդ օրերին, այլև հետագայում, երբ հայկական զորամիավորումները ավելի առաջ էին անցել: Նաև չի արձանագրված խաղաղ բնակչության նկատմամբ զորքերի կողմից բռնության որևէ դեպք: Ուրեմն վստահ կարելի է ասել, որ Օրջոնիկիձեին (և նաև Բաքվի ղեկավարությանը) անհանգստացնողը ոչ թե ազգամիջյան կոտորածի հավանականությունն էր, այլ Շարուրի և Նախիջևանի ընդարձակ շրջանները հայերի կողմից գրավվելու հնարավորությունը: Իհարկե, մենք այն կարծիքին չենք, թե Օրջոնիկիձեն և Նարիմանովի խումբը Նախիջևանի հարցում նույն մոտիվներով էին ղեկավարվում, ո՛չ: Օրջոնիկիձեին հետաքրքրողը Նախիջևանի վրայով քեմալականների հետ կապի հաստատումն էր, իսկ Նարիմանովը և նրա շրջապատը օգտագործում էին բոլշևիկյան ղեկավարության այդ ձգտումը ազգային խնդիրներ լուծելու համար: Այլ կերպ ասած, Օրջոնիկիձեին այս խնդրում հակահայկական մոլուցքը չէր ղեկավարում, այլ Անտանտի դեմ պայքարի և համաշխարհային հեղափոխության: Բայց որ դրանով իսկ նա կամա թե ակամա ջուր էր լցնում Բաքվի ազգայնականների ջրաղացին, դա փաստ է:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավար շրջաններում ազգայնական-համաթուրքական տրամադրությունների առկայության մասին

[1] Российский гос. архив социально-политической истории (РГ АСПИ), оп. 14, д. 5, л. 12.

[1] Նույն տեղում, թ. 13:

հայտնվում է նաև Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի հուլիսի 31-ի նամակ-զեկուցագրում: Հայտնելով այն մասին, որ Զանգեզուրի, Նախիջևանի, Շարուրի վրայով Թուրքիային միանալու ծրագիրը, որը «մուսաֆաթական իշխանության վերջին օրերին կարծես թե բոլորովին լքված էր, այժմ հարություն է առել հսկայական ծավալով և շատ մեծ թափով» և որ այդ նպատակի համար Մոսկվա են ուղարկվում հատուկ պատվիրակություններ, ավելացնում է, որ նաև «ուղարկել է մի հատուկ պատվիրակություն, որի մեջ մտնում են գլխավորաբար ոչ-կոմունիստ ուժեր Մամեդ Հասան Հաջինսկու նախագահությամբ: Այդ պատվիրակությունը հրահանգ ունի պահանջել իրենց տերիտորյալ ծրագրի իրագործումը այն պատճառաբանությամբ, որ Ադրբեջանի մուսուլմանության համակրանքը գրավելու միակ միջոցն այն է, որ Ադրբեջանին կցվեն որ միայն Ղարաբաղն ու Զանգեզուրը, այլև Նախիջևանը, Շարուրը և Սուրմալուն: Այդ տեսակի քարտեզներ ներկայումս զարդարում են Հեղկոմի նախագահի և քարտուղարի սենյակների պատերը»[1]:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավար շրջաններում ազգայնական-հակահայկական տրամադրությունների առկայության մասին արխիվներում փաստերի պակաս չկա: Բայց, կարծում ենք, վերը բերվածներն էլ բավարար են դրանում համոզվելու համար: Միայն ուզում ենք ավելացնել, որ հենց այդ տրամադրությունների առկայությամբ պետք է բացատրել նաև այն իրողությունը, որ Ադրբեջանը ամեն կերպ խուսափում էր հայ-ադրբեջանական կոնֆերանս գումարելու հայկական կողմի առաջարկից: Ճիշտ է, հուլիսի 2-ին Թիֆլիսում Հուսեյնովի և Տ. Բեկզադյանի միջև մի համաձայնություն էր կայացվել, իսկ 10-ին էլ նոտաների փոխանակություն էր կատարվել կողմերին հետաքրքրող այն հարցերի շուրջ, որոնք պետք է լուծում ստանային գումարվելիք կոնֆերանսում, սակայն օրերն անցնում էին, բայց կոնֆերանսը չէր գումարվում: Հուլիսի 12-ին արտգործժողկոմ Գ. Չիչերինին (պատճեն՝ Լևոն Շանթին և Թիֆլիսում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովին) հղած նոտայում վարչապետ և արտգործնախարար Համո Օհանջանյանը՝ բողոքելով Զանգեզուրում ռուսական զորքերի առաջխաղացման դեմ և մատնանշելով, որ դա Հայաստանի մարմնի վրայով Թուրքիային միանալու մուսաֆաթական ծրագրի իրագործման նպատակով է արվում, միաժամանակ չեչտում է, որ Ադրբեջանում

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 1, թ. 3-4:

խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանի կառավարությունը բոլոր վիճելի հարցերը կոնֆերանսում լուծելու առաջարկ է արել, բայց միայն այժմ՝ կրկնակի առաջարկությունից հետո է Ադրբեջանը համաձայնել: Կարծելով, թե ռուսական զորքերի առաջխաղացումը կատարվում է «Հայաստանի սահմանների և իրերի իսկական դրության մասին ռուսական հրամանատարության անտեղյակության հետևանքով», Օհանջանյանը նաև խնդրում է կարգադրություն անել ռուսական զորքերը Լեռնային Ղարաբաղից և Զանգեզուրից դուրս բերելու մասին, որով հնարավորություն կստեղծվի այդ հարցերը խաղաղորեն լուծելու առաջիկայում գումարվելիք հայ-ադրբեջանական կոնֆերանսում[1]:

Ադրբեջանը չահագրգռված չէր կոնֆերանսի հարցում, քանի որ դա կարող էր խանգարել նրա նվաճողական պլաններին: Մինչդեռ Կարմիր բանակի զորամասերը հուլիսին արդեն Զանգեզուրում էին և պատրաստվում էին Նախիջևան մտնել: Այսպիսի պայմաններում Բաքվի մտահոգության գլխավոր խնդիրը գրավված տարածքները Ադրբեջանին ամրագրելն էր և ոչ թե այդ խնդիրների խաղաղ լուծումը: Բողոքելով այդ ամենի դեմ՝ Տ. Բեկզադյանը հուլիսի 13-ին հատուկ գրությամբ դիմում է Կիրովին, տեղեկացնում Ադրբեջանի արդգործժողկոմ Հուսեյնովից ստացած պատասխան նոտայի մասին, որում սակայն բացակայում է կոնֆերանսի գումարման կապակցությամբ առաջ քաշված մի շարք պայմանների պատասխանը, հետևություն անում, որ դա հարցի ձգձգում է նշանակում, և խնդրում՝ ազդել Բաքվի վրա այդ ուղղությամբ, ինչպես նաև կանխել Հայաստանի Հանրապետության տարածք թափանցելու ադրբեջանական զորքերի փորձերը[2]: Հուլիսի 22-ին պատասխանելով Կիրովին՝ Բեկզադյանը կրկին առաջ է քաշում կոնֆերանսի գումարման վայրի (Հայաստանը առաջարկում էր Թիֆլիսը՝ որպես չեզոք տարածք, Ադրբեջանը՝ Ղազախը) և Ադրբեջանից հայերի անարգել Հայաստան գաղթելու խնդիրը, որը սակայն չէր արժանանում Բաքվի ղեկավարության համապատասխան արձագանքին[3]:

Այսպես խուսափելով վիճելի հարցերի խաղաղ կարգավորումից, Բաքվի ղեկավարությունը միաժամանակ եռանդուն ջանքեր էր գործադրում Կարմիր բանակի կողմից գրաված հայկական տարածքները

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 278, ց. 1, գ. 35, թ. 37:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 38, թ. 123:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 27:

Ադրբեջանին միացնելու ուղղությամբ: Այդ նպատակի համար օգտագործվում էր ոչ միայն տեղական բոլշևիկների օգնությամբ խորհուրդների (սովետների) ձևով իշխանության մարմիններ ստեղծելու հնարավորությունը, այլև քարոզչությունը, կաշառքը, գործակալների միջոցով տարվող քայքայիչ աշխատանքը և այլն: Դա առանձնապես ցայտուն կերպով դրսևորվել է Զանգեզուրում, որտեղ հուլիսի երկրորդ կեսին արյունահեղ կռիվներ էին ընթանում հայկական ուժերի և Զանգեզուր ներխուժած Կարմիր բանակի զորամասերի միջև, որոնց կազմում կար նաև Ռուսաստանում գերության մեջ գտնվող օսմանյան Թուրքերից կազմված մեկ գունդ: Արխիվներում բավականաչափ փաստեր են պահպանվել այդ գնդի ասկյարների կողմից հայկական գյուղերում իրագործած բռնությունների, գնդակահարությունների, կանանց և աղջիկների բռնաբարության և այլնի մասին: Այդ ամենին մենք չենք անդրադառնում, քանի որ Զանգեզուրի խնդիրը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից: Բայց հենց Զանգեզուրում և Նախիջևանում տեղի ունեցող իրադարձություններն էլ, որոնք ընթանում էին ոչ հօգուտ հայկական ուժերի, հարկադրեցին Հայաստանի կառավարությանը վերանայել իր որոշումը Լեգրանի հետ բանակցությունների հարցում և հաշտության համաձայնագիր ստորագրել, թեկուզ՝ ժամանակավոր:

* * *

Լեգրանը ձգտում էր օր առաջ Երևան հասնել: Դեռ Հայաստանի կառավարության համաձայնությունը չստացած, նա Բաքվից չարժվել էր Աղստաֆա՝ Երևան անցնելու մտադրությամբ, բայց այստեղ 4 օր մնալուց հետո, անցել էր Թիֆլիս: Հուլիսի 19-ին Թիֆլիս՝ Լեգրանին հասցեագրած հեռագրում Զիչերինը տեղեկացնում է, որ անհրաժեշտ նյութերը արդեն ուղարկվել են, բայց Երևանից մուտքի վիզաներ դեռ չեն ստացել[1]:

Հ. Օհանջանյանի կառավարությունը գտնում էր, որ Լեգրանին չի կարող ընդունել իբրև դեսպան, քանի որ պայմանագիր չի կնքված և չի կարող ընդունել նաև բանակցությունների համար, քանի որ Շանթի պատվիրակությունը դեռ չի վերադարձել և կառավարությունը լիարժեք ինֆորմացիա չունի նրա վարած բանակցությունների մասին: Այդ կապակցությամբ հուլիսի 20-ին հեռագրելով Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին, վարչապետը միաժամանակ հանձնարարում է հաղորդել Կիրովին, որ «Շատ-շատ նրան (Լեգրանին) կարող ենք ընդունել իբրև դելեգացիայի նախագահ՝ շատ փոքրիկ շտատով՝ 4-5 հոգի՝ այդ էլ այն դեպքում, եթե վերջնականապես գլուխ չգան Մոսկվայի բանակցությունները և Շանթը իր ընկերներով վերադառնա Երևան»[1]:

Պատճառաբանությունները կարծես թե հիմնավոր էին, բայց դրանք չէին կարող բավարարել Լեգրանին և նա՝ դժգոհ Հայաստանի կառավարության այդ դիրքորոշումից, հուլիսի 21-ին դեռևս գտնվելով Աղստաֆայում (Վրաստանի կառավարությունը չէր թույլատրել նրան ժամանել Թիֆլիս՝ պատճառաբանելով, որ Հայաստանը չի ճանաչում նրա լիազորությունները) մի ընդարձակ գրություն է ուղարկում Զիչերինին, որում արդեն տարածքային վեճերի լուծման գործում ծագած դժվարությունների համար մեղադրում է ոչ թե Ադրբեջանին, այլ Հայաստանին: «**Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վիճելի հարցերի լուծումը**, - ասված է այդ գրությունում, - այլ հանգամանքներից զատ, **մեծապես բարդանում է Հայաստանի կառավարության վարքագծով, որը շարունակում է թշնամական գործողությունները Թուրքիայի դեմ**՝ հարձակումներ Օլթիի շրջանում, Զանգիբասար և հայկական զորքերի վերջին առաջխաղացումը դեպի Նախիջևան՝ կապված Բայազեդի դիվիզիայի կողմից Նախիջևանի շրջանի գրավման հետ»[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Ընթերցողի ուշադրությունը հրավիրելով ընդգծված տողերի վրա՝ ցանկացել ենք ցույց տալ, թե ինչպես վիրավորանքն ու չարացածությունը կարող են ազդել նույնիսկ դիվանագետի համոզմունքների վրա: Նախորդ շարադրանքում տեսանք, ու հետո էլ կտեսնենք, որ Լեգրանը հաստատապես և անվերապահորեն Նախիջևանը Հայաստանի մաս էր համարում: Մինչդեռ այստեղ նա որոշ չափով նահանջում է իր դիրքերից, խոսում այն մասին, որ տարածքային հարցերի վերաբերյալ Օրջոնիկիձեի հետ իր կայացրած համաձայնությունը «կարող է Բաքվում առաջ բերել բավականին համառ ընդդիմություն», որ այդ համաձայնությունը կարելի է կյանքի կոչել միայն այն դեպքում, եթե Մոսկվան Հայաստանի կառավարությունից պահանջի «անհապաղ դադարեցնել Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ ամեն մի թշնամական գործողություն» և Հայաստանի կառավարության վրա ճնշում գործադրելու

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 1100, փ. 10, թ. 1:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 1:

[2] «ՀՀ-ն 1918-1920 թթ.», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 225:

նպատակով զորքերը առաջ չարժի դեպի «Թուրք-ադրբեջանական սահմանը Նախիջևանի շրջանում»: Լեգրանը նաև առաջարկում է դադարեցնել բանակցությունները Շանթի պատվիրակության հետ և դրանք փոխադրել Կովկաս, որ այդ «բանակցություններին պետք է հրավիրվի Ադրբեջանի հանրապետության պաշտոնական պատվիրակությունը»: Ուշագրավ է նաև այն, որ որպես բանակցությունների վայր առաջարկում է ոչ թե Երևանը, ուր նա գործուղված էր, այլ Վլադիկավկազը[1]:

Ինչպես տեսնում ենք, Աղստաֆայում 4 օր հարկադրված կանգառը Լեգրանին զգալիորեն կերպարանափոխել էր: Ընդամենը մեկ շաբաթ առաջ նա այդ նույն Չիչերինին գրում էր, թե Նախիջևանը Հայաստանի անբաժանելի մաս է, իսկ այստեղ արդեն այն համարում է «Թուրք-ադրբեջանական սահման»: Դե ինչ, Լեգրանն էլ մահկանացու էր ու զերծ չէր մարդկային թուլություններից: Բայց ինչպես երևում է, չափազանց մեծ է եղել Երևան մտնելու նրա ցանկությունը. «Այնուամենայնիվ խիստ ցանկալի եմ համարում հայկական կառավարության հետ անմիջական հարաբերության հնարավորություն ստանալը, թեկուզ կարճատև, – ասված է գրության վերջնամասում, – դրա համար էլ առաջարկեցի Կիրովին, որի հետ հենց նոր խոսեցի հեռախոսով, հարցը դնել այսպես. մենք գնում ենք Երևան ոչ լիազոր ներկայացուցչության կարգավիճակով և ոչ էլ որպես խաղաղարար պատվիրակություն, այլ որպես խորհրդային կառավարության լիազոր առաքելություն, որի նպատակն է հայկական կառավարության հետ անմիջական հարաբերությունների միջոցով պարզել այն հիմնական նախնական հարցերը, որոնց շուրջ համաձայնության բացակայությունը խոչընդոտում է Մոսկվայում Շանթի պատվիրակության հետ Խորհրդային կառավարության բանակցությունների հաջող ընթացքին»[2]: Լեգրանը նաև խնդրում է Չիչերինին հայտնել իր կածիքը այդ պլանի մասին և արագացնել համապատասխան փաստաթղթերի ուղարկումը, թեև կասկածում էր, որ Հայաստանի կառավարությունը կհամաձայնի դրան:

Լեգրանի կասկածները անտեղի չէին: Հուլիսի 26-ին Համո Օհանջանյանը Թիֆլիսի իր դիվանագիտական ներկայացուցչին հանձնարարում է հայտնել Կիրովին Հայաստանի կառավարության ափսոսանքն

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 226:

[2] Նույն տեղում:

այն բանի համար, որ երկու ամիս տևած մոսկովյան բանակցությունները չեն տվել այն արդյունքը, ինչի հույս որ հայ ժողովուրդն ուներ ու նաև տեղեկացնել, որ այնուամենայնիվ՝ ընդառաջելով Խորհրդային կառավարության ցանկությանը, Հայաստանի կառավարությունը դեմ չէ նշված բանակցությունները Երևան փոխադրելուն և Լեգրանի հետ բանակցությունների վարումը հանձնարարում է Լ. Շանթի գլխավորած այդ նույն պատվիրակությանը, որին չտապ Երևան վերադառնալու կարգադրություն է ուղարկված[1]: Իսկ դա նշանակում էր, որ Հ. Օհանջանյանը համաձայն չէ Լեգրանի առաջարկին և կրկին հետաձգում է նրա պատվիրակության մուտքը Երևան անորոշ ժամանակով: Ի դեպ, հաջորդ օրը՝ հուլիսի 27-ին Հ. Օհանջանյանը մի ավելի ընդարձակ գրություն է ուղարկել Գ. Չիչերինին, որում կրկնում է Լեգրանի հետ բանակցությունների վերաբերյալ նախորդ օրը Թիֆլիս հղած իր հեռագրի բովանդակությունը և նաև շոշափում Ադրբեջանի հետ վիճելի տարածքների հարցում իր կառավարության դիրքորոշման, Հայաստանի նկատմամբ Բաքվի և Անկարայի կառավարությունների ագրեսիվ քաղաքականության և մի շարք այլ հարցեր[2]:

Այդ նույն օրը (հուլիսի 27) Կիրովի միջոցով Լեգրանին փոխանցելու համար ուղարկած ճեպագրում Չիչերինը պատասխանում է բոլոր այն հարցերին, որ առաջ էր քաշել Լեգրանը Աղստաֆայից ուղարկած գրությունում: «Ստեղծված իրադրության և Թուրքերի սկսած հարձակման պայմաններում, – գրում է Չիչերինը, – մենք չենք կարող միակողմանիորեն, առավել ևս ռադիոյով, միայն Հայաստանից պահանջել կանգնեցնելու ռազմական գործողությունները: Դա կարող է միայն բոլոր շահագրգիռ կողմերի հետ բանակցությունների արդյունք լինել, որի համար անհրաժեշտ է, որ Դուք ավելի շուտ հասնեք Ձեր նշանակման վայրը: ...Ռազմական գործողությունների դադարեցման հարցը այդքան հեշտ չէ, քանզի չի կարելի կապել մեկի ձեռքերը, երբ մյուսը նրա վրա հարձակվում է, իսկ այդպիսի դրության մեջ՝ Անդրկովկասում տիրող քաոսի պայմաններում, այժմ բոլորն են գտնվում: Դրա համար էլ, առաջինը, որ պահանջվում է, Ձեր ժամանումն է Երիվան»[3]:

Չիչերինն անդրադառնում է նաև Շանթի պատվիրակության հետ բանակցությունները դադարեցնելու Լեգրանի առաջարկությանը և

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 35, թ. 26:

[2] «ՀՀ-ն 1918-1920 թթ.», փաստաթղթերի..., էջ 231-232:

[3] „Геноцид армян...", стр. 107.

հայտնում. «Շանթի առաքելությանն այստեղից հեռացնել չենք կարող, դա միանգամայն անհարմար կլինի, բայց կպնդենք բանակցությունները Էրիվանում վարելու վրա՝ Շանթի հարցը թողնելով անորոշ: Դրանից, անկասկած, կստացվի այն, որ ինքը Շանթը կցանկանա մեկնել: Այդ մասին նա արդեն սկսել է խոսել: Մենք նրան չենք պահելու և բանակցություններն, այդպիսով, փոխադրվելու են Էրիվան»[1]: Ճեպագրի վերջում Զիչերինը կրկին վերադառնում է թուրքական հարձակմանը և հայտնում. «...Թուրքերը՝ վերցնելով Նախիջևանը, այնտեղ խորհրդային իշխանություն են մտցրել և առաջարկում են, որ մեր զորքերը մտնեն այնտեղ: Նախիջևանը գրավելու մասին հրամանը մեր զորքերին վաղուց արդեն տրված է, և այդ մասին ես Ձեզ հաղորդել եմ, բայց ընդհանրապես թուրքերի կամ ուրիշ ժողովրդի գործը չի որոշել ուր և ինչ քանակով մենք պետք է գնանք»[2]:

Հուլիսի վերջին օրերին իրադրությունը թե՛ Զանգեզուրում, թե՛ Նախիջևանում կտրուկ սրվեց՝ սպառնալով վերածվել լայնամասշտաբ պատերազմի Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև: Եթե մինչև այդ Նախիջևանում հայկական զորքերը անարգել առաջ էին շարժվում, ապա հուլիսի 28-ից վիճակը փոխվեց, այդ օրը Կարմիր բանակի զորամասերը մտան Նախիջևան, իսկ 30-ին հայկական բանակի հրամանատարությունից պահանջեցին դադարեցնել առաջխաղացումը: Էլ ավելի բարդ իրադրություն ստեղծվեց Զանգեզուրում: Այստեղ Դրոյի գլխավորած զորամասերը նույն օրերին հակահարձակման անցան և մի քանի օր տևած կատաղի կռիվներից հետո օգոստոսի 3-ին ազատագրեցին Գորիսը, բայց կարմիրների ճնշման տակ երկու օր հետո կրկին նահանջեցին դեպի Սիսիան: Հենց այդ դեպքերի ժամանակ էլ՝ օգոստոսի 1-ին, հայկական զորքերի գլխավոր հրամանատարը ստացավ մի նոր վերջնագիր, որի տակ դրված էր Կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոյի և ռազմահեղափոխական խորհրդի անդամ Լուկինի ստորագրությունը: Միակողմանիորեն մեղադրելով հայերին Զանգիբասարում ու Նախիջևանի գավառում ազգամիջյան կոտորածներ կազմակերպելու մեջ, որի հետևանքով իբր «ոչնչացվում են ամբողջ գյուղեր և տնազուրկ են լինում հազարավոր գյուղացիներ», իսկ Կարմիր բանակին ներկայացնելով իբրև խաղաղության դրոշակակիրներ, որոնք Նախիջևան են մտցվել կարգ և օրինականություն հաստատելու նպատակով, վերջնագրի հեղինակները պահանջում են վերջ

[1] Նույն տեղում, էջ 107-108:

[2] Նույն տեղում, էջ 108:

տալ Կարմիր բանակի դեմ հայկական զորքերի ակտիվ գործողությունները՝ սպառնալով պատասխանել «մի չարք ջախջախիչ հարվածներով»: «Պատասխանը սպասվում է ոչ ուշ օգոստոսի 5-ից, - ասված էր վերջնագրում, - մինչ այդ պայմանաժամը պետք է դադարեցված լինեն ակտիվ գործողությունները»[1]:

Օրջոնիկիձեի և հրամանատար Վասիլենկոյի միջև օգոստոսի 4-ին տեղի ունեցած հեռախոսային մի խոսակցությունից տեղեկանում ենք, որ ռուսական հրամանատարությունը իսկապես պատրաստվում էր ծանր հարված հասցնել Հայկական բանակին: Օրջոնիկիձեի այն հարցին, թե «ինչ նոր բան կա Նախիջևանի շրջանում», Վասիլենկոն պատասխանում է. «Հայերը չեն ուզում հաշտվել Նախիջևանի ուղղությամբ մեր առաջխաղացման հետ: 11-րդ բանակի կողմից այստեղ ուղարկած ուժերը միանգամայն անբավարար էին՝ երկու հեծյալ բրիգադի տեսքով, (բայց) իրականում ընդամենը մոտ 300 թուր: Արդյունքում կորավ ոսկին, իսկ գեն. Դրոյի բանդաները գրավեցին և՛ Ենգելյաուրտը, և՛ Գորիսը: Այդ ամենի մասին հետաքննություն և քննություն կատարելու հրաման է (տրված), իսկ առայժմ... Նախիջևանի գավառում դաշնակներին լիկվիդացնելու համար 28-րդ դիվիզիան կենտրոնացնելու հրաման եմ արձակել...»[2]: Օրջոնիկիձեն հավանություն է տալիս Վասիլենկոյի ծրագրին և ավելացնում, թե «հարկավոր է արագ և սրընթաց հարվածով վերջ տալ դաշնակներին Նախիջևանի գավառում: Այսօր ուղևորվում եմ Բաքու և մանրամասն կտեղեկացնեմ Ձեզ ամեն ինչի մասին...: Մի անգամ էլ եմ խնդրում՝ հնարավորինս արագ լիկվիդացնել Նախիջևանի շրջանը»[3]:

Օրջոնիկիձեի այս խոսքերը ավելի են ոգևորում Վասիլենկոյին, և վերջինս առաջարկում է Հայաստանին հարվածել ոչ միայն Նախիջևանի, այլև Դիլիջանի կողմից. «Ես կցանկանայի ավելի ճշտված հրահանգներ ստանալ Հայաստանի վերաբերյալ, այսինքն արդյո՞ք սահմանափակվել Նախիջևանի շրջանում պաշտպանությամբ, այնտեղ նախիջևանյան բանդաների վերացումով, որը կարող է ձգձգվել, **թե՞ կարելի է Երևանի ուղղությամբ Նախիջևանի և Դիլիջանի կողմից միաժամանակյա հարվածով հարկադրել հայկական կառավարությանը դադարեցնելու թշնամական գործողությունները Կարմիր բա-**

[1] «Նոր աշխատավոր», 5 օգոստոսի 1920թ.:

[2] Геноцид армян..., стр. 117.

[3] Նույն տեղում:

նակի դեմ Նախիջևանի շրջանում: Դա խիստ կթեթևացներ խնդիրը: Շնորհակալ եմ, կսպասեմ փոքրիկ հեռագրի»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ահա այսպես. ինտերնացիոնալիզմի դրոշակ պարզած կարմիր հրամանատարը իրավունք ուներ մտնելու ուրիշի տունը, իսկ տանտերը պաշտպանվելու իրավունք չուներ: Առավել քան զավեշտականն այն է, որ վերջնագրում խոսվում է ոչ միայն Նախիջևանի մասին, ինչը թերևս հասկանալի լիներ, այլև Երևանին կպած Զանգիբասարի: Էլ ինչպե՞ս չմտածես, որ կարմիր Վասիլենկոյի վրա ընկել էր կեղծ կարմիր Նարիմանովի ստվերը: Ինչ էլ որ լիներ այնտեղ, մի բան ակնհայտ էր դարձել. հուլիսի վերջին օրերից սկսած հանրապետությունը հայտնվել է կրակե օղակի մեջ, նրա բոլոր սահմաններում՝ բացի հայ-վրացականից, պատերազմական դրություն է: Արևմուտքում (Օլթի-Մերդենեկի շրջան) թուրք-քեմալականները ավելի ու ավելի հաճախակի էին դարձրել հարձակումները և սահմանի խախտումները, նույնն էին անում ռուս-ադրբեջանական զորամիավորումները հյուսիս-արևելքում (Ղազախ-Քանվանսարա-Շամշադինի շրջան), իսկ հարավ-արևելքում ռուսական Կարմիր բանակի զորամասերը գրավել էին Զանգեզուրը և մտել Նախիջևան: Նախիջևանում էր գտնվում նաև թուրքական մի զորաջոկատ:

Այսպիսի պայմաններում հայտնված հանրապետությունը՝ իր մարդկային և նյութական աղքատիկ ռեսուրսներով, երկար դիմանալ չէր կարող: Անհրաժեշտ էր սահմաններից գոնե մեկում զինադադար հաստատել, անընդհատ կռիվներում հոգնած զորքերին հանգստանալու հնարավորություն տալ, կազմակերպել թիկունքը և այլն: Գիտակցելով դա՝ կառավարությունը որոշեց այդ ուղղությամբ բանակցություններ սկսել Թիֆլիսում գտնվող Բ. Լեգրանի հետ և հնարավորինս արագ համաձայնություն կայացնել ռազմական գործողությունների դադարեցման մասին: Դա տեսանելի հնարավորություն էր, քանի որ հուլիսի 29-ին արդեն Լեգրանը հեռագրով դիմել էր Հայաստանի կառավարությանը և առաջարկել չհետաձգել Երևանում հաշտության բանակցությունների վերսկսումը մինչև Շանթի պատվիրակության վերադարձը: «Հայաստանի սահմանների վրա ստեղծված իրադրության պայմաններում, – ասված է հեռագրում, – Խորհրդային Ռուսաստանի հետ հաշտության բանակցությունների ամեն մի ընդմիջում կարող է առաջ բերել բոլորովին անցանկալի բարդություններ երկու հանրապետությունների ժողովուրդների հարաբերություններում և այդ դեպքում կատարվածի պատասխանատվությունը ընկնում է Հայաստանի կառավարության վրա»[1]: Այսպես է Լեգրանը մեծապետական դիրքերից մեղադրում Հայաստանին՝ նրա սահմանների վրա ստեղծված ռազմական դրության համար: Կարծես թե Հայաստանն է մեղավոր, որ ռուսական զորքերը գրավել են Զանգեզուրը, Նախիջևանը, մտել են Իջևանի շրջան: Օգոստոսի 3-ին Տ. Բեկզադյանի միջոցով պատասխանելով Բ. Լեգրանին՝ Հ. Օհանջանյանը նախ իր դժգոհությունն է հայտնում Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի վարած թշնամական քաղաքականության, հայկական անվիճելի տարածքները զենքի ուժով գրավելու և Ադրբեջանին ամրագրելու գործընթացի, այն հակասության համար, որ առկա է Զիչերինի տված խոստումների ու հավաստիացումների և խորհրդային զորքերի գործողությունների միջև: «Ամեն մի սովետական զորավար իր պարտքն է համարում ամեն անգամ մի-մի ուլտիմատում ներկայացնել Հայաստանի կառավարությանը, – ասված է այդ հեռագրում: Այսօր 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոն վերջնագիր է ներկայացրել իմ կառավարությանը, որ սովետական զորքերը Ղարաբաղի և Զանգեզուրի վրայով անարգել անցնեն Նախիջևան: Ուլտիմատումի ժամանակամիջոցը որոշել է օգոստոսի 5-ը, որից հետո նա սպառնում է Հայաստանին խիստ գործողություններով»: Այնուհետև հիշեցնելով, որ նույն բանն էին անում նաև մուսաֆաթական Ադրբեջանը և Օսմանյան Թուրքիան, Օհանջանյանը հավաստիացնում է, որ հայ ժողովուրդը Ռուսաստանի հետ բարի հարևան լինելու ցանկություն ունի, բայց և չի կարող հավատալ տրված խոստումներին, եթե Ռուսաստանը Հայաստանի սահմաններից չհեռացնի իր զորքերը: Վերջում տեղեկացնում է, որ «Ձեզ հետ նախնական բանակցություն վարելու համար օրերս Թիֆլիս կմեկնեն իմ կառավարության երկու ներկայացուցիչները»[2]:

Մեր պատմագիտական գրականության մեջ գերակշռում է այն տեսակետը, որ Լեգրանը պատկանում է բոլշևիկյան այն գործիչների թվին (Զիչերին, Կարախան, և այլն), որոնք ճիշտ էին հասկացել ինչպես քեմալականների, այնպես էլ ադրբեջանական կոմունիստների զավթողական նկրտումները Հայաստանի հարցում և ինչ-որ ձևով փորձում

[1] *Նույն տեղում, էջ 118:*

[1] *ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1105, փ. 10, թ. 1:*

[2] *«Նոր աշխատավոր», 5 օգոստոսի 1920թ.:*

էին հակազդել դրանց, բայց քանի որ անհրաժեշտ չափով կշիռ և ազդեցություն չունեին, ուստի և հաջողության չէին հասնում: Դա արդարացի գնահատական է և հետագա շարադրանքում դեռ առիթ կունենանք դրանում համոզվելու: Իսկ առայժմ ծանոթանանք արխիվային մի փաստաթղթի, որում խոսվում է ինչպես քեմալականների, այնպես էլ հայ-ադրբեջանական վիճելի տարածքների հարցում Լեգրանի կարծիքի մասին: Դա Տ. Բեկզադյանի գրությունն է Լեգրանի հետ ունեցած իր տեսակցության մասին: Ստանալով Հ. Օհանջանյանի հեռագիրը՝ Տ. Բեկզադյանը իսկույն այն տարել էր Լեգրանին և օգտվելով առիթից՝ հանգամանալից զրույց ունեցել Զանգեզուրում և Նախիջևանում ստեղծված իրադրության, հայ-ռուսական և ռուս-թուրքական հարաբերությունների մասին: Նույն օրը երեկոյան Բեկզադյանը հեռագրով տեղեկացրել է Օհանջանյանին Լեգրանի հետ կայացած հանդիպման մասին, իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 5-ին, ընդարձակ զեկուցագիր ուղարկել նույն հասցեով: Նրանում ուշագրավ վկայություններ կան շոշափված խնդիրների վերաբերյալ Լեգրանի կարծիքի մասին: Ահա օրինակ, ինչ է ասել Լեգրանը հայ-ադրբեջանական վիճելի տարածքների մասին: «Ես Զանգեզուրի և Ղարաբաղի խնդրին բոլորովին անտեղյակ եմ,- ասաց նա,- բայց **որ Նախիջևանը Ձերը պիտի լինի Թեկուզ և իր Թուրք ազգաբնակչությամբ, դա ինձ համար պարզ է և ինձ թվում է, որ դա նույնպիսի անհրաժեշտություն է Ձեր պետականության համար, ինչպիսին է ջրհորը տնամերձի համար և ինչպես վերջինը չի կարելի թողնել առանց ջրհորի, այնպես էլ Ձեզ՝ առանց Նախիջևանի**: Դարձյալ լավ է խոսում»[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Իսկապես որ, լավ է խոսում: Ուրիշներն էլ են խոսել Հայաստանի Հանրապետության համար Նախիջևանի նշանակության մասին, բայց ոչ ոք նման դիպուկ ու սպառիչ գնահատական չի տվել: Կարծում ենք, Լեգրանը Նախիջևանի հարցում անկեղծ էր, ինչը չենք ասի Ղարաբաղի և Զանգեզուրի կապակցությամբ: Նա պարզապես խուսափել է այս վերջինների մասին կարծիք արտահայտելուց՝ հավանաբար, թե՛ Օրջոնիկիձեի, և թե՛ Բաքվի ղեկավարության հետ կոնֆլիկտներ չստեղծելու համար: Օժտված լինելով լիազոր ներկայացուցչի պարտականություններով՝ նա լավ էր հասկանում, որ ինքը կատարող է և ոչ վճռող: Դա երևում է նաև հրամանատարներ Տարխովի և Վասիլենկոյի գործողությունների կապակցությամբ նրա արած հայտարարությունից: Պատասխանելով Բեկզադյանի բողոքին՝ նա Տարխովի (Նախիջևան մտած զորամասի հրամանատար) հայտարարության կապակցությամբ ասել է. «...դա անպատասխանատու անձնավորության անպատասխանատու և ինքնագլուխ գործ է», բայց ահա 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոյի վերջնագրի հարցում զգուշությամբ ավելացրել է. «...այդ մասին տեղեկություն չունի, բայց անհապաղ կկապվի Բաքվի հետ, կպարզի հարցը և կանի ինչ որ հարկավոր է: Եթե իրեն չհաջողվի ազդել Վասիլենկոյի վրա, կաչխատի այդ անել Մոսկվայի միջոցով»[1]:

Ի միջի այլոց, քանի որ Հայկական բանակի հրամանատարությանը ներկայացված գրության մեջ Տարխովը հանդես էր եկել որպես Նախիջևանում գտնվող ռուսական և թուրքական միավորված կարմիր զորքերի հրամանատար, ապա, բնականաբար, զրույցի ընթացքում պետք է շոշափվեր նաև ռուս-թուրքական հարաբերությունների և դրանց հակահայկական ուղղվածության հարցը: Բեկզադյանը գրում է, որ Լեգրանը չի հերքել քեմալականներին ցույց տրվող օգնությունը, որը սակայն ուղղված է ոչ թե Հայաստանի, այլ արևմտյան իմպերիալիզմի դեմ: «Այդ դաշինքը (Թուրքիայի հետ - Է. Զ.) մի նպատակ ունի՝ աջակցել կարմիր Տաճկաստանին (որն այժմ տարված է ազգային վերածնության գաղափարով) իրագործել այդ գաղափարը և ազատվել անտանելի իմպերիալիստական լծից: Մի՞թե,- ավելացրեց Լեգրանը (պաթետիկ, բայց կարծում եմ բավական անկեղծ կերպով),- Հայաստանը այնքան վատ կարծիքի է Սովետական Ռուսաստանի մասին, որ կարծում է, որ նա կարող է դաշն կապել տաճիկների հետ ընդդեմ Հայաստանի - դա անհնարին է: Մենք օգնում ենք, այո՛, տաճիկներին և պիտի օգնենք նրանց Անտանտայի լուծը թոթափելու և ոչ թե հայերի դեմ կռվելու գործի մեջ: Ընդհակառակը, մենք խոսել ենք Քեմալի հետ և նա համաձայն է անել հայերին բոլոր կարևոր զիջումները տերիտորիալ խնդիրներում՝ ընդունելով, ինչպես և մենք, անկախ և ազատ Հայաստանի գոյությունը»[2]:

Բեկզադյանը չի փորձել ճշտել, թե Քեմալը տարածքային ինչ կոնկրետ զիջումների է համաձայն: Քաջատեղյակ լինելով թուրքական «Ազգային ուխտի» նախանշած սահմաններին՝ նա, ըստ երևույթին, նշանակություն չի տվել Լեգրանի այդ խոսքերին, այլ ձգտել է պարզել, թե եթե ընդունում են Հայաստանի անկախությունը, ապա ի՞նչն է

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198 I մաս, թ. 172:

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

խանգարում համապատասխան պայմանագիր կնքելուն: «Եթե ուզում եք, ես պատրաստ եմ հենց այժմ ստորագրել այդպիսի պայմանագիր, – պատասխանել է Լեգրանը: – Բայց չէ՞ որ դա ռեալ գործ չէ: Մենք ուզում ենք ստեղծել այստեղ այնպիսի պայմաններ, որ գոյություն ունեցող նորակազմ պետություններն այլևս կարողանան առանց վեճերի և կռիվների ապրել ու սկսել իրենց գոյության կուլտուրական աշխատանքի շրջանը: Չէ՞ որ եթե մենք այդ դեկլարատիվ պայմանագիրը ստորագրենք առանց հարթելու ձեր և Ադրբեջանի միջև եղած ամենակարևոր վեճերը, վաղը-մյուս օրը դուք նորից պիտի ընդհարվեք, և մենք՝ իբրև Ադրբեջանի դաշնակից, իսկ ձեր անկեղծ բարեկամ, ստիպված պիտի լինենք նորից խառնվել: Այդ պատճառով նպատակահարմար է, որ եթե չկարողանանք վերջնական սահմանները որոշել, գոնե պայմանագրի մեջ հիշատակենք՝ իբրև հետևանք ձեր համաձայնության, այն սկզբունքների մասին, որոնցով պիտի ապագայում վճռվեն ձեր վեճերը առանց զենքի դիմելու»[1]:

Համո Օհանջանյանին ուղարկած գաղտնի գրության մեջ Բեկզադյանը Լեգրանի հետ զրույցում արտահայտված կարծիքները որակել է որպես «ընդհանուր խոսակցություններ»: Գուցե այդ է պատճառը, որ այստեղ ևս նա չի փորձել ծավալվել՝ թեկուզ, ասենք, վեճերի լուծման սկզբունքների խնդրում, այլ չտապել է զգուշացնել, որ այսուհետ իրենց բանակցությունները պաշտոնական բնույթ են կրելու, քանի որ հեռագրում վարչապետը Լեգրանին անվանում է «լիազոր ներկայացուցիչ» ու հայտնում, որ ուղարկում է պատվիրակներ նախնական բանակցությունների համար: «Ես նրան հայտնեցի, – գրում է Բեկզադյանը, – որ այդպիսով նա ճանաչվում է Ձեր կողմից և այսուհետև մեր բանակցությունները պիտի կրեն պաշտոնական բնույթ և որ նա իր կողմից այդ բանակցությունների հաջող վախճանը արագացնելու համար պետք է միջոցներ ձեռք առնի, որպեսզի Շանթը իր ընկերների հետ շուտով վերադառնա: Նա խոստացավ»[2]: Դրա հետ մեկտեղ Բեկզադյանը Լեգրանի Թիֆլիսում գտնվելը նպատակահարմար չի համարում, թեև չի ասում՝ թե ինչու. «Իմ կարծիքը դարձյալ մնում է նույնը, որ նրան այստեղ պահելը նպաստավոր չէ և գուցե թե մենք այնպես սարքենք, որ նա հենց Շանթի հետ միասին այստեղից ճանապարհվի, համենայն դեպս, կարծում եմ, ոչ ուշ Շանթից»[3]:

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Տ. Բեկզադյանի հետ ունեցած զրույցից երկու օր անց՝ օգոստոսի 6-ին, Լեգրանը մի հեռագիր է հղում Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդին, որում ասված է, որ 11-րդ բանակի ռազմահեղխորհրդի հաղորդագրություններից և Հայաստանի կառավարության կողմից իրեն հանձնված փաստաթղթերից երևում է, որ 11-րդ բանակի հրամանատարությունը, «առաջին՝ չի կարողացել ապահովել մեր զորքերով Նախիջևան քաղաքի և Շուշի-Գորիս-Էնգելյուրտ-Կարմալինովկա-Նախիջևան տրակտի կայուն գրավումը, երկրորդ՝ չկատարելով իրեն տրված ուղղակի հանձնարարությունը, մեր ընդհանուր քաղաքական գծի հետ չհամաձայնեցված վերջնագրային պահանջներ է ներկայացնում անմիջականորեն հայկական հրամանատարությանը. ընդ որում, դրանք ուղեկցում է սպառնալիքներով, որոնց իրականացումը դուրս է գալիս նրա իրավասության շրջանակներից և փաստական հնարավորությունից»[1]: Այնուհետև նշելով, որ իրեն հասցեագրած հաղորդագրություններում 11-րդ բանակի հրամանատարությունը նույնիսկ խոսում է հարձակման անցնելու և «Արարատյան հանրապետությունը» ոչնչացնելու իր վճռական մտադրության մասին, Լեգրանն ավելացնում է, թե անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել կայուն կերպով գրավելու Նախիջևանն ու նշված տրակտը և անթույլատրելի է համարում, որ բանակային հրամանատարությունն իր ուղղակի պարտականությունները կատարելու փոխարեն հանդես գա ինքնուրույն քաղաքականությամբ: Նա հատուկ ընդգծում է, որ Հայաստանի կառավարության հետ ամեն մի հարաբերություն պետք է իրականացվի Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչության, այսինքն, իր միջոցով[2]:

Օգոստոսյան այդ օրերին Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու և հայ-ադրբեջանական տարածքային վեճերին շուտափույթ լուծում տալու առաջարկությամբ Չիչերինին հասցեագրած նամակով հանդես եկավ նաև Վրաստանում ՌՍՖՍՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Կիրովը[3]: Ցավով արձանագրելով որ այդ ուղղությամբ իր ձեռնարկած քայլերը դեռևս ոչ մի արդյունք չեն տվել, նա գրում է. «Զանգեզուրում և Նախիջևանի գավառում վերջին ժամանակներս տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ ստիպված ենք եղել

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ.», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 239:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Փաստաթղթի վրա ամսաթիվը չի նշված, բայց դժվար չէ գուշակել, որ այն գրվել է Լեգրան-Ջամալյան բանակցությունների օրերին:

Հայկական հարցին ավելի շատ ուշադրություն դարձնել: Երկար ժամանակ այստեղ էր Ադրբեջանի արտգործժողկոմ Հուսեյնովը՝ մի քանի աշխատակիցներով: Նա և հայկական ներկայացուցչության հետ ես այստեղ բազմիցս խորհրդակցություններ եմ ունեցել: Կազմակերպել եմ և միացյալ խորհրդակցություններ: Այդ ամենի արդյունքում հասել եմ միայն մի բանի՝ ադրբեջանցիների պատրաստակամությունը զիջելու Շարուր-Դարալագյազը Հայաստանին՝ իսկ մնացածը, այսինքն՝ Նախիջևանի գավառը, Օրդուբադը, Ջուլֆան, Զանգեզուրը, Ղարաբաղը ադրբեջանցիները համարում են անպայման իրենցը: Իրենց հերթին Հայաստանի ներկայացուցիչները կտրականապես հավակնում են այդ մարզերի վրա»: Մատնացույց անելով ադրբեջանցիների այն պատճառաբանությունը, որ իբր մուսավաթի օրոք այդ մարզերը պատկանել են Ադրբեջանին, և նրանց զիջումը Հայաստանին, կվարկաբեկի խորհրդային իշխանությունը ոչ միայն Ադրբեջանում, այլև Պարսկաստանում և Թուրքիայում, Կիրովը հետևություն է անում, թե «ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը այդ հարցի աներեր լուծումն է Մոսկվայում, միայն նրա հեղինակությունը կարող է լուծել գործը»[1]: Դժվար չէ կռահել, որ Մոսկվայի հեղինակությամբ Կիրովը ուզում էր չափավորել Ադրբեջանի ախորժակը:

Թեև Մոսկվայի ռուս-հայկական բանակցությունները դադարեցվել էին հուլիսի առաջին օրերին, բայցևայնպես Լ. Շանթը իր ընկերներով ընդհուպ մինչև օգոստոսի 10-ը շարունակում էր մնալ Մոսկվայում՝ սպասելով իր կառավարության համապատասխան կարգադրությանը և միաժամանակ կատարելով մի տեսակ ներկայացուցչության դեր[2] (այդ ընթացքում հայկական կառավարության հեռագրերն ու նոտաները նրա միջոցով էին փոխանցվում Զիչերինին): Իսկ Ջամալյանի և Բաբալյանի պատվիրակությունը Թիֆլիս հասավ օգոստոսի 5-ին, և արդեն հաջորդ օրը՝ օգոստոսի 6-ին, սկսվեցին բանակցությունները Լեգրանի պատվիրակության հետ: Բանակցություններին մասնակցում էր նաև Թիֆլիսում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը: Հենց նրա խորհրդով էլ պատվիրակության անդամ Ռուբեն Յուզբաշյանը նախապես հանդիպել էր Լեգրանի պատվիրակության անդամ Սահակ Տեր-Գաբրիելյանի հետ՝ Լեգրանի առաքելության

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ.», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 268:

[2] Օգոստոսի 17-ին Հ. Օհանջանյանը Զիչերինին հղած հեռագրով տեղեկացնում էր, որ ՌՍՖՍՀ-ում Հայաստանի ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակված Եղիազար Եղիազարովը:

նպատակների և ցանկությունների մասին որոշ տեղեկություններ ստանալու համար[1]:

Ուշագրավ է, որ Լեգրանի հետ բանակցություններ սկսելու և զինադադար կնքելու մասին որոշում ընդունելուն զուգահեռ, Հայաստանի կառավարությունը միաժամանակ իր «դաշնակիցների» ուշադրությունն էր հրավիրել այն սպառնալից իրողության վրա, որ առաջանում էր Նախիջևանի վրայով քեմալ-բոլշևիկյան կապի ստեղծման հեռանկարով: Ահա ինչ է ասված Արտգործնախարարության 1920թ. սեպտեմբերի 1-ի N 12 տեղեկագրում. «Դեռ զինադադարը կնքելու նախօրյակին՝ օգոստոսի 8-ին, մեր կառավարությունը շրջաբերական հայտագիր ուղղեց դաշնակիցների բոլոր ներկայացուցիչներին Կովկասում, ցույց տալով, որ քեմալիստները ձգտում են միանալ Հայաստանի վրայով ռուս և ադրբեջանական սովետական զորքերին և նրանց օգնությամբ շարունակել դաշնակիցների դեմ սկսած իրենց կռիվը: Նրանք ձգտում են ստեղծել պանիսլամիզմի ծրագրած Միջերկրականից մինչև Կովկասյան լեռները և Հնդկական օվկիանոսը տարածվող մահմեդականության ի մի ձուլումը: Իսկ Ռուսաստանը ձգտում է օգտագործել քեմալիստների ուժերը դաշնակիցների դեմ և նպաստավոր դիրք ստեղծել իրեն (համար) սկսված բանակցությունների մեջ»[2]: Այս նախաբանին հետևում է բացատրություն, թե «Քեմալիստների, Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի այդ ծրագրի իրագործմանը խոչընդոտ է ներկայանում անկախ Հայաստանը, որը պատնեշ է հանդիսանում ուժերի միացման: Դրա համար էլ նրանք ձգտում են ոչնչացնել անկախ Հայաստանը և դրանով է բացատրվում Ղարաբաղի, Զանգեզուրի և վերջերս Նախիջևանի՝ սովետական զորքերով գրավվելը: Հայաստանը ամեն միջոցներ ձեռք է առել կռվելու մինչև վերջին հնարավորությունը այդ հրեշավոր ծրագրի իրականացման դեմ և պաշտպանելու իր անկախությունը: Սակայն նա չի կարող հարատևել այդ կռվի մեջ ունենալով իր առջև գերազանց ուժեր և ստիպված լինելով պաշտպանել իր սահմանների մեծ մասը: Այդ կռվում Հայաստանը իր անկախությունը պաշտպանելով հանդերձ, պաշտպան է հանդիսանում նաև դաշնակիցների շահերին Արևելքում»[3]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի կառավարությունը միանգա-

[1] Մանրամասն տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան,** 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 121-123:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 30-31:

[3] Նույն տեղում, թ. 31:

մայն ճիշտ է ներկայացնում ոչ միայն քեմալ-բոլշևիկյան ուժերի հետապնդած նպատակները, այլև Հայաստանի Հանրապետության դիրքն ու դերը Արևմուտքի և Արևելքի միջև ծավալված կռվում: Միայն հասկանալի չէ, թե ինչո՞ւ դաշնակիցների շահերը պաշտպանող Հայաստանը այդքան քիչ բան է պահանջում նրանցից. «Ի նկատի ունենալով վերոհիշյալները, – ասված է նշված տեղեկագրում, – Հայաստանի կառավարությունը խնդրում է դաշնակիցների դրական աջակցությունը այդ կռվի մեջ: Եվ խնդրում է նաև, **որ դաշնակիցները ճնշում գործեն Կրասինի[1] միջոցով Սովետական կառավարության վրա և Մուստաֆա Քեմալ փաշայի վրա՝ Տաճկաստանի կառավարության[2] միջոցով, կասեցնելու նրանց առաջխաղացումները, քանի դեռ ուշ չէ, քանի դեռ նրանք դրության տերը չեն»**[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Կարծում ենք, Հ. Օհանջանյանի կաբինետը սխալվում էր, գտնելով, թե 1920թ. օգոստոսին քեմալ-բոլշևիկյան ուժերը դեռևս դրության տերը չէին տարածաշրջանում: Ո՛չ, նրանք դրության տերը դարձան ամիսներ առաջ, երբ 11-րդ Կարմիր բանակը ապրիլին մտավ Ադրբեջան, իսկ մայիսին Իրան (Էնզելի) և անգլիացիներին հարկադրեց հեռանալ Իրանի հյուսիսային շրջաններից: Ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան ոչինչ չձեռնարկեցին Ադրբեջանի խորհրդայնացումը կանխելու համար, այլ Անդրկովկասում ունեցած իրենց վերջին ուժերը շտապով հեռացրին Եվրոպա: Այնպես որ, Հայաստանի կառավարության խնդրանքը կմնար անհետևանք, և այդպես էլ եղավ. դաշնակիցներից որևէ պատասխան չստացվեց: Զինադադարի կնքումը այլընտրանք չուներ:

Բանակցությունները սկսելուն պես պատվիրակության ղեկավար Ջամալյանը Լեգրանին ներկայացրեց ութ կետից բաղկացած մի հուշագիր, որում շարադրված էին Հայաստանի կառավարության կողմից առաջարկվող այն հիմնական պայմանները, որոնք պետք է դրվեին հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների հիմքում: Դրանք են. Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչում, կողմերի միջև ռազմական գործողությունների դադարեցում, բոլոր գրավյալ շրջաններից ռուսական զորքերի դուրսբերում և այլն: Հուշագրի 6-րդ կետը վերաբերում էր Նախիջևանին: Այնտեղ ասված էր, որ Նախիջևանի գավառի սահմաններ մտած խորհրդային բանակի ջոկատները ազատորեն Ադրբեջան անցնելու թույլտվություն են ստանում:

[1] Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը Լոնդոնում:

[2] Նկատի ունի Ստամբուլի սուլթանական կառավարությունը:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 31:

Նման ձևակերպումը հետևանք էր այն իրողության, որ Զանգեզուրում հաջող հակահարձակում ծավալած Դրոյի զորամասը կարողացել էր մտնել Գորիս և դրանով իսկ Նախիջևանում գտնվող ռուսական ջոկատները կտրել Թիկունքից: Սակայն այս վիճակը երկար չտևեց. Ադրբեջանից օգնության եկած ռուսական օժանդակ ուժերը հայ պատվիրակների Թիֆլիս հասնելու նույն օրը՝ օգոստոսի 5-ին, վերադրավել էին Գորիսը: Այս մասին Թիֆլիսում դեռևս չգիտեին:

Ստանալով Ջամալյանի հուշագիրը Լեգրանն իսկույն հեռագրում է Չիչերինին, տեղեկացնում, որ «Հայկական կառավարությունը հույս ունի ստանալ Խորհրդային կառավարության համաձայնությունը այսպես կոչված վիճելի մարզերից կարմիր զորքերի հետքաշման վերաբերյալ՝ դրանում տեսնելով Հայաստանի Հանրապետության տարածքում մեզ հետ խաղաղ բանակցություններ սկսելու հնարավորության անհրաժեշտ պայման: Այսօր մենք ստացել ենք այդ հարցի վերաբերյալ պատվիրակության պաշտոնական գրավոր առաջարկությունը: Մեր պատասխանը կհայտնվի վաղը: Հայկական կառավարությանը կառաջարկվի հայտնել իր համաձայնությունը Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի վիճելի շրջանները ժամանակավորապես կարմիր զորքերով գրավելու վերաբերյալ»[1]: Հեռագրում Լեգրանը անդրադառնում է Հայաստանի հետ համաձայնության գալու խնդրում առկա դժվարություններին, 11-րդ Կարմիր բանակի և Ադրբեջանի ղեկավարության ագրեսիվ նկրտումներին: Չիչերինին տեղեկացնելով հրամանատարության կողմից Հայաստանի կառավարությանը ներկայացրած վերջնագրերի մասին՝ Լեգրանը հետևություն է անում, որ բանակի հրամանատարությունն իր ուղղակի պարտականությունները կատարելու փոխարեն, հանդես է գալիս ընդհանուր քաղաքական գծին հակասող ինքնուրույն քաղաքականությամբ ու խնդրում վճռական աջակցություն՝ իրավիճակը շտկելու համար: Լեգրանը գտնում է, որ հրամատարության նման վարքագիծը կապված է Ադրբեջանի ղեկավարության հետ: «Որպեսզի մենք այստեղ կարողանանք աշխատել հաջողության հույսով, – գրում է Լեգրանը, – պետք է վստահություն լինի, որ Մոսկվան երկաթե ձեռքով վերջ կտա ադրբեջանական պարտիզանությանը և կօգնի մեզ ստեղծելու պայմաններ, որոնց առկայությամբ կարելի լինի հուսալ Հայաստանի կառավարության հետ կայացնելու համաձայնություն ռազմական գործողությունների դադարեցման մա-

[1] „Геноцид армян...", стр. 123.

սին»[1]: Նա կարծում է, որ «ադրբեջանական պարտիզանության» սանձահարումը կանդրադառնա նաև բանակի հրամանատարության վրա:

Օգոստոսի 16-ին Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Գիտտիսը և Տրիֆոնովը հեռագրում են 11-րդ բանակի հրամանատար Վասիլենկոյին. «...քաղաքական հարցերի լուծումը, մասնավորապես սահմանների մասին հարցը և վերջնագրային պահանջներ ներկայացնելը չի մտնում բանակի հրամանատարության իրավասության մեջ: Զեկուցեք, ինչո՞վ եք Դուք զեկավարվել Հայաստանի հետ կոնֆլիկտի լուծման համար...»[2]:

Հետևությունը միանշանակ է. Չիչերինը Լեգրանի դժգոհությունը անհետևանք չի թողել:

Հայկական պատվիրակության ներկայացրած պայմանները Չիչերինին հաղորդելուց և նրանից համապատասխան հրահանգավորում ստանալուց հետո օգոստոսի 7-ին Լեգրանը առաջարկում է քննարկել դրանք: Նա չատ արագ համաձայնում է հուշագրի բոլոր կետերի պահանջներին, բացի 4-րդից: Այդ կետը ձևակերպված էր այսպես. «Խորհրդային զորքերի հետքաչում նրանց կողմից գրավված շրջաններից և վերադարձ status guo ante դրության՝ մինչև հայկական Ղարաբաղ և Իջևանի շրջանի (նախկին Ղազախի գավառի լեռնային մասը) սահմաններ նրանց ներխուժումը»[3]: Լեգրանը, թեև ընդհանուր առմամբ բարյացակամորեն էր տրամադրված և աշխատում էր լարվածություն չստեղծել բանակցություններում, բայցևայնպես գրավյալ տարածքների հարցում համառում է, փորձում համոզել հայ պատվիրակներին, թե ռուսական զորքերի ներկայությունն անհրաժեշտ է ազգամիջյան բախումներին վերջ տալու համար, որ նրանց ներկայությունը չի կանխորոշի այդ տարածքների հետագա պատկանելիությունը: Սկզբում հայ պատվիրակները ևս համառորեն պնդում էին իրենց պահանջի վրա, հիմնավորում նրա արդարացիությունը, բայց Զանգեզուրում ծավալված ռազմական գործողությունների հետագա անհաջող ընթացքը, ինչպես նաև անպայման զինադադար կնքելու վերաբերյալ Համո Օհանջանյանից ստացած գաղտնի հեռագիրը, հարկադրում են զիջման գնալ: Օգոստոսի 10-ի առավոտյան Լեգրանը՝ ոգևորված բանակցություններում ձեռք բերած հաջողությամբ, հեռախոսային ուղիղ կապով հայտնում է Օրջոնիկիձեին, որ հայկական

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 135:

[3] **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 124:

պատվիրակության հետ կայացրել է համաձայնություն դադարեցնելու ռազմական գործողությունները հետևյալ պայմաններով. «Հայկական կառավարությունը իր զորքերը հետ է քաշում Զանգեզուրի և Նախիջևանի սահմաններից մինչև Շահթախթի, որտեղ հայկական զորքերն են մնում: Զորքերի հետ քաշումը այնպես է նախատեսված, որ Կարմալինովկայով Նախիջևանից Ենգելայուրտ ամբողջ մայրուղին[1] դուրս լինի հայկական զորքերի ամեն մի ազդեցությունից: Բազարչայի շրջանում հայերը զորքերը հետ են քաշում Ղըսըր-դաղ լեռնաշղթայի մյուս կողմը: Հայկական կառավարությունը տալիս է իր պաշտոնական համաձայնությունը մեր զորքերով գրավելու Նախիջևանը, Զանգեզուրը, Ենգելայուրտի մայրուղին և Բազարչայի շրջանը մինչև նշված լեռնաշղթան: Այս պայմաններով մենք ռազմական գործողությունները անհապաղ դադարեցնելու և մեր զորամասերը Իջևանի գավառից Ղազախի սահման հետ քաշելու պարտավորություն ենք վերցնում: Այսօր, երկուս ու կես ժամից հետո, այդ համաձայնագիրը պետք է ստորագրվի»[2]:

Դատելով Օրջոնիկիձեի պատասխան-հեռագրից՝ նրան առանձնապես չի գոհացրել Լեգրանի կայացրած համաձայնությունը: «**Մեր զորքերը Գորիսից չարունակում են չարժումը դեպի Նախիջևան**, - ասված է պատասխան-հեռագրում, - **Դրոյի բանդաները ջախջախված են ու ցրված, գրավված են թնդանոթներ և այլ ավար, մեր ռազմական գործողությունները զարգացվում են**»[3] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Հեռագրի վերջին տողերից պարզ երևում է, որ Օրջոնիկիձեն պատերազմը չարունակելու կողմնակից էր: Նույն օրը՝ օգոստոսի 10-ին, Օրջոնիկիձեն Լեգրանի կայացրած համաձայնության մասին հեռագրել է նաև Լենինին, Տրոցկուն և Չիչերինին, որից նմանապես երևում է, որ ոգևորված չէ Լեգրանի գործունեությունից: Նրանում ասված է. «Նախիջևանի շրջանը գրավված է մեր զորքերով: Լեգրանն այսօր համաձայնագիր է ստորագրել Հայաստանի հետ ռազմական գործողությունները դադարեցնելու մասին: Այդ համաձայնագրով հայկական կառավարությունը տալիս է իր համաձայնությունը մեր կողմից արդեն գրավված շրջանը զբաղեցնելու մեր զորքերով»[4]:

[1] Խոսքը Բիչանաղի լեռնանցքով Նախիջևանից Զանգեզուր տանող մայրուղու մասին է:

[2] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 9, л. 1:

[3] Նույն տեղում:

[4] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 249:

Այսպես էր տրամադրությունը Բաքվում: Իսկ Թիֆլիսում, համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո երկու պատվիրակությունները համատեղ հայտարարություն հրապարակեցին, որում հայտնվում էր Հայաստանի Հանրապետության անկախության և լիակատար ինքնուրույնության ճանաչման հիման վրա ստորագրված համաձայնագրի և նրանում տեղ գտած հիմնական պայմանների մասին: Այդ նույն օրը Լեգրանը համաձայնագրի տեքստը չտապ հաղորդեց նաև Մոսկվա՝ Չիչերինին: Համաձայնագիրը բաղկացած է հակիրճ պրեամբուլայից և 6 հոդվածներից: Նրանում ասված է, որ «1920թ. օգոստոսի 10-ին ՌԽՖՍՀ-ը՝ հանձին լիազոր ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանի մի կողմից և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ Ա. Ջամալյանի և Ա. Բաբայանի՝ մյուս կողմից, ելնելով Հայաստանի Հանրապետության անկախության և լիակատար ինքնուրույնության ճանաչումից, կնքել են սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. 1920թ. օգոստոսի 10-ին ժամը 12-ից ռազմական գործողությունները ՌԽՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության զորքերի միջև համարվում են դադարեցված:

Ծանոթություն. Ռազմական գործողությունները, որոնք կարող են տեղի ունենալ նշված ժամերից հետո՝ կապի բացակայության կամ այլ տեխնիկական արգելքների պատճառով, չպետք է հանգեցնեն ոչ մի հետևանքների, որոնք կհակասեն սույն պայմանագրի որևէ կետին:

2. Հայաստանի Հանրապետության զորքերը զբաղեցնում են հետևյալ գիծը. Շահթախթի-Խոկ-Ազնաբերդ-Սուլթանբեկ և այնուհետև Կուկիից հյուսիս և Բազար-չայից (Բազարկենտ) արևմուտք գիծը: Իսկ Ղազախի գավառում՝ ս/թ. հուլիսի 30-ին զբաղեցրած գիծը: ՌԽՖՍՀ զորքերը զբաղեցնում են վիճելի մարզերը. Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը, բացառությամբ ներկա համաձայնագրով Հայաստանի Հանրապետության զորքերի տեղաբաշխման համար սահմանված գոտու:

3. Խորհրդային զորքերով վիճելի տարածքների զբաղեցումը չի կանխորոշում այդ տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իրավունքների հարցը: Այդ ժամանակավոր գրավումով ՌԽՖՍՀ նկատի ունի ստեղծել նպաստավոր պայմաններ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճերի խաղաղ լուծման համար այն հիմունքներով, որոնք կհաստատվեն մոտ ապագայում ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք հաշտության պայմանագրով:

4. Ռազմական գործողությունների դադարեցումից հետո պայմանավորվող կողմերը դադարեցնում են ռազմական ուժերի կենտրոնացումը ինչպես վիճելի, այնպես էլ սահմանային տարածքներում:

5. Մինչև ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև պայմանագրի կնքումը Շահթախթի-Ջուլֆա տեղամասում երկաթուղու չահագործումը տրվում է Հայաստանի երկաթուղային վարչությանը՝ պայմանով սակայն, որ նա չի կարող օգտագործվել ռազմական նպատակներով:

6. ՌԽՖՍՀ-ը երաշխավորում է Հայաստանի կառավարության բոլոր զորամասերի արագ անցումը Հայաստան (զենքով և հանդերձանքով) որոնք կհայտնվեն խորհրդային զորքերի զբաղեցրած գծի ետևում»[1]:

Համաձայնագիրը կազմվել էր երկու օրինակից, որոնցից մեկը տրվել էր Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին, մյուսը՝ ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչին: Համաձայնագրի տակ Հայաստանի կողմից ստորագրել էին Ջամալյանը և Բաբայանը, ՌԽՖՍՀ կողմից՝ Լեգրանը:

Համաձայնագիրն ամբողջությամբ մեջբերեցինք, որպեսզի ընթերցողն էլ համոզվի, որ այն Հայաստանի համար առանձնապես նպաստավոր չէր. բոլոր վիճելի տարածքները բացի Շարուրից և Նախիջևանի գավառի մի մասից, անցնում էին Ադրբեջանի դաշնակցի ձեռքը, որը նույնն էր թե այդ նույն Ադրբեջանի, քանի որ վերջինս այնտեղ ազատորեն գործելու և այդ տարածքներին տիրանալու լայն հնարավորություն էր ստանում: Դա հասկանում էր կառավարությունը, հասկանում էր նաև հասարակությունը, ու նաև գիտակցում այն լրջագույն վտանգը, որ ստեղծվում էր այդ տարածքների պատկանելիության խնդրում: Հենց այդ գիտակցությամբ էր «Ժողովուրդ» թերթը «Զինադադարի առթիվ» հաղորդագրության մեջ ընդգծում.

«Կնքված համաձայնությունը զինադադարի պայմանագիր չէ, որովհետև զորական գործողությունները դադարեցնելուց բացի պարունակում է իր մեջ այնպիսի խնդիրներ, ինչպիսին է Շահթախթ-Ջուլֆա երկաթգծի չահագործման հարցը, որը հատուկ է դաշնագրերին:

Արդյոք երկաթգծի հանձնումը Հայաստանին կարծել չի՞ տալիս, որ Նախիջևանի չրջանը Հայաստանին չի կցվում: Սա արդեն տերիտորիալ խնդիր է, որ սոսկ զինադադար կնքող լիազորությունների սահ-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 588, թ. 173:

մաններից դուրս է և կանխակալում է հետագայում կնքվելիք հաշտության պայմանները:

Սրանք ձևական խնդիրներ չեն, այլ վերին աստիճանի կարևորագույն և էական հարցեր, որովհետև վերաբերում են Հայաստանի գոյության, նրա մարմնի անդամահատության:

Պոկել մայր Հայաստանի մարմնից նրա մի երրորդը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը և դարձնել, ինչպես հաստատվում է, այդ ահագին հողամասը ինչ-որ չեզոք շրջան, ուր իշխանությունը չեզոք չի լինելու, այլ միակողմանի՝ հակառակորդից կազմված, մեզ համար միանգամայն անընդունելի է

Մենք հիմք ունենք անհանգստանալու: Հայ ժողովրդի երկու (և) կես հազար տարվա պատմական փորձը դարձրել է նրան սկեպտիկ, թերահավատ: Մեծ աշխարհակալ պետությունների՝ նրանց թվում առավելապես Խորհրդային Ռուսաստանի վարած երկդիմի քաղաքականությունը դեպի մանր պետությունները և նոր ազատված ազգերը, ստիպում է լինել վերին աստիճանի զգույշ և շրջահայաց»[1]:

Ինչ խոսք, տեղին էր հայ հասարակական շրջանների մտավախությունը ռուսական զորքերով գրավված տարածքների հարցում, տեղին էր, քանի որ ադրբեջանական իշխանությունները դրանցում ազատորեն գործելու հնարավորություն էին ստանում այն դեպքում, երբ հայկական կողմը զրկված էր այդ տարածքներ մուտք գործելու ամեն մի հնարավորությունից: Եվ այդ ամենի դիմաց Հայաստանը միմիայն զինադադար էր ստանում ու նաև Շահթախթի-Ջուլֆա երկաթուղու շահագործման իրավունք, որի իրագործման հնարավորությունը սակայն դյուրին չէր լինելու՝ տեղական ազգաբնակչության թշնամական վերաբերմունքի և Նախիջևանում թուրքական զորամասի ներկայության պատճառով: Դա ևս կառավարությունը հասկանում էր, բայց զինադադարը, ինչպես արդեն նշվել է, այլընտրանք չուներ, պատերազմական գործողությունների շարունակումը ծանր ու ճակատագրական հետևանքներ կունենար հանրապետության համար: Ինչ խոսք, որ համաձայնելով Նախիջևանի ռուսական օկուպացիայի, Հայաստանի կառավարությունը չէր կարող ազգաբնակչության թշնամական վերաբերմունքի վերացման պահանջ դնել: Բայց Նախիջևանում գտնվող թուրքական զորամասի հեռացման պահանջ նա կարող էր դնել: Ջամալյանի պատվիրակությունը նման պահանջ դրե՞լ է Լեգրանի առջև

[1] «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1920թ.:

թե՞ ոչ, չենք կարող ասել: Արխիվային փաստաթղթերը այդ հարցը պարզելու հնարավորություն մեզ չեն տալիս: Մենք հակված ենք կարծելու, որ նման հարց բանակցությունների ընթացքում չի քննարկվել ու դա համարում ենք հայկական կողմի բացթողումը: Հենց այդ զորամասն էր, որ հետագայում՝ թուրք-հայկական պատերազմը սկսելուն պես, գրավեց Շանթախթի-Նախիջևան երկաթուղին, հակահայկական ու հակախորհրդային խժդժություններ ծավալեց Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի նախօրեին՝ երկրամասը Թուրքիային միացնելու ակնկալությամբ:

Բոլոր այդ հարցերին կանդրադառնանք հետագա շարադրանքում, իսկ հիմա ստորագրված համաձայնագրի նկատմամբ Հայաստանի դաշնակիցների և հակառակորդների վերաբերմունքին անցնելուց առաջ ծանոթանանք մի փաստաթղթի ևս, որպեսզի համոզվենք, որ հայ հասարակության անհանգստությունը՝ կապված վիճելի տարածքները ռուսական օկուպացիայի հանձնելու հետ, անտեղի չէր: Դա գրառված հետախուզային խոսակցություն է[1] Նարիմանովի և Օրջոնիկիձեի միջև, որից պարզորոշ երևում է, թե Կովկասում գործող ղեկավար բոլշևիկները՝ ի դեմս Օրջոնիկիձեի, ինչպես էին մոտենում օկուպացված տարածքների պատկանելիության հարցին: Խոսակցության սկզբում Օրջոնիկիձեն տեղեկացնում է Նարիմանովին, որ այժմ ինքը Լենինի հետ ուղիղ հեռախոսակապ ունի, որ Արևելքի ժողովուրդների համագումարի հրավիրման համար ստեղծված կազմակերպական հանձնաժողովի մեջ մտցվում է նաև Նարիմանովը, հայերից՝ Միկոյանը, Հյուսիսային Կովկասից Գաբիևը և անդրադառնալով վիճելի տարածքների խնդրին ավելացնում. «...Հենց նոր հաղորդված հեռագրին ես իմ կողմից համապատասխան հավելված կկցեմ, բայց, կարծում եմ, մեր մեջ ասած, քանի որ Զանգեզուրը, Ղարաբաղը կգրավվեն մեր զորքերով, դա միևնույն է՝ կլինի ադրբեջանական»[2]: Սակայն Օրջոնիկիձեի այս խոսքերը չեն բավարարում Նարիմանովին: «Համագումար գումարելուց առաջ (նախ) անհրաժեշտ է ամրապնդել Ադրբեջանի դրությունը քաղաքական տեսակետից, – պատասխանել է Նարիմանովը: – Դա ես ասում եմ Չիչերինի վերջին հեռագրերի պատճառով, որոնց բովանդակությունը Ձեզ հայտնի է: Ես Ձեզ կխնդրեի անհապաղ գալ

[1] Փաստաթուղթը թվագրված չէ: Դատելով բովանդակությունից՝ պետք է տեղի ունեցած լինի հուլիսին կամ օգոստոսին:

[2] „Геноцид армян...", стр. 160:

(Բաքու) այդ հարցը քննարկելու համար, քանի որ մոտ օրերս ներկայացուցիչներ ենք ուղարկում կենտրոն: ...Զիչերինի վերջին հեռագիրը ցույց է տալիս, որ մեր կողմից այդ տարածքի գրավումից հետո կենտրոնի կողմից տարածքը չեզոք է հայտարարվում, իսկ դա արդեն ցույց է տալիս, որ Ադրբեջանը տվյալ պահին կորցնում է այդ տարածքը: Ես այնուամենայնիվ հետաքրքրվում եմ, Դուք չուտո՞վ կլինեք մեզ մոտ: Ես կցանկանայի մինչև ներկայացուցչի ուղարկումը կենտրոն, խորհրդակցել Ձեզ հետ: **Հետո կխնդրեի ուղիղ հեռախոսակապով խոսեք ընկ. Ստալինի հետ և ցույց տաք աղբյուրը՝ որտեղից է այդ ամենը տեղի ունենում: Մենք որոշել ենք այստեղ և կենտրոնում չորս-հինգ օրից հետո ցրել հայկական բոլոր խմբերը...»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, Զիչերինից դժգոհ Նարիմանովը ոչ թե նրանից է փորձում իրեն հետաքրքրող հարցի մասին տեղեկություն ստանալ, այլ Ստալինից: Իսկ դա վկայությունն է այն բանի, որ Նարիմանովը հրաչալիորեն տեղյակ էր Ստալինի հակահայկական տրամադրություններին: Գուցեև պատահակա՞ն չէր խոսում հայկական խմբերի ցրման մասին, որին Օրջոնիկիձեն այդպես էլ չարձագանքեց: «Ի՞հարկե, ես համաձայն եմ Ձեզ հետ, որ Զիչերինն անհուսալիորեն չփոթում է, քանի որ այնտեղ լինելու է խորհրդային իշխանություն և լինելու են այնտեղ մեր զորքերը, – ասել է Օրջոնիկիձեն: – Ընդամենը ձևական կողմին, փաստորեն մենք կկարողանանք այդ տարածքները ամրակցել Ադրբեջանին: Զէ՞ որ ոչ մեկն աշխարհում ի վիճակի չէ խանգարելու մեզ ազդել նշված մարզերի ազգաբնակչության վրա՝ արտահայտվելու Ադրբեջանին միանալու օգտին, այդ մարզերը դարձնելու Հայաստանի դեմ խորհրդային քարոզչության այն բազան, որն այդպես սաստիկ ուզում են մենշևիկները և մուսավաթականները»[2]:

Կարծում ենք սա այն դեպքն է, երբ անվարան կարող ենք ասել՝ «մեկնաբանություններն ավելորդ են»: Իսկ թե ինչու Նախիջևանի անունը չեն հիշատակել գրուցակիցները, ապա հավանաբար, պատճառը ազգային կազմն էր: Թող Զիչերինը և Լեգրանը կուրծք ծեծեն, ինչքան ուզում են, թե ժամանակավոր օկուպացիան չի կանխորոշում մարզի պատկանելությունը: Ստալինը, Օրջոնիկիձեն և Նարիմանովը ստույգ գիտեն, թե ինչպես պետք է լուծել այդ բարդ խնդիրը:

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 161:

* * *

Թվում էր, թե ստորագրված համաձայնագրից միակ դժգոհը Հայաստանի կառավարությունը պետք է լիներ, իսկ Ադրբեջանը՝ հայտնվելով չահեկան դրության մեջ, պետք է գոհ լիներ: Բայց ոչ, շատ չուտով պարզվեց, որ Ադրբեջանը և քեմալական Թուրքիան ևս դժգոհ են, և որ առավել քան տարօրինակ է՝ դժգոհ են Հայաստանի Հանրապետության դաշնակիցներ համարվող Անգլիան և Ֆրանսիան: Նախ ծանոթանանք վերջիններիս դիրքորոշմանը:

Համաձայնագրի ստորագրման արդեն հաջորդ օրն առավոտյան Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի արտակարգ կոմիսար կոմանդոր Լյուկը, իսկ կեսօրին ֆրանսիական ռազմական առաքելության ներկայացուցիչ Դե Մարտելը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի՝ Տ. Բեկզադյանի գլխին չանթ ու կրակ էին թափում, ամեն տեսակի սպառնալիք ու մեղադրանք ներկայացնում Հայաստանի կառավարությանն այն բանի համար, որ համաձակվել է Ռուսաստանի հետ զինադադարի համաձայնագիր ստորագրել առանց իրենց տեղյակ պահելու:

Նույն օրը Լյուկը չտապ հեռագրում է լորդ Քերզոնին, հայտնում կնքված համաձայնագրի մասին, ավելացնում, որ ինքը իր զարմանքն է արտահայտել և հայտարարել հայ ներկայացուցիչներին, որ համաձայնելով Նախիջևանի բոլշևիկյան օկուպացիային, որտեղից ճանապարհ է բացվում դեպի Թուրքիա և Պարսկաստանի հյուսիս-արևմտյան շրջանները, Հայաստանը փաստորեն գործել է ընդդեմ Մեծ Բրիտանիայի: «Հայերը իրենց գործողությունը բացատրեցին նրանով, որ իրենք այլևս չեն կարողանում դիմադրել և հայտարարեցին, որ իրենք նախկինի պես պահպանում են հավատարմությունը Անտանտին, – ասված է հեռագրում: – Նրանք նաև հաստատեցին, որ ժամանակը, որը նրանք կշահեն առաջիկա բանակցություններում Երևանում, կօգնի իրենց կազմակերպելու հետագա դիմադրությունը»[1]:

Զբավարարվելով կնքված զինադադարի հարկադրական և ժամանակավոր լինելու մասին Բեկզադյանի բացատրություններով՝ չուտով ֆրանսիական ռազմական առաքելության պետ, գնդապետ Կորբելը և կոմանդոր Լյուկը, մի-մի պատվիրակության գլուխ անցած, ժամանում են Երևան (համապատասխանաբար՝ օգոստոսի 24-ին և 31-ին)՝ Հայաստանի կառավարության հակաբոլշևիկյան տրամադրություններ-

[1] Նույն տեղում, էջ 132:

րի և Արևմուտքի նկատմամբ հավատարմության վերաբերյալ Բեկզադյանի հավաստիացումների մասին անձամբ վարչապետից լսելու նպատակով: Արխիվներում պահպանված վավերագրերը վկայում են, որ իր կառավարության հակաբոլշևիկյան աներեր դիրքորոշման մասին Համո Օհանջանյանից անհրաժեշտ բացատրություններ ստանալուց հետո էլ և՛ Կորբելլը, և՛ Լյուկը Հայաստանին որևէ օգնություն ցույց տալու խոստում չեն տվել, այլ փորձել են իրենց երկրների համար տնտեսական շահ հետապնդող պայմաններ պարտադրել: Այդ բանակցություններին այստեղ չենք անդրադառնա, թեև դրանք խիստ բնութագրական են մեր «դաշնակիցների» համար, քանի որ 1920թ. Թուրք-հայկական պատերազմին նվիրված մեր աշխատության մեջ դրանք արդեն բավականաչափ լուսաբանված են[1]: Սակայն չենք կարող թեկուզ հակիրճ չանդրադառնալ այն խուճապային տրամադրություններին, որ համակել էր Հայաստանի կառավարող շրջաններին անգլո-ֆրանսիական ներկայացուցիչների բարձրացրած աղմուկը: Հավատ չընծայելով վերջիններիս՝ Հայաստանի կառավարության հակաբոլշևիկյան դիրքորոշման մասին իրենց կառավարություններին զեկուցելու խոստումներին, Արտգործնախարարությունը Եվրոպայում գտնվող իր ներկայացուցիչների և անհատ գործիչների միջոցով բացատրական աշխատանք տանելու որոշում կայացրեց: Ահա, օրինակ, ինչ է ասված այդ օրերին հատուկ առաքելությամբ Եվրոպայում գտնվող Ալ. Խատիսյանին ուղարկված ընդարձակ (երեք մեքենագիր էջ) գրության մեջ. «Այդ պայմանագիրը ստեղծել է Թիֆլիսում դաշնակիցների ներկայացուցիչների մեջ դեպի մեզ շատ աննպաստ տրամադրություն: ...Պետք է աշխատել ամեն միջոցներով, որ նույնանման տրամադրություններ չստեղծվեն դեպի մեզ Եվրոպայում: Պետք է աշխատել պարզել դաշնակից պետությունների կառավարություններին և առհասարակ քաղաքական շրջաններում, որ Հայաստանի Հանրապետությունը ստիպված է եղել կնքել այդ պայմանագիրը Սովետական իշխանության ներկայացուցչի հետ, որը սոսկ զինադադար է: Մենք այդ զինադադարի պայմանագրով չենք հրաժարվում մեր իրավունքներից այն հողամասերի վերաբերմամբ, որոնք այժմ գրավված են սովետական զորքերով: Այդ հարցերը մնում են վիճելի և պիտի վճռվեն վերջնականապես մոտիկ ապագայում կնքվելիք դաշնագրով: Եթե մենք այդ դաշնագիրը

[1] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 131-137:

կնքելու ժամանակ ուժեղ լինենք, կարող ենք պնդել մեր պայմանների վրա և ոչինչ չզիջել»[1]:

*Արտգործնախարարության տեղեկատվության բաժնի վարիչ Մ. Արզումանյանի կազմած այս գրության մեջ խոսվում է նաև այն ծանր դրության մասին (պատերազմ մի քանի ճակատներում, զենքի ու զինամթերքի պակաս, անընդհատ կռիվներից զորքերի հոգնածություն և այլն), որ հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը 1920թ. ամռան ամիսներին և ավելացվում. «Մինչև վերջնական դաշնագիր կնքելը Հայաստանը հնարավորություն կունենա ամրապնդվել, զինել իր զորքերը նոր հրացաններով (որոնք դժբախտաբար ժամանակին չհասան) և նոր օգնություն ստանալով դաշնակիցներից, լարել իր ուժերը և շարունակել կռիվը բոլշևիկների դեմ: **Հայաստանի կառավարությունը չի փոխել իր քաղաքական ուղղությունը և շարունակում է իր կտրուկ քաղաքականությունը դեպի բոլշևիկները և պիտի կռվի մինչև վերջին հնարավորությունը: Դաշնակիցները պետք է հասկանան Հայաստանի ծանր կացությունը և համոզվեն, որ այդ զինադադարը հակադաշնակից չէ: Ահա այդ ուղղությամբ պետք է գործել ցրելու այն աննպաստ տպավորությունը, որ կարող է թողնել դաշնակիցների վրա մեր կնքած զինադադարը»**[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.):*

Ուշագրավ մի հանգամանք ևս. այս գրության հետ մեկտեղ Ալ. Խատիսյանին էին ուղարկվել նաև Կորբելլին տրված հուշագրի և Նախիջևանի ուղղությամբ Հայկական բանակի ռազմական գործողությունները դադարեցնելու պատճառների վերաբերյալ Արտգործնախարարություն ներկայացրած գեն. Նազարբեկյանի գաղտնի զեկուցագրի պատճենները: Ռուսաց լեզվով գրված այս երկու փաստաթղթերն էլ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Կորբելլին հանձնված հուշագրում ստեղծված իրադրության համար Հայաստանի կառավարությունը, թեև ծայրահեղ զգուշությամբ, բայցևայնպես մեղադրում է Դաշնակից տերություններին և հատկապես Մեծ Բրիտանիային: «Ինչպես Ձեզ հայտնի է, - ասված է հուշագրում, - Հայաստանի կառավարությունը սկզբից ևեթ Կովկասում Դաշնակցային առաքելությունների ներկայացուցիչներին մատնանշել է Հայաստանի հողերի վրայով բոլշևիկյան և Թուրք-ադրբեջանական ուժերի միավորման վտանգը Հայաստանի և Արևելքում Դաշնակից տերությունների չա-

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 588, թ. 171:
[2] Նույն տեղում, թ. 171-172:

հերի համար: Այդ ժամանակ էլ իմ կառավարությունը մատնանշել է Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի շրջանները Հայաստանին հանձնելու հսկայական նշանակությունը բոլշևիկների և թուրք-ադրբեջանցիների նշված միավորմանը խանգարելու հաջողության գործում, ինչպես նաև դաշնակիցների կողմից Հայաստանին շտապ և ժամանակին մարտական և այլ կարգի օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը: **Հայկական Ղարաբաղի կառավարումը Ադրբեջանին հանձնելու և Հայաստանի զորքերով Զանգեզուրի շրջանի գրավումը չթույլատրելու մասին Անդրկովկասում անգլիական բարձրագույն հրամանատարության որոշումը զգալի հարված հասցրեց բոլշևիկյան և թուրք-ադրբեջանական ուժերի ներխուժումից Հայաստանի սահմանները պաշտպանելու գործին»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Այնուհետև նկարագրելով այն ծանր դրությունը, որում հայտնվել է Հայաստանը՝ միայնակ պայքարելով արևմուտքում թուրքերի, իսկ արևելքում բոլշևիկյան և ադրբեջանական ուժերի դեմ, երբ Անգլիայի խոստացած ռազմամթերքը ուշանում էր, հայկական զորքերը, այնուամենայնիվ, ձգտելով թույլ չտալ բոլշևիկյան և թուրքական ուժերի միավորումը, Նախիջևանի ուղղությամբ հարձակման անցան և չոչափելի հաջողության հասան՝ գրավելով Վեղիբասարը, Շարուրը, հետ մղելով թշնամուն Օլթիի և Ղազախի ճակատներում: Սակայն «այդ ընթացքում քաղաքական և ռազմական իրադրության բարդացումը, – չարունակում է Համո Օհանջանյանը, – հարկադրեց իմ կառավարությանը կանգնեցնելու հայկական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Նախիջևան: Հայաստանի զորքերի հրամանատարի՝ կից ներկայացվող հակիրճ հաշվետվությունից դուք կտեսնեք այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով կանգնեցվեց նշված առաջխաղացումը և ժամանակավորապես անհնարին դարձրեց Նախիջևանի ուղղությամբ հետագա գործողությունը»[2]:

Կորբելլին հասցեագրած այս գրությունը միանգամայն ճիշտ է արտացոլում իրականությունը, այն պատճառները, որոնք հնարավոր դարձրին Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի զինագրավումը խորհրդային զորքերի կողմից: Բայց չգիտես ինչու, Օհանջանյանն այդ մասին խոսում է ոչ թե Անգլիայի, այլ Ֆրանսիայի զինվորական ներկայացուցչին ուղարկած գրությունում: Ի դեպ՝ հետագայում էլ հայ

[1] Նույն տեղում. թ. 175:

[2] Նույն տեղում:

գործիչները համարձակություն չցուցաբերեցին անգլիացիների երեսին ասելու այն, ինչ ասում էին հետևից: Դրանում համոզվելու առիթներ դեռ կունենանք:

Վերադառնալով գեն. Նազարբեկյանի գրության խնդրին, ավելորդ չենք համարում ընդգծելու, որ թեև մեր ձեռքի տակ փաստեր չկան, որոնք վկայեին որ Դաշնակցային տերությունների ներկայացուցիչները Հայաստանի կառավարությունից բացատրություն են պահանջել Նախիջևանի ուղղությամբ ռազմական գործողությունները դադարեցնելու պատճառների մասին, սակայն հենց այն հանգամանքը, որ Հայաստանի զորքերի հրամանատարը՝ գեն. Նազարբեկյանը, այդ պատճառների մասին զեկուցագիրը գրել է ոչ թե Նախիջևանում ռազմական գործողությունների դադարեցման շրջանում (հուլիսի վերջ-օգոստոսի սկիզբ), այլ բավականին ուշ՝ օգոստոսի 20-ին, գնդ. Կորբելլի Երևանյան այցելության նախօրյակին, ինչպես նաև այն, որ զեկուցագիրը գրվել է ոչ թե ռազմական, այլ արտաքին գործերի նախարարի պահանջով, վկայում է, որ նման հարցադրում, ըստ երևույթին, եղել է: Այդպիսի ենթադրության օգտին է խոսում նաև այն, որ նույն օրը՝ օգոստոսի 20-ին, վարչապետ և արտգործնախարար Համո Օհանջանյանը խսկույն զանգել էր Երևանում կոմանդոր Լյուկի ներկայացուցիչ կապիտան Գրեյսիին՝ նրա միջոցով փաստաթուղթը Լյուկին ուղարկելու նպատակով: Օգոստոսի 25-ին Լյուկին ուղարկած զեկուցագրում Գրեյսին գրում է.

«Պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ պ-ն Օհանջանյանը զանգեց ինձ ամսի 20-ին, և հետևյալը նրա խոսակցության հակիրճ շարադրանքն է: Ես նրան հայտնեցի, թե այն համաձայնությունը, որ նրանք արել են Խորհրդային Ռուսաստանի հետ և որով նրանք Խորհրդային զորամասերի առաջ բացել են Նախիջևանի ճանապարհը, շատ անբարյացակամ կերպով կարող է ընդունվել Անգլիայում:

Սրա վրա նա ինձ հայտնեց մի քանի պատճառներ այն մասին, թե ինչո՞ւ է արվել այս համաձայնությունը: Դրանից հետո նա ինձ տվեց մի պաշտոնական հայտարարություն, ինչպես նաև ընդհանուր հրամանատար Նազարբեկովի մեկ հաղորդագրությունը, ուր նա նկարագրում է ռազմական դրությունը»[1]: Այնուհետև նշելով, որ Օհանջան-

[1] **Գ. Յազըճյան,** Ինչո՞ւ Հայաստանի Հանրապետության բանակը 1920թ. չպաշտպանեց Նախիջևանը (պատմական երկու անհայտ փաստաթուղթ): Տե՛ս «Նախիջևան», ամսաթերթ, մարտ 2000թ.:

յանն առաջարկում է, թե եթե Անգլիան չի կարող անմիջական օգնություն ցույց տալ ռազմական ուժով, ապա գոնե օգտագործի դիվանագիտական ճանապարհով բոլշևիկների վրա ազդելու հնարավորությունը, Գրեյսին մեջբերում է վարչապետի հետևյալ խոսքերը.

«Մեր սեփական ուժն անբավարար է Քեմալ փաշայի սպառնական կեցվածքի և մեր սահմաններում նրա ու բոլշևիկների առկայությամբ՝ մենք բոլոր կողմերից շրջապատված ենք: Սա էր հիմնական պատճառը մեր կողմից համաձայնագիրը ստորագրելու: Ուրիշ այլընտրանք չկար, և մենք պետք է համաձայնության գայինք հնարավոր լավագույն պայմաններով, որ կարող էինք ձեռք բերել: Այն փաստը, որ մենք Ջուլֆայի երկաթուղու տիրության համար մինչև վերջ պայքարեցինք, սա է փաստում: Եվ, իհարկե, մեր երկրի անհույս պայմանները ստիպեցին մեզ համաձայնել:

***Նախիջևանում մենք միայն հոգնած զորամասերի կես գումարտակ ունեինք հետևակի երեք գնդի և հեծելազորի մեկ ջոկատի դեմ:** Ու այս ուժի կեսը կործանվեց Թշնամու կողմից»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Որ Համո Օհանջանյանը բացահայտորեն սխալ տեղեկություն է տալիս Նախիջևան մտած հայկական ուժերի թվակազմի մասին, ակնհայտ է: Նախիջևանի ուղղությամբ գործում էր ոչ թե կես, կամ մեկ-երկու գումարտակ, այլ մի ամբողջ զորաջոկատ (отряд) գեն. Շելկովնիկյանի (Շելկովնիկով) գլխավորությամբ: Խնդիրը, անշուշտ, թվակազմի մեջ չէր: Եվ ոչ էլ հայկական ուժերի առաջխաղացումը հակառակորդի թվական գերազանցության պատճառով էր կանգնեցվել, այլ Ռուսաստանի հետ պատերազմի մեջ խրվելու անհեռանկարայնության:

Եթե գեն. Նազարբեկյանի գրության լույս աշխարհ գալու հանգամանքների մասին վերը նշված փաստարկները չլինեին էլ, ապա դարձյալ նույն հետևությունը կարելի էր անել, քանի որ նրանում նշված պատճառների շարքում կան այնպիսիք, որոնք հանգեցնում են այն մտքին, որ փաստաթուղթը գրված է եվրոպացիների համար: Ահա, օրինակ, ինչ է ասված Նախիջևանի ուղղությամբ ռազմական գործողությունները դադարեցնելու պատճառներից առաջինում.[2] «Մուսուլման բնակչության փախուստը Շարուր-Նախիջևանի շրջանից և Հանրապետության կառավարության իշխանությանը նրա ենթարկվել չցանկանալը: Այդ հարցում Նախիջևանի մուսուլմանական խորհրդի հետ համաձայնության գալու բոլոր փորձերը, ինչպես ձեզ հայտնի է, անհաջողության մատնվեցին»[1]:

Ո՞ւմ համար պարզ չէ, որ այս տողերը գրված են Եվրոպայի համար և ոչ Հայաստանի կառավարության: Թե՞ գեն. Նազարբեկյանը նոր պիտի հասկանար, որ սրված թշնամական հարաբերությունների պայմաններում, 1918–1919թթ. նախիջևանահայության ցեղասպանությունն իրագործած մուսուլմանները՝ վախենալով վրեժխնդրությունից, կփախչեն: Համոզիչ չէ նաև 6-րդ կետի առաջին պարբերությունը. «Վերջապես, եթե և ենթադրվում էր Նախիջևանը գրավել Պարսկաստանի հետ առևտրական կապերի հաստատման համար, ապա միայն այն նկատառումով, որ Շահթախթի-Ջուլֆա տեղամասը պիտի պաշտպանեն իրենք՝ բնակիչները»[2]: Հասկանալի է, որ բնակիչները դա կանեին միայն այն դեպքում, եթե ոչ թե ուժի թելադրանքով, այլ կամովին ընդունեին Հայաստանի հպատակությունը:

Երրորդ, չորրորդ, հինգերորդ կետերում նշված պատճառաբանությունները (հայկական զորքերի հոգնածությունը, կոմունիկացիաների անապահով վիճակը, պահեստային ուժերի բացակայությունը, անգլիական գենքի ու զինամթերքի՝ Հայաստան ուշ հասնելը և այլն) թեև տեղին են և ընդունելի, բայց, մեր խորին համոզմամբ, որոշիչ դեր չեն խաղացել Նախիջևանում ռազմական գործողությունները դադարեցնելու հարցում: Շարուրում կենտրոնացած հայկական ուժերը ի զորու էին ամբողջ Նախիջևանը գրավելու (Թշնամին խուճապահար փախչում էր առանց լուրջ դիմադրություն ցույց տալու, բարոյահոգեբանական առավելությունը հայկական բանակի կողմն էր և այլն), եթե խորհրդային զորամասերը չմտնեին Նախիջևան և վերջնագրի կարգով չպահանջեին դադարեցնել հետագա առաջխաղացումը: Բայց չգիտես ինչու այդ մասին հստակ չի խոսվում ո՛չ Օհանջանյանի և ո՛չ էլ Նազարբեկյանի գրություններում: «Շահթախթին գրավելու համար ուղարկված զորքերը, – ասված է Նազարբեկյանի գրության երկրորդ կետում, – խորհրդային զորքերով Զանգեզուրի և Ղարաբաղի գրավվածության պայմաններում, անբավարար են հետագա առաջխաղացման համար

[1] *Նույն տեղում:*

[2] *Անիտա Բուրդետի կազմած «Հայաստան. Քաղաքական և էթնիկական սահմաններ» փաստաթղթերի ժողովածուում տեղ գտած գեն. Նազարբեկյանի գրությունը անգլերենից հայերեն թարգմանել և մամուլում հրապարակել է Գ. Յաղըճյանը: Մենք օգտագործել ենք ՀԱԱ-ում պահվող ռուսերեն բնօրինակը:*

[1] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 588, թ. 174:*

[2] *Նույն տեղում:*

և պահանջում են հզորացում նոր զորամասերով: Այսպես չարացած բնակչության կուտակված զանգվածից բացի, Շարուրի ջոկատի զորամասերի դիմաց հայտնվեցին նոր ուժեր՝ ի դեմս խորհրդային բանակի»[1]: Այսքանը միայն: Ստեղծվում է տպավորություն, որ հայոց ղեկավարությունը չէր ուզում իր «դաշնակիցներին» ասել բուն ճշմարտությունը, այն է՝ հետագա առաջխաղացումը առաջ կբերեր բացահայտ պատերազմ Ռուսաստանի հետ, ինչը կարող էր կործանարար հետևանքներ ունենալ: Չէր ուզում ասել, որովհետև հասկանում էր, որ Կորբելլին և Լյուկին դա չէր բավարարի, նրանք կպահանջեին շարունակել պատերազմը: Հայ գործիչները չէին կարող չհասկանալ, որ անգլոֆրանսիացիներին հետաքրքրողը ոչ թե Նախիջևանի պատկանելիության խնդիրն է, Հայաստանի կազմում նրան տեսնելը, այլ բոլշևիկների դեմ զինված պայքարը: Չէ՞ որ ընդամենը մեկ տարի առաջ՝ 1919թ. հուլիսին Շարուր-Նախիջևանում ծագած հակահայկական ապստամբության ժամանակ, նրանք ոչ միայն չօգնեցին ու չխրախուսեցին ճնշելու ապստամբությունը, այլ հակառակը՝ պահանջեցին դադարեցնել ռազմական գործողությունները[2]: Այսպիսին էին Հայաստանի «դաշնակիցները», այսպես էին նրանք հոգ տանում իրենց փոքր դաշնակցի անվտանգության մասին: Իրենք մի կողմ քաշված, նրան հրում էին անհավասար պատերազմի հզոր հակառակորդի դեմ, քաջ գիտակցելով, որ դրանով իսկ Հայաստանի համար մահավճիռ են կայացնում: Մինչդեռ վերջինս չարունակում էր հավատարիմ մնալ ու հայցել նրանցից օգնություն: Օգոստոսյան այդ նույն օրերին էր, որ արտգործնախարար Հ. Օհանջանյանի հանձնարարությամբ Տ. Բեկզադյանը ընդարձակ նամակով դիմում է Թիֆլիսում գտնվող անգլո-ֆրանսիական ներկայացուցիչներին, հակիրճ, բայց համոզիչ փաստերով նկարագրում Կարմիր բանակի Ադրբեջան մտնելուց հետո տարածաշրջանում ստեղծված իրադրությունը, Հայաստանի վրայով միմյանց ձեռք մեկնելու քեմալականների և բոլշևիկների ձգտումը, Հայաստանի կառավարության անհավասար կռիվը և հարկադրված զինադադարը, ռուսական ժամանակավոր օկուպացիայի հանձնված հայկական տարածքները վերադարձնելու նրա վճռականությունը: «Հայտնելով վերոհիշյալը Ձեզ ի տեղեկություն, – ասված է այդ նամակում, – իմ կառավարությունը խնդրում է Ձեզ հաղորդել այս ձեր կառավարությանը և միևնույն ժամանակ հարցնել, թե ինչպիսի նյութական և դիվանագիտական օգնություն կարող է ձեր կառավարությունը ցույց տալ Հայաստանին նրա կռվում ընդդեմ Թուրք-մեծամասնական ուժերի, որոնք սպառնում են իր անկախությանը: Իր կողմից իմ կառավարությունը գտնում է չափազանց անհրաժեշտ, որ դաշնակիցները ճնշում գործադնեն մեծամասնական կառավարության վրա: Իմ կառավարությունը գտնում է նույնպես անհրաժեշտ անմիջապես ուղարկել Հայաստան վառելիք և փոխադրության միջոցներ: Հրավիրում եմ Ձեր ուշադրությունը այն բանի վրա, որ վերոհիշյալ բոլոր միջոցները պետք է գործադրել ամենակարճ ժամանակի ընթացքում, քանի որ Հայաստանը մի փոքր երկիր է, որը չի կարող երկար դիմադրավել հարձակվող հարևաններին, որոնք ավելի ուժեղ են թե՛ մարդկանցով, և թե՛ ուրիշ միջոցներով»[1]:

Լեգրան-Ջամալյան համաձայնագրի նկատմամբ Հայաստանի դաշնակիցների անհանդուրժող վերաբերմունքի մասին երկար կարելի է խոսել, բայց, կարծում ենք, ասվածն էլ բավական է պատկերացում կազմելու համար: Այժմ փորձենք պարզել թե ինչպես ընդունվեց համաձայնագիրը հակառակորդ ճամբարում, Ռուսաստանի դաշնակիցների՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից: Սրանք, իհարկե, Ռուսաստանին սպառնալ չէին կարող, բայց կեղծ ու պատիր պատճառաբանություններով ազդել նրա վարած քաղաքականության վրա, կարող էին և հենց այդպես էլ վարվեցին: Հազիվ երեք-չորս օր էր անցել համաձայնագրի ստորագրումից, երբ Մոսկվայում գտնվող Բ. Շահթախթինսկին և Բեքիր Սամի-բեյը ձեռք-ձեռքի տված գրոհեցին Կրեմլը՝ որպես օբյեկտ ընտրելով ոչ թե Չիչերինին, որին տարհամոզելու հույս չունեին այլևս, այլ անձամբ Լենինին: Օգոստոսի 13-ին Լենինը ստացավ Ադրբեջանի արտակարգ ներկայացուցիչ (այդպես է փաստաթղթում) Շահթախթինսկու նամակը Հայաստանի հետ Լեգրանի ստորագրած համաձայնագրի հետևանքով Ադրբեջանին և Ռուսաստանին սպառնացող վտանգների մասին, իսկ 14-ին՝ քեմալական պատվիրակության[2] ղեկավար Բեքիր Սամի-բեյը Լենինի հետ տեսակցության ժամանակ Կարմիր բանակի հետ կապի հաստատման պատրվակով համառորեն պահանջում էր թույլ տալ գրավելու Շահթախթին և Սարիղամիշը: Հա-

[1] Նույն տեղում:

[2] 1919թ. հուլիսյան դեպքերի մասին մանրամասն տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտ. – 1920թ. ապրիլ), Եր., 2002, էջ 112-182:

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ. փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 267:

[2] Մոսկվա էր ժամանել հուլիսի 19-ին Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամության և համագործակցության պայմանագիր ստորագրելու նպատակով (տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, 1920թ. Թուրք-հայկական պատերազմը..., էջ 137-145):

մաձայնացվա՞ծ գործողություններ էին դրանք, թե՞ ոչ: Հակված ենք կարծելու, որ համաձայնեցված էին: Այլ կերպ լինել չէր էլ կարող. ժամանելով Մոսկվա, նրանք հետապնդում էին նույն նպատակը, պահպանում մշտական կապ, խորհրդակցում միմյանց հետ: Առաջ անցնելով ասենք, որ Բ. Շահթախթինսկին նույն կերպ գործեց նաև 1921թ. Մոսկվայի երկրորդ ռուս-թուրքական կոնֆերանսի օրերին, երբ վճռվում էր Նախիջևանի երկրամասի ճակատագիրը: Հենց նրա և Յուսուֆ Քեմալի հանդիպումների արդյունքում ծնունդ առավ Նախիջևանի երկրամասը Ադրբեջանի հովանավորության տակ դնելու գաղափարը՝ առանց երրորդ տերության հանձնելու իրավունքի: Ինչ վերաբերում է Լենինին հասցեագրած Շահթախթինսկու օգոստոսի 13-ի նամակին, ապա ահա թե ինչ էր ասված նրանում.

«Նկատի ունենալով Հայաստանի հետ հաշտության կնքման մասին մամուլում հայտնված տեղեկությունը, ես՝ որպես Ադրբեջանի արտակարգ ներկայացուցիչ և Ադրբեջանական կոմունիստական կուսակցության լիազոր ներկայացուցիչ, իմ պարտքն եմ համարում հայտարարելու հետևյալը.

1. Համարյա ամբողջ Նախիջևանի երկրամասի և Շահթախթի-Էրիվան երկաթուղագծի հանձնումը Հայաստանին, դաշնակներին հնարավորություն է տալիս օգտագործելու Մակվի երկաթուղին և Մակվի խանությունից արտահանելու միչև 8.000.000 փութ ցորեն հին պաչարից և 3.000.000 փութ նոր բերքից, ոչ պակաս 20.000 գլուխ խոշոր անասուն և մի քանի միլիոն փութ չոր մրգեր: Այդ պաչարները, որոնք անպայման հարկավոր են Ադրբեջանին և Խորհրդային Ռուսաստանին, դաշնակները ամենակարճ ժամանակամիջոցում երկաթուղով կարտահանեն:

Դաշնակներին Շահթախթի-Մակու, Շահթախթի-Էրիվան, Ջուլֆա-Թավրիզ երկաթուղու և Ուրմիայի չոգենավագնացության հանձնումով իրականանում է պարսկական պաչարների ազատ արտահանությունը Հայաստան, Վրաստան և Եվրոպա, ինչին երեք տարի ապարդյուն ձգտում էին դաշնակները, պարսկական կապիտալիստները և Անգլիան:

Այդ պաչարների չնորհիվ Հայաստանի դաշնակցական կառավարությունը հնարավորություն կստանա մեղմելու հայ ժողովրդի դժգոհությունը, պահպանելու Անտանտի ուժի հանդեպ նրա հավատը, բարձրացնելու իր հեղինակությունն ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի և հոյակապորեն կազմակերպելու ոչ միայն իր, այլև վրացական բանակի մատակարարումը:

Ամբողջ չարժակազմով Շահթախթի-Էրիվան (չուրջ 100 վերստ) և Շահթախթի-Ջուլֆա (նույնպես չուրջ 100 վերստ) երկաթուղու անցումը Հայաստանին, դաշնակների ձեռքն է տալիս ողջ պարսկական Ադրբեջանը, նրանց կապում է Պարսկաստանի անգլիական ուժերի հետ, իսկ **մեզ զրկում թուրքական հեղափոխական չարժման հետ ամեն մի կապից:**

Նախիջևանի երկրամասը քաղաքական, տնտեսական և ռազմական վիթխարի նչանակություն ունի, քանի որ այստեղից մի երկաթուղագիծ տանում է պարսկական Մակվի խանություն և այնտեղից Թուրքիա՝ ք. Բայազեդ, իսկ մյուսը տանում է Պարսկաստան՝ Թավրիզ քաղաք: Այդպիսով Նախիջևանի երկրամասը՝ որպես երկաթուղու հանգուցային կետ, մեզ կապում է Թուրքիայի և Պարսկաստանի հարուստ տարածքների հետ: Ո՛չ Ադրբեջանը, ո՛չ Ռուսաստանը չպետք է հրաժարվեն այդպիսի կարևոր հանգուցային կետից հօգուտ դաշնակների:

1918թ. Թուրքերի հեռանալուց հետո Նախիջևանի երկրամասի բնակչությունը ժամանակավորապես հռչակեց այսպես կոչված «Արաքսյան հանրապետությունը»: Մի քանի տարիների ընթացքում Նախիջևանի բնակչությունը պաչտպանում էր իր անկախությունը դաշնակներից, որոնք՝ չնայած բոլոր ջանքերին, ի վիճակի չէին նրան տիրելու: Պահանջվեց Անգլիայի միջամտությունը, որն իր զորքերով գրավելով այդ երկրամասը՝ հակառակ բնակչության բացահայտ բողոքին, բռնությամբ այն հանձնեց դաշնակներին: Բայց հենց որ անգլիական զորքերը հեռացան, անհապաղ սկսվեց ապստամբություն: Դաշնակցական կանոնավոր զորքերը՝ մեծաքանակ հրետանիով, գնդացիրներով և զրահագնացքով, գլխովին ջախջախվեցին: Վերջին ժամանակներս դաշնակները յոթ կետերից հարձակում սկսեցին այդ երկրամասի վրա և չնայած նրան, որ հարձակումը միանգամայն անսպասելի էր տեղական բնակչության համար, ամենուրեք ջախջախվեցին: Այդ երկրամասի հանձնումը դաշնակներին, որի աչխատավոր ժողովուրդը զենքը ձեռքին երեք տարվա արյունալի պայքարից հետո ինքն է ազատվել նրանցից և միացել Ադրբեջանին, երկրամաս, **որտեղ ներկայումս ոչ մի հայ չկա,** բացահայտորեն խախտում է բոլորի կողմից ընդունված ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը և Խորհրդային Ադրբեջանի իրավունքները:

Նախիջևանի երկրամասի ժողովուրդը իր մոտ խորհրդային կարգ է հաստատել, նա կոմունիստների մեջ տեսել է իր փրկարարներին և ազատարարներին և չի կարծել, որ Խորհրդային Ռուսաստանը՝ բնակչության կամքին հակառակ, նրան կտա դաշնակներին, երբ նրանց

իշխանության տակ ոչնչացվում է ոչ միայն խորհրդային կարգը, այլև անկասկած բնակչության ֆիզիկական գոյությանը վտանգ է սպառնում, ինչպես դա եղավ հարյուրավոր մուսուլմանական գյուղերի հետ դաշնակցական Հայաստանի տարածքում:

Ինձ թույլ եմ տալիս հուսալու, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը իմ հայտարարությունը չի թողնի առանց ուշադրության և թույլ չի տա Խորհրդային Ադրբեջանի, նաև Խորհրդային Ռուսաստանի, իրավունքների և շահերի ակնհայտ խախտում:

Իմ կարծիքով ստեղծված վիճակից լավագույն ելքը՝ մինչև Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճերի վերջնական լուծումը, Նախիջևանի ամբողջ երկրամասը՝ մինչև նախկին սահմանը, Կարմիր բանակի կողմից գրավումն է»[1]:

Այս փաստաթղթի վրա բացի "արխիվ" մակագրությունից ուրիշ ոչինչ չկա, որի համար էլ պարզ չէ, թե Լենինը ինչպես է վերաբերվել այս կեղծիքներով լի ու նաև ինչ-որ չափով հանդիմանություն պարունակող նամակին: Ու նաև այն բանին, որ նամակում հայերի դեմ իր ժողովրդի հերոսական պայքարի մասին ճամարտակող Շահթախթինսկին բացահայտորեն ոչինչ չի խոսում ռուսական զորքերից օգնություն խնդրելու, վերջիններիս Նախիջևան մտնելու և հայկական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու մասին: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ նամակում Շահթախթինսկին հատուկ չեշտում է, թե Նախիջևանի երկրամասում «ներկայումս ոչ մի հայ չկա»՝ առանց երկմտելու, որ մոսկովյան ղեկավարությանը կարող է հետաքրքրել, թե ի՞նչ եղան այն ավելի քան հիսուն հազար հայերը, որոնք ապրում էին այդ երկրամասում ընդհուպ մինչև 1918 թվականը:

*Բեքիր Սամի-բեյի և Բեհբութ Շահթախթինսկու թափած ջանքերը ապարդյուն չանցան: Զիչերինը հանձնարարություն ստացավ պարզել նման միջոցառման հնարավորությունը: Օգոստոսի 14-ին, այսինքն՝ Լենինի հետ թուրքական պատվիրակության հանդիպման նույն օրը, Զիչերինը հեռագրում է Օրջոնիկիձեին. «Հայաստանի հետ Լեգրանի ստորագրած նախնական հաշտության կապակցությամբ թուրքերը տագնապ են բարձրացնում, քանի որ Շահթախթիի հանձնումը հայերին Թուրքիային հերմետիկորեն կտրում է մեզանից և Ադրբեջանից: Ամեն չփում դառնում է անհնարին: **Թուրքերը հարցնում են մեր համաձայնությունը, որպեսզի սեփական ուժերով խլեն հայերից Սարիղամիշը և Շահթախթին:** Մեզնից պահանջվում է միայն բանավոր համաձայնություն, որպեսզի մեզ չվարկաբեկեն: **Այդ դեպքում թուրքերը կվերականգնեին կապը մեզ հետ:** Հաղորդեք, նպատակահարմա՞ր է արդյոք...»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

*Հեռագրում ընդգծված տողերը ակնառու ցույց են տալիս, որ Զիչերինը կողմնակից էր համաձայնություն տալուն: Գուցե այդ է պատճառը, որ Օրջոնիկիձեին կողմնորոշելու համար անդրադառնում է նաև Շահթախթինսկու նամակին և հայտնում. «...ընկեր Շահթախթինսկին տագնապ է բարձրացնում Շահթախթի-Մակու, Շահթախթի-Երևան, Ջուլֆա-Թավրիզ երկաթուղագիծը և Ուրմիայի չոգենավագնացությունը Հայաստանին հանձնելու կապակցությամբ, որով իրագործվում է դաշնակների և վրացական մենշևիկների մատակարարումը պարսկական հարուստ պաշարներով, ինչը նրանց կամրապնդի: Անհապաղ հայտնեք Ձեր կարծիքը»[2]: Օգոստոսի 17-ին Օրջոնիկիձեն մի նոր հեռագիր է ստանում, այս անգամ Վրաստանում ՌՍՖՍՀ արտաքին առևտրի ժողկոմատի ներկայացուցիչ Ռուզերից, որում ասված էր, որ Զիչերինը խնդրում է չտապ պատասխանել Շահթախթին և Սուրիղամիշը թուրքերի կողմից գրավելու նպատակահարմարության վերաբերյալ իր հարցին: Եվ հենց այդ օրն էլ Օրջոնիկիձեն վերջապես ուղարկում է հետևյալ հակիրճ պատասխանը. **«Պետք չէ թուրքերին թույլ տալ գրավելու Շահթախթին, առաջ կբերի կոտորած, ավելի լավ է ինքներս գրավենք:** Երկաթուղագծի վերաբերյալ Շահթախթինսկին վախենալու ոչինչ չունի, առայժմ այնտեղ ոչ մի շարժում չկա, իսկ հետո կտեսնենք: Հաշտության պայմանագրի կնքման ժամանակ կարելի է վերապահություն անել»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Օգոստոսյան այդ օրերին Նախիջևանի գավառի հայերին մնացած մասը և Շահթախթին գրավելու ուղղությամբ որոշ փորձեր արվեցին: Ընդամենը երկու օր էր անցնել Լենինի հետ Բեքիր Սամի-բեյի հանդիպումից, երբ 11-րդ բանակի հրամանատարությունը ամբողջ Նախիջևանի գավառը գրավելու հրաման է ստանում: Վերջինս էլ իր հերթին օգոստոսի 16-ին հեռագրում է Լեգրանին. «11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհուրդը՝ հայկական զորքերի հետ ընդհարումներից խուսափելու նպատակով, խնդրում է Ձեզ կապվել Հայաստանի կա-

[1] РГАСПИ, ф. 5, оп. 1, д. 2796, л. 1-2.

[82] "Геноцид армян...", стр. 133.

[82] Նույն տեղում. էջ 133-134:

[83] Նույն տեղում. էջ 138:

ռավարության հետ, որպեսզի իր զորքերին Նախիջևանի գավառի վարչական սահմաններից հետ քաշվելու կարգադրություն անի: Զորքերին համապատասխան հրաման է տրվում: Բանակցությունների արդյունքների մասին խնդրում եմ տեղեկացնել»[1]: Հաջորդ օրը՝ 17-ին, Բաքվից նոր հեռագիր է ստացվում. «Զիչերինի հաղորդման համաձայն, - ասված է հեռագրում, - Թուրքերը պնդում են Շահթախթին գրավելու վրա, քանի որ հակառակ դեպքում այդ կետով անցնող ճանապարհը կտրվում է: **Ստիպված ենք սխալմամբ գրավել Շահթախթին** (ընդգծումը մերն է - Է. Զ.)»[2]:

Սակայն ռուսական զորքերով Շահթախթին գրավելու խնդիրը չուտով օրակարգից հանվեց, որում դեր են խաղացել երկու հանգամանք. 1. Լեգրանի բուռն բողոքները օգոստոսի 10-ի համաձայնագրի նման խախտման դեմ, 2. Կրեմլը վերջապես տեղի տվեց Բեքիր Սամիի պատվիրակության համառ պնդումներին և համաձայնեց, որ Շահթախթին ու Սարիղամիշը գրավվեն Թուրքական ուժերի կողմից:

Նախ ծանոթանանք Լեգրանի դիրքորոշմանը: Օգոստոսի 18-ին Զիչերինին ուղարկած հեռագրում նա դժգոհում է, որ Զիչերինը դեռևս չի հայտնել իր կարծիքը օգոստոսի 10-ի համաձայնագրի մասին, ինչը փաստորեն բարդացնում է դրությունը և նվազեցնում վստահությունը իր կողմից տարվող քաղաքական ուղեգծի նկատմամբ: Այնուհետև տեղեկացնում է, որ օգոստոսի 12-13-ին Բաքվում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ որոշվել էր փոխել Հայաստանի նկատմամբ տարվող մարտավարությունը և այն պայմանավորել վերջինիս կողմից դեպի Թուրքիա Ռուսաստանին ազատ տրանզիտի իրավունք տալու համաձայնությամբ: Սակայն այժմ Օրջոնիկիձեից և 11-րդ Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդից ստացել է հաղորդագրություն, որ Թուրքերի պահանջով բանակին հրաման է տրված գրավել Շահթախթին և ամբողջ Նախիջևանի գավառը, որոնք օգոստոսի 10-ի համաձայնագրով մնացել էին Հայաստանին: Լեգրանը Զիչերինին հայտնում է նաև Օրջոնիկիձեին ուղարկած իր պատասխան հեռագրի մասին, որում խնդրել է Օրջոնիկիձեին չխախտել օգոստոսի 10-ի համաձայնագիրը և հրաժարվել Շահթախթին զենքի ուժով գրավելու մտադրությունից, քանի դեռ չի պարզվել Հայաստանի տարածքով ազատ տրանզիտ ստանալու հարցը: «**Եթե դուք վճռականորեն պնդում եք ձեր պլանի վրա, խնդրում եմ անհապաղ հայտնել ինձ**, -ասված է Օրջոնիկիձեին ուղարկած Լեգրանի հեռագրում: **Այդ դեպքում ես կհեռագրեմ Էրիվան Նախիջևանի գավառը հայկական զորքերից մաքրելու անհրաժեշտության մասին, միաժամանակ կտեղեկացնեմ հետագա բանակցությունները Վլադիկավկազ տեղափոխելու մասին և այնուհետև՝ համարելով իմ առաքելությունը կատարված, կմեկնեմ Խորհ. Ռուսաստան: Պատասխանը խնդրում եմ հաղորդել անհապաղ»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Զենք կարող չընդգծել Լեգրանի սկզբունքային դիրքորոշումը և համարձակ կեցվածքը իր ստորագրած համաձայնագրի պայմանները անխախտ պահելու խնդրում: Նա չի խորշում արտահայտել իր վրդովմունքը և սպառնալ պաշտոնաթողությամբ, եթե իր առաջարկը չընդունվի և համաձայնագիրը չեղյալ հայտարարվի: Նա փորձում է ազդել նաև Զիչերինի վրա՝ օգոստոսի 20-ին հեռագրելով նրան. «...**եթե Դուք իսկապես հաղորդել եք Սերգոյին Թուրքերի պահանջով Շահթախթին գրավելու անհրաժեշտության մասին՝ խախտելով խորհրդային կառավարության անունից օգոստոսի 10-ին Հայաստանի հետ իմ ստորագրած համաձայնագիրը, ինձ ուրիշ ոչինչ չի մնում անել, քան թախանձագին խնդրել Ձեզ և Կենտկոմին անհապաղ ինձ հետ կանչել...** Նախիջևանի գավառի հանձնումը քեմալականներին և Շահթախթիի գրավումով օգոստոսի 10-ի համաձայնագրի բացահայտ խախտումը հավասարազոր է Հայաստանի հետ խաղաղ հարաբերությունների խզմանը և ենթադրում է մի շարք հետագա միջոցառումներ Հայաստանի նկատմամբ, ինչը ինձ ամեն դեպքում անտեղի ու անժամանակ է թվում: **Այդ հիմնական հարցերի վերաբերյալ Ձեր ղեկավար ցուցումների բացակայության հետևանքով արտակարգ խճճված վիճակ է ստեղծվում և պարզ չէ, թե իսկապես ո՞վ է Հայաստանի նկատմամբ քաղաքականությունը վարում, մե՞նք թե՞ Բաքուն»**[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, Զիչերինին հասցեագրած այս հեռագրում ոչ միայն դժգոհություն կա, այլև նախատինք այն բանի համար, որ Մոսկվան չի տնօրինում կովկասյան գործերը և Հայաստանի հարցում հստակ քաղաքականություն չի վարում, որից մեծապես օգտվում է Բաքվի ղեկավարությունը սեփական ազգայնական ու զավթողական

[1] РГАСПИ, ф. 5, оп. 14, д. 10, л. 2:

[2] Նույն տեղում:

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 254:

[2] Նույն տեղում:

ծրագրերը իրագործելու համար: Հեռագրում Լեգրանը անդրադառնում է նաև Զանգեզուրում Հայաստանի պառլամենտի անդամներ Վահան Խորենու և Արշակ Շիրինյանի գնդակահարության, Վլադիկավկազում Հայաստանի հյուպատոսի ձերբակալության փաստերին, խորհուրդ տալիս գնդակահարությունների կապակցությամբ անպայման հետաքննություն կատարել, իսկ հյուպատոսին ազատ արձակել: Վերջում կրկին վերադառնում է ցավոտ խնդրին՝ Նախիջևանի հարցին, ավելացնում. «...խնդրում եմ հայտնել Նախիջևանի վերաբերյալ հատկապես ինչպիսի՞ հրահանգ է տվել գլխավոր հրամանատարը օգոստոսի 10-ի մեր համաձայնագրից հետո»[1]:

Կովկասում գործող պետական-կուսակցական գործիչների շարքում կային մարդիկ, որոնք հասկանում ու տեսնում էին Բաքվի ղեկավարության հակահայկական քաղաքականության ներքին ծալքերը, հայկական տարածքները անպայման կլանելու և մինչև Թուրքիա ձգվող մեծ Ադրբեջան ստեղծելու անգուսպ ձգտումը: Դրանց թվում էին նաև Օրջոնիկիձեն, Կիրովը, մարդիկ, որոնք կուսակցական-պետական վերին էշելոններում մեծ հեղինակություն և դիրք ունեին: Սակայն դրանցից և ոչ մեկը բացեիբաց չի արտահայտել իր դժգոհությունը ո՛չ Նարիմանովի խմբի գործունեությունից, ո՛չ առանձին հարցերում Մոսկվայի դիրքորոշումից այնպես, ինչպես դա անում էր Լեգրանը և մասամբ Ս. Տեր-Գաբրիելյանը: Վերջինս Զիչերինի հետ հեռախոսային ուղիղ խոսակցության ժամանակ (օգոստոսի 22-ին) դժգոհում է Բաքվի ղեկավարների գործելակերպից, հայտնում, որ նրանք «Ձեր անունից հեռագրերով խճճում են իրենց»: «Եթե դուք իսկապես չեք ուզում խզել խաղաղ հարաբերությունները Հայաստանի հետ, - ասել է Ս. Տեր-Գաբրիելյանը, - Թախանձագին խնդրում ենք Ձեզ, ԿԿ-ին, Ռազմահեղխորհրդին, Ժողկոմխորհրդին՝ կարգադրել Բաքվին..., ճշտորեն պահպանելու օգոստոսի 10-ի համաձայնագիրը, որը մեր համոզմամբ, ինչի հետ համաձայն է և Կիրովը, միակ հնարավորն է հանդիսանում»[2]: Հակադրվելով Զիչերինի այն կարծիքին, ըստ որի Շահթախթիի հանձնումը Հայաստանին ոչ միայն Ռուսաստանին և Ադրբեջանին կտրել է Թուրքիայի հետ անմիջական կապի հնարավորությունից, այլև Պարսկաստան տանող ճանապարհներից, որի հետևանքով իրենք զրկվում են Մակվի խանության պարենի հսկայական պաշարներից, Ս. Տեր-

[1] Նույն տեղում, էջ 255:

[2] «Коммунист», 23 декабря 1989г.

Գաբրիելյանը ավելացնում է. **«Զրկել Հայաստանը այդ ճանապարհից, հավասարազոր է հայերին քաղցի և բնաջնջման դատապարտելուն: Մակվի խանությունում պարենային հսկայական պաշարներ չկան: Դա Թուրքերի և ադրբեջանցիների համար պատրվակ է Նախիջևանի գավառին ամբողջությամբ տիրելու համար»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Դառնալով Լեգրանի դիրքորոշմանը, հարկ ենք համարում ընդգծել, որ նրա կեցվածքն այս հարցում ավելի վճռական էր: Ս. Տեր-Գաբրիելյանից տեղեկանալով, որ հեռախոսային խոսակցության ժամանակ Զիչերինը դժգոհել է, որ օգոստոսի 10-ի համաձայնագրով Շահթախթիից Ալաշկերտ տանող նեղուղի երկաթգիծը մնացել է հայերին և իրենք զրկվել են Մակվի խանության անսպառ հարստություններից, Լեգրանը Զիչերինին հեռագրում է. «Ո՛չ Ձեզնից, ո՛չ Օրջոնիկիձեից, որի հետ զրուցել եմ Համաձայնագրի ստորագրումից մի քանի ժամ առաջ, ո՛չ Կիրովից ինձ հայտնի չէր Շահթախթիով անցնող նեղուղի երկաթգծի մասին, ինչպես նաև **Մակվի խանության պարենային անսպառ պաշարների վերաբերյալ Մոսկվայի հաշվարկների մասին**, որի մասին Դուք հայտնել եք ընկ. Տերին...»[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Անշուշտ, այս տողերի մեջ հեգնանք կա, քանի որ Մակուն բոլորովին էլ «անսպառ պաշարներ» չուներ և Իրանի աղքատ խանությունների թվին էր պատկանում: Բայց ինչպես երևում է, Կրեմլում հավատացել էին Բ. Շահթախթինսկու հրամցրած լեգենդին ու ընկել կորցրածը վերադարձնելու փնտրտուքի մեջ: Ուստի Լեգրանը չտապում է հանգստացնել Զիչերինին: Նա գրում է. «Ես կարծում եմ, որ Հայաստանի հետ խաղաղ բանակցություններում, որոնք կսկսվեն իմ Երևան հասնելուն պես, սկզբունքորեն կլուծվի Հայաստանի երկաթուղիներով մեզ ազատ տրանզիտ տալու և Անգորայի հետ կապի հարցը: Մենք առաջին հերթին դրել ենք երկաթուղու, «Նախիջևան-Շահթախթի» տեղամասի օգտագործման և Շահթախթիից գնացող նեղուղի երկաթգծի չարժակազմը և չահագործումը մեզ կամ Թուրքերին հանձնելու հարցը»: Լավ հասկանալով, որ այդ ամենը առանց վիճելի համարվող տարածքների հարցի լուծման հնարավոր չէ, Լեգրանը շարունակում է. «Մինչև այդ բանակցությունները անհրաժեշտ է ունենալ Ձեր վերջ-

[1] **Գ. Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր. 1999, էջ 259:

[2] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 252:

նական որոշումը վիճելի տարածքների ճակատագրի մասին: **Ես հակված եմ ճանաչելու Նախիջևանի մարզը Հայաստանին, ամբողջ Ղարաբաղը՝ Ադրբեջանին: Զանգեզուրի հարցը այնպես սերտ է կապված Նախիջևանի հետ, որ Նախիջևանը Հայաստանին ճանաչելու դեպքում, ըստ երևույթին, հարկ կլինի թողնել նաև Զանգեզուրը:** Այդ ամենը, հասկանալի է, տրանզիտի մասին հիմնական հարցի բարեհաջող զարգացման դեպքում: Հակառակ դեպքում հարկ կլինի դաշնակների վրա ճնշում գործադրել, ինչը 11-րդ բանակի աջակցությամբ, որն այդ բանում հիմնավոր հակում և բավականաչափ հնարավորություն ունի, միանգամայն իրագործելի է»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, Լեգրանը հաստատակամորեն կանգնած էր Նախիջևանի գավառը Հայաստանի մաս ճանաչելու տեսակետի վրա և այդ միտքը աշխատում էր ներարկել նաև Զիչերինին: Վերջինս ևս, ինչպես արդեն նշել ենք, հակված էր վիճելի համարվող տարածքների հարցի լուծման այդ տարբերակին: Սակայն օգոստոսյան այդ նույն օրերին դեպքերն այլ կերպ էին զարգանում. Խարհրդային կառավարությունը ի վերջո տեղի տալով դաշնակից քեմալական Թուրքիայի համառ պահանջին, համաձայնեց, որ Թուրքերը Հայաստանի տարածքում գրավեն Շահթախթին ու Սարիղամիշը՝ իբրև թե Նախիջևան մտած Կարմիր բանակի հետ կապ հաստատելու և օգնություն ստանալու նպատակով: Եվ դարձյալ Հայաստանի համար ճակատագրական նշանակություն ստացած այդ հարցի լուծման գործում իր սև դերը խաղաց Ստալինը: Բանն այն է, որ Շահթախթիի և Սարիղամիշի կապակցությամբ Զիչերինի համառ պնդումներին պատասխանելու համար Օրջոնիկիձեն խնդրել էր Ստալինի կարծիքը, իսկ վերջինս էլ Զիչերինի միջոցով տվել էր հետևյալ պատասխանը. **«Զենք խառնվում, չգիտենք պլանները, հնարավոր չենք համարում խանգարել»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Զիչերինն իր հերթին Ստալինի այդ կարծիքը չիֆրով հաղորդել էր Լեգրանին, որը սակայն տեղ չէր հասել: Ուստի օգոստոսի 28-ին Զիչերինը նորից է հաղորդում Ստալինի կարծիքը՝ այս անգամ արդեն Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրով: Այդ օրերին[3] ուղիղ հեռագրաթելով Զիչերինի և Օրջոնիկիձեի միջև տեղի էր ունեցել հետևյալ խոսակցությունը (մեջբերում ենք ամբողջությամբ).

«Զիչերին. ընկ Օրջոնիկիձե, ուրեմն Դուք չեք առարկում այն բանի

[1] Նույն տեղում:
[2] „Геноцид армян...", стр. 155.
[3] Ամսաթիվը չի ճշտված:

դեմ, որ մենք հայտնենք մեր համաձայնությունը գրավելու նշված տեղերը առանց մեր մասնակցության: Հարցնում եմ նրա համար, որ առաջ դրա դեմ Դուք առարկել եք, բայց Ձեր առարկությունը մեզ չի հասել:

Օրջոնիկիձե. Առաջ և հիմա իմ առարկությունները հանգում էին կոտորածի վախին, որը իհարկե, հիմա էլ բացառված չէ, բայց, նախ ես կարծում եմ, որ Թուրքերը հոխորտում են և ոչինչ չեն գրավի, իսկ երբ գրավեն ու կոտորած սկսվի, մենք կխառնվենք և կդադարեցնենք: Այդպիսով, ես չեմ առարկում:

Զիչերին. ընկ. Օրջոնիկիձե, ինձ անհրաժեշտ է անհապաղ ստանալ Ձեր պատճառաբանությունը Շահթախթիի և Սարիղամիշի վերաբերյալ: Խնդրում եմ հաղորդեք այն անհապաղ:

Օրջոնիկիձե. ընկ. Զիչերին, մի քանի անգամ հաղորդել եմ, ուր է կորել, զարմանում եմ»[1]:

Հեռախոսային այս խոսակցությունից հետո Զիչերինը ստացավ Օրջոնիկիձեի հետևյալ գրությունը. **«Ստեղծված իրադրության պատճառով ես հրաժարվում եմ իմ նախորդ առաջարկությունից՝ գրավել և այս, և այն:** Ըստ իս, **Թուրքերը իրենց ուժերով չեն կարողանալու գրավել, նրանք այնտեղ շատ քիչ ուժ ունեն: Թուրքերի կողմից այդ կետերի գրավումը հայերի համար՝ իհարկե, ընաջնջում է,** բայց քանի որ նրանք ուժեր չունեն, ապա մենք ոչինչ ռիսկի չենք ենթարկում: Խնդրում եմ հայտնել, պահանջվո՞ւմ է ինձնից էլի ինչ-որ բան այդ հարցի վերաբերյալ»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Անհետաքրքիր չէ իմանալ, որ այդ կարևոր խնդրի լուծման հարցում Զիչերինը անհրաժեշտ չէր համարել հարցնել նաև Հայաստանում իր կողմից լիազոր ներկայացուցիչ նշանակված Լեգրանի կարծիքը և վերջինս այդ մասին իմացել էր միայն Օրջոնիկիձեին ուղարկած Զիչերինի հեռագրից: Եվ պատճառը միայն այն չէր, որ կովկասյան գործերում Օրջոնիկիձեն անվիճելի հեղինակություն էր, այլև այն, որ Զիչերինը քաջատեղյակ էր հայ-թուրքական կնճռի հարցում Լեգրանի մոտեցումներին: Բայցևայնպես, քանի որ Լեգրանը բողոքեց Թուրքերի հետ կայացված համաձայնության առթիվ՝ համարելով այն օգոստոսի 10-ին կնքված համաձայնագրի խախտում, ուստի օգոստոսի 22-ին Զիչերինը հարցնում է նաև նրա կարծիքը՝ միաժամանակ փորձելով հիմնավորել, թե Թուրքերի կողմից Շահթախթիի և Սարիղամիշի

[1] „Геноцид армян...", стр. 155-156.
[2] Նույն տեղում, էջ 156:

գրավումը «չէր լինի պայմանագրի խախտում, քանի որ մենք չենք պարտավորվել պաշտպանել այդ տեղերը Թուրքերից»[1]:

Այսպես, Ստալինի ազդեցության տակ Օրջոնիկիձեն հետ վերցրեց Շահթախթին և Սարիղամիշը ոչ թե թուրքական, այլ ռուսական զորքերով գրավելու վերաբերյալ իր առաջարկությունը: Մինչդեռ իրադարձությունների հետագա զարգացման լույսի տակ դժվար չէ եզրակացնել, որ նրա ծրագրի ընդունումը և իրագործումը կլիներ չարիքների փոքրագույնը (գուցեև կանխվեր թուրքական արշավանքը. տարածքային, և որ առավել կարևոր է՝ մարդկային քիչ կորուստներ ունենայինք): Այլ կերպ ասած, ստեղծված պայմաններում, երբ թուրք-քեմալականները և ռուս-բոլշևիկները եղբայրացել էին և ձգտում էին Շահթախթիի վրայով իրար ձեռք սեղմել, այդպիսի պայմաններում թուրքական գազանի գայլային ախորժակին հագուրդ չտալու միակ հնարավոր միջոցը, ըստ երևույթին, Օրջոնիկիձեի առաջարկած տարբերակն էր: Սակայն չի կարող զարմանք չառաջացնել թուրքերի «շատ քիչ ուժեր ունենալու» մասին Օրջոնիկիձեի կարծիքը: Դա առավել քան տարօրինակ է, քանի որ նա քաջ գիտեր, որ թուրքերը Հայաստանի վրա հարձակվել պատրաստվում էին դեռևս գարնանը: Իսկ առանց ուժերի գերազանցություն ստեղծելու, նրանք այդ քայլին չէին գնա:

Օրջոնիկիձեի համաձայնությունը ստանալուց հետո (Կիրովը իր համաձայնության մասին հայտնել էր օգոստոսի 23-ին) Զիչերինը կարող էր կանաչ լույս վառել թուրքերի առաջ: Իսկ Լեգրանի կարծիքը ոչ մեկին չէր հետաքրքրում:

Ահա քաղաքականության անբարոյականության տիպիկ օրինակ. մեկի հետ կնքած պայմանագրով կարող ես ճանաչել նրա իրավունքը այս կամ այն տարածքի վրա, իսկ մյուսի հետ էլ համաձայնել այդ նույն տարածքները գրավելու մասին ու դա չհամարել պայմանագրի խախտում: Մենք, իհարկե, այն կարծիքին չենք, թե Զիչերինը կողմնակից էր թուրքերի ներխուժմանը Հայաստան, դրա ապացույցը նա բազմիցս է տվել: Նա կատարող էր և ոչ վճռող, իսկ վճիռը կայացնում էր Քաղբյուրոն: Կան փաստեր, որ նույնիսկ Շահթախթիի և Սարիղամիշի մասին թուրքերին տված համաձայնությունից հետո էլ Զիչերինը ձգտել է կանխել թուրքական արշավանքը Հայաստան: Օգոստոսի 22-ին Սահակ Տեր-Գաբրիելյանին ուղարկած գրության մեջ, չեչտելով օգոստոսի

[1] **Է. Ա. Զոհրաբյան**, 1920թ., թուրք-հայկական պատերազմը... էջ 141:

10-ի համաձայնագրի պահպանման անհրաժեշտության մասին, նա միաժամանակ ավելացնում է. «Լեգրանը պետք է մեկնի Երևան: Անհրաժեշտ է ամենաեռանդուն կերպով ստանալ տրանզիտ Հայաստանով դեպի Թուրքիա: Ամեն դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիվանագիտական սուրհանդակների իրավունք կորզել, որպեսզի մենք կարողանանք սուրհանդակներ ուղարկել Հայաստան և Հայաստանով՝ Թուրքիա: Նմանապես ձեռք բերեք հեռագրական կապ Անգորայի հետ Քեմալի կառավարության հետ»[1]: Պարզ է, որ Զիչերինը՝ տրանզիտի իրավունք ստանալու միջոցով փորձում էր լուծել Անատոլիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կապի ստեղծման անհրաժեշտության մասին քեմալականների համառ պահանջը և դրանով իսկ կանխել նրանց արշավանքը Հայաստան:

Լեգրանը Երևան մեկնել չէր կարող, քանի դեռ Մոսկվայից չէր վերադարձել Շանթի պատվիրակությունը (Համո Օհանջանյանի կառավարությունը Շանթի պատվիրակությանն էր հանձնարարել Լեգրանի հետ բանակցությունների վարումը): Բայց դատելով Զիչերինի ուղարկած օգոստոսի 24-ի հեռագրից, խիստ անհանգստացել էր Շահթախթիի և Սարիղամիշի վերաբերյալ կայացած համաձայնությունից: «Թուրքերի հարձակումը Շահթախթիի վրա ներկայումս չափազանց անցանկալի է, - գրում է Լեգրանը: - Նկատի առնելով մեր զորքերի ներկայությունը Նախիջևանում, որոնց հետ մեկտեղ գտնվում են նաև որոշ թուրքական զորամասեր, թուրքերի գործողությունը կընկալվի որպես մեզ դաշնակից զորքերի գործողություններ և մենք կամա թե ակամա հարկադրված կլինենք պատասխանատվություն կրել դրա համար: Նման պարագայում ավելի դյուրին կլիներ Շահթախթին գրավել մեր զորամասերով: Սակայն ինչպիսին էլ որ լինեն մեր կողմից ռազմական գործողությունները, համարում եմ անպայման վաղաժամ այնքան ժամանակ, քանի դեռ չի պարզվել Հայաստանի վրայով մեզ ազատ տրանզիտ տրամադրելու Հայաստանի կառավարության համաձայնության հարցը: Մասնավորապես մենք կարող ենք առաջին հերթին **պնդել մեզ կամ թուրքերին** Շահթախթիում նեղուղի երկաթուղու օգտագործման և Նախիջևան- Շահթախթիի հատվածում ազատ տրանզիտի վրա»[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Հեռագրի ընդգծված տողերը ցույց են տալիս, որ Լեգրանը ան-

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 256:
[2] Նույն տեղում, էջ 260:

կեղծորեն փորձում էր կանխել պատերազմը Թուրքիայի և Հայաստանի հանրապետության միջև, որի համար էլ Չիչերինին հուշում էր, թե ինչպես կարելի է թուրքական կեղծ պատճառաբանությունները քողազերծ անել, որովհետև եթե իսկապես թուրքերին հետաքրքրողը Նախիջևանում գտնվող Կարմիր բանակի հետ կապի հաստատումն էր, ապա դա հեշտությամբ կարելի էր իրականացնել Շահթախթից Ալաշկերտի հովիտ մտնող նեղուղի երկաթուղիով, որը կառուցվել էր ռուսների կողմից Առաջին աշխարհամարտի տարիներին: Հեռագրի վերջում Լեգրանը անդրադառնում է նաև Սարիղամիշը գրավելու խնդրին և շեշտում. «...ինչ վերաբերում է Սարիղամիշի գրավմանը, ապա մինչև **Հայաստանի երկաթուղիների մասին հիմնական հարցի լուծումը, Սարիղամիշի գրավումը նշանակություն չի կարող ունենալ**: Թուրքերի հարձակման փաստն իսկ և նրանց կողմից հայկական տարածքների զավթումը, խիստ անբարենպաստ կանդրադառնա մեր ընդհանուր քաղաքականության վրա»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Լեգրանը առաջարկում է օգտագործել ազդեցության բոլոր հնարավորությունները Թուրքերին հանգստացնելու համար:

Հանգստացնել Թուրքերին Չիչերինն այլևս չէր կարող և չփորձեց էլ: Շահթախթին և Սարիղամիշը թուրքական ուժերով գրավելու մասին համաձայնությունը, որով դուռ էր բացվում թուրք-հայկական նոր պատերազմի համար, մնաց ուժի մեջ: Թե ինչպե՞ս և ե՞րբ պետք է այդ համաձայնությունը գործի վերածվեր, որոշելու էր Անկարայի կառավարությունը: Իսկ Մոսկվան արդեն կարող էր հանգիստ սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը ու կովկասյան իր իշխանություններին հրահանգել՝ «խստորեն խուսափել Հայաստանի հետ ամեն մի ռազմական ընդհարումից...: Պայմանագրով հաստատված գծից այն կողմ՝ մասնավորապես Շահթախթիի վրա հետագա առաջխաղացումը անհապաղ կանգնեցնել»[2]:

Ավելին, այդ նույն օրը՝ օգոստոսի 24-ին Մոսկվայում տեղի ունեցավ ռուս-թուրքական պայմանագրի նախագծի նախաստորագրումը, որի առաջին հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր ոչ միայն չճանաչել միջազգային որևէ ակտ, որը չի ճանաչվել Թուրքիայի ազգային մեծ ժողովի կողմից, այլև ընդունում էր, որ Թուրքիա ասելով պետք է հասկանալ այն տարածքները, որոնք մտցված են օսմանյան

[1] Նույն տեղում:

[2] «Коммунист», 23 декабря 1989г.

մեջլիսի կողմից ընդունած «Ազգային ուխտի» գծած սահմանների մեջ: Մինչդեռ «ուխտը» թուրքական մայր հող էր հռչակել և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Կարսի ու Բաթումի մարզերը:

Բանն այն է, որ ձգտելով հարթել հայ-թուրքական կնճիռը, Չիչերինը առաջ էր քաշել ազգագրական սահմանի սկզբունքը (մինչև Առաջին աշխարհամարտը հայկական մեծամասնություն ունեցող տարածքները անցնում են Հայաստանին, իսկ մուսուլմանական մեծամասնությամբ տարածքները՝ Թուրքիային), ինչին չէր համաձայնում Բեքիր Սամի-բեյը և համառորեն առաջ էր քաշում Ռուսաստանի կողմից թուրքական «Ազգային ուխտի» ճանաչումը՝ պատճառաբանելով, թե դա անհրաժեշտ է «ուխտի» միջազգային ճանաչման համար նախադրյալ ստեղծելու նպատակով: Թե որքան անկեղծ էր Բեքիր Սամին իր այդ պատճառաբանության հարցում, երևաց պայմանագրի նախագծի նախաստորագրման հաջորդ օրը՝ օգոստոսի 25-ին, երբ Բեքիր Սամին հայտարարեց, թե «ուխտի» ճանաչումով ռուսական կառավարությունը դրանով իսկ ընդունել է Կարսի և Բաթումի մարզերի անցումը Թուրքիային: Չիչերինի առարկումները արդյունք չտվեցին: Բեքիր Սամին անդրդվելի էր:

Ճանաչելով «Ազգային ուխտը»՝ ռուսները չէին կարող չհասկանալ, որ Թուրքիան սկսելով պատերազմ, չի բավականանա Շահթախթիի ու Սարիղամիշի գրավումով, այլ կձգտի տիրանալ Կարսի մարզին ամբողջությամբ: Եվ տարօրինակն այն է, որ այդ հոդվածի առթիվ որևէ վերապահություն կամ հայտարարություն չի արվել, թե Ռուսաստանը՝ ճանաչելով հանդերձ թուրքական «Ազգային ուխտը», այնուամենայնիվ Կարսի և Բաթումի մարզերի հարցում այլ դիրքորոշում ունի: Ստացվում է անտրամաբանական մի վիճակ. մի կողմից՝ ռուսական կառավարությունը փորձում է կանխել թուրք-հայկական հնարավոր պատերազմը, բայց մյուս կողմից՝ այնպիսի հարցերում է ընդառաջում թուրքերին, որ պատերազմը դառնում է անխուսափելի:

Մեր պատմագիտական գրականության մեջ տիրապետում է այն տեսակետը, որ Մոսկվայի ռուս-թուրքական առաջին կոնֆերանսը ավարտվել է անհաջողությամբ, քանի որ պայմանագիր չի ստորագրվել: Ոչինչ չի ասվում այն մասին, որ այդ կոնֆերանսում թուրքական դիվանագիտությունը լուրջ հաջողություններ է արձանագրել (ռուսական կառավարությունը 1. չի ճանաչում Սևրի պայմանագիրը, 2. ճանաչում է թուրքական «Ազգային ուխտը», 3. թույլ է տալիս գրավելու Շահթախթին և Սարիղամիշը, 4. պարտավորվում է մատակարարել զենք, զինամթերք և այլն): Իսկ որ պայմանագրի ստորագրությունը

հետաձգվեց, քանի որ «ուխտը», ճանաչելուց հետո էլ Զիչերինը չարունակում էր պնդել ազգագրական սահմանի ստեղծման և Բաթումի նավահանգիստը Կովկասին թողնելու անհրաժեշտության վրա, դրանից խնդրի էությունը չի փոխվում: Այդ հարցերի վրա մենք կանգ չենք առնում, քանի որ դա մեր անմիջական խնդիրը չէ, բայցևայնպես ընթերցողին համոզելու համար մի փոքրիկ մեջբերում կատարենք հենց իրենից՝ Զիչերինից: 1920թ. դեկտեմբերի 5-ին Շ. Էլիավային ուղարկած նամակում անդրադառնալով այդ խնդրին, նա գրում է. «Մենք տարաձայն ենք երկու կետում. մենք չենք ընդունում թուրքական սահմանի որոշելը ըստ ազգային ուխտի, որը համարյա վերարտադրում է Բրեստ-Լիտովսկյան սահմանները և մենք պահանջում ենք Թուրքա-Հայաստանի թեկուզ որոշ մասի անկախության սկզբունքային ճանաչում, որը բավարար կլինի Թուրքա-Հայաստանի հայկական ծագումով բնակչության համար»[1]:

Վերադառնալով Շահթախթիի խնդրին, հարկ ենք համարում նշելու, որ դեպի Մակու և այնտեղից Թուրքիա տանող նեղուղի երկաթգծի օգտագործման մասին Մոսկվայից Կովկաս հղած և ոչ մի հեռագրում հիշատակություն չկա: Սակայն արխիվային մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ այն գործարկելու ուղղությամբ Մակվի սարդարի հետ, այնուամենայնիվ որոշ բանակցություններ վարվել են, բայց ոչ պետական մակարդակով: Այդ, ինչպես նաև Մակվի խանության տնտեսական դրության և Մակու քաղաքում մնացած հայերի վիճակի մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է հայտնել «Кавказское слово» թերթի թղթակից Սորոչինսկին, որը Մակվից վերադառնալով Թիֆլիս, սեպտեմբերի 1-ին Երևանում այցելել է Արտգործնախարարություն և ընդունվել ընդհանուր քարտուղարի կողմից: Վերջինս էլ կայացած զրույցի բովանդակությունը սղագրել ու ներկայացրել է արտգործնախարարին: Փաստաթուղթը երկարաշունչ է, ուստի մենք կմեջբերենք միայն այն մասերը, որոնք առնչվում են մեր հետապնդած խնդրին.

– «Ամսուս 24-ին (24/VIII) երբ ես Մակուի սարդարի մոտ էի, Մակու եկան Նախիջևանից 1) 28-րդ կովկասյան առանձին բրիգադի զինվորական կոմիսար Միխ. Միխ. Գերչովիչը (հրեա), 2) Նախիջևանի պարետ Դմ. Ալ. Շտոլը (ռուս), 3) Խալիլ փաշան յուր ադյուտանտով, 4) Թուրքիայում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչության առաջին քարտուղար Ուպման-Անգարսկին (լատիշ), 5) նույն միսսիայի զինվորական կցորդ Բագիրովը (թաթար):

Այս բոլոր անձինք մնացին այստեղ երկու օր, ապա մեկնեցին դեպի Բայազեդ, որտեղից պիտի ուղարկվեին դեպի Անգորա: Մի քանի օրից պիտի ճանապարհվեր և լիազոր ներկայացուցիչ Էլիավան, որը գտնվում է առայժմ Գորիսում[1]: Գնացողները ունեին իրենց հետ աբոզ, որը իբրև թե տանում էր տելեֆոնի ապարատներ, բայց կասկած կա, որ նոքա տանում էին ոսկի: Այդ աբոզը ուղեկցում էին 10 ռուսներ, որոնցից հինգը կանայք, և 15-20 տաճկական զինվորներ և սպաներ:

Այդ երկու օրվա ընթացքում նոքա բանակցություններ էին վարում սարդարի հետ հացի և երկաթուղագծի մասին: Ոչ մի հարցի առթիվ համաձայնության չեկան: Հացի համար սարդարը պահանջում էր ոսկի, արծաթ կամ ապրանք: Բոլշևիկները առաջարկում էին թղթադրամ, այդ պատճառով համաձայնության չեկան: **Երկրորդ հարցի առթիվ սարդարը հայտնեց, որ նա հնարավորություն չունի բանեցնել Մակվա երկաթուղագիծը, որովհետև չունի ոչ մազութ և ոչ էլ տեխնիկական պերսոնալ»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ուշ հանձնարարությամբ էին բանակցում երկաթգծի գործարկման չուրջ, Մոսկվայի՞ թե՞ Բաքվի, հայտնի չէ: Հնարավոր է, որ դա Կովկասի բոլշևիկյան իշխանությունների, կամ էլ թուրքերի նախաձեռնության արդյունք էր: Հայտնի չէ նաև, թե Լեգրանը, որը, ինչպես վերը տեսանք, այդ երկաթգծի գործարկման ջատագովն էր, տեղեկացա՞վ բանակցությունների արդյունքի մասին: Դժվար է նաև ասել, թե սարդարը խսկապե՞ս երկաթգիծը գործարկելու հնարավորություն չուներ, թե՞ մերժման պատճառը վախն էր բոլշևիկների խանություն թափանցելուց, ինչի մասին վկայություն կա վերոհիշյալ փաստաթղթում: «Ինքը՝ սարդարը լավ է ըմբռնում այն մեծ վտանգը, որ նրան սպառնում է բոլշևիկների կողմից, – ասել է Սորոչինսկին: Նա գիտե, որ նրանց Մակվում երևալը նրա մահն է: Սարդարը հավաստիացրել է, որ բոլշևիկները ոչ մի կերպ այդ սահմաններում չեն մտնի Պարսկաստան: Ցույց կտրվի ուժեղ դիմադրություն: Նա իր տրամադրության տակ ունի մոտ տասը հազար ձիավոր զինված մարդ՝ լավ հրացաններով, մեծաքանակ փամփուշտներով և բավական թվով գնդացիրներով»[3]:

---

[1] „Геноцид армян...", стр. 305.

[1] Էլիավան մնացել էր Գորիսում հիվանդանալու պատճառով, իսկ ապաքինվելուց հետո չմեկնեց Թուրքիա, այլ վերադարձավ Բաքու:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 423, թ. 12-13:

[3] Նույն տեղում, թ. 14:

Այս փաստաթղթում մի այլ ուշագրավ վկայություն էլ կա, որը նմանապես ուզում ենք ներկայացնել ընթերցողի ուշադրությանը. «Պ. Սորոչինսկին ունեցել է խոսակցություն Հայաստանի մասին բոլշևիկների և Խալիլ փաշայի հետ: Վերջինս հայտնել է, որ նոքա ոչինչ չունեն հայ ժողովրդի հետ, բայց նոքա պիտի կռվեն դաշնակների դեմ, որոնք Անտանտի գործակալներն են, այն Անտանտի, որի դեմ նոքա կռվում են: Իսկ բոլշևիկները հայտնել են, որ Հայաստանի համար պատրաստվում են նոր պիլյուլներ, որ Նախիջևանում կենտրոնանում են սովետական զորքեր, որոնք պիտի գրավեն Շահթախթին և ապա Շարուրն ու Երևանը»[1]:

Այսպիսին էր Թուրքիա գործուղված խորհրդային պատվիրակության տրամադրվածությունը Հայաստանի հարցում: Պատերազմեցի՞ն խորհրդային զորքերը Հայաստանի դեմ Շահթախթիում և Շարուրում, ինչպիսի՞ ընթացք ունեցան ռազմական գործողություններն այդ շրջաններում, խորհրդայի՞ն թե՞ թուրքական զորքերի կողմից նրանք գրավվեցին, անդրադառնանք հաջորդ գլխում: Իսկ մինչ այդ՝ հակիրճ անդրադառնանք Հայաստանի համար Շարուրի տնտեսական նշանակության հարցին:

* * *

Շարուրի գավառի գրավումը և օգոստորի 10-ի Լեգրան-Ջամալյան համաձայնագրով Հայաստանին ամրակցումը ոչ միայն ռազմաքաղաքական, այլև տնտեսական կարևոր նշանակություն ստացան: Դա նախ Պարսկաստանի հետ առևտրատնտեսական կապերի վերականգնման անհրաժեշտությունն էր և ապա գաղթականության մի մասին Շարուրում վերաբնակեցնելու հնարավորությունը: Եթե հիշենք, որ պարենային սուր ճգնաժամ ապրող հանրապետությունը ողողված էր աշխատանք և մշտական բնակության վայր չունեցող գաղթականներով (այդ թվում և Շարուր-Նախիջևանից), ապա կընդունենք, որ այդ երկու խնդիրներն էլ կառավարության առաջ ծառացած և առաջնահերթ լուծում պահանջող հարցերից էին: Ահա թե ինչու, տիրելով Շարուրին և դրանով իսկ կրկին սահմանակից դառնալով Պարսկաստանի հյուսիսարևմտյան շրջանում գտնվող Մակվի խանությանը, Հայաստանի կառավարությունը իսկույն ևեթ քայլեր ձեռնարկեց ոչ վաղ անցյալի կապերը վերականգնելու ուղղությամբ:

[1] Նույն տեղում, թ. 17:

Նախ ասենք, որ պարսկական չուկան միակն էր, որտեղ կարելի էր հացամթերքների և անասունների գնումներ կատարել և ինչ-որ չափով լրացնել հանրապետության սուղ պաշարները: «Ժողովուրդ» օրաթերթը, կարևորելով այդ իրողությունը, 1920թ. հուլիսի 21-ի համարում գրել է. «Երբ առաջին անգամ անգլիացիների աջակցությամբ կցվեց մեր երկրին Նախիջևանը, կառավարությունը կարծես չկարողացավ գնահատել այդ շրջանի ահագին տնտեսական և ռազմական նշանակությունը մեր պետության համար, չգործադրեց ամեն մի միջոց պահպանելու նրան մեր ձեռքին: Սակայն մի տարվա ընթացքում Պարսկաստանից մեր կտրված լինելը արևի պես պարզեց, թե ինչպես անկախ Հայաստանին դժվար է ապրել՝ չլինելով սահմանակից դրացի և բարեկամ Պարսկաստանին: Այժմ կարծես պարզվել է, որ այդ սահմանակցությունը և Ջուլֆա կայարանը ոչ պակաս կարևոր են մեր հանրապետության համար և նորմալ զարգացման համար, որքան և ելքը դեպի ծով և սեփական նավահանգիստ ունենալը»:

Այս տողերում, անշուշտ առկա է որոշ չափազանցություն, բայց որ ընդհանուր առմամբ Հայաստանի համար պարսկական չուկայի դերն ու նշանակությունը ճիշտ է ներկայացված, դա անտարակուսելի է: Ուղղակի ասվածին պետք է ավելացնել, որ չահագրգռվածությունը փոխադարձ էր, քանի որ պարսից վաճառականները գյուղատնտեսական ապրանքներ արտահանելու ավելի մոտիկ և հարմար չուկա չունեին:

Մակվի խանության և Ատրպատականի նահանգի հետ առևտրատնտեսական կապերի մեջ մտնելու ուղղությամբ առաջին քայլերը ձեռնարկվել էին դեռևս 1919թ. գարնանը, հենց որ Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը Շարուր-Նախիջևանի կառավարումը հանձնեց Հայաստանի Հանրապետությանը: Այն ժամանակ ձեռք էին բերվել որոշ պայմանավորվածություններ[1], որոնք, սակայն, չիրագործվեցին Շարուր-Նախիջևանում ծագած հակահայկական ապստամբության և հանրապետության զորքերի՝ այդ շրջաններից հետ քաշվելու պատճառով, որով և խզվեց կապը Պարսկաստանի հետ: Այժմ, երբ Շարուրն ամբողջովին մաքրվեց թուրք-ադրբեջանական հրոսակախմբերից և միացվեց Հայաստանին, Մակվի խանության հետ ոչ վաղ անցյալի առևտրատնտեսական կապերի վերականգնման հնարավորություն առաջացավ: Շահագրգռվածությունը, ինչպես վերը

[1] Տես **Է. Ա. Զոհրաբյան,** Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները 1920-1922թթ., Եր. 1985, էջ 48-49:

նշեցինք, փոխադարձ էր, և կարճ ժամանակամիջոցում այդ բնագավառում լուրջ հաջողություններ արձանագրվեցին: Ավելացնենք, որ բոլշևիկների՝ Նախիջևան մտնելուց հետո Մակվի սարդարը ավելի բայրացակամ էր դարձել Հայաստանի նկատմամբ: «Кавказское слово» թերթի թղթակից Սորոչինսկին, վերադառնալով Մակվից, սեպտեմբերի 1-ին այցելել էր ՀՀ արտգործնախարարություն և ասել. «Սարդարը խնդրել է հայտնել Հայաստանի կառավարությանը, որ նա մնում է նույնպիսի բարեկամ, ինչպես մինչև այժմ և տալիս է հավաստիացումներ, որ Մակվա կողմից դեպի Հայաստան չի արձակվի և ոչ մի գնդակ»[1]: Հենց այդ բարյացակամությամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ սկսված թուրք-հայկական պատերազմի պայմաններում, երբ Հայաստանը պարենային սուր պակաս էր զգում, կառավարությունը հոկտեմբերի 4-ին Մակու գործուղեց մի պատվիրակություն, որը շուտով (հոկտեմբերի 23-ին) Սարդարի հետ կնքեց պայմանագիր, որով վերջինս պարտավորվում էր 15 օրվա ընթացքում Հայաստանին վաճառել 300.000 փ. ցորեն և 100.000 փ. գարի: Ուշագրավ է, որ Սարդարը պարտավորվում էր առանց Հայաստանի համաձայնության Թուրքերին հաց չվաճառել, իսկ Հայաստանի նկատմամբ ստանձնած պարտավորություններից ազատվում էր միայն այն դեպքում, եթե Մակվի և Խոյի շրջաններում հեղաշրջում կատարվի, կամ էլ հայկական զորքերը հեռանան Շահթախթիից և դրանով իսկ Հայաստանը զրկվի հացամթերքներ ընդունելու հնարավորությունից[2]:

Շարուրի դաշտի արգավանդ հողերը, ինչպես նաև բազմաթիվ լքված գյուղերի առկայությունը, հայ գաղթականների մի մասին այդ շրջանում տեղավորելու և նրանց ֆիզիկական գոյությունն ապահովելու հնարավորություն են տալիս: Վերաբնակեցումն անհրաժեշտ էր նաև շարուրաբնակ հայերի թիվը բազմապատկելու առումով, քանի որ անցյալի փորձը ցույց էր տվել, որ տեղի մահմեդական ազգաբնակչությունը հայերի և Հայաստանի նկատմամբ իր թշնամական վերաբերմունքից չի հրաժարվի: Դա հասկանում էր կառավարությունը, հասկանում էր նաև հասարակությունը: Ահա ինչու դեռևս շարունակվող կռիվների շրջանում այդ հարցը լայնորեն քննարկվում էր մամուլի էջերում: «Թուրք ազգաբնակչության մեծամասնությունը վերջին տարվա ընթացքում այնպիսի անհանդուրժելի ընթացք էր բռնել մեր հանրապետության վերաբերմամբ, որ այժմ նա կարելի չի համարում

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 423, թ. 14:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 3, թ. 3:

մնալ Հայաստանի հպատակ, այլ փախչում է արտասահման, – կարդում ենք «Ժողովուրդ» օրաթերթի 1920թ. հուլիսի 16-ի համարում, – Նման պայմաններում՝ պետական շահերի տեսակետից, կենսական անհրաժեշտություն է բնակեցնել այդ խիստ հարուստ և պտղաբեր գավառները հայ ազգաբնակչությամբ: Կառավարությունը, և մասնավորապես գյուղատնտեսության մինիստրությունը, պիտի մանրամասն ծրագիր մշակեն այս գավառները փոխադրելու հողազուրկ կամ սակավահող հայ գյուղացիությունը Հայաստանի այլ վայրերից կամ արտասահմանից»:

Հասկանալի է, որ Շարուրի բնակեցման հարցում առաջնահերթությունը պետք է տրվեր այն գաղթական բնիկ հայերին, որոնք 1918-1919թթ. նախ օսմանյան զորքերի և ապա թաթարական հրոսակախմբերի կազմակերպած ջարդերի հետևանքով ստիպված լքել էին իրենց բնակավայրերը և հաստատվել Երևանում, Էջմիածնում և Հայաստանի Հանրապետության այլ վայրերում: Ուստի կառավարությունը, տեղական իշխանությունները և հայրենակցական միությունները կոչով դիմում են նրանց՝ առաջարկելով վերադառնալ և հաստատվել հայրենի գյուղերում: Օգոստոսի 4-ին «Նոր աշխատավոր» օրաթերթը հրապարակել էր Գողթանի և Նախիջևանի հայրենակցական միության դիմումը բոլոր գաղթականներին, որով կոչ էր արվում վերադառնալ հայրենիք, շենացնել դատարկ գյուղերը: Իսկ «Ժողովուրդ» օրաթերթի օգոստոսի 5-ի համարում տպագրված Երևանի գավառական ինքնավարության վարչության հայտարարության մեջ ուղղակի ասված էր. «Հայտարարում ենք ի գիտություն Երևանի գավառում ապրող Շարուրի, Նախիջևանի և Գողթանի գաղթականության, որ վերադառնան և բնակություն հաստատեն՝ շարուրցիներն ու նախիջևանցիները՝ Շարուրում, իսկ գողթանցիները՝ Գողթանում»:

Ժամանակի մամուլի էջերում տեղ գտած հաղորդագրություններից նաև պարզ է դառնում, որ կառավարությունը հնարավորինս օժանդակում էր Շարուրում բնակության մեկնողներին՝ տրամադրելով նպաստ, ճանապարհածախս և որոշ դեպքերում՝ նույնիսկ փոխադրամիջոց: Այդ ամենի հետևանքով բավականին աշխույժ շարժում սկսվեց, և Շարուր գնացողների թիվը կարճ ժամանակամիջոցում բազմապատկվեց: Անշուշտ, դրանց մեջ քիչ չէին նաև այնպիսիք, որոնք գնում էին ոչ թե մշտական բնակություն հաստատելու, այլ չհնձված ցորենի արտերին ու լքված գույքին տիրանալու նպատակով: Հենց նրանք, ինչպես նաև կլիմայական պայմաններին չհարմարվողներն ու հատկապես արևմտահայ գաղթականները, շուտով սկսեցին հեռանալ Շարուրից՝

իրենց հետ տանելով այն ամենը, ինչ կարող էին: Բացի այդ, չուտով նաև պարզվեց, որ վերաբնակիչներին Շարուրում պահելու և նրանց համար շատ թե քիչ տանելի պայմաններ ստեղծելու նպատակով կառավարության ձեռնարկած քայլերը բավարար չեն: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ կան Արարատյան նահանգի նահանգապետին ուղարկած Վայոց Ձորի գավառապետ Յապոնի սեպտեմբերի 28-ի զեկուցագրում: Նրանում ասված է, որ «Շարուրը գրավելուց հետո զանազան շրջաններից (այստեղ) շտապեցին մի քանի հազար մարդիկ: Երկար ժամանակ Շարուրում բացակայում էր իշխանությունը և զանազան հիմնարկությունների կողմից տրված իրար հակասող վկայականները ստեղծեցին մի քաոսային դրություն, որից գլխավորապես օգտվում էին ճարպիկները, ուժեղները, սպեկուլյանտները և, ընդհակառակը՝ տուժում չարքաշ աշխատավորությունը և գաղթականությունը, որը զուրկ էր ցորեն ծեծելու հարմարությունից՝ լծկաններ չունենալու պատճառով: Սննդատու կայանների և բժշկական օգնության իսպառ բացակայությունը պարարտ հող ստեղծեցին զանազան հիվանդությունների, գլխավորապես «մալարիա», որը ահագին զոհեր խլեց ժողովրդից: Տիրող դրության հետևանքով սկսվեց արտագաղթը Շարուրից, որը հասավ հսկայական չափերի և մի քանի շաբաթվա ընթացքում դատարկվեց Շարուրը»[1]:

Տեղում մնացել էին միայն նախկին շարուրցիներն ու նախիջևանցիները, որոնք տեղավորվել էին չուրջ 10 գյուղերում: Վտանգ կար, որ սրանք էլ կհեռանան, ուստի վերոհիշյալ զեկուցագրում Յապոնը առաջարկում է իրականացնել միջոցառումների մի ամբողջ շարք (սննդատու կայանների ստեղծում, Շարուրի կենտրոն Բաշ-Նորաշենում 50 մահճակալով հիվանդանոցի հիմնում, երկու կետերում ֆելդշերական կայանների հաստատում, գյուղացիներին քարշող ուժով և գութաններով ապահովում և այլն) տեղում մնացածների գոյությունը և ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար: «Շարուրում բոլոր բնակվողներն անգեն են և ենթակա պատահականությունների, - գրում է Յապոնը: Անհրաժեշտ է տեղացիներից կազմել ինքնապաշտպանական խմբեր: Դրա համար անհրաժեշտ է փութացնել (զենք) ուղարկելու գործը, որը խոստացել է ՆԳՄ-ն: Առաջին հերթին հնարավոր է երեք հարյուր (300) հրացան լավ տեսակի»[2]:

Բայնն այն է, որ թեև ամբողջ Շարուրի գավառակը և Նախիջևանի գավառի մի մասը գրավված էին հայկական զորքերի կողմից և օգոստոսի 10-ի համաձայնագրով անցել էին Հայաստանին, բայցևայնպես ինչպես սահմանների վրա, այնպես էլ գավառում հաճախակի տեղի էին ունենում մահմեդական հրոսակախմբերի ավազակային հարձակումներ, խժդժություններ և այլ կարգի հանցագործություններ, որով սպառնալից վիճակ էր ստեղծվում ազգաբնակչության համար: Վկայաբերենք դրանցից մի քանիսը, որ քաղվածաբար վերցրել ենք Արտգործնախարարության սեպտեմբերյան տեղեկագրի 4-րդ հավելվածից.

«Օգոստոսի 10-ին Շարուրի ուղղությամբ մերոնք մաքրել են Արաքս գետի ձախ ափը Ենգիջա գյուղից արևմուտք՝ թաթարական ավազակներից, որոնք թալան և կողոպուտ էին անում անվերջ: Մենք կորուստ չունենք, թուրքերից սպանված են և վիրավոր 30 հոգի:

...Օգոստոսի 14-ի գիշերը թաթարական խուզարկու խմբերը Դարալագյազի դրունքի մոտ հրացանաձգության են բռնվում մեր պահակների հետ: Նույն գիշերը թաթար ձիավոր խմբերը հրացանաձգություն են սկսում Աղնաբերդ գյուղի չրջանում՝ մեր դիրքերի վրա:

...Օգոստոսի 21-ին 20 հետևակ թաթարներ հրացանաձգության են ենթարկում Շարուրում մեր պահակներին Պայիս գյուղի մոտ և... հրացանային կրակի են մատնում մեր դիրքերը Խենջափ գյուղի հարավային կողմից, կես ժամից հետ են քաչվում:

...Օգոստոսի 29-ին Շարուրում, Դիադինի կողմից 30 թաթար ձիավորներ փորձում են անցնել Արաքս գետը, բայց մեր կրակով հետ են չպրտվում՝ թողնելով 3 դիակ: Նույն օրը Խենջափ գյուղի մոտ թաթարական հետախույզները հրացանաձգության են բռնվում մեր առաջապահների հետ:

...Օգոստոսի 30-ին նույն տեղը 50 հոգի թաթարներ՝ գնդացիրներով զինված, փորձում էին ճեղքել մեր առաջավոր մասերը, բայց չդիմանալով մեր կրակին, նահանջում են Ջահրի գյուղը»[1]:

Ինչպես տեսնում ենք, իրադրությունը Շարուրում իսկապես հանգիստ չէր, և դրա պատճառը չդադարող այն հարձակումներն էին, որ կատարվում էին ռուսական վերահսկողության տակ գտնվող տարածքներից: Քիչ չէին նաև հենց ռուսական զորամասերի կողմից կատարված հարձակումները, ինչի մասին խոսվում է Լեգրանին հասցեագրած Համո Օհանջանյանի սեպտեմբերի 5-ի բողոքի նոտայում: Նրանում ասված է, որ օգոստոսի 10-ի համաձայնագրից հետո հայկական զորքերը ոչ մի անգամ չեն խախտել դեմարկացիոն գիծը, մինչդեռ ռուսական

[1] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 623, թ. 27:*

[2] *Նույն տեղում, թ. 29:*

[1] *ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 607, թ. 38-39:*

զորքերը միմիայն Նախիջևանի շրջանում մի շարք ակտիվ գործողություններ են ձեռնարկել հայկական ուժերի դեմ օգոստոսի 13-ի, 20-ի, 24-ի, 29-ի, 31-ի, սեպտեմբերի 1-ի և 3-ի ընթացքում: Հ. Օհանջանյանը հետագա բարդություններից խուսափելու համար իր կառավարության անունից առաջարկում է Նախիջևանի շրջանում տեղաբաշխված հայկական և ռուսական զորքերի միջև հատուկ չեզոք գոտի ստեղծել: Ըստ որում, առաջարկվում է այսպիսի տարբերակ. Հայկական զորքերը մնում են օգոստոսի 10-ի համաձայնագրով հաստատված գծի վրա, այն է՝ Շահթախթի-Դարալագյազի և Նախիջևանի գավառների նախկին վարչական սահմանը՝ մինչ Զանգեզուրի գավառի նախկին վարչական սահմանի հետ հատվելը: Ռուսական զորքերը զբաղեցնում են Կորգալուղի լեռնանցք-Թազբուչան, Դուզդաղ-Շայթանաբաղ-Թարեչ-Բաղամլու-Ներքին Իրամաչեն-Զիրնել գյուղեր-Ախդարան լեռ գիծը[1]:

Նոտայում հատկապես նշված էր, որ «վերջին ժամանակների իրադարձությունները ցույց տվեցին, որ միմիայն նշված չեզոք գոտու հաստատումով հնարավոր կլինի ապահովել հանգստությունը Նախիջևանի շրջանում»[2]:

Թեև Համո Օհանջանյանը նաև խնդրել էր շտապ տեղեկացնել, թե ռուսական զորքերի հրամանատարությունը ինչպես է վերաբերվում չեզոք գոտի ստեղծելու մասին իր առաջարկին, սակայն Լեգրանից այդպես էլ որևէ պատասխան չստացավ: Համենայն դեպս, ոչ արխիվներում ու փաստաթղթերի ժողովածուներում, ոչ էլ պատմագիտական գրականության մեջ չենք հանդիպել Լեգրանի պատասխանի մասին որևէ վկայություն: Իսկ չպատասխանել՝ նշանակում է համաձայն չլինել արված առաջարկին: Ասենք, սեպտեմբերյան այդ օրերին, երբ Բաքվում և Անկարայում ծրագրվում ու նախապատրաստվում էր մեծ պատերազմ՝ ընդհանուր արշավանք դեպի Հայաստան, իսկ Մոսկվան ձգտում էր լուծել Հայաստանով դեպի Թուրքիա տրանզիտի հարցը, որով կկանխվեր Թուրք-հայկական պատերազմը, Շարուրի սահմաններում տեղի ունեցող մանր ընդհարումները այլևս չէին կարող լուրջ ուշադրության արժանանալ: Սակայն տրանզիտի իրավունք ստանալու միջոցով Թուրք-հայկական պատերազմը կանխելու փորձը հաջողություն չունեցավ: Այդ հարցը կարող էր լուծվել Երևանում Հայաստանի կառավարության հետ Լեգրանի անմիջական բանակցությունների միջոցով: Մինչդեռ վերջինս Երևան ժամանեց ոչ թե օգոստոսին կամ էլ սեպտեմբերին, այլ միայն հոկտեմբերի 11-ին, երբ պատերազմը վաղուց սկսված էր:

[1] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993թ., N 1-2, էջ 296-297:

[2] Նույն տեղում, թ. 297:

* * *

Ի՞նչ հետևություններ կարելի է անել այս գլխի շարադրանքից.

1. Կովկասում գործող բոլշևիկյան ղեկավար գործիչների շարքում Բ. Լեգրանը միակն էր, որ հաստատապես կանգնած էր Շարուր-Նախիջևանը Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու տեսակետի վրա: Այդ են վկայում ոչ միայն նրա բազմաթիվ հայտարարությունները, այլև օգոստոսի 10-ի համաձայնագիրը, որով Շարուրից բացի Հայաստանին էր հանձնվում նաև Շահթախթի-Զուլֆա երկաթուղու շահագործման իրավունքը: Մի հանգամանք, որն առաջ բերեց ոչ միայն Բաքվի և Անկարայի, այլ նաև Մոսկվայի դժգոհությունը:

2. Կովկասում գործող գլխավոր կոմունիստը՝ Գ. Օրջոնիկիձեն, թեև տեսնում ու հասկանում էր Ադրբեջանի ղեկավարության մոտ հակահայկական ազգայնական տրամադրությունների առկայությունը, բայց և այնպես գործնականում պաշտպանում էր Նարիմանովի խմբի շահերը: Առաջ քաշելով Ղարաբաղը և Զանգեզուրը՝ Ադրբեջանին, իսկ Շարուր-Նախիջևանը՝ Հայաստանին տարբերակը, միաժամանակ պահանջում էր ռուսական զորքերով օկուպացնել Շարուր-Նախիջևանը՝ Անատոլիայի հետ կապի հաստատման և ազգամիջյան ընդհարումները կանխելու պատրվակով:

3. Ադրբեջանի ղեկավարությունը՝ հանձին Ն. Նարիմանովի և նրա խմբի, Հայաստանի նկատմամբ վարում էր նույն թշնամական, զավթողական քաղաքականությունը, ինչ և մուսավաթական կառավարությունը: Բոլոր վիճելի տարածքները համարելով իրենցը՝ Բաքվի ղեկավարները օգտագործում էին ռուսական զորքերով օկուպացված շրջաններում ազատորեն գործելու հնարավորությունները (քարոզչություն, կաշառք, սպառնալիք և այլն) այդ տարածքները Ադրբեջանին ամրակցելու համար և խուսափում հայ-ադրբեջանական կոնֆերանս գումարելու Հայաստանի կառավարության առաջարկությունից:

4. 1920թ. հուլիս-օգոստոսին Հայաստանի Հանրապետության արևելյան (Ղազախ, Շամշադին, Զանգեզուր) և արևմտյան (Օլթի, Մերդենեկ) սահմաններում ստեղծված պատերազմական բարդ իրադրության պայմաններում, երբ հայկական ուժերը ուժասպառ էին լինում անհավասար մարտերում, իսկ 11-րդ բանակի հրամանատարությունը սպառնում էր լայնամասշտաբ հարձակմամբ, Լեգրանի հետ բանակցություններ սկսելը և հաշտության համաձայնագրի ստորագրումը, հրամայական անհրաժեշտություն էր:

5. Լեգրան-Ջամալյան համաձայնագիրը, ըստ էության, կոմպրոմիս էր, խելամիտ կոմպրոմիս և դիվանագիտական հաջողություն, որով վերջ էր տրվում պատերազմին: Հայաստանը՝ համաձայնելով Զանգե-

զուրի և Նախիջևանի ժամանակավոր օկուպացիային (մինչև այդ գավառների ճակատագրի վերջնական լուծումը առաջիկայում կնքվելիք ռուս-հայկական պայմանագրով), փոխարենը ստանում էր Շարուրի գավառակը և Շահթախթի-Ջուլֆա երկաթուղու չահագործման իրավունքը ու դրանով իսկ լուծում կենսական նշանակության կարևորագույն հարց՝ Իրանի հետ առևտրատնտեսական կապերի վերականգնման հնարավորություն:

6. Օգոստոսի 10-ի համաձայնագրից դժգոհ մնացին Հայաստանի թե՛ «դաշնակիցները»՝ Անգլիան և Ֆրանսիան, թե՛ թշնամիները՝ Թուրքիան և Ադրբեջանը:

Ռուսաստանի դեմ փաստական պատերազմի մեջ գտնվող փոքրիկ և ուժասպառ Հայաստանին որևէ իրական օգնություն ցույց չտված Անգլիայի և Ֆրանսիայի անդրկովկասյան ներկայացուցիչների շտապ ժամանումը Երևան, սպառնալից հայտարարությունները և Ռուսաստանի դեմ պատերազմը շարունակելու պահանջը, ակնհայտ դարձրեց, որ Հայաստանը նրանց հետաքրքրում է միայն որպես հակառուսական ճակատ և ոչ ավելի: Այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը իր քաղաքական կողմնորոշումը չփոխեց: Վարչապետ Հ. Օհանջանյանը հավաստիացրեց «դաշնակիցներին», որ կնքված համաձայնագիրը միայն ժամանակավոր զինադադար է և ուրիշ ոչինչ:

Համաձայնագրի ստորագրման կապակցությամբ Բաքվում և Անկարայում բարձրացված աղմուկն ու բողոքը, Մոսկվայում գտնվող նրանց ներկայացուցիչների (Բ.Շահթախթինսկի, Բեքիր Սամի բեյ) դիմումները Լենինին անհետևանք չմնացին: Նախիջևանում գտնվող Կարմիր բանակի հետ կապի հաստատման նպատակով թուրքական զորքերի կողմից Սարիղամիշը և Շահթախթին գրավելու վերաբերյալ Մոսկվայի համաձայնությունը, ինչպես նաև թուրքական «Ազգային ուխտի» ճանաչումը, դուռ էին բացում Հայաստանի վրա Թուրքիայի ավազակային հարձակման համար:

7. Շարուրի գավառակի միացումը Հայաստանի Հանրապետությանը ռազմաքաղաքականից զատ ունեցավ նաև տնտեսական կարևոր նշանակություն, քանի որ դա հնարավորություն տվեց. ա) Շարուր-Նախիջևանի գաղթականության մի մասին վերաբնակեցնել այդ շրջանում և դրանով իսկ ինչ-որ չափով թեթևացնել կառավարության ուսերին ծանրացած գաղթականական ծանր բեռը, բ) վերականգնել առևտրատնտեսական կապերը Իրանի հյուսիս-արևմտյան շրջանների հետ և Մակվի խանության հետ կնքել առևտրական նպաստավոր պայմանագիր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Իրադրությունը Շարուրի ճակատում Թուրք-հայկական պատերազմի շրջանում: Նախիջևանյան հիմնահարցը Ալեքսանդրապոլի կոնֆերանսում

Մոսկվայի նոր դիրքորոշումը վիճելի տարածքների և դեպի Թուրքիա տրանզիտի հարցում Հայաստանի դեմ քեմալականների պատերազմական նախապատրաստության շրջանում;

Իրադրությունը Շարուրի ճակատում Թուրք-հայկական պատերազմի առաջին ամիսներին (սեպտեմբեր-հոկտեմբեր): Շահթախթի-Ջուլֆա երկաթուղագծի գրավումը Նախիջևանի թուրքական զորամասի կողմից:

Վիճելի տարածքների հարցը Լ. Շանթի և Բ. Լեգրանի պատվիրակությունների Երևանյան բանակցություններում: Հայ-ռուսական պայմանագրի նախագծի մերժումը Ադրբեջանի ղեկավարության և Ստալինի կողմից: Չիչերինի վերաբերմունքը:

Ռազմական գործողությունները Շարուրի ճակատում պատերազմի ավարտական փուլում: Հայկական զորամասի համառ դիմադրությունը և հարկադրական նահանջը Շարուրից:

Տարածքային սահմանագծման հարցերը Ալեքսանդրապոլի կոնֆերանսում: Թուրքական դիվանագիտության հեռահար նպատակները. Սևրի պայմանագիրը չեղյալ հայտարարելու և հայկական զորամիավորումները Շարուրի հարակից շրջաններից հետ քաշելու Կարաբեքիրի պահանջը:

Տարածքային սահմանագծման Խատիսյանի պատվիրակության կազմած քարտեզը: Թուրքական հակաառաջարկները. Արփաչայը և Արաքսը սահմանագիծ:

Հայաստանի խորհրդայնացման խնդիրը և թուրքական դիվանագիտությունը, Շարուր-Նախիջևանի նկատմամբ հովանավորության պահանջը:

Վրացյանի կառավարության դիրքորոշումը Հայաստանի խորհրդայնացման և թուրքական պայմանագրի ստորա-

գրման հարցում: Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման առեղծվածը: Շարուր-Նախիջևանն ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի:

Խորհրդահայ պատմագիտական գրականության մեջ վաղուց ձևավորված կարծիք կա, ըստ որի՝ Բ. Լեգրանի պատվիրակության Երևան ժամանելու ուշացման հարցում մեղավոր է բացառապես Համո Օհանջանյանի կառավարությունը, որ եթե բանակցություններն ավելի շուտ սկսվեին, պայմանագիր ստորագրվեր, կխուսափեինք այդ կորստաբեր պատերազմից: Մինչդեռ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ բանակցությունների ուշացման հարցում «մեղավորության» իր բաժինն ունի նաև Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը: Պարզվում է, որ եթե հուլիս-օգոստոսին Հայաստանի կառավարությունն էր հետաձգում Լեգրանի ժամանումը Երևան՝ այն էլ բավականին հիմնավոր պատճառաբանությամբ, ապա սեպտեմբերին արդեն Ռուսաստանի: Ինչո՞ւ, փորձենք պարզել:

Դեռևս օգոստոսի 22-ին Զիչերինը Ս. Տեր-Գաբրիելյանին հանձնարարել էր հաղորդել Լեգրանին, որ պետք է շտապ մեկնել Երևան՝ Հայաստանի կառավարության հետ լուծելու դեպի Թուրքիա ազատ տրանզիտի իրավունք ստանալու և Անկարայի կառավարության հետ հեռախոսային ուղիղ կապ ստեղծելու խնդիրը: Մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 30-ին, Լեգրանը պատվիրակության քարտուղար Իստոմինին գործուղում է Երևան՝ պատվիրակության Երևան ժամանելու հարցը կառավարության հետ համաձայնեցնելու և անհրաժեշտ պայմաններ նախապատրաստելու համար: Սակայն Հայաստանի կառավարությունը չի շտապում լուծել այդ հարցը՝ պատճառաբանելով, որ Շանթի պատվիրակությունը դեռ չի վերադարձել, և բացի այդ, 50 հոգուց բաղկացած պատվիրակության համար Երևանում համապատասխան չենք չկա: Այս ամենի մասին հայտնելով Զիչերինին՝ Լեգրանը սեպտեմբերի 15-ին մի ընդարձակ գրություն է ուղարկում Մոսկվա, որում տեղեկացնում է, որ ինքը վերջին օրերին Հայաստանի կառավարությանը վճռական հարցում է արել, թե կարո՞ղ է մոտ օրերը պատվիրակության համար Երևանում անհրաժեշտ չենք տրամադրել, թե ոչ, հակառակ դեպքում՝ առաջարկելով բանակցությունները փոխադրել Ռուսաստան:

Լեգրանը վստահ էր, որ այս անգամ Հայաստանի կառավարությունը դրական պատասխան կտա, և նաև գտնում էր, որ տրանզիտի խնդիրը Դաշնակցություն կուսակցության շարքերում պառակտում կմտցնի: Թե ինչո՞ւ, նա չի ասում: Մենք էլ դրան չենք անդրադառնում, քանի որ այն դուրս է մեր թեմայի շրջանակներից: Այլ է տրանզիտի իրականացման հնարավոր ուղիների հարցը, որն անմիջական կապ ունի մեր թեմայի հետ և որի մասին խոսվում է այդ գրության մեջ: «Հայաստանի տարածքում երկու ուղի կա դեպի Թուրքիա, - գրում է Լեգրանը,— 1) Սարիղամիշ - Էրզրում և 2) Նախիջևան - Շահթախթի - Մակու - Բայազետ - Ղարաքիլիս[1] - Էրզրում: Առաջինը, որ ուղիղ կապ է հանդիսանում Անատոլիայի և անմիջականորեն՝ Անգորայի հետ, Հայաստանի համար պակաս վտանգավոր է, քանի որ պաշտպանված է բնական արգելքներով և Կարս ամրոցով: Երկրորդ ուղին գնում է Հայաստանի հարավային սահմանի երկայնքով և Նախիջևանի կողմից ուղիղ մուտք է բացում դեպի Հայաստան՝ Երևանի ուղղությամբ Արաքսի հովտով»[2]:

Անատոլիայի հետ ուղիղ կապի հաստատման տեսակետից այս երկրորդ ուղին Լեգրանը օգտակար չի համարում, քանի որ շրջանց ճանապարհով այն կրկին դուրս է բերում Էրզրումի տրակտը, ընդ որում՝ որոշ հատվածում նեղուղի երկաթգծի գոյությունը վիճակը առանձնապես չի փոխում: Դրա փոխարեն՝ ըստ Լեգրանի. «Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան մասում և Հայաստանի դեմ ինքնուրույն օպերացիաների համար այդ ուղղությունը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ: Հավասարապես Նախիջևանից ճանապարհ է բացվում դեպի Պարսկաստան՝ Թավրիզ»[3]: Ուստի առաջարկում է որոշել այն քաղաքական նպատակները, որ պետք է հետապնդել հաղորդակցության ուղիների վերաբերյալ Հայաստանին ներկայացվելիք պահանջների կապակցությամբ:

«Եթե Մոսկվան նպատակ կդնի ինքնուրույն օպերացիաներ զարգացնել մեզ մոտիկ Թուրքիայում և Պարսկաստանում, - շարունակում է Լեգրանը, - ապա տարածքային հարցերի լուծումը հարկ կլինի երկարաձգել՝ Նախիջևանի հանգույցը մեր տիրապետության տակ պահելու համար և մի շարք քայլեր ձեռնարկել՝ տիրանալու Շահթախթիի հանգույցին և նեղուղի երկաթգծին: Այդ դեպքում, պարզ միամտություն կլիներ հուսալ, թե Հայաստանը կհամաձայնի մեզ տրանզիտ տրամադ-

[1] Գտնվում է Արևմտյան Հայաստանի տարածքում, Մեծ Ղարաքլիսից (այժմ՝ Վանաձոր) տարբերելու համար անվանում էին նաև Փոքր Ղարաքլիս:

[2] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի... ժողովածու», էջ 279:

[3] Նույն տեղում, էջ 280:

ել Կարս-Սարիղամիշ գծով: Դա ստիպված կլինենք հետաձգել մինչև Հայաստանի խորհրդայնացումը:

Եթե խնդիրը քեմալական կառավարության հետ ուղիղ կապի հաստատումն է, նրան անհրաժեշտ պաշարներ մատակարարելը, ինձ թվում է, կարելի է սահմանափակվել Սարիղամիշի ուղղությունով, առավել ևս, որ Կովկասում մեր ուժերի ռեալ հաշվարկի դեպքում Թավրիզի և Բայազետի ուղղությունների իրական օգտագործման հույս չենք կարող ունենալ:

Այդ դեպքում հնարավոր կլիներ մի քանի տարածքային զիջումների միջոցով Հայաստանի հետ համաձայնության գալ և լուծել տրանզիտի հարցը խաղաղ ճանապարհով»[1]:

Ինչպես տեսնում ենք, Լեգրանը նախկինի պես խնդրի խաղաղ լուծման և Ադրբեջանի հետ վիճելի համարվող որոշ տարածքներ Հայաստանին զիջելու ջատագով էր: Իսկ թե ինչ տարածքներ նկատի ուներ նա, դժվար չէ գուշակել, թեև կոնկրետ այդ գրության մեջ ոչինչ նշված չէ: Խոսքը Զանգեզուրի և Նախիջևանի մասին կարող էր լինել: Վերջում Լեգրանը հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար խնդրում է ցուցումներ տալ այդ հարցի մասին և ավելացնում. «...վերջին ժամանակներս հայկական կառավարությունը որոշել է ձեռնարկել Շահթախթի-Ջուլֆա երկաթգծային տեղամասի շահագործումը: Երկրում վառելիքի բացակայության պատճառով, գործը, հավանաբար, կսահմանափակվի նախապատրաստական աշխատանքներով, թեև բացառված չէ, որ կառավարությունը այդտեղ քարածուխ հասցնի, որի արդյունահանումը Օլթիի շրջանում վերջերս է սկսվել»[2]:

Շահթախթի-Ջուլֆա երկաթգծի շահագործման վերաբերյալ Հայաստանի կառավարության մտադրության մասին Լեգրանն իմացել էր Համո Օհանջանյանի սեպտեմբերի 6-ի հեռագրից, որում վերջինս, հայտնելով իր կառավարության այդ մտադրության մասին, միաժամանակ խնդրել էր օգոստոսի 10-ի համաձայնագրից բխող համապատասխան ցուցում տալ տեղի իշխանություններին և Նախիջևանի տարածքում տեղաբաշխված ռուսական զորամասերին՝ արգելքներ չհարուցել Հայաստանի երկաթուղային վարչության աշխատանքներին[3]:

Լեգրանը Հ. Օհանջանյանի այս հեռագրին չէր պատասխանել, այլ, ինչպես վերը տեսանք, բավարարվել էր այդ խնդրի մասին իր կառավարությանը տեղեկացնելով: Նա արդեն գիտեր, որ Օրջոնիկիձեն ևս դեմ է թույլատրելու Հայաստանին շահագործել Շահթախթի-Ջուլֆա երկաթուղագիծը: Նախորդ օրը՝ սեպտեմբերի 14-ին նա Բաքվից ստացել էր 11-րդ բանակի հրամանատարի հեռագիրը, որում ասված էր, թե Բաքվում գտնվելու ժամանակ Օրջոնիկիձեն ասել է, թե «համաձայնագրի երկաթուղագծի մասին կետը կարելի է չկատարել», որ ռազմական տեսակետից անթույլատրելի է հայկական զորամասերի հայտնվելը Շահթախթիից արևելք՝ հատկապես նկատի առնելով այնտեղ թուրքական զորաջոկատների առկայությունը[1]: Սա ակնհայտորեն անբավարար պատճառաբանություն էր, քանի որ երկաթուղագծի շահագործումը իրականացնում են երկաթուղային վարչության աշխատակիցները և ոչ զորամասերը: Խոսելով երկաթգծի գործարկման նպատակով հայկական զորամասերի Շահթախթիից արևելք հայտնվելու և թուրքական զորաջոկատների հետ ընդհարման վտանգի մասին՝ 11-րդ բանակի հրամանատարությունը դիտավորյալ խտացնում էր գույները: Լեգրանը դա չնկատել չէր կարող և արտահայտելով իր դժգոհությունը, 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհրդին ուղարկած պատասխան հեռագրում նա գրում է. «Զիչերինի կողմից ինձ տրված հրահանգների համաձայն Հայաստանի հետ օգոստոսի 10-ի համաձայնագիրը ենթակա է պահպանման նրա բոլոր մասերով...: Եթե Հայաստանի երկաթուղային վարչության գործակալների հետ Նախիջևանի թուրքական զորամասերի թշնամական ընդհարման վտանգ գոյություն ունի, Ռազմհեղխորհրդի պարտականությունն է ներգործող միջոցներ ձեռնարկել այդպիսի հնարավորությունը կանխելու համար: Հույժ կարևոր է, որ Նախիջևանը ամուր գրավված լինի մեր կարմիր զորամասերով: Ադրբեջանի սահմանների վրա մեր կողմից օգոստոսի պայմանագրի պահպանման ամբողջ պատասխանատվությունն ընկած է 11-ի Ռազմհեղխորհրդի վրա և ոչ թուրքական զորամասերի պետերի»[2]:

Ի՞նչ ազդեցություն ունեցավ զինվորականների վրա Լեգրանի այս բավականին կոշտ պատասխանը: Միայն այն, որ հարցի լուծումը փոխադրվեց Մոսկվա: Ինչ վերաբերում է Շահթախթի-Ջուլֆա երկաթուղագիծը գործարկելուն, ապա Լեգրանի այն ենթադրությունը, որ Հայաստանի կառավարությունը չի կարողանա գործարկել Երևան-Շահթախթի-Ջուլֆա երկաթուղագիծը, ճիշտ դուրս եկավ, բայց

[1] *Նույն տեղում:*
[2] *Նույն տեղում:*
[3] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 191, թ. 6:*

[1] *Տե՛ս „Геноцид армян...", стр. 165.*
[2] *Նույն տեղում, էջ 168:*

պատճառը ոչ թե վառելիքի բացակայությունն էր (Հայաստանում չոգեքարշերը հիմնականում աշխատում էին Սարիղամիշի անտառների փայտով), այլ սկսված Թուրք-հայկական պատերազմը: Նա չէր սխալվել նաև իրեն վիգա տալու հարցում: Սեպտեմբերի 14-ին Շանթի պատվիրակությունը վերադարձավ Երևան, իսկ 19-ին Հ. Օհանջանյանն իր կառավարության անունից Լեգրանին հրավիրում է Երևան՝ Մոսկվայում ընդհատված բանակցությունները վերսկսելու և հաշտության պայմանագիր կնքելու նպատակով: Վերջինս էլ՝ ոգևորված մոտ օրերը բանակցությունները սկսելու հնարավորությամբ, սեպտեմբերի 23-ին ընդարձակ հեռագրով դիմում է Զիչերինին և Լենինին, տեղեկացնում, որ Վլադիկավկազից Ս. Տեր-Գաբրիելյանի վերադառնալուն պես մեկնելու են Երևան, խնդրում վերջնական կարծիք հայտնել հետևյալ երեք հարցերի վերաբերյալ (ներկայացնում ենք որոշ կրճատումներով).

***«Առաջին** – Արդյո՞ք ուժի մեջ է Զիչերինի կողմից ինձ հաղորդած ԿԿ-ի հրահանգը՝ դիվանագիտական ճանապարհով ստանալու Հայաստանի համաձայնությունը դեպի Թուրքիա մեզ ազատ տրանզիտ տրամադրելու և այդ կապակցությամբ մեր կնքած 10/VIII համաձայնագրի անվերապահ պարտադրականության մասին: Ռազմհեղխորհուրդը նորից համառ կերպով հարց է հարուցում նշված պայմանագրի պահպանման անցանկալիության մասին՝ այս անգամ Շահթախթի-Ջուլֆա տեղամասի չահագործումը Հայաստանի երկաթուղային վարչությանը թույլատրելու առումով: ...Անհրաժեշտ է վճռական քայլեր ձեռնարկել, որպեսզի բանակային հրամանատարությունը հրաժարվի Հայաստանի նկատմամբ ինքնուրույն քաղաքականություն վարելուց, կամ էլ մեզ ազատել մեր վրա դրած հանձնարարությունից:*

***Երկրորդ** – Պե՞տք է մենք անպայման ձգտենք ստանալ երկու ուղիներն էլ՝ Սարիղամիշյան և Նախիջևան-Շահթախթի-Բայազեդյան: Կիրովի հետ ուղարկած իմ զեկուցագրում ես ցույց եմ տվել, թե որքան պրոբլեմատիկ է երկրորդ ուղու վերաբերյալ Հայաստանի հետ համաձայնության հաշվարկը և որքան այդ երկրորդ ուղին մեզ քիչ է տալիս՝ Անատոլիայի հետ ուղիղ կապի իմաստով: **Ադրբեջանի և Ռազմհեղխորհրդի համառ ձգտումը՝ տիրանալու այդ ուղուն, բացատրվում է ոչ այլ ինչով, քան ձգտումով՝ ամուր պահել մեր գրաված Զանգեզուրի և Նախիջևանի վիճելի մարզերը և հասնել նրանց միացմանը Ադրբեջանին:** Դրա հետ մեկտեղ այդ քաղաքականությունը մեզ տանելու է դեպի արկածախնդրական ձեռնարկումներ Թավրիզի և Բայազեդի ուղղություններով: Կարծում եմ, որ մեր անմիջական նպատակների տեսակետից՝ Հայաստանի միջոցով երկաթուղային ուղիղ կապի հաստատում Էրզրումի և այնուհետև Անգորայի հետ, մենք կարող էինք սահմանափակվել միայն Սարիղամիշի ուղիով:*

***Երրորդ** – Հայաստանին ի՞նչ տարածքային զիջումների ենք մենք պատրաստ՝ մեզ տրանզիտ տրամադրելու պայմանով: **Կարծում եմ չպետք է վախենալ Հայաստանին հանձնելու Զանգեզուրը և Նախիջևանը:** Նախ, այդ մարզերը մեզ պետք կլինեին միայն որպես ելման կետեր մերձավոր Թուրքիայում և Թավրիզի ուղղությամբ ինքնուրույն օպերացիաների համար, որը, կրկնում եմ, Ադրբեջանում մեր ռազմական և խորհրդային ուժերի դրության պայմաններում, մաքուր ուտոպիա է: Երկրորդ, **Զանգեզուրը իսկապես հայկական մարզ է, որտեղ մեր իշխանությունը ներկա պահին բնակչությանը թշնամի օկուպացիայի բնույթ է կրում,** որը հատկապես դրսևորվեց Գորիսի դեպքերի ժամանակ: Երրորդ, չի կարելի հաշվի նստել Ադրբեջանի տարածքային հավակնությունների հետ, քանի որ եթե ոչինչ չզիջվի Հայաստանին, ապա պետք չէ սպասել զիջում նրա կողմից տրանզիտի հարցում: Տարածքային հարցում օբյեկտիվ քաղաքական հաշվարկներով հիմնավորված՝ Մոսկվայի ամեն մի որոշում, անկասկած ընդունելի կլինի Ադրբեջանի համար: Ինչ վերաբերում է Ղարաբաղին, կարելի է պնդել նրա միացման վրա Ադրբեջանին»*[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Վերջում Լեգրանն ավելացնում է, որ Մոսկվայի կողմից իր առաջ քաշած դրույթների ընդունման դեպքում միայն կարելի է հուսալ, որ հնարավոր կլինի Հայաստանի հետ խաղաղ համաձայնությամբ ցանկալի արդյունքի հասնել ու խնդրում սպառիչ պատասխան տալ իր առաջադրած բոլոր երեք հարցերին:

Թվում էր, թե բոլոր արգելքները հաղթահարված են, և այժմ արդեն ոչինչ չի կարող խանգարել Լեգրանին չտապ մեկնելու Երևան, ինչին նա համառորեն ձգտում էր այդքան երկար ժամանակ: Բայց ո՛չ, չուտով պարզվեց, որ Զիչերինին չէր ոգևորել բանակցությունները վերսկսելու Հայաստանի կառավարության պատրաստակամությունը: Լեգրանի և Զիչերինի միջև հեռագրերի փոխանակությունից պարզ է դառնում, որ Հայաստանի հետ պայմանագրի հարցը Մոսկվային հիմա առանձնապես չի հետաքրքրում: Նա նաև չի հավատում, թե Երևանը անշեղորեն կիրագործի կնքված պայմանագիրը կամ ընդհանրապես պայմանագիր կկնքի: Եվ որ առավել տարօրինակ է, Մոսկվան այլևս

[1] *Նույն տեղում, էջ 174:*

չէր ուզում զիջումներ անել տարածքային հարցում, մասնավորապես Զանգեզուրի և Նախիջևանի խնդրում, և գտնում էր, որ այդ շրջանները առայժմ չպետք է հանձնել Հայաստանին: Մինչդեռ առանց դրա, առանց այդ երկու կարևոր գավառները ստանալու, Օհանջանյանի կառավարությունը պայմանագրի մասին լսել անգամ չէր ցանկանա: Դա գաղտնիք չէր ո՛չ Լեգրանի և ո՛չ էլ Մոսկվայի համար: Ուրեմն ի՞նչն էր պատճառը, ինչո՞ւ Մոսկվան հանկարծ փոխեց իր դիրքորոշումը Հայաստանի հետ հաշտության պայմանագրի կնքման հարցում, մի բան, որ նախատեսված էր օգոստոսի 10-ի համաձայնագրով: Բոլոր փաստերը վկայում են, որ միակ պատճառը սեպտեմբերին ուրվագծվող Թուրք-հայկական պատերազմն էր, որ նախապատրաստում էր Անկարան և որի մասին քաջատեղյակ էին Մոսկվայում:

«Իմպերիալիստական Հայաստանը» ոչնչացնելու առաջին բացահայտ ու հրապարակային կոչերը հնչեցին սեպտեմբերի առաջին օրերին Արևելքի ժողովուրդների Բաքվի համագումարում (սեպտեմբերի 1-7): Տասն օր անց՝ սեպտեմբերի 17-ին, համագումարի կողմից ստեղծված «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողության խորհրդի» նախագահության (Օրջոնիկիձե, Նարիմանով, Ստասովա և այլն) ընդունած հատուկ որոշման մեջ երկար-բարակ դատողություններ են արվում Արևելքում (հատկապես իսլամի աշխարհում)՝ հեղափոխական շարժումների ծավալման գործում Թուրքիայի խաղացած դերի, Հայաստանի կողմից այդ շարժումներին և Ադրբեջանին սպառնացող վտանգի մասին ու Թուրքիայի հետ միասին Հայաստանի վրա գրոհելու որոշում ընդունում[1]: Այդ փաստաթուղթը ընթերցողի վրա թողնում է այն տպավորությունը, որ Արևելքի ժողովուրդների ճակատագիրը կախված է այն բանից, թե որքան շուտ կջախջախվի «իմպերիալիստական Հայաստանը», որն իբր Անգլիայի օգնությամբ և Իրանի ու Վրաստանի հետ դաշնակցած, պատրաստվում է հարձակվել Խորհրդային Ադրբեջանի վրա: Այդ է պատճառը, որ այն չտապ ուղարկվել էր Երրորդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտե, ՌԿ(բ)Կ Կենտկոմ և ՌԽՖՍՀ արտգործժողկոմատ: Հենց այդ օրերին էլ Անկարան, որի ռազմական նախապատրաստությունները վաղուց էին ավարտվել, Կարմիր բանակին համատեղ Հայաստան արշավելու առաջարկ էր արել: Ճիշտ է, Մոսկվան դիվանագիտորեն խուսափել էր համատեղ արշավանքի գաղափարից (չէր ուզում աշխարհի աչքին ագրեսոր երևալ), քեմալականներին էլ այդ քայլից հետ պահելու մի թույլ փորձ էր արել՝ հանձնարարելով Չիչերինին հեռագրել Լեգրանին (սեպտեմբերի 17-ին), թե «Կարաբեքիրի առաջարկությունները ներկա պահին անժամանակ են, իրադրությունը չի նպաստում, թող նա ներկայումս ձեռնպահ մնա այդպիսի գործողություններից»[1]: Նույնիսկ հայտնի չէ, թե Լեգրանը Մոսկվայի այդ կարծիքը հաղորդե՞լ է Անկարային, թե՞ ոչ (Անկարայի հետ հեռագրական ուղիղ կապ չկար): Անգամ եթե հաղորդել է, միևնույն է, ոչ մի նշանակություն այն չի ունեցել. Վրաստանի բարյացակամ չեզոքության մասին հավաստիացումներ ստանալուց հետո՝ Անկարան որոշեց գործի անցնել: Չիչերինի վերոհիշյալ հեռագրից 6-7 օր անց, սեպտեմբերի 23-ից լույս 24-ի գիշերը Կարաբեքիրի գլխավորած զորամասերը անցան ընդհանուր հարձակման[2] (սահմանային ընդհարումներ և ոչ մեծ մասշտաբի ռազմական գործողություններ մղվում էին սկսած հունիս ամսից):

Մեր պատմագիտական գրականության մեջ տարածված տեսակետների շարքում է նաև այն, թե իբր Մոսկվան անտեղյակ էր Անկարայի կողմից պատերազմի նախապատրաստությանը, որ սկսված արշավանքի մասին իմացել է միմիայն հոկտեմբերի սկզբին և այլն: Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ Մոսկվայում լավ էլ գիտեին նախապատրաստվող պատերազմի մասին և եթե ինչ-որ բան չգիտեին, ապա դա այն սկսելու կոնկրետ օրը կարող էր լինել: Վերը արդեն այդ բանը վկայող որոշ փաստերի ծանոթացանք, բայց կան և ուրիշ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ թեև Մոսկվան հրաժարվեց համատեղ արշավանքից, սակայն ոչ միայն այն կանխելու փորձ չարեց, այլ հակառակը՝ խրախուսեց ագրեսորին և զենքով ու զինամթերքով օգնելու որոշում կայացրեց: Այսպես, Բաքվից ստացած տեղեկությունների ազդեցության տակ սեպտեմբերի 20-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկում է Կովկասում ստեղծված դրության և Արևելքում խորհրդային պետության արտաքին քաղաքականության հարցերը, իսկ հաջորդ օրը՝ 21-ին, որոշում «երկարատև աշխատանքի համար Կովկաս գործուղել ընկ. Ստալինին», որտեղ նրա առաջնահերթ

[1] Մանրամասն տես **Է. Ա. Զոհրաբյան**. 1920թ. Թուրք-հայկական պատերազմը..., էջ 153-154: Տես նաև «ՀՀ-ն 1918-1920թթ.», էջ 281-286:

[1] **Р. Казанджян** «Советско-кемалистские отношения в 1920г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածու, N 21, Եր. 2002, էջ 104-105:

[2] Պատերազմի սկզբի մասին տարբեր տեսակետների մասին մանրամասն տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, 1920թ. Թուրք-հայկական պատերազմը..., էջ 160-166:

խնդիրներից էր լինելու «կարգավորել մեր ամբողջ քաղաքականությունը Կովկասում և Արևելքում»[1]:

Թե ինչպես, ինչ մեթոդներով «կարգավորեց» Ստալինը Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը Կովկասում և Արևելքում, կտեսնենք հետագա շարադրանքում: Այստեղ միայն ավելացնենք, որ Ստալինի գործունեությունը Կովկաս ճակատագրական եղավ նախ և առաջ հայ ժողովրդի համար:

Սեպտեմբերի 28-ին արտգործժողկոմ Գ. Չիչերինը մի գրություն է ուղարկում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրո, որում մասնավորապես ասված էր. «Հայաստանում մեր ներկայացուցիչ ընկ. Լեգրանը առաջարկում է բանակցություններ սկսել Դաշնակցական կառավարության հետ՝ **Հայաստանով ռազմական նյութերի տրանզիտի վերաբերյալ, այն հաշվով, որ փոխարենը մենք Հայաստանին հանձնենք որոշ վիճելի մարզեր, մասնավորապես Զանգեզուրը և Նախիջևանը**: Ընկ. Էլիավան և Կիրովը գտնում են, որ միանգամայն անհույս է դաշնակցական կառավարությունից ձեռք բերել դեպի Թուրքիա ռազմական հանդերձանքի անցկացման թույլտվություն և որ այդ կերպ մենք միմիայն կարող ենք թակարդ ընկնել: **Իսկ այդ մարզերի հանձնումը դաշնակներին անթույլատրելի են համարում նկատի առնելով Ադրբեջանի հետ անխուսափելի սկանդալը**: Պետք է հաշվի առնել այն, որ Լեգրանի հարցին բացասական պատասխանը անկասկած Հայաստանի վրայով խաղաղ ճանապարհով տրանզիտի ձեռքբերման անհնարինություն է նշանակում»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, այս գրության մեջ Չիչերինը իր սեփական կարծիքը չի արտահայտել, այլ ներկայացրել է միայն Լեգրանի առաջարկը, որին հակադրել է Էլիավայի ու Կիրովի կարծիքը և Ադրբեջանի հետ սկանդալի անխուսափելիությունը, որով փաստորեն կանխորոշել էր Քաղբյուրոյի դիրքորոշումը Հայաստանի հետ բանակցությունների հարցում: Գրության վերջին նախադասությունից նաև չի երևում, թե Չիչերինը պաշտպանում էր Լեգրանի առաջարկը, ինչպես դա ներկայացնում է Գ. Գալոյանը[3]: Ուշագրավ է, որ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 29-ին, Քաղբյուրոյի նիստում Հայաստանի հետ բանակցությունների և Զանգեզուրն ու Նախիջևանը նրան հանձնելու նպատակահարմարության հարցը քննարկելիս Չիչերինին համարել են ոչ թե Լեգրանի, այլ Էլիավայի և Կիրովի կարծիքի կողմնակից: Նիստի արձանագրության մեջ ասված է.

«**Լսեցին**. – Հայաստանի հետ բանակցությունների վերաբերյալ ընկ. Չիչերինի, Էլիավայի և Կիրովի առաջարկությունը:

Որոշեցին – Հավանություն տալ ընկ. Չիչերինի, Էլիավայի և Կիրովի առաջարկությանը»[1]:

Այսքանը միայն, ոչինչ չի ասված, թե ինչպես է ընթացել քննարկումը, և ինչ էր ասված քննարկվող առաջարկության մեջ: Սակայն այդ նույն նիստում կայացրած մեկ այլ որոշում լրացնում է այդ բացը:

Ահա այն.

«ա) Անհրաժեշտ համարել 11-րդ բանակի համալրումը և ուժեղացումը:

բ) Քեմալականներին փաստական օգնություն ցույց տալ փողով և զենքով:

գ) Հաստատել Ադրբեջանի հետ պայմանագիրը»[2]:

Կարծում ենք, ընթերցողն էլ կհամաձայնի, որ խաղաղ ճանապարհով հարցի լուծման կողմնակից պետությունը սկսված պատերազմի պայմաններում ագրեսորին «փողով և զենքով» օգնելու որոշում չէր ընդունի: Ուրեմն անհիմն են մեր այն պատմաբանների պնդումները, ովքեր փորձում են համոզել, թե Խորհրդային Ռուսաստանը դեմ է եղել քեմալական Թուրքիայի սեպտեմբերյան արշավանքին և ամեն միջոց գործադրել է այն կանգնեցնելու համար: Ճշմարտությունն այն է, որ Ռուսաստանի կառավարությունն ընդհուպ մինչև նոյեմբեր Թուրքական արշավանքը կանգնեցնելու ուղղությամբ վճռական քայլեր չձեռնարկեց:

* * *

Ռազմական գործողություններն ընթանում էին հիմնականում երկու ճակատներում՝ Կարսի և Սուրմալուի: Իսկ Շարուրի ճակատում, որտեղ տեղաբաշխված էր զեն. Շելկովնիկովի (Շելկովնիկյան) չուրջ երեք հազարանոց զորաջոկատը, ակտիվ գործողություններ չծավալվեցին ո՛չ սեպտեմբերին և ո՛չ էլ հոկտեմբերին: Այստեղ նախկինի պես

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ.», փաստաթղթերի... ժողովածու, էջ 289:

[2] Նույն տեղում, էջ 290-291:

[3] Տե՛ս **Գ. Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923, Եր., 1999, էջ 295-296:

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի... ժողովածու», էջ 291:

[2] Նույն տեղում, էջ 292:

սահմանային մանր ընդհարումներ էին տեղի ունենում: Պատճառը, կարծում ենք, միայն այն չէր, որ Թուրքական հրամանատարությունն իր ուժերի մեծագույն մասը կենտրոնացրել էր Կարսի ճակատում և ձգտում էր օր առաջ գրավել անառիկ ամրոցի համբավ ունեցող Կարսը, որով և կվճռվեր պատերազմի ելքը: Այլ հավանաբար նաև այն, որ Նախիջևանում գտնվող Թուրքական զորամասը, թվապես զիջելով հայկական ուժերին, չէր համարձակվում հարձակողական գործողություններ սկսել: Բայց նաև անգործության չէին մատնվել: Մասնավորապես, օգտվելով Նախիջևանի ռուսական հրամանատարության թույլտվությունից, սեպտեմբերի վերջին օրերին զավթել էին օգոստոսի 10-համաձայնագրով Հայաստանին տրված Շահթախթի-Ջուլֆա երկաթուղին ամբողջ երկարությամբ: Տարօրինակն ու զարմանալին սակայն այն չէ, որ Հայաստանի դեմ պատերազմի մեջ գտնվող Թուրքերը գրավել են երկաթուղին, այլ այն, որ դա արել են մի տարածքում, որն այդ նույն համաձայնագրով հանձնված էր ռուսական օկուպացիայի: Իսկ դա նշանակում է, որ Ռուսաստանը պատասխանատու էր այն ամենի համար, ինչ կատարվում էր իր հսկողությանը հանձնված տարածքում: Առավել ևս, որ ռուսական զորքերի Նախիջևան մտնելուց հետո այնտեղ կազմավորված հեղկոմը հայտարարել էր, թե երկրամասում հաստատվում է խորհրդային իշխանություն: Եվ եթե Թուրքական զորամասը Նախիջևանի տարածքում ազատորեն գործելու հնարավորություն էր ստացել, ուրեմն դա կատարվել է առնվազն Նախիջևանի ռուսական հրամանատարության համաձայնությամբ, եթե չասենք թելադրանքով: Մինչդեռ Չիչերինը սեպտեմբերի 27-ի հեռագրում, որն ի դեպ, կրկնել է սեպտեմբերի 29-ին, կատարվածը հետևյալ կերպ է մեկնաբանել. «Շահթախթի-Ջուլֆա երկաթուղին Թուրք ապստամբների ձեռքին է: Մենք այն չենք գրավելու, մեր գործը չէ յուրացնել այն հայերի համար: Պայմանագիրը մեզնից չի պահանջում պատերազմ Թուրքերի հետ: Քանի որ երկաթուղին մենք չենք գրավում, մենք լվանում ենք մեր ձեռքերը: ...Վիճելի մարզերը առայժմ պետք է մնան մեր ռազմակալման տակ՝ առանց այս կամ մյուս երկրին հանձնելու»[1]: Բ. Լեգրանը Չիչերինի այս կարծիքին անդրադարձել է հոկտեմբերի 8-ի նամակում: Իսկ մինչ այդ նա այդ հարցը քննարկել է նաև Օրջոնիկիձեի հետ սեպտեմբերի 30-ի հեռախոսային խոսակցության ժամանակ: Պատասխանելով վերջինիս այն բացատրությանը, որ

[1] Геноцид армян... т. 2, ч. I, М. 2003,, стр. 176-177.

Շահթախթի-Ջուլֆա երկաթուղագծի չահագործումը Հայաստանին հանձնել հնարավոր չէ այնտեղ Թուրքական զորաջոկատների ներկայության պատճառով, Լեգրանն ասել էր. «Ձեր մտավախությունն ինձ անհասկանալի է: **Եթե Թուրքերը խանգարում են, նրանց պետք է առաջարկել հեռանալ Նախիջևանի գավառից»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Չիչերինին ուղարկած նամակում ևս Լեգրանը վճռականորեն դեմ է արտահայտվում օգոստոսի 10-ի համաձայնագրի 5-րդ կետի չկատարումը Շահթախթի-Ջուլֆա երկաթուղագիծը Թուրքերի կողմից գրավված լինելու փաստով պատճառաբանելու պաշտոնական վարկածին: Վկայակոչելով Նախիջևանի գրավման մասին գլխավոր հրամանատարության դիրեկտիվները և այն իրողությունը, որ Նախիջևանում գտնվող Թուրքական զորաջոկատները փաստորեն ենթարկված են Կարմիր բանակի հրամանատարությանը, Լեգրանը տարօրինակ է համարում նման պատճառաբանությունը և հատուկ ընդգծում. «Նախիջևանի գավառը, որի կազմում է գտնվում նաև Ջուլֆան, գրավելու իրավունքը հայերի հետ համաձայնագրով տրված էր, հասկանալի է, ոչ թե Թուրքերին, այլ մեզ»[2]: Բոլոր այդ չինծու պատճառաբանությունների հետևում Լեգրանը տեսնում է Ադրբեջանը: «Իմ կարծիքն այն է, - գրում է Լեգրանը, - որ այդ տեղամասի չահագործմանը հայերին թույլ տալու դեմ **ադրբեջանցիների առարկության միակ հիմքը, ըստ էության, վախն է, որ դրանով կարող է կանխորոշվել Նախիջևանի պատկանելիությունը հայերին: Ես գրել եմ Ձեզ, որ արդյունքը ինձ բնական է թվում, ավելի չուտ ցանկալի, քան վտանգավոր»**[3]:

Այսպիսին էր Լեգրանի դիրքորոշումը ինչպես Նախիջևանի երկրամասի պատկանելիության, այնպես էլ Շահթախթի-Ջուլֆա երկաթուղու չահագործման խնդրում: Ինչպես տեսնում ենք, հատկապես վերջին հարցում նրա և Չիչերինի մոտեցումները խիստ տարբեր են: Չիչերինը ճիշտ է միայն մի բանում, իսկապես օգոստոսի 10-ի համաձայնագրով Ռուսաստանը չի պարտավորվել պատերազմել Թուրքերի դեմ ի պաշտպանություն Հայաստանի: Բայց չէ՞ որ համաձայնագրում նաև չէր ասված, թե Ռուսաստանը, օկուպացնելով Նախիջևանը, պարտավորություն չունի պաշտպանելու նրա տարածքով անցնող, բայց չա-

[1] Նույն տեղում, էջ 272:
[2] Նույն տեղում, էջ 183:
[3] Նույն տեղում, էջ 183-184:

հագործման իրավունքը Հայաստանին հանձնած երկաթուղին օտար նվաճողներից: Համաձայնագրում նաև չէր ասված, որ երկաթուղու տարածքը իր ամբողջ երկարությամբ չեզոք գոտի է: Եվ մի՞թե Ռուսաստանի կառավարությունը նույն կերպ «ձեռքերը կլվանար», եթե երկաթուղին գրավեին ոչ թե թուրքերը, այլ, ասենք պարսիկները: Համոզված ենք, որ ո՛չ, նա անմիջապես զենքի կդիմեր՝ առանց վայրկյան անգամ հապաղելու: Մնում է գուշակել, թե ինչո՞ւ էր Չիչերինն իր դիվանագիտական ներկայացուցչից փորձում թաքցնել խկությունը, ինչը, ի դեպ, չի արել նրա տեղակալ Լևոն Կարախանը: Վերջինս, Մոսկվայում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ Եղիազար Եղիազարյանի հետ զրույցի ժամանակ անդրադառնալով Շահթախթի-Նախիջևան երկաթուղու՝ թուրքերի կողմից գրավելու փաստին, անկեղծորեն ասել էր, որ այդ «երկաթուղին խիստ անհրաժեշտ է Ռուսաստանի համար՝ Անտանտի դեմ Մուստաֆա Քեմալին օգնելու գործում»[1]:

Ավելի արժեքավոր վկայություն այն բանի, որ երկաթուղու գրավումը ռուս-թուրքական գործակցության արդյունք էր, հազիվ թե փնտրելու հարկ կա. երկաթուղին անհրաժեշտ էր Ռուսաստանին, բայց նա կաչկանդված էր օգոստոսի 10-ի համաձայնագրով: Ուրիշ ո՞ւմ միջոցով կարելի է ձեռք գցել այն, եթե ոչ թուրքերի: Ինչ վերաբերում է Անտանտի դեմ պայքարում Մուստաֆա Քեմալին օգնելուն, ապա այդ շրջանում նա պատերազմում էր ոչ Անտանտի և ոչ էլ Հունաստանի դեմ (Հունական ճակատում 1920թ. ամռանից մինչև 1921թ. սկիզբը ռազմական գործողություններ չմղվեցին), այլ Հայաստանի: Հետևապես Քեմալին տրված օգնությունն անտարակույս ուղղվելու էր Հայաստանի դեմ: Կարախանը չէր կարող դա չհասկանալ:

Խոսելով Շահթախթի-Նախիջևան երկաթուղու գրավման մասին՝ իրավամբ հարց է ծագում, թե ինչո՞ւ Հայաստանի կառավարությունն անմիջապես չի բողոքել Ռուսաստանի կողմից օգոստոսի 10-ի համաձայնագրի այդ ակնհայտ խախտման դեմ և երկաթուղու նկատմամբ իր իրավունքները վերականգնելու պահանջ չի դրել: Ո՛չ արխիվներում, ո՛չ մամուլում և ո՛չ էլ ժամանակակիցների հուշերում չենք հանդիպել նման փաստի:

Հոկտեմբերի 4-ին Համո Օհանջանյանը Ադրբեջանի իր դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանից տեղեկություն է ստանում, որ Նախիջևանում գտնվող թուրքական զորամասը համայրելու նպատակով Բաքվում նախկին թուրք ռազմագերիներից զորամաս են կազմավորում: «Հավաստի աղբյուրներից կարող ենք հաղորդել Ձեզ, – ասված էր այդ զեկույցում, – որ Ադրբեջանի սովետական իշխանությունը, տաճիկ ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ ու գործակցությամբ, Սիբիրից վերադարձող բոլոր տաճիկ գերիներին կազմակերպում ու զինում են այստեղ: Արդեն զուտ տաճիկ գերիներից այստեղ մի գունդ է կազմված՝ մոտավորապես 300 հոգուց բաղկացած ու ամեն օր զինավարժություն են անում, շարունակելով նորանոր խմբերի կազմակերպությունը: Ինչպես տեղեկացանք, կազմակերպվող տաճիկ զորամասերը մտադրություն ունեն Զանգեզուրի վրայով **Նախիջևան ուղարկելու, որպեսզի տեղական գարնիզոնը ուժեղացնելով, որոշ գործողություններ ձեռնարկեն Հայաստանի դեմ** և միանան Տաճկաստանում գործող զորամասերի հետ...»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Ինչպես տեսնում ենք, այս տեղեկությունը կառավարությանը հուշում էր, որ չուտով Նախիջևանի ճակատը լուրջ նշանակություն էր ստանալու: Սակայն վեց օր հետո միայն կառավարությունն անդրադարձավ այս խնդրին և մի ընդարձակ բողոքի նոտա հղեց Չիչերինին, որում վկայակոչում էր Թիֆլիսում կնքված համաձայնագիրը, ըստ որի՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքները ճանաչվել են չեզոք և ենթակա ժամանակավոր օկուպացիայի ռուսական զորքերի կողմից՝ որպես չեզոք ուժի, մինչև հարցի վերջնական լուծումը: «Ինքը՝ չեզոքություն հասկացությունը, – ասված է նոտայում, – բնականաբար Խորհրդային իշխանության վրա պարտավորություն է դրել խստորեն հետևել, որ այդ չեզոքությունը չխախտվի ո՛չ Հայաստանի Հանրապետությանը թշնամի ուժերի անցումով նշված շրջանները, ո՛չ առավել ևս իրենց՝ խորհրդային զորքերի գործողություններով: Մինչդեռ ռուսաստանյան խորհրդային զորքերով նշված շրջանների օկուպացման սկզբից ևեթ ադրբեջանական զորքերը և թուրք-թաթարական բանդաները լայնորեն մուտք գործեցին ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Զանգեզուրի և Նախիջևանի սահմաններ: Միաժամանակ այդպիսի հնարավորություն տրվեց թուրքական ազգային ուժերին և նրանց գործիչներին՝ Խալիլ-փաշայի գլխավորությամբ»[2]:

Հեռագրում խոսվում է նաև այն մասին, որ Զանգեզուրում թուրք

[1] **Գ. Գալոյան**, նշվ. աշխ. էջ 299:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 571, թ. 21:

[2] Նույն տեղում, գ. 581, թ. 332:

ասկյարները բնաջնջման սպառնալիքի տակ հայ գյուղացիներին հարկադրում են ստորագրություններ տալ Ադրբեջանի իշխանության տակ անցնելու իրենց ցանկության մասին, թվարկվում են այն գյուղերի անունները (մեկ տասնյակից ավելի), որոնցում ջարդեր են կազմակերպվել՝ նրանց այդ պահանջը մերժելու համար: Փաստելով նաև այն իրողությունը, որ հայ երիտասարդներին հարկադրական զորակոչի են ենթարկում, արտգործնախարար Համո Օհանջանյանը հետևություն է անում, թե Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի կարող չբողոքել խորհրդային իշխանությունների կողմից օգոստոսի 10-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների այդօրինակ խախտումների դեմ և կոչ անում «անհապաղ կարգադրություն անել... նշված շրջաններից հեռացնելու Հայաստանի Հանրապետությանը թշնամի ջոկատներին և Խալիլ-փաշայի գլխավորած թուրքական և ադրբեջանական ազգային գործիչներին»[1]:

Նախորդ շարադրանքում արդեն արձանագրել ենք այն իրողությունը, որ սեպտեմբերին, երբ արդեն ուրվագծվում էր Թուրք-հայկական պատերազմը, Մոսկվան կորցրեց Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը, այլևս նախկինի պես չէր պնդում հաշտության պայմանագրի կնքման ու դեպի Թուրքիա տրանզիտի իրավունք ստանալու վրա և նաև որոշել էր անորոշ ժամանակով հետաձգել հայ-ադրբեջանական տարածքային վեճերի լուծումը: Այդ է պատճառը, որ մերժում էր Երևան գնալու և Հայաստանի կառավարության հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ Լեգրանի բոլոր առաջարկությունները: Արխիվային փաստաթղթերը աներկբա վկայում են, որ հոկտեմբերին Մոսկվան դեռևս չէր հրաժարվել իր այդ դիրքորոշումից: Լեգրանի և Չիչերինի միջև հեռագրերի փոխանակությունը, որ տեղի ունեցավ հոկտեմբերի առաջին օրերի ընթացքում, և որոնք մենք այստեղ չենք մեջբերում մեր բուն խնդրից շատ հեռացած չլինելու նկատառումով, ցույց է տալիս, որ հիմա արդեն Մոսկվային ավելի շատ հետաքրքրում էր Հայաստանի խորհրդայնացման խնդիրը[2]: Նույնիսկ այն բանից հետո, երբ Լեգրանի համառ պմդումների արդյունքում Մոսկվան տեղի տվեց, և հոկտեմբերի 9-ին Չիչերինը հեռագրեց նրան, թե կարող է բանակցություններ սկսել Երևանում, Հայաստանի խորհրդայնացումը օրակարգից չհանվեց: Զսպասելով Երևանում դեռ

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ. էջ 219-221:

նոր ծայր առած (հոկտեմբերի 13-ին) բանակցությունների ավարտին՝ հոկտեմբերի 14-ին Մոսկվայում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն Չիչերինի առաջարկությամբ քննարկեց և հավանություն տվեց «Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման համար վճռական գործողությունների անհրաժեշտության» վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի և Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջարկությունը[1]: Ճիշտ է, որոշման մեջ խոսվում էր նաև «նոր, խորհրդային կառավարությանն օժանդակելու» և «Թուրքերի հետագա առաջխաղացումը կանգնեցնելու համար նրան քաղաքական օգնություն ցույց տալու» մասին, սակայն այդ ամենը մնաց թղթի վրա. Մոսկվան գերադասեց սպասել մինչև պատերազմում Հայաստանի վերջնական պարտությունը և ընդհուպ մինչև նոյեմբերի վերջը Հայաստանը խորհրդայնացնելու ուղղությամբ վճռական քայլեր չձեռնարկեց: Սակայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը ոչ թե դա է (վերջին հաշվով Մոսկվան կարող էր իր կայացրած որոշումից հրաժարվել կամ ուղղակի չիրականացնել), այլ այն քաղաքական վարքագիծը, որը չի կարելի այլ կերպ բնութագրել, քան անբարոյական: Պայմանագիր կնքելու նպատակով բանակցություններ է սկսում ու միաժամանակ այդ նույն կառավարությունը տապալելու որոշում կայացնում: Առավել ևս, որ Լեգրանը հիմնավոր փաստարկներով մերժել էր ստեղծված պայմաններում Հայաստանի խորհրդայնացման հնարավորությունն ու նպատակահարմարությունը և Չիչերինին ուղարկած հոկտեմբերի 7-ի և 8-ի հեռագրերում պայմանագրի ստորագրման ու ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ Թուրքերին ներկայացվելիք պահանջի համար առաջ էր քաշել երեք հիմնական պայման, այն է՝ Հայաստանը պետք է պաշտոնական հայտարարություն անի Թուրքա-Հայաստանը ռազմական ուժով գրավելու մտադրությունից հրաժարվելու մասին, ընդունի Ռուսաստանի միջնորդությունը Թուրքիայի հետ սահմանագծման հարցում, Հայաստանի երկաթուղիներով Ռուսաստանին ռազմական տրանզիտի իրավունք վերապահի[2]:

Ինչպես արդեն նշեցինք, հայ-ռուսական երևանյան բանակցությունները սկսվեցին հոկտեմբերի 13-ին և շարունակեցին մինչև նույն ամսվա 28-ը: Հայաստանը բանակցություններում ներկայացնում էին 1920թ. ամռանը Մոսկվայում բանակցություններ վարած նույն պատվիրակները՝ Լ. Շանթը, Հ. Տերտերյանը և Լ. Զարաֆյանը (քարտուղար

[1] Տե՛ս **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 54, էջ 858-859:
[2] Տե՛ս РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 17, л. 3.

Յակուլով), իսկ Ռուսաստանը՝ Բ. Լեգրանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Օ. Սիլինը և Ա. Բոբրիչչևը (քարտուղար՝ Շիֆֆերս): Բանակցությունների ընթացքի վրա մենք չենք ծանրանա, քանի որ դրանք մանրամասն վերլուծված են Թուրք-հայկական պատերազմին նվիրված մեր աշխատությունում[1]: Միայն նշենք, որ այդ բանակցությունների մասին շատ քիչ նյութ է պահպանվել թե՛ արխիվներում և թե՛ ժամանակակիցների հուշերում: Զարմանալի է, որ Շանթի պատվիրակության անդամ Համբարձում Տերտերյանը, իր հուշերում բավականաչափ տեղ հատկացնելով մոսկովյան բանակցություններին, երևանյան բանակցությունների մասին մանրամասներ չի հաղորդում: Օրինակ, Լեգրանի՝ Մոսկվա ուղարկած հեռագրերից ու զեկույցներից մեզ հայտնի է, որ վիճաբանություններ հարուցող հարցերից մեկն էլ Ադրբեջանի հետ վիճելի տարածքների հարցն էր: Բայց ինչպե՞ս էր այն ընթացել, կողմերի դիրքորոշումը ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել բանակցությունների ընթացքում, մնում է անհայտ: Ֆինանսների նախարարության աշխատակից Մարտին Շաթրյանը, որը հավանաբար փորձագետի կարգավիճակով մասնակցել է բանակցություններին, Աբրահամ Գյուլխանդանյանին հասցեագրած նամակում Ադրբեջանի հետ վիճելի տարածքների հարցի կապակցությամբ գրում է, թե «երկար վիճելուց հետո հարցրեց (Լեգրանը – Է. Զ.), **եթե այս բոպեիս մենք տանք ձեզ Նախիջևանն ու Զանգեզուրը, կհրաժարվե՞ք Ղարաբաղից հօգուտ Ադրբեջանի**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Բայց ոչինչ չի ասում վիճող կողմերի փաստարկների ու նաև այն մասին, թե հայ պատվիրակները ինչ պատասխան են տվել Լեգրանի հարցին: Չեն պահպանվել նաև սղագրությունները, հավանաբար այդպիսիք չեն էլ կազմվել:

Ըստ Մարտին Շաթրյանի՝ Լեգրանն ընդհանրապես բայրացակամորեն էր տրամադրված և բոլոր հարցերում ձգտում էր համաձայնության գալ: Համբարձում Տերտերյանը նմանապես նույն կարծիքն է հայտնում:

Հասկանալի է, որ Լեգրանին առավելապես հետաքրքրողը դեպի Թուրքիա տրանզիտի իրավունք ստանալու հարցն էր: Հայկական կողմն էլ, համաձայնելով դրան, առաջ էր քաշում քեմալական զորքերը մինչև Երզնկա հետ քաշելու, Ղարաբաղը վիճելի ճանաչելու և Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանին հանձնելու պահանջ (պահանջվում էր նաև ճանաչել Հայաստանի Հանրապետության անկախությունը, տրանզիտով Թուրքիա տարվող զենքի ու զինամթերքի կեսը թողնել Հայաստանին, օգնություն ցույց տալ հինգ միլիոն ոսկի ռուբլու չափով, Հայաստանը ազատել Ռուսաստանի արտաքին պարտքի վճարմանը մասնակցելու պարտականությունից և այլն):

Մինչև Երզնկա թուրքական զորքերի հետքաշումը համարելով անիրական՝ Լեգրանն առաջարկում էր համաձայնել մինչև 1914թ. սահմանը հետ քաշելու հետ: Իսկ Ադրբեջանի հետ վիճելի տարածքների խնդրի լուծման հարցում՝ կաչկանդված լինելով Մոսկվայում կայացրած որոշումով, համոզում էր հայերին կտրուկ պահանջ չդնել, այլ համաձայնել ռուսական ժամանակավոր օկուպացիային՝ մինչև Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ այդ խնդրի վերջնական լուծումը՝ առաջիկայում գումարվելիք հայ-ադրբեջանական կոնֆերանսում: Դա նրա համոզմունքը չէր, բայց նա այլ բան առաջարկել չէր կարող, թեև անձամբ Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին հանձնելու կողմնակից էր: Հենց բանակցությունների այդ նույն օրերին Զիչերինի մի հեռագրից տեղեկացել էր, որ իր կառավարությունը կրկին վիճելի տարածքների հարցի լուծումը հետաձգելու որոշում է կայացրել: Հեռագրում ասված էր, որ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին հանձնելու Սահակ Տեր-Գաբրիելյանի առաջարկությունը Բաքվում ողբերգություն է առաջացրել, թե այնտեղ «տիրում է այնպիսի տրամադրություն, որ հարցի նման լուծումը կարող է հանգեցնել որևէ աղետի», և երկար ու տանջալից քննարկումներից հետո իրենք հանգել են եզրակացության, որ ներկայումս «հնարավորություն չկա վիճելի վայրերը Հայաստանին տալու և ընդհանրապես դրանց մասին հարցը պետք է դեռևս բաց մնա»[1]:

Հոկտեմբերի 24-ին Զիչերինին ուղարկած զեկույցում Լեգրանը հայտնում է, որ հայկական պատվիրակությունը հիմնականում արդեն համաձայնել է Ռուսաստանին դեպի Թուրքիա ռազմական տրանզիտի իրավունք տալ, համաձայնել է նաև Ղարաբաղը թողնել Ադրբեջանին, բայց պահանջում է անհապաղ Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչել Հայաստանի անբաժանելի մաս: Ինչ խոսք, որ նա պարտավոր էր կատարել իր կառավարության հրահանգը և պնդել խնդրի լուծումը հետաձգելու անհրաժեշտության վրա, ինչը և փորձում էր անել: Բայց որ նա հակված էր բավարարելու հայերի պահանջը ու նաև փորձում էր

[1] Տես **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 221-234:
[2] Նույն տեղում, էջ 229:

[1] **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 316:

ինչ-որ ձևով ազդել Մոսկվայի դիրքորոշման վրա, դա ակնառու երևում է այդ նույն օրը կազմված մեկ այլ զեկույցից, որում խոսելով այն մասին, որ իր բանակցությունները առաջ են բերել Անտանտի լարված ուշադրությունը, որ կրկին Երևան է եկել անգլիական կոմիսար Ստոքսը և անդրկովկասյան կոնֆեդերացիայի ստեղծման առաջարկ արել ու օգնության խոստումներ տվել, Լեգրանը վերջում հատուկ ընդգծում է. «...Հայերը Անգլիայի հետ համաձայնությունից ձեռնպահ են մնում, քանի որ անգլիացիները հրաժարվում են այդ վիճելի մարզերը ճանաչել Հայաստանինը, նրանք գերադասում են դրանք զիջել մուսավաթականներին: Հայերը Խորհրդային Ռուսաստանի հետ այդ մարզերի հարցի ավելի բարենպաստ լուծման հույս ունեն»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Կարծում ենք, որ այս տողերը պատահաբար չեն հայտնվել Մոսկվա ուղարկած զեկույցում:

Բանակցություններն ավարտվեցին հոկտեմբերի 28-ին: Կազմվել էր ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև հաշտության պայմանագրի նախագիծ՝ բաղկացած 17 հոդվածներից, որի ստորագրումը, սակայն, հետաձգվում էր մինչև երկու պատվիրակությունների համաձայնությամբ ընդունված և այդ նույն օրը ստորագրած «Եզրափակիչ որոշման արձանագրության» մեջ արտացոլված նախնական պայմանների կատարումը:

Պայմանագրի նախագծում տեղ գտած հոդվածները բավականին նպաստավոր էին Հայաստանի համար: Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը, արդարացի համարում Թուրքա-Հայաստանի մարզերի կամ նրանց որոշ մասերի միացումը Հայաստանի Հանրապետությանը, պարտավորվում վերադարձնել Առաջին աշխարհամարտի տարիներին Հայաստանից տարած եկեղեցական գույքը, տրամադրել նավթ և նավթամթերք՝ նրա տարեկան պահանջի չափով, ինչպես նաև վագոններ, բամբակի վերամշակման սարքավորումներ և այլն: Ինչ վերաբերում է մեզ հետաքրքրող խնդրին, ապա այն իր արտացոլումն էր գտել նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներում: 3-րդում խոսվում է Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանի մասին և չեչտվում, որ այն պետք է որոշվի պայմանագրի ստորագրումից հետո անհապաղ գումարված հայ-ադրբեջանական կոնֆերանսում՝ Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ: Համաձայնություն չկայանալու դեպքում՝ հարցը լուծվելու է

[1] РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 21, л. 189.

հանրաքվեով: Իսկ 4-րդ հոդվածում ուղղակի ասված էր. «Ռուսաստանը անպայման Հայաստանի պետության կազմի մեջ մտած է ճանաչում նախկին Ռուսաստանյան կայսրության ներքոհիշյալ նահանգները և մարզերը. Երևանի և Կարսի՝ իրենց կազմի բոլոր գավառներով և օկրուգներով, բացառությամբ Նախիջևանի գավառի, ինչպես նաև Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի հարավային մասը՝ Քարվանսարա և Դիլիջան քաղաքներով:

Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի մարզերի, այսպես կոչված Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գավառների պետական պատկանելիության հարցը՝ անմիջական համաձայնության բացակայության դեպքում, որոշվում է հանրաքվեով»[1]:

Այսպես էր պայմանագրի նախագծում, մինչդեռ «Եզրափակիչ որոշման արձանագրության մեջ» այդ խնդիրը մի քիչ այլ կերպ է ներկայացված, ահա այն.

«ՌԽՖՍՀ կառավարությունը՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մյուս, իրենց վրա պարտավորություն են վերցնում ստորագրել սույն արձանագրությանը կից հաշտության պայմանագրի նախագիծը, նրան վերաբերող բոլոր լրացումներով, պայմանով.

1. Որ ՌԽՖՍՀ կառավարությունը և ԱԽՍՀ կառավարությունը ճանաչում են Հայաստանի Հանրապետության անքակտելի իրավունքները վիճելի մարզերի տարածքների՝ Նախիջևանի և Զանգեզուրի գավառների վրա, և այդ գավառների սահմաններից դուրս են բերում ՌԽՖՍՀ և ԱԽՍՀ հրամանատարության ենթակայության տակ գտնվող զորամասերը:

Որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մի կողմից, անվերապահորեն հրաժարվում է այսպես կոչված Ղարաբաղի մարզի նկատմամբ ամեն մի հավակնությունից՝ բացառությամբ այն անկյան, որ առաջանում է Նոր Բայազետի գավառի արևելյան սահմանով և Շարուր-Դարալագյազի արևելյան սահմանի մի մասով, Զանգեզուրի գավառի հյուսիսային սահմանի հետ՝ Գինալդաղ և Զիչակլի լեռների պայմանական գծով:

Որ ՌԽՖՍՀ-ը՝ ուշադրության առնելով Հայաստանի աշխատավոր բնակչության աղետալի դրությունը, անվերադարձ վարկ է տալիս երկուս և կես միլիոն ռուբլի ոսկով»[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ.12, թ.30:
[2] Նույն տեղում, ֆ. 4/114, ց. 2, գ. 132, թ. 2:

Պայմանագրի նախագիծն ուներ նաև երկու լրացումներ (Հայաստանի վրայով տրանզիտի իրականացման պայմանների, փոստ-հեռագրի օգտագործման և այլ հարակից հարցերի մասին), որոնցում եզրափակիչ արձանագրության հայ-ադրբեջանական տարածքային խնդրին վերաբերող մասը նույնությամբ կրկնվում էր:

«Եզրափակիչ որոշման արձանագրության» երկրորդ մասը վերաբերում էր հայ-թուրքական հարաբերություններին: Այնտեղ ասված էր, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ընդունելու ՌԽՖՍՀ կառավարության բարեկամական աջակցությունը Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարության հետ տարածքային հարցերի լուծման հարցում այն բանից հետո, երբ վերջինս իր զորքերը հետ կքաշի մինչև 1914թ. սահմանը, կհրաժարվի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից և Բաթումի կոնվենցիայից, կճանաչի Հայաստանի Հանրապետության անկախությունն այն սահմաններում, որ կորոշվեն ՌԽՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրով:

Կարծում ենք, ընթերցողն էլ կընդունի, որ Ադրբեջանի հետ վիճելի համարվող տարածքների խնդրում «Եզրափակիչ որոշման արձանագրության» մեջ տեղ գտած և Լեգրանի հավանությանն արժանացած նախնական պայմանները, անշուշտ, Մոսկվայի և Բաքվի համաձայնության դեպքում մի առաջընթաց քայլ կլինեին հարցի շատ թե քիչ հայանպաստ լուծման գործում: Դա ակնհայտ է, քանզի բոլոր վիճելի տարածքներում պայմանագրի նախագծով նախատեսվող հանրաքվեի արդյունքները խորհրդային զորքերի (ռուսական և ադրբեջանական) ներկայության պայմաններում հաղիվ թե Հայաստանի օգտին լինեին: Մինչդեռ «Եզրափակիչ որոշման արձանագրությունը» փաստորեն Նախիջևանը և Զանգեզուրը տալիս է Հայաստանին, քանի որ ճանաչում է վերջինիս անքակտելի իրավունքը այդ գավառների վրա և պարտավորեցնում խորհրդային զորքերը դուրս բերել այդ օկուպացված շրջաններից: Ճիշտ է, փոխարենը Հայաստանը հրաժարվում էր Ղարաբաղի նկատմամբ հավակնությունից, բայց ստեղծված պայմաններում երևի դա չարիքների փոքրագույնն էր: Ուշագրավ է, որ նրանում վիճելի տարածքների նկատմամբ Ադրբեջանի իրավունքների մասին որևէ հիշատակություն չկա, նույնիսկ Ղարաբաղի հարցում, որի նկատմամբ հավակնությունից Հայաստանը հրաժարվում էր հօգուտ Ադրբեջանի: Իսկ հավակնությունից հրաժարվել նշանակում է զիջել և ոչ թե իրավունք չունենալ:

Նախորդ շարադրանքում արդեն նշել ենք, որ Լեգրանն ընդհանրապես բայրացակամորեն էր տրամադրված և քննարկված բոլոր հարցերում աշխատում էր համաձայնության եզր գտնել: Այդ են վկայում Հ. Տերտերյանը, Մ. Շաթրյանը: Այդ մասին վկայություն կա նաև Թիֆլիս՝ Տ. Բեկզադյանին ուղարկած արտգործնախարարության հոկտեմբերի 29-ի հեռագրում «Երեկ երկու կողմից ստորագրվեցան արձանագրություններ, որոնց հիման վրա, ընդունելու դեպքում, Լեգրանի վերադառնալուց հետո պիտի ստորագրվի հաշտարար պայմանագիրը մեր և Սովետական Ռուսաստանի մեջ, – ասված է նրանում: – **Ռուբենի առաջարկը**[1] **ընդունվեց Լեգրանի կողմից համարյա անփոփոխ, подробности почтой**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Հենց Լեգրանի նման վերաբերմունքով պետք է բացատրել «Եզրափակիչ որոշման արձանագրության» մեջ այնպիսի պայմանների առկայությունը, որոնց վերաբերյալ իր կառավարությունից նախնական համաձայնություն չէր ստացել, բայց ընդունել էր հայկական կողմի առաջարկները՝ հուսալով, որ հետագայում իրեն կհաջողվի համոզել Չիչերինին համաձայնելու հարցի նման լուծման անհրաժեշտությանը: Դա հատկապես վերաբերում է Ադրբեջանի հետ վիճելի տարածքների խնդրին: Այստեղ, անկասկած, նա գործել էր ինքնուրույնաբար՝ առանց նախնական պայմանավորվածությունների: Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ հոկտեմբերի 29-ին, երբ Մոսկվայում դեռ տեղեկություններ չունեին բանակցությունների ավարտի մասին, Լեգրանին ուղարկած նամակ-հրահանգում Չիչերինը դարձյալ խոսում է Ադրբեջանի հետ վիճելի տարածքների հարցի լուծումը հետաձգելու և դրանց օկուպացիան չարունակելու անհրաժեշտության մասին:

Լեգրանը ոգևորվել էր ձեռք բերած համաձայնությամբ և նույն օրը՝ հոկտեմբերի 28-ին, վարչապետ Համո Օհանջանյանին ներկայացրեց մի գրություն, որում հայտնում էր, որ ինքը չտապ մեկնելու է Բաքու՝ իր կառավարության հետ կապվելու և համապատասխան բացատրություններ տալու նպատակով, և որ իր բացակայության ժամանակամիջոցում Հայաստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչի պարտականությունները ժամանակավորապես դնում է լիազոր ներկայացուցչության խորհրդական Օտտո Սիլինի վրա: Նա նաև չտապ հեռագրեր ուղարկեց Չիչերինին՝ պայմանագրի նախագծի և Եզրափակիչ որոշման արձանագրության բովանդակության մասին իր մեկնաբանություններով և դրանք անպայման ընդունելու վերաբերյալ անհրա-

[1] Ռուբեն Տեր-Մինասյանի մասին է խոսքը, որի առաջարկը, անտարակույս, վերաբերել է թուրքական զորքերը Հայաստանից հետ քաշելուն:

[2] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ.19, թ.34:

ժեչտ փաստարկներով: Լեգրանը գտնում էր, որ պայմանագիրը պետք է կնքել, նույնիսկ եթե Անկարան դեմ լինի, քանի որ այն Անտանտին կզրկի Հայաստանն իր նպատակների համար օգտագործելու հնարավորությունից, կամրապնդի Խարհրդային Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասում, կնպաստի Իրանում և Թուրքիայում ակտիվ քաղաքականության ծավալմանը, կձախողի հայ-վրացական հակախորհրդային դաշինքի ստեղծումը և այլն: Իսկ Ադրբեջանի հարցում խորհուրդ էր տալիս կայուն լինել և նրա ճնշմանը տեղի չտալ:

Սակայն Բաքու ժամանած Լեգրանը խորը հիասթափություն ապրեց. առաջին իսկ չափումները ցույց տվեցին, որ պայմանագիրը ընդունելի չէ ոչ միայն Ադրբեջանի ղեկավարության համար, ինչը անսպասելի չէր, այլև Քաղբյուրոյի անդամ Ի. Ստալինի, որը, ինչպես արդեն նշել ենք, Կովկասյան գործերը տնօրինելու լիազորություն ուներ: Նոյեմբերի 4-ին նրա մասնակցությամբ գումարվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի Քաղբյուրոյի նիստ որտեղ լսվեց Լեգրանի հաղորդումը Երևանում կազմված հաշտության պայմանագրի նախագծի և ստորագրած «Եզրափակիչ որոշման արձանագրության» մասին: Թե ինչու հարցի քննարկումը միացյալ նիստ փոխադրվեց և ում առաջարկությամբ, դժվար է ասել, բայց որ դա պատահական չէր, և դրանով իսկ կանխորոշվել էր ընդունվելիք որոշումը, ակնհայտ է: Փաստաթուղթը ներկայացնենք ամբողջությամբ.

«Լսեցին – Ընկ. Լեգրանի զեկուցումը Հայաստանի դրության մասին:

Որոշեցին – ա) Հայաստանին ներկայացված պայմանագրի մասին վերջնական որոշում չկայացնել՝ մինչև ՌԿԿ ԿԿ-ի հետ այդ հարցի վերաբերյալ բանակցելը, որի վարումը հանձնարարել ընկ. Ստալինին:

բ) Միաժամանակ հայտնել Քաղբյուրոյի կարծիքը, որ Նախիջևանը և Զանգեզուրը Հայաստանին հանձնելու մասին պայմանագրի առաջարկվող կետը օգտավետ չէ ոչ քաղաքական, ոչ ռազմավարական տեսակետից և կարող է ընդունելի լինել ծայրահեղ դեպքում:

գ) Անհրաժեշտ համարել ընկ. Լեգրանի մեկնումը Մոսկվա՝ Հայաստանի հետ կապված հարցը պարզելու համար:

դ) Նախիջևանի և Զանգեզուրի մասին Քաղբյուրոյի կարծիքի հիմնավորումը հանձնարարել ընկ. Ն-ին...[1]:

[1] Խոսքը Նարիման Նարիմանովի մասին է:

ե) Ընկ. Դովլաթովին Հայաստան չուղարկել»[1]:

Դատելով միացյալ նիստի արձանագրությունից հանված այս քաղվածքից՝ կարող է թվալ, թե պայմանագրի նախագծի մերժման միակ պատճառը Նախիջևանի և Զանգեզուրի գավառների հարցն էր: Բայց իրո՞ք այդպես էր, իրո՞ք դա էր միակ պատճառը, թե՞ կային և այլ պատճառներ, որոնք ինչ-ինչ նպատակներով արձանագրության մեջ տեղ չեն գտել: Մեզ հայտնի արխիվային փաստաթղթերն այդ հարցին չեն պատասխանում (հնարավոր է, որ նիստի մասնակիցների ելույթները չեն սղագրվել), բացի մեկից: Դա նոյեմբերի 6-ին Երևան՝ Սիլինին ուղարկած Լեգրանի շտապ հաղորդագրությունն է, որը և լույս է սփռում այդ խնդրի վրա: Ելնելով փաստաթղթի կարևորությունից՝ նպատակահարմար ենք համարում այն ներկայացնել ամբողջությամբ. «Ստալինի մասնակցությամբ Բաքվի խորհրդակցությունում բացահայտվեց բացասական վերաբերմունք մեր պայմանագրի նկատմամբ. առաջին՝ Թուրքերի հետ բարդությունների (առաջացման – Է. Զ.) երկյուղից՝ մինչև 1914թ. սահմանը նրանց զորքերի հետքաշման առնչությամբ: Երկրորդ, վիճելի տարածքների պատճառով, որոնց տիրելը խիստ կարևոր են համարում Պարսկաստանում իրադարձությունների ընթացքի վրա ազդելու համար: Դրա հետ մեկտեղ գտնում են, որ փաստորեն մենք ոչինչ չենք կարող ձեռնարկել Թուրքերի հարձակման առթիվ, թեև մեր վերաբերմունքը դրան նախկինի պես բացասական է: Զևականորեն Թուրքիան մեզ հետ կապված չէ պայմանագրով և մենք նրան պահանջներ ներկայացնել չենք կարող: Ինչ վերաբերում է տրանզիտին, ներկա դրության և Թուրքիայից ինֆորմացիայի բացակայության պայմաններում, այդ հարցը կորցնում է սրությունը: Բացի այդ, ենթադրում են, որ Հայաստանի հետ հաշտություն կնքելու դեպքում, Թուրքերն իրենք առանց դժվարության տրանզիտ կկարողանան ստանալ, մինչդեռ տրանզիտի փոխարեն վիճելի տարածքները Հայաստանին հանձնելը թանկ գին է հանդիսանում: Շտապ ինֆորմացիայի համար ընկ. Բուդուն[2] գործուղվում է քեմալականների մոտ: Բոլոր հարցերն ամբողջությամբ հանձնվում են ԿԿ-ի որոշմանը Մոսկվայում, ուր վաղը մեկնում եմ: Շատ կարևոր է Զեղնից տեղեկություններ ունենալ ռազմաճակատի դրության մասին: Օգտվեցեք հեռագրից և ռադիոյից միաժամանակ: Բաքվի ռադիոկայանին կարգադրված է կապ պահպանել Երևանի հետ»[3]:

[1] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի...», էջ 327:

[2] Խոսքը Պրոկոֆի (Բուդու) Մդիվանու մասին է:

[3] «ՀՀ-ն 1918-1920թթ., փաստաթղթերի...ժողովածու», էջ 330-331:

Ինչպես տեսնում ենք, Բաքվում հաշտության պայմանագրի նախագծի դեմ առաջ էր քաշվել ոչ թե մեկ, ինչպես միացյալ նիստի արձանագրության մեջ է ասված, այլ մի քանի փաստարկ: Ըստ որում, առաջին պլանի վրա Թուրքիային առնչվող փաստարկն է եղել և ոչ թե Նախիջևանի ու Զանգեզուրի: Իսկ թե ինչու այն չի արձանագրվել, հստակ ասել հնարավոր չէ, թեև կարելի է ենթադրել, որ ըստ երևույթին նիստը վարողները զգուշացել են Թուրքիայի վերաբերյալ արտահայտված կարծիքների արտահոսքից: Հնարավոր է նաև, որ հենց այդ նկատառումով նիստում միայն մի փաստարկ է վկայակոչվել: Դրա հավանականությունը մեծ է նաև այն առումով, որ Լեգրանը վերը մեջբերած հաղորդագրության մեջ վկայակոչում է խորհրդակցությունը և ոչ թե նիստը:

*Դառնալով միացյալ նիստին՝ հարկ ենք համարում ընդգծել, որ պայմանագրի ճակատագրի, հետևապես ինչ-որ չափով նաև Հայաստանի Հանրապետության ճակատագրի հարցի լուծումը հանձնվել է հակահայ տրամադրություններով երկու գործիչների՝ Ստալինին և Նարիմանովին, որոնք և սկսում են ակտիվ կերպով Մոսկվային տրամադրել ընդդեմ Լեգրանի և նրա ներկայացրած պայմանագրի նախագծի: Նիստի հաջորդ օրը՝ նոյեմբերի 5-ին, Ստալինի և Օրջոնիկիձեի ստորագրությամբ Չիչերինին (պատճենը՝ Լենինին) է ուղարկվում հետևյալ հեռագիրը. «Եկել է Լեգրանը պայմանագրի նախագծով, նրա կողմից ոչ մի վերջնագիր հայկական կառավարությանը ներկայացված չի եղել: Պայմանագրի նախագիծը Նախիջևանի և Զանգեզուրի գավառները հանձնում է Հայաստանին, մենք իրավունք ենք ստանում Թուրքիա փոխադրել զենք և այլն, եթե մեր ճնշման տակ Թուրքերը հետ քաշվեն 1914թ. սահմանը: Նախագիծը չի կարող անմիջապես ստորագրվել և մանրամասն քննարկման և էական փոփոխությունների կարիք ունի: Հարկ էր, որ ընկ. Լեգրանը բացատրությունների համար մեկներ Մոսկվա»[1]: Այդ նույն օրը Ստալինը մի առանձին ու բավականին ընդարձակ հեռագիր է հղում Չիչերինին (պատճենը՝ Լենինին), որում հայտնում է Կարսի անկման, Հայաստանում տիրող դրության, ինֆորմացիա ստանալու նպատակով Թուրքական հրամանատարության մոտ ներկայացուցիչ ուղարկելու անհրաժեշտության մասին (առաջարկում է ուղարկել Մդիվանուն՝ Կորխմազովի և Շահթախթինսկու հետ միասին) և կրկին անդրադառնում Լեգրանի և Հայաստանի հետ պայմանագրի խնդրին. «**Ուղարկել Լեգրանին այդ նույն նպատակի համար** (Թուրքիա – Է. Զ.) **հարմար չէ, քանի դեռ Հայաստանի հետ պայմանագիր չի ստորագրված,** – գրում է Ստալինը, – **ավելի լավ է կանչեցեք Լեգրանին Մոսկվա՝ պայմանագրի նախագծի գործի մասին բացատրություն տալու համար»**[1]:*

*Դժվար չէ տեսնել, որ Ստալինը համառորեն ձգտում էր հեռացնել Լեգրանին Անդրկովկասից և Հայաստանի գործերին խառնվելուց: Ստալինին պետք չէին մարդիկ, որոնք փորձեին փրկել Հայաստանը, նրան այլ բան էր հետաքրքրում՝ հանրապետության խորհրդայնացումը, անգամ նրա շուրջ կեսի կորստյան գնով: Այդ միտքը պարզորոշ արտահայտված է այդ նույն հեռագրի հետևյալ տողերում. «Դրությունը Հայաստանում այնպիսին է, որ եթե Ալեքսանդրապոլը կորցնեն, չի բացառվում դաշնակների կողմից իշխանությունը մեզ հանձնելու հնարավորությունը՝ Ադրբեջանի օրինակով»:[2] Ուրեմն ո՛չ պայմանագիր ստորագրել է պետք և ո՛չ էլ միջամտել՝ թուրքական առաջխաղացումը կանգնեցնելու համար, այլ պետք է սպասել Ալեքսանդրապոլի անկմանը: Այսպիսին էր Ստալինի դիրքորոշումը, որն իր կոնկրետ արտացոլումն էր գտել Լենինին հասցեագրած նոյեմբերի 5-ի հեռագրում. «Հաղորդում եմ Ձեզ կողմնորոշվելու համար... Դրությունը Թուրքիայում պարզ չէ, այն կարող է վտանգավոր դառնալ, եթե տեղի ունենա Քեմալի համաձայնությունը Անտանտի հետ, քանի որ Քեմալի չեզոքացումը կհեշտացնի Անտանտի արշավանքը դեպի Բաքու, ուստի առանց մանրակրկիտ հետազոտության և Թուրքիայում դրությունը պարզելու, պետք չէ Հայաստանի հետ կնքել պայմանագիր, որը **Հայաստանին, նշանակում է՝ Անտանտին կհանձնի կարևորագույն ստրատեգիական մի շրջան՝ մահմեդական ազգաբնակչությամբ** և մեզ կներքաշի կոնֆլիկտի մեջ Թուրքիայի հետ: **Հայաստանի հետ պայմանագրի կնքումը առայժմ պետք է ձգձգել, ձևացնել, թե ցանկանում ենք Հայաստանի համար ձեռնտու հաշտություն, իսկ հետո ամեն ինչ կպարզվի»**[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Ընթերցողի ուշադրությունը հրավիրելով ընդգծված տողերի վրա՝ ուզում ենք, որ նա էլ խորհի ու համոզվի, թե ինչպիսին էր Ստալինը իր հակահայկական կեցվածքում: Մենք դեռ հետո էլ առիթ կունենանք նման փաստի ծանոթանալու, բայց կարծում ենք՝ այս մեջբերումն էլ

[1] *Նույն տեղում, էջ 328:*

[1] *Նույն տեղում, էջ 329:*

[2] *Նույն տեղում:*

[3] *РГАСПИ, ф. 558, оп. 1, д. 1987, л. 1:*

խոսուն է: Ընդամենը մի քանի նախադասություն, բայց ամբողջովին հակահայկական թույնով լցված: Եվ խնդիրը միայն այն չէ, որ նա համոզում է Լենինին հետաձգել պայմանագրի կնքումը, որով Թուրքերին հնարավորություն կտրվի ավարտին հասցնել Հայաստանի ջախջախումը: Այլև այն, որ Հայաստանը և Անտանտը նույնացնում է և մահմեդաբնակ հոչակում ստրատեգիական այն շրջանը՝ լինի դա Նախիջևան-Զանգեզուրը թե Կարսի մարզը՝ ամենաանխիղճ կերպով կեղծելով իրականությունը (հեռագրում շրջանը չի նշված, ավելի հավանականը Նախիջևան-Զանգեզուրն է, որը ստրատեգիական էր հոչակել ինքը՝ Ստալինը, Բաքվի միացյալ նիստում):

Ձեռքերը ծալած չէր նստել նաև Նարիմանովը: Նոյեմբերի 6-ին նրա նախագահությամբ գումարված Ադրբեջանի հեղկոմի նիստում քննարկվում է Հայաստանի հետ հաշտության պայմանագիր ստորագրելու Լեգրանի ներկայացրած նախագիծը և ընդունվում հետևյալ որոշումը. «Ադրբեջանի կառավարությունը՝ քննության առնելով Հայաստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանի Հայաստանի հետ կնքած պայմանագիրը, գտնում է այն միանգամայն անթույլատրելի, քանի որ Հայաստանի դաշնակցական կառավարության հետ ***նման պայմանագրի կնքումը նշանակում է հրաժարում արևելյան քաղաքականությունից****, ինչպես նաև* ***Ադրբեջանը հանձնում է դաշնակների ջախջախմանը****: Ուստի ԱԽՍՀ կառավարությունը թախանձագին առաջարկում է հրաժարվել պայմանագրի ստորագրումից»*[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.): Մնում է ավելացնել, որ այս որոշումը ևս չտապ ուղարկվել է Մոսկվա:*

Ինչ վերաբերում է Լեգրանին, ապա հարկ ենք համարում ընդգծել, որ նա հեշտությամբ չէր զիջել դիրքերը, տեղի չէր տվել: Նա դժգոհել էր, բողոքել, Սահակ Տեր-Գաբրիելյանի հետ միասին չէր ստորագրել միացյալ նիստում ընդունված որոշման տակ, անմիջապես կապվել էր Զիչերինի հետ և պահանջել արտահայտել իր կարծիքը Բաքվում ընդունված որոշման մասին, ու նաև ճշգրտված հրահանգներ տալ Հայաստանում իր անելիքների մասին և այլն: Սակայն շուտով պարզվեց, որ ոչ միայն Բաքուն, Մոսկվան էլ է դեմ պայմանագրի ստորագրմանը: Մենք այստեղ չենք անդրադառնա բոլոր այն հեռագրերին և հեռախոսագրույցներին, որոնք այդ օրերին փոխանակվեցին Լեգրանի և Զիչերինին միջև՝ մեր բուն խնդրից շատ չշեղվելու նպատակով, բայցևայնպես, որպեսզի ընթերցողի մոտ Մոսկվայի դիրքորոշման մասին ևս պատկերացնում կազմվի, վկայաբերենք մեկ-երկուսը: Նախ ասենք, որ Մոսկվա մեկնելու և պայմանագրի նախագծի վերաբերյալ բացատրություն տալու Լեգրանի պահանջը Զիչերինը սկզբից ևեթ մերժել էր՝ պատասխանելով, թե Մոսկվա գալու հարկ չկա, պետք է վերադառնալ Հայաստան և միջոցներ ձեռնարկել Թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար: Իսկ երբ Լեգրանը ծածկագիր հեռագրով կրկին պնդում է, որ միակ ելքը Հայաստանի հետ հաշտության պայմանագրի կնքումն է և միջնորդությունը՝ թուրքական զորքերը գրաված տարածքներից հետ քաշվելու վերաբերյալ, ապա դրան հետևում է Զիչերինի հետևյալ պատասխանը. «Հայաստանի հետ Ձեր պայմանագրի նախագիծը հնացել է: Իրադարձություններն առաջ են անցել, մնում է միայն միջնորդությունը, որպեսզի կանգնեցվի թուրքերի հարձակումը: Երբ թուրքերը դադարեցնեն հարձակումը, մնացածը կքննարկենք աստիճանաբար»[1]*: Հեռախոսային այդ խոսակցության ժամանակ նաև ասել էր, թե «Զանգեզուրի և Նախիջևանի հարցը դեռևս պետք է բաց մնա»: Նույն օրը՝ նոյեմբերի 7-ին, Լեգրանին ուղարկած ծածկագրում հայտնելով այն մասին, որ թուրքերին զենքի հետագա հանձնումը կամ չհանձնումը կախված կլինի Ստալինի ցուցումներից, վերջում ավելացնում է, թե «առայժմ չպիտի խոսել 1914թ. սահմանից այն կողմ նահանջելու մասին, այլ միայն հարձակումը դադարեցնելու և զինադադարի մասին»*[2]*:*

Կարծում ենք, այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ նոյեմբերյան այդ օրերին Հայաստանի հետ հաշտության պայմանագիր կնքելուն դեմ էին ոչ միայն Ստալինն ու Բաքուն, այլև Մոսկվան, իսկ Լեգրանը հաստատուն կերպով կանգնած էր Երևանում մշակված պայմանների ընդունման ու պայմանագրի ստորագրման դիրքերում: Բայց նա ընդամենը դեսպան էր և ազդել իր երկրի կառավարության քաղաքականության վրա, հասկանալի է, չէր կարող: Մինչդեռ մեր օրերում մամուլում և ոչ-մասնագիտական գրականության էջերում երբեմն հայտնվում է կարծիք, որ իբր Լեգրանը խաբում էր հայերին, բանակցությունները վարում էր ոչ թե պայմանագիր կնքելու, այլ Հայաստանի կառավարության ուշադրությունը շեղելու և թուրքերին ժամանակ շահելու ու նոր հարձակում սկսելու հնարավորություն ընձեռե-

[1] *ՀԱԱ, ֆ.4033, ց. 2, գ.1141, փ. 10, թ. 1:*

[1] ***Գ. Գալոյան****, նշվ. աշխ.. էջ 334:*
[2] *РГАСПИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 211:*

լու նպատակով: Ըստ որում, իրենց այդ կարծիքը հաստատող որևէ հիմնավոր փաստարկ չեն բերում: Կարծում ենք, վերը բերված արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև այն իրողությունը, որ բանակցությունների ժամանակաշրջանում ռազմական գործողությունները երբեք չեն դադարել, իսկ հոկտեմբերի 14-ին և 25-ին Կարսի ճակատում հայկական զորքերը ընդհանուր հակահարձակում են ձեռնարկել, որոնք դժբախտաբար հաջողություն չեն ունեցել, փաստում են, որ այդ կարծիքը չինծու է և իրականությանը բոլորովին չի համապատասխանում:

* * *

Նոյեմբերին Թուրք-հայկական պատերազմը թևակոխեց իր ավարտական փուլը, և հենց այդ շրջանում էլ լուրջ իրադարձություններ տեղի ունեցան նաև Շարուրում: Նախորդ շարադրանքում մենք արդեն նշել ենք, որ Շարուրի ճակատում ո՛չ սեպտեմբերին և ո՛չ էլ հոկտեմբերին թշնամին որոշակի ակտիվություն չէր ցուցաբերել: Պատճառը նախ հավանաբար այն էր, որ այստեղ գտնվող թուրքական զորամասը թվապես խիստ զիջում էր հայկական ուժերին (պատերազմը սկսելու պահին այդ զորամասում հաշվվում էր չուրջ 400 ասկյար) և հետո՝ Նախիջևանում տեղաբաշխված ռուսական զորամասը, որը համապատասխան հրաման չունենալով, չէր մասնակցել ռազմական գործողությունների: Ավելորդ չենք համարում նշելու, որ այդ հարցում ևս Լեգրանը որոշակի դեր է խաղացել: Սեպտեմբերի 30-ին[1] Թիֆլիսից հեռախոսակապով Բաքվում գտնվող Օրջոնիկիձեին հայտնելով թուրքական հարձակման և Սարիղամիշը գրավելու մասին՝ Լեգրանը, միաժամանակ, անթույլատրելի է համարում Նախիջևանի կողմից որևէ ռազմական գործողություն: «Նկատի ունենալով թուրքերի ներկայությունը Նախիջևանում, - ասել է Լեգրանը, - անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի անհնարին դառնա թուրքերի որևէ հարձակում Նախիջևանի կողմից, որը ըստ պայմանագրի գտնվում է կարմիր զորքերի պաշտպանության տակ: Դա շատ կարևոր է, խնդրում եմ դրա վրա հրավիրել 11-րդ բանակի հատուկ ուշադրությունը»[2]:

Ուշագրավ է, որ Օրջոնիկիձեն Լեգրանի այս առաջարկությանը որևէ կերպ չի արձագանքել, այլ առաջարկել է Շահթախթիի երկաթուղային հանգույցի վերաբերյալ Մոսկվայի հետ բանակցելուց առաջ նախ խոսել իրենց հետ, որպեսզի անհարմար վիճակ չստեղծվի: Ամեն դեպքում փաստը մնում է փաստ. Շարուրի ճակատում, սեպտեմբեր-հոկտեմբերին համեմատաբար հանգիստ էր, և դա այն դեպքում, երբ հարևան Սուրմալուի ճակատում Դրոյի գլխավորած հայկական ուժերը համառ և անզիջում կռիվներ էին մղում թվապես գերազանցող թուրք-քրդական ուժերի դեմ: Բանն այն է, որ հայկական հրամանատարությունը Շարուրի ճակատը կարևոր էր համարում, քանի որ թշնամին այդտեղից հեշտությամբ կարող էր ներխուժել Արարատյան դաշտ և սպառնալ մայրաքաղաք Երևանին: Այդ պատճառով էլ այստեղից զորքերի փոխադրություն այլ ռազմաճակատ սկզբնական շրջանում չէր կատարվել: Զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի կազմած տեղեկագրում ասված է, որ «Նախիջևանի ուղղությամբ կանգնած են՝ 3-րդ գունդը – 2000 սվին, 2-րդ գունդը (երկու բատալիոն) – 1000 սվին: Ընդամենը՝ 3000 սվին»:[1]

Տեղեկագիրը կազմվել էր պատերազմի առաջին օրերին, հետագայում դրությունը բավականին փոխվել էր: Հայկական ուժերի մի մասը փոխադրվել էր այլ ռազմաճակատ, իսկ թուրքական զորամասը, ընդհակառակը, հոկտեմբերին զգալի համալրում էր ստացել ի հաշիվ Ռուսաստանում եղած թուրք նախկին ռազմագերիներից Բաքվում կազմավորված զորամասերի: Խորհրդարանի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանը, որը, որպես քաջատեղյակ և ականատես անձնավորություն, Թուրք-հայկական պատերազմի մասին ուշագրավ աշխատություն է հրատարակել դեռևս 1921թ.՝ անդրադառնալով Հայաստանի դեմ նետած և տարբեր ճակատներում գործող թշնամական ուժերի թվաքանակին, գրում է, որ Նախիջևանի ճակատում գործում էին «տաճկական 1500 զորք, երկու ադրբեջանյան հեծելազնդի և ռուսական մեկ հեծելազնդի հետ...»[2]: Իսկ գեն. Շելկովնիկյանի և զինկոմ Մխչյանի ստորագրությամբ դեկտեմբերի 25-ին Երևան՝ հայկական կարմիր բանակի հրամանատարությանն ուղարկված հեռագրում հայտնվում էր, որ «Շահթախթիում և Նորաշենում գտնվում են մեկական թուրքական գնդեր: Արաս-Կուլի բեկը[3] գտնվում է Սադարակում»[4]:

---

[1] Յու. Բարսեղովի հրատարակած փաստաթղթերի ժողովածուում որպես այս խոսակցության ամսաթիվ սխալմամբ նշված է նոյեմբերի 30-ը:

[2] „Геноцид армян...", стр. 272.

[1] **Ս. Վրացյան,** նշվ. աշխ. էջ 435:

[2] **Հ. Տեր-Հակոբյան**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս 1921, էջ 93:

[3] Արաս-Կուլի բեկը ադրբեջանցիներից կազմավորված այսպես կոչված «Կարմիր տաբորի» հրամանատարն էր:

[4] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 67, թ. 19:

Ինչպես տեսնում ենք, հոկտեմբերին թշնամին կարողացել էր այս ճակատում ևս ուժերի գերազանցություն ստեղծել: Չնայած դրան՝ հակառակորդը դեռևս ակտիվություն չէր ցուցաբերում, և հոկտեմբերին գեն. Շելկովնիկյանի զորամասը, թեև թվակես արդեն նոսրացած, բայց շարունակում էր իր հսկողության տակ պահել Շահթախթին և ամբողջ Շարուրի դաշտը: Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ Մակվի խանության հետ առևտրական պայմանագրի կնքման ժամանակ, այսինքն՝ հոկտեմբերի 23-ին, Շահթախթին դեռևս գտնվում էր հայերի ձեռքին: Եվ միայն այն բանից հետո, երբ հոկտեմբերի 30-ին ընկավ Կարսը, և նոյեմբերի սկզբին թուրքական բանակը մոտեցավ Ալեքսանդրապոլին, Շարուրի ճակատում ևս թշնամին սկսեց ակտիվանալ և տեղական ուժերի ու ռուսական զորամասի օգնությամբ անցավ վճռական գործողությունների: Արխիվներում պահպանված օպերատիվ հաղորդագրությունները ցույց են տալիս, որ ռազմական ակտիվ գործողությունները տեղի են ունեցել նոյեմբերի 5-7-ը և 11-18-ը:

Նոյեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության զորքերի գլխավոր հրամանատար գեն. Նազարբեկյանը Շարուրի ճակատի հրամանատար գեն. Շելկովնիկյանի նոյեմբերի 5-ի, 6-ի և 7-ի օպերատիվ հաղորդագրությունները ուղարկում է վարչապետ և արտգործնախարար Հ. Օհանջանյանին և առաջարկում բողոք ներկայացնել ՌԽՖՍՀ կառավարությանը օգոստոսի 10-ի համաձայնագրի նման խախտման կապակցությամբ: Պարզվում է, որ այդ օրերին թշնամական ուժերը բազմիցս փորձել են գրավել Դարալագյազի դարպասները, ճեղքել հայկական ուժերի ձախ թևը և Շահթախթին կտրել Թիկունքից: Դարալագյազի ուղղությամբ թշնամու բոլոր գրոհները հետ էին շպրտվել, Խոկ և Կիվրագ գյուղերի վրա հարձակումները ևս կասեցվել էին նոյեմբերի 5-ին և 6-ին[1]: Սակայն 7-ի առավոտյան դրությունը փոխվում է. հակառակորդի հեծելազորին հաջողվում է հանկարծակի և սրընթաց հարձակումով նախ գրավել Խոկը, այնուհետև Կիվրագը, Ղարաբաղլարը, իսկ երեկոյան կողմ՝ նաև Փուսիանը: Դա մեր զորքերի համար լուրջ պարտություն էր: Ճիշտ է, հայկական ուժերի մեծ մասին հաջողվեց նահանջել դեպի Դարալագյազ և դիրքեր գրավել Ուլիա-Նորաշենում, բայց քիչ չէին նաև կորուստները: Ուշագրավ է, որ գեն. Շելկովնիկյանը իր շտաբով 7-ի առավոտյան 8 անց կեսին դեռևս գտնվում էր Շահթախթիում, իսկ երեկոյան ժամը 9 անց 10 րոպեին արդեն հաստատվել

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 597, թ. 132-133:

էր Նորաշեն կայարանում, որտեղից էլ գնդ. Պրիտոմանովի հետ հեռախոսային ուղիղ կապով հաղորդել էր վերոհիշյալ իրադարձությունների մասին: Իսկ դա նշանակում է, որ Շահթախթիում գտնվող իր շտաբով և այնտեղի չորս վաշտով ու հրետանային մարտկոցով հանդերձ նահանջել ու հաստատվել էր Նորաշեն կայարանում: Անհետաքրքիր չէ իմանալ, որ հակառակորդը հարձակվում էր կարմիր դրոշներ պարզած. «Ես ինքս տեսա, թե ինչպես բոլշևիկյան հեծելազորը սլանում էր կարմիր դրոշներով»[1], - ասել է Շելկովնիկյանը վերոհիշյալ հեռախոսազրույցում: Ընթերցողին թյուրիմացության մեջ չգցելու համար ավելացնենք, որ Շելկովնիկյանը «բոլշևիկյան» ասելով նկատի չուներ միմիայն ռուսներին: Նա իր հաղորդագրություններում ընդհանրապես այդ ճակատում կռվող թշնամական բոլոր ուժերին (թուրք-թաթարական, ռուսական) բոլշևիկյան էր անվանում հավանաբար նրա համար, որ Նախիջևանը հայտարարվել էր խորհրդային, և թշնամին էլ հարձակվում էր կարմիր դրոշներով: Իսկ որ նոյեմբերի 7-ի հարձակմանը մասնակցել է նաև Նախիջևանում հաստատված ռուսական հեծյալ բրիգադը, դա փաստ է, և այդ մասին կա նաև Նախիջևանում ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի կողմից արտակարգ կոմիսար նշանակված Վելիբեկովի մի զեկուցագրում. «Նոյեմբերի 7-ին հեծյալ բրիգադը թուրքերի և ապըստամբ փախստականների հետ միասին հարձակման անցան Շարուրում, - գրում է Վելիբեկովը: - Բախտը ժպտաց, Շարուրը մաքրվեց»[2]:

Ինչպես հայտնի է, նոյեմբերի 7-ին Հայաստանի կառավարությունն ընդունեց Կարաբեքիր փաշայի ներկայացրած զինադադարի պայմանները, և բոլոր ռազմաճակատներում (Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Շարուրի) կրակը դադարեց: Սակայն նոյեմբերի 8-ին Անկարայի կառավարությունը զինադադարի նոր պայմաններ ներկայացրեց, որոնք չափազանց ծանր էին և հավասարազոր էին կապիտուլյացիայի[3]: Նոյեմբերի 10-ին Հայաստանի կառավարությունը մերժեց այդ նոր պայմանները և ժողովրդին կոչ արեց լարել բոլոր ուժերը անարգ թշնամուն հակահարված տալու համար: 11-ին ռազմական գործողությունները բոլոր ճակատներում վերսկսվեցին: Այդ օրը՝ ժամը 16 անց 15 րոպեին, բանակի հրամանատարին ուղարկած հեռագրում գեն. Շելկովնիկյանը հայտնում է, որ առավոտյան երկրորդ գնդի վաշ-

[1] Նույն տեղում, էջ 133:
[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 24:
[3] Մանրամասն տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ. էջ 291-295:

տերից մեկը հարձակման է անցել Կուչչի-Դեմուրչի գյուղի ուղղությամբ, սակայն հակառակորդը, մարտը չընդունելով, հետ է քաշվել Մախտա-Դուդանգայի շրջան, և որ գյուղի մատույցներում ընդառաջ է եկել մի հայ երեխա և հանձնել նամակ հետևյալ բովանդակությամբ. «Շարուրում գործող հայկական ուժերի հրամանատարությանը. Հայաստանի և Կարմիր Թուրքիայի միջև զինադադարի վերականգնման մասին իմ բարձր հրամանատարության կողմից ինձ տեղեկացնելուց հետո, իմ կողմից հարձակումը դադարեցված է: Ձեր կողմից իմ շրջանում ռազմական գործողությունները դեռևս շարունակվում են: Ներկա գրության պատճենը հայտնելով իմ հրամանատարությանը, դրանով հայտարարում եմ, որ եթե Ձեր կողմից ռազմական գործողությունները չդադարեցվեն, ապա զինադադարի խախտման պատասխանատվությունը կընկնի Ձեզ վրա»[1]:

Նամակի տակ դրված էր Շարուրում գործող թուրքական ուժերի հրամանատարի ստորագրությունը: Այստեղ, իհարկե, որևէ թյուրիմացություն չկա, ուղղակի վատ կապի պատճառով Շարուրի թուրքերը տեղեկացված չէին ռազմական գործողությունները վերսկսելու մասին: Ավելացնենք, որ նամակաբեր հայ երեխան այլ տեղեկություններ էլ էր հայտնել: Նա մասնավորապես ասել էր, որ Նորաշեն կայարանում շատ զորք կա, և նրանց մեջ նաև շատ ռուսներ կան, որոնք «10 փախստական հայերի պաշտպանել են թուրքերից, իսկ մնացած 10-15 հայերին թուրքերը և թաթարները սպանեցին»[2]: Հեռագրում Շելկովնիկյանը նաև հայտնում է, որ երկրորդ գնդի հրամանատարին հրամայել է մեկ վաշտով և Մակեդոնի հեծյալներով թշնամուն դուրս քշել Արփաչայի ափով Դարալագյազ տանող ուղուց, գրավել Զեյվա, Մախտա Դուդանգա գյուղերը, ամրացնել Ուլիա-Նորաշենից մինչև Կուչչի-Դեմուրչի ձգվող բարձունքները:

Ռազմական հաղորդագրությունից դժվար չէ տեսնել, որ հաջորդ օրերին՝ մինչև նոյեմբերի 16-ը, Կուչչի-Դեմուրչին և շրջակա գյուղերը ձեռքից ձեռք են անցել: Նոյեմբերի 15-ի առավոտյան հայկական ուժերը հակահարձակման են անցնում և թշնամուն դուրս քշում Կուչչի-Դեմուրչիից, բայց այդ օրը երեկոյան թշնամուն հաջողվում է շրջանցել հայկական ուժերի ձախ թևը և հարկադրել վերջիններիս նահանջելու դեպի Գայլի Դրունք: Եվ քանի որ ճակատը ճեղքվել էր, և թշնամին դուրս էր եկել Սաղարակ գյուղի վրա, ուստի Շելկովնիկյանի հրամանով հայկական ուժերը հետ են քաշվում և դիրքեր բռնում «Սմոքենդ-628 բարձունք-Զինջիրլու-Կաղրլու գծի վրա»: Գեն. Շելկովնիկյանը նոյեմբերի 16-ին տվյալներ է հաղորդում նաև իր հրամատարության տակ գտնվող ուժերի մասին, այն է. «երրորդ գնդի 4 վաշտ, երկրորդ գնդի մոտ 6 վաշտ, սահմանապահ ջոկից 80 սվին, միլիցիայի պահեստային ուժերից 40 սվին, 6 հրանոթ և գրահագնացքը»[1]: Հայտնելով այս ամենի մասին և տեղեկացնելով, որ ինքը իր շտաբով հաստատվելու է Ավշարում, Շելկովնիկյանը վերջում ավելացնում է. «...զեկուցում եմ, որ զինվորները բոլորովին չեն կռվում, ամբողջ վաշտերով փախչում են՝ հենց որ երևում են հակառակորդի հեծելազորի ոչ մեծ խմբեր Լյուիս գնդացիրներով և կարմիր դրոշներով»[2]:

Ի դեպ է ասել, որ թուրքերի կողմից կարմիր դրոշների օգտագործումը թե՛ Կարսի և թե՛ Շարուրի ճակատներում որոշակի ազդեցություն էր թողնում հայ զինվորների վրա այն առումով, որ նրանց դիտում էին որպես ռուս բոլշևիկների դաշնակից: Նման մտածելակերպը գնալով ավելի ու ավելի էր արմատավորվում պատերազմի վերջին օրերին: Նոյեմբերի 15-ին Օրթլու-Թազաքենդ գյուղի մոտ տեղի ունեցած կռիվներից հետո մարտադաշտում մնացել էր սպանված ռուս զինվորի դիակ: Այս դեպքը ավելի ամրապնդեց Թշնամու կողմից ռուսների մասնակցության մասին տարածված կարծիքը: Ինչ վերաբերում է Լյուիս տիպի ձեռքի գնդացիրներին, որոնցով զինված էր թուրքական հեծելազորը, ապա դա էլ առավելություն էր տալիս մարտ վարելու տեսանկյունից (հայ հեծելազորայինները զինված էին հրացաններով): Վրաստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչության զինվորական կցորդ Սիտինը իր ղեկավարությանը ներկայացրած զեկուցագրում, վերլուծելով պատերազմում Հայկական բանակի պարտության պատճառները և նշելով այն իրողությունը, որ Հայաստան ներխուժած թուրքական բանակը թե՛ զինվածությամբ, թե՛ մարտական պատրաստվածությամբ և թե՛ թվական կազմով գերազանցում էր Հայկական բանակին, հատկապես առանձնացնում է թուրքական հեծելազորը, որը զինված էր ձեռքի գնդացիրներով և մարտի ժամանակ շրջանցում էր հակառակորդին թևերից և գնդացրային անկանոն և ուժեղ կրակով առաջացնում խուճապ[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 250:

[2] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 300:

[2] Նույն տեղում:

[3] Հայկական բանակի պարտության պատճառների վերլուծությունը տես **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 347-355:

Ինչևէ, Շարուրի ճակատից ռազմական գործողությունների մասին վերջին հաղորդագրությունը ստացվել է նոյեմբերի 17-ի երեկոյան: Նրանում ասված էր, որ խճուղու ուղղությամբ և Սարայ-բուլաղ լեռնաշղթայի արևելյան լանջերով հակառակորդի առաջխաղացման բոլոր փորձերը հաջողությամբ հետ են մղված: Սակայն հաղորդագրության զգալի մասը նվիրված է այն ախտին՝ դասալքությանը, որ համակել էր Հայկական բանակը Կարսի անկումից հետո. **«Երկրորդ գնդում առավոտյան ժամը 10-ի դրությամբ մնացել է մոտ 100 զինվոր**, - կարդում ենք գեն. Շելկովնիկովյանի այդ հեռագրում, - **գիշերվա ընթացքում դասալքել են 70 զինվոր**: Ըստ Մակեդոնի զեկուցման, նրա մոտ մնացել են 25 ձիեր, մնացածը ուղարկվում են Ղամարլու պայտելու համար: Մակեդոնի անձնական զեկուցումով, 2-րդ գնդի զինվորները՝ իր հեծելազորայինների հետ խոսելիս, հայտարարել են, որ իրենք չեն կռվելու, որովհետև իրենց դիմաց ռուս բոլշևիկներ են և նույնիսկ քարոզել են իր հեծելազորայինների մեջ: Երկրորդ գնդի հրամանատարը հայտնում է, որ իր գունդը միանգամայն անմարտունակ է և իր միակ հույսը Աղաբեկի ձիավորներն են և սպասվող կամավորականները: Ղամարլուում և շրջանում կազմակերպվել է դասալիքների որս, **բայց գիշերներով դասալքում են, կոմիսարի միջոցով իմ կողմից բոլոր միջոցները ձեռնարկված են, բայց դրական արդյունքներ չկան»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Անշուշտ, մեր խնդիրը չէ անդրադառնալ մյուս ռազմաճակատներում ստեղծված իրադրությանը, ուստի բավարարվում ենք արձանագրելով, որ նոյեմբերյան այդ օրերին հաղորդագրություններ ստացվում էին նաև մյուս ռազմաճակատներից: Դասալքությունը, զինվորների և սպաների միջև ծայր առած անվստահությունը և մի շարք այլ հանգամանքներ, որոնց դարձյալ մենք չենք անդրադառնում թեմայից չշեղվելու պատճառով, իսկապես որ հայկական զինված ուժերը դարձրել էին անմարտունակ, պատերազմի շարունակումը՝ անհեռանկարային: Այսպիսի պայմաններում նոյեմբերի 15-ից լույս 16-ի գիշերը Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունել զինադադարի՝ նոյեմբերի 8-ի Թուրքական խիստ ծանր պայմանները[2], որոնք, ինչպես արդեն նշել ենք, հավասարազոր էին կապիտուլյացիայի և կնքել զինադադար: Այդ խնդրի իրագործումը հանձնարարվում է ներքին գործերի նախարար

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 315:

[2] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 291-301:

Սարգիս Արարատյանին, որը և նոյեմբերի 16-ին մեկնում է ռազմաճակատ: Հաջորդ օրը՝ 17-ին, Ալեքսանդրապոլ է ուղարկվում կապիտան Յաբլոկովը (Խնձորյան)՝ կառավարության որոշումը և Կարաբեքիրին ուղղված գեն. Նազարբեկյանի նամակը Թուրքական հրամատարությանը հանձնելու համար: Նոյեմբերի 18-ի առավոտյան Ս. Արարատյանը Աղինից Հ. Օհանջանյանին հեռագրով տեղեկացնում է, որ արդեն վերադարձել է կապիտան Յաբլոկովը և բերել Կարաբեքիր փաշայի պատասխան նամակը գեն. Նազարբեկյանին, որ թեև ռազմական գործողությունների դադարեցնելու մասին հրամանը պետք է տրվի երկու կողմից միաժամանակ, բայց Քյազիմ Կարաբեքիրը արդեն իր զորքերին հրամայել է դադարեցնել հարձակումը: Ս. Արարատյանը նաև հայտնում է, որ ինքը անհապաղ մեկնում է Ալեքսանդրապոլ՝ զինադադարի համաձայնագիրը ստորագրելու, և ավելացնում. «...նկատի ունենալով Շարուրում գործող Թուրքական բանակի զորամասերի հետ կապի բացակայությունը, Քյազիմ Կարաբեքիրը խնդրել է մեզ անհապաղ բանագնացներ ուղարկել և Թուրքական զորամասերին տեղեկացնել զինադադարի կնքման մասին»[1]:

Զինադադարի համաձայնագիրը Ս. Արարատյանը և Քյազիմ Կարաբեքիր փաշան ստորագրեցին նոյեմբերի 18-ի երեկոյան Ալեքսանդրապոլում: Այդ նույն օրը Հայկական բանակի գլխավոր հրամանատարը հրաման արձակեց ռազմական գործողությունները դադարեցնելու և զինադադարի պայմաններով նախատեսված նոր դիրքեր հետ քաշվելու մասին (Թուրքական զորքերը մնում էին իրենց գրաված դիրքերում): Կրակը դադարեցվեց նաև Շարուրի ճակատում, որտեղ մինչև նոյեմբերի վերջը հայկական ուժերը մնացին իրենց գրաղեցրած դիրքերում: Սակայն նոյեմբերի 27-ին Կարաբեքիրը պահանջեց, որ հայերը հետ քաշվեն նաև Շարուրին հարող տարածքներից, ինչը և կատարվեց:

Պատերազմն ավարտվեց, հրանոթները լռեցին, բայց խնդիրները մնացին ու փոխադրվեցին դիվանագիտության բնագավառ: Հայ դիվանագիտության առաջ դժվարագույն խնդիր էր ծառացել. կկարողանա՞ բանակի կորցրածից փրկել, ետ բերել ինչ-որ բան, հայ ժողովրդի գոյապահպանության համար ապահովել անհրաժեշտ պայմաններ: Այդ հարցերի պատասխանը Ալեքսանդրապոլում գումարվելիք կոնֆերանսը պետք է տար:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 329:

* * *

Զինադադարի նոյեմբերի 18-ի համաձայնագրով նախատեսվում էր դարձյալ Ալեքսանդրապոլում, մեկ շաբաթվա ընթացքում գումարել կոնֆերանս, որտեղ կմշակվեն հաշտության պայմանները ու կկնքվի երկու երկրների հարաբերությունները կարգավորող համապատասխան պայմանագիր: Անշուշտ, մեր խնդիրը չէ լուսաբանել կոնֆերանսի աշխատանքներն ամբողջությամբ[1], ուստի կանդրադառնանք միմիայն տարածքային սահմանագծման հարցերին այնքանով, որքանով որ դրանք կառնչվեն մեր հետապնդած խնդրին: Բայց նախ տեսնենք, թե այդ հարցում պատվիրակությունն ինչ հրահանգավորում էր ստացել իր կառավարությունից:

Պատվիրակության ղեկավար[2] Ալ. Խատիսյանն իր հայտնի գրքում գրում է.

«Բանակցությունները վարելու համար մշակված էին հրահանգներ: **Որոշված էր այն նվազագույն սահմանագիծը Թուրքաց Հայաստանի, որմե ավելի կառավարությունը չէր ուզեր զիջումներ ընել**: Բայց մյուս կողմե հրահանգ տրված էր անպատճառ հաշտության պայմանագիր կնքել:

Այդպիսի հրահանգները, հարկավ, դրած էին պատվիրակությանը ծանր դրության մեջ. անհրաժեշտ զիջումներու մեջ որոշ սահմաններ պահել, բայց միևնույն ժամանակ հնարավորություն չունենալով զենքի զորությամբ շարունակել պատերազմական գործողությունները՝ այնուամենայնիվ կնքել հաշտություն»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Այսքանը միայն, և ընթերցողին այդպես էլ անհայտ է մնում, թե ո՞րն էր այն նվազագույն սահմանագիծը, որից ավելի կառավարությունը չէր ուզում զիջել: Ինչպես նաև ոչինչ չի ասում առավելագույն պահանջների մասին և դրանով իսկ ստեղծում տպավորություն, թե այդ խնդրի լուծումը կառավարությունը թողել է պատվիրակության

[1] Կոնֆերանսի աշխատանքների մանրամասն վերլուծությունը տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922), Եր., 1979, էջ 92-120:

[2] Պատվիրակության կազմում էին Ա. Գյուլխանդանյանը (ֆինանսների նախարար) և Ստ. Ղորղանյանը (Կարսի նահանգապետ): Պատվիրակության հետ Ալեքսանդրապոլ էին մեկնել նաև խորհրդականներ, փորձագետներ, թարգմանիչներ (ընդհանուր թվով՝ 16 հոգի):

[3] **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք 1930, էջ 257:

հայեցողությանը: Մինչդեռ Խորհրդարանի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանը ավելի կոնկրետ տեղեկություններ է հայտնում: Նա վկայում է, որ Համո Օհանջանյանի կառավարությունը պատվիրակությանը հրահանգել էր «պաշտպանել առավելագույն պահանջները, **Թուրքերը պետք է պարպեն մինչև 914 թվի սահմանները, իսկ Թուրքա-Հայաստանեն պիտի պահանջվեր Վան, Մուշ և այդ գծով մինչև Ռիզե**: Եթե անոնք համաձայն են մեր այս առավելագույն առաջարկներուն, այն ատեն միայն դաշնագիրը պիտի ստորագրվեր՝ իբրև հավասար կողմ: Եթե Թուրքերը առաջ չերթային այդ առաջարկին, այն ատեն **երևան պիտի բերվեր Պրեստ-Լիտովսկի դաշնագիրը** և ստորագրելով հանդերձ պայմանագիրը, պիտի ավելացներ, որ այդ ոչ թե համաձայնություն է, այլ պարզ հանձնատվության ենթարկումը ուժին և հաղթողին»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Այսպես ուրեմն. առավելագույն պահանջ՝ Վան, Մուշ և եկք դեպի Սև ծով Ռիզե նավահանգստով (այսինքն՝ հրաժարում Սևրի պայմանագրով նախանշված տարածքների մեծ մասից) և, նվազագույն պահանջ՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշված սահմանագիծ (այսինքն՝ Կարսի մարզի հանձնում Թուրքերին) և ոչ ավելին: Այլ կերպ ասած, պատվիրակությունը լիազորված չէր Կարսի մարզից զատ Ռուսա-Հայաստանից այլ տարածքներ (Սուրմալու, Շարուր-Նախիջևան) զիջելու Թուրքիային:

Ինչպե՞ս լուծեց պատվիրակությունն իր ստանձնած պարտականությունները կտեսնենք իր տեղում: Իսկ այժմ նշենք, որ այս հրահանգները մնացել էին անփոփոխ, թեև պատվիրակության Ալեքսանդրապոլ հասնելու նույն օրը՝ 24-ին, Երևանում կազմավորվել էր նոր կառավարություն Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Վերջինս պատվիրակության լիազորությունների մասին որևէ հայտարարություն չէր արել, իսկ Խատիսյանն էլ միայն նոյեմբերի 27-ին էր նման հարցումով դիմել կառավարությանը և ստացել նրա համաձայնությունը նախորդ կառավարության մշակած պայմաններին:

Մինչդեռ դրանից երկու օր առաջ՝ նոյեմբերի 25-ին, պատվիրակությունն արդեն պատրաստել էր տարածքային հարցերում այն պահանջները, որ պետք է ներկայացվեին Թուրքերին: Դա տեղի էր ունեցել Կարաբեքիրի փոխայցելությունից (նոյեմբերի 25-ի առավոտյան)[2]

[1] **Հ. Տեր-Հակոբյան**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 119:

[2] Հայ պատվիրակները այցելել էին Կարաբեքիրին Ալեքսանդրապոլ հասնելու նույն օրը՝ նոյեմբերի 24-ին:

հետո, որի ժամանակ էլ պայմանավորվել էին առաջին պաշտոնական նիստը գումարել նույն օրը ժամը 5-ին: «Երբ Թուրքերը գնացին, - գրում է Խատիսյանը, - մեր պատվիրակությունը զբաղվեցավ այն պայմաններու ձևակերպութեամբ, որոնք պետք է պաշտպաներ խորհրդաժողովի միջոցին»[1]: Իսկ նիստի մասին խոսելիս, ավելացնում է. «...մենք պատրաստեր էինք մեր հայտարարությունները ֆրանսերեն լեզվով և նույնպես քարտես մը նախագծած սահմաններով»[2]: Սակայն առաջին պաշտոնական նիստը հայ պատվիրակների համար անսպասելի ընթացք է ստանում: Խատիսյանի իսկ առաջարկությամբ կոնֆերանսում նախագահողի պարտականությունները ստանձնած Կարաբեքիրը աշխատանքները տանում է իր նախագծած սցենարով և իսկույն ևեթ՝ որպես բանակցությունները շարունակելու նախապայման, առաջ քաշում Սևրի պայմանագրից հրաժարվելու պահանջ: Խատիսյանի բոլոր փորձերը՝ համոզելու թուրքական պատվիրակությանը, որ «Սևրի դաշնագրից հրաժարվելուց առաջ Հայաստանի կառավարությունը պետք է գիտենա, թե ինչպես են որոշվում կոնֆերանսի հիմնական հարցերը, օրինակ տերիտորիայի հարցը՝ ինչպես Տաճկա-Հայաստանում, նույնպես և Ռուսա-Հայաստանում, ելքը դեպի ծով և այլն», արդյունք չեն տալիս[3]: Կարաբեքիրը պնդում է իր պահանջի վրա և հայ պատվիրակները ստիպված են լինում ժամանակ խնդրել՝ Երևանի համաձայնությունը ստանալու համար:

Կոնֆերանսի աշխատանքների հետ ծանոթությունը ցույց է տալիս, որ Խատիսյանի բնութագրմամբ «արտաքուստ չափազանց սիրալիր ու քաղաքավարի» այդ թուրք զինվորականը՝ Կարաբեքիր փաշան, նաև բավականին թրծված դիվանագետ էր, գործում էր խիստ նպատակասլաց, ժամանակից չուտ չէր բացում իր խաղաթղթերը: Պատվիրակության անդամ Վահան Մինախորյանը վկայում է, որ առաջին ոչ պաշտոնական հանդիպումների (նոյեմբերի 24-ի և 25-ի) ժամանակ նա ավելի շատ խոսում էր ազգերի ինքնորոշման իրավունքի, հանրաքվե կատարելու, փոխադարձ տրանզիտի, գաղթականների վերադարձի, նույնիսկ Հայաստանին պարենով օգնելու մասին և այլն: Ճիշտ է, նա խոսում էր նաև «Թուրքիո ապահովության իրական երաշխիքի» մասին[4], բայց առանց պարզաբանելու, թե ինչ է դա նշանակում: Հետո

[1] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ, էջ 263:
[2] Նույն տեղում, էջ 264:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, մաս I, թ. 47:
[4] Նույն տեղում, գ. 636, թ.1:

միայն պիտի պարզվեր, որ դա նշանակում էր Սևրի պայմանագրից հրաժարում և Հայաստանի Հանրապետության անդամահատում այն աստիճանի, որ նա այլևս Թուրքիայի համար որևէ վտանգ չներկայացնի: Ահա ինչու միայն այն բանից հետո, երբ նոյեմբերի 27-ին՝ կոնֆերանսի երկրորդ նիստում, լսեց Խատիսյանի հայտարարությունն այն մասին, որ Հայաստանի կառավարությունը «ցանկանալով նոր էջ բացանել երկու պետությունների փոխհարաբերությունների մեջ և երկրատև դաշինքով բարեկամական հարաբերություններ հաստատել Տաճկաստանի և Հայաստանի միջև, - հրաժարվում է Սևրի դաշնագրից»[1], համաձայնեց լսել հայոց պահանջների մասին: Այդ օրը կողմերը պայմանավորվեցին մինչև հաջորդ նիստի գումարումը մշակել տարածքային սահմանագծման վերաբերյալ նախագիծ և բացատրական զեկուցագրի հետ մեկտեղ ներկայացնել միմյանց: Ըստ որում, հաջորդ նիստի գումարման օրվա մասին որևէ հայտարարություն չէր արվել:

«27-ին մինչև ուշ գիշեր, - գրում է Խատիսյանը, - մենք կը գրեինք մեր բացատրական զեկուցագիրը և կը գծեինք քարտեսի վրա մեր պահանջած սահմանները»[2]: «Բացատրական զեկուցագրին» մենք չենք անդրադառնա, քանի որ նրանում արծարծված հարցերը (զանազան երկրներից հայերի Հայաստան վերադարձողների հնարավոր թվաքանակի և այլն) դուրս են մեր հետաքրքրության շրջանակներից: Ինչ վերաբերում է տարածքային պահանջներին, որոնք զետեղված էին քարտեզի վրա, ապա այդ մասին կա Խատիսյանի հետևյալ վկայությունը. «Հայաստանի կառավարութեան կողմէ մեզի տրված հրահանգներուն համաձայն, մենք վճռել էինք պաշտպանել Հայաստանի սահմանները՝ մտցնելով անոնց մեջ ամբողջ ռուսական Հայաստանը, Վան, Մուշ, ամբողջ Վանա լիճը, Բիզե նավահանգստով՝ թողնելով Էրզրումը և Տրապիզոնը Թուրքերուն: Էրզրումը և Տրապիզոնը Թուրքերուն թողնելը մենք կը համարեինք իբրև զիջում մեր կողմէն»[3]:

Թե ինչպես է արձագանքել Կարաբեքիրը Խատիսյանի ներկայացրած քարտեզին (հանձնվել էր նոյեմբերի 28-ին), կտեսնենք քիչ հետո, իսկ հիմա նախ փորձենք պարզել ներկայացված պահանջների վերաբերյալ Խատիսյանի հիմնավորումը. «Իհարկե, եթե պատվիրակությունը այդ ժամանակ կանգնած լիներ բացառապես հաղթողներու և պարտվածներու տեսակետի վրա, և այդ պարագային Հայաստանը,

[1] Նույն տեղում, գ. 636, մաս 1-ին, թ. 64:
[2] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 267:
[3] Նույն տեղում, էջ 263:

*իհարկե, պարտված կողմն էր, ան պետք է համաձայներ, որ խոսք կարող է լինել միայն ամենահամեստ սահմաններու մասին: **...Բայց մեր պատվիրակությունը կը կարծեր, որ Թյուրքերը կը ցանկանան կենսունակ Հայաստանի մը ստեղծումը**. որը օգտակար էր իրենց պետական շահերու տեսակետեն, ինչպես որ այդ մասին շարունակ կը հայտարարեին Թյուրք պետական գործիչները»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Ինչպես տեսնում ենք, Թուրքական դիվանագիտության գործադրած ջանքերը՝ հայ քաղաքական գործիչների մոտ առաջ բերելու մտայնություն, որ իբր իրենք շահագրգռված են, որ Հայաստանը կենսունակ լինի, անտեղի չէր անցել: Արդյո՞ք դա հայ քաղաքական և պետական գործիչների դյուրահավատության, թե մեկ այլ բանի հետևանք էր, այստեղ մենք չենք քննարկի, այլ կբավարարվենք միայն արձանագրելով, որ ոչ վաղ անցյալի դեպքերը և հենց զինադադարի Թուրքական ահավոր ծանր պայմանները, որոնք հավասարազոր էին կապիտուլյացիայի, նրանց պետք է հակառակի մեջ համոզեին:

Խոսելով տարածքային-սահմանային խնդիրների վերաբերյալ հայկական պատվիրակության կազմած քարտեզի մասին, չենք կարող չրջանցել մի հարց ևս, այն է. ինչո՞ւ են հայ պատվիրակները Կարաբեքիրին ներկայացրել Հայաստանի ամբողջական քարտեզը՝ նրա մեջ ներառելով Ռուսա-Հայաստանն ամբողջությամբ, և ոչ թե միայն Թուրքիայի հետ իրենց պահանջած սահմանագիծը: Դա մեզ տարօրինակ է թվում այն պարզ պատճառով, որ Հայաստանը տարածքային խնդիրներ ուներ նաև Վրաստանի և Ադրբեջանի հետ ու Թուրքիայի գործը չէր, թե ինչպես դրանք կլուծվեն նշված հարևանների հետ, կամ կլուծվե՞ն, թե՞ ոչ: Մնում է ենթադրել, որ դիմելով այդ քայլին, հայ պատվիրակները, ըստ երևույթին, ցանկացել են հասնել նրան, որ Թուրքիան ճանաչի Հայաստանի իրավունքները Անդրկովկասյան հանրապետությունների հետ վիճելի համարվող տարածքների վրա: Ինչ էլ որ լիներ հայ պատվիրակների նպատակը, մի բան փաստ է. Կարաբեքիրը հենց այդպես է հասկացել ու պատասխանել. «Վրաստանի և Ադրբեջանի տերիտորիայում գտնվող պահանջված հողամասերը այստեղ խնդրո առարկա դարձնելը մենք նպատահարմար չենք գտնում՝ ի նկատի ունենալով Թուրքիայի խաղաղասիրական քաղաքականությունը»[2]:

Ինչ խոսք, որ եթե Թուրքիան իրոք անչահախնդիր լիներ ու չեզոքություն պահպաներ կովկասյան հանրապետությունների միջև տարածքային վեճերի հարցում, ապա գուցե կարելի լիներ նրա վարած քաղաքականությունը որակել որպես «խաղաղասիրական»: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ Թուրքիան՝ ո՛չ անցյալում և ո՛չ էլ այդ օրերին, անչահախնդիր ու չեզոք չէր, այլ հակառակը՝ հենց ինքն էր հրահրում և օգտագործում տարածքային հավակնությունների պատճառով ծագած հակասությունները՝ սեփական զավթողական նպատակների իրականացման համար: Հիշենք, թեկուզ, 1919 հուլիս-օգոստոսին Թուրքիայի հրահրանքով և ակտիվ մասնակցությամբ Շարուր-Նախիջևանում ծագած հակահայկական ապստամբությունը: Դա ավելի քան մեկ տարի առաջ էր, Կարաբեքիրը գուցեև «մոռացել» էր այդ մասին: Բայց ի՞նչ որակում տանք Հայաստանի դեմ պատերազմի սանձազերծման գործում հայ-վրացական տարածքային վեճն Անկարայի կողմից օգտագործելու փաստին, որի մասին տեղեկությունը հայտնել էր ինքը՝ Կարաբեքիրը նախորդ օրը, նոյեմբերի 29-ի երեկոյան Խատիսյանի հետ առանձին տեսակցության ժամանակ: Որպեսզի ընթերցողն էլ տեսնի, թե ինչի մասին է խոսքը, ու նաև համոզվի թե որքան կեղծիք ու երկդիմություն կար Կարաբեքիրի վերը մեջբերված պատասխանում, հարկադրված ենք մի փոքր շեղվել և անդրադառնալ այդ առանձնազրույցին:

Նախ ասենք, որ առանձին տեսակցության նախաձեռնողը Կարաբեքիրն էր, իսկ նպատակը՝ դատելով զրույցի բովանդակությունից, Խատիսյանի վրա բարոյա-հոգեբանական ճնշում գործադրելը և ներկայացվելիք Թուրքական ծանր պայմանները ընդունելու օգտին տրամադրելը: Դրա համար էլ շուրջ երեք ժամ տևած զրույցի ժամանակ «Կարաբեքիր փաչան կաչխատեր համոզել, որ հայերը լքված են և պետք է փնտրեն ամեն կերպ մոտենալ Թուրքերին: Ան կանգ առավ Ազգերու լիգայի մեջ արտասանած ապարդյուն ճառերու վրա՝ շեշտելով, որ Եվրոպան օգտագործած է մեզ արդեն և այլևս մեր կարիքը չունի: Ըսավ, թե Ռուսաստանը, իր պատմական առաջխաղացման մեջ դեպի հարավ և տաք ծով, կը կլանե Կովկասը և թե առանց Թուրքիո օգնության և հովանավորության մենք պիտի չկարողանանք պահել մեր գոյությունը»[1]:

Ասել, թե Կարաբեքիրի այս խոսքերը հեռու էին իրականությունից, ճիշտ չի լինի: Հայաստանն իսկապես լքված էր բոլորի կողմից, և դա Խատիսյանի համար նորություն չէր, բայց ահա Վրաստանի մասին նրա ասածը Խատիսյանին շատ զարմացրեց.

---

[1] *Նույն տեղում:*

[2] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 427:*

[1] ***Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ. էջ 267:*

«Խոսելով մեր հարևաններու մասին, – գրում է Խատիսյանը, – Կարաբեքիրը կանգ առավ Վրաստանի վրա: Վրաստանի մասին անոր ըսածը առանձնապես ուշագրավ էր.

– Դեռ հայերու դեմ պատերազմական գործողություններ սկսելե առաջ, – ըսավ ան, – Անգորայի ներկայացուցիչները՝ ի դեմս Յուսուֆ Քեմալ բեյի և Ալի Ֆուաթ փաշայի, 1920 թվի ամռանը եղան Թիֆլիս և վրաց կառավարության հետ դաշն կապեցին, որի զորությամբ Վրաստանը հայ-թուրքական պատերազմ ծագելու պարագային պետք է չեզոքություն պահեր և ատոր փոխարեն պետք է ստանար Բորչալուի և Ախալքալաքի գավառները և Արդահանի շրջանը: Կարաբեքիրը նույնիսկ ցույց տվավ այն քարտեզը, որուն վրա գծված էին Վրաստանի սահմանները, համաձայն չեզոքության մասին կնքված դաշնագրի»[1]:

Կարծում ենք՝ Կարաբեքիրից ստացած այս տեղեկությունը Խատիսյանի համար ո՛չ «առանձնապես ուշագրավ» և ո՛չ էլ զարմանալի պետք է լիներ, քանի որ Անկարայի և Թիֆլիսի միջև կայացած այդ հակահայկական համաձայնության մասին ժամանակին ընդարձակ հաղորդագրություն էր տպագրվել Ստամբուլում լույս տեսնող ֆրանսալեզու «Ժուռնալ դե Օրիանը» (հոկտեմբերի 19-ի համարում), որը և թարգմանաբար հրապարակել էր նաև «Մշակը» նոյեմբերի 5-ի և 11-ի համարներում: Այլապես պետք է ընդունենք, որ մամուլում տպագրված նման կարևոր տեղեկությունները հայ դիվանագետների ուշադրությանը չէին արժանանում: Սակայն վերադառնանք Կարաբեքիր-Խատիսյան առանձնազրույցին և տեսնենք, թե ինչ նպատակով էր Թուրք զորավարը նման պետական գաղտնիքը հայտնում Խատիսյանին. «Այդ պատմությունը վերջացնելով, – շարունակում է Խատիսյանը, – Կարաբեքիր փաշան ակնարկեց, որ Թուրք-վրացական պատերազմի պարագային, Հայաստանի հետ խաղաղություն կնքելե հետո, հայերը Հայաստանի չեզոքությամբ կարող են ստանալ Ախալքալաքի գավառը և Բորչալուի գավառի մեկ մասը»[2]:

Ուշադիր ընթերցողը անպայման կնկատի, որ Թուրքերը վրացիներին ավելի շատ բան էին խոստացել, քան հայերին էին առաջարկում: Բայց մենք սահմանափակվենք այսքանով և վերադառնանք մեր բուն խնդրին՝ մի անգամ ևս շեշտելով, որ Թուրք-վրացական գործարքի մասին վերը շարադրածը ակնհայտորեն ցույց է տալիս, որ Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի տարածքային վեճերին չանդրադառնալը

[1] Նույն տեղում, էջ 268:
[2] Նույն տեղում:

«Թուրքիայի խաղաղասիրական քաղաքականությամբ» պատճառաբանելը բացահայտ կեղծիք էր:

Սիրալիրությամբ և քաղաքավարությամբ սկսված առանձնազրույցը միանգամայն այլ ավարտ ունեցավ: Սահմանային հարցերի մասին խոսելիս՝ Կարաբեքիրը մի կողմ էր դրել քաղաքավարությունը, խոսում էր հարձակողական տոնով, Խատիսյանին սպառնում «ցրիվ տալ» նրա պատվիրակությունը, անկարելի համարում հայկական պահանջների քննարկումը: Խատիսյանը հետևյալ կերպ է նկարագրել զրույցի այդ հատվածը.

«Ապա Կարաբեքիրը անցավ խաղաղության մեր պայմաններուն և հուզված բացականչեց.

– Ձեր պայմանները մեզ ուղղակի ապշեցուցին: Եվ դուք՝ նստած Ալեքսանդրապոլ՝ պարտություն կրեեէ հետո կը պահանջեք Մուշ և Վան: Ի՞նչ կը լիներ, եթե դուք նստած ըլլայիք Վան: Ի՞նչ կը մնար Թուրքիայեն: Հավատացեք, որ ձեր պայմանները մենք պետք է ծածկեինք մեր սպաներեն և զինվորներեն, ապա թե ոչ անոնք ցրիվ պիտի տային ձեր պատվիրակությունը: Իմ սպայակույտի սպաները պահեցին գաղտնիքը: Քննության առնել ձեր այս պայմանները անկարելի է: Մտածեցեք»[1]:

Ձենք կարծում, թե նոր և նորագույն ժամանակների դիվանագիտության պատմությանը հայտնի լինի դեպք, երբ բանակցող կողմերից մեկը մյուսին սպառնացել է ֆիզիկական հաշվեհարդարով: Կարաբեքիրը գործում է միջնադարյան մեթոդներով, նա նաև առարկություններ չի ընդունում (Խատիսյանը փորձել էր հիմնավորել, որ նման սահմանագծումը անհրաժեշտ է հայ ժողովրդի «գոյության և ապագայի համար», որ նույնիսկ «Թուրքիո համար կարևոր է ունենալ իբրև հարևան կենսունակ Հայաստանը մը»), այլ հայտարարում է, որ վաղն ևեթ «կուղարկե իր առարկությունները կետ առ կետ և իր հակառաջարկները»:

Հայաստանի ազգային արխիվում հայերեն թարգմանությամբ պահպանվել է այն փաստաթուղթը, որն իր խոստման համաձայն նոյեմբերի 30-ին Կարաբեքիրն ուղարկել է հայ պատվիրակներին: Այն կրում է «Հայաստանի Հանրապետության հաշտության պատվիրակության նախագահությանն» խորագիրը և բավականին ընդարձակ է (տպագիր 8 էջ) ու բազմաբնույթ[2]: Նրանում չոչափված են պատմա-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 424-427:

կան, ազգագրական, մշակութային, առևտրական և այլ կարգի հարցեր՝ ամբողջովին հակահայկական դիրքերից (Ուրարտական պետությունը հիմնադրել են Թուրանյան ցեղերը, հայկական երաժշտությունը թուրքական արմատներ ունի և այլն, և այլն): Մենք դրանց չենք անդրադառնա, քանի որ դա մեզ շատ կշեղի ու հեռուն կտանի: Մեզ հետաքրքրող սահմանային-տարածքային հարցերը տեղ են գտել փաստաթղթի վերջին՝ 8-րդ էջում: Այստեղ Կարաբեքիրը նախ պատերազմի սանձազերծման մեղքը ամբողջովին Հայաստանի վրա է բարդում՝ գրելով.

«Հիմնապես այս պատերազմը հիշելու մղող պատճառները երկու կետերի մեջ են կայանում.

Ա. Մեր հողային ամբողջությունը քաղաքական և զինվորական արտաքին սպառնալիքներից պաշտպանելը և

Բ. Հայաստանին ոչ իրավացի ձևով կցված Թուրք և մահմեդական հողամասերի վրա Հանրապետության կողմից ձեռք առած և գործադրած սպանության և ոչնչացման քաղաքականության դեմ հարկ եղած մարդկային պարտականություն կատարելը»[1]:

Պարզվում է, որ «մարդկային պարտականություն» կատարող Կարաբեքիրի համար անկասկած է, որ «Երևանի կառավարությունը այդ երկու դրդապատճառները պատրաստել է մի կողմից (Թուրքիայի – Է. Զ.) սահմանների վրա կատարած զինյալ հարձակումով, և մյուս կողմից սահմաններից ներս ըրած կոտորածներով»: Հետևապես «տևական մի հաշտություն հաստատելու և երկու ազգերի խաղաղությունը ապահովելու համար սույն երկու դրդապատճառները չկրկնելը անհրաժեշտ գրավականը լինելով և Թուրքիո ապահովությունը և մահմեդական ժողովուրդների կյանքի պահպանությունը ապահովելու համար ուժեղ և գործնական ապահովություններ ստանալը կենսական պարտավորություն է»[2]:

Այսպես է Կարաբեքիրը նախապատրաստել այն, ինչը իրավամբ կարող ենք անվանել Հայաստանի Հանրապետության անդամահատում: «Ինչպես որ Ղարսի վիլայեթում մեր գերիշխանությունը հայտնապես, պատմականորեն և ցեղագրությամբ չէ կարելի հերքել, – ասված է գրության չարունակության մեջ, – նույնպես միևնույն հաստատ պատճառներով անհրաժեշտ է նաև Երասխ գետը սահման համարել»[3]:

Նախ ասենք, թեկուզ հակիրճ, որ Կարսի մարզի վերաբերյալ վկայակոչված հիմնավորումներն ամբողջովին կեղծ են և իրականությանը չեն համապատասխանում: Կարսում ամենամեծ էթնիկ խումբը միշտ էլ հայերն են եղել: Դրանում համոզվելու համար բավական է նայել արխիվներում պահվող «Կովկասյան կալենդար»-ի (ռուսերեն) 1916թ. համարը: Ինչ վերաբերում է Արաքս գետը սահման հաստատելու հիմնավորմանը, ապա այստեղ այնքան էլ հստակ չէ, թե «միևնույն հաստատ պատճառներ» ասելով Կարաբեքիրը ո՞ր հիմնավորումները նկատի ուներ, արդյո՞ք Կարսի մարզի համար վկայակոչվածները, թե՞ «ուժեղ և գործնական ապահովություններ» ստանալը: Դա մնում է Կարաբեքիրի գաղտնիքը: Բայց նաև չենք կարող ընթերցողին չհիշեցնել, որ Արաքսի աջ ափին գտնվող Սուրմալուի գավառը երբեք Թուրքիայի տիրապետության տակ չէր եղել և, որպես Երևանի խանության մաս, Ռուսաստանին էր անցել Թուրքմենչայի պայմանագրով: Հենց այդ պատճառով էլ գավառում էթնիկ թուրքեր համարյա չկային, այն հիմնականում բնակեցված էր հայերով և քրդերով: Ավելին, այդ գավառը նույնիսկ տեղ չէր գտել 1920թ. հունվարի 28-ին օսմանյան պառլամենտի ընդունած և քեմալականների համար գործողության ուղեցույց դարձած «Ազգային ուխտի» գծած սահմաններում: Չնայած դրան, չնայած այդ ամենին, Արաքս գետը սահման հռչակելով, Կարաբեքիրը Սուրմալուի գավառը ևս կտրում էր Հայաստանից և միացնում Թուրքիային: Բայց դրանով էլ չի բավարարվում և որոշում է ձախ ափից էլ մի համեղ պատառ պոկել: Իհարկե, խոսքը Նախիջևանի երկրամասի մասին է:

Հանրահայտ է, որ Նախիջևանի երկրամասի նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի հետաքրքրությունը միշտ էլ պայմանավորված է եղել ոչ թե տնտեսական, այլ քաղաքական գործոնով: Հակիրճ լինելու համար միայն նշենք, որ դա մի կամուրջ է, որի վրայով այդ երկու թուրքական պետությունները կարող են կապվել միմյանց հետ: Այդ է պատճառը, որ թուրքերը միշտ էլ սևեռուն հետևել են Նախիջևանի երկրամասում և նրա շուրջ կատարվող իրադարձություններին, հիվանդագին արձագանքել ու ամեն ջանք գործադրել խանգարելու նրա միացմանը Հայաստանին: Հիշենք թեկուզ 1919թ. ամառային իրադարձությունները Շարուր-Նախիջևանում և այն աղմուկն ու բողոքը, որ բարձրացրին Թուրքիան և Ադրբեջանը 1920թ. օգոստոսի 10-ի Լեգրան-Ջամալյան համաձայնագրի կապակցությամբ: Սակայն բոլոր այդ դեպքերում թուրքերը երբևէ չեն ակնարկել, թե իրենք էլ կարող են հավակնել Շարուր-Նախիջևանի երկրամասի վրա, նրանք հանդես էին գալիս Ադրբեջանի շահերի պաշտպանությամբ: Եվ թվում էր, թե

[1] *Նույն տեղում, թ. 427:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

Ալեքսանդրապոլի կոնֆերանսում չպետք է շոշափվեր Շարուր-Նախիջևանի հարցը, նախ որովհետև այն ոչ թե հայ-թուրքական, այլ հայ-ադրբեջանական վեճի առարկա էր և հետո՝ պաշտոնապես հռչակված էր ռուսական օկուպացիայի տակ գտնվող տարածք: Բայց նոյեմբերի վերջին օրերին հանկարծ պարզվում է, որ Անկարային հետաքրքրում է նաև այդ հարցը: Նախ նոյեմբերի 27-ին Կարաբեքիրը հայկական հրամանատարությունից պահանջում է զորքերը հետ քաշել Շարուրի գավառակի և հարակից շրջանների այն մասերից, որոնք դեռևս գտնվում էին հայերի հսկողության տակ, իսկ այնուհետև՝ նոյեմբերի 30-ին, հայկական պատվիրակությանը ներկայացրած հակառաջարկների շարքում ավելացնում հետևյալ պահանջը. «Երկու տարուց ի վեր իրենց ազգային գոյության համար շարունակաբար վեճի առարկա դարձած Նախիջևանը, Շահթախթը, Շարուրը և նրանց կից հողամասերը, շատ իրավացիորեն իրենց կյանքի պահպանությունը մարդկային մի պարտականություն լինելով, մինչև որ ընդհանուր քվեով ճակատագիրը որոշվի, բնական և ստիպողական գտնում է, որ այն տեղերը Թուրքիո պաշտպանության ներքո հիմնվի մի **ինքնավար վարչություն»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Մեզ շատ տարօրինակ և անբացատրելի է թվում, թե Անկարան ինչպե՞ս է հանդգնել տիրանալու մի երկրամասի, որտեղ դեռևս հուլիսի վերջին՝ ռուսական զորամասի Նախիջևան մուտք գործելուց առաջ, հեղկոմ էր ստեղծվել, երկրամասում խորհրդային իշխանություն հաստատելու մասին հայտարարություն էր արվել և որտեղ Թուրքական ուժերի հետ մեկտեղ ռուսական մեկ զորամաս կար, մի երկրամասի, որի նկատմամբ չէր կարող վկայակոչել ո՛չ պատմական, ո՛չ իրավական, ո՛չ մեկ այլ իրավունք և որը վեճի առարկա է եղել ո՛չ թե Հայաստանի և Թուրքիայի, այլ Հայաստանի և Ադրբեջանի միջև: Թվում էր, թե Խորհրդային Ռուսաստանի նյութական, ֆինանսական օգնությունն ու քաղաքական աջակցությունը վայելող քեմալական Թուրքիան չպետք է ձեռնարկի գործողություններ, որոնք կհակասեն իր դաշնակցի շահերին: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, Անկարային բոլորովին չէր մտահոգել այն հանգամանքը, որ իր այդ քայլով կարող է առաջ բերել Մոսկվայի դժգոհությունը և հակագործողությունները՝ թեկուզ հենց այն պատճառով, որ օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրով Շարուրի գավառը ճանաչել էր Հայաստանի մաս, իսկ Նախիջևանի գավառը՝ ժամանակավոր օկուպացիայի տակ գտնվող տարածք, որի

[1] Նույն տեղում:

պատկանելիության հարցը պետք է լուծվեր Մոսկվայի ներկայացուցչի մասնակցությամբ գումարվելիք հայ-ադրբեջանական կոնֆերանսում:

Անտարակույս է, որ Անկարան իր այդ քայլով կոպտորեն ոտնահարում էր ոչ միայն Հայաստանի և Ադրբեջանի, այլ նաև Ռուսաստանի իրավունքներն ու շահերը: Պարտված Հայաստանը ի վիճակի չէր պայքարելու իր իրավունքների համար, Թուրքիան պայմանները նրան թելադրում էր և ոչ թե նրա հետ քննարկում: Ադրբեջանը, հասկանալի է, չէր դժգոհի կամ բողոքի, քանի որ Նախիջևանի հարցի նման լուծումը նրա համար ավելի ընդունելի էր, քան անցումը Հայաստանին: Մնում էր Խորհրդային Ռուսաստանը, միակ շահագրգիռ կողմը, որն այդ երկրամասին տիրացել էր չուրջ մեկ դար առաջ Պարսկաստանի հետ կնքած Թուրքմենչայի պայմանագրով: Որպես ցարական Ռուսաստանի իրավահաջորդ, միջազգային իրավունքի տեսակետից նա չէր կորցրել իր իրավունքն այդ երկրամասի վրա: Ուստի Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ոչ միայն կարող էր բողոքել, այլև դուրս քշել Թուրքերին Շարուր-Նախիջևանից: Դժբախտաբար դա նա չարեց՝ Անտանտի դեմ պայքարողի քողի տակ հանդես եկող իր դաշնակցին չնեղացնելու համար: Բոլշևիկյան ղեկավարությունը հետագայում միայն պետք է հասկանար, թե որքան մեծ սխալ է թույլ տվել քեմալական Թուրքիայի նկատմամբ հանդուրժողական քաղաքականություն վարելով:

Կովկասում գործող բոլշևիկյան գործիչների շարքում Լեգրանը միակն էր, որ Մդիվանու հեռագրերից տեղեկանալով, որ Կարաբեքիրը գտնում է, որ Նախիջևանը չի կարելի տալ Հայաստանին, անմիջապես դիմում է իր կառավարությանը և պահանջում միջամտել ու չափավորել Թուրքերի ախորժակը: Նոյեմբերի 28-ին Չիչերինին հասցեագրած հեռագրում խոսելով այն մասին, որ Մդիվանուց ստացած տեղեկությունները ցույց են տալիս, որ Թուրքերը Հայաստանին ծանր պայմաններ են ներկայացնելու, հետևապես անհրաժեշտ է Մդիվանուն ցուցումներ տալ, թե ինչպիսի պահանջներ հետագայում պետք է պաշտպանել հօգուտ Հայաստանի, միաժամանակ ավելացնում է. «...**մեր շահերի համար խիստ անհրաժեշտ եմ համարում Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ-Երևան-Նախիջևան** երկաթուղագիծը պահելը»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ): Այդ նույն հեռագրում Լեգրանը նաև Չիչերինի ուշադրությունն է հրավիրում Անկարայի քողարկված հակառուսական

[1] «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. փաստաթղթերի...», էջ 364:

*քաղաքականության վրա, որ նա գործադրում էր Հայաստանում. «Միջնորդությունից հրաժարվելը, Թուրքերի կողմից Հայկական հեղկոմի կազմավորումը, **նոր պահանջները, որ նրանք ներկայացրել են հայկական հրամանատարությանը՝ Շահթախթիին հարող Շարուրի գավառի հարավ-արևելյան մասից զորքերը հետ քաշելու մասին**, այդ ամենը վկայում են մեզ մեկուսացնելու և նախաձեռնությունը իրենց ձեռքում պահելու Թուրքերի ձգտման մասին»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ): Լեգրանը նաև պահանջում է արագ ու վճռական որոշումներ ընդունել, ինչպես նաև Կովկասում գործունեության ինքնուրույն ծրագիր մշակել, որի հետ Թուրքերը ստիպված լինեն հաշվի նստել: Իսկ Մդիվանու վարքագիծը համարում է անորոշ, գտնում, որ նա ամբողջովին ընկել է Թուրքական պլանների ազդեցության տակ:*

*Ինչպես տեսնում ենք, Նախիջևանը Հայաստանին թողնելը Լեգրանը դիտում էր Ռուսաստանի շահերի տեսանկյունից: Բայց դա համապատասխանում էր նաև հայ ժողովրդի շահերին, եթե, իհարկե, հարցը դրական լուծում ստանար: Ի միջի այլոց, նույն ոգով մի հեռագիր էլ Լեգրանը նոյեմբերի 29-ին ուղարկել էր Մդիվանուն. «Թուրքերը ի՞նչ պայմաններով են մտածում հաշտություն կնքել Հայաստանի հետ, նրանք ի՞նչ են հաղորդել Ձեզ այդ մասին, Ձեր կողմից ի՞նչ հայտարարություններ են արվել: **Չի կարելի Հայաստանի հարցից մեզ մեկուսացնելու Թուրքերի ձգտմանը պասիվ վերաբերվել: Կարաբեքիրը լրացուցիչ պահանջել է զորքերը հետ քաշել Շահթախթի շրջանից և Շարուրի գավառի մի մասից՝ Թուրքերը Նախիջևանն ազատում են իրենց համար»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ):*

*Դժբախտաբար, ինչպես և մի շարք այլ դեպքերում, այս անգամ էլ Լեգրանի ջանքերը դրական հետևանքների չհանգեցրին: Նոյեմբերի 30-ին Օրջոնիկիձեն Լենինի և Ստալինի ստորագրությամբ մի հեռագիր ստացավ, որում ասված էր. «Կարսի պատճառով քեմալականների հետ կռվել պետք չէ, բայց ամեն ինչում ուղղակի զիջել նմանապես չի կարելի: Անհրաժեշտ է քեմալականներից Ալեքսանդրապոլը ստանալ Հայաստանի համար, որը խորհրդային է դառնում: Եթե միջնորդությունից խուսափելը բացառում է մեր մասնակցությունը Հայաստանի և Թուրքիայի միջև հաշտության բանակցություններին, ուրեմն **հարկավոր է ինչպես Թուրքերին, այնպես էլ հայերին հիշեցնել, որ այդ դեպքում Զանգեզուրի և Նախիջևանի հարցը չի կարող հայ-թուրքական կոնֆերանսի քննարկման առարկա լինել, քանի որ այդ երկու մարզերը վիճելի են հանդիսանում Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի հետ Ռուսաստանը դաշինքի մեջ է գտնվում»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ):*

Այսքանը միայն, թույլ ու անվճռական: Ուրիշ ի՞նչ որակում կարելի է տալ այս հեռագրին, որում խոսվում է միայն «հիշեցնելու» մասին: Չկա բողոք, չկա պահանջ: Չկա նաև փաստ, թե Օրջոնիկիձեն որևէ քայլ է ձեռնարկել այդ ուղղությամբ, այլապես արխիվներում որևէ տեղեկություն կպահպանվեր (Հայաստանի և Թուրքիայի կառավարություններին Օրջոնիկիձեն կարող էր դիմել Երևանում գտնվող Լեգրանի միջոցով): Անգամ եթե Օրջոնիկիձեն դիմեր Թուրքիայի և Հայաստանի կառավարություններին, ի՞նչ ազդեցություն դա կունենար: Չէ՞ որ նա ոչ պետության ղեկավար էր, ոչ էլ արտաքին գործերի ժողկոմ: Ինչո՞ւ այդպիսի կարևոր հարցում Չիչերինը չէր դիմում համապատասխան կառավարություններին: Սրանք հարցեր են, որոնք գալիս են վկայելու, որ Մոսկվան այդ կարևոր խնդրին լրջությամբ չի վերաբերվել: Իսկ Օրջոնիկիձեն էլ այդ օրերին զբաղված էր Հայաստանի խորհրդայնացումով, ինչի մասին տեղյակ էին նաև Մոսկվայում:

Մի հարց ևս. նույն օրը՝ նոյեմբերի 30-ին, Բաքվում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի միացյալ նիստում, որին մասնակցում էին նաև Օրջոնիկիձեն, Ստասովան և այլ հայտնի բոլշևիկներ, Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ վիճելի տարածքների վերաբերյալ կայացվել է որոշում, որով Զանգեզուրը և Նախիջևանը հռչակվում էին Հայաստանի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչությանը ինքնորոշման իրավունք էր վերապահվում: Կասկած չի կարող լինել, որ նման որոշում կայացնելու գաղափարը հենց այդ նիստում կամ այդ օրը չի ծագել, այլ հավանաբար օրեր առաջ, Հայաստանի խորհրդայնացումը նախապատրաստելու ժամանակաշրջանում: Ճիշտ է, մեր ձեռքի տակ ներկայումս կոնկրետ վկայություններ չկան (այդպիսիք կարող են լինել Բաքվի արխիվներում), բայց նիստերի և նման այլ միջոցառումների աշխատանքներին առնչված յուրաքանչյուր ոք կհաստատի, որ նման կարևոր հարցերը նախապատրաստվում են օրեր առաջ, հաճախ նաև շատ երկար: Անտարակույս է նաև, որ նախապատրաստելով Հայաստանի խորհրդայնացումը, Մոսկվան և Կովկասում գործող ղեկավար բոլշևիկները (Օրջո-

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում, էջ. 366:*

[1] *Նույն տեղում, էջ. 378:*

նիկիձե, Կիրով, Ստասովա և ուրիշներ) չէին կարող բավարարվել միայն Հայաստան զորքեր ուղարկելով: Նրանք նաև պետք է քայլեր ձեռնարկեին խորհրդային իշխանության հանդեպ հայ ժողովրդի համակրանքը չահելու ուղղությամբ: Առավել ևս, որ Թուրք-հայկական պատերազմի շրջանում հայոց մեջ արմատավորվել էր այն կարծիքը, որ քեմալական Թուրքերը ռուս բոլշևիկների դաշնակիցներն են և գործում են նրանց գիտությամբ: Իսկ ի՞նչը կարող էր հայ մարդու համար ավելի սրտամոտ լինել, քան տարածքային վեճերի հայանպաստ լուծումը:

Բաքվում կայացված վերոհիշյալ որոշմանը և դրան հաջորդած Նարիմանովի հայտնի դեկրետին և նրա հետ առնչվող հարցերին մենք այստեղ չենք անդրադառնում, դա Հայաստանի խորհրդայնացմանն առնչվող խնդիր է: Բայց չենք կարող շրջանցել մեկ այլ հարց, այն է. կա՞ր արդյոք կապ Բաքվում նախապատրաստվող որոշման և Կարաբեքիրի կողմից Նախիջևանի երկրամասի նկատմամբ ներկայացված պահանջի միջև: Այլ կերպ ասած, Անկարան տեղյա՞կ էր Բաքվում ընդունելիք որոշման մասին, Թե՞ ոչ: Դարձյալ մենք կոնկրետ փաստեր չունենք, բայց նախ լսենք, Թե ինչ է ասել Ս. Վրացյանը այդ օրերի իրադարձությունների վերաբերյալ Թուրքերի տեղեկացվածության մասին. «Ընկ. Խատիսյանը խնդրում էր առանց ուշացնելու տալ հրահանգներ, որովհետև տաճիկները շատ են շտապում, - գրում է Ս. Վրացյանը: - **Երևանում կատարվող դեպքերը, որոնց մասին նրանք զարմանալի կերպով լավ էին տեղյակ**, ջղայնացնում էին նրանց: Տաճիկները, ըստ երևույթին, վախենում էին իրենց դաշնակից բոլշևիկների խաղերից և շտապում էին օր առաջ ստորագրել հաշտությունը»[1] (ընդգծումը մերն է - Է. Զ): Դե, եթե Երևանում կատարվող դեպքերին «լավ էին տեղյակ», որտեղ, ի դեպ, ոչ մի ներկայացուցիչ չունեին, ապա որքան ավելի լավատեղյակ կլինեին Բաքվի անցուդարձին, որտեղ վաղուց (1919Թ.) լեգալ գործող կոմիտե ունեին և այլ կարգի ներկայացուցիչներ, որոնց հետ մշտական կապերի մեջ էին և կանոնավոր կերպով տեղեկություններ էին ստանում Բաքվի անցուդարձի մասին: Եվ ինչո՞ւ այդ տեղեկատվությունը չէր կարող բխել հենց Նարիմանովից կամ նրա շրջապատից, որոնց տարածքային հարցերի լուծման նման հեռանկարը, հասկանալի է, չէր բավարարում, և դրա դեմ հակամիջոցներ պետք է գտնեին ու պայքարեին, ինչ և արեցին որոշ ժամանակ անց: Պատահականություն չպետք է համարել և այն, որ Նախիջևանի երկրամասը

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն 1923, XI, Թիվ 1, էջ 71:

Հայաստանին Թողնելու անԹույլատրելիության մասին հարցը չոչափվել էր Կարաբեքիր-Մդիվանի զրույցների ժամանակ, մարդ, որը գործուղվել էր Ռուսաստանի կողմից որպես միջնորդ և պարտավորություն ուներ պաշտպանելու Հայաստանի չահերը, բայց չուտով ընկել էր Կարաբեքիրի ազդեցության տակ և, ըստ էության, բացասական դեր խաղացել այդ խնդրում[1]:

Մդիվանու այդօրինակ գործունեության մասին վկայություններ կան Խատիսյանի հուշերում, Լեգրանի հեռագրերում, և մեր պատմաբանները հիմնավոր փաստերով վաղուց ապացուցել են, որ Մդիվանին և նրա խումբը՝ Կարաբեքիրին խորհուրդ էին տալիս ուժեղացնել ճնշումը հայերի վրա՝ Հայաստանում իշխանափոխություն առաջ բերելու նպատակով: Հենց այդ օրերին էր Օրջոնիկիձեն ուղիղ հեռագրակապով Մդիվանուն հրահանգում. «Խփեք ինչպես կարող եք, հարկավոր է պայթեցնել, իսկ հետո՝ օգնել, հասկացար, օգնել»[2]: Իսկ Թե Մդիվանին ինչպես էր ուզում «պայթեցնել» Հայաստանը, վկայություն կա Կարաբեքիրի մոտ: «Երբ մենք Ալեքսանդրապոլում դաշնակների հետ բանակցություններ էինք վարում հաշտության մասին, - գրում է Կարաբեքիրը, - Անկարայում Ռուսաստանի դեսպան ընկեր Մդիվանին ինձ ասաց. «**Ինչո՞ւ դուք միայն Արաքս (Արփաչայ) գետն եք առաջարկում որպես ապագա սահման**»: Հասկանալով նրա առաջարկը, ես պատասխանեցի. «Պատմության, արդարության, ռասայի, տնտեսության, կարճ՝ բոլոր տեսակետներից մենք մեր սահմաններն անց ենք կացնում այնպես, որ հավակնում ենք միայն այն տարածքների նկատմամբ, որոնք պատկանում են մեզ: Մենք չենք պատրաստվում (օտար) հողեր զավթել»[3] (ընդգծումը մերն է - Է. Զ):

Մի կողմ Թողնելով օտար հողեր չզավթելու վերաբերյալ Կարաբեքիրի ճամարտակությունները՝ արձանագրենք, որ Մդիվանու մասին Թուրք փաչայի պատմածը միանգամայն համահունչ է նրա գործունեության Լեգրանի ընութագրությանը: Անտարակույս է, որ Մդիվանին իր այդ վարքագծով մեծապես նպաստել է Հայաստանի Հանրապետության անդամահատմանը: Ինչ վերաբերվում է մեզ հետաքրքրող Շարուր-Նախիջևանի խնդրին, ապա Թեև վերը մեջբերած զրույցից

[1] Կոնֆերանսի առաջին իսկ նիստում Կարաբեքիրը մերժել էր նրա մասնակցությունը կոնֆերանսին, որից հետո նա մնացել էր Ալեքսանդրապոլում որպես Ռուսաստանի ներկայացուցիչ:

[2] „Геноцид армян...", стр. 339.

[3] Նույն տեղում, էջ. 290:

կարելի է հետևություն անել, որ այդ պահին Կարաբեքիրն Արաքսի ձախ ափի վրա դեռ աչք չէր գցել, բայցևայնպես չենք կարող միանշանակ պնդել, թե Շարուր-Նախիջևանը Թուրքական տարածքային պահանջների մեջ է ներառվել հենց Մդիվանու և Կարաբեքիրի զրույցի արդյունքում: Չենք կարող պնդել, որովհետև Կարաբեքիրն ուրիշ ոչինչ չի ավելացնում և որ կարևոր է, ամսաթիվ չի նշում: Կարծում ենք ամսաթիվ չնշելու պատճառներից մեկն էլ այն է, որ նրանք այնքան հաճախ էին հանդիպում (ըստ Խատիսյանի՝ համարյա ամեն օր), որ դժվար թե Կարաբեքիրը կարողանար մտաբերել նշված զրույցի կոնկրետ օրը: Իսկ որ այդ զրույցների ժամանակ չոչափվել է նաև Նախիջևանի հարցը, այդ մասին հիշատակություն կա հենց իր՝ Մդիվանու մի հեռագրում: Դեկտեմբերի 3-ին Լեգրանին հասցեագրած հեռագրում խոսելով Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հարցում Կարաբեքիրի վերաբերմունքի, Թուրքերի ներկայացրած պայմանագիրը Խատիսյանի կողմից ստորագրելու, ինչպես և այն մասին, որ Թուրքերը ընդհանրապես հայերին չեն վստահում, Մդիվանին ավելացնում է. «Հայերի նկատմամբ անվստահության արդյունք է նրանց (Թուրքերի) համառությունը Նախիջևանի հարցում, որը նրանց կարծիքով չի կարելի տալ հայերին»[1]:

Շարուր-Նախիջևանը Հայաստանին չտալու հարցում Մդիվանու պատվիրակության կազմում առավել չահագրգռված անձ կար, քան ինքը Մդիվանին էր: Դա Ադրբեջանի հեղկոմի անդամ Բեհբութ Շահթախթինսկին[2] էր, այն նույն մարդը, որ առաջինն էր դեռևս օգոստոսի 13-ին Լենինին ուղարկած նամակում բողոքել Շարուրը Հայաստանին թողնելու դեմ և առաջարկել չեղյալ հայտարարել Լեգրանի ստորագրած օգոստոսի 10-ի համաձայնագիրը: Այդպիսի հակվածությամբ անձը չէր կարող Թուրքական պատվիրակության հետ չփվելու հնարավորությունը չօգտագործել կանխելու Շարուր-Նախիջևանի անցումը Հայաստանին: Արխիվներում դժբախտաբար շատ բան չի պահպանվել Կարաբեքիրի հետ Շահթախթինսկու հանդիպումների և վարած զրույցների մասին: Բայց մի շատ ուշագրավ ու բավականին խոսուն փաստաթուղթ, այնուամենայնիվ, պահպանվել է: Դա նոյեմբերի 28-ին նրանց միջև կայացած զրույցի ժամանակ Կարաբեքիրի խոսքի հակիրճ սղագրությունն է, որը Շահթախթինսկին ուղարկել էր Օրջոնիկիձեին: Կարաբեքիրը դժգոհում է Ռուսաստանի վարած քաղաքականությունից, որն իբրև թե պաշտպանում է հայերին, ուզում է Թուրքական վիլայեթների հաշվին ստեղծել Մեծ Հայաստան, մինչդեռ Հայաստանը Անտանտի հավատարիմ դաշնակիցն է և միշտ դանակ է խրել Թուրքիայի թիկունքին: Զրուցակիցները բնականաբար անդրադարձել են նաև Շահթախթինսկուն հուզող խնդրին՝ Նախիջևանին: «Ռուսաստանը Նախիջևանի երկրամասը տվեց հայերին[1], - ասել է Կարաբեքիրը: - Դա միակ միջանցքն էր, որով Թուրքերը կապ էին պահպանում Ռուսաստանի հետ: Ռուսաստանի այդ քայլով Թուրքական հեղափոխությունը գլխավորող բոլոր գործիչները համարյա զինաթափվեցին Թուրքական զանգվածի առաջ, որը կորցրեց հավատը Ռուսաստանի որևէ աջակցության հանդեպ... Վերջապես Ռուսաստանը մեզ թույլ տվեց գրավել Սարիղամիշը և Նախիջևանը՝ չցանկանալով այդ օպերացիայում մեզ որևէ ռազմական օգնություն ցույց տալ»[2]:

Եթե հիշենք, որ այս զրույցը կայացել է նոյեմբերի 28-ին, այսինքն՝ այն օրը, երբ Խատիսյանը Կարաբեքիրին էր հանձնել Թուրք-Հայկական տարածքային սահմանազատման վերաբերյալ իր պատվիրակության կազմած քարտեզը, ապա դժվար չի լինի գուշակել, թե ուրիշ ի՞նչ հարցեր չոչափած կլինեն զրուցակիցները և ի՞նչ կարծիքներ արտահայտած, որոնց մասին սակայն Շահթախթինսկին գերադասում է լռել: Շատ ժամանակ չէր անցել, երբ Օրջոնիկիձեին ուղարկած իր մեկ այլ նամակում Շահթախթինսկին կրկին անդրադառնում է Կարաբեքիրի հետ ունեցած իրենց հանդիպմանը և դառնացած գրում. « Զանգեզուրը և Նախիջևանի շրջանը Հայաստանին զիջելու մասին Ադրհեղկոմի ակտը Կարաբեքիրի վրա ճնշող տպավորություն թողեց: ...Կարաբեքիրն առանձնապես կտրուկ չի արձագանքում այդ ակտին, բայց գտնում է, որ տակտիկական նկատառումներով Ադրբեջանը չպետք է չտապեր այդ հարցի լուծման գործում՝ թեկուզ մինչև կոնֆերանսի ավարտը, քանի որ այդ ակտը վերագրվում է Ռուսաստանի ազդեցությանը»[3] (ընդգծումը մերն է - Է. Զ.):

Շահթախթինսկին չի ասում, թե ե՞րբ և ո՞վ է Կարաբեքիրին հայտնել վիճելի տարածքների վերաբերյալ Նարիմանովի հռչակագրի մասին, բայց պարզից էլ պարզ է, որ այն տեղի է ունեցել տաք հետքե-

---

[1] *Նույն տեղում, էջ. 296:*

[2] *Ստալինի առաջարկությամբ Մդիվանու հետ որպես խորհրդականներ Ալեքսանդրապոլ էին մեկնել նաև Շահթախթինսկին և Ջ. Կորխմազովը:*

[1] *Զրուցակիցները նկատի են ունեցել օգոստոսի 10-ի համաձայնագիրը:*

[2] *,,Геноцид армян...", стр. 206.*

[3] *Նույն տեղում, էջ 405:*

րով և իր ներկայությամբ՝ եթե, իհարկե, լուրը հայտնողը հենց ինքը չէ:

Ինչևէ, մի կողմ թողնելով տեղեկատվության հնարավոր ուղիների մասին ենթադրությունները, ուզում ենք արձանագրել, որ իրադարձությունների տրամաբանությունը և Նախիջևանի հիմնախնդրի հետագա արծարծումներն ու զարգացումները, որոնց ընթացքում պարզ դարձավ, որ Բաքուն և Անկարան գործում են ձեռք-ձեռքի տված, մեզ բերում են այն համոզման, որ Շարուր-Նախիջևանի նկատմամբ Կարաբեքիրի առաջ քաշած պահանջը Թուրք-ադրբեջանյան հակահայկական դավադրության չղթայի օղակներից մեկն էր: Անգամ եթե վիճելի տարածքների վերաբերյալ Բաքվում նախապատրաստվող դեկլարացիայի մասին Թուրքերը տեղեկացված չլինեին, ապա միևնույն է, Հայաստանի խորհրդայնացման լուրը, ինչի մասին նրանք իմացել էին արդեն նոյեմբերի 30-ին, չէր կարող Թուրքական դիվանագիտության ուշադրությունն իսկույն ևեթ չբևեռել Շարուր-Նախիջևանի վրա: Անկարան չէր կարող չհասկանալ, որ այդ տարածքները Ռուսաստանը կարող էր ուղղակի հանձնել իրեն դաշնակից դարձած Հայաստանին: Մինչդեռ Բաքվի հետ մեկտեղ որքան ջանք ու եռանդ էին թափել համոզելու Մոսկվային՝ չեղյալ հայտարարել օգոստոսի 10-ի Լեգրան-Ջամալյան համաձայնագրով Շարուրի անցումը Հայաստանին և օկուպացնել ռուսական զորքերով: Հայաստանի խորհրդայնացումը սակայն մասամբ իրադրությունը փոխում էր. Բաքուն արդեն բացահայտորեն գործել չէր կարող, բայց Անկարան կարող էր և նա գործի անցավ:

*Ի միջի այլոց, Նախիջևանի վերաբերյալ Կարաբեքիրի պահանջը Խատիսյանը իր հայտնի աշխատության մեջ մի քիչ այլ կերպ է ներկայացնում: Նա գրում է. «Նոյեմբերի 30-ին Թուրքերը ուղարկեցին դաշնագրի իրենց նախագիծը՝ սահմաններով: Անոնց ծրագրով Հայաստանին կը Թողվեր 27 000 քառ. քիլոմետր. Կարսի նահանգը և Սուրմալուի գավառը կանցնեին Թուրքիո, **իսկ Նախիջևանն ու Զանգեզուրը կը դրվեին Ատրպեճանի հովանավորության տակ**»[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):*

Տարօրինակ ու զարմանալի, այլ բան չես կարող ասել: Ինչո՞ւ է Խատիսյանը խոսում նաև Զանգեզուրի մասին, մի բան, որ ինչպես նախորդ շարադրանքում տեսանք, Կարաբեքիրի գրության մեջ չկար, և ինչու է ասում, թե Զանգեզուրը և Նախիջևանը Ադրբեջանի հովանավորության տակ էր դրվում: Մեղադրել Խատիսյանին մոռացկոտության մեջ չենք կարող, քանզի ուրիշ շատ ավելի մանր ու պակաս կարևորություն ներկայացնող հարցեր նա մոռացության չի տվել: Ուրեմն ինչո՞ւ այդպիսի անհամապատասխանություն Կարաբեքիրի պահանջի և Խատիսյանի վկայության միջև, մնում է անբացատրելի:

*Թուրքական քարտեզի մեկնաբանության խնդրում թյուրիմացության պահ կա նաև պատվիրակության անդամ Ստ. Ղորղանյանի մոտ: «Մշակ» թերթի խմբագրությանը նա ասել է. «Հայկական քարտեզին Անգորայի պատվիրակությունը հակադրեց իր քարտեզը՝ կցելով նրան մի հիշատակագիր, որի մեջ աչքի ընկնող հայտարարությունն այն էր, որ թեև հայերը համարում են իրենց առանձին կուլտուրայի տեր ժողովուրդ, բայց այդ ճիշտ չէ. ապացույց երաժշտությունը, որը բաղկացած է Արևելքից բերած մոտիվներից: **Իսկ քարտեզի վրա գծագրված էին Հայաստանի համար այսպիսի սահմաններ. - արևմուտքում Արփաչայը, հարավում Արաքսը՝ մինչև Գայլի Դուռ անցքը: Այսպիսով միլիճիներին են անցնում Կարսի նահագը և Սուրմալուի գավառը**: Թուրքերը՝ կատարելով այդպիսի անդամահատություն, դեռ բավական չափով վեհանձնություն էլ ծախսեցին հայտարարելով, թե նրանք անկարելի են համարում թելադրել Հայաստանին 1918թ. Բաթումի դաշնագրի սահմանները, որոնք չափազանց անձուկ են, ուստի հայերին են թողնում Ալեքսանդրապոլը և երկաթուղու գիծը դեպի Երևան»[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.): Ինչպես տեսնում ենք, Ղորղանյանը Հայաստանի Հանրապետությունից անջատված տարածքների շարքում չի նշում Շարուրի, որը պատերազմը սկսելու պահին գտնվում էր հայերի ձեռքին, և Ադրբեջանի հետ վեճի առարկա եղող Նախիջևանի անունները: Թե ինչո՞ւ, մնում է անհայտ: Ճիշտ այդպես էլ նոյեմբերի 30-ի ուշ գիշերին ստանալով Կարաբեքիրի հակառաջարկները և կազմած քարտեզը, ու այդ մասին իսկույն հեռագրելով Երևան, պատվիրակությունը Շարուրի և Նախիջևանի մասին ոչինչ չէր ասել: Դա պարզորոշ երևում է Ս. Վրացյանի մի վկայությունից, որ նա արել էր 1923թ. «Հայրենիք», ամսագրում հրապարակված հոդվածում: Անդրադառնալով Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ Բ. Լեգրանի ներկայացրած պահանջին պատասխանելու նպատակով ՀՅԴ Բյուրոյի, Խորհրդարանի ղեկավարության, կառավարության անդամների և մի շարք այլ պատասխանատու պետական գործիչների մասնակցությամբ նոյեմբերի 30-ի լույս*

[1] ***Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ. էջ 269:*

[1] *«Մշակ», 23 դեկտեմբերի 1920թ.:*

դեկտեմբերի 1-ի գիշերը գումարված նիստին՝ Ս. Վրացյանը գրում է. «Կես գիշեր էր արդեն, երբ ինձ կանչեցին ուղիղ հեռագրաթելի մոտ: Ալեքսանդրապոլից մեր հաշտարար պատվիրակության նախագահ ընկ. Ա. Խատիսյանը հաղորդեց, որ տաճիկները ներկայացրել են հաշտության պայմանները և տվել են վերջնագիր՝ 48 ժամում ընդունելու կամ մերժելու...: Երբ ես վերադարձա հեռագրատնից և կարդացի Քյազիմ Կարաբեքիրի վերջնագիրը և հաշտության պայմանները, սենյակում մի պահ տիրեց խորին լռություն, այնքա՜ն ծանր պայման ոչ ոք չէր սպասում: Չգիտեմ ինչո՞ւ առանձնապես սաստիկ վրդովում առաջ բերեց Սուրմալուի պահանջը: Այդ նշանակում է, որ տաճիկները չեն ուզում հաշտվել անկախ Հայաստանի գոյության հետ...»[1]:

Ինչ խոսք, որ Սուրմալուի գավառը (Արաքսի աջ ափը՝ Մասիսներով հանդերձ) Հայաստանի Հանրապետության համար կարևոր նշանակություն ուներ թեկուզ հենց այն պատճառով, որ նրա անջատումով և Արաքս գետը սահման դարձնելով, մայրաքաղաք Երևանը փաստորեն վեր էր ածվում սահմանային քաղաքի: Բայց նաև չենք կարծում, թե Շարուր-Նախիջևանը իր աշխարհագրական դիրքով ու ռազմավարական նշանակությամբ, ինչպես նաև Իրանի հետ երկաթուղային հաղորդակցման հնարավորությամբ, Հայաստանի համար պակաս կարևորություն ուներ, քան Սուրմալուն: Նաև ավելացնենք, որ նոյեմբերի 30-ին Կարաբեքիրը վերջնագիր չէր ներկայացրել և առավել ևս ժամկետ չէր նշանակել, ինչպես Ս. Վրացյանն է ասում այս հոդվածում[2], այլ ուղղակի վերջում ավելացրել էր, որ պահանջում էր իր պայմաններն ընդունել անփոփոխ: Ահա այն. «Հիմնվելով հայտնած խորհրդածությունների վրա. մեր պատվիրակությունը Ձեր բարձր պահանջները և մտածումները անիրագործելի է գտնում և համաձայն հաշտարար հիմունքների իրավասության և ապագայում ընդհանուր քվեարկության դիմելու պայմանով, ներփակ ստվերագծում (croquis) նշանակված սահմանները առանց վեճի ընդունելը կտրուկ կերպով պահանջում և իմ անկեղծ հարգանքները հայտնում եմ»[3]:

Դեկտեմբերի 1-ին առավոտյան ժամը 11-ին Կարաբեքիրը գումարում է կոնֆերանսի երրորդ՝ նախավերջին նիստը և վերջնագրի կարգով ներկայացնելով հաշտության պայմանագրի իրենց կազմած նախագիծը, պահանջում է ստորագրել՝ սպառնալով հակառակ պարագայում անմիջապես վերսկսել ռազմական գործողությունները: «Մենք առարկություններ ըրինք Թուրքերուն, – գրում է Խատիսյանը, – և որոշեցինք, որ համենայն դեպս պետք է դաշնագրի գլխավոր կետերը հաղորդենք Երևան և սպասենք հրահանգներ մեր կառավարութենէն»[1]:

Թուրք պատվիրակները չէին կարող չհամաձայնել հայերի այդ պահանջին, քանի որ հակառակ պարագայում միջազգային հանրությանը պարզ կդառնար, որ պայմանագիրը ոչ թե ընդունվել, այլ թելադրվել է: Բայց քանի որ նրանք շատ էին շտապում, ինչպես Ս. Վրացյանն է նշում, «վախենում էին իրենց դաշնակից բոլշևիկների խաղերից և շտապում էին օր առաջ ստորագրել հաշտությունը», ուստի պայմանագրի նախագծին ծանոթանալու և կառավարության համաձայնությունը ստանալու համար տրամադրում են ընդամենը մեկ օր ժամանակ և հաջորդ նիստը նշանակում դեկտեմբերի 2-ին: Հայ պատվիրակները կարող էին չհամաձայնել և պատասխանի համար 2 կամ 3 օր ժամանակ պահանջել (զինադադարի ժամկետը լրանում էր դեկտեմբերի 4-ի երեկոյան), բայց բանն էլ հենց այն է, որ ինչպես կոնֆերանսի ընթացքն է ցույց տալիս, Կարաբեքիրն օգտվում էր նախագահողի իր իրավունքից և նիստեր գումարում, երբ ուզում էր: Դրանում համոզվելու համար բավական է մի հայացք գցել կոնֆերանսի ընթացքի և նիստերի գումարման շարժառիթների վրա:

Կոնֆերանսի աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝ մինչև նոյեմբերի 30-ը և դեկտեմբերի 1-2-ը: Առաջին փուլում, որը տևում է չուրջ մեկ շաբաթ, Կարաբեքիրը բոլորովին չի շտապում. 24-ին նիստ չի գումարում «այն պատճառով, որ Երևանեն քանի մը ժամ ուշացել էր այն գնացքը, որ կը բերեր զինադադարի պայմաններու համաձայն Թուրքիո տրվելիք ռազմամթերքը»[2]: Առաջին նիստում (նոյեմբերի 25) Կարաբեքիրը հայտարարում է, թե մինչև Հայաստանը չհրաժարվի Սևրի պայմանագրից, կոնֆերանսը չի շարունակվի: Նոյեմբերի 27-ին (2-րդ նիստ) լսում է Սևրի պայմանագրից հրաժարվելու մասին Խատիսյանի հայտարարությունը և առանց

[1] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, թիվ 1, էջ 71:

[2] Հետագայում, 1953թ. Բեյրութում հրատարակած «Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև» գրքում, Ս. Վրացյանը ուղղել է իր սխալը՝ գրելով, որ նոյեմբերի 30-ի երեկոյան Կարաբեքիրը ներկայացրեց իր պայմանները, իսկ հաջորդ օրն առավոտյան վերջնագրի կարգով պահանջեց ընդունել այն:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 427:

[1] **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ. էջ 270:

[2] Նույն տեղում, էջ. 265:

հաջորդ նիստի օր նշանակելու առաջարկում, որ կողմերից յուրաքանչյուրը «կը մշակե սահմանները և բացատրական զեկուցագիր մը այդ մասին և հետո փոխադարձաբար կը կծանոթացնեն իրենց պայմաններուն»[1]: 28-ին Կարաբեքիրը ստանում է հայոց պահանջները, բայց իրենցը ներկայացնելու փոխարեն 29-ին (երեկոյան) Խատիսյանին հրավիրում է առանձնազրույցի, աշխատում հերքել հայկական պահանջների արդարացիությունը, հայտարարում, որ վաղը ևեթ կներկայացնի իր հակառաջարկները ու նաև առաջին անգամ խոսում «բանակցությունները շուտով վերջացնելու պետքի» մասին, ակնարկում, որ «հակառակ պարագային ան ստիպված պիտի լինի գնալ Երևանի վրա»[2]:

Այսպես հանգիստ է ընթացել կոնֆերանսը մինչև նոյեմբերի 30-ը: Ամեն ինչ փոխվեց նեյեմբերի 30-ից հետո միայն: Այդ օրը՝ երեկոյան ներկայացնելով իր հակառաջարկները, Կարաբեքիրը նախկինի պես հանգիստ չի սպասում, այլ հաջորդ օրն առավոտյան (ժ. 11-ին) գումարում է նիստ, ներկայացնում իրենց պատրաստած պայմանագրի նախագիծը և այդ չատ ավելի բարդ ու բազմաբնույթ խնդիրներ պարունակող փաստաթղթի ընդունման համար տալիս ընդամենը մեկ օր ժամանակ: Ինչո՞ւ նման չտապողականություն այդ վերջին օրերին: Ս. Վրացյանը՝ անդրադառնալով այդ օրերի իրադարձություններին (Լեգրանի հետ վարվող բանակցությունները, Կարաբեքիրի ներկայացրած վերջնագիրը), ուշագրավ վկայություն է անում. **«Թուրքերը հևիհև հետևում էին Երևանի դեպքերին և չտապում էին կանխել**: Նոյեմբերի 30-ի երեկոյան Քյազիմ Կարաբեքիր փաշան Հայաստանի պատվիրակության ներկայացրեց Թրքական պայմանները և հաջորդ առավոտյան վերջնագրի ձևով պահանջեց այդ պայմանների ընդունումը, հակառակ պարագայում սպառնալով վերսկսել պատերազմական գործողությունները»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ): Մեկնաբանությունները, ինչպես ընդունված է ասել, այստեղ ավելորդ են: Կարաբեքիրը չտապում էր ստորագրել տալ պայմանագիրը, քանի դեռ իշխանությունը չի փոխանցվել:

Որ Հայաստանը պետք է խորհրդայնացվի, դա Կարաբեքիրի համար գաղտնիք չէր: Այդ հարցը նախապատրաստվում էր շատ վաղուց, և Անկարան քաջատեղյակ էր բոլոր անցուդարձերին: Ինքը՝ Կարաբեքիրը, կոնֆերանսի օրերին մեկ անգամ չէ անդրադարձել Հայաստանի խորհրդայնացման խնդրին Ալեքսանդրապոլում գտնվող Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի՝ Բուդու Մդիվանու հետ զրույցներում՝ ըստ այդմ առաջարկելով այդ նպատակի համար օգտագործել իր ստեղծած Ալեքսանդրապոլի հեղկոմը, որն իրեն հորջորջում էր որպես «Հայաստանի հեղկոմ», և նրա հրավերով Կարմիր բանակի զորքեր մտցնել Հայաստան: Հասկանալի է, որ նպատակը խորհրդայնացած Հայաստանը ամբողջովին Անկարայի վերահսկողության ենթարկելն էր: Սակայն Թուրքական դիվանագիտությունը իրեն հավատարիմ չէր լինի, եթե գործեր միայն մի ուղղությամբ: Հայաստանի հետ մեկտեղ Անկարան առաջ էր քաշել նաև Վրաստանի խորհրդայնացման հարցը՝ խոստանալով օգնություն ռազմական ուժով: Դա նախ Ռուսաստանի ուշադրությունը մասամբ կշեղեր Հայաստանից ու կբևեռեր ավելի բարդ խնդրի՝ Վրաստանի վրա, և հետո՝ հնարավորություն կստեղծվեր տարածքային կորզումներ կատարել նաև Վրաստանից (Բաթումի մարզը): Ահա ինչու չբավարարվելով Կարաբեքիրի գործունեությամբ՝ Անկարան շուտով Ալեքսանդրապոլ գործուղեց նաև Թուրքիայի ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) երկու պատվիրակների, որոնք Մդիվանու հետ երկարատև զրույցներում աշխատում էին հիմնավորել այդ ծրագրի իրագործման նպատակահարմարությունը: Իսկ Մդիվանին էլ իր հերթին աշխատում էր համոզել Մոսկվային, որը, սակայն, Անդրկովկասի հարցում իր սեփական ծրագրերն ուներ: Եվ երբ Կարաբեքիրը նոյեմբերի 30-ին տեղեկացավ Հայհեղկոմի նոյեմբերի 29-ի ակտի մասին, ինչը վկայությունն էր այն բանի, որ ռուսները սեփական ծրագրերն են իրագործելու, անհանգստացավ և որոշեց օր առաջ ստորագրել տալ իրենց նախապատրաստած պայմանագիրը:

Դեկտեմբերի 1-ի երեկոյան Վրացյանի կառավարությունը տվեց իր համաձայնությունը և Խատիսյանին հանձնարարեց ստորագրել Թուրքերի ներկայացրած հաշտության պայմանագիրը: Եվ դա այն դեպքում, երբ այդ նույն օրը Լեգրանի հետ բանակցություններում (կառավարության կողմից այն վարում էին Դրոն և Հ. Տերտերյանը) կայացվել էր որոշում հաջորդ օրը իշխանությունը բոլշևիկներին փոխանցելու մասին: Ինչո՞ւ Վրացյանն այդպես վարվեց, ինչո՞ւ պայմանագրի ստորագրումը չթողեց նրանց, ում հանձնում էր իշխանությունը, դա բոլորովին այլ հարց է և այստեղ չենք քննարկի: Միայն նշենք, որ դա այնքան արտասովոր էր ու անտրամաբանական, որ Խատիսյանը դեկտեմբերի 2-ին տեղեկանալով իշխանափոխության մասին, իս-

[1] Նույն տեղում, էջ 266:

[2] Նույն տեղում, էջ 269:

[3] **Ս. Վրացյան,** Հայաստանը բոլշևիկյան մուրճի..., էջ 141: Տե՛ս նաև նույնի «Հայաստանի Հանրապետությունը», Եր., 1993, էջ 535:

կույն դիմում է Դրոյին (իշխանությունը փոխանցվել էր նրան մինչև Հեղկոմի Երևան ժամանելը) և պահանջում ցուցումներ, սակայն վերջինս խուսափողական պատասխան է տալիս՝ պայմանագրի ստորագրելը կամ չստորագրելը թողնում պատվիրակության հայեցողությանը և խոստանում կոնկրետ պատասխանը տալ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 3-ի առավոտյան: Դրոյի այս վարքագիծը ևս այդ օրերի առեղծվածների թվին է պատկանում (դժբախտաբար նա հետագայում այդ հարցին չի անդրադարձել և որևէ բացատրություն չի տվել): Առեղծված է, որովհետև ընդամենը մեկ օր առաջ՝ դեկտեմբերի 1-ին, նա դեմ է եղել թուրքական պայմաններն ընդունելուն: Այդ մասին կա Վրացյանի վկայությունը, որը դեկտեմբերի 1-ին ժամը 2-ն անց կեսին, Խատիսյանին տեղեկացնելով Հայաստանի խորհրդայնացման նպատակով Լեգրանի հետ վարվող բանակցությունների մասին, միաժամանակ ավելացրել էր. «Սահմանների մասին կառավարությունը համաձայն է պայմանով, որ այդ համաձայնությունը կվերանա, եթե մյուս կետերի մասին համաձայնություն չլինի: **...Դրո հակառակ է համաձայնություն տալ տաճիկներին»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Թե ինչու մեկ օր հետո իշխանության ղեկը ստանձնած Դրոն դարձել էր անվճռական, գաղտնիք է առայսօր:

Առեղծված է նաև Խատիսյանի պատվիրակության վարքագիծը: Նա կարող էր խուսափել պայմանագրի ստորագրումից, քանի որ իրեն լիազորություն տված կառավարությունն այլևս չկար, կարող էր նաև պահանջել Կարաբեքիրից հետաձգելու պայմանագրի ստորագրումը մինչև հաջորդ օրը, մինչև Դրոյից հստակ հրահանգավորում ստանալը: Բայց պատվիրակությունն այդ հնարավորություններից օգտվելու փոխարեն որոշում է ընդունել թուրքերի պահանջը և ստորագրել պայմանագիրը: Մեզ նույնիսկ հայտնի չէ, թե Դրոյի հետ իր հեռախոսազրույցի և վերջինիս տված պատասխանի մասին հայտնե՞լ է թուրքական պատվիրակությանը, թե՞ ոչ: Նա այդ մասին ոչինչ չի ասում: Կարծում ենք՝ Խատիսյանը Կարաբեքիրին ոչինչ չի ասել:

Տարօրինակ ու նաև ինչ-որ չափով անբացատրելի է մնում Լեգրանի վարքագիծն այս հարցում, մարդ, որը մինչ այդ քանիցս ՀՀ կառավարությանն առաջարկել էր (թե՛ Հ. Օհանջանյանի, թե՛ Ս. Վրացյանի) խզել բանակցությունները թուրքերի հետ, հետ կանչել Խատիսյանի պատվիրակությանն Ալեքսանդրապոլից և ռուսական զորքեր

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 621, թ. 81:

մտցնել Հայաստան: Թվում էր, թե իշխանափոխությունից հետո նրա առաջին գործը Խատիսյանին լիազորությունից զրկելը պիտի լիներ, որի համար, ի դեպ, բավականին ժամանակ կար (նախնական պայմանավորվածությամբ իշխանության փոխանցումը պետք է կատարվեր դեկտեմբերի 2-ի գիշերը՝ ժամը 12-ին, բայց Լեգրանը՝ պատճառաբանելով, որ որոշ դաշնակ գործիչներ, որոնց պետք է ձերբակալեն, պատրաստվում են փախչել Հայաստանից, պայմանաժամը փոխում է և իշխանության փոխանցումը կատարվում է դեկտեմբերի 2-ին կեսօրվա ժամը 4-ին), բայց ոչ, խորհրդավոր կերպով նա այդ ուղղությամբ այդ օրը քայլեր չի ձեռնարկել[1]: Ինչո՞ւ, դա ևս այդ օրվա առեղծվածների թվին է պատկանում և անբացատրելի է մնացել առ այսօր:

Առաջին հայացքից առեղծվածային կարող է թվալ նաև Կարաբեքիրի վարքագիծը: Քաջատեղյակ Երևանում կատարված իշխանափոխությանը՝ նա այնուամենայնիվ հարկադրում է ու ստորագրում պայմանագիր իշխանությունն արդեն կորցրած կառավարության պատվիրակության հետ:

Ավելին, Կարաբեքիրը նախազգուշական քայլեր է ձեռնարկում, որպեսզի Հայաստանի խորհրդայնացման հետևանքով չկանխվի Խատիսյանի պատվիրակության հետ պայմանագրի ստորագրումը: Նա իսկույն իր «անկեղծ» գոհունակությունն է հայտնում Կարմիր բանակի առաջխաղացման և Հայհեղկոմի Դիլիջան հասնելու կապակցությամբ: Դեկտեմբերի 2-ին Դիլիջանից Բաքու ուղարկած հաղորդագրության մեջ ասված է, որ Ալեքսանդրապոլից՝ Կարաբեքիրի ստորագրությամբ, ստացված է հետևյալ հեռագիրը. «Ինձ ուրախություն պատճառեց կարմիր զորքերի Դիլիջան հասնելու լուրը: Ձեզ բարեկամ ու դաշնակից տաճկական բանակի կողմից ողջունում եմ Ձեր Դիլիջան գալը և հաղթություն եմ ցանկանում իմպերիալիզմի դեմ հանուն աշխատավոր պրոլետարիատի բարօրության ու երջանկության: Արդեն կարգադրել եմ, որ մեր մեջ անմիջական կապ հաստատվի»[2]: Այդ նույն օրը 11-րդ Կարմիր բանակի գլխավոր շտաբում ստացվում է նաև Մղիվանու շտաբ հեռագիրը, որում ասված էր, որ Կարաբեքիրը խնդրել է իրեն շտաբ միջոցներ ձեռնարկել, որպեսզի Կարմիր բանակի զորամասերը

[1] ՀԱԱ-ում պահվում է Խատիսյանի պատվիրակությանը լիազորություններից զրկող Դրոյի և կոմիսար Սիլինի ստորագրությամբ մի հեռագիր, որը սակայն թվագրված է դեկտեմբերի 3-ով:

[2] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 969, փ. 10, թ. 1:

չանցնեն թուրքական զորքերի գրաղեցրած գիծը մինչև հաշտության պայմանագրի ստորագրումը[1]:

Ինչո՞ւ, ի՞նչ սպասելիքներ կարող էր ունենալ Թուրքիան մի պայմանագրից, որի անօրինականությունն ակնհայտ էր արդեն այն ստորագրելու պահին: Թվում էր, թե ոչինչ: Թվում էր, թե Հայաստանում հաստատված նոր իշխանությունը՝ չճանաչելով այդ պայմանագիրը, իսկույն ևեթ Թուրքերի հետ կնստի նոր բանակցությունների ու կստորագրի նրանից էապես տարբերվող նոր պայմանագիր: Այսպես կարծում էին շատերը: Եվ միայն հետագա իրադարձությունները և հատկապես Մոսկվայի և Լոնդոնի կոնֆերանսները, ուր Թուրքերը գնացին այդ պայմանագիրը ձեռքներին, եկան պարզելու, թե թուրքական դիվանագիտությունն ինչ հեռահար նպատակներ է ունեցել ու որքան ավելի հեռուն է նայել, քան կարելի էր կարծել:

Ինչպես տեսնում ենք առեղծվածները շատ են, բայց ասել, թե ամբողջովին անբացատրելի են, ճիշտ չի լինի[2]: *Ուղղակի դա մի առանձին ուսումնասիրության խնդիր է, որի մեջ խորանալը մեզ խիստ կշեղի մեր թեմայից: Ուստի բավարարվենք այսքանով և վերադառնանք կոնֆերանսի վերջին նիստին:*

*Դեկտեմբերի 2-ի երեկոյան գումարվում է կոնֆերանսի վերջին՝ չորրորդ նիստը, որտեղ Խատիսյանը հայտարարում է, որ ընդունում են ներկայացված պայմանագիրը: Այնուհետև սկսվում է քննարկումը, որն, ըստ երևույթին, սուր բնույթ չի կրել: Այդպես մտածել է տալիս նաև այն, որ մի նիստի ընթացքում 18 հոդված քննարկելը դյուրին գործ չէ, և հետո՝ պայմանագրում էական փոփոխություններ չեն կատարվել: Խատիսյանն ինքն է ասում, թե «քննության միջոցին մեզ հաջողվեցավ մասնակի մանր փոփոխություններ մտցնել հօգուտ մեզ, ինչպես օրինակ, Ադրբաբայի մի մասը (Կարսի նահանգեն) Հայաստանի սահմանների մեջ մտցնելը, զորքի քանակը 1200-ից մինչև 1500 բարձրացնելը: **Երկար վիճաբանություններ եղան Անիի, Նախիջևանի, Սուրմալուի մասին, բայց Թուրքերը այդ խնդիրներու մեջ ոչ մի զիջում չբրին:** Գիշերվա ժամը 2-ին (դեկտեմբերի 2-են լույս 3-ը) դաշնագիրը ստորագրվեցավ երկու պատվիրակություններու կողմեն»*[3] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

---

[1] *Տե՛ս „Геноцид армян...", стр. 288.*

[2] *Այդ առեղծվածները մասամբ մեկնաբանված են մեր «Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները» գրքում (տե՛ս էջ 130-164):*

[3] ***Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ. էջ 271:*

Այսքանը միայն, Խատիսյանը ոչինչ չի ասում թե ինչո՞ւ երեկոյան սկսված նիստը չարունակվեց մինչև գիշերվա ժամը 2-ը, ինչո՞ւ այն չի հետաձգվել հաջորդ օրվան, ո՞վ էր շահագրգռված, որ պայմանագիրը ստորագրվի հենց այդ օրը, ինչո՞ւ ինքը նիստի աշխատանքների մի մասը և պայմանագրի ստորագրումը հաջորդ օրվան հետաձգելու պահանջ չի դրել: Ո՛չ ինքը, ո՛չ Ղորղանյանը այդ մասին ոչինչ չեն ասում: Նրանք ոչինչ չեն ասում նաև Անիի, Նախիջևանի և Սուրմալուի շուրջ ծավալված «երկար վիճաբանությունների» մասին: Եվ այդպես էլ անհայտ է մնում, թե թուրքական պատվիրակությունը որևէ ձևով հիմնավորե՞լ է Նախիջևանի և Սուրմալուի գավառների նկատմամբ իր երկրի իրավունքը, գավառներ, որոնք, ինչպես արդեն նշել ենք, մինչ այդ երբեք Թուրքիայի կազմում չէին եղել: Հետաքրքիր կլինի նաև իմանալ, թե հայ պատվիրակնե՞րն ինչ փաստարկներ էին վկայաբերում «երկար վիճաբանությունների» ընթացքում: Ինչևէ, կնքված պայմանագրի հոդվածներն այստեղ մենք մանրամասնությամբ չենք վերլուծի, բայց որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի այդ չարաբաստիկ պայմանագրի մասին, ստիպված ենք անդրադառնալ դրանց բովանդակությանը՝ թեկուզ հակիրճ:

Ինչպես վերը նշեցինք, պայմանագիրը բաղկացած էր 18 հոդվածներից, որոնցից առաջինում ասված էր, որ «պատերազմը Հայաստանի և Թուրքիայի միջև ավարտված է»: Հայաստանը զրկվում էր ընդհանուր պարտադիր զինվորական ծառայություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից: Նա կարող էր ունենալ միայն 1500 հոգուց բաղկացած մի ջոկատ՝ 8 թնդանոթով և 20 գնդացրով (հոդված 4): Թուրքիային իրավունք էր վերապահվում իր հայեցողությամբ տեսչություն և հետաքննություն կատարել վերը նշված պայմաններին վերաբերող հարցերի կապակցությամբ: Փոխարենը Թուրքիան պարտավորվում էր զինված օգնություն ցույց տալ Հայաստանին՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին վտանգի դեպքում (հոդված 5): Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, պարտավորվում հետ կանչել Եվրոպայից իր պատվիրակներին (հոդված 10), անվավեր ճանաչում բոլոր այն պայմանագրերը, որ «կարող են կնքվել և առնչություն ունենալ Թուրքիայի հետ, ճիշտ այնպես, ինչպես և բոլոր այն պայմանագրերը, որ կկնքվեն ի վնաս Թուրքիայի շահերի (հոդված 14): Թուրքիան նաև իրավունք էր ստանում վերահսկել Հայաստանի երկաթուղիներն ու ճանապարհները (հոդված 12), «ռազմական միջոցառումներ ձեռնարկել Հայաստանի տարածքում» (հոդված 13), իսկ այն տարածքները, որոնք պայմանագրով Հայաստանի մաս են ճանաչվել, բայց օկուպաց-

ված են Թուրքական զորքերով (Ալեքսանդրապոլի գավառ և այլն), ապա նրանց օկուպացիան պետք է վերանա միմիայն «Հայաստանի կողմից ներկա պայմանագրի բոլոր պայմանների կատարման դեպքում» (հոդված 17): Պայմանագրում հոդվածներ կային գաղթականների վերադարձի իրավունքի (հոդված 6), որը սակայն սահմանափակվում էր մեկ տարի ժամկետով (հոդված 7), համաշխարհային պատերազմի ժամանակ կրած վնասները հատուցելու պահանջից հրաժարվելու (հոդված 8), Հայաստանի մահմեդական ազգաբնակչության իրավունքների (հոդված 11), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների (հոդված 15), փոստ-հեռագրական կապերի հաստատման մասին (հոդված 16): Իսկ վերջին՝ 18-րդ հոդվածում ասված էր, որ պայմանագիրը պետք է վավերացվի մեկ ամսվա ընթացքում, և որ այն կազմված է երկու օրինակից՝ Թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով, 1920թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլ քաղաքում[1]*:*

Ընթերցողը հավանաբար նկատեց, որ թվարկած հոդվածների շարքում բացակայում են 2-րդը և 3-րդը: Մենք այդ երկու հոդվածները առանձնացրեցինք, քանի որ մեզ հետաքրքրող սահմանային հարցերը իրենց արտացոլումն են գտել հենց այդ հոդվածներում: Դրանցից առաջինում՝ այսինքն երկրորդ հոդվածում, սահմանագծումը ներկայացված է հետևյալ կերպ. «Սահմանը Հայաստանի և Թուրքիայի միջև սկսվում է Արաքսի մեջ Կարա-սու գետի թափվելու տեղից՝ մինչև Տիքնիսի հյուսիս-արևմտյան մասը, Մեծ Կեմլիի արևմտյան, Կիզիլթայի արևմտյան (մասով) մինչև Մ. Աղբաբան...»[2]*:*

Ինչպես տեսնում ենք, հոդվածի այս նկարագրությունը համընկնում է Արաքս և Արփաչայ (Ախուրյան) գետերի հոսանքին: Իսկ դա նշանակում է, որ Թուրքիայի օգտին Հայաստանից անջատվում են Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Սակայն Հայաստանի անդամահատումը դրանով չի ավարտվում: Սահմանագծի նկարագրության շարունակությունից պարզ է դառնում, որ Հայաստանից անջատվում է նաև Շարուր-Նախիջևանը: Նույն հոդվածի շարունակության մեջ ասված է, որ սահմանն այնուհետև անցնում է «Շարուր-Նախիջևանի և Շահթախթիի շրջաններով, որոնք գտնվում են Կյուկի-դաղ՝ 10282, 8262 բարձունք, Կամասու լեռ՝ 8160, Ղուրդ-Ղուլաղ գյուղ,

[1] *ՀԱԱ, ֆ. 4/144, ց. 2, գ. 13, թ. 100-102 (պայմանագրի տեքստը ռուսերեն է, թարգմանվել է, հավանաբար, Թուրքերեն օրինակից):*

[2] *Նույն տեղում, թ. 100:*

Սահաթ լեռ՝ 7868, կետ 3680, Արփաչայ գետով, Սարայ-բուլաղ՝ 8711, Արարատ կայարան մինչև Արաքս գետն այն տեղում, որտեղ Կարասու գետը թափվում է Արաքսի մեջ»[1]*:*

*Սահմանի այս նկարագրությունը գետեղելով քարտեզի վրա, կհամոզվենք, որ պայմանագրով Հայաստանից անջատվում են ոչ միայն Նախիջևանի գավառը և Շարուրի գավառակը, այլև Դարալագյազից մի հատված և Երևանի գավառի հարավ-արևելյան հատվածը՝ սկսած Արարատ կայարանից մինչև Գայլի Դրունք կոչված վայրը: Շարուր-Նախիջևանի այդ հսկա տարածաշրջանը սակայն միանգամից չէր միացվում և չէր հայտարարվում Թուրքիայի անբաժան մաս, այլ հռչակվում էր որպես, ժամանակավորապես՝ մինչև հարցի վերջնական լուծումը, ի դեպ առանց Հայաստանի մասնակցության, Թուրքիայի պաշտպանության տակ գտնվող տարածաշրջան: «**Նախիջևանի, Շարուրի և Շահթախթիի շրջաններում**, – ասված է 2-րդ հոդվածի վերջին պարբերությունում, – **որտեղ հետագայում հանրաքվեի միջոցով հատուկ ադմինիստրացիա կհաստատվի, Հայաստանը պարտավորվում է չմիջամտել այդ ադմինիստրացիայի կարգին, անկախ այն բանից, թե ինչպիսի ձև կստանա այդ ադմինիստրացիան: Այդ շրջանները ժամանակավորապես կգտնվեն Թուրքիայի պաշտպանության տակ**»*[2] *(ընդգծումը մերն է – Է. Զ): Մնում է ավելացնել, որ երկրորդ հոդվածն ավարտվում էր նրանով, որ երկու կողմերին պարտավորեցնում էր պայմանագրի ստորագրումից հետո երկու շաբաթվա ընթացքում կազմել խառը հանձնաժողով՝ տեղում սահմանների վերջնական հաստատման նպատակով:*

Ինչո՞ւ Թուրքիան Շարուր-Նախիջևանը զավթելու այդ ձևն ընտրեց, ինչո՞ւ նա միանգամից դրանք Թուրքիայի մաս չհռչակեց: Սրանք հարցեր են, որոնց մասին ոչ կոնֆերանսի նյութերում և ոչ էլ մեկ այլ տեղ բացատրություն չի պահպանվել: Բայց դա նաև չի նշանակում, թե դա լուսաբանել հնարավոր չէ, ո՛չ: Այդ հարցը հեշտ հասկանալի կդառնա, եթե հիշենք, թե ինչ կարգավիճակ ուներ Նախիջևանը և ինչպիսին էր իրադրությունը այդ երկրամասում տվյալ ժամանակամիջոցում: Հենց այդ իրողություններից ելնելով էլ՝ կարելի է հետևություն անել, որ Շարուր-Նախիջևանի երկրամասը Թուրքիային միացված հայտարարելուն խանգարել կարող էր նախ այն, որ այնտեղ ռուս բոլշևիկյան զորքեր ևս կային, որոնցից ազատվելու հնարավոր այլ մի-

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում:*

ջոց չկար: Այնուհետև, Նախիջևանի գավառում հաստատված վարչություն կար՝ հանձին Նախիջևանի հեղկոմի, որը և գավառում խորհրդային կարգեր հաստատելու հայտարարություն էր արել դեռևս հուլիսի վերջին՝ ռուսական զորքերի այնտեղ մուտք գործելու պահին: Վերջապես նա չէր կարող այդ միացումը ինչ-որ ձևով արդարացնող պատմական, իրավական հիմնավորումներ վկայակոչել, ինչպես նաև մատնացույց անել Թուրքական «Ազգային ուխտը», որի գծած սահմանների մեջ Շարուր-Նախիջևանը մտցնել, հասկանալի է, չէին կարող: Ճիշտ է, այստեղ մեզ կարող են առարկել, որ նույպիսի հիմնավորումներ չունեին նաև Սուրմալուի գավառի հարցում, բայց բոնազավթեցին: Ուղղակի պետք է նկատի ունենալ, որ Սուրմալուի դեպքում Թուրքիան գործ ուներ պատերազմում պարտված Հայաստանի հետ, որի հետ, ինչպես արդեն տեսանք, պայմանները ոչ թե քննարկում, այլ թելադրում էր: Մինչդեռ Շարուր-Նախիջևանի խնդրում չահագրգռված կողմ էին նաև Ռուսաստանն ու Ադրբեջանը՝ իր դաշնակիցները, որոնց համաձայնությամբ և օգնությամբ արշավեց Հայաստան, և որոնցից շարունակում էր օգնություն ստանալ: Ուրեմն Շարուր-Նախիջևանի հարցում նա զգույշ ու ճկուն գործելակերպ պետք է ընտրեր, որպեսզի առաջ չբերեր իր դաշնակիցների դժգոհությունը:

Այսքանով կարելի էր սահմանափակվել, բայց մեր խոսքը թերի կլինի, եթե չանդրադառնանք, թեկուզ հակիրճ, նաև 3-րդ հոդվածին: Նախ նրա համար, որ այդ հոդվածը առնչվում է տարածքային խնդիրներին և հետո՝ ընթերցողը կտեսնի ու կհամոզվի, թե որքանո՞վ ճիշտ են այն հեղինակները (օր. Ս. Վրացյանը), ովքեր վկայակոչելով այդ հոդվածը, փորձում են համոզել, թե Հայաստանը դեռևս կարող էր հանրաքվեի միջոցով ինչ-որ բան փոխել անջատված տարածքների ճակատագրի հարցում: Ուրեմն, նախ տեսնենք, թե ինչ էր ասված այդ հոդվածում. «ԹԱՄԺ-ի կառավարությունը, նախկին և 2-րդ հոդվածում նշված ներկա սահմանների միջև ընկած շրջաններում, այսինքն՝ **ներկա պայմանագրով Թուրքիային զիջած շրջաններում, որոնք անվիճելի պատմական, ազգագրական և իրավական կապ ունեն Թուրքիայի հետ**, հանրաքվե կատարելու իրավունք է վերապահում այն դեպքում, եթե Հայաստանի Հանրապետությունը ցանկանա այդպիսին կատարել»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել, որ հանրաքվե կատարելու իրավունքի մասին այս հոդվածում ասվածը անլուրջ ու անիրական

[1] Նույն տեղում:

է, քանզի չի կարող հայկական կողմը լրջորեն հանրաքվեի պահանջ դնել, եթե այդ նույն հոդվածով ընդունել է, որ այդ տարածքները «անվիճելի, պատմական, ազգագրական և իրավական կապ ունեն Թուրքիայի հետ»: Այնինչ, Ս. Վրացյանը, ձեռքի տակ չունենալով պայմանագրի տեքստը և հենվելով Ալ. Խատիսյանի կատարած ինչ-որ ամփոփումների վրա, գրում է, թե «Ալեքսանդրապոլի պայմանագրով Կարսի նահանգը և Սուրմալուն համարվում էին վիճելի մինչև երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարությունը կարող է հայտարարել հանրաքվե՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների: Հանրաքվեի ժամանակ պետք է մտնե այնտեղ խառն հայ-թուրքական ժանդարմերիա»[1]: Մինչդեռ պայմանագրում, ինչպես տեսանք, ոչ երեք տարվա մասին խոսք կար, ոչ խառը ժանդարմերիայի և ոչ էլ այդ տարածքների վիճելի լինելու մասին:

Ի միջի այլոց Շարուր-Նախիջևանի հարցում ևս Վրացյանը խեղաթյուրված է ներկայացնում պայմանագրում ասվածը: Նա գրում է. «Շարուրը և Նախիջևանը ժամանակավորապես օժտվում էին ինքնավարությամբ՝ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչև որ որոշվի նրանց բախտը»[2]: Նրա այս ձևակերպումը ընթերցողի մոտ կարող է ստեղծել տպավորություն, թե Շարուր-Նախիջևանի «բախտը» կարող էր և որոշվել հօգուտ Հայաստանի: Մինչդեռ, ինչպես վերը տեսանք, պայմանագրի 2-րդ հոդվածում հստակ ասված էր, որ այդ շրջաններում «հետագայում հանրաքվեի միջոցով հատուկ ադմինիստրացիա կհաստատվի: Հայաստանը պարտավորվում է չմիջամտել այդ ադմինիստրացիայի կարգին, անկախ այն բանից, թե ինչպիսի ձև կընդունի այդ ադմինիստրացիան»: Այլ կերպ ասած, ըստ պայմանագրի Հայաստանը ոչ հավակնել կարող էր Շարուր-Նախիջևանի նկատմամբ, ոչ էլ միջամտել նրա «բախտի» որոշմանը:

Այսպիսի լուծում էր ստացել Նախիջևանյան հիմնահարցը Ալեքսանդրապոլի պայմանագրում: Ի՞նչ կատարվեց հետագայում, ինչպիսի՞ ընթացք ստացավ այն, ի՞նչ դեր խաղաց Ալեքսանդրապոլի պայմանագիրը Շարուրի և Նախիջևանի շրջանների ճակատագրի որոշման խնդրում: Սրանք հարցեր են, որոնց կանդրադառնանք հաջորդ գլխում:

[1] **Ս. Վրացյան,** Հայաստանը բոլշևիկյան մուրճի..., էջ 162: Նույնի «Հայաստանի Հանրապետությունը», Եր., 1993, էջ 536:

[2] Նույն տեղում:

* * *

Ամփոփելով մեր խոսքը կարող ենք արձանագրել, որ

1. *Սարիղամիշը և Շահթախթին թուրքական զորքերով գրավելու մասին կայացված համաձայնությունից հետո, Մոսկվան կորցրեց հետաքրքրությունը Հայաստանի Հանրապետության հետ պայմանագրի ստորագրման և դեպի Թուրքիա տրանզիտի իրավունք ստանալու նկատմամբ: Այդ է պատճառը, որ Հայաստանի կառավարության հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ Լեգրանի առաջարկությունները Չիչերինը մերժում էր կամ հետաձգում: Հետաձգվում էր նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքների հարցի լուծումը:*
2. *Բ. Լեգրանի և Լ. Շանթի պատվիրակությունների երևանյան բանակցությունների արդյունքում կազմած հայ-ռուսական պայմանագրի նախագիծը և ստորագրած եզրափակիչ որոշման արձանագրությունն ընդհանուր առմամբ նպաստավոր էին Հայաստանի Հանրապետության համար: Սակայն նրանք մեռելածին էին, քանի որ նրանցում նախանշված պայմաններն անընդունելի էին և՛ Բաքվի, և՛ Անկարայի համար: Մոսկվան ևս չահագրգռվածություն չցուցաբերեց, որի համար էլ Ստալինից և Նարիմանովից մեծ ջանքեր չպահանջվեցին համոզելու Կրեմլին մերժել պայմանագրի նախագիծը: Լեգրանի բողոքը և Չիչերինին ուղղված դիմումները արդյունք տալ չէին կարող:*
3. *Շարուրի ճակատում ռազմական լուրջ գործողություններ ծավալվել են Թուրք-հայկական պատերազմի երրորդ փուլում միայն՝ նոյեմբերին: Չնայած Թշնամու թվական գերազանցությանը, Շարուրի համար մղված մարտերում, հայկական ուժերը ցուցաբերել են կամք, կռվելու ունակություն: Սակայն Կարսի անկումից հետո Հայկական բանակում ծայր առած դասալքությունը իր բացասական հետևանքներն ունեցավ նաև Շարուրի ճակատում: Թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ հայկական ուժերը ստիպված էին թողնել Շահթախթին և Շարուրի դաշտը ու հետ քաշվել: Այնուամենայնիվ զինադադարի հաստատման պահին (նոյեմբերի 18) Շարուրի որոշ մասեր և հարակից շրջանները դեռևս գտնվում էին հայկական ուժերի հսկողության տակ:*
4. *Սկսելով պատերազմ, ազգայնական Թուրքիան, ամեն ինչից զատ, որոշակիորեն հետապնդում էր նաև դիվանագիտական երկակի նպատակ.*

ա) Անտանտին ցույց տալ, որ Հայաստանը և Վրաստանը բոլշևիկյան հեղեղի առաջ պատնեշ լինել չեն կարող, որ ինքն այդ խնդիրն ավելի հեշտությամբ կարող է լուծել:

բ) Համոզել Ռուսաստանին, որ Թուրքիան հնարավորություն ունի ջախջախել Անգլիայի կովկասյան հովանավորյալներին և տարածաշրջանում հակաիմպերիալիստական լուրջ ուժ դառնալ, եթե, իհարկե, ստանա Ռուսաստանի ռազմատեխնիկական ու ֆինանսական օգնությունը:

Թուրք-հայկական պատերազմի նկատմամբ արևմտյան տերությունների ու Ռուսաստանի վերաբերմունքից դժվար չէր եզրակացնել, որ Անկարան հասել էր իր նպատակին և կարող էր աներկյուղ ձեռնամուխ լինել զոհի հոշոտմանը:

5. *Ալեքսանդրապոլի կոնֆերանսն ընթացել է թուրքական դիվանագիտության նախանշած սցենարով: Կարաբեքիր փաշան մեծագույն հմտությամբ օգտագործեց նախագահողի իր իրավունքներն ու հնարավորությունները, կոնֆերանսի աշխատանքները տարավ նպատակասլաց հունով և հասավ Թուրքիայի համար ցանկալի արդյունքի: Առանց վարանելու կարելի է արձանագրել, որ Ալեքսանդրապոլի կոնֆերանսը և կնքված պայմանագիրը դիվանագիտության ասպարեզում քեմալական Թուրքիայի առաջին լուրջ հաջողությունն էր: Հայաստանի հարցում քեմալականների նախանշած ծրագիրը գերակատարվեց: Հայաստանից նրանք ավելին պոկեցին, քան նույնիսկ թուրքական «Ազգային ուխտն» էր սահմանել (Սուրմալու, Շարուր-Նախիջևան):*
6. *Պարտվածի հոգեբանական բարդույթից չձերբազատված հայ պատվիրակները ոչնչով աչքի չընկան և փաստորեն վերածվեցին Կարաբեքիրի կամակատարների: Դրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ նրանք իրենց ստորագրությունը դրեցին Կարաբեքիրի հրամցրած պայմանագրի տակ այն ժամանակ, երբ կառավարությունը, որին ներկայացնում էին, արդեն գոյություն չուներ: Ալեքսանդրապոլի պայմանագիրը դարձավ նորագույն ժամանակների հայ դիվանագիտության ամենաառեղծվածային ու ձախողված դրվագներից մեկը:*
7. *Հայաստանի խորհրդայնացումը և պանթուրքիզմի ծրագրերի տեսակետից մեծ կարևորություն ունեցող Նախիջևանի գավառի հնարավոր անցումը Հայաստանին՝ չէր կարող չանհանգստացնել Բաքվին և Անկարային: Շարուր-Նախիջևանի*

նկատմամբ Կարաբեքիրի առաջ քաշած պահանջը թուրք-ադրբեջանական հակահայկական դավադրության արդյունքն էր, որն իրականություն դարձավ Խորհրդային Ռուսաստանի լուռ համաձայնությամբ: Հայաստանի տիրապետության տակ գտնվող Շարուրը, Սուրմալուն կարող էին թուրք-հայկական բանակցությունների առարկա լինել, բայց Նախիջևանի գավառը՝ ոչ, քանի որ գտնվում էր Ռուսաստանի փաստական տիրապետության տակ: Մինչդեռ վերջինս չբողոքեց և չկանխեց այն: Դա լուրջ բացթողում էր ռուսական դիվանագիտության կողմից, ինչը ակնառու դարձավ չատ չուտով՝ Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում Նախիջևանի հարցի քննարկումների ժամանակ:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՇԱՐՈՒՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ – 1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ)

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Իրադրությունը Շարուր-Նախիջևանում Հայաստանում խորհրդային իշխանության առաջին ամիսներին: Թուրք-ադրբեջանյան հակահայկական և հակախորհրդային խժդժությունները (1920թ. դեկտեմբեր-1921թ. փետրվար)

Հայաստանը խորհրդայնացնելու խնդիրը և վիճելի տարածքների (Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան) վերաբերյալ Ադրբեջանի հեղկոմի հռչակագիրը: Հռչակագրի ընդունման իրական նպատակը:

Շարուր-Նախիջևանի՝ Հայաստանին անցումը կանխելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը. Ադրհեղկոմի անդամ Բ. Շահթախթինսկու գործուղումը Նախիջևան, նրա հակահայկական գործունեությունը և թուրքամետ քարոզչությունը: Նախիջևանի արտակարգ կոմիսար Վելիբեկովի բանակցությունները Երևանում. Նախիջևանին ինքնորոշման իրավունք տալու Հայհեղկոմի հռչակագիրը, գաղթականության չահերի անտեսումը:

Նախիջևանում իշխանությունը գավթելու թուրքական զորամասի հրամանատար Վեյսալ-բեյի դեկտեմբերյան փորձը, Երևանի և Նախիջևանի միջև հաղորդակցությունը խզելու ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերը: Թուրք գործակալների կողմից Հայաստանից ժամանած գործիչների Նախիջևան քաղաքում կազմակերպած միտինգի (հունվ. 7) ձախողումը: Վեյսալ-բեյի՝ Վելիբեկովին ներկայացրած պահանջները, վերջինիս մեղադրելը հայամետության մեջ: Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ-ի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի միացյալ նիստի (1921թ. հունվ.12) որոշումների հակահայկական էությունը:

Նախիջևանում իշխանությունը ձեռք գցելու Վեյսալ-բեյի նոր փորձը: Ջահրիի հակախորհրդային խռովությունը (հունվ. 28): Կարաբեքիր փաշայի փետրվարյան հակահայկական նամակները 11-րդ բանակի հրամանատարությանը: Նախիջևանի երկրամասում լարված իրադրության համար մեղավորության բարդումը հայերի վրա: Նախիջևանում իշխանությունը գավթելու թուրքերի նոր փորձերը փետրվարին. Նախիջևանի

ռուսական զորամասերը իր հրամանատարության տակ դնելու Վեյսալ-բեյի պահանջը, Ղարաջուղ և Բուման գյուղերում կազմակերպած ապստամբության և Նախիջևան քաղաքը գրավելու փորձի ձախողումը:

1920թ. նոյեմբերի 29-ի վաղ առավոտյան Հայաստանի հեղափոխական կոմիտեն (ՀայՀեղկոմ), որը նախապես կազմավորվել էր Բաքվում, այսպես կոչված հայկական ապստամբական գնդի և ռուսական 11-րդ Կարմիր բանակի մի զորամասի ուղեկցությամբ Ղազախից մտավ Քարվանսարա (այժմ՝ Իջևան) և հրապարակեց մի հռչակագիր, որով Հայաստանը հայտարարվում էր խորհրդային սոցիալիստական հանրապետություն: Ինչպե՞ս դա նախապատրաստվեց և իրականացվեց: Այդ հարցին այստեղ չենք անդրադառնա, քանզի այս դեպքում մեզ հետաքրքրողը ոչ թե խորհրդայնացման բուն գործընթացն է, այլ Ադրբեջանի և Հայաստանի միջև վիճելի համարվող տարածքների, հատկապես Շարուր-Նախիջևանի հիմնախնդրի լուծման հարցում այն նոր արծարծումներն ու զարգացումները, որ ծայր առան Հայաստանի խորհրդայնացման հետ մեկտեղ և շարունակվեցին մինչև Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը:

Հազիվ մեկ օր էր անցել ՀայՀեղկոմի հռչակագրի հրապարակումից, երբ արդեն հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, չսպասելով դեպքերի հետագա զարգացմանը և ամբողջ երկրում իշխանությունը ՀայՀեղկոմին անցնելուն[1], Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի միացյալ նիստում լսվում է «Հայաստանում խորհրդային իշխանության հռչակման վերաբերյալ ՀայՀեղկոմի հեռագրի մասին» հարցը և որոշվում հանձնարարել Ադրբեջանի հեղկոմին հատուկ հռչակագրով դիմելու հայ ժողովրդին, հայտարարելու երկու հանրապետությունների միջև սահմանների վերացման, Հայաստանի դեմ պատերազմական գործողությունները դադարեցնելու, վերջինիս հետ սերտ ռազմական և տնտեսական դաշինք կնքելու մասին: Միացյալ նիստը, բնականաբար, պետք է անդրադառնար նաև վիճելի տարածքների խնդրին. Ադրբեջանը, Զանգեզուրը և Նախիջևանը[2] «մեծահոգաբար» հռչակում էր Հայաստանի անբաժանելի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք էր վերապահում: Միացյալ նիստի այդ որոշումն իր կոնկրետ արտացոլումն էր գտել նույն օրը՝ նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովի և արտգործժողկոմ Հուսեյնովի ստորագրությամբ հրապարակված Ադրբեջանի հեղկոմի ողջույնի հայտարարության մեջ, որտեղ ուղղակի ասված էր. «Բոլորին, բոլորին, բոլորին. Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անունից հայտարարեք հայ ժողովրդին Ադրբեջանի հեղկոմի նոյեմբերի 30-ին կայացրած հետևյալ որոշումը.

Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը ստանալով ապստամբած գյուղացիների անունից Հայաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն հայտարարելու ուրախալի լուրը, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթությունը: Այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած սահմանավեճերը հայտարարվում են վերացված: **Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մասը...»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ադրբեջանի և Հայաստանի միջև վիճելի համարվող տարածքների շուրջ Բաքվում ծայր առած հայտարարությունները դրանով չեն ավարտվում: Այդ նույն նոյեմբերի 30-ին Լեգրանին ուղարկած պատասխան հեռագրում Օրջոնիկիձեն, մերժելով ՀայՀեղկոմի առաջխաղացումը մինչև դեկտեմբերի 3-ը հետաձգելու նրա առաջարկությունը, միաժամանակ ավելացնում է. «Ադրբեջանը արդեն արձագանքել է և Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը հանձնել է Խորհրդային Հայաստանին»[2]: Իսկ դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում՝ նվիրված Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը, Նարիմանովը հրապարակում է ԱդրՀեղկոմի դեկլարացիան, որում հավաստվում էր, որ այսուհետ տարածքային հարցերը չեն կարող երկու դարավոր հարևան ժողովուրդների միջև

---

[1] Ս. Վրացյանի կառավարությունը իշխանությունից հրաժարվելու և այն բոլշևիկներին փոխանցելու մասին համաձայնագիրը ստորագրել է դեկտեմբերի 2-ին, իսկ ՀայՀեղկոմը Երևան է հասել և իշխանությունը ստանձնել դեկտեմբերի 4-ին:

[2] Ադրբեջանի պատմաբանները հաճախ կեղծում են արխիվային փաստաթղթերը, նրանցից դուրս թողնում ամբողջ բառեր ու նախադասություններ: Այսպես, 1989թ. Բաքվում լույս տեսած փաստաթղթերի ժողովածուում Ադրկոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի միացյալ նիստի արձանագրությունից հանված է «Նախիջևան» բառը, իսկ Ն. Նարիմանովի հայտնի դեկլարացիայից՝ Նախիջևանը և Զանգեզուրը Հայաստանի մաս ճանաչելու մասին նախադասությունը (տե՛ս "К истории образования НКАО Аз. ССР, 1918-1925", документы и материалы, Баку, 1989, էջ 64,65):

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 967, փ. 10, թ.1:

[2] «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 379:

արյունահեղության պատճառ դառնալ, որ «Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքները Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս են կազմում, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը ինքնորոշվելու լիակատար իրավունք է տրվում, Զանգեզուրի սահմաններում բոլոր ռազմական գործողությունները դադարեցվում են, իսկ Խորհրդային Ադրբեջանի զորքերը դուրս են բերվում»[1]:

Խորհրդի նիստում ելույթ ունեցան և Ադրհեղկոմի ղեկլարացիան ողջունեցին Ալ. Բեկզադյանը (Հայհեղկոմի անունից), Օրջոնիկիձեն և Միխայլովը (11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի կողմից), Կամինսկին (Ադրկոմկուսի Կենտկոմի անունից) և ուրիշներ: Ընդունվել էր բանաձև, որը ողջունում ու հավանություն էր տալիս Ադրբեջանի ղեկավարության որոշմանը, այն համարում պատմական, որով մեկընդմիշտ վերջ կդրվեր ազգամիջյան ընդհարումներին և արյունահեղ պատերազմներին Հայաստանի և մուսուլմանական աշխարհի միջև[2]: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին, Օրջոնիկիձեն հաղորդագրություն է ուղարկում Մոսկվա, որում ասված էր. «Հայտնեցեք ընկ. Լենինին և Ստալինին հետևյալը. Հենց նոր Երևանից ստացվել է հաղորդագրություն, որ Երևանում հռչակված է խորհրդային իշխանություն, հին կառավարությունը վերացած է...: Հեղկոմը ներկայումս Դիլիջանում է, վաղն առավոտյան կգնա Երևան...: **Ադրբեջանը երեկ հռչակել է Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու օգտին»**[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ստանալով Օրջոնիկիձեի այս հաղորդագրությունը՝ Ի. Վ. Ստալինը դեկտեմբերի 4-ին «Պրավդա» թերթում հրապարակում է «Կեցցե Խորհրդային Հայաստանը» խորագրով հոդվածը, որտեղ խոսում է այն մասին, որ խորհրդային կարգերի հաստատումով «Հայաստանի և նրան շրջապատող մուսուլմանների միջև եղած դարավոր թշնամությունը լուծվեց մեկ հարվածով», և ի հաստատումն ասվածի վկայաբերում է Ադրբեջանի ղեկավարության վերոհիշյալ որոշումը՝ հատուկ շեշտադրությամբ ավելացնելով. «...դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանը հոժարակամ հրաժարվում է վիճելի տարածքներից և

[1] ՀԱԱ, ֆ.4033, ց.1, գ. 973, փ. 10, թ.1-3:

[2] Նույն տեղում:

[3] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, էջ 318-319:

հայտարարում է Զանգեզուրը, Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը[1] Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին»:

Այսպես, Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ հրապարակ հանվեց ու լայնորեն քարոզվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի համարվող տարածքների վերաբերյալ վերջինիս ղեկավարության նոր, «ինտերնացիոնալիստական» հռչակված մոտեցումը, որը, ինչ խոսք, կարող էր մեկընդմիշտ լուծել երկու ժողովուրդների միջև թշնամանք առաջացնող այդ հիրավի բարդ խնդիրը, եթե, իհարկե, Ադրբեջանի ղեկավարությունն իսկապես անկեղծորեն ու հոժարակամ էր հրաժարվել վիճելի տարածքներից, ինչպես Ի. Ստալինն էր գրում, եթե նրա այդ քայլը պարտադրված չէր բոլշևիկյան ղեկավարության կողմից, ժամանակավոր բնույթ չուներ ու չէր հետապնդում բացառապես մի նպատակ՝ նպաստել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանն ու ամրապնդմանը, Կոմկուսի շուրջը հայերի համախմբմանը:

Իրադարձությունների հետագա ընթացքն է մեզ բերում այդ համոզմանը: Շատ ժամանակ չէր անցել այդ «պատմական» օրերից, երբ պարզ դարձավ, որ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները բոլորովին էլ չեն հրաժարվել վիճելի տարածքներին տեր դառնալու մտադրությունից: Խոսքը հատկապես ադրբեջանական ծագումով ղեկավարների՝ Նարիմանովի, Հուսեյնովի, Կարաևի, Կասումովի և նրանց շուրջը համախմբվածների մասին է: Ճիշտ է, ձեռքի տակ չունենալով Ադրբեջանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի Քաղբյուրոյի և Կազմբյուրոյի նոյեմբերի 30-ի միացյալ նիստի սղագրությունները, չենք կարող ասել, թե ինչպիսին էր նրանց վերաբերմունքը վիճելի տարածքների վերաբերյալ կայացրած որոշման հարցում, թեև վստահ ենք, որ այդ նիստում լինելով փոքրամասնություն[2], ընդունված որոշումների վրա ազդել նրանք չէին կարող: Ճիշտ է նաև այն, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո Նարիմանովը և նրա խումբը այլևս զենքին ապավինել չէին կարող, բայց չէ՞ որ կային այլ միջոցներ ևս (չանտաժ,

[1] Ինքնորոշման իրավունքի փոխարեն Լեռնային Ղարաբաղը Հայաստանին հանձնելու վերաբերյալ որոշ փաստաթղթերում տեղ գտած դրույթը հավանաբար հետևանք էր այն մտայնության, որ հիմնականում հայաբնակ այդ մարզը հանրաքվեի դեպքում կարտահայտվեր Հայաստանի օգտին:

[2] Նիստի տասը մասնակիցներից միայն չորսն էին ազգությամբ ադրբեջանցի՝ Նարիմանովը, Հուսեյնովը, Կարաևը և Կասումովը: Նիստի մյուս մասնակիցներն էին՝ Օրջոնիկիձեն, Ստասովան, Կամինսկին, Սարգիսը, Եգորովը և Սերեբրովսկին (Տե՛ս «К истории образования НКАО...», էջ 63):

կաշառք, ցեղակից Թուրքիա և այլն): Թե ինչպես Նարիմանովն օգտագործեց նավթի գործոնը և չանտաժը՝ Լեռնային Ղարաբաղի հարցը հօգուտ Ադրբեջանի լուծելու համար, հանրահայտ է: Այդ մասին հրապարակի վրա պատմագիտական բազմաթիվ ուսումնասիրություններ կան թե՛ հայերեն և թե՛ օտար լեզուներով:

Վերջին տարիներին քիչ չի գրվել ու խոսվել նաև Զանգեզուրցիների հերոսական կեցվածքի, երկրամասը խորհրդայնացնելու միջոցով Ադրբեջանին կցելու Նարիմանովյան խմբի բոլոր փորձերին միահամուռ հակահարված տալու, այդ գործում Գ. Նժդեհի խաղացած անուրանալի դերի մասին: Զանգեզուրի հարցում Ադրբեջանի ձեռքերը իսկապես որ կարճ դուրս եկան: Արդյունք չտվեցին նույնիսկ Զանգեզուրի խորհրդային ղեկավար գործիչներին կաշառելու միջոցով Ադրբեջանի կողմը թեքելու, Կարմիր բանակի հրամանատարությանը զանգեզուրցիների դեմ տրամադրելու նպատակով ռուս զինվորականներ սպանելու և մեղքը հայերի վրա բարդելու ուղղությամբ Նարիմանովի խմբի անդամների ձեռնարկած քայլերը, ինչի մասին վկայություններ կան արխիվային որոշ փաստաթղթերում[1]:

Պատկերն այլ է Նախիջևանի հարցում: **Մեր պատմագիտական գրականության մեջ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համապատասխան հոդվածները վկայակոչելուց և Ադրբեջանի օգտին կայացրած համաձայնության գործում Թուրքիայի խաղացած դերը մատնանշելուց բացի՝ այլ բան գրեթե չկա: Բաքվում լույս տեսած ռուսալեզու ուսումնասիրություններում ևս ոչինչ չի ասված այդ հարցում Ադրբեջանի ղեկավարության խաղացած դերի մասին: Եվ ստեղծվում է տպավորություն, թե առանց ջանքեր թափելու, առանց նրա մասնակցության և նույնիսկ գիտության Ադրբեջանը Մոսկվայի կոնֆերանսից նվեր է ստացել մի ամբողջ երկրամաս: Մինչդեռ իրականությունը բոլորովին այլ է. Ադրբեջանն այդ ամենին հասել է Թուրքիայի հետ ձեռք ձեռքի տված, երկարատև ու համառ պայքարի արդյունքում ոչ միայն կոնֆերանսի օրերին, այլև նրան նախորդած ամիսների ընթացքում:**

Այն, որ ադրբեջանցի պատմաբանները Նախիջևանի խնդրում Նարիմանովի խմբի հակահայկական գործունեության մասին չպետք է գրեին, պարզ է ու հասկանալի[2]: Իսկ թե ինչո՞ւ այդ բանը չեն արել հայ

[1] Տե՛ս РГАСПИ, ф. 64, д. 19, л. 9, 10.

[2] Օրինակ, Գ. Մադաթովը, իր գրքում չուրջ 6-7 էջ նվիրելով Նախիջևանում Թուրք զինվորականության հակախորհրդային գործունեությանը, ոչինչ չի ասում

պատմաբանները, դժվար է ասել: Արդյո՞ք պատճառը միայն այն էր, որ ընդհանրապես չեն ցանկացել անդրադառնալ Նախիջևանի խնդրին, թե նաև այն, որ Բաքվի արխիվները մեր պատմաբաններին մատչելի չէին[1], իսկ Երևանի և Մոսկվայի արխիվներում այդ կարգի նյութ քիչ է պահպանվել: Պատճառներից մեկն էլ գուցե այն է, որ Ադրբեջանի ղեկավարությունը գործել է չափազանց զգույշ, հռչակագրի հրապարակումից հետո Նախիջևանի վերաբերյալ հրապարակային հայտարարություններ չի արել, գործել է Թուրքերի միջոցով: Ինչ էլ որ լիներ պատճառը, մի բան ակնհայտ է. հրապարակի վրա մենք չունենք Նախիջևանի խնդրում Թուրք-ադրբեջանյան հակահայկական գործունեությունը և խարդավանքները բացահայտող աշխատություն[2]: Մինչդեռ մեր արխիվներում պահպանված նյութը թեև քիչ է, բայցևայնպես հնարավորություն տալիս է բացահայտելու այն գործելակերպը, որ իրագործեցին Բաքուն և Անկարան՝ կանխելու համար Շարուր-Նախիջևանի անցումը Հայաստանին:

* * *

Հայաստանի խորհրդայնացումը և Նախիջևանը Հայաստանին հանձնելու վերաբերյալ բոլշևիկյան ղեկավարության հայտարարությունները չէին կարող առաջ չբերել Անկարայի կառավարող շրջանների անհանգստությունը: Նախ, որովհետև Հայաստանի խորհրդայնացումից հետո Նախիջևանի դերը՝ որպես Թուրքիայի հետ կապող օղակի, ինքնըստինքյան վերանում էր: Այժմ արդեն այդ կապն իրականացվում էր Հայաստանով՝ Կարս-Ալեքսանդրապոլ երկաթգծով: Իսկ դա նշանակում է, որ ո՛չ Թուրքիան, ո՛չ Ադրբեջանը Նախիջևանն իրենց ձեռքում պահելու համար այդ պատճառաբանությունն օգտագործել այլևս չէին կարող: Չէին կարող նաև ամբողջովին ապավինել Ալեք-

այդ գործունեության հակահայկական ուղղվածության և այդ հարցում Բ. Շահթախթինսկու խաղացած դերի մասին (Տե՛ս Г. Мадатов, Победа Советской власти в Нахичеване и образование Нахичеванской АССР, Баку, 1968, էջ 99-105):

[1] Դրանում համոզվել ենք անձամբ դեռևս 1970թ. Բաքվի արխիվներում աշխատելիս: Արտաքին քաղաքականության և վիճելի տարածքների վերաբերյալ նյութեր տրամադրելու մեր բոլոր պահանջները մերժվում էին, ըստ որում, առանց որևէ պատճառաբանության:

[2] Այդ հարցը մասամբ չոչափված է մեր «Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922թթ.» (տե՛ս էջ 220-225) և Գ. Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ.» (Եր., 1999, էջ 382-385) աշխատություններում:

սանդրապոլի պայմանագրին՝ քաջ գիտակցելով, որ Խորհրդային Ռուսաստանն այն չի ճանաչի, իսկ Հայհեղկոմն էլ կպահանջի չեղյալ հայտարարել այդ ապօրինի պայմանագիրը[1]: Ուրեմն Նախիջևանի անցումը Հայաստանին կանխելու և այնտեղ հաստատվելու համար նոր, ավելի հիմնավոր պատճառներ էին պետք: Եվ Թուրքական դիվանագիտությունը որոշում է դարձյալ շահարկել բոլշևիկյան ղեկավարությանը խիստ հոգեհարազատ Անտանտի դեմ պայքարելու անհրաժեշտությունը: Արդեն դեկտեմբերի 7-ին դեռևս Ալեքսանդրապոլում գտնվող Բեհբութ Շահթախթինսկին հեռագրում է. «...Թուրքերը չեն ժխտում ապագայում Անտանտի հետ որևէ համաձայնություն կնքելու հնարավորությունը (քեմալական ղեկավարության աջ թևի կողմից[2] – Է. Զ.), ուստի և **ուզում են Նախիջևանի մարզը, Շարուր-Դարալագյազի մի մասը և Մակվի խանությունը վերածել մի ինքնավար միավորի,** որը Անտանտի հետ համաձայնության դեպքում Թուրք ապստամբների համար բազա կծառայի Արևելքում Անտանտի դեմ պայքարը շարունակելու համար»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Մի կողմ թողնելով Պարսկաստանի մաս կազմող Մակվի խանության խնդիրը՝ արձանագրենք, որ այս հեռագիրը, ըստ էության, Նախիջևանի և Շարուրի նկատմամբ Ալեքսանդրապոլի պայմանագրով ամրագրված Թուրքիայի իրավունքների հիմնավորմանը և խորհրդային ղեկավարության կողմից այդ իրավունքների ճանաչմանն ուղղված քայլ էր: Եվ ուշագրավ է, որ այդ մասին հաղորդում է Շահթախթինսկին և ոչ թե Թուրք որևէ պաշտոնյա: Ճիշտ է, հեռագրում նա նաև ասում է, որ իբր ինքը Թուրքերին խորհուրդ է տվել Անտանտի դեմ պայքարի համար օգտագործել Բայազետի սանջակը և Վանի վիլայեթը, բայց կարծում ենք, որ դա ինքնաապահովագրման համար է ասված: Դրա ապացույցը հենց ինքը տվեց, երբ վերոհիշյալ հեռագրից կարճ ժամանակ անց հայտնվեց Նախիջևանում ու սկսեց Թուրքիայի օգտին բացահայտ քարոզչություն անել: Այդ մասին խիստ ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Նախիջևանի արտակարգ կոմիսար Վելիբեկովի զեկուցագրերում, որոնց շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1921թ. հունվարի 23-ով թվագրված 4-րդ զեկուցագիրը՝ ուղղված Հայաստանի կոմկուսի կենտկոմին և Հեղկոմին (պատճենը՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին և Հեղկոմին, 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդին): Այն բավականին ընդարձակ է՝ չուրջ ութ էջ, և այնտեղ խիստ ուշագրավ փաստեր կան մեզ հետաքրքրող հարցի՝ Նախիջևանի խնդրում Բաքվի և Անկարայի համագործակցության և հակահայկական գործունեության վերաբերյալ[1]: Իսկ թե ինչու 1920թ. դեկտեմբերին և 1921թ. հունվարին տեղի ունեցած իրադարձությունների մասին Նախիջևանի արտակարգ կոմիսարը զեկուցում էր այդքան ուշ՝ հունվարի 23-ին, կտեսնենք ավելի ուշ: Նախ ծանոթանանք զեկուցագրում տեղ գտած փաստերին:

Պարզվում է, որ Ալեքսանդրապոլում իր սև գործն ավարտելուց հետո Բ. Շահթախթինսկին դեկտեմբերի կեսերին անսպասելի կերպով հայտնվել է Նախիջևանում և զորամասի հրամանատար Վեյսալ-բեյի հետ ձեռք ձեռքի տված՝ ձեռնարկել Նախիջևանի ազգաբնակչությանը Թուրքիայի օգտին հակելու գործը: Խոսելով այն մասին, որ դեռ մինչև Շահթախթինսկու ժամանումը Նախիջևանի խորհրդային ղեկավարության և Վեյսալ-բեյի միջև որոշ հակասություն կար՝ վերջինիս կողմից խորհրդային հաստատությունների գործերին միջամտելու պատճառով, Վելիբեկովը գրում է. «Հանկարծ Նախիջևան է գալիս Ադրհեղկոմի անդամ, արդարադատության կոմիսար ընկ. Շահթախթինսկին: Իսկույն նրա շուրջն են հավաքվում խորհրդային իշխանությունից նեղացածները և վիրավորվածները՝ կալվածատերերը, կաշվեգործարանատերերը, առևտրականները և այլն: Այդտեղ եմ գալիս և ես՝ կենտրոնից տեղեկատվություն ստանալու համար: Նրանից իմանում եմ Նախիջևանի վերաբերյալ Ադրհեղկոմի ակտի՝ այսինքն նրան Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին: Հենց այստեղ՝ հասարակության ներկայությամբ նա փոքրիկ անզգույշ արտահայտություն է անում. «Ադրբեջանը ձեզ ծախեց, եթե ես Բաքվում լինեի, ապա դա թույլ չէի տա»: Ես հեռանում եմ: Մեկ ժամից հեղկոմը շրջապատվում է ամբոխի կողմից՝ երկու հարյուր քաղաքացիներ, որոնք բացատրություն են պահանջում Ադրբեջանի հեղկոմի ակտի վերաբերյալ»[2]:

Պակաս հետաքրքրական չէ Վելիբեկովի տված բացատրությունը

---

[1] Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ հայտարարելու և հայ-թուրքական նոր կոնֆերանս գումարելու վերաբերյալ Անկարայի կառավարությանն ուղղված Հայհեղկոմի առաջարկությունների մասին տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 172-189:

[2] Տարածված էր տեսակետ, թե քեմալական կառավարող շրջաններում երկու հոսանք կա՝ աջ և ձախ: Աջերը ձգտում էին Անտանտի հետ համաձայնության, ձախերը՝ Ռուսաստանի հետ համագործակցության և բարեկամության: Կարաբեքիր փաշային համարում էին ձախ թևի ներկայացուցիչ:

[3] РГАСПИ, ф. 85, оп. 13, д. 143, л. 1-2.

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 23-24, 28-29, 30-31, 34-35:

[2] Նույն տեղում, թ. 28:

ամբոխին: Նա հայտարարել է, որ Ադրբեջանի հեղկոմը ճիշտ է վարվել՝ ընդունելով այդ հռչակագիրը, որ այն հրապարակվել է Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից 2–3 օր առաջ և ուղղված էր ազգային զգացմունքների դեմ: «Այդ ակտով դաշնակները համոզվեցին իրենց անզորության մեջ, – ասել է Վելիբեկովը, – այն, ինչ տարիներով նրանք չկարողացան ձեռք բերել զենքի ուժով, այսօր խորհրդային իշխանությունը լուծել է գրչի մի հարվածով: Ես համոզեցի ամբոխին, որ ժողովրդի կամքը արտահայտող ***Խորհրդային Հայաստանից կհետևի ինքնավարություն տվող*** *(Նախիջևանին – Է. Զ.)* ***երկրորդ ակտը, իսկ այնուհետև կհետևի Նախիջևանի երրորդ ակտը, որն իր ճակատագիրը կորոշի իր տնտեսական պահանջմունքներին համապատասխան»***[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Ինչպես տեսնում ենք, Վելիբեկովը այդ չուրջ երկու հարյուր մարդկանց, որոնց նա ամբոխ է անվանում, չի փորձել համոզել, որ Ադրբեջանի հեղկոմը իր հռչակագրով ուղղակի արդարությունն է վերականգնել, որ անհրաժեշտ է ընդունել Հայաստանի գերիշխանությունը, որն այժմ արդեն խորհրդային է, ինչպես Ռուսաստանը և Ադրբեջանը, հարևան հայերի հետ ապրել հաշտ ու համերաշխ և այլն: Դրա փոխարեն նա հրապարակ է նետել Հայհեղկոմի կողմից Նախիջևանին ինքնորոշման իրավունք տալու գաղափարը՝ անտարակույս Շահթախթինսկու կողմից առաջադրված և այն էլ ոչ այնքան ամբոխին հանգստացնելու, որքան այն գործունեության ուղեցույց դարձնելու միտումով: Վստահաբար կարող ենք ասել, որ Բաքվում որևէ նախնական համաձայնություն չի կայացվել Հայհեղկոմի կողմից Նախիջևանին ինքնորոշման իրավունք տալու մասին ոչ միայն նրա համար, որ որևէ վկայության չենք հանդիպում ո՛չ հրապարակի վրա եղած գրականության մեջ (այդ թվում՝ ադրբեջանական) և ո՛չ էլ արխիվային փաստաթղթերում, այլև նրա, որ այդ դեպքում Շահթախթինսկին ազգաբնակչության մեջ Թուրքիայի օգտին քարոզչություն չէր անի: Զէ՞ որ ակնհայտ էր, որ հայերի և Հայաստանի դեմ թշնամաբար տրամադրված և 1918–1919 թվականների արյունալի իրադարձություններից հետո հիմնականում ադրբեջանական ազգաբնակչություն ունեցող Նախիջևանը ինքնորոշման իրավունքի իրագործման դեպքում կբռներ Ադրբեջանի կողմը: Սակայն Շահթախթինսկին դեկտեմբերյան այդ օրերին[2] *դեռևս վստահ*

[1] *Նույն տեղում:*

[2] *Վելիբեկովի զեկուցագրում ամսաթվերը նշված չեն: Այլ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ զեկուցագրում նշված իրադարձությունները տեղի են ունեցել դեկտեմբերի 22-ին:*

չէր, թե Հայաստանը Նախիջևանին ինքնորոշման իրավունք կտա և այդպիսով ցանկալի արդյունքի հասնելու հնարավորություն կառաջանա: Դրա համար էլ ավելի շատ հակված էր դեպի Թուրքիա, երկրամասը Հայաստանից կտրելու ամենաիրատեսական ուղին դա էր համարում և ազգաբնակչությանն էլ բացահայտորեն տրամադրում էր հօգուտ Թուրքիայի: Վելիբեկովը հունվարի 23-ով թվագրված իր զեկուցագրում հայտնում է, որ վերը հիշատակած հանդիպման ժամանակ ամբոխը միաձայն լիազորել էր իրեն հայտնելու վստահություն, երբ անսպասելիորեն հայտնվում է Շահթախթինսկին և «դիմելով ամբոխին բառացիորեն ասում հետևյալը. Ես՝ որպես Ադրհեղկոմի անդամ, այսօր վերցնում եմ ընկ. Վելիբեկովին և մեկնում: Այստեղ նա (Վելիբեկովը և ես) կապ չունի[1]*: Հիմա դուք հայացքներդ ուղղեք Թուրքերին: Նրանք են ձեր միակ փրկությունը: Ամուր բռնեցեք նրանցից»*[2]*:*

Վելիբեկովի զեկուցագրում տեղ գտած փաստերից դժվար չէ հետևություն անել, որ Շահթախթինսկին գործում էր Թուրքերի, այս դեպքում Նախիջևանի չրջանում տեղաբաշխված Թուրքական զորամասի հրամանատար Վեյսալ-բեյի հետ համախորհուրդ: Քաջատեղյակ Նախիջևան քաղաքում գումարված միտինգում հնչած Թուրքամետ հայտարարությանը՝ Վեյսալ-բեյը նույն օրը թողնում է իր նստավայր Շահթախթին, ժամանում Նախիջևան և միանգամից գործի անցնում՝ իր չուրջը համախմբելով բոլոր դժգոհ տարրերին: «Այդ օրը, – գրում է Վելիբեկովը, – Շահթախթի գյուղից գալիս է Թուրքական զորամասերի հրամանատար Վեյսալ-բեյը: Պատասխանատու ընկ., Ադրհեղկոմի անդամի խոսքերից հետո իսկույն նրա չուրջն են հավաքվում ոչ միայն մեզ թշնամաբար տրամադրված, այլև կոմունիստորեն տրամադրված տարրերը, քանի որ նրանք մտածում են, որ դա կենտրոնի կամքը և կարծիքն է: Այդ օրվանից սկսած մթնոլորտը լարվում է»[3]*:*

Վելիբեկովը նաև գրում է, որ Վեյսալ-բեյը, օգտվելով իր ժամանակավոր բացակայությունից (ճանապարհվել էր Երևան), իրեն հռչակել է Նախիջևանի արտակարգ կոմիսար և իր գործակալների միջոցով բացահայտ հակախորհրդային քարոզչություն ծավալել. «Ես չտապ մեկնում եմ Երևան՝ տեղեկացնելու կենտրոնին Ադրհեղկոմի ակտի կապակցությամբ մասսայի տրամադրության մասին, – կարդում ենք նրա զեկուցագրում: –Նախիջևանի կայարանում ես իմանում եմ, որ քա-

[1] *Այսպես է տեքստում:*

[2] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 30:*

[3] *Նույն տեղում:*

ղաքից իմ դուրս գալուն պես Վեյսալ-բեյը իրեն հռչակել է արտակարգ կոմիսար, քաղաքում հակահեղափոխականները խորհրդային իշխանության դեմ քարոզչություն են անում»[1]: Վելիբեկովը նաև հայտնում է, որ ինքը կայարանից (գտնվում էր քաղաքից չուրջ 1 կմ. հեռավորության վրա) անմիջապես հեռախոսագիր է ուղարկել Վեյսալ-բեյին՝ նման գործունեության անթույլատրելիության մասին և նաև նամակ Շահթախթինսկուն՝ խնդրելով ազդել Վեյսալ-բեյի վրա՝ դադարեցնելու հակախորհրդային գործունեությունը:

Վեյսալ-բեյի հակախորհրդային գործունեությանը դեռ կանդրադառնանք, այստեղ միայն նշենք, որ Վելիբեկովի ձեռնարկած քայլերը ոչ մի արդյունք չէին տվել, ինչի մասին վկայում է Երևանում Թուրքիայի արևելյան ճակատի ներկայացուցիչ Բահադդինի դեկտեմբերի 22-ին Հայհեղկոմ ներկայացրած գրությունը: Նրանում ասված է, որ ինքը Նախիջևանի արտակարգ կոմիսար և կարմիր զորամասերի հրամանատար Վեյսալ-բեյից նույն օրը ստացել է հաղորդագրություն, ըստ որի.

«1. Թուրքական բանակի արևելյան ճակատի ներկայացուցիչ ընկ. Բահադդինը միաժամանակ վարում է Խորհրդային Նախիջևանի ներկայացուցչի պաշտոնը:

2. Առանց Խորհրդային Նախիջևանի ներկայացուցչի տված վկայականի ոչ մի քաղաքացի իրավունք չունի անցնելու Խորհրդային Նախիջևանի տարածք և այդ մասին հրաման է տրված սահմանապահ զորամասերին:

3. Խորհրդային Նախիջևանի կողմից ընկերներ Վելիբեկովը և Նազիմը գործուղված են Երևան փախստականների դրության մասին ՀԽՍՀ-ի հետ բանակցելու համար»[2]:

Այս փաստաթղթի բովանդակությունից դժվար չէ հետևություն անել, որ նախ՝ Վեյսալ-բեյը, իրեն հռչակելով Նախիջևանի արտակարգ կոմիսար, գործել էր ոչ թե ինքնագլուխ, այլ թուրքական վերին իշխանությունների հրահանգով, այլապես նա չէր կարող Բահադդինին հայտարարել իր ներկայացուցիչը Երևանում: Եվ ապա, նա Հայաստանից Շարուր-Նախիջևանի անջատումը ոչ միայն կատարված փաստ է համարում, այլև փորձում է անկախ պետական կազմավորման կարգավիճակ հաղորդել նրան, ինչը չէր նախատեսված նույնիսկ Ալեքսանդրապոլի պայմանագրով: Ըստ այդմ, որպես թուրք ամբարտավան

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում, ց. 1, գ. 6, թ. 13:*

զինվորականության տիպիկ ներկայացուցիչ, անգամ հարկ չէր համարել հարցնելու Երևանի համաձայնությունը Բահադդինին որպես Նախիջևանի ներկայացուցիչ ճանաչելու խնդրում: Հարկ չէր համարել նաև հարցնելու Հայհեղկոմի համաձայնությունը փախստականների հարցի չուրջ բանակցելու մասին: Ի դեպ, փաստաթղթում չի ասված, թե խոսքը ո՞ր փախստականների մասին է: Թեև պարզից էլ պարզ է, որ Վեյսալ-բեյին և Շահթախթինսկուն հետաքրքրողը ոչ թե Շարուր-Նախիջևանի հայ գաղթականների վերադարձն էր հայրենի օջախ, այլ Զանգիբասարի և Վեղիբասարի մուսուլմանների:

Բահադդինի գրության մյուս ուշագրավ կողմն էլ այն է, որ նրանից պարզ է դառնում, որ Վելիբեկովը սեփական նախաձեռնությամբ չի ուղևորվել Երևան, ինչպես դա ներկայացնում է զեկուցագրում, այլ գործուղվել է: Ուրեմն կասկած չի կարող լինել, որ դա արվել է Շահթախթինսկու թելադրանքով, հետևաբար՝ ոչ առանց Վեյսալ-բեյի գիտության: Ընդհանրապես, իրադարձությունների ընթացքը վկայում է, որ դեկտեմբերյան այդ օրերին Վելիբեկովը գործում էր Շահթախթինսկու հետ համախորհուրդ, իսկ հակասությունը նրանց միջև ծագել է ավելի ուշ՝ 1921թ. հունվարի երկրորդ կեսին:

*Մեզ հայտնի չէ, թե Հայհեղկոմը ինչպես է վերաբերվել Բահադդինին Նախիջևանի ներկայացուցիչ ճանաչելու խնդրին. մերժե՞լ է, թե՞ ուղղակի թողել է անպատասխան: Հակված ենք կարծելու, որ այդ հարցը չուտով օրակարգից ուղղակի դուրս է եկել, քանի որ Վեյսալ-բեյն էլ 4-5 օր հետո ստիպված եղավ հրաժարվելու իր հավակնություններից: Օրինակ, Հայաստանի արտգործժողկոմի ներկայացրած դեկտեմբերի 27-ի պաշտոնական գրության մեջ, որում չշափված է Շարուրի չրջանի հայկական գյուղերի հարցը, Բահադդինը արդեն ներկայանում է միայն որպես Թուրքիայի արևելյան ճակատի ներկայացուցիչ: Ի միջի այլոց, փորձելով արդարացնել թուրք զինվորականությանը՝ Բահադդինը գրում է, որ «Շարուրի հայկական գյուղերը ավերվել էին 1919թ., այսինքն մինչև թուրքական զորքերի մուտքը այնտեղ», և որ, հակառակը, հայ գաղթականները հեռանալով ավերել են բոլոր մուսուլմանական գյուղերը և տարել տների փայտյա մասերը: «Վերջին ռազմական գործողություններից առաջ,- հավելում է Բահադդինը, - **Հայ գաղթականները տեղավորված էին Բաշնորաշենում, Մամեդքենդում և այլ մուսուլմանական գյուղերում, ինչը վկայում է այնտեղ հայկական գյուղերի բացակայության մասին»**[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):*

[1] *Նույն տեղում թ. 22:*

ճիշտ է Բահադդինը, որ Շարուրի հայկական գյուղերը ավերվել էին դեռևս 1919թ., ճիշտ է նաև, որ շարուրցի գաղթականները, որոնք հայրենիք էին վերադարձել 1920թ. ամռանը՝ հայկական զորքերի կողմից Շարուրը ազատագրելուց հետո, տեղավորվել էին ոչ թե իրենց, այլ մուսուլմանական լքված գյուղերում: Բայց դրա պատճառը ոչ թե այն էր, որ Շարուրում հայկական գյուղեր չկային, ինչպես եզրակացնում է Բահադդինը, այլ այն, որ այդ գյուղերը ավերվել ու հողին էին հավասարեցվել այնքան հիմնովին, որ նրանցում բնակվել հնարավոր չէր: Ըստ որում, այդ գործում քիչ չի եղել նաև Թուրք զինվորականության դերը, բոլոր նրանց, ովքեր կազմակերպեցին և գլխավորեցին հակահայկական շարժումը Շարուրում: Դա պետք է որ Բահադդինը չմոռանար:

Դառնալով Վելիբեկովի առաքելությանը՝ ցավով պետք է արձանագրենք, որ այն հաջողությամբ է պսակվել. Հայհեղկոմը բոլոր հարցերում ընդառաջել է նրան, բավարարել նրա բոլոր պահանջները այն դեպքում, երբ դրանք չէին բխում Հայաստանի շահերից (օր.՝ Շարուր-Նախիջևանին ինքնորոշման իրավունք տալը): Ինքը՝ Վելիբեկովը, վերը հիշատակված իր զեկուցագրում շատ հակիրճ է անդրադարձել իր երևանյան առաքելությանը: Նա գրում է. «Հայաստանի հեղկոմը շատ ուշադիր վերաբերվեց իմ զեկուցմանը և **հրապարակեց դեկլարացիա, որով Նախիջևանի երկրամասի ճակատագիրը հանձնում էր ազգաբնակչության կամքին»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Այսքանը միայն. Վելիբեկովը բառացիորեն ոչինչ չի ասում, թե ինքը ուրիշ ի՞նչ փաստարկներ է բերել հօգուտ Նախիջևանի ինքնորոշման, ինչպե՞ս է կարողացել համոզել Հայհեղկոմի անդամներին ընդունել իր առաջարկությունը: Նա ոչինչ չի ասում նաև Հայհեղկոմի կողմից իրեն Նախիջևանի արտակարգ կոմիսար նշանակելու մասին: Մինչդեռ Հայաստանի ազգային արխիվում է պահվում Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանի և արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի ստորագրությամբ 1920թ. դեկտեմբերի 24-ին Վելիբեկովին հանձնված այն վկայականի պատճենը, որտեղ ուղղակի ասված է. «Սույն վկայականը տրված է ընկ. Վելիբեկովին առ այն, որ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության **Հեղկոմի կողմից նա նշանակվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ կոմիսար Նախիջևանի շրջանում:**

Հանրապետության բոլոր ռազմական և քաղաքացիական իշխանություններին առաջարկվում է ընկ. Վելիբեկովին ցույց տալ անհրաժեշտ աջակցություն՝ նրա վրա դրված պարտականությունների կատարման ժամանակ»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Շատ տարօրինակ է, որ այս նշանակման մասին ոչինչ չկա ոչ միայն մեր, այլև ադրբեջանցի պատմաբանների աշխատություններում: Սակայն անհայտությունների շարքը դրանով չի ավարտվում: Անհայտ է մնում նաև մեկ այլ բան՝ արդյո՞ք Վելիբեկովը Երևանում գտնվելու ժամանակ Հայհեղկոմին տեղեկացրել է Շահթախթինսկու հակահայկական գործունեության մասին: Փաստերի բացակայությունը այս հարցին միանշանակ պատասխան տալու հնարավորություն չի տալիս: Բայց որ Հայաստանի ղեկավարությունը արդեն անվստահությամբ էր վերաբերվում Շահթախթինսկուն, դա փաստ է, և այդ մասին վկայություն կա Ա. Մռավյանի և Ա. Բեկզադյանի միջև դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած մի հեռախոսային խոսակցությունում[2]:

Բայնն այն է, որ դեկտեմբերի կեսերին Մոսկվայում գտնվող Ասքանազ Մռավյանը և Սահակ Տեր-Գաբրիելյանը տեսակցություններ էին ունեցել Վ. Լենինի, Լ. Տրոցկու և Լ. Կարախանի հետ[3]: Թե ինչի մասին են խոսել Լենինի և Տրոցկու հետ ու ինչ պատասխան ստացել, կտեսնենք մեկ այլ տեղ: Ինչ վերաբերում է Շահթախթինսկուն չվստահելու խնդրին, ապա հայ պատվիրակներն իրենց այդ կարծիքը հայտնել են Կարախանի հետ հանդիպման ժամանակ, երբ զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել Թուրքերի հետ առաջիկայում կոնֆերանս գումարելու և հայ-թուրքական հարաբերությունների խնդրին: Հայտնելով այն մասին, որ կոնֆերանս գումարելու հարցը դեռ լուծված չէ, որ Թուրքերը համառորեն պնդում են գումարել այն Բաքվում և որ այդ հարցում տարաձայնություններ կան Անգորայի և Էրզրումի միջև, ու ինքը կարծում է, որ Անգորան հակված է զիջելու, բայց Կարաբեքիրը բողոքում է, Կարախանը նաև ավելացրել է, թե անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ Թուրքերի դիրքորոշման, ինչպես նաև այն մասին, թե «ինչպիսի ազդեցությունից է օգտվում Կարաբեքիրը»: Իսկ երբ Կարախանը նաև ասել է, որ այդ կապակցությամբ ինքը «մեծ հույսեր է կապում Շահթախթինսկու գործուղման հետ», ապա հետևել

[1] Նույն տեղում, ց. 2, գ. 25, թ. 29:

[1] Նույն տեղում, գ. 87, թ. 1:

[2] Հեռախոսային այս խոսակցությունը Լոնդոն էր հաղորդել Կովկասում բրիտանական հետախուզական ծառայությունը:

[3] Ծրագրված էր հանդիպում (Լենինի առաջարկությամբ) նաև Ստալինի հետ, բայց այն չի կայացել վերջինիս կույր աղիքի բորբոքման պատճառով:

է հայ պատվիրակների պատասխանը այն մասին, որ իրենք չեն վստահում Շահթախթինսկուն: «**Մեր հայտարարությունը**, – ասվել է վերոհիշյալ հեռախոսային խոսակցության ժամանակ, – **որ մենք չենք վստահում Շահթախթինսկուն, ընդունվեց կասկածանքով: Մեզ մոտ ստեղծվել է տպավորություն, որ նա գտնվում է Էլիավայի և Սուբհու ազդեցության տակ**»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Այս նույն հեռախոսային խոսակցության ժամանակ Մռավյանը նաև հայտնել է տարածքային հարցերում Կարախանի բացասական դիրքորոշման մասին: «**Ինչ վերաբերում է Կարսի և Նախիջևանի հարցին**, – ասել է Կարախանը, – **ապա ըստ իս հնարավոր չէ զիջումների հասնել, և ես անհրաժեշտ չեմ համարում Կարսի հարցը վերածել Անգորայի հետ խզման պատճառի**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ավելորդ չենք համարում մատնանշել, որ միայն Էլիավայի և Սուբհու ազդեցությամբ չէ, որ Կարախանի մոտ (հետևապես և ՌԽՖՍՀ Արտգործժողկոմատի ու կառավարության) նման մտայնություն էր ձևավորվել, այլև բոլշևիկյան բոլոր այն գործիչների, որոնք ամեն գնով քեմալականների հետ համաձայնությունը համարում էին ոչ միայն Արևելքում հակաիմպերիալիստական շարժումների, այլև համաշխարհային հեղափոխության կայացման հիմնական պայման:

Ինչ վերաբերում է մեզ հետաքրքրող խնդրին՝ Շահթախթինսկու նկատմամբ անվստահությանը, ապա ամենայն հավանականությամբ նրա հակահայկական տրամադրությունների մասին հայ գործիչները տեղեկացված են եղել շատ ավելի վաղ: Այդպես մտածելու հիմք է տալիս այն իրողությունը, որ Մոսկվայում կայացած հանդիպումները տեղի են ունեցել ոչ թե դեկտեմբերի վերջերին՝ Վելիբեկովի Երևան ժամանելուց հետո, այլ դրանից առաջ: Ինչպես հայտնի է, Լենինի հետ Մռավյանը և Տեր-Գաբրիելյանը հանդիպել են դեկտեմբերի 13-ին, իսկ 15-ին Մռավյանն արդեն ճանապարհվել էր Մոսկվայից և 18-ին գտնվում էր Ռոստովում[3]: Իսկ դա նշանակում է, որ Տրոցկու ու Կարախանի հետ հայ գործիչների հանդիպումը պետք է տեղի ունեցած լինի կամ Լենինի հետ նրանց հանդիպման օրը, կամ էլ մեկ օր առաջ

[1] «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», под. ред. Ю. Барсегова, М., 2003, стр. 337.

[2] Նույն տեղում:

[3] Այստեղից նա հայկական կարմիր բանակի կազմակերպման վերաբերյալ Տրոցկու հետ ունեցած զրույցի ոգով նամակ է ուղարկել Օրջոնիկիձեին: Նամակը թվագրված է դեկտեմբերի 18-ով:

կամ հետո: Ուրեմն՝ Շահթախթինսկու նկատմամբ անվստահության աղբյուրը Վելիբեկովը չէր: Մի հանգամանք ևս. բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Մռավյանը դեկտեմբերի 26-ին Բեկզադյանի հետ հեռախոսով խոսել է ոչ թե Մոսկվայից, այլ Բաքվից: Նախ, որովհետև այդ ժամանակ նա վաղուց Մոսկվայում չէր, և հետո՝ Մոսկվայի և Երևանի միջև հեռախոսային ուղիղ կապ չկար: Բացի այդ, հեռախոսային խոսակցությանը մասնակցել է նաև Բաքվում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Աթաբեկյանը:

Վերադառնալով Հայհեղկոմի կողմից Նախիջևանին ինքնորոշման իրավունք չնորհելու խնդրին՝ նախ ասենք, որ Հայաստանի ազգային արխիվում պահվող մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Հայհեղկոմը դեկտեմբերի 24-ի իր նիստում լսել է «Նախիջևանի մասին դեկլարացիայի» հարցը և որոշել հրապարակել ներկայացված դեկլարացիան[1]: Այլ տվյալներ (Հայհեղկոմում քննարկման ընթացքի, դեկլարացիայի նախապատրաստման և այլն) չեն պահպանվել, և այդպես էլ անհայտ է մնում, թե Հայաստանի համար արտակարգ կարևորություն ունեցող այդ հարցում հեղկոմի անդամները ի՞նչ մոտեցում են դրսևորել, կամ թե ինչո՞ւ է հեղկոմը այդքան արագ ու անվերապահ արձագանքել Վելիբեկովի ակնհայտորեն ուռճացված տեղեկատվությանը «Նախիջևանում մթնոլորտի չիկացման» մասին և առանց ստուգման կամ որևէ նախապայմանի (օրինակ, Նախիջևանահայության՝ իրենց ընօրրանը վերադառնալու իրավունքի մասին) հապճեպ կատարել նրա պահանջը՝ հրապարակելով իսկապես անհաջող ու հայ ժողովրդի շահերն անտեսող հռչակագիր: Այս առիթով քննադատական խոսք ասելով Հայհեղկոմի հասցեին՝ միաժամանակ հարկ ենք համարում ավելացնելու, որ դատելով Զիչերինին ուղարկած Լեգրանի մի զեկուցագրից՝ Հայհեղկոմն այդ որոշումն ընդունել է Լեգրանի գիտությամբ, գուցեև նրա ցուցումով: Զեկուցագրում ուղղակի ասված է. «Հայաստանի հեղկոմը հանդիսավոր հռչակագրով Նախիջևանի բնակչությանը ինքնորոշման իրավունք է վերապահել: **Դա անհրաժեշտ էր Նախիջևանը Հայաստանին միացնելու կապակցությամբ մուսավաթիստների կողմից հարուցած թշնամական ագիտացիան կանխարգելելու համար**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ինչպես տեսնում ենք, Վելիբեկովը կարողացել է չինծու պատմու-

[1] ՀԱԱ ֆ. 114, ց. 1, գ. 17, թ. 18:

[2] **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 385:

թյուններով տպավորություն թողնել: Իսկ Հայհեղկոմի հռչակագրում ասված էր.

«Հայաստանի անտանելի և ոճրագործ դաշնակցական կառավարության անկումից և բանվորագյուղացիության խորհրդային իշխանություն հիմնվելուց հետո մեր եղբայր Խորհրդային Ադրբեջանը հանդիսավոր ակտով ոչնչացրեց հայերի և Ադրբեջանի մեջ եղած վեճը և Նախիջևանը հայտարարեց Խորհրդային Հայաստանի անբաժան մասը: Բայց Հայաստանի խորհրդային իշխանությունը իր կարողությունը տեսնում է միայն իրեն ազգաբնակչության՝ ըստ որում նաև Նախիջևանի աշխատավոր ժողովրդի կամքի պարզ արտահայտման մեջ:

Ողջունելով Նախիջևանի Հեղկոմը՝ որպես արտահայտիչ Նախիջևանի ազգաբնակչության շահերի, որը հերոսական Կարմիր բանակի օգնությամբ վայր է գցել իմպերիալիստական Անտանտայի և Անդրկովկասի ազգասերների անտանելի լուծը՝ Հայաստանի Հեղկոմը հավատացած է, որ Նախիջևանի բռնությունից ազատ աշխատավորական մասսաները կարող են տալ իրենց պարզ և որոշ կազմակերպված կարծիքը՝ իրենց ցանկալի փոխհարաբերությունների մասին՝ ամբողջ աշխատավոր Խորհրդային Հայաստանի հետ»[1]:

Մենք հռչակագիրը ամբողջությամբ մեջբերեցինք, որպեսզի ընթերցողն էլ տեսնի ու համոզվի, թե որքան թույլ, անկզբունք ու ոչ հայանպաստ փաստաթուղթ էր այն: Նրանում ոչ մի խոսք չկա Նախիջևանի երկրամասի նկատմամբ Հայաստանի իրավունքների մասին, ոչ մի նախապայման չի առաջադրված: Մինչև 1918–1919թթ. բռնագաղթը երկրամասի ազգաբնակչության չուրջ 35–40 տոկոսը կազմող նախիջևանահայերի շահերն ու իրավունքները մոռացության են տրված: Հռչակագրի հեղինակների ամենամեծ բացթողումը համարում ենք այն, որ որպես ինքնորոշման իրավունքի իրագործման նախապայման չի առաջադրվել նախիջևանահայության անպայման վերադարձի և հանրաքվեին մասնակցելու պահանջ: Եվ այդ հռչակագրի տակ դրված է Հայհեղկոմի նախագահ Կասյանի և անդամներ Ավիսի ու Բեգզադյանի ստորագրությունը: Ճիշտ է, բոլշևիկյան ղեկավար շրջանների համար ինքնորոշման իրավունքը ավելի շատ լոզունգ էր, քան գործունեության ուղեցույց: Հանրահայտ է, օրինակ, որ չնայած Նարիմանովի հռչակագրին, Լեռնային Ղարաբաղի հայությանն այդպես էլ ինքնորոշվելու հնարավորություն չտրվեց: Նախիջևանի հարցն էլ հանրաքվեի միջոցով չլուծվեց, թեև ադրբեջանցի պատմաբանները, խոսքները մեկ արած, գրում են, թե Նախիջևանի հարցը լուծվել է հանրաքվեի միջոցով, և որ ազգաբնակչության 90 տոկոսն արտահատվել է Ադրբեջանի օգտին: Այսպես, օրինակ, Գ. Մադաթովը գրում է. «1921թ. սկզբին Նախիջևանի քաղաքներում և գյուղերում Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, ՌԽՖՍՀ և այլ ներկայացուցիչներ ազգաբնակչության մեջ հարցում են կատարել Ադրբեջանի հեղկոմի և Հայաստանի հեղկոմի դեկրետների կապակցությամբ: Հանրաքվեի արդյունքում բնակչության 90 %-ից ավելին արտահայտվել է այն բանի օգտին, որ Նախիջևանը մնա Ադրբեջանական ԽՍՀ կազմում՝ ինքնավար հանրապետության իրավունքով»[1]:

Հետագա շարադրանքում մենք դեռ կտեսնենք, թե ինչպես է լուծվել Նախիջևանի հարցը, իսկ հիմա ուղղակի նշենք, որ անլուրջ է խոսել երկրամասում որևէ հանրաքվե կատարվելու մասին, առավել ևս Հայաստանի և Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ ու ոչինչ չասել այն մասին, որ նախիջևանահայությունը զրկված էր այդ իրավունքից: Կտեսնենք նաև, որ Վեյսալ-բեյի կարգադրությամբ Հայաստանի ներկայացուցիչներին Նախիջևանի տարածք մտնել չէր թույլատրվում: Մինչդեռ ադրբեջանցի պատմաբանը, շարունակելով կեղծիքը, գրում է. «...հետագա տարիներին Կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային կառավարությունը Նախիջևանի ԻԽՍՀ-ում ազգային պետական շինարարության գործում ելնում էին աշխատավորության այդ կամաարտահայտությունից»[2]:

Վերադառնալով Հայհեղկոմի դեկտեմբերի 24-ի նիստին՝ հարկ ենք համարում ավելացնել, որ այդ նիստում լսվել է նաև Նախիջևանում գտնվող հայ ռազմագերիների մասին հարցը: Բանն այն է, որ նախորդ օրը՝ դեկտեմբերի 23-ին, վկայակոչելով Նախիջևանից վերադարձած ականատեսին, Ղամարլուից Երևան հղված հեռագրում հայտնվել էր, որ Նախիջևանում գտնվող հայ ռազմագերիները «սարսափելի վիճակում են, բոլորը մերկացված են»: Ինչպես երևում է, ռազմագերիներին մերկացնելը և միայն ներքնաշորերով թողնելը (լավագույն դեպքում) Թուրքերի մեջ սովորական բան էր: Նրանք այդպես էին վարվել նաև Կարսում գերի ընկած հայ զինվորների հետ, որի հետևանքով գերիների մեծ մասը մահացել էր ցրտահարությունից: Փորձելով Նախիջևանում

[1] «Կոմունիստ», 28 դեկտեմբերի 1920թ.:

[1] **Գ. Մադաթով**, նշվ. աշխ., էջ 95:

[2] Նույն տեղում:

պահվող հայ ռազմագերիներին փրկել նույն ճակատագրից՝ Հայհեղկոմը կայացրել էր որոշում. «Ընկ. Վելիբեկովի գնացքին կցելով մի քանի վագոններ, հանձնարարել նրան տեղ հասնելուն պես Նախիջևանում գտնվող հայ ռազմագերիներին տեղավորել նրանցում և բրիգադի հրամանատարի աջակցությամբ վերադարձնել Երևան»[1]:

Ինչպես տեսնում ենք, որոշման մեջ հայ ռազմագերիների թվի մասին ոչինչ չի ասված, նաև պարզ չէ, թե խոսքը միայն վերջին պատերազմո՞ւմ, թե՞ նաև 1919թ. իրադարձությունների ժամանակ գերության մեջ հայտնված զինվորների մասին է: Որոշակի է միայն մի բան. հայ ռազմագերիներին առանց Թուրքական զորամասի հրամանատարի թույլտվության վերադարձնել չէին կարող, այլապես ռուսական զորամասի հրամանատարի աջակցությանը դիմելու կարիք չէր լինի:

Թեև դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությունների մեջ չի մտցված, բայց այլ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Վելիբեկովի երևանյան բանակցությունների արդյունքում Հայհեղկոմը նաև 20 մլն. ռուբլի էր հատկացրել Նախիջևանին: Թե ինչ նպատակով է այն տրվել, միայն ենթադրել կարելի է, բայց հատկանշական է, որ սովահար ու գաղթականներով լի Հայաստանը, որտեղ օրական մի քանի տասնյակ մարդ սովամահ էր լինում, նման չչափելի գումար է հատկացնում իր նկատմամբ թշնամաբար տրամադրված երկրամասի կարիքների համար: Չի բացառվում, իհարկե, որ Հայհեղկոմի այդ քայլը քաղաքական նպատակներով էր թելադրված, թեև չենք կարծում, թե Կասյանը և մյուսները հնարավոր համարեին նման միջոցներով Նախիջևանի մուսուլմաններին տրամադրել Հայաստանի օգտին: Ասենք նաև, որ նախօրեին Հայհեղկոմը ինժեներ Զարգարյանի ղեկավարությամբ մի հատուկ բանվորական գնացք էր ուղարկել Նախիջևան՝ երկաթուղային և հեռախոսային ցանցը նորոգելու և Երևանի հետ բնականոն կապը վերականգնելու նպատակով: Իսկ մի քանի օր անց (ավելի ճիշտ՝ հունվարի սկզբին) Հայհեղկոմը մահմեդականների համակրանքը շահելու ուղղությամբ մի քայլ ևս կատարեց. Ս. Կասյանի ստորագրությամբ մի ընդարձակ հեռագիր ուղարկեց Ն. Նարիմանովին, որում իր հիացմունքն էր արտահայտում Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի վերաբերյալ Ադրբեջանի հեղկոմի նոյեմբերի 30-ի հռչակագրի կապակցությամբ, հավաստիացնում, որ Ադրբեջանի կողմից այդ հարցերի արդարացի լուծումը երկու հանրապետությունների քաղաքական և տնտեսական ընկերակցության հիմք է դնում, և որ

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 18:

«այսուհետ Խորհրդային Հայաստանի սահմաններում օտարածինների և այլազգիների բիրտ ու անմիտ հալածանքներն այլևս տեղ չունեն և խորհրդային կարգերի բոլոր բարիքները հավասարապես կտարածվեն Հայաստանի բոլոր քաղաքացիների վրա»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Թե ինչ «բիրտ ու անմիտ հալածանքներ» են կիրառվել նախախորհրդային Հայաստանում այլազգիների և օտարածինների նկատմամբ, դա Կասյանի գաղտնիքն է, և հակառակն ապացուցելը մեր խնդիրը չէ: Բայց գաղտնիք է մնում նաև այն, թե ինչ նպատակ էր հետապնդում Կասյանն այս հեռագրով, ինչո՞ւ նա Նարիմանովի հռչակագրին արձագանքում է չուրջ մեկ ամիս հետո, և արդյո՞ք դա կապված չէր Նախիջևանի խնդրի չուրջ դեկտեմբերի վերջին օրերին ծավալված քննարկումների հետ:

«Քաղաքականությունը հաշիվ է», – ասում են քաղաքական գործիչները: Դա նշանակում է, որ քաղաքականության մեջ չահում են նրանք, ովքեր ճիշտ են հաշվարկում իրենց ձեռնարկած քայլերի հնարավոր հետևանքները: Արդյո՞ք ճիշտ էր հաշվարկել ու ճիշտ քաղաքական գիծ որդեգրել Հայհեղկոմը Վելիբեկովին ամեն հարցում ընդառաջելու և Նախիջևանին առանց նախապայմանների ինքնորոշման իրավունք տալու խնդրում, ցույց պետք է տար մոտիկ ապագան:

* * *

Մինչ Հայհեղկոմը հայերի և ադրբեջանցիների հաշտեցման համար ուղիներ էր փնտրում, Նախիջևանի Թուրքական հրամանատարությունը երկրամասը Հայաստանից կտրելու և ամբողջովին Թուրքիայի գերիշխանությանը ենթարկելու ուղղությամբ կտրուկ քայլեր էր ձեռնարկում, փակում Երևանից Նախիջևան տանող խճուղային և երկաթուղային բոլոր ճանապարհները: Դեռ Հայհեղկոմի վերը նշված նիստի նախօրեին՝ դեկտեմբերի 23-ին, Ղամարլուի ջոկատի չտաբի պետ Ահարոնովը և զինկոմ Մխչյանը հեռագրել էին Երևան, թե Նախիջևանից վերադարձած ինժեներ Զարգարյանը հայտնում է, որ «Նախիջևանում Թուրքական իշխանություն է հռչակված, Թուրքերը գրավել են քաղաքը, Արազդայան կայարանում գնացքը կանգնեցվել և ստուգվել է Թուրք սպայի և 15 ասկյարների կողմից, ըստ որում, սպան պահանջել է Թուրքական անցագիր»[2] և հայտարարել, որ այսուհետ

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1207, փ. 11:
[2] Նույն տեղում, գ. 1176, փ. 10:

առանց թուրքական անցագրի ոչ մի գնացք չի թողնելու: Հեռագրում նաև ասված էր, որ «Արարատ կայարանում, այսինքն չեզոք գոտում, հանդիպել են երեք սպաների»: Այդ հանգամանքը առիթ է տվել, որ հատուկ հեռագրով Ս. Կասյանի ուշադրությունը հրավիրվի այդ փաստի վրա և առաջարկվի միջոցներ ձեռնարկել «նախօրոք կանգնեցնելու դեպի չեզոք գոտի թուրքերի ենթադրվող շարժումը»[1]:

Դեկտեմբերյան այդ օրերին Վեյսալ-բեյի հակահայկական ու նաև հակախորհրդային գործունեության մասին վկայություն կա նաև Վելիբեկովի՝ վերը հիշատակած զեկուցագրում: Խոսելով Երևանում իր ձեռք բերած հաջողության մասին՝ նա գրում է. «Ես անմիջապես վերադարձա Նախիջևան, որպեսզի տեղեկացնեմ բնակչությանը դեկլարացիայի մասին: Տեղ հասնելով ես չճանաչեցի Նախիջևանը: Սահմանի վրա թուրքական ջոկատ էր կարգված, որը կանգնեցնում էր Հայաստանից Նախիջևանի շրջան ուղարկվող բոլոր գնացքները (այդ թվում և իմ): Քարոզիչներ էին ուղարկված բոլոր շրջանները, որոնք գոռում էին Խորհրդային Նախիջևանի նկատմամբ Թուրքիայի պրոտեկտորատի մասին: Հիմնարկություններից (գլխավորապես զինկոմիսարիատից) վտարվել էին կոմունիստները...» և այլն[2]:

Շարուր-Նախիջևանում թուրք զինվորականության հակահայկական գործունեությունը չէր կարող առաջ չբերել Հայհեղկոմի անհանգստությունը, բայց միջամտության որևէ միջոց չունենալով՝ նա հարկադրված դիմում է Լեգրանի օգնությանը: Վերջինիս կարգադրությամբ դեկտեմբերի 26-ին տեղում իրադրությանը ծանոթանալու և համապատասխան զեկուցում ներկայացնելու նպատակով Շարուր-Նախիջևան է գործուղվում 2-18 բրիգադի հրամանատար Երմոլենկոն առաջին բրիգադի հրամանատարի և զինկոմ Մխչյանի ուղեկցությամբ: Դեկտեմբերի 27-ին Լեգրանին և Ավիսին (Խորհրդային Հայաստանի ռազմական կոմիսար) հասցեագրած զեկուցագրում Երմոլենկոն հաստատում է այն իրողությունը, որ «Թուրքական ջոկատի հրամանատար Վեյսալ-բեյը իրեն հռչակել է արտակարգ կոմիսար Օրդուբադից մինչև Նորաշեն ներառյալ՝ հենվելով թուրքական կառավարության հետ դաշնակների (ստորագրած) պայմանագրի վրա, ավելացնելով, որ իրեն ժամանակավոր արտակարգ կոմիսար է հռչակում, այսինքն մինչև որ Թուրքիայից այդպիսին կժամանի»[3]: Զեկուցագրում նաև ասվում է, որ

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 30:
[3] Նույն տեղում:

Վեյսալ-բեյը բանտերից ազատ է արձակել բոլոր հակահեղափոխականներին, և որ թուրք էմիսարները թուրքամետ ուժեղ քարոզչություն են ծավալել: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ազգաբնակչության կողմնորոշման մասին նրա ներկայացրած կարծիքը. «Համաձայն ընկ. Ստուդենի հայտարարության, եթե բնակչությանն ինքնուրույն կողմնորոշման հնարավորություն տրվի, ապա այն անպայման կհակվի դեպի Թուրքիա, քան դեպի Խորհրդային Հայաստան, բայց եթե առաջարկվի խորհրդառուսական իշխանություն, ապա նրանք անպայման կհրաժարվեն առաջին երկուսից հօգուտ վերջինի»[1]: Երմոլենկոն նաև ճշգրտված տեղեկություն է հաղորդում Վեյսալ-բեյի տնօրինության տակ գտնվող թուրքական ուժերի թվաքանակի մասին, որից պարզ է դառնում, որ նրանց թիվը պատերազմի ավարտից հետո զգալիորեն կրճատվել էր: «Շարուրի և Նախիջևանի շրջաններում թուրքական զորքերի թվաքանակը ճշտորեն ստուգված տվյալներով կազմում է հետևակի 8 վաշտ (յուրաքանչյուրում 30 մարդ), 8 գնդացիրներով և մեկ լեռնային հրանոթով, - գրում է Երմոլենկոն: - Այդ զորամասերը տեղաբաշխված են հետևյալ կերպ. 2 վաշտ (60 մարդ) Նորաշենում 4 գնդացիրներով, Արարատ և Արազդայան կայարաններում՝ 1 վաշտ, Նախիջևանում 2 վաշտ 4 գնդացիրներով, Շահթախթիում 2 վաշտ մեկ լեռնային հրանոթով, Սաղարակում 1 վաշտ: Ոչ մի այլ ուժ նշված շրջանում Վեյսալ-բեյի տնօրինության տակ չկա, բայց հիմք կա ենթադրելու, որ Վեյսալ-բեյը կապ ունի Իգդիրի խմբավորման հետ, քանի որ պահակակետ է պահում Արարատ կայարանում և աչալրջորեն հսկում Արաքսի ափը»[2]:

Դատելով Բ. Լեգրանի հետագա քայլերից՝ պետք է ենթադրել, որ Նախիջևանում թուրք գործակալների հակախորհրդային գործունեության և ազգաբնակչության թուրքամետ կողմնորոշման մասին Երմոլենկոյի հաղորդածը խիստ անհանգստացրել է նրան: Դեկտեմբերի 30-ին Մոսկվա՝ Գ. Չիչերինին ուղարկած ընդարձակ զեկուցման մեջ ամենայն մանրամասնությամբ ներկայացնելով Նախիջևանում տիրող իրադրությունը (իշխանությունը զավթելու ուղղությամբ Վեյսալ-բեյի ձեռնարկած քայլերը, Հայհեղկոմի կողմից Նախիջևանին ինքնորոշման իրավունք վերապահելը, ազգաբնակչության մեջ թուրքամետ տրամադրությունների առկայությունը և այլն)՝ Լեգրանը այսպիսի առա-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ջարկ է անում. «Անհրաժեշտ եմ համարում ժամանակավորապես՝ **մինչև բնակչության կամքի պարզելը և ռուս-թուրքական առաջիկա խորհրդաժողովում Նախիջևանի պետական պատկանելիության հարցի լուծումը,** Նախիջևանում կոմիսար նշանակել Ռուսաստանի կառավարության կողմից»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Անտարակույս է, որ ռուսական կառավարության կողմից Նախիջևանի կոմիսար նշանակելու մտահղացման համար հիմք է ծառայել Երմոլենկոյի զեկուցագրում տեղ գտած այն կարծիքը, ըստ որի՝ Նախիջևանի ազգաբնակչությունը ռուսական իշխանությունը կգերադասի հայկականից ու թուրքականից: Սակայն չի կարող տարակուսանք չառաջացնել այն հանգամանքը, որ Լեգրանը, որը մինչ այդ բազմիցս հայտարարել էր, թե չի կարելի Հայաստանը թողնել առանց Նախիջևանի, ճիշտ այնպես, ինչպես որ չի կարելի տնամերձը թողնել առանց ջրհորի, հիմա հանկարծ փոխում է իր կարծիքը և խոսում ազգաբնակչության կամաարտահայտության ու ռուս-թուրքական կոնֆերանսում այդ երկրամասի պետական պատկանելիության հարցի լուծման մասին: Ինչո՞վ բացատրել: Կարծում ենք, այլ ելք չտեսնելով, Լեգրանն իր այդ նոր առաջարկությամբ պարզապես փորձում էր Նախիջևանի մահմեդականներին Ռուսաստանի կողմը գրավել և փրկել երկրամասը Թուրքերի ոտնձգություններից: Նման ենթադրության օգտին է խոսում նաև այն իրողությունը, որ Լեգրանը, չբավարարվելով տեղական գործիչներից ստացված ինֆորմացիայով, որոշել էր անձամբ լինել Նախիջևանում և տեղում ծանոթանալ իրադրությանը: Այդ մասին վկայություն կա Նախիջևանի փախստականներին օգնություն կազմակերպող ջոկատում Հայկոմկուսի լիազոր ներկայացուցիչ Հատիկ Ազիզյանի մի զեկուցագրում: Նա գրում է. «Ինչպես հայտնի է, ընկ. Լեգրանը Նախիջևանում էր հունվարի 2-ին, իսկ 3-ին վերադարձավ Երևան»[2]: Ո՞ւմ հետ է հանդիպել և ինչի՞ մասին բանակցել. բնական է, որ Ազիզյանն իմանալ չէր կարող և այդ մասին ոչինչ չի ասում: Առավել քան տարօրինակ է, որ Լեգրանի Նախիջևանյան այցելության մասին ոչ մի հիշատակություն չկա Նախիջևանի արտակարգ կոմիսարի՝ Վելիբեկովի զեկուցագրերում, մարդ, որն անտարակույս գտնվել է իրադարձությունների կենտրոնում: Մինչդեռ ահա Անդրկովկասի բրիտանական հրամանատարությունը տեղեկություններ էր հավաքել

[1] **Գ. Գալոյան,** նշվ. աշխ.., էջ 385:
[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 22, թ. 7:

ոչ միայն Լեգրանի այցի, այլև նրա հանդիպումների ու հետաքրքրած նպատակի մասին: 1921թ. հունվարի 27-ին Լոնդոն ուղարկած հաղորդագրության մեջ գնդ. Ստոքսը հայտնում էր, թե Լեգրանը հունվարի 1-ին **«ժամանել էր Նախիջևան, որպեսզի ապահովեր Նախիջևանի միացումը Հայաստանին,** բայց հաղորդում են, որ տեղի հեղափոխական կոմիտեն որոշել է սպասել Մոսկվայում առաջիկայում տեղի ունենալիք խորհրդաժողովի արդյունքներին»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Զենք կարծում, թե Լեգրանի Նախիջևանյան այցելության նպատակը երկրամասը Հայաստանին միացնելն էր, ինչպես Ստոքսն է ներկայացրել նշված հաղորդագրությունում: Լեգրանը չէր կարող ընդամենը երկու օր առաջ (դեկտեմբերի 30-ին) Չիչերինին ուղարկած գրությամբ առաջարկել Նախիջևանում ռուսական կառավարության ներկայացուցիչ նշանակել և երկրամասի ճակատագրի որոշումը հետաձգել մինչև ազգաբնակչության կամաարտահայտության կազմակերպումը ու Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսում նրա պատկանելիության հարցի լուծումը, իսկ երկու օր հետո Նախիջևանը Հայաստանին միացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել: Ո՛չ, առավել հավանականն այն է, որ Նախիջևանի հեղկոմի հետ հանդիպման ժամանակ հենց իր առաջ քաշած հարցերի մասին է զրուցել: Գուցե հենց դա է պատճառը, որ այդ հանդիպման մասին որևէ պաշտոնական հայտարարություն չի արվել: Բնական է, որ նման դեպքում ծայր առնեին ասեկոսեներ, տարածվեին ամեն կարգի լուրեր: Սակայն նաև չի բացառվում, որ Լեգրանն այնուամենայնիվ չոչափել է երկրամասը Հայաստանին միացնելու հնարավորության հարցը և ցանկացել պարզել այդ խնդրում Նախիջևանի թե՛ ղեկավարության և թե՛ ազգաբնակչության տրամադրությունը: Դա ևս հնարավոր է, մանավանդ եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ Լեգրանի այդ այցից չորս օր անց՝ հունվարի 7-ին, Հայաստանից ժամանած գործիչներին Նախիջևանում միտինգ գումարելու հնարավորություն տրվեց: Վերջապես չպետք է անտեսել և այն, որ Կովկասի ճակատագիրը տնօրինողները՝ Ստալինը, Օրջոնիկիձեն, դեռևս հաստատուն կերպով կանգնած էին Նախիջևանը Հայաստանի կազմում տեսնելու տեսակետի վրա:

Դատելով Վելիբեկովի՝ Նախիջևան վերադառնալուց և ՀայՀեղկոմի դեկլարացիայի մասին միտինգներում հայտարարություններ անելուց հետո Վեյսալ-բեյի և Բ. Շահթախթինսկու պահվածքից՝ պետք

[1] **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 415:

է ենթադրել, որ նրանք սկզբում գոհ էին Վելիբեկովի երևանյան առաքելության արդյունքներից: Նման ենթադրություն անելու իրավունք է տալիս այն փաստը, որ Վեյսալ-բեյն իսկույն հայտարարել էր, որ վայր է դնում արտակարգ կոմիսարի պաշտոնը, և հեռացել էր Շահթախթի: Նրա հետ Շահթախթի էր գնացել նաև Բ. Շահթախթինսկին: Եվ մի որոշ ժամանակ (շուրջ 8-10 օր) Թուրք զինվորականությունն իրեն հանգիստ էր պահում: Սակայն դա կարճ տևեց, Վեյսալ-բեյը շուտով նորից ակտիվացավ՝ կապված Լեգրանի այցի և տարածված այն լուրերի հետ, որ իբր այդ այցի նպատակը Նախիջևանի երկրամասը Հայաստանին միացնելն է՝ և որ Վելիբեկովը ծախվել է Հայաստանին՝ ստանալով 20 միլն. ռուբլի: Հունվարի 5-ին (1921թ.) Վեյսալ-բեյը Վելիբեկովին ուղարկած հեռախոսագրով պահանջում է Արևելյան ճակատի հրամանատարությանը զեկուցելու համար.

«1. Շտապ ուղարկել Հայաստանի հեղկոմի դեկրետի պատճենը, որ Դուք անձամբ եք բերել և հայտարարել բնակչությանը:

2. Ի՞նչ պաշտոն եք Դուք զբաղեցնում Նախիջևանում և ո՞ւմ կողմից եք նշանակված:

3. Ստացված է տեղեկություն, որ Դուք Երևանից բերել եք քսան միլիոն ռուբլի: Հայտնեցեք, ճի՞շտ է դա, թե՞ ոչ»[1]:

Ուշագրավ է, որ Վեյսալ-բեյն այս գրության տակ առաջին անգամ ստորագրել է ոչ միայն որպես Նախիջևանում գտնվող «Թուրքական կարմիր ջոկատի հրամանատար», այլև «Արևելյան ճակատի դիվանագիտական ներկայացուցիչ»:

Վելիբեկովն անմիջապես պատասխանում է Վեյսալ-բեյին, ուղարկում Նախիջևանին ինքնորոշման իրավունք վերապահող Հայհեղկոմի դեկրետի պատճենը, տեղեկացնում, որ ինքը Նախիջևանի արտակարգ կոմիսար է նշանակված բոլշևիկյան կուսակցության Կոնտկոմի կողմից ու միաժամանակ հանդիսանում է 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի լիազորը: Բայց բառացիորեն ոչինչ չի ասում այն մասին, որ ինքը Նախիջևանի արտակարգ կոմիսար է նշանակված նաև Հայաստանի հեղկոմի կողմից: Կարծում ենք՝ պատճառը Թուրքերին չգրգռելու ցանկությունն էր: Տեղին ենք համարում նաև ավելացնել, որ հետագայում էլ նա ոչ մի անգամ (ոչ զեկուցագրերում, ոչ էլ հրապարակային որևէ ելույթում) չի հիշատակել Հայհեղկոմի կողմից Նախիջևանի արտակարգ կոմիսար նշանակվելու փաստի մասին: Ինչ

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 31:

վերաբերում է երրորդ կետին, ապա Վելիբեկովը հաստատել է Երևանից 20 միլիոն ռուբլի բերելու փաստը և ավելացրել, որ այդ գումարը Նախիջևանին տրամադրել է Խորհրդային Ռուսաստանը, և «ինչպես որ Ադրբեջանն է հանդիսանում փոխանցման կետ Ռուսաստանի և Հայաստանի միջև, այնպես էլ Խորհրդային Հայաստանը կծառայի որպես փոխանցման կետ Ռուսաստանի, Ադրբեջանի և Խորհրդային Նախիջևանի միջև»[1]:

Սակայն երկրորդ կետի վերաբերյալ Վելիբեկովի տված պատասխանը ըստ երևույթին չէր բավարարել Վեյսալ-բեյին, և երեք օր անց՝ հունվարի 8-ին, մի նոր, ավելի ընդարձակ (վեց կետերից բաղկացած) գրություն է ուղարկում Վելիբեկովին, որի առաջին կետում դարձյալ առաջ է քաշում վերջինիս լիազորությունների հարցը:

«Ես, որպես Արևելյան ճակատի գլխավոր հրամանատարության քաղաքական ներկայացուցիչ, - ասված է նրանում, - իմ կառավարությանը զեկուցելու համար պաշտոնապես հարցնում են Ձեզ հետևյալի մասին:

1. Նկատի ունենալով ձևավորված նոր պատմական իրողությունները, խնդրում եմ, եթե հնարավոր է, Նախիջևանում կապի սպա Իքմեթին ներկայացնել Ձեր մանդատը Ձեզ Նախիջևանի արտակարգ կոմիսար նշանակելու մասին և, եթե հնարավոր է, Ձեր մանդատի պատճենը ուղարկել ինձ, եթե հնարավոր չէ, ապա ի՞նչ պատճառներով»[2]:

Ինչպես տեսնում ենք, այս անգամ Վեյսալ-բեյն արդեն հանդես է գալիս միայն որպես Թուրքիայի արևելյան ճակատի գլխավոր հրամանատարության քաղաքական ներկայացուցիչ, բայց նաև հայտարարում, թե այդ ամենը անհրաժեշտ է իր կառավարությանը զեկուցելու համար (նա կարող էր զեկուցել իր հրամանատարությանը և ոչ կառավարությանը): Իսկ Վելիբեկովի մանդատի մասին իր պահանջը պատճառաբանում «ձևավորված նոր պատմական իրողություններով»՝ անտարակույս նկատի ունենալով Թուրք-հայկական պատերազմն ու Ալեքսանդրապոլի պայմանագիրը և ոչ թե Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Ընդհանրապես, Վեյսալ-բեյի այս գրությունը բովանդակության առումով չափազանց հետաքրքիր է ու նաև բնութագրական՝ Նախիջևանի հարցում Անկարայի կառավարության վարած քաղաքականությունը բացահայտելու տեսակետից: Նրանում

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, գ. 22, թ. 15:

Նախիջևանի իշխանություններին ներկայացված մի շարք պահանջներ ու մեղադրանքներ կան, որոնցում Վելիբեկովը դիտվում է որպես հայամետ գործիչ: Դա հատկապես արտահայտված է 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում, որոնք և ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը.

«2. 36թ.[1] այս ամսի 7-ին մի հայ միտինգ է կազմակերպել, ողջունել հայկական կառավարությանը, Նախիջևանի շրջանի բնակչությանը ու փորձել ստորագրություններ հավաքել Նախիջևանը Հայաստանին միացնելու համար: Իհարկե, նա լիազորություններ ունի և պետք է ներկայացնի Նախիջևանի կառավարությանը: Կասկած չկա, որ այդ հայը պաշտոնական անձ է: Ինչո՞ւ Դուք Երևանի հեղկոմից կարգադրագիր չեք ստացել այդ հային աջակցելու վերաբերյալ, եթե ստացել եք, ապա խնդրում եմ պատճենը ներկայացնել ինձ:

3. Թույլ կտա՞ կառավարությունը Թուրքիայից եկող ընկերոջը (գումարել) միտինգ հօգուտ թուրքական կառավարության, եթե ոչ, ապա ինչո՞ւմն է տարբերությունը:

4. Բնակչությունը՝ չիմանալով բանն ինչումն է, Ձեր գիտությամբ ագիտատորներ են ուղարկվել բոլոր գյուղերը, որոնք գովաբանելով հայերին, նկարագրում են թուրքական բռնության սարսափները: Վերոհիշյալը ապացուցող պաշտոնական փաստաթուղթ ունենք: Խորհրդային իշխանության ծրագրում կա՞ ագիտացիա այս կամ այն պետության օգտին: Եթե թուրքերն էլ այնպես վարվեն, ինչպես Դուք այժմ վարվում եք և եթե բնակչությունը բաժանվի երկու լագերի ու հեղվի աշխատավոր բնակչության անմեղ արյունը, ո՞վ դրա համար պատասխանատու կլինի: Ընդունենք, թե մեղավորը թուրքերն են, ապա ինչո՞ւ հայերի օգտին քարոզել կարելի է, իսկ թուրքերի օգտին՝ չի կարելի»[2]:

Վկայակոչելով Ալեքսանդրապոլի պայմանագիրը ու հանդես գալով որպես Նախիջևանի խորհրդային իշխանության և աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպան՝ գրության 5-րդ և 6-րդ կետերում Վեյսալ-բեյը Վելիբեկովին այլ կարգի մեղադրանքներ էլ է ներկայացնում (աշխատավորական զանգվածների շահերի ոտնահարում, հանցագործների ու կուլակների պաշտպանություն և այլն): Այդ հարցերին մենք չենք անդրադառնա, քանի որ, նախ, հեռու են մեր հետապնդած

[1] Պետք է լիներ 1336թ (իսլամական տոմար), որը համապատասխանում է քրիստոնեական տոմարի 1921թ-ին:

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 22, թ. 15-16:

խնդիրներից և հետո՝ ասված են ի միջի այլոց, կարծես թե մերկապարանոց չլինելու համար: Իսկ գլխավորը՝ գրության առանցքը, ինչպես վերը տեսանք, հունվարի 7-ին Նախիջևան քաղաքում կազմակերպված միտինգն էր, որի նպատակը, ըստ Վեյսալ-բեյի, Հայաստանին միանալու օգտին ստորագրություններ հավաքելն էր: Ուրեմն, փորձենք պարզել, թե դա ի՞նչ միտինգ էր, ովքե՞ր էին կազմակերպել և արդյո՞ք Հայաստանին միանալու օգտին ստորագրություններ հավաքելու փորձ է կատարվել:

ՀՀ ազգային արխիվում երկու փաստաթուղթ կա, որոնցում խոսվում է այդ միտինգի մասին: Մեկը Վելիբեկովի հունվարի 23-ի զեկուցագիրն է, որում այդ հարցը չոչոփված է շատ հակիրճ: Մյուսը՝ Հատիկ Ազիզյանի վերը հիշատակած զեկուցագիրն է, որտեղ միտինգի ընթացքը նկարագրված է բավական մանրամասնությամբ՝ ականատեսի ու մասնակցի դիրքերից: Խոսելով այն մասին, որ ներկա պահին Նախիջևանում թուրքերի հիմնական խնդիրը «անարխիա առաջացնելը և խորհրդային իշխանության վարկաբեկելն է», և որ այդ նպատակով նրանք խորհրդային մարմիններում իրենց ունեցած հայտնի ու գաղտնի գործակալների միջոցով ինքնակամ ռեկվիզիցիաներ ու ձերբակալություններ են կատարում, Հ. Ազիզյանը որպես այդ քաղաքականության վառ ապացույց վկայակոչում է նաև հունվարի 7-ին Նախիջևան քաղաքում կոմունիստների կազմակերպած միտինգի ձախողումը թուրք գործակալների կողմից:

Ըստ Հ. Ազիզյանի՝ սկզբում ամեն ինչ հանգիստ էր ընթանում, ելույթ են ունենում Նախիջևանի Կոմկուսի քարտուղար Սուլեյմանովը, ինքը՝ Ազիզյանը, և նրա հետ Երևանից եկած Ախունդովը, որը գործուղված էր Նախիջևան կոմունիստների երիտասարդական միության Կենտկոմի կողմից: «Այնուհետև կարդացվեց բանաձևը, - գրում է Ազիզյանը, - որը կազմված լինելով իմ կողմից՝ ընկ. Սուլեյմանովի մասնակցությամբ, դեռ հարևան սենյակում[1] մեր համաձայնությամբ և տեղական կոմկուսի (անդամության) թեկնածուներ գրանցված մի քանի ընկերների մասնակցությամբ, վերամշակման էր ենթարկվել: Բանն այն է, որ սկզբում բանաձևը ամենաանմեղ ձևով էր կազմված: Երկու կետ կար. ողջունել Հայաստանում բանվորագյուղացիական հեղափոխությունը և հայ աշխատավորների հետ միասին պայքարել խորհրդային իշխանության ամրապնդման համար (իհարկե, բոլորովին

[1] Միտինգը տեղի էր ունենում դահլիճում:

չմատնանշելով, թե որ)»[1]: Ազիզյանն այնուհետև պատմում է, որ համակրողներն առաջարկեցին միտինգի կողմից ընդունելիք բանաձևում կետ ավելացնել, որով ողջունում էին Հայաստանի հեղկոմի կողմից Նախիջևանին ինքնորոշման իրավունք չնորհող դեկլարացիան, և թեև դրանով իսկ բանաձևը որոշ չափով սեպարատիզմի երանգ էր ստանում, բայց իրենք համաձայնել են դրան: «Եվ ահա, երբ այդ վերամշակված բանաձևը ընթերցվեց դահլիճում, – շարունակում է Ազիզյանը, – պատասխանը լիակատար լռություն էր: Այնուհետև սկսվում է միտինգի կազմակերպված տապալումը: "Համակրող ընկերները", որոնք մասնակցել էին բանաձևի մշակմանը, հանկարծ, մեզ համար անսպասելի կերպով, սկսում են կատաղի քննադատել բանաձևը: Դրանք Թուրքերի ակնհայտ գործակալներն էին, որոնք սողոսկել էին կոմունիստական միջավայր»[2]: Դահլիճում մթնոլորտն ավելի է չիկանում, Սուլեյմանովի և Ախունդովի բացատրության փորձերը թշնամաբար են ընդունվում, իսկ Թուրք գործակալների ամեն մի խոսքը արժանանում է միտինգավորների բուռն համակրանքին: Դահլիճում հայտնվում են նաև ծպտված Թուրք ասկյարներ, և միտինգը չարունակելը դառնում է անիմաստ:

Վելիբեկովի զեկուցագրից տեղեկանում ենք, որ Թուրք գործակալները չեն բավարարվել միայն միտինգի տապալումով: Կապի սպա Իքմեթը, ներկայանալով Վելիբեկովին, Վեյսալ-բեյի անունից պահանջել է ձերբակալել միտինգը կազմակերպողներին՝ Սուլեյմանովին, Ազիզյանին և Ախունդովին: Բավարարում չստանալով՝ Թուրք գործակալները նույն օրը միտինգ են կազմակերպել գնդում և որոշել զինաթափել Զեկային (Արտակարգ հանձնաժողով), գրավել բանտը և ազատել հակախորհրդային տարրերին ու հանցագործներին: Սակայն Վելիբեկովին հաջողվել է գնդի հրամանատարին համոզել թույլ չտալու հակաօրինական գործողություններ:

Նախիջևանի գունդը դարձել էր այն հիմնական ուժը, որի միջոցով Վեյսալ-բեյը քաղաքում և նրա շրջապատում ինքնակամ բռնագրավումներ ու ձերբակալություններ էր կատարում՝ անարխիա առաջացնելու և խորհրդային իշխանությունը վարկաբեկելու նպատակով: Գնդի սպայական կազմի զգալի մասը Թուրք սպաներ էին, քիչ չէր նաև Թուրք ասկյարների թիվը: Այլ կերպ ասած՝ գունդը դարձել էր Թուրք

[1] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 22, թ. 16:*

[2] *Նույն տեղում:*

գործակալների և էմիսարների հավաքատեղի, և Վելիբեկովը՝ որպես խորհրդային իշխանության ներկայացուցիչ, չէր կարող աչք փակել այդ ամենի վրա: Առավել ևս, որ Վեյսալ-բեյը նրա նկատմամբ իր հակակրանքը և Նախիջևանից նրան վտարելու մտադրությունը բնավ չէր թաքցնում: Անհրաժեշտ էր ազատվել այդ գնդի ներկայությունից, և Վելիբեկովը որոշում է կազմացրել այն: Եվ քանի որ Զեկայի ուժերը բավարար չէին այդ հարցը լուծելու համար, ուստի Շահթախթիում կանգնած 106-րդ ռուսական հեծելագնդի հրամանատար Վոլոդկինից խնդրում է մի էսկադրոն ուղարկել Նախիջևան: Նախիջևան է գալիս նաև Վոլոդկինը Վեյսալ-բեյի հետ միասին (Բ. Շահթախթինսկին արդեն մեկնել էր Բաքու): Վերջինս հարկադրված է լինում համաձայնել, որ գնդի Թուրք ասկյարները հեռանան Նախիջևանից և մտնեն Շահթախթիի Թուրքական զորաջոկատի մեջ: Հունվարի 11-ին Նախիջևանի գունդը կազմացրվում է, իսկ չուրջ 43 հոգի, որոնք ակտիվորեն մասնակցել էին հակախորհրդային ելույթներին, ձերբակալվում են:

Այս իրադարձություններից հետո բուն Նախիջևանում ու նրա շրջակայքում մի որոշ ժամանակ (չուրջ երկու շաբաթ) խաղաղություն հաստատվեց: Ե՛վ Վեյսալ-բեյը, և՛ նրա էմիսարները այդ օրերին հանգիստ էին և Վելիբեկովի ու խորհրդային իշխանության դեմ որևէ քայլ չէին ձեռնարկում: «Կոնֆլիկտը հարթվում է, – գրում է Վելիբեկովը: – Նախիջևանը իսկապես դառնում է խորհրդային»[1]: Համոզված, որ կոնֆլիկտը վերջնականապես կհարթվի, և Նախիջևանի երկրամասում հանգստություն կպահպանվի միայն այն դեպքում, եթե Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատարությունը փոխի վերաբերմունքը և հրաժարվի երկրամասում ներքին խլրտումներ հրահրելուց, նա նույնիսկ Կարաբեքիր փաշային սիրաշահելու փորձ է անում: «Հեղափոխական Անատոլիան՝ որպես ավանգարդ, առաջինը Արևելքի ազատագրության լոզունգով կարմիր դրոշ պարզեց, – ասված է Քյազիմ Կարաբեքիրին ուղարկած Վելիբեկովի հունվարի 19-ի հեռագրում: – Ժողովուրդները ուշադրությամբ ունկնդրում են այդ ձայնը և մեծ հույսով նայում նրան: Օր-օրի ավելի ու ավելի է ընդլայնվում կարմիր Անատոլիայի գործունեության դաշտը, բարձրանում է նրա հեղինակությունը խորհրդային հանրապետությունների մոտ և ***արդեն մոտ է այն օրը, երբ Արևելքի ճակատագիրը կհանձնվի նրա ձեռքը ու նա կդառնա այնպիսի կենտրոն, ինչպիսին Մոսկվան է»***[2] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

[1] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ.35:*

[2] *Նույն տեղում, թ. 19:*

Պետք է ենթադրել, որ այս տողերը չարադրելիս Վելիբեկովը դեռ չգիտեր, որ դրանից երկու օր առաջ՝ հունվարի 17-ին, Կարաբեքիրը Վեյսալ-բեյից ստացած տեղեկատվության հիման վրա դիմել էր Մդիվանուն՝ հայտնելու Օրջոնիկիձեին իր դժգոհությունը Վելիբեկովի գործունեությունից, որն իբրև թե Նախիջևանի ազգաբնակչության մեջ վնասակար քարոզչություն է տարածում[1]: Այլապես նա այդքան վերամբարձ տոն չէր հաղորդի իր գրությանը և այդպիսի չռայլ գնահատական չէր տա Անատոլիայի ազգայնական շարժմանը՝ Արևելքի համար նրան համարելով նույնպիսի կենտրոն, ինչպիսին Մոսկվան էր:

Վելիբեկովը չէր կարող չհասկանալ, որ նման միջոցներով Անկարային Նախիջևանի նկատմամբ հավակնությունից հնարավոր չէ չեղել, որ ներքին խլրտումների, խորհրդային իշխանությանն ու նրա ներկայացուցիչներին վարկաբեկելու նպատակը Նախիջևանի հարցի լուծումն է մինչև Մոսկվայի կոնֆերանսի գումարումը: Հազիվ չորս օր էր անցել Կարաբեքիրին հասցեագրած այս գրությունից, երբ Վելիբեկովը Հայկոմկուսի կենտկոմին և Հայհեղկոմին (պատճենը Ադրհեղկոմին ու Կոմկուսի կենտկոմին և 11-րդ բանակի Ռազմհեղխորհրդին) ուղարկած զեկուցագրում, եզրափակելով Նախիջևանյան իրադարձությունների մասին իր խոսքը, դրանք համարում է «վիթխարի իրադարձությունների նախերգանք» և ավելացնում. «Թուրքիան վերջին ժամանակներս սիրախաղ է անում ինչպես մեզ, այնպես էլ Անտանտայի հետ և, ինչպես վերջին փաստերն են ցույց տալիս, թեքվել է Անտանտի կողմը: Նա ցանկություն ուներ զավթել սեպաձև խրված Նախիջևանի շրջանը՝ իրականացնելու համար իր պլանը. բարձրացնել ընդհանուր հակահեղափոխություն սկսած Անատոլիայից, Մակվից, Նախիջևանից, պարսկական Ադրբեջանից և վերջացրած Խորհրդային Ադրբեջանով: Դա հաստատվում է հետևյալ փաստերով. ոտնձգությունը Նախիջևանի նկատմամբ, պահանջը Մակվի Սարդարից դադարեցնելու (սպառնալիքի տակ) առևտրական հարաբերությունները Խորհրդային Նախիջևանի և Հայաստանի հետ, կնքված հաշտությունը (ոչ առանց Թուրքիայի ազդեցության) ապստամբ Սմկոյի[2] և պարսկական Ադրբեջանի միջև»[3]:

[1] Տե՛ս ,,Геноцид армян...", էջ 372.

[2] Ուրմիա լճից արևմուտք ընկած շրջանում հաստատված քրդական ցեղերից մեկի ցեղապետը, որին հաջողվել էր պարսիկներին դուրս քշել ոչ միայն Ուրմիա լճի ավազանից, այլև Սալմաստից ու Խոյից և վտանգ ստեղծվել նաև Ատրպատականի նահանգի (Պարսկական Ադրբեջան) համար:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 35:

Որ Անկարան փորձում էր երկու լարի վրա խաղալ, դա գաղտնիք չէր խորհրդային ղեկավարության համար: Ուղղակի առանձին կուսակցական-պետական գործիչներ (հատկապես մահմեդական) խիստ չափազանցված էին ներկայացնում թե՛ քեմալականների դերը Արևելքում հակաիմպերիալիստական պայքարի ծավալման գործում, թե՛ Արևմուտքի հետ համաձայնության գալու նրանց հնարավորությունները, և դրանով իսկ ՌԽՖՍՀ կառավարությանը հարկադրում զիջող լինել Անկարայի հետ հարաբերություններում: Արխիվներում բազմաթիվ փաստաթղթեր են պահպանվել, որոնք վկայում են, որ այդ հարցում առանձնապես մեծ ակտիվություն էին ցուցաբերում Նարիմանովը, Շահթախթինսկին և նրանց շուրջը համախմբված Բաքվի ղեկավարությունը: Մենք դեռ առիթ կունենանք ծանոթանալու այդ փաստաթղթերի մի մասին: Բայց նաև անհրաժեշտ ենք համարում չեշտել, որ նրանք հաջողության չէին հասնի հակահայկական իրենց գործունեության մեջ, եթե նրանց չպաշտպանեին ու չհովանավորեին Ստալինը, Օրջոնիկիձեն և բոլոր այն վրաց կոմունիստները, որոնք այդ ժամանակ գործում էին Կովկասում (Էլիավա, Մդիվանի, Կվիրկելիա և ուրիշներ): Իրականում 1921թ. առաջին ամիսներին Անտանտի տերությունները (հատկապես Անգլիան) դեռևս հակված չէին բավարարելու քեմալականների բոլոր պահանջները: Ուրեմն համաձայնության հնարավորությունները դեռևս աննչան էին: Քեմալականները դա լավ էին հասկանում և ակտիվ կերպով պատրաստվում էին Մոսկվայի կոնֆերանսին՝ հուսալով, որ Ռուսաստանի կառավարությանը ճանաչել կտան Հայաստանում կատարված տարածքային գրավումները և կապահովեն նրա ռազմատնտեսական ու դիվանագիտական աջակցությունը Արևմուտքի դեմ մղվող պայքարում:

Տարածքային խնդիրների շղթայում թույլ օղակ էր Նախիջևանի հարցը: Չնայած թափած ջանքերին, ինչպես տեսանք, Թուրքիան դեռևս ցանկալի արդյունքի չէր հասել: Բայց դեռ ժամանակ կար և հունվարի վերջին օրերին Վեյսալ-բեյի գործակալներն ու Թուրք էմիսարները նորից գործի անցան և մի քանի գյուղերում հակախորհրդային խռովություններ բարձրացրին: Դրանց դեռ կանդրադառնանք, բայց նախ ծանոթանանք արխիվային մի վավերագրի, որը տեղ է գտել 1989թ. Բաքվում լույս տեսած փաստաթղթերի և նյութերի ժողովածուում, և որից պարզ է դառնում, որ հունվարյան այդ նույն օրերին Նախիջևանի նկատմամբ դավեր էին նյութվում ոչ միայն Անկարայում, այլև Բաքվում: Խոսքը 1921թ. հունվարի 12-ին Բաքվում գումարված Ադրբեջանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի Քաղբյուրոյի

և Կազմբյուրոյի միացյալ նիստի միասին է, որտեղ քննության էր դրվել նաև «Հայաստանի դրության մասին» հարցը: Զեկուցում է Ն. Նարիմանովը և ակնհայտորեն գույները խտացնելով՝ հայտարարում, թե «ամենուրեք խոսում են բանակի գլուխ Դրոյի գտնվելու մասին և որ դա առաջ է բերում ընդհանուր անվստահություն կառավարության նկատմամբ», որ Հայհեղկոմը թույլ է, իսկ ձախ դաշնակցականները ներթափանցում են Հայաստանի Կոմկուսի մեջ և այլն, և այլն, ու հետևություն անում, թե «անհրաժեշտ է գնալ այնտեղ, տապալել Դրոյին և հաստատել կայուն իշխանություն»: Ավարտելով իր խոսքը և մի անգամ ևս միացյալ նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրելով Վրաստանի հետ դաշնակների ունեցած կապի և Զանգեզուրում ծավալած գործունեության վրա՝ Նարիմանովն ավելացնում է. «...եթե Հայաստանը թողնենք այդպես, ստիպված կլինենք այնտեղ ճակատ ունենալ: Անհրաժեշտ է այնտեղ ուղարկել նշանավոր գործիչների, որպեսզի վստահ լինենք, որ այնտեղ ամուր խորհրդային իշխանություն կլինի»[1]: Ինչպես միշտ, հակահայկական մոլուցքով աչքի է ընկնում նաև Շ. Էլիավան: Վերջինս, ոչ ավել, ոչ պակաս, հայտարարում է. «Հայհեղկոմը չի կարող դուրս գալ դաշնակցական քաղաքականության ուղեծրից»[2]:

Նիստին մասնակցած Գ. Օրջոնիկիձեն փորձում է մեղմել Նարիմանովի և Էլիավայի ելույթների թողած ծանր տպավորությունը՝ հայտարարելով, որ «Դրոն արդեն հանված է», իսկ Էլիավայի ասածը «ճիշտ չէ, որ ամենը բացատրվում է օբյեկտիվ պայմաններով և աշխատակիցների բացակայությամբ»[3]: Այնուամենայնիվ նիստում ընդունվում է որոշում.

«ա) Լրացուցիչ մոբիլիզացնել հայ պատասխանատու աշխատակիցների խումբ Հայաստան ուղարկելու համար: Ցուցակների կազմումը (հանձնարարել) ընկ. Սարգիսին ու Հուսեյնովին և ներկայացնել Քաղբյուրոյի հաջորդ նիստի հաստատմանը:

բ) Շահթախթինսկուն ուղարկել Նախիջևանի կոմխարի կարգավիճակով ՌՀԽ (Ռազմահեղխորհուրդ) մանդատով:

գ) Հանձնարարել Ներքգործժողկոմին նախապատրաստելու Զանգեզուրի մուսուլմանական հատվածի մասին հարցը՝ նրա վարչական կազմակերպության առումով»[4]:

[1] „К истории образования НКАО...", стр. 70.

[2] Նույն տեղում, էջ 71:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 70:

Թե ինչ հետևանքներ ունեցան Հայաստանի ներքին դրության մասին արհեստականորեն ուռճացված ու թմբկահարված կարծիքները, և ինչի հանգեցրին հայ սպաների ու մտավորականների նկատմամբ կիրառված բռնությունները, հանրահայտ է, և այդ հարցին մենք չենք անդրադառնում: Անշուշտ, մեր խնդիրը չէ նաև կանգ առնել այն հարցի վրա, թե Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի Քաղբյուրոն որքանո՞վ իրավասու էր քննարկելու Հայաստանի ներքին դրության մասին հարցը և որոշումներ կայացնելու: Բայց որ դրանով նա ոտնահարել է ինքնիշխան պետության իրավունքները, դա փաստ է: Խոսքը հատկապես ընդունված որոշման «բ» և «գ» կետերի մասին է: Ընդամենը չուրջ մեկուկես ամիս էր անցել այն օրից, երբ Ադրբեջանի կառավարությունը հանդիսավոր հռչակագրով ի լուր աշխարհի հայտարարել էր, որ Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանի անբաժանելի մասն են: Իսկ հիմա իրեն իրավունք էր վերապահում որոշումներ կայացնել այդ նույն գավառների մասին: Արդյո՞ք սա չէ ապացույցն այն բանի, որ Նարիմանովի ու նրա խմբի համար ընդունված որոշումները, հռչակագրերը, նույնիսկ եթե դրանք միջազգային բնույթ ունեին, կարող էին պարտավորեցնող հետևանքներ չունենալ, եթե չեն նպաստում նրանց գավթողական նկրտումների իրականացմանը: Ճիշտ է, Զանգեզուրի վերաբերյալ ընդունված որոշման մեջ խոսվում է միայն գավառի մուսուլմանական մեծամասնություն ունեցող շրջանների մասին, բայց դարձյալ դրանից հարցի էությունը չի փոխվում, քանի որ Ադրբեջանի հեղկոմի դեկտեմբերի 1-ի հայտնի հռչակագրում չէր ասված, թե Հայաստանի անբաժանելի մաս են կազմում Զանգեզուրի գավառի հայաբնակ շրջանները միայն: Ինչ վերաբերում է Բ. Շահթախթինսկուն 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի մանդատով որպես Նախիջևանի կոմխար գործուղելու մասին որոշմանը, ապա թեև փաստաթուղթը շատ հակիրճ է ու նաև անորոշ (պարզ չէ, թե ինչ նպատակով է Շահթախթինսկին գործուղվում և ուր, և արդյո՞ք Նախիջևանի ներքին դրության հարցը ևս քննարկման նյութ է դարձել վերոհիշյալ նիստում), միևնույն է, Նախիջևանի վերաբերյալ կամ նրա անունից Ադրբեջանի ղեկավարության կայացրած ցանկացած որոշում պետք է դիտել որպես կոպիտ միջամտություն Խորհրդային Հայաստանի ներքին գործերին: Ըստ որում, եթե Զանգեզուրի մուսուլմանական մասի վերաբերյալ կայացրած որոշման դեպքում Նարիմանովը և նրա խումբը կարող էին շահարկել այն իրողությունը, որ այդ գավառի հայկական հատվածում արդեն կազմավորվել էր Խորհրդային Հայաստանի

գերիշխանությունը չճանաչող կառավարություն[1], ապա Նախիջևանի հարցում որևէ պատճառաբանություն վկայակոչել չէին կարող, քանի որ Հայհեղկոմը, ինչպես արդեն տեսանք, ոչ թե հրաժարվել էր Նախիջևանից, այլ միմիայն նրան ինքնորոշման իրավունք էր տվել, իսկ Նախիջևանի հեղկոմն էլ իր կողմնորոշման վերաբերյալ որևէ հայտարարություն դեռևս չէր արել: Ձենք կարծում նաև, թե Ադրբեջանի ղեկավարությանը մտահոգել էր Շարուր-Նախիջևանում թուրք գործակալների ծավալած հակահայկական գործունեությունը: Վերը տեսանք, որ իրականությունն ուղիղ հակառակն էր. Բաքուն և Անկարան Նախիջևանի հարցում գործում էին ձեռք ձեռքի տված: Նարիմանովը ևս, իհարկե, ոչ առանց Բաքու վերադարձած Շահթախթինսկու ջանքերի, դժգոհ էր Վելիբեկովի գործունեությունից, նրան համարում էր հայամետ, Ադրբեջանի շահերի տեսակետից անցանկալի գործիչ: Դա՞ էր դրդել Ադրբեջանի ղեկավարությանը նման որոշում կայացնելու, թե՞ մեկ այլ բան (օր. գործուղում Մոսկվա և այլն), միևնույն է, խնդրի էությունը դրանից չի փոխվում. Ադրբեջանը ոտնահարել էր Հայաստանի ինքնիշխան իրավունքները:

Ինչ վերաբերում է Վելիբեկովին, ապա Շարուր-Նախիջևանում Շահթախթինսկու ու Վեյսալ-բեյի դեկտեմբեր-հունվարյան հակահայկական ու հակախորհրդային գործունեության մասին կենտրոնական իշխանություններին փաստորեն ոչինչ չհայտնած բոլշևիկյան այս գործիչը, գուցե դժգոհ Բաքվում կայացրած որոշումից կամ էլ Կարաբեքիրի կոպիտ գնահատականներից, վերջապես որոշում է ջրի երես հանել այն ամենը, ինչ նրանք արել էին դեկտեմբերի երկրորդ կեսին և հունվարի սկզբին: Խոսքը հունվարի 23-ի զեկուցագրի մասին է, որի բովանդակությանն արդեն ծանոթացանք:

* * *

Որքան Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի գումարման ժամկետը մոտենում էր, այնքան Շարուր-Նախիջևանում Վեյսալ-բեյի ու նրա գործակալների հակախորհրդային գործունեությունն ավելի ու ավելի ակտիվանում և վտանգավոր երանգներ էր ստանում: Հազիվ հինգ օր էր անցել Վելիբեկովի՝ հունվարի 23-ի զեկուցագրի լույս աշխարհ գալուց, երբ թուրք գործակալները մի նոր խռովություն

[1] Խոսքը Ինքնավար Սյունիքի մասին է, որ հռչակել էր Համազանգեզուրյան Համագումարը 1920թ. դեկտեմբերի 25-ին:

բարձրացրին այս անգամ՝ Ջահրիում: Այս գյուղում թուրք զինվորականները իրենց համար հենարան էին ստեղծել՝ հանձին ռազմաուսումնական դպրոցի, որտեղ ընդունում էին հիմնականում հակախորհրդային տրամադրություններով մարդկանց: Հենց սրանց օգնությամբ թուրքերին հաջողվեց ձերբակալել խորհրդային իշխանության տեղական ներկայացուցիչներին (տեղամասային հեղկոմի, հողկոմի և այլն) և փորձել Թիրքեչ ու Կրզըլ-Բողազ գյուղերում միանալ տեղական հակախորհրդային ուժերին և միասին շարժվել դեպի Նախիջևան: Բացի այդ, թուրքական հրամանատարությունը խռովարարներին օգնելու նպատակով Ջուլֆայում հավաքագրել էր շուրջ 850 մուսավաթականների, զինել նրանց՝ տրամադրելով նույնիսկ երկու հրանոթ[1]: Սակայն խռովարարներին չի հաջողվում միավորվել. Ձեկայի և Կարմիր բանակի զորամասերը արագ և վճռական գործողություններով կարողանում են նույն օրը (հունվարի 28) գրավել Ջահրի գյուղը, ճնշել խռովությունը և ձերբակալել կազմակերպիչներին:

Թե Նախիջևանի խորհրդային իշխանության համար որքան վտանգավոր էին թուրք գործակալների կողմից պարբերաբար հրահրվող խռովությունները, վկայում է թեկուզ այն փաստը, որ փետրվարի սկզբին որոշվում է ստեղծել Ռազմահեղափոխական խորհուրդ, ամբողջ իշխանությունը կենտրոնացնել նրա ձեռքում և երկրամասի բոլոր կոմունիստներին և խորհրդային իշխանության համակիրներին զենքի տակ դնել: Խորհրդի նախագահը Բ. Վելիբեկովն էր, բայց նախկինի պես կենտրոնական իշխանություններին հասցեագրած զեկուցագրերի տակ ստորագրում էր որպես արտակարգ կոմիսար:

1921թ. փետրվարի 3-ին Վելիբեկովը մի նոր զեկուցագիր է ուղարկում՝ որպես լրացում հունվարի 23-ի զեկուցագրի: Այն բաղկացած է երկու մասից և ամբողջովին նվիրված է թուրքերի հակախորհրդային գործունեությանը ոչ միայն Նախիջևանի երկրամասում, այլև պարսկական Ադրբեջանում:

«Թուրքերի վերաբերմունքը մեր՝ խորհրդային իշխանության նկատմամբ, որոշակիորեն թշնամական է դառնում, – գրում է Վելիբեկովը: – Մինչև այժմ գործելով գաղտնի, այժմ նրանք հանդես են գալիս բացահայտ: Նրանք նպատակադրվել են զավթել Նախիջևանի շրջանը և այդ խնդրի իրագործման համար ձեռնարկում են բոլոր միջոցները: Նախիջևանի շրջանում առանձնապես իրական մեծ ուժ չունենալով՝

[1] Տե՛ս Г. Мадатов, նշվ. աշխ., էջ 103:

նրանք ձգտում են օգտագործել տեղական հակահեղափոխական տարրերին: Երբեմն առ երբեմն տարբեր տեղերում հակահեղափոխություն են բարձրացնում (օրինակ. Նախիջևան-Ջահրի)»[1]:

Վելիբեկովի այս զեկուցագրից տեղեկանում ենք, որ Թուրքերը հատկապես մեծ ուշադրություն էին դարձնում երկաթուղու հատվածին, բոլոր կայարաններում պահակակետեր էին հաստատել՝ նրանցից յուրաքանչյուրում տեղաբաշխելով 10-ական ասկյար, և հունվարի 28-ին Վեյսալ-բեյի հրամանով զինաթափել են հեռագրագծերի կարգավորման նպատակով Երևանից ուղարկված հեռագրաշարժակազմը, իսկ այդ առթիվ Վելիբեկովի ներկայացրած բողոքին պատասխանել, թե համաձայն Ալեքսանդրապոլում կնքված պայմանագրի՝ ոչ մի զինված հայ չի կարող ոտք դնել Նախիջևանի երկրամաս: Զեկուցագրում նաև հայտնվում է, որ Թուրք էմիսարները կեղծ լուրեր են տարածում, թե իբր «Կարմիր բանակը միացել է հայերին, գրավելու են Նախիջևանի շրջանը և մորթելու են գլխովին բոլոր մուսուլմաններին, բայց թող նրանք չվախենան, քանի որ նրանց հետ են Թուրքերը, անգլիացիները և Վրաստանը (վերջինս իբր արդեն օգնության է գալիս)»[2]: Դրա հետ մեկտեղ՝ Թուրք էմիսարները նաև բավականաչափ ճկունություն էին ցուցաբերում, կեղծ լոզունգներ առաջ քաշում՝ ազգաբնակչությանն իրենց կողմը գրավելու համար: Օրինակ, այն շրջաններում, որտեղ բնակչությունը համակրում էր խորհրդային իշխանությանը, առաջադրում էին «Կեցցե խորհրդային իշխանությունը, կորչեն կոմունիստները» լոզունգը (այդպիսին էր Ջահրիի խառվարարների լոզունգը):

Ուշադրավ է, որ այս զեկուցագրում Վելիբեկովն այլևս չի բավարարվում Նախիջևանի տարածքում Թուրքերի գործունեության մասին տեղեկություններ հաղորդելով: Նա այժմ նաև մեղադրական խոսք է ասում բոլոր նրանց հասցեին, ովքեր, կեղծելով իրականությունը, քեմալականներին հանիրավի գովաբանում էին, նրանց համարում ճշմարիտ հեղափոխականներ, Խորհրդային Ռուսաստանի հավատարիմ դաշնակիցներ և այլն: «Ավարտելով զեկուցագրի առաջին մասը, - գրում է Վելիբեկովը, - բղավում եմ. Կենտրոնը կեղծ է տեղեկացված Թուրքերի վերաբերյալ, մեզ մեծ իրադարձություններ են սպասում, և բավական է Նախիջևան ուղարկել երկու-երեք պատասխանատու ընկերներ, որպեսզի նրանք անձամբ համոզվեն: Նախիջևանի Արտակարգ

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 87, թ. 11:

[2] Նույն տեղում:

հանձնաժողովում արժեքավոր փաստաթղթերի մի ամբողջ կույտ կա»[1]: Ինչպես տեսնում ենք, Վելիբեկովն այստեղ իր խոսքը չի անձնավորել (հավանաբար չէր էլ կարող՝ նման գործիչների մեծ թվի պատճառով), բայց որ նկատի ուներ նախ և առաջ Նարիմանովին, Շահթախթինսկուն և Ադրբեջանի մյուս ղեկավարներին, որոնք առաջամարտիկ էին քեմալականներին երկինք բարձրացնելու գործում, դա անկասկած է:

Ինչպես արդեն նշել ենք, զեկուցագրի երկրորդ մասում Վելիբեկովն անդրադարձել էր Իրանի հյուսիսային նահանգներում (Պարսկական Ադրբեջան) հեղափոխական շարժումների հասունացման և այդ շրջաններում Թուրք գործակալների ծավալած գործունեության հարցերին, որոնց, հասկանալի պատճառով, մենք չենք անդրադառնում: Միայն ավելացնենք, որ բարձրացնելով այդ հարցերը, Վելիբեկովը չի սահմանափակվում միայն տեղեկություններ հաղորդելով, այլ Պարսկական Ադրբեջանը խորհրդային զորքերով օկուպացնելու առաջարկություն է անում, որպեսզի դրանով իսկ և՛ Թուրքերը զրկվեն այնտեղ ազատորեն գործելու ու ազդեցություն ձեռք բերելու հնարավորությունից, և՛ Նախիջևանը Ջեբրայիլի գավառի ու Զանգեզուրի գավառի մուսուլմանական մասի վրայով Ադրբեջանի հետ կապվելու հնարավորություն ստանա[2]:

Ձենք կարծում, թե Վելիբեկովն իսկապես անհանգստացած էր Իրանի հյուսիսային շրջաններում Թուրքերի գործունեության և ազդեցության աճով: Ամենայն հավանականությամբ նրան հետաքրքրողը Ադրբեջանի հետ կապի ստեղծումն էր: Իսկ դա նշանակում է, որ Վելիբեկովը բոլորովին էլ հայամետ չէր, ինչպես նրա մասին ասում էին թե՛ Բաքվում, թե՛ հատկապես Անկարայում: Կարաբեքիրը չէր դադարում մեկը մյուսի հետևից հեռագրեր ու նամակներ ուղարկել Օրջոնիկիձեին, 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերին, որոնցում ամեն կերպ վատաբանում էր Վելիբեկովին ու հայերին, Նախիջևանի երկրամասում տեղի ունեցած անցանկալի իրադարձությունների համար պատասանատվությունը դնում նրանց վրա: Փետրվարի 8-ին նա երկու ընդարձակ նամակ է ուղարկում Հեկկերին, որոնցից մեկում նշում է, որ նույն ամսվա 5-ին հաղորդագրություն էր ուղարկել, բայց պատասխան չի ստացել: Կարաբեքիրը Հեկկերին հորդորում է օժանդակել «երկու կառավարությունների միջև բարեկամական հարաբե-

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

ությունների ամրապնդմանը» և ավելացնում. «...ինչ վերաբերում է ինձ, ապա ես հրաման եմ տվել Նախիջևան տանող ճանապարհին որոշ կետեր գրված մեր ջոկատներին խստորեն հետևելու որոշ վնասակար անձանց, ովքեր խախտում են հասարակական հանգստությունը և կատարում անկարգություններ»[1]: Փորձելով արդարացնել Վեյսալ-բեյի և նրա գործակալների հակահայկական և հակախորհրդային գործողությունները Շարուր-Նախիջևանում՝ Կարաբեքիրը 11-րդ բանակի հրամանատարին հիշեցնում է, որ հայերի հետ կնքած Ալեքսանդրապոլի պայմանագրով այդ երկրամասում իրենց հովանավորության տակ գտնվող հատուկ վարչություն պետք է ստեղծվեր, և որ «բոլոր այն անձինք, ում վրա դրված է Նախիջևանում այդ քարոզչության վարումը, անմիջապես կհեռանան այդ քաղաքից՝ այդ վայրերում ամեն անհրաժեշտ իրականացնելուն պես»[2]:

Այսպես արդարացնելով իր գործակալների գործունեությունը՝ Կարաբեքիրը վերջում ավելացնում է, թե իրենք միշտ կհակադրեն Դելիբեկովների[3] վտանգավոր պլաններին ու քարոզչությանը և Մդիվանու միջոցով այդ մասին կհայտնեն Օրջոնիկիձեին:

Մենք համառոտակի անդրադարձանք այս նամակին, որովհետև նրանում ավելի շատ խոսվում է ռուս-թուրքական բարեկամության մասին, «Անտանտի օգտին գործող հեղափոխականների» մասին, որոնք ձգտում են խափանել այդ բարեկամությունը՝ առանց նշելու, թե ովքեր են դրանք: Ճիշտ է, նրանում խոսվում է նաև հայերի հետ կնքած Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին, բայց չի ասվում, թե ովքեր են այդ չարամիտ հեղափոխականները: Կարաբեքիրը որոշել էր այդ մասին առանձին նամակ գրել, և քանի որ այն ամբողջովին հայերի դեմ է ուղղված, ուստի ներկայացնում ենք ամբողջությամբ: Ահա այն[4].

«Ղարաքիլիսից ստացված տեղեկության համաձայն պարզորոշ նշմարվում է Թուրքահպատակ դաշնակների ապստամբություն, որոնք սկսում են չարանենգ բանսարկություններ և վտանգավոր սպառնալիքներ տարածել:

Արևելյան ճակատի Թուրքական հրամանատարությունը՝ լիազորված Ազգային մեծ ժողովի կողմից, անկախ ընդհանրապես կոմունիզմի հարցերի նկատմամբ իր վերաբերմունքից, պետք է նկատի ունենա, որ

[1] *«Геноцид армян...», т. 2, ч. 1, стр. 372.*

[2] *Նույն տեղում, էջ 373:*

[3] *Այդպես է տեքստում, պետք է լինի Վելիբեկով:*

[4] *Նամակը ռուսերեն է՝ թարգմանված արաբատառ թուրքերենից:*

հայերը միշտ անփոփոխ կերպով կողմնորոշվելու են Անտանտի շահերով, մշտապես ձգտում են անընդմեջ թշնամանք սերմանել Թուրք ու ռուս ազգերի միջև, որոնք միմյանց հետ միշտ գտնվել են այնպիսի բարեկամության ու բարի հարևանության մեջ, որին, իհարկե, ոչ ոք չի կարող կասկածել: Թուրքական արևելյան բանակը միշտ պատրաստ է՝ ռուսականի հետ հավասարապես պաշտպանել իր շահերը Անտանտի վերաբերմամբ և կռվել հայերի դեմ, որոնք ծախվել են Անտանտին: Այս հարցի վերաբերմամբ ես արդեն Ձեզ նախօրոք տեղեկացրել եմ, սակայն ցավոք մինչև հիմա Ձեզնից նրա պատասխանը դեռ չեմ ստացել: Համաձայն իրենց սովորույթների, ինչպես երևում է վերոշարադրյալից, հայերին երբեք պետք չէ վստահել ընդհանրապես և երբեք (պետք չէ) օգնության գալ նրանց: Նրանք հազարավոր տարբեր խորամանկություններ են գործադրում, որպեսզի երկպառակություններ սերմանեն:

Ես խնդրում եմ Ձեզ ոչ մի վստահություն չցուցաբերել անգամ այն հայերին, որոնք բոլշևիկներ են դարձել: Նրանք անպայմանորեն ուզում են խախտել մեր բարի հարաբերությունները և քարոզչություն են անում, որը շահավետ է միայն Անտանտին, և դրա համար ես վստահ եմ, որ նույնիսկ այն հայերը, որոնք բոլշևիկներ են դարձել, դաշնակների հետ միասնաբար են գործում»[1]:

Թուրք փաշան այսպես է դատում հայ ժողովրդի մասին, այսպես է փորձում 11-րդ բանակի հրամանատարությանը տրամադրել հայերի դեմ: Ալեքսանդրապոլի կոնֆերանսի օրերին հայերը Կարաբեքիրի համար «անգույն ու անհանգիստ» ազգ էին (այդպես է որակել Խատիսյանի հետ զրույցներում), իսկ հիմա նրանք անվստահելի են, խառնակիչ և բոլորը դաշնակ:

Փետրվարի երկրորդ կեսին իրադրությունը Շարուր-Նախիջևանում նորից սրվեց: Քեմալական հրամանատարությունը որոշեց օգտվել Հայաստանում ծայր առած քաղաքացիական պատերազմի հետևանքով կատարված իշխանափոխությունից և Նախիջևանում իշխանությունը զավթելու նոր փորձ արեց: Բայց այս անգամ Վեյսալ-բեյը չգնաց տրորված ճանապարհով և իսկույն իրեն չհռչակեց Նախիջևանի արտակարգ կոմիսար, ինչպես դա երկու ամիս առաջ էր արել: Նա նախ փորձեց Նախիջևանում եղած խորհրդային զորամասերին իր հրամանատարության տակ առնել և նոր միայն իշխանությունը հանձնելու պահանջ դնել: Հազիվ չորս օր էր անցել Հայաստանում ծայր առած քաղաքացիական պատերազմից, երբ Վեյսալ-բեյը փետրվարի 22-ին

[1] *«Геноцид армян...», т. 2, ч. 1, стр. 371-372.*

չորս կետից կազմված հատուկ ռադիոգիր է ուղարկում Նախիջևանի խորհրդային կայազորի պետին, որոնցից առաջինում ասված էր, որ «Հայաստանում դաշնակցական կառավարություն է հայտարարված», որը պատերազմ է սկսել Ռուսաստանի դեմ, և որ «արտաքին գործերի կոմիսար Չիչերինը սույն ամսի 20-ին ռադիոյով Վրաստանին և Հայաստանին խաղաղություն է առաջարկել[1], բայց պատերազմը շարունակվում է»[2]:

Ինչպես տեսնում ենք, այս կետը տեղեկատվական բնույթ ուներ: Իսկ Վեյսալ-բեյի իրական նպատակը արտացոլված էր 2-րդ և 3-րդ կետերում: Դրանցից առաջինում ասված էր, որ հնարավոր է դաշնակների ներխուժում Նախիջևանի տարածք, ուստի Թիկունքից կտրված Կարմիր բանակի բոլոր զորամասերը, «համաձայն Թուրքական բանակի հրամանատարի կատեգորիկ հրամանի, պետք է անցնեն Թուրքական հեղափոխական ջոկատի հրամանատարության պաշտպանության տակ» և կենտրոնանան Շահթախթի ու Կիվրագ գյուղերում: Երրորդ կետում ասված է, թե «որպեսզի պատրաստ լինելու համար՝ Նախիջևանի վրա դաշնակների հարձակմանը» երկրամասի զինվորական կոմիսարիատը ևս պետք է հանձնվի Թուրքական ջոկատի հրամանատարությանն ու տեղափոխվի Շահթախթի[3]:

Մեկնաբանելով այս կետը՝ Վելիբեկովը գրում է, թե դա պարզ ու որոշակի ցույց է տալիս, որ Թուրքերը ուզում էին «զինվորական կոմիսարիատի միջոցով զորակոչ կազմակերպել, մեծացնել իրենց ուժերը, բարձրացնել իրենց հեղինակությունը (փաստորեն զավթել իշխանությունը) և հետո ռուսական զորամասերին զինաթափվելու առաջարկ անել»[4]: Նման ենթադրության համար հիմք էր ծառայել նաև այն քարոզչությունը, որ այդ օրերին վարում էին Թուրք էմիսարները՝ տարածելով կեղծ լուրեր, թե արդեն խորհրդային իշխանության վերջը եկել է, Հայաստանում, Ուկրաինայում ապստամբություն է, իսկ Լեհաստանը նորից է պատերազմ հայտարարել Ռուսաստանին և այլն:

Ինչպես վերն ասվեց, Վեյսալ-բեյի ռադիոգիրն ուներ նաև 4-րդ կետ, որով պահանջում էր շտապ տեղեկություններ հաղորդել երկաթուղու, հեռագրի և հեռախոսագծերի դրության մասին: Շտապ պատասխան նա իհարկե ստացավ, բայց բոլորովին այլ բովանդակությամբ: «Մենք պատասխանեցինք, - գրում է Վելիբեկովը, - որ մենք մեր կենտրոնից կտրվել ենք ոչ վերջնականորեն, որ մենք ենթարկվում ենք մեր բարձր հրամանատարությանը, որը գտնվում է Ավշար կայարանում և որ միայն մերոնցից ստացած հրամանով կարող ենք վարվել այսպես կամ այնպես...»[1]:

Մերժում ստանալով և իշխանությունը զենքի ուժով զավթելու համար բավարար ուժեր չունենալով՝ Վեյսալ-բեյը նորից է փորձում ոտքի հանել տեղական հակահեղափոխական տարրերին և օգնություն ստանալ Մակվի սարդարից: Եվ քանի որ Վեյսալ-բեյը հարկադրված պետք է արտաքուստ չեզոքություն պահպաներ, ուստի ապստամբական շարժումները գլխավորելու համար Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատարության կարգադրությամբ Բայազեդի բանտից ազատվում և Նախիջևան է ուղարկվում հայտնի տեռորիստ, հակախորհրդային գործունեության համար կարմիրբանակայինների կողմից Նախիջևանում ձերբակալված, բայց Վեյսալ-բեյի միջնորդությամբ Թուրքական արդարադատությանը հանձնված Մուստաֆա Քեմալը: Վերջինս նախ անցնում է Մակու, սարդարից 10 հեծյալ քուրդ ստանում, Մակվում ապաստան գտած հակախորհրդային տարրերից 50 հոգուց բաղկացած մարտական ջոկատ կազմավորում, ապա փետրվարի 22-ին անցնում Արաքսը, գրավում Նախիջևան քաղաքից չուրջ 5-6 կմ հեռավորության վրա գտնվող Ղարաջուղ և Բուման գյուղերը, ձերբակալում գյուղական հեղկոմների և կոմունիստական բջիջների անդամներին, համալրում իր ջոկատը և պատրաստվում քաղաքի վրա հարձակման: Պայմանավորվածության համաձայն Վեյսալ-բեյը փետրվարի 24-ին 25 ասկյարներից բաղկացած մի ջոկատ է ուղարկում Նախիջևան, որին հրամայված էր միանալ ապստամբներին, հենց որ նրանք կներխուժեն քաղաք: Հարձակումը նախատեսված էր իրականացնել փետրվարի 25-ի վաղ առավոտյան: Սակայն այդ ամենի մասին Նախիջևանի իշխանություններն արդեն իմացել էին և լույս 25-ի գիշերը չեկիստների խմբերը և զինված կոմունիստները[2] չրջապատում են վերը նշված գյուղերը և երկաթուղային կայարանը: Փոխհրաձգության ժամանակ չրջապատվածների մի մասը սպանվում է, իսկ Մ.

[1] Թուրք-հայկական պատերազմի ժամանակ Վրաստանը օգտվելով Հայաստանի ծանր դրությունից, օկուպացրել էր Լոռու Զեղոք գոտին: 1921թ. փետրվարի 12-ին այստեղ ապստամբություն էր ծագել: Լոռեցիների խնդրանքով օգնության էին հասել թե՛ Հայկական բանակի և թե՛ ռուսական 11-րդ բանակի զորամասերը:

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 87, թ. 26:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Նույն տեղում, թ. 22:

[1] Նույն տեղում:

[2] Վելիբեկովի զեկուցագրում ասված է, որ զինված կոմունիստների թիվը հասնում էր չուրջ երկու հազարի:

Քեմալը և նրա 7 կողմնակիցներ ձերբակալվում են[1]: Մ. Քեմալի մոտ հայտնաբերվում է երեք նամակ, որոնցից պարզ է դառնում, որ այդ շարժումը կազմակերպել ու ֆինանսավորել է Թուրքական հրամանատարությունը: Վեյսալ-բեյին հասցեագրած այդ նամակներից մեկում, որը նա այդպես էլ չէր հասցրել ուղարկել, մասնավորապես ասված էր. «Սիրելի իմ հրամանատար Վեյսալ-բեյ. 1. Ես եկել եմ մինչև Կիզիլ-Կիչլաղ գյուղը: 2. Բոլոր չրջանների հետ կապվել եմ: 3. Սարդարի հրամանով տասը հեծյալներ եմ ստացել, հետախուզություն եմ ուղարկել Ալամդար և Ալինջիչայ: 4. Բագիր-խանին (Արարգարի խանին) զեկուցագիր եմ ուղարկել: Ես խնդրում եմ Սարդարին ձիավոր օգնական ուժեր ուղարկել, ինչի մասին խնդրում եմ և Ձեր միջնորդությունը Սարդարի առջև: Այսօր մտնում եմ Նախիջևան: Խնդրում եմ Ձեզ խոստացած վաչտի ուղարկումը արագացնել»[2]:

Թվում է, թե նման անհերքելի փաստերի առկայության պայմաններում Նախիջևանի Թուրքական հրամանատարությունը կսկսվի, կընդունի իր մեղքը և վերջ կտա հետագա արկածախնդրություններին: Բայց ոչ, նա ոչ միայն շարունակում է հակախորհրդային քայքայիչ գործունեությունը, այլև փորձում նախիջևանյան իշխանությունների հետ իր լարված հարաբերությունների համար մեղքը բարդել Վելիբեկովի վրա: Եվ որ առավել տարօրինակ է, նման գործունեությունը շարունակվեց նաև Մոսկվայի կոնֆերանսի օրերին, միայն մի տարբերությամբ՝ Նախիջևանում ռուս-Թուրքական բարի հարաբերությունները խաթարող Վելիբեկովի կողքին հայտնվեցին նոր «մեղավորներ»՝ հայերը, որոնք, ըստ Կարաբեքիրի, բոլորն էլ դաշնակ են, և բոլորն էլ ապրում ու գործում են միայն մի նշանաբանով՝ հնարավոր բոլոր միջոցներով խանգարել ռուս-Թուրքական բարեկամության հաստատմանը և հրահրել պատերազմ նրանց միջև:

* * *

Եթե փորձենք ամփոփել Մոսկվայի ռուս-Թուրքական երկրորդ կոնֆերանսի նախօրեին Նախիջևանի երկրամասում Թուրք-ադրբեջանյան հակահայկական ու հակախորհրդային գործունեության և դրա հետևանքով ստեղծված իրադրության մասին վերը ասվածը, ապա պետք է արձանագրենք.

1. Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի համարվող տարածքների (Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան) վերաբերյալ Ադրբեջանի հեղկոմի հռչակագիրը, որը պատմագիտությանն ավելի շատ հայտնի է «Նարիմանովի դեկլարացիա» անունով, ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը նպաստող մարտավարական մի քայլ: Հռչակագրի լույս ընծայումը ոչ թե երկու ժողովուրդների միջև թշնամանք առաջացնող այդ չարաբաստիկ վեճը մեկընդմիշտ վերացնելու Ադրբեջանի ղեկավարության ազնիվ մղումով էր թելադրված, ինչպես դա ներկայացնում էին խորհրդային պետական ու կուսակցական ղեկավար գործիչները (Ստալին, Օրջոնիկիձե և ուրիշներ) ու թմբկահարում ժամանակի մամուլում, այլ պարտադրված էր բոլշևիկյան ղեկավարության կողմից: Շատ ժամանակ չէր անցել, երբ Նարիմանովը և նրա շուրջը համախմբված ադրբեջանցի ղեկավար գործիչները, օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները (լեգալ, անլեգալ), լայնամասշտաբ գործունեություն ծավալեցին վիճելի տարածքները Ադրբեջանին կցելու ուղղությամբ: Տարբեր էին մեթոդներն ու եղանակները: Եթե Ղարաբաղի դեպքում դա հիմնականում չանտաժն էր ու նավթը, Զանգեզուրի դեպքում՝ կաշառքը, ապա Նախիջևանի հարցում՝ համագործակցությունը ցեղակից Թուրքիայի հետ:

2. Հակահայկական տրամադրություններով վաղուց աչքի ընկած Բ. Շահթախթինսկու՝ Նախիջևանում հայտնվելը պատահականություն չէր: Ալեքսանդրապոլում իր գործն ավարտելուց հետո գործուղվելով Նախիջևան՝ նա առաքելություն ուներ կանխել վերջինիս անցումը Հայաստանին: Խնդրի իրագործման համար Շահթախթինսկին գործադրում է երկու միջոց. ա) լինելով Ադրհեղկոմի անդամ՝ նա այդ նույն հեղկոմի հռչակագիրը համարում է դավաճանություն և կազմակերպված միտինգում հայտարարում, թե նրանց միակ փրկությունը Թուրքերն են, պետք է «ամուր բռնել Թուրքերից»: բ) Նախիջևանի արտակարգ կոմիսար Վելիբեկովին համոզում է, թե Բաքվում կայացված համաձայնությամբ Ադրհեղկոմի հռչակագրին պետք է հետևեր Հայհեղկոմի հռչակագիրը, որով Նախիջևանին ինքնորոշման իրավունք պետք է տրվեր:

3. Վելիբեկովի երևանյան առաքելությունը հաջողությամբ պսակվեց: Ադրհեղկոմի հռչակագրի հետևանքով Նախիջևանում ստեղծված լարված իրադրության մասին ուռճացված պատմություններով նրան հաջողվեց համոզել Հայհեղկոմին ընդառաջել իր առաջարկություններին: Դեկտեմբերի 24-ի նիստում Հայհեղկոմը որոշեց հռչակագիր ընդունել Նախիջևանին ինքնորոշման իրավունք տալու մասին, ինչպես նաև որպես օգնություն 20 միլիոն ռուբլի հատկացնել Նախիջևանին:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 87, թ. 22-23:

[2] Նույն տեղում, թ. 23:

Նախիջևանին ինքնորոշման իրավունք չնորհող Հայհեղկոմի հռչակագիրը արտաքին հարաբերությունների բնագավառում Հայաստանի նորահաստատ խորհրդային իշխանության ամենաթույլ և ամենախոցելի փաստաթուղթն է: Ոչ մի նախապայման (հատկապես ազգաբնակչության չուրջ 35-40 տոկոսը կազմած տարագիր նախիջևանահայության հայրենիք վերադառնալու և պարտադիր կերպով հանրաքվեին մասնակցելու իրավունքի մասին) չպարունակող այս փաստաթղթում նախիջևանահայության շահերը մոռացության են տրված: Հռչակագրում ոչինչ չի ասված նաև Նախիջևանի նկատմամբ Հայաստանի իրավունքների մասին:

4. Ալեքսանդրապոլի պայմանագրով Նախիջևանի նկատմամբ հովանավորության իրավունք ստացած քեմալական Թուրքիան այնուհետև ամեն միջոց գործադրեց երկրամասում իշխանությունը ձեռք գցելու և Մոսկվայի կոնֆերանսը կատարված փաստի առաջ կանգնեցնելու համար: Նախիջևանի անցումը Հայաստանին կանխելու նպատակով համագործակցելով Ադրբեջանի հետ՝ Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատարությունը միաժամանակ Շարուրում տեղաբաշխված իր զորամասի և հայտնի ու գաղտնի գործակալների միջոցով լայնածավալ թուրքամետ քարոզչություն է վարում, խորհրդային իշխանությունը վարկաբեկող լուրեր տարածում, խռովություններ ու ապստամբություններ կազմակերպում: Օգտվելով Վելիբեկովի ժամանակավոր բացակայությունից (մեկնել էր Երևան)՝ թուրքական զորամասի հրամանատար Վեյսալ-բեյը դեկտեմբերի 22-ին իրեն հռչակում է Նախիջևանի արտակարգ կոմիսար և հրամայում կանգնեցնել Երևանից եկող գնացքները, հունվարի 7-ին իր գործակալների միջոցով տապալում է Երևանից եկած գործիչների կողմից Նախիջևանում կազմակերպած միտինգը և հրահրում հակամիտինգ Նախիջևանի գնդում, հունվարի 28-ին Ջահրիում հակախորհրդային խռովություն է կազմակերպում, փետրվարի 22-ին Նախիջևան քաղաքի չրջակա գյուղերում ապստամբություն է կազմակերպում և քաղաքը գրավելու նպատակով օգնության ուղարկում թուրքական ջոկատ: Ահա հակիրճ չարքն այն ձեռնարկումների, որոնք թեև Չեկայի և ռուսական զորամասերի կողմից արագ ճնչվում էին, բայցևայնպես լարվածություն էին առաջացնում երկրամասում, որի համար մեղքը բարդում էին «հայամետ» Վելիբեկովի և Նախիջևանում գոյություն չունեցող հայ դաշնակցականների վրա: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանն ուղարկած փետրվարյան նամակներում Կարաբեքիր փաչան բոլոր հայերին համարում է թշնամի ու կոչ անում ընդհանրապես հայերին չվստահել և օգնություն ցույց չտալ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նախիջևանյան հիմնահարցը Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում

Լեգրանը Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև Հայաստանի փաստական բաժանման և վերջինիս նկատմամբ թուրքերի թշնամական քաղաքականության իրական պատճառների մասին:

Թուրքական դիվանագիտությունը Սևրի դեմ պայքարի գործում, դերերի բաշխումը Անկարայի և Ստամբուլի միջև: Քեմալականների կեղծ հակաիմպերիալիզմը և զիջումների գնով նրանց իր կողմում պահելու խորհրդային քաղաքականությունը:

Նախիջևանի պատկանելիության հարցը կոնֆերանսի նախօրեին. Ստալինի, Օրջոնիկիձեի, Կիրովի դիրքորոշումը: Շահթախթինսկու հակահայկական նոր նկրտումը:

Լիազորությունների բացակայության պատճառաբանությունը, միացյալ կոնֆերանսի ձախողումը: Բեկզադյանի պատվիրակության գործունեությունը:

Նախակոնֆերանսյան բանակցությունները. Ստալինը և Թուրքա-Հայաստանի հարցը օրակարգից հանելու, Կարախանին պատվիրակության կազմից հանելու և Հայաստանի օկուպացված չրջանները մաքրելու խնդիրների թուրքանպաստ լուծումը:

Բաթումը Վրաստանին թողնելու և Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ հայտարարելու Չիչերինի պահանջը, բանակցությունների խզման վտանգը: Ստալինի և Շահթախթինսկու անդրկուլիսյան բանակցությունները թուրք պատվիրակների հետ: Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանն ըստ Ստալինի. Բաթումը Վրաստանին, Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ 20 վերստ խորությամբ մի չերտ Հայաստանին, Նախիջևանի հարցի լուծումը Շահթախթինսկու հայեցողությանը:

Իրադարձությունները Վրաստանում և Բաթումը, Ախալքալաքը և Ախալցխան դավթելու Անկարայի փորձը: Վրաց

քաղաքական գործիչների դիրքորոշումը: Ստալինի նոր հանդիպումը Թուրք պատվիրակների հետ և նոր գործարքը. Բաթումի փոխարեն 20 վերստանոց չերտի պահանջից հրաժարվելը:

Տարածքային սահմանազատման հարցերը քաղաքական հանձնաժողովի մարտի 10-ի և 12-ի նիստերում: Նախիջևանի երկրամասը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելու և այդ հովանավորությունը երրորդ պետության չփոխանցելու Թուրքական պատվիրակության պահանջը: Զփոխանցման դեմ Զիչերինի հակափաստարկների մերժումը Թուրքերի կողմից: Վիճաբանությունները Նախիջևանի երկրամասի սահմանների չուրջ և կայացրած որոշումը: Նախիջևանի վերաբերյալ հոդվածների վերջնական ձևակերպումը մարտի 14-ի նիստում:

Տնտեսական հարցերը մարտի 14-ի և 16-ի նիստերում: Օգնության մասին գրավոր պարտավորության պահանջը: Պայմանագրի ստորագրումը մարտի 18-ի նիստում: Թուրքական դիվանագիտության հաղթանակը:

Ալեքսանդրապոլի պայմանագրով և հանրապետության մնացած մասի խորհրդայնացումով փաստորեն Հայաստանը բաժանվեց քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև: Ճիշտ է, այն դեռ պետք է իրավական ձևակերպում ստանար Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք պայմանագրում, բայց որ խնդիրն, ըստ էության, արդեն լուծված է, դա գաղտնիք չէր ոչ ոքի համար: Դեկտեմբերի 8-ին Զիչերինին ուղարկած հեռագրում Օրջոնիկիձեն զգուշությամբ գրում է, «իմ կարծիքով Թուրքերի իրական նպատակը Հայաստանը մեզ հետ կիսելն է»[1]: Սակայն բոլշևիկյան կայսրությունը չէր շտապում կլանել ազգային հանրապետությունները և վերջիններս, որոնց թվում և Խորհրդային Հայաստանը, ընդհուպ մինչև ԽՍՀՄ կազմավորումը, միջազգային հարաբերություններում հանդես էր գալիս որպես անկախ պետություն, պայմանագրեր էր կնքում և մի շարք երկրներում դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցչություններ պահում (Ռուսաստան, Ուկրաինա, Պարսկաստան, Թուրքիա, Վրաստան, Ադրբեջան և այլն) բայց որ դա անցողիկ երևույթ էր, որ չուտով

[1] *Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, Документы и комментарии, ред. Ю. Барсегов, Т. 2, ч. I, М. 2003, стр. 311.*

խորհրդայնացած բոլոր հանրապետությունները պետք է ներառվեն խորհրդային ընդարձակ կայսրության մեջ, դա ակնհայտ էր, թեև այդ մասին գերադասում էին դեռևս չխոսել: Զէին խոսում նաև Հայաստանի Հանրապետության փաստական բաժանման մասին: Ավելին, գրում և խոսում էին այն մասին, թե խորհրդայնացման հետևանքով Հայաստանը ձեռք է բերել իրական անկախություն:

*Ո՞րն է անկախության իրական չափանիշը և որքանո՞վ անկախ էին Հայաստանի նման փոքր հանրապետությունները թե՛ մինչև խորհրդայնացումը և թե՛ խորհրդայնացումից հետո՝ ընդհուպ մինչև ԽՍՀՄ կազմավորումը, բոլորովին այլ հարց է, և դրա վրա մենք կանգ չենք առնում: Բայց նաև ավելորդ չենք համարում մատնանշելու, որ բոլշևիկյան կուսակցական և պետական գործիչների շարքում Լեգրանը միակն էր, որ Թուրքերի հետ Հայաստանի Հանրապետության բաժանման մասին համարձակվեց բացահայտորեն խոսել ու գրել: 1920թ. դեկտեմբերի 22-ին Զիչերինին հասցեագրած նամակում նա գրում է. «Դեռ այն ժամանակ, երբ Թուրքերին Սարիղամիշը նրանց կողմից գրավելու համաձայնություն տվեցինք, կարելի էր կանխատեսել, որ դա կհանգեցնի Հայաստանի համար խիստ ծանր պայմաններ ստեղծելուն: Իհարկե, որոշ օգուտ եղավ այն ճնշումից, որ առաջ բերեց Թուրքերի շարժումը դաշնակների վրա, բայց ոչ մի հիմք չկար կարծելու, թե նրանց կարելի կլինի կանգնեցնել այնտեղ և այն ժամանակ, երբ մենք դա անհրաժեշտ կհամարենք: **Արդյունքում մենք հարկադրված եղանք սիրահոժար բաժանել Հայաստանը Թուրքերի հետ: Այժմ դա բոլորի համար ակնհայտ փաստ է դարձել»**[1] (ընդգծումը մերն է- Է. Զ.): Լեգրանը ցավով է անդրադառնում Հայաստանի բաժանման փաստին և այն քաղաքականությանը, որի արդյունք հանդիսացավ քեմալական Թուրքերի արշավանքը Հայաստան ու գտնում, որ իրենք ավելի շատ կորցրել են, քան ստացել: «Ճիշտ է, - ասված է այդ նամակում, - այդ գնով մենք հասանք դաշնակների ոչնչացմանը և խորհրդային իշխանության հաստատմանը Հայաստանի այն տարածքում, որը մնաց մեր ազդեցության տակ: Բայց ես շարունակում եմ նախկինի պես կարծել, որ **Թուրքական հարձակման նկատմամբ այլ քաղաքականության դեպքում** մեզ կհաջողվեր, թեև, հնարավոր է ոչ այդպես արագ, Հայաստանը ենթարկել մեր ազդեցությանը, և այն ժամանակ մենք **ստիպված չէինք լինի գնալ բաժանման Թուրքերի հետ և փաստորեն վավերացնել**

[1] *Նույն տեղում, էջ 328:*

ազգային ճնշման նրանց քաղաքականությունը Հայաստանի օկուպացված մարզերում»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Որ Լեգրանն իրավացի էր, դրանում երկու կարծիք լինել չի կարող: Երկու կարծիք լինել չի կարող նաև այն բանում, որ խորհրդային իշխանության վերին էշելոններում Լեգրանի նման մտածողներ փաստորեն չկային: Դա ակնբախորեն երևաց Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսին նախապատրաստվելու շրջանում, երբ կրկին օրակարգի հարց էր դարձել ոչ միայն Թուրքերի հետ ռազմաքաղաքական դաշինք կնքելու, այլև տարածքային հարցերում նրանց արվելիք հնարավոր զիջումների խնդիրը, ինչը, բնականաբար, պետք է հանգեր Հայաստանում նրանց կատարած գավթումները ճանաչելուն: Միակ բացառությունը արտգործժողկոմ Գ. Չիչերինն էր, որը դեռևս հույսը չէր կորցրել և նախկինի պես կանգնած էր Հայկական հարցին մի որոշ լուծում տալու դիրքերում: Դեկտեմբերի 5-ին Շ. Էլիավային ուղարկած նամակում անդրադառնալով 1920թ. օգոստոսին Բեքիր Սամի բեյի հետ մշակած ռուս-թուրքական պայմանագրի նախագծին, Չիչերինը գրում է. «Երկու կետում մենք տարաձայն ենք. մենք չենք ընդունում թուրքական սահմանների որոշումն ըստ Ազգային ուխտի, որը համարյա վերարտադրում է Բրեստ-Լիտովսկյան սահմանները, և մենք պահանջում ենք Թուրքա-Հայաստանի թեկուզ որոշ մասի անկախության ճանաչում՝ Թուրքա-Հայաստանից ելած հայ բնակչության բնակության համար...»[2]:

Չիչերինը լավատես էր, նա կարծում էր, թե Անկարան դրականորեն կարձագանքի Հայաստանի խորհրդայնացման փաստին, կփոխի քաղաքականությունը նրա նկատմամբ և կհամաձայնի Խորհրդային Ռուսաստանի մասնակցությամբ հայ-թուրքական նոր կոնֆերանսի գումարմանը: Սակայն նրա լավատեսությունը շատ կարճ տևեց, շուտով նա համոզվեց, որ քեմալական Թուրքերը բոլշևիկյան Հայաստանի նկատմամբ նույնքան թշնամաբար են տրամադրված, որքան թշնամական էին դաշնակցական Հայաստանի հանդեպ: Անկարան ոչ միայն մերժեց հայ-թուրքական նոր կոնֆերանս հրավիրելու և ստեղծված նոր պայմանների համեմատ երկկողմ հարաբերություններ մշակելու Հայհեղկոմի առաջարկությունը, այլև սկսեց համառորեն պահանջել, որ Խորհրդային Հայաստանը կատարի Ալեքսանդրապոլի պայմանագրից բխող բոլոր պարտավորությունները՝ միաժամանակ օկուպացված պահելով Ալեքսանդրապոլը ու բոլոր այն տարածքները, որոնք այդ նույն պայմանագրով Հայաստանի մաս էին կազմում: Միակ զիջումը, որ Անկարան ի վերջո կատարեց, դա այն է, որ համաձայնեց Հայաստանին առնչվող հարցերը քննարկել առաջիկայում գումարվելիք ռուս-թուրքական կոնֆերանսում՝ «հայ կոմունիստների մինիմալ մասնակցությամբ»[1]:

Այդ հարցերի մասին մեր պատմագիտական գրականության մեջ բավականաչափ նյութ կա: Հայ պատմաբանները՝ որոնց շարքում և տողերիս հեղինակը, վաղուց բացահայտել ու հիմնավոր փաստերով ցույց են տվել, որ ազգային փոքրամասնությունների, և հատկապես հայերի ու Հայաստանի հարցում, քեմալական Թուրքերն իրենց նախորդների՝ երիտթուրքերի արժանի ժառանգորդներն էին և ամեն գնով ձգտում էին ավարտին հասցնել այն, ինչ չէին հասցրել անել երիտթուրք հայասպանները[2]: Եվ այլ կերպ լինել չէր կարող, քանի որ այսպես կոչված ազգային (միլլի) շարժումը, որը հետագայում ստացավ քեմալական անվանումը, նախապես ծրագրվել ու կյանքի էր կոչվել հենց սուլթանական կառավարության և երիտթուրք գործիչների կողմից:

Ասում են, թե դիվանագիտությունը Թուրքերի արյան մեջ է: Ճի՞շտ է այդ ասույթը թե ոչ, դժվար է ասել: Հնարավոր է, որ դրանում որոշ չափազանցություն կա: Բայց, որ Թուրքերը դիվանագիտության ասպարեզում միշտ էլ ճկունություն են դրսևորել ու հաջողության հասել, դա անառարկելի է և այդ բանը հաստատող փաստեր՝ որքան ուզեք: Հերիք է հիշել, թե 19-րդ դարում քանի՞-քանի անգամ է Օսմանյան կայսրությունը հայտնվել անդունդի եզրին, կանգնել անխուսափելի թվացող կործանման փաստի առաջ, բայցևայնպես չի կործանվել, փրկվել է հենց դիվանագիտության օգնությամբ, մեծ տերությունների միջև ծագած հակասությունները հմտորեն օգտագործելու միջոցով: Իզուր չէր Լլոյդ Ջորջն ասում. «...Թուրքերը պղտոր ջրում ձկնիկ որսալու մեծ վարպետներ են»[3]:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ հաղթող տերությունները հավաքվել էին Փարիզում և ամենուրեք խոսում ու հայտա-

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 305:

[1] РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 50, п 4.

[2] Տե՛ս, օրինակ, Է. **Ա. Զոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922), Եր. 1979, էջ 172-194, **Գ. Գալոյան,** Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր 1999, էջ. 404-420, և այլն:

[3] **Ллойд Джордж**, Правда о мирных договарах, Т. 2, М. 1957, стр. 461.

բարություններ էին արվում, թե Թուրքերն այլևս անելիք չունեն Եվրոպայում, թե նրանք կարող են մնալ միայն փոքրասիական Թերակղզու կենտրոնական մասում՝ Բրուսսա կամ Կոնիա մայրաքաղաքով, երբ վերջապես Սևրում այդ ոգով պայմանագիր Թելադրվեց Թուրքերին, մի պահ Թվաց, Թե այս անգամ նրանց փրկություն չկա: Բայց ոչ, շուտով դեպքերն այլ ընԹացք ստացան, շուտով պարզվեց, որ Թուրքերը բոլորովին ձեռքները ծալած չեն նստել ու սպասել Եվրոպայի կողմից իրենց ճակատագրի որոշմանը: Նրանք ստեղծված վիճակից դուրս գալու ելք են փնտրել ու գտել այն: Որոշել են «կողմերի» և «դեմերի» խաղ խաղալ ու դերերի բաշխում կատարել. Ստամբուլը հնազանդորեն ենԹարկվում է ու փորձում մեղմել Անտանտի զայրույԹը, իսկ Անատոլիան հեղափոխական կերպարանք է ընդունում, ըմբոստ դիրք բռնում և օգնություն ու փրկություն որոնում հակաանտանտական ուժերի մոտ:

Այսպես են գործել Թուրք քաղաքական գործիչներն ու դիվանագետները և այս պարզ խաղը աշխարհը չի ըմբռնել, Թեև այդ մասին խոսողներ շատ են եղել, որոնց շարքում՝ նաև Թուրքեր: 1920Թ. դեկտեմբերի 23-ին Տրապիզոնից Ելենա Ստասովային[1] ուղարկած մի նամակում Արևելքի ժողովրդների Բաքվի համագումարի որոշումով ստեղծված «Քարոզչության և գործողության խորհրդի» ներկայացուցիչ Եփրեմը, որը մի խմբի հետ հատուկ առաքելությամբ գործուղվել էր Անատոլիա՝ տեղեկություններ հավաքելու քեմալական շարժման բնույԹի և հետապնդած նպատակների մասին, գրում է. «Մի բան ինձ համար պարզ դարձավ. Իր էությամբ, իր բնույԹով այս (պես) կոչված, Կոստանդինապոլսի կաբինետը և Անգորայի կառավարությունը նույնն են, ոչ մի տարբերություն: Եվ իմ մի զրուցակից, Կոստանդինապոլսից եկած չտաբային նշանավոր սպա, որը նմանապես գնում էր Անգորա (ինչպես և մենք), բացահայտորեն գովաբանում էր Թուրքական դիվանագետներին և քաղ(աքական) գործ(իչներին), որոնց Անտանտի «կողմնակիցների» և «հակառակորդների» դերերի շատ հաջող բաժանման միջոցով հաջողվեց այն, ինչ չկարողացավ անել պարտված պետություններից և ոչ մեկը՝ չկատարել Վերսալյան հաշտության թալանչիական պայմանները: Եվ պետք է ընդունել, որ սուբյեկտիվորեն իրենց՝ ինչպես Անգորայի, այնպես էլ Կոստանդինապոլսի Թուրք գործիչների հասկացությամբ, գործը այդպես է դրված, բայց օբյեկտիվորեն, համաշխարհային մասշտաբով, այնուամենայնիվ, Քեմալի շարժումը առաջադիմական է»[1]:

Հենց այս՝ քեմալական շարժման առաջադիմական լինելու մասին աջ ու ձախ տարածվող կարծիքներն էլ Անկարայի ղեկավարությանը հնարավորություն էին տալիս բոլշևիկյան գործիչներին տրամադրել իր օգտին և ստանալ Խորհրդային Ռուսաստանի Թե՛ նյութական և Թե՛ բարոյական աջակցությունը՝ իր առաջ դրված խնդիրները լուծելու համար: Իսկ դա բոլորովին էլ եվրոպական իմպերիալիզմի դեմ պայքարը չէր, ինչպես դա ներկայացնում էին Ռուսաստանում, այլ պայքար էր հայերի և հույների «չար մտադրությունների դեմ», ինչը արձանագրված է «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության» էրզրումի (1919Թ. հուլիսի 23 – օգոստոսի 6) և Սվազի (1919Թ. սեպտեմբերի 4-11) կոնգրեսներում ընդունված որոշումներում[2]:

Այս հարցը ևս բավականաչափ լուսաբանված է մեր պատմագիտական գրականության մեջ: Լուսաբանված է նաև դիվանագիտական այն աննախադեպ ակտիվությունը, որ դրսևորեցին քեմալականները Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանները Խորհրդային Ռուսաստանին ճանաչել տալու և ընդհանրապես Հայկական հարցը կոնֆերանսի օրակարգից հանելու ուղղությամբ: Հետևապես մի կողմ Թողնելով այդ հարցը՝ առավել ևս որ այն մեր անմիջական խնդիրների շարքից չէ, միայն արձանագրենք, որ Անկարան հմտորեն օգտագործեց Արևմուտքի հետ համաձայնության գալու իրենց հնարավորությունների մասին տարածվող լուրերը՝ հարկադրելու Մոսկվային ձեռնպահ մնալ Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանները վերանայելու գայԹակղությունից: Եվ, եԹե Թուրք դիվանագետները այդ հարցում ևս հաջողության հասան, ապա դրանում դարձյալ մեծապես մեղքի իրենց բաժինն ունեն Ստալինը, Օրջոնիկիձեն, Նարիմանովը և նրանց արբանյակները (Մդիվանի, Էլիավա, ՇահԹախԹինսկի և ուրիշներ), որոնք խոսքերը մեկ արած ակտիվ կերպով լծվեցին Չիչերինի վրա ճնշում գործադրելու, Անտանտի լագեր Թուրքերի հնարավոր անցումը կանխելու նպատակով Հայաստանի հաշվին զիջումներ անե-

[1] Բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ, «Քարոզչության և գործողության խորհրդի» անդամ:

[1] „Геноцид армян...", стр. 335.

[2] Մանրամասն տե՛ս **Ռ. Սահակյան**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921ԹԹ., Եր., 1970, էջ 43-47, **Է. Ա. Զոհրաբյան** նշվ. աշխ., էջ 18-22 և այլն:

լու, նրանց տարածքային նկրտումներին հագուրդ տալու գործին: Ռ-Կ(բ)Կ Կենտկոմ և Արտգործժողկոմատ ուղարկած իրենց հեռագրերում և նամակներում այդ մարդիկ կաչվից դուրս էին գալիս հիմնավորելու, թե Արևելքում հեղափոխական շարժումների ծավալման գործի համար որքան կարևոր է քեմալականներին ունենալ իրենց կողքին, չձախողել պայմանագիր կնքելու հնարավորությունը՝ ինչպես դա արվեց 1920թ. ամռանը և բավարարել նրանց տարածքային պահանջները: Նույնիսկ Լեգրանը, որը միշտ էլ ճիշտ դիրքերից էր ընութագրում քեմալականներին, տեղի տալով այդ համատարած կարծիքին, Չիչերինին ուղարկած նամակում գրում էր.

*«Ի՞նչ կարող է տալ Մոսկվայի առաջիկա կոնֆերանսը Խորհրդային Հայաստանին: **Քանի որ մենք շահագրգռված ենք քեմալականներին աջակցելու մեջ, մենք չենք կարող Հայկական հարցը սրությամբ դնել: ...Խորհրդային Հայաստանի ստեղծումը և վերջինիս օգտին մեր բարեկամական միջնորդությունը, Թուրքերը, ըստ երևույթին, հակված են նույնիսկ դիտելու որպես Խորհրդա-Ռուսաստանի ձգտումը ստեղծելու արգելապատնեշ Հայաստանում, որն ի վիճակի կլինի հակադրվել Կովկասի մուսուլմանական երկրների վրա Թուրքիայի ազդեցությանը: Միանգամայն ակնհայտ է, որ Թուրքերի այժմյան հայտարարությունները Խորհրդային Հայաստանին, հայ կոմունիստներին չվստահելու մասին և այլն, թեև արտացոլում են Թուրքերի պատմական ազգային գաղափարախոսությունը, գլխավորապես քողարկում են Կովկասում Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության հանդեպ նրանց սեփական անվստահությունը: Հենց դրանով է պայմանավորված հայերի նկատմամբ նրանց ներկա քաղաքականությունը:***

*Ինձ թվում է, որ Թուրքերը կցանկանային մեզ հեռացնել Արևելքում անմիջական գործունեությունից՝ թողնելով մեզ զարգացնել հեղափոխությունն Արևմուտքում: Եթե պարզվի, որ Թուրքերը ընդունակ են հեղափոխական ճնշում գործադրել հարևան մուսուլմանական երկրների վրա, որ նրանք կկարողանան հեղափոխական շարժում բարձրացնել Արևելքում՝ դա հրաշալի կլինի, **այդժամ նրանց ինքնուրույն գործողությունների ազատություն պետք է տալ, տալ նրանց Նախիջևանը, նեղել Խորհրդային Հայաստանը և այլն»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Նամակից կատարված այս մեջբերումից դժվար չէ տեսնել, որ

[1] *„Геноцид армян...", стр. 329.*

Լեգրանը դժգոհ էր ոչ միայն հայերի ու Հայաստանի հարցում, այլև ողջ տարածաշրջանում քեմալական Թուրքերի վարած քաղաքականությունից, որի համար էլ նրանց անվերապահ դիրքումներ անելու խնդիր չի դնում: Իսկ նամակի վերջնամասում ուղղակի գրում է, որ ինքը չի վստահում ու չի հավատում քեմալականներին, որ նրանց հարկավոր է ստուգել և «տալ ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է, որպեսզի նրանց թշնամի չդարձնելու, Անտանտի գիրկը նրանց չնետելու համար»[1]*:*

Ինչպես տեսնում ենք, «Անտանտի գիրկը նետվելու» քեմալականների հնարավորությունների մասին տարածված լուրերը իրենց ազդեցությունն էին թողել նաև Լեգրանի վրա: Մինչդեռ իրականում նրանք այդպիսի հնարավորություն դեռևս չունեին և Անտանտան էլ, ինչպես Լոնդոնի կոնֆերանսը և հետագա իրադարձությունները ցույց տվեցին, ընդհուպ մինչև 1922թ., մինչև հունական անհաջողությունների շրջանը, Թուրքական պահանջներին ընդառաջելու ցանկություն չէր դրսևորում: Այդ լուրերը առավելապես տարածում էին հենց իրենք՝ քեմալականները և նրանց Կովկասյան արբանյակները՝ բացառապես Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա ազդելու միտումով և պետք է ընդունել՝ ոչ առանց հաջողության: Արդյունքում, որքան կոնֆերանսի օրերը մոտենում էին, այնքան ռուս-Թուրքական դաշինքի կնքմանը խոչընդոտող հարցերը, – ասել է Թե, – հայոց հողերի հարցը, օրակարգից հանելու կողմնակիցների ձայնը ավելի ու ավելի բարձր էր հնչում: Եվ առաջին օրինակը Ստալինն է տալիս. դեկտեմբերին՝ շրջանցելով Արտգործժողկոմատը, նա Մղիվանուն հրահանգում է հայտնել Թուրքերին, որ իրենք չեն դիմադրի Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում նրանց իշխանության հաստատմանը: Իսկ փետրվարին՝ կոնֆերանսի աշխատանքներից շուրջ երկու շաբաթ առաջ տեղեկանալով այն մասին, որ Չիչերինը տարածքային հարցերում պաշտպանում է հայերի շահերը և պահանջել է Վանը, Մուշը և Բիթլիսը հանձնել հայերին, Լենինին հասցեագրած գրությունում՝ խախտելով էթիկայի բոլոր նորմերը, Չիչերինի այդ պահանջը որակում է որպես «հիմար և պրովոկացիոն» ու դրանով իսկ անձնական վիրավորանք հասցնում Արտգործժողկոմին: «Ընկ. Լենին, – ասված է նրանում, – ես երեկ միայն իմացա, որ Չիչերինը իրոք ինչ-որ ժամանակ Թուրքերին է ուղարկել հիմար (և պրովոկացիոն) պահանջ հօգուտ Հայաստանի Վանը, Մուշը և Բիթլիսը մաքրելու մասին (Թուրքական նահանգներ, Թուրքերի ճնշող

[1] *Նույն տեղում:*

մեծամասնությամբ): Այդ հայկական իմպերիալիստական պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Հարկավոր է արգելել Չիչերինին ազգայնականորեն տրամադրված հայերի ցուցումով նոտաների ուղարկումը Թուրքերին»[1]:

Որ Ստալինը կոպիտ ու անտակտ մարդ էր, այդ մասին Լենինը պիտի գրեր ավելի ուշ և այն էլ այլ դեպքերի ազդեցության տակ: Մինչդեռ այս դեպքում պետական գործչի համար անթուլատրելի վարքագիծը մնաց անպատիժ:

Հայկական տարածքների խնդիրը կոնֆերանսի օրակարգից հանելու առաջարկությամբ հանդես է գալիս նաև Օրջոնիկիձեն՝ փետրվարի 12-ին Լենինին ուղարկած նամակում: Նրանից հետ չի մնում Նարիմանովը, և չորս օր հետո (փետրվարի 16-ին) ընդարձակ նամակ է ուղարկում Լենինին, երկար-բարակ հեքիաթներ պատմում «մինչև վերջին մարդը Անգլիայի դեմ պայքարելու» քեմալականների պատրաստակամության մասին, բայց եթե Հայկական հարցի պատճառով Մոսկվան վանի նրանց իրենից, ապա նրանք կնետվեն Անգլիայի գիրկը: Նարիմանովը ևս սլաքը ուղղում է Չիչերինի դեմ, ճիշտ է, Ստալինի նման նրա հասցեին կոպիտ խոսքեր չի ասում, բայց և իրեն իրավունք է վերապահում մեղադրելու նրան Հայկական հարցում անգիտության մեջ: «Ես պետք է զգուշացնեմ Ձեզ, – ասված է նամակի վերջում, – ընկ. **Չիչերինը չփոթում է Արևելյան հարցը, նա շատ է տարված Հայկական հարցով** և հաշվի չի առնում այն ամենը, ինչ կարող է լինել, եթե անգորցիների[2] հետ խզում լինի հենց Հայկական հարցի պատճառով: Ես վճռականորեն հայտարարում եմ, որ Կովկասում ստեղծված պայմաններում (Դաղստան և Վրաստան) **եթե ուզում ենք Ադրբեջանը պահել մեզ, մենք պետք է անգորցիների հետ կնքենք ամուր դաշինք՝ ինչ էլ որ լինի**: Ես ընդգծում եմ. **այդ դաշինքը մեզ կտա ողջ մուսուլմանական Արևելքը**, և այն ընդհանուր դժգոհությունը, որ ստեղծված է հենց մեր կողմից՝ մեր ապիկար արևելյան քաղաքականությամբ, կվերացվի և դրանով Անգլիայի ձեռքից կխլենք պրովոկացիայի զենքը»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ուշագրավ է, որ Լենինը՝ ծանոթանալով նամակի բովանդակությանը (Քաղբյուրոյի փետրվարի 18-ի նիստի ժամանակ), իսկույն այն ուղարկում է Ստալինին՝ խնդրելով երկու խոսքով կարծիք ներկայացնել[1], թեև հայ-թուրքական հարաբերությունների հարցում Ստալինի կարծիքը նրան վաղուց հայտնի էր:

Սակայն դրանով Նարիմանովը չէր բավարարվել: Մի քանի օր հետո տեղեկություններ ստանալով Հայաստանում հակախորհրդային ապստամբության ծագման և փետրվարի 18-ին ապստամբների կողմից Երևանի գրավման մասին, շտապում է այդ փաստը ևս օգտագործել իր հակահայկական նկրտումների համար, իսկույն Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի անդամ Կամինսկու միջոցով հատուկ նամակ է ուղարկում (փետրվարի 21-ին) Լենինին, մատնացույց անում Հայաստանում խորհրդային իշխանության տապալման փաստը ու հետևություն անում, թե «Թուրքական պատվիրակության հետ բանակցություններում Հայկական հարցը դեր չպետք է խաղա»[2]:

Ահա այսպիսին էր հայ-թուրքական տարածքային խնդիրների շուրջ ստեղծված մթնոլորտը Մոսկվայի կոնֆերանսի նախօրեին: Այսպես վրաց-ադրբեջանական հակահայկական ճակատը օժանդակեց Թուրքերին օրակարգից հանելու Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանների վերանայման հարցը: Այդ արշավին միացել էին նաև Մդիվանին, Էլիավան և ուրիշներ, որոնց սակայն մենք չենք անդրադառնում ոչ թե նրա համար, որ նրանք երկրորդական դեմքեր էին և նրանց գրությունները, որպես կանոն ուղղված էին ոչ թե Լենինին, այլ Օրջոնիկիձեին կամ Չիչերինին, այլ մեր բուն խնդրից շատ չեղված չլինելու: Այդ նույն նկատառումով չենք անդրադառնում նաև Թուրքական դիվանագիտության ծավալած կամպանիային՝ Լենինին ուղարկած Մուստաֆա Քեմալի նամակին, Չիչերինին հասցեագրած Ահմեդ Մուհթարի նոտաներին և այլն: Միայն արձանագրենք, որ նրանք կիրառեցին Մոսկվայի վրա ճնշում գործադրելու դիվանագիտությանը հայտնի բոլոր մեթոդներն ու եղանակները: Գործն այնտեղ հասավ, որ դեկտեմբերին Անկարայից դուրս եկած Թուրքական պատվիրակությունը ավելի քան մեկ ամիս կանգ առավ Կարսում՝ սպասելով բաղձալի պատասխանի, և ճանապարհը շարունակեց միայն այն բանից հետո, երբ Անկարան պաշտոնական հավաստիացում ստացավ, որ կոնֆերանսում Հայաստանի օգտին տարածքային պահանջներ չեն

---

[1] РГАСПИ, ф.3, оп. 1, д. 5214, л. 2: Տե՛ս նաև **Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,** Հանուն պատմական ճշմարտության, Երեկոյան Երևան, 9.06.1988:

[2] Մայրաքաղաք Անգորայի (Անկարա) անունով հաճախ քեմալականներին այդպես էին անվանում:

[3] ,,Геноцид армян...", стр. 379.

[1] Տե՛ս "Два месяца работы В. И. Ленина (из хроники жизни и деятельности, январь-февраль 1921г.), М. 1934, стр. 86:

[2] ,,Геноцид армян...", стр. 387.

դրվի: Այդ մասին վկայություն կա Չիչերինին ուղարկած Ահմեդ Մուհ-թարի 1921թ. հունվարի 30-ի նոտայում: Պատասխանելով Չիչերինի հունվարի 13-ի նոտային, որում վերջինս հայտնում էր իր խորին հիաս-թափությունն այն բանի համար, որ Անկարան չի ընդունել Հայաստա-նի և Թուրքիայի միջև միջնորդության իր առաջարկը և հույս հայտնում, որ բոլոր չլուծված հարցերն ու թյուրիմացությունները կհարթվեն մոս-կովյան բանակցություններում, Թուրքիայի արտաքին գործերի ժո-ղովրդական կոմիսարի պաշտոնակատարը գրում է. «Մենք միաժա-մանակ ստացանք ընթացիկ հունվարի 13-ի ձեր երկու՝ N 706 և 710 գրությունները, հավասարապես նաև ընկ. Մդիվանու Ալի Ֆուադ փա-շային հասցեագրած նամակի բովանդակությունը: **Շտապում եմ Ձեզ տեղյակ պահել, որ այդ նամակում բովանդակված հայտարարություն-ները, որով մեր կառավարությանը կից Ձեր ներկայացուցիչը ՌԽՖՍՀ անունից պաշտոնապես հաստատում է, որ Թուրքիայի կողմից Հայաս-տանին տարածքային զիջումների մասին խոսք լինել չի կարող, մեզ ամբողջովին բավարարում են:** Մյուս կողմից՝ ժողովուրդների ինքնո-րոշման իրավունքի նկատմամբ հարգանքը, որ այդքան համոզիչ հայ-տարարված է Մուստաֆա Քեմալ փաշայի անունով ընկ. Լենինի նա-մակում, ինչպես նաև ընթացիկ հունվարի 13-ի Ձեր N 706 հեռագրում, մեզ վստահեցնում են, որ **ոչ մի լուրջ խոչընդոտներ այլևս չեն կարող դժվարացնել մոսկովյան բանակցությունները: Այդպիսի պայմաննե-րում մեր պատվիրակությունը կարգադրություն է ստացել դուրս գալ Կարսից և ամենահնարավոր արագությամբ ժամանել Մոսկվա»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ո՞ւմ ցուցումով է Մդիվանին նման բան հայտնել Թուրքերին: Որ-պես Թուրքիայում ՌԽՖՍՀ դիվանագիտական ներկայացուցիչ, նա ան-միջականորեն ենթակա էր Արտգործժողկոմին և հյուրընկալ երկրի վե-րաբերյալ իր կառավարության կայացրած ամեն մի վճիռ, որպես կա-նոն, պետք է ստանար կա՛մ անձամբ Չիչերինից, կա՛մ էլ վերջինիս հանձնարարությամբ Արտգործժողկոմատի որևէ պաշտոնյայից: Սա-կայն, ինչպես վերը տեսանք, Ստալինը, երբեմն նաև Օրջոնիկիձեն՝ շրջանցելով Արտգործժողկոմատը, հաճախ Մդիվանուն ցուցումներ էին տալիս արտաքին քաղաքականության շատ կարևոր հարցերի վերա-բերյալ: Այդպես էր գործը և այս անգամ, ինչի մասին վկայություն կա Մոսկվայում դեսպան նշանակված, բայց թուրքական պատվիրա-

[1] „Документы внешней политики СССР", Т. III М. 1959, стр. 469.

կության հետ մեկտեղ դեռևս Կարսում գտնվող Ալի Ֆուադ փաշային հասցեագրած Մդիվանու 1921թ. հունվարի 14-ի նամակում: Անդրա-դառնալով դրան նախորդած իրենց զրույցների ընթացքում չշափված հարցերին և հատկապես Թուրքիայի կողմից Հայաստանին տարած-քային զիջումներ անելու խնդրին, Մդիվանին՝ վկայակոչելով Օրջո-նիկիձեին և Ստալինին, գրում է. «Ընկեր Օրջոնիկիձեն ինձ հասկացրեց, որ ռուս-թուրքական հարաբերությունների նկատմամբ Խորհրդային կառավարությունն ամբողջովին հետևում է այն տեսակետին, որ ես ձեզ չարադրել եմ: Նա նաև ինձ ասաց, որ առաջիկա մոսկովյան կոն-ֆերանսի նիստերին ակտիվորեն մասնակցելու է ինքը՝ ընկեր Ստա-լինը»: Այնուհետև անցնելով խնդրի նկատմամբ Ստալինի մոտեցումնե-րին, Մդիվանին շարունակում է. «Կուզենայի հայտարարել, որ ինչպես ես արդեն նախկինում հայտնել եմ Բյազիմ Կարաբեքիր փաշային, ո՛չ հրահանգներում, որ ես ստացել եմ Թուրքիա մեկնելիս, ո՛չ զրույցնե-րում, որոնք ես ունեցել եմ ընկեր Ստալինի հետ, ոչ մի խոսք չի ասվել Թուրքական տարածքի ինչ-որ մաս Հայաստանին հանձնելու մասին»: Իսկ վերջում հույս է հայտնում, որ «այս բացատրությունը, որը պաշ-տոնական է, բայց նաև հույժ գաղտնի, կցրի Խորհրդային կառավա-րության իրական մտադրությունների նկատմամբ ձեր բոլոր կասկած-ները»[1]:

Ավելորդ չենք համարում նաև ավելացնել, որ կոնֆերանսի աշխա-տանքներին Ստալինի ակտիվ մասնակցության մասին լուրը խիստ ոգևորել էր Թուրքերին: Ահա թե ինչ է գրում այդ մասին Ալի Ֆուադ փաշան. «Ընկեր Մդիվանին մեզ հասկացրեց, որ Մոսկվայում գոյու-թյուն ունի նոր մթնոլորտ՝ միանգամայն տարբեր նրանից, որի հետ սկզբնապես բախվել է այնտեղ մեր պատվիրակությունը[2]: **Այժմ պարզ դարձավ, որ հիմնախնդիրների լուծումը չի թողնվելու միայն արտաքին գործերի կոմիսարի (Չիչերինի) հայեցողությանը, որ ընկ. Ստալինը՝ ազգությունների գործերի կոմիսարը, խառնվելու է Թուրքիայի հետ բարեկամական կապերին վերաբերող գործերին, քանի որ այսուհետ զգալիորեն ավելի մեծ նշանակություն է տրվում նոր Թուրքիայի հետաքրքրություններին»**[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ստալինի հարցում թուրքերը չէին սխալվել: Կոնֆերանսում նրա

[1] „Геноцид армян...", стр. 358.

[2] Խոսքը Բեքիր Սամիի պատվիրակության մոսկովյան բանակցությունների մասին է (1920թ. հուլիս-օգոստոս):

[3] „Геноцид армян...", стр. 358.

չունչը զգացվում էր բոլոր հարցերում: Եվ եթե Թուրք դիվանագետները լուրջ հաջողությունների հասան՝ հատկապես Հայաստանին առնչվող հարցերում, ապա դրա համար պարտական են Ստալինին: Նրանք դա գիտակցել են, որի համար էլ նրա հասցեին միշտ գովեստի խոսքեր են շռայլել:

Ինչևէ, մենք հակիրճ ներկայացրեցինք Մոսկվայի կոնֆերանսի նախօրեին հայ-թուրքական հարաբերությունների շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը: Կարծում ենք՝ այդքանն էլ բավարար է, որ ընթերցողն էլ համոզվի այն ճշմարտության մեջ, որ այդ օրերին Մոսկվայում մթնոլորտն ամբողջովին հակահայկական թույնով էր ներծծված: Հայաստանի օգտին խոսողներ այլևս չկային: Նույնիսկ Չիչերինն էր արդեն զգուշավորություն դրսևորում և խուսափում հրապարակային հայանպաստ հայտարարություններ անելուց:

* * *

Կոնֆերանսի աշխատանքներին անցնելուց առաջ անհրաժեշտաբար պետք է նաև պարզենք, թե թուրքական շահերի խորհրդային պաշտպանները՝ Ստալինը և նրա արբանյակները, ինչ կարծիք ունեին մեզ հետաքրքրող խնդրում՝ Նախիջևանի հարցում: Դա հատկապես կարևորվում է այն առումով, որ ինչպես հետո կտեսնենք, այս խնդրի վերաբերյալ կոնֆերանսի կայացրած որոշումը բոլորովին չի տեղավորվում այն կարծիքների համատեքստում, որ գոյություն ունեին կոնֆերանսի նախօրեին: Նախ ասենք, որ ձեռքի տակ եղած արխիվային փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Նախիջևանի տարածաշրջանի պատկանելիության հարցում վրաց-ադրբեջանական բլոկը նույնպիսի միասնական մոտեցում չուներ, ինչպես որ կար հայկական մյուս տարածքների հարցում: Ստալինը, Օրջոնիկիձեն և նրանց հարող Կիրովը գտնում էին, որ Շարուր-Նախիջևանը պետք է լինի Հայաստանի կազմում, մինչդեռ Ադրբեջանի ղեկավարությունը՝ բացահայտորեն չընդդիմանալով այդ տեսակետին, ամեն կերպ ձգտում էր կանխել Նախիջևանի անցումը Հայաստանին՝ օգտագործելով գաղտնի դիվանագիտության բոլոր հնարավորությունները ու նաև ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական խաղաքարտերը: Դրանում համոզվելու համար բավական է ծանոթանալ մի քանի փաստերի: Բայց նախ Ստալինի, Օրջոնիկիձեի, Կիրովի դիրքորոշման մասին.

*1921թ. հունվարի 2-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի բոլոր անդամներին հասցեագրած նամակում անդրադառնալով Խորհրդային Հայաստանի թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ծանր վիճակին (Թուրքիայի և Վրաստանի կողմից իրականացվող շրջափակումը, երկաթուղային հաղորդակցության դադարեցումը և այլն), Օրջոնիկիձեն և Կիրովը առաջ են քաշում տեսակետ, որ առանց Վրաստանի խորհրդայնացման հնարավոր չի լինի ապահովել Հայաստանի անվտանգությունը և Խորհրդային կարգերի ամրապնդումը ու նաև ավելացնում, թե «ստեղծված պայմաններում **թուրքերը հեշտությամբ կարող են իրենց բուֆերը ստեղծել Մակու-Նախիջևանյան շրջանում,** որտեղ նրանք մտադիր են հատուկ խանություն ստեղծել, որի ձեռքին կլինի դեպի Թավրիզ երկաթուղագիծը, **ինչը կտրում է մեզ Պարսկաստանից և անդամահատում Հայաստանը»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Ինչպես տեսնում ենք, Մակուի և Նախիջևանի շրջանները գրավելու և այնտեղ առանձին խանություն ստեղծելու թուրք-քեմալականների մտադրության մասին Շահթախթինսկու դեկտեմբերի 7-ի հայտնի հեռագրում տեղ գտած հաղորդումը անհետևանք չէր անցել: Բայց նաև փաստ է, որ «Հայաստանի անդամահատման» վտանգը չէ, որ անհանգստացրել էր Օրջոնիկիձեին ու Կիրովին, ո՛չ: Նրանք, հավանաբար, այդպես էլ չէին անդրադառնա չուրջ մեկ ամսվա վաղեմություն ունեցող այդ տեղեկատվությանը, եթե Վրաստանի խորհրդայնացման հարցը մեջտեղ չգար: Ամեն դեպքում մեզ հետաքրքրողը Նախիջևանի պատկանելիության հարցում նրանց դիրքորոշումն է, իսկ նամակը վկայում է, որ նրանք Նախիջևանը Հայաստանի մաս էին համարում:

Նախիջևանի հարցին Օրջոնիկիձեն անդրադարձել է նաև հունվարի 25-ին ադրբեջանական կոմունիստների Բաքվի քաղաքային կոնֆերանսին տված զեկուցման մեջ: Ուշագրավ է, որ Օրջոնիկիձեն իր զեկուցման զգալի մասը նվիրել էր Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր վիճակին և նրան ամեն կերպ օգնելու անհրաժեշտությանը: Իսկ Ադրբեջանի և Հայաստանի փոխհարաբերությունները որակել էր որպես եղբայրական ու ներկաներին հիշեցրել Նարիմանովի հայտնի դեկլարացիայի մասին, որով «Զանգեզուրը և Նախիջևանը դառնում են Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս»: Այդ ակտը համարելով բացառապես Ադրբեջանի ձգտումը «ոչնչացնելու այդքան արյուն առաջացրած այդ անիծյալ հարցը», ավելացնում է, թե «դժբախտաբար այդ հարցը լուծված չէ նաև այժմ»: Ըստ որում, եթե Զանգեզուրի հարցում պատճառը համարում է այնտեղ ծագած հակախորհրդային ապստամբությունը և «ինքնավար

[1] *Նույն տեղում, էջ 343:*

*կառավարության կազմավորումը», ապա Նախիջևանի հարցում՝ Թուրքական գործոնը: «Այստեղ (Նախիջևանում – Է. Զ.) որոշ հակասություն, որոշ ընդհարում կա Թուրքերի հետ. իհարկե, ոչ զինված, – ասել է Օրջոնիկիձեն: – Թուրքերը ուզում են Նախիջևանի շրջանը իրենց ձեռքերում ունենալ: Նախիջևանի շրջանը դա այն հանգույցն է, որտեղից դարպասները գնում են Պարսկաստան, որտեղից մենք կարող ենք կապ ունենալ Պարսկաստանի և Միջագետքի հետ: Նախիջևանից երկաթուղին գնում է դեպի Թավրիզ՝ պարսկական Ադրբեջան, Պարսկաստանի ամենահեղափոխական նահանգը»[1]: Այսպես կարևորելով Նախիջևանի աշխարհագրական դիրքը և կրկին չեչտելով, որ Թուրքերի մոտ Արևելքի «այդ բանալին իրենց ձեռքերում ունենալու» ցանկություն կա, Օրջոնիկիձեն հանկարծ հայտարարում է. «**Խորհրդային Ադրբեջանն այդ հարցում անպայման չահագրգռված կողմ է և ոչ մի դեպքում չի կարող Արևելքի այդ բանալին հանձնել**: Ինչ էլ որ լինի, այդ բանալին պետք է լինի խորհրդային ձեռքերում...»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Ահա այսպես, զեկուցման սկզբում դրվատանքի խոսք ասելով վիճելի տարածքները Հայաստանին հանձնելու վերաբերյալ Նարիմանովի հռչակագրի մասին, այն համարելով նախադեպը չունեցող «պատմական ակտ», վերջում, չգիտես ինչու, Օրջոնիկիձեն սկսում է խոսել Նախիջևանի հարցում ոչ թե Հայաստանի, այլ Ադրբեջանի չահագրգռվածության մասին, ու հայտարարում, թե նա չի կարող Նախիջևանը հանձնել Թուրքերին[3]: Ճիշտ է, նա իսկույն ևեթ ավելացնում է, թե ինչ էլ որ լինի, Նախիջևանը պետք է լինի խորհրդային ձեռքերում, բայց դրանից խնդրի էությունը չի փոխվում, իր այդ հայտարարությամբ Օրջոնիկիձեն, ըստ էության, հարցականի տակ է դնում Նախիջևանի պատկանելիությունը Հայաստանին և հետո՝ Ադրբեջանի ղեկավարությանը Նախիջևանը ետ ստանալու հույսեր ներշնչում: Առավել ևս, որ հարցի լուծումը տեսնում է ոչ թե Անկարայի ագրեսիվ նկրտումներին հակահարված տալու, այլ դիվանագիտության միջոցով: «Մենք կարծում ենք, որ մեզ մոտ այդ հարցում ևս Թուրքերի հետ ոչ մի սուր բախումներ տեղի չեն ունենա, – ավելացրել է Օրջոնիկիձեն, – ինչ-որ դիվանագիտական ճանապարհով այդ հարցը կարող է լուծվել»[1]: Իսկ որ Անկարան Հայաստանի հարցում ոչ մի զիջման չէր գնա, դա հասկանում էին ոչ միայն Օրջոնիկիձեն և Նարիմանովը, այլև բոլոր նրանք, ովքեր առիթ էին ունեցել առնչվելու Թուրք-հայկական հարաբերություններին: Այլ կերպ ասած, իր այս հայտարարություններով Օրջոնիկիձեն, կամա թե ակամա, Բաքվի ղեկավարությանը ակնարկում էր Նախիջևանը վերադարձնելու հնարավորության մասին:

*Դատելով Մոսկվայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի մի վկայությունից՝ նախակոնֆերանսյան այդ շրջանում Նախիջևանի հարցում որոշակիորեն Հայաստանի օգտին էր խոսում նաև Ստալինը: ՀԿԿ Կենտկոմ ուղարկած 1921թ. հունվարի 15-ի նամակում անդրադառնալով Ստալինի հետ իր հանդիպմանը, նա գրում է. «Զուսենալով Ձեզնից տեղեկություն, ես առիթ չեմ ունեցել դիմելու Ձիչերինին և Ստալինին: Բայց ահա օրերս ընկ. Աթաբեկովից[2] ստացա քաղվածքներ Նախիջևան – Օրդուբադ – Նորաշենի վերաբերյալ կոմբրիգ (բրիգադի հրամանատար – Է. Զ.) Ստուդենևի զեկուցագրից: Այդ հեռագրի պատճենները ուղարկեցի ընկերներ Լենինին, Տրոցկուն, Ձիչերինին, իսկ Ստալինին ես ինքս տարա և նրա հետ շատ երկար զրուցեցի: Ընկ. Ստալինը, ինչպես երևում է նաև մյուս ընկերները, նշանակալիորեն փոխել են իրենց վերաբերմունքը Թուրքական չարժման նկատմամբ՝ ի հետևանս այն բավականին հանդուգն տոնի, որով նրանք սկսել են խոսել Ռուսաստանի հետ և այն փաստերի, որ վերջին ժամանակներս հաղորդված է Վրաստանում ՌԽՖՍՀ մամուլի բյուրոյի կողմից: **Ստալինը վճռականորեն հայտարարեց, որ Նախիջևանի մասին խոսք լինել չի կարող: Նախիջևանը կլինի Խորհրդային Հայաստանում**: Ինչ վերաբերում է Կարսին, ապա թեև այդ հարցում վճռական որոշում կա պաշտպանել Հայաստանի համար, այնուամենայնիվ անհրաժեշտ է ամենաչտապ կերպով այնտեղից նյութեր ուղարկել ինչպես ամբողջ մարզի, այնպես էլ առանձին օկրուգների՝ Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի ազգագրական վիճակի մասին»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Թե որքան «վճռական» էր Ստալինը Նախիջևանի և Կարսի մասին իր խոստումներում, կտեսնենք Մոսկվայի կոնֆերանսի աշխատանքներին ծանոթանալիս: Իսկ որ Ս. Տեր-Գաբրիելյանը անվերապահորեն հավատացել էր Ստալինին, երևում է նամակի այն տողերից, որոնցում

---

[1] ՀԱԱ, ֆ. 4033, ց.1, գ. 1670, փ. II, թ. 2:

[2] Նույն տեղում, թ. 3:

[3] Հակասական մտքերի առկայությունը և փաստաթղթի ոճը հիմք է տալիս ենթադրելու, որ Օրջոնիկիձեն խոսել է բանավոր:

---

[1] ՀԱԱ, ֆ4033, ց. 1, գ.1670, փ.11, թ.3:

[2] ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչն էր Ադրբեջանում:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ. 31, թ. 70-71:

նա խոսում է չուտափույթ ճշգրիտ ու հավաստի տեղեկություններ ուղարկելու մասին ոչ միայն օկուպացված շրջաններում Թուրքերի գործողությունների, այլև Թուրքիայի ներքին դրության վերաբերյալ:

Անցնելով նախակոնֆերանսյան այդ նույն ժամանակաշրջանում Նախիջևանի երկրամասը Հայաստանին հանձնելու վերաբերյալ կոնֆերանսի հնարավոր որոշումը կանխելու ուղղությամբ Ադրբեջանի ղեկավարության ձեռնարկած քայլերին, դարձյալ հարկադրված ենք արձանագրել, որ Բաքվի արխիվների անմատչելիությունը մեզ հնարավորություն չի տալիս ամբողջությամբ բացահայտելու այն ամենը, ինչ հակահայկական մոլուցքով բռնված Նարիմանովի խումբը ծրագրել և իրականացրել է այդ օրերին: Բայցևայնպես, երկու փաստաթղթեր, որ Մոսկվայի արխիվներում հայտնաբերել ու հրապարակել է պրոֆ. Յու. Բարսեղովը, ինչ-որ չափով լրացնում են այդ բացը: Երկուսի հեղինակն էլ Բ. Շահթախթինսկին է, Ստալինի վստահությանն արժանացած այն նույն անձը, որը հակահայկականության մեջ աչքի էր ընկել դեռ մինչև Հայաստանի խորհրդայնացումը, լծվել ամեն գնով Նախիջևանը Հայաստանից անջատելու գործին և գնացել այնքան հեռուն, որ գերադասել էր այդ երկրամասը տեսնել Թուրքիայի կազմում, քան խորհրդայնացած ու «եղբայրական» հռչակված Հայաստանի (հիշենք, թեկուզ, նրա Թուրքամետ քարոզչությունն ու գործունեությունը Նախիջևանում 1920թ. դեկտեմբերին): Սակայն փոփոխված իրադրության պայմաններում (Մոսկվան չէր ճանաչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Անտանտի հետ քեմալական վերնախավի անթաքույց սիրախաղը առաջ էր բերել բոլշևիկյան ղեկավարության դժգոհությունը) Շահթախթինսկին չէր կարող այլևս խոսել հօգուտ Թուրքերի, առավել ևս, որ համոզվել էր, որ Նախիջևանը չի զիջվելու նրանց: Եվ քանի որ այդ երկրամասը Ադրբեջանին միացնելու առաջարկությամբ նմանապես հանդես գալ չէր կարող՝ Ադրհեղկոմի հայտնի դեկլարացիայի պատճառով, ուստի նա[1] որոշում է Նախիջևանը Հայաստանին չթողնելու գերխնդիրը լուծել երկրամասի հովանավորությունը Ռուսաստանին առաջարկելու միջոցով: Ադրբեջանի համար դա հարմար տարբերակ էր՝ հետագայում այն ետ ստանալու առումով: Արդյունքում ծնունդ են առնում վերը հիշատակած երկու փաստաթղթերը՝ մեկը դեկուցագիր ուղարկված ՌԽՖՍՀ կառավարությանը, իսկ մյուսը՝ նամակ հասցեագրած Օրջոնիկիձեին:

[1] Անտարակույս է, որ Շահթախթինսկին գործել է Ադրբեջանի ղեկավարության ցուցումով, բայց մենք նրա անունն ենք նշում, քանի որ փաստաթղթերը կրում են նրա անունը:

Փաստաթղթերը թվագրված չեն, ինչը չափազանց տարօրինակ է, և միայն բովանդակությունից կարելի է դատել նրանց լույս աշխարհ գալու ժամանակի մասին: Ըստ Յու. Բարսեղովի՝ դեկուցագիրը[1] գրվել է փետրվարին, իսկ նամակը՝ ոչ ուշ քան մարտին:

Զեկուցագիրը իսկապես որ կարող է փետրվարին գրված լինել: Ինչ վերաբերում է նամակին, ապա այն մարտին գրված լինել չէր կարող մի շարք պատճառներով: Դրանցից առաջինն այն է, որ մարտին Հայաստանում խորհրդային իշխանություն չկար, այն տապալվել էր փետրվարյան ապստամբության հետևանքով մինչդեռ նամակում խոսվում է Հայաստանին օգնելու մասին: Եվ հետո, նամակում մի քանի անգամ չեշտվում է մինչև կոնֆերանսը ձեռնարկվելիք քայլերի մասին: Վերջապես նամակում հանդիպում ենք այսպիսի արտահայտությունների. «Կարաբեքիրն ինձ ամենաանկեղծ ձևով հայտարարեց...», «Կարաբեքիրի վրա չչմեցնող տպավորություն թողեց Զանգեզուրը և Նախիջևանի շրջանը Հայաստանին զիջելու մասին Ադրհեղկոմի ակտը...» և այլն: Այս արտահայտություններն ամենախոսուն վկայություններն են այն բանի, որ նամակը, ամենայն հավանականությամբ, գրվել է այն ժամանակ, երբ Շահթախթինսկին դեռևս գտնվում էր Թուրքերի մոտ (Ալեքսանդրապոլ, Կարս) կամ էլ Նախիջևանում, այսինքն՝ դեկտեմբերին: Իսկ մարտին Շահթախթինսկին վաղուց Մոսկվայում էր (Մոսկվա էր հասել փետրվարի 19-ին Թուրքական պատվիրակության հետ միասին):

Ինչևէ, վերադառնալով այդ երկու փաստաթղթերի բովանդակությանը, պետք է արձանագրենք, որ նրանցում երկու հիմնական խնդիր է շոշափված.

1. Թուրքիայի հետ դաշնակցային պայմանագրի կնքում,

2. Նախիջևանի երկրամասի վերածում ինքնավար միավորի և հանձնում Ռուսաստանի հովանավորությանը:

Առաջինը, որ աչքի է զարնում նամակների հետ ծանոթությունից, դա այն է, որ ի տարբերություն Ստալինի, Օրջոնիկիձեի, Նարիմանովի և մյուսների, ովքեր ուղղակի պահանջում էին մի կողմ դնել Հայկական հարցը և Անկարայի հետ բարեկամության և համագործակցության մասին պայմանագիր կնքել, Շահթախթինսկին այդ նույն բանը՝ ինչպես վերը նշված փաստաթղթերն են ցույց տալիս, փորձում է անել

[1] 4-5 էջանոց այդ փաստաթուղթը ավելի շատ նամակի է նման, քան դեկուցագրի: Յու. Բարսեղովը այն դեկուցագիր է համարել՝ հենվելով նույն արխիվում պահվող Մ. Օրախելաշվիլու կարծիքի վրա:

բավականին խորամանկ ձևով: Նա հորինում և բոլշևիկյան ղեկավարությանն է հրամցնում տեսակետ, թե կոմնորոշման հարցում հակասություն կա Արևելյան Անատոլիայի՝ ի դեմս Կարաբեքիրի, և Անկարայի ղեկավարության միջև, որ իբրև Կարաբեքիրը համոզված ռուսամետ է, բոլշևիկյան հայացքների տեր, Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքի կոմնակից և, որ եթե Անկարան փորձի համաձայնության գալ Արևմուտքի հետ, ապա Կարաբեքիրն Արևելյան Անատոլիան դուրս կբերի Անկարայի ենթակայությունից, վեր կածի առանձին միավորի ու կչարունակի պայքարն Անտանտի դեմ: Նա նաև ավելացնում է, որ Անկարայում գիտեն Կարաբեքիրի այդ տրամադրությունների մասին և այդ պատճառով էլ Անտանտի հետ համաձայնության չեն գնա: «Անգորայի կառավարությունը հրաչալի գիտի Անատոլիայի ազգաբնակչության տրամադրությունը և նրա վրա Կարաբեքիրի ազդեցությունը, դրա համար էլ առանց վերջինիս համաձայնության նա ոչինչ չի ձեռնարկի, – ասված է նամակում: –...**Կարաբեքիրը ամենաանկեղծ ձևով ինձ հայտարարեց, որ մեծագույն դժբախտություն կլինի Թուրքիայի համար, և անպայման, անշահավետ Ռուսաստանի համար, եթե նրանք միմյանց չհասկանան...**»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Նման նախաբանին պետք է հետևեր առաջարկությունը և նամակի հեղինակը շարունակում է.

«...իմ ծայր հասկացողությամբ մենք պետք է ձեռնարկենք հետևյալը.

1. Շտապ բավարարել Կարաբեքիրի պաշտոնական խնդրանքը՝ նրան 30000 փութ մազութ, 10000 փութ կերոսին և 5000 փութ բենզին բաց թողնելու մասին:

2. Կարաբեքիրին նվեր ուղարկել մեկ բարձրակարգ վագոն:

3. Անհրաժեշտ է մինչև կոնֆերանսը Նախիջևանի երկրամասը վերածել Ռուսաստանի հովանավորության տակ ինքնավար միավորի և նրա միջոցով առևտուր սկսել պարսկական հարուստ նահանգների հետ, պարսկական հացահատիկով, մրգերով և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով կերակրելու համար Հայաստանը և այնտեղ գտնվող մեր զորամասերը՝ այդպիսով ազատելով կենտրոնը Հայաստանի հանդեպ պարենային բոլոր հոգսերից: Ռազմավարական նկատառումով այդ կարևորագույն անկյունը չի կարելի տալ Թուրքերի հովանավորությանը: Պետք է ենթադրել, որ Ռուսաստանի հովանավորության տակ այդ երկրամասի ինքնուրույնությունը կբավարարի և Թուրքերին: Հնարավոր է, որ մոտիկ ապագայում հանգամանքները հարկադրեն մեզ ինքնավար Նախիջևանի երկրամասի անունից քայլ կատարել Պարսկական Ադրբեջանի ուղղությամբ, բայց դա երբեք չի կարելի անել Հայաստանի կողմից կամ նրա անունից»[1]:

Ինչպես տեսնում ենք, նամակի այս մասում Շահթախթինսկին Նախիջևանը Ռուսաստանի հովանավորությանը հանձնելու նպատակահարմարությունը փորձում է հիմնավորել երկու հանգամանքով՝ առևտուր Պարսկաստանի հետ և դեպի պարսկական Ադրբեջան Կարմիր բանակի առաջխաղացման հնարավորություն: Բայց, հավանաբար, վստահ չլինելով առաջ քաշված հիմնավորումների լրջությանը (ոչինչ չի ասված, թե ինչու դա չի կարելի անել Հայաստանի ենթակայության տակ գտնվող Նախիջևանից), նամակի վերջում նա դիմում է կեղծիքի ու բացահայտ չանտաժի: «Թուրքերի քարոզչության հետևանքով, – գրում է Շահթախթինսկին, – Հայաստանը Մակուի խանությունից հաց չի ստանում, բայց պատկերը միանգամայն կփոխվի և Հայաստանը կստանա հաց և այլն, Նախիջևանի երկրամասի ինքնուրույնության դեպքում: Այնուհետև պետք է նկատի ունենալ, որ **Նախիջևանի երկրամասը Հայաստանին միացնելուց Թուրքերն անհապաղ կպատասխանեն Մակուի խանության զավթումով, ինչը մեզ համար շահավետ չէ բոլոր տեսակետներից**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Այսպիսին է Օրջոնիկիձեին ուղարկած նամակի բովանդակությունը, այսպես է Շահթախթինսկին կեղծ ու պատիր միջոցներով փորձում համոզել Օրջոնիկիձեին, թե անհրաժեշտ է վերանայել Նախիջևանը Հայաստանին հանձնելու մասին Ադրհեղկոմի դեկլարացիան և այդ երկրամասը վերածել ինքնավար միավորի: Թե ինչպես պետք է Թուրքերը «անհապաղ զավթեն» Պարսկաստանի մաս կազմող Մակուի խանությունը, դա հանելուկ է, որի լուծումը միայն Շահթախթինսկուն էր հայտնի: Իսկ որ նա կեղծում է իրականությունը՝ գրելով, թե Մակուի խանությունը Թուրքերի ազդեցության տակ հրաժարվել է Հայաստանի հետ առևտրական կապերի մեջ մտնելուց, դա ակնհայտ է և այդ մասին է վկայում այն փաստը, որ դեռ հունվարին «Գրարմակ» ընկերությունը, որի վարչության անդամներից էր Խան Մակինսկին, Խորհրդային Հայաստանին առաջարկել էր իր ծառայությունը Մակուի

[1] „Геноцид армян...", стр. 405.

[1] Նույն տեղում, էջ 405–406:

[2] Նույն տեղում:

խանությունում առևտրական գործարքներ կատարելու, իսկ փետրվարի 2-ին Հայհեղկոմը Մակու էր գործուղել իր հատուկ առևտրական ներկայացուցչին: Հայաստանի հետ առևտրական կապերի մեջ մտնելու պարսիկ վաճառականների ցանկության մասին Հայհեղկոմին տեղեկացրել էր նաև Երևանում Պարսկաստանի հյուպատոս Ասադուլլա խանը փետրվարի 10-ին[1]:

Ռուսաստանի կառավարությանը, կամ ինչպես Օրախելաշվիլին է ներկայացնում, Լենինին ուղարկած զեկուցագիրը, ավելի քան չորս էջից բաղկացած մի ընդարձակ փաստաթուղթ է, որը, սակայն, բովանդակության առումով շատ էլ չի տարբերվում Օրջոնիկիձեին հասցեագրած նամակից: Ուղղակի այստեղ չոչափված են նաև հարցեր, որոնք տեղ չէին գտել նամակում: Դրանցից են Ալեքսանդրապոլի պայմանագիրը և Թուրքերի ու դաշնակցականների միջև ինչ-որ կապերի, Ալեքսանդրապոլը չէվակուացնելու Թուրքերի մտադրության, Իզզեդ փաշայի և Անկարայի միջև տեղի ունեցած բանակցությունների և այլ հարցեր, որոնց հասկանալի պատճառներով չենք անդրադառնա: Ինչպես և նամակում, այստեղ ևս Շահթախթինսկին խոսում է Անկարայի կառավարող շրջաններում երկու խմբավորումների (արևմտամետ և ռուսամետ) առկայության մասին, Կարաբեքիրին երկինք բարձրացնում, ներկայացնում որպես Արևելյան Անատոլիայի միակ առաջնորդ՝ մարդ, որին ժողովուրդը պաշտում է իբրև հերոս և գործիչ, որն ամենանվիրված է Ռուսաստանին: Զեկուցագրում Շահթախթինսկին անդրադառնում է նաև Թուրքական պատվիրակության կազմին, բնութագրում նրա անդամներին և կանգ առնում Հայկական հարցի վրա՝ հատուկ ընդգծելով, թե «որպեսզի ամուր դաշինք կնքենք Թուրքերի հետ, մենք Հայկական հարցը մեր բանակցությունների օբյեկտ չպետք է դարձնենք»[2]:

Անտարակույս Շահթախթինսկին ինքն իրեն հավատարիմ չէր լինի, եթե մոռացության տար Նախիջևանի խնդիրը: «Նախիջևանի երկրամասը՝ որպես ստրատեգիական կարևորագույն անկյուն, - ասված է զեկուցագրում, - ոչ մի կերպ չի կարելի հանձնել Թուրքերի հովանավորությանը: Ճիշտ այդպես էլ հիմա չի կարելի թույլ տալ նրա միացումը Հայաստանին, քանի որ, առաջին, դրան կընդդիմանա ինքը՝ այդ երկրամասի բնակչությունը և, երկրորդ, դրան չեն համաձայնի

[1] *Տե՛ս* ***Է. Ա. Զոհրաբյան****, Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները, Եր. 1985, էջ 100-104:*

[2] *„Геноцид армян...", стр. 390.*

Թուրքերը: Դրա համար էլ առայժմ ***հարկավոր է այդ երկրամասը վերածել Ռուսաստանի հովանավորության տակ ինքնակառավարվող մարզի: Նման ձևով հարցի լուծումը Թուրքերին կչարժի իրենց բռնած դիրքից և չի կարող չբավարարել Հայաստանին»****[1] (ընդգծումը մերն է - Է. Զ.):*

Ինչպես և նամակում, Շահթախթինսկին բավականին երկար դատողություններ է անում Նախիջևանի վրայով պարսկական նահանգների հետ առևտուր ծավալելու, դեպի պարսկական Ադրբեջան (գուցեև Թուրքիա) հնարավոր արշավանքի մասին և այլն և այլն, բայց ի տարբերություն նամակի, որտեղ ասված էր, թե ի պատասխան Նախիջևանը Հայաստանին միացնելուն Թուրքերը իսկույն կգրավեն Մակուն, այստեղ հայտարարում է, թե «վերջապես հարկավոր է նկատի ունենալ, որ ***Նախիջևանի շրջանը Հայաստանին միացնելուն պես Մակուի խանությունը անհապաղ իրեն կհայտարարի Թուրքիայի մաս, իսկ դա ձեռնտու չէ մեզ բոլոր տեսակետներից»****[2] (ընդգծումը մերն է - Է. Զ.): Եվ ոչ մի բացատրություն, թե ինչո՞ւ Նախիջևանը Հայաստանին միացնելու դեպքում Մակուն ամհապաղ կմիանա Թուրքիային: Նախ, Մակուն անկախ խանություն չէր և չէր կարող առանց Պարսկաստանի կենտրոնական կառավարության համաձայնության նման քայլ կատարել: Եվ հետո, Մակուի խանի համար ի՞նչ նշանակություն ուներ, թե Նախիջևանի երկրամասը ում հովանավորության տակ կգտնվի՝ Հայաստանի՞, թե՞ Ռուսաստանի: Չէ՞ որ Մակուի խանը ոչ մի նման բան չարեց ո՛չ 1919 թվականին, երբ Նախիջևանը միացվել էր Հայաստանին, ո՛չ էլ 1920թ. ամռանը, երբ հայկական զորքերը գրավեցին Շարուրը և Նախիջևանի գավառի մի մասը: Ուրեմն Մակուի խանության հետ կապված Շահթախթինսկու առաջ քաշած վարկածը էժանագին չանտաժ էր, ուրիշ ոչինչ: Մնում է ավելացնել, որ Շահթախթինսկին դրանով չէր բավարարվել և զեկուցագրի վերջում մի նոր սպառնալիք էր առաջ քաշել: «****Եթե Մոսկվայում համաձայնություն չկայանա****, - գրում է Շահթախթինսկին, - ապա Ալի Ֆուադ փաշան կմնա Մոսկվայում որպես Անգորայի կառավարության դեսպան, իսկ ինքը՝* ***պատվիրակությունը, անհապաղ հետ կգնա: Այդ դեպքում Անատոլիական Ազգային ժողովը իսկույն կդիմի մուսուլմանական Արևելքին հայտարարությամբ այն մասին, որ հեղափոխական Թուրքիան Ռուսաստանի***

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում:*

հետ ոչ մի դաշինքի մեջ չէ և իր պայքարը մղում է ու կմղի առանց Խորհրդային Ռուսաստանի որևէ օգնության և աջակցության»[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Ահա այն հեռանկարը, որով սպառնում է Շահթախթինսկին. Թուրքիան մուսուլմանական Արևելքը կտրամադրի Ռուսաստանի դեմ: Գործո՞ղ սպառնալիք էր սա, թե՞ ոչ: Անպայման գործող էր, եթե նկատի առնենք այն իրողությունը, որ բոլշևիկյան ղեկավարությունը և անձամբ Լենինը, այդ նույն մուսուլմանական Արևելքը հռչակել էին իրենց բնական դաշնակիցը արևմտյան իմպերիալիզմի դեմ ծավալած պայքարում: Ուրեմն ինչո՞ւ պիտի փոքրիկ ու բոլորի կողմից լքված հայ ժողովրդի չահերը վեր դասվեն համաշխարհային հեղափոխության և հակաիմպերիալիստական պայքարի չահերից: Չէ, պետք է ընդունել, որ Շահթախթինսկին ոչ միայն հմուտ ինտրիգան էր, այլև դիվանագետ: Նա նպատակին հասնելու ճիշտ միջոց էր ընտրել: Իսկ գուցե Շահթախթինսկին արդեն տեղյա՞կ էր Ս. Տեր-Գաբրիելյանի և Ա. Մռավյանի հետ դեկտեմբերյան հանդիպման ժամանակ Լենինի արած այն հայտարարությանը, թե դժվարությունը կայանում է նրանում, որ համաշխարհային հեղափոխության ճակատներից մեկն անցնում է Հայաստանի վրայով[2]*:*

Ինչևէ, Մոսկվայի կոնֆերանսին հաշվված օրեր էին մնում, իսկ մթնոլորտն ամբողջովին հակահայկական թույնով էր ներծծված: Հայաստանի օգտին խոսողներ այլևս չկային: Ավելին, ծանոթությունը կոնֆերանսի նյութերին ցույց է տալիս, որ ի վերջո Չիչերինն էլ լծվեց ամեն գնով Թուրքերի հետ պայմանագիր կնքելու գործին՝ պատրաստ ընդառաջելու նրանց բոլոր հարցերում՝ բացի Թուրքերի պահանջած ռազմաքաղաքական դաշինքից: Այս հարցում նա մաքսիմում համառություն ցուցաբերեց: Փետրվարի 22-ին՝ Թուրք պատվիրակների հետ հանդիպումից հետո, որի ժամանակ նրանք Չիչերինին էին ներկայացրել Լենինից ու Ստալինից ստացած ծածկագրի հիման վրա Թուրքիայի հետ քաղաքական և ռազմական դաշինք կնքելու վերաբերյալ Մդիվանու պաշտոնական նամակը Կարաբեքիրին և վերջինիս պատասխանը Մդիվանուն, Չիչերինը զարմանքով գրում է Լենինին. «Այդ ամբողջ պատմությունն ինձ համար միանգամայն անսպասելի էր: ***Ես ոչինչ չգիտեի այն մասին, որ Դուք և ընկ. Ստալինը ծածկագիր եք ուղարկել ընկ. Մդիվանուն: Այդ ծածկագրի ճշգրիտ բովանդակությունը մինչև***

[1] *Նույն տեղում, էջ 391:*

[2] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4010, գ. 258, փ. 4, ց.1, թ.1:*

հիմա ինձ անհայտ է, բայց նրա հիման վրա մեր կառավարության անունից ընկ. Մդիվանին, ինչպես դա կտեսնեք այդ գրագրությունից, Թուրքերին քաղաքական և ռազմական դաշինքի պաշտոնական առաջարկություն է արել»[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Չիչերինը հարկադրված էր բացատրել Լենինին, որ նման դաշինք կնքել, նշանակում է չսահմանափակվել զենքի ու զինամթերքի մատակարարմամբ, այլ անմիջականորեն մասնակցել Թուրքիայի կողմից մղվելիք պատերազմներին: «Դաշինք, – գրում է Չիչերինը, – նշանակում է, որ Թուրքերի վրա Անգլիայի հարձակման դեպքում մենք հարկադրված կլինենք պատերազմ հայտարարել Անգլիային և մեր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով մասնակցել Անգլիայի դեմ պատերազմին»: Չիչերինը նաև Լենինի ուշադրությունն է հրավիրում առևտրական համաձայնագրի կնքման նպատակով Լոնդոնում վարվող բանակցությունների վրա ու շեշտում, որ Թուրքերի հետ դաշինքը «անհամատեղելի է Անգլիայի հետ ենթադրվող համաձայնագրի հետ»[2]*:*

Առաջ անցնելով ասենք, որ Չիչերինի փաստարկները համոզիչ էին և դաշինքի գաղափարը մերժվեց: Սակայն խնդիրը միայն դա չէ, այլ նաև այն, որ այս դեպքում ևս գործ ունենք Լենինի և Ստալինի կողմից դիվանագիտական տարրական նորմի խախտման՝ Արտգործժողկոմատը չրջանցելու փաստի հետ:

* * *

Փետրվարի սկզբին Բաքու ժամանած Թուրքական պատվիրակությունը մի քանի օր այնտեղ մնալուց և Ադրբեջանի ղեկավարության հետ առաջիկա կոնֆերանսում քննարկվելիք հարցերի շուրջ մտքեր փոխանակելուց[3] *և, ամենայն հավանականությամբ որոշ խնդիրների վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռք բերելուց հետո, փետրվարի 6-ին Շահթախթինսկու ուղեկցությամբ դուրս եկավ Բաքվից և Մոսկվա հասավ փետրվարի 18-ին: Պատվիրակությունը, որի նախագահը Յուսուֆ Քեմալ-բեյն էր (Մուստաֆա Քեմալի եղբայրը), բավականին բազմանդամ էր (ընդհանուր թվով 45 հոգի): Պատվիրակության կազմում էին Մոսկվայում դեսպան նշանակված Ալի Ֆուադ փաշան (Ջերեսոյ), Ռզա Նուր-բեյը, խորհրդականներ, թարգմանիչներ և այլն:*

[1] *„Геноцид армян...", стр. 391.*

[2] *Նույն տեղում, էջ 392:*

[3] *Այդ մասին վկայություն կա Լենինին ուղարկած Նարիմանովի փետրվարի 16-ի նամակում:*

Ստանալով կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու մասին Զիչերինի հրավերը, Հայհեղկոմը դեռևս դեկտեմբերի 26-ի նիստում որոշել էր արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Մոսկվա[1], ինչպես նաև մանրամասն հրահանգներ էր մշակել կոնֆերանսին ներկայացվելիք խնդիրների մասին: Իսկ հունվարի 12-ին Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանին հանձնարարել էր վրացական կառավարությունից թույլտվություն ստանալ «ռուս-հայ-թուրք-ադրբեջանական կոնֆերանսին մասնակցելու նպատակով Մոսկվա ուղևորվող պատվիրակության համար»[2]: Պատվիրակության կազմում էին քարտուղար Վահագ Մուրադյանը, աշխատակիցներ Գաբրիել Տեր-Օհանովը, Պետրոս Բեկզադյանը, Արամ Տեր-Մկրտչյանը, Ելիզավետա Մուսայելյանը և պատվիրակությունը սպասարկող վեց այլ անձինք[3]: Մոսկվայում պատվիրակությանը պետք է միանար Սահակ Տեր-Գաբրիելյանը:

Պատվիրակության համար կազմվել էր հուշագիր, որին դեռ կանդրադառնանք, իսկ հիմա նշենք, որ հայ պատվիրակներին վիճակված չէր մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին: Բանն այն է, որ դրժելով «հայ կոմունիստների մինիմալ մասնակցությամբ» հայ-թուրքական հարաբերությունների հարցը Մոսկվայի կոնֆերանսում լուծելու մասին իր կառավարության նախնական համաձայնությունը, Յուսուֆ Քեմալ-բեյը Զիչերինի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ հայտարարեց, թե կառավարությունից միացյալ կոնֆերանսի մասնակցելու լիազորություն չի ստացել: Որ հենց այդ պատճառաբանությամբ է մերժվել խորհրդաթուրքական միացյալ կոնֆերանսի գաղափարը, այդ մասին մանրամասն բացատրված է դեռևս 1979թ. լույս տեսած հայ-թուրքական հարաբերություններին նվիրված մեր գրքում[4]: Մինչդեռ դրանից հետո էլ մեր պատմաբանները, չգիտես ինչու, առանց հարցի էության մեջ խորանալու, առանց կոնֆերանսի արձանագրություններն ուսումնասիրելու, և հաշվի առնելու այն փաստը, որ մերժվել է ոչ միայն հայերի, այլև ադրբեջանցիների մասնակցությունը, նախկինի պես շարունակում են գրել, թե կոնֆերանսին հայ պատվիրակների

[1] ՀԱԱ, ֆ.4/114, ց.2, գ.17, թ.19:

[2] Նույն տեղում, գ 36, թ. 31:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տ՛ես **Է. Ա. Զոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, էջ 210-212:

մասնակցությունը թուրքերը մերժել են՝ վկայակոչելով Հայաստանում ծավալված փետրվարյան իրադարձությունները: Օրինակ, Գ. Գալոյանը անդրադառնալով այդ հարցին, գրում է, թե «քեմալական պատվիրակությունը դեմ էր Խորհրդային Հայաստանի պատվիրակների մասնակցությանը խորհրդաժողովին «հիմք» ընդունելով «Հայրենիքի փրկության կոմիտեի» հայտարարությունը, որ Հայաստանում խորհրդային իշխանությունը տապալված է»[1]: Ըստ որում, դա անում է առանց որևէ փաստարկի: Իսկ ահա Ե. Սարգսյանը իր «Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա» գրքում[2] ոչ միայն փորձում է ընթերցողին համոզել, որ Մոսկվայի կոնֆերանսին Բեկզադյանի պատվիրակության մասնակցությունը մերժելու պատճառը Հայաստանում Ս. Վրացյանի գլխավորած հակախորհրդային ապստամբությունն էր, այլև սխալ է մեկնաբանում այդ ամբողջ գործընթացը: Նա գրում է. «Բորիս Լեգրանի և Ալեքսանդր Բեկզադյանի պահանջով պետք է կոչվեր հայ-թուրքական կոնֆերանս, քանի որ պետք է քննարկվեին Թուրք դավթիչների կողմից օկուպացված Խորհրդային Հայաստանի տարածքների և հայ-թուրքական սահմանների հարցերը: Կոնֆերանսին պետք է մասնակցեին Խորհրդային Ռուսաստանը և Խորհրդային Ադրբեջանը: Սակայն 1918թ. փետրվարի 18-ին Երևանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, իշխանության գլուխ անցան դաշնակները Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Թուրքական պատվիրակությունը օգտվելով դրանից վճռականապես հրաժարվեց Հայաստանի հետ համատեղ կոնֆերանսից: Որպեսզի կոնֆերանսը չձախողվի, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ստիպված էր համաձայնվել, որ կոնֆերանսը ընթանա Ռուսաստանի և Թուրքիայի միջև, բայց անպայման Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի պատվիրակությունների մասնակցությամբ: Թուրքական պատվիրակությունը համառորեն դեմ էր Հայաստանի պատվիրակության մասնակցությանը կոնֆերանսին»[3]:

Ինչպես տեսնում ենք, այս փոքրիկ պարբերության մեջ բացի վերը նշածից, մի ուրիշ սխալ էլ կա: Դա այն է, որ առանց հիմքի, առանց որևէ փաստի հեղինակը գրում է, թե Լեգրանի և Բեկզադյանի պա-

[1] **Գ. Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր. 1999, էջ 440:

[2] Տարօրինակ է, որ հեղինակը դավադիր գործարքին մասնակիցների շարքում նշում է նաև Հայաստանը:

[3] **Ե. Սարգսյան**, Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Եր. 1995, էջ 185:

հանջով Մոսկվայի կոնֆերանսը պետք է լիներ հայ-թուրքական: Նման բան ասել՝ նշանակում է տեղյակ չլինել կոնֆերանսի գումարման նախապատմությանը:

Ինչևէ, ավելորդ համարելով այդ սխալները հերքելու համար մանրամասնությունների մեջ մտնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև չցանկանալով այստեղ կրկնել վաղուց ապացուցվածը, միայն ավելացնենք, որ իրողությունն այն է, որ թուրքական դիվանագիտությունը դեռ միչև կոնֆերանսը Անդրկովկասյան հանրապետությունների հետ հարաբերությունների հարցում որդեգրել էր սեպարատ (առանձին) պայմանագրեր կնքելու քաղաքականություն: Ավելի ուշ դա խոստովանել է նաև ինքը՝ պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալ-բեյը Անկարայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Աբիլովի հետ զրույցում: «ՌՍՖՍՀ հետ պայմանագիր կնքելու նպատակով ուղևորվելով Մոսկվա, – ասել է Յուսուֆ Քեմալը, – մենք մտադիր էինք պայմանագրեր կնքել Ադրբեջանի և այնուհետև Վրաստանի ու Հայաստանի հետ: Բայց Ադրբեջանում, դժբախտաբար, այդ հարցին այնպես չվերաբերվեցին, ինչպես որ սպասում էինք»[1]:

Մի փաստ էլ բերենք կոնֆերանսի նյութերից և դրանով սահմանափակվենք. Մարտի 12-ի նիստում, երբ քննարկվում էին այնպիսի հարցեր, որոնք կարող էին Անդրկովկասյան հանրապետություններում դժգոհություն առաջացնել, Չիչերինը դիմելով թուրք պատվիրակներին ասել էր, թե հարկավոր էր «այդ հանրապետությունների պատվիրակներին հրավիրել Մոսկվա ավելի ընդարձակ կոնֆերանսի, ինչպես դա առաջարկեց ռուսաստանյան պատվիրակությունը, բայց որը **մերժվեց թուրքական պատվիրակության կողմից լիազորությունների բացակայության պատճառաբանությամբ**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Ասված է պարզ ու հասկանալի. Միացյալ կոնֆերանսից հրաժարվելու համար թուրք պատվիրակները վկայակոչել են լիազորությունների բացակայությունը և ոչ թե փետրվարյան իրադարձությունները Հայաստանում:

Միացյալ կոնֆերանսի տապալումը թուրք պատվիրակների միակ հաջողությունը չէր: Նախնական բանակցությունների օրերին նրանք մի հարց էլ լուծեցին: Դա բանակցություններին Լևոն Կարախանի մասնակցության հարցն էր: Կարծելով, թե Չիչերինի մոտ հայամետության որոշ դրսևորումները Կարախանի ազդեցության արդյունք են, նրանք պահանջեցին Կարախանին հանել պատվիրակության կազմից, ինչը և կատարվեց (Կարախանի փոխարեն պատվիրակության կազմի մեջ մտցվեց թաթար Ջելալեդդին Կորխմազովը)[1]: Այդ պահանջը առաջ էր քաշվել Չիչերինի և Կարախանի հետ փետրվարի 22-ին կայացած հանդիպումից հետո:

Մենք այն կարծիքին չենք, թե ռուսական պատվիրակության կազմում Կարախանի մասնակցությունը Հայաստանին առնչվող հարցերի լուծման գործում կարող էր որևէ նշանակություն ունենալ, ո՛չ: Եթե Կարախանը ի վիճակի լիներ ազդելու Չիչերինի վրա, ապա դա կարող էր անել նաև առանց պատվիրակության կազմում լինելու: Բանն էլ հենց այն է, որ թե՛ Չիչերինն ու նրա տեղակալ Կարախանը և թե՛ Արտգործժողկոմատն ընդհանրապես, լոկ կատարողներ էին, իսկ քաղաքականությունը որոշում էին Քաղբյուրոյի ամենազոր անդամները, կովկասյան գործերում՝ բացառապես Ստալինը: Իսկ որ վերջինս կօգտվեր թուրք պատվիրակների դժգոհությունից և կպահանջեր Կարախանին հանել պատվիրակության կազմից, դա հայտնի էր թե՛ Չիչերինին և թե՛ Կենտկոմի բոլոր անդամներին: Բանն այն է, որ Ստալինը վաղուց մտադրվել էր Չիչերինի տեղակալի պաշտոնում Կարախանի փոխարեն ունենալ մի մարդ, որի միջոցով կկարողանար ազդել Արտգործժողկոմատի գործունեության վրա: Այդ նպատակին հասնելու համար նա օգտագործում էր այն հանգամանքը, որ Կարախանը հայ է և որ դա մեծապես վնասում է իրենց արևելյան քաղաքականությանը՝ հատկապես մուսուլմանական աշխարհում: Դեռևս 1919թ. օգոստոսին (16-ին) Սմոլենսկից Չիչերինին ուղարկած նամակում՝ փորձելով հիմնավորել Կարախանին մեկ այլ, բայց անպայման մուսուլման գործիչով փոխարինելու անհրաժեշտությունը, գրում է, թե ինքը նկատել է, որ տարբեր երկրներից Ռուսաստան եկած մուսուլման պատվիրակները ամեն կերպ շրջանցում են Կարախանին և Արտգործժողկոմատին, և իր հետ հանդիպելու համար գալիս հասնում են Պիտեր, Սմոլենսկ և այլն: Ելնելով դրանից՝ Ստալինը հետևություն է անում, թե այդ ամենը իրեն մտածել է տալիս, որ Արտգործժողկոմատի պատասխանատու աշխատակիցների անձնակազմը բոլորովին չի համապատասխանում «իրենց այսպես կոչված «մուսուլմանական» քաղաքականությանը»: «Այնքա-

[1] **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 215:
[2] ՀԱԱ, ֆ.114, ց.2, գ.63, թ.50-51:

[52] Ալի Ֆուադ փաշան (Ջերեսոյ) իր՝ «Մոսկովյան հուշեր»-ում գրում է, որ Կարախանը պատվիրակության կազմից հանվեց Անկարայի գաղտնի խնդրանքով և որ նրան փոխարինած Ջելալեդդին Կորխմազովը ծագումով թուրք էր:

նով որ մեր «մուսուլմանական» քաղաքականությունը արդարացվել է, արդարացվում է և դեռ կարդարացվի (մենք նվաճել ենք պարսիկների, թուրքերի, աֆղանցիների և այլոց համակրանքը), – գրում է Ստալինը, – այդքանով Կարախանի՝ ազգությամբ հայի, միակ «արևելյան մարդու», որը կոչված է արտաքին աշխարհի համար ներկայացնել Արևելքի ժողովուրդներին, ներկայությունն Արտգործժողկոմատում ծակում է լսողությունը և խախտում ներդաշնակությունը մեր արևելյան քաղաքականությունում, թուլացնում է մեր քաղաքականության ուժն ու էֆեկտը Արևելքի ժողովուրդների ու նախ և առաջ մուսուլմանների աչքում»[1]:

Նամակում նաև ասված է, որ ինքը այդ հարցի շուրջ խոսել է Լենինի հետ և առաջարկել Կարախանին մի որևէ մուսուլմանով փոխարինելու հարցը մտցնել Կենտկոմ և որ այդ պաշտոնի համար առաջադրել է Նարիմանովի թեկնածությունը, որին Լենինը համաձայնել է: Լավ հասկանալով, որ իր հովանավորյալն այդ պաշտոնի համար համապատասխան չէ, որ Չիչերինը կարող է առարկել և Կենտկոմի անդամների ուշադրությունը հրավիրել նրա թույլ կողմերի վրա, Ստալինը շտապում է կանխել նրան, հայտարարելով, թե «դժբախտություն չէ, եթե նրա մոտ բացակայում է լայն քաղաքական հեռանկարը, չէ՞ որ քաղաքականությունը նա չի անելու, այլ ԿԿ-ն և Արտգործժողկոմատը, Նարիմանովը կարևոր է որպես դրոշ: Դեկորացիայի այդպիսի փոփոխությունը կամ ամեն դեպքում **Արևելքի հարցերում Կարախանին ստվերում թողնելը և մուսուլմանին առաջին պլան մղելը, ես բացարձակապես անհրաժեշտ եմ համարում**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Կարծելով, որ այդպիսի փոփոխությունը իսկույն հաշվի կառնվի մուսուլմանների կողմից և կբարձրացնի բոլշևիկների հեղինակությունը իսլամի աշխարհում, Ստալինը շարունակում է, թե «առարկությունն այն մասին, որ Նարիմանովը ծանոթ չէ հեռավոր Արևելքին, որ նա ծեր է և դանդաղ է կողմնորոշվում, ինձ համար վճռական նշանակություն չունի, քանի որ ես երբեք չեմ մտածել, որ Նարիմանովը ղեկավարելու է արևելյան քաղաքականությունը, նա ինձ համար, կրկնում եմ, միմիայն դրոշ է, դեկորացիա»[3]:

Կարծում եմ՝ ընթերցողն էլ կընդունի, որ Չիչերինի հետ այսպիսի տոնով կարող էր խոսել միայն պետության ղեկավարը, այսինքն՝ Լենինը: Ստալինը 1919թ. դեռևս չուներ այն կշիռն ու հեղինակությունը, որ նա ձեռք բերեց հետագայում՝ Լենինի մահվանից հետո: Քաղաքացիական պատերազմի տարիներին և նաև նրանից հետո ընկած առաջին շրջանում՝ Լենինից հետո ամենահեղինակավոր անձը Տրոցկին էր: Կառավարության կազմում Ստալինը զբաղեցնում էր Ազգությունների գործերի ժողկոմի համեստ պաշտոնը: Ճիշտ է, կուսակցական հիերարխիայում նա բարձր դիրք ուներ՝ Ռկ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ էր և նաև վայելում էր Լենինի վստահությունը: Բայց դատելով նամակի բովանդակությունից՝ արդեն այն ժամանակ նա իրեն շատ հավակնոտ էր պահում (նրա բնավորության արատավոր կողմերից մեկը, ինչի վրա մատնացույց էր արել Լենինը իր քաղաքական կտակում), իրավունք վերապահում միջամտելու մեկ այլ ժողկոմատի կադրային քաղաքականությանը և այն էլ՝ ոչ թե համեստ խորհրդատուի դիրքերից:

Ինչևէ, ավարտելով մեր խոսքը Կարախանի դեմ Ստալինի ծավալած պայքարի մասին, միայն ավելացնենք, որ Ստալինին չէր հաջողվել իրականացնել իր ծրագրերը (հավանաբար Չիչերինի անհամաձայնության պատճառով), թեև նամակի պատճենը ուղարկել էր Լենինին և նաև վերջում ավելացրել, որ ինքը պնդելու է իր այդ «հին առաջարկի վրա» և անհրաժեշտ է համարում հարցը քննարկել Կենտկոմի պլենումում:

Վերադառնալով մեր պատմությանը՝ անհրաժեշտ ենք համարում նշելու, որ Չիչերինի և Կարախանի հետ ունեցած առաջին հանդիպումը խիստ անհանգստացրել էր թուրք պատվիրակներին, քանի որ խոսք էր գնացել Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին: Չիչերինի և Կարախանի կողմից առաջ քաշված այդ պահանջի մասին գրում են բոլոր այն թուրք պատմաբանները, ովքեր անդրադարձել են Մոսկվայի կոնֆերանսին՝ հենվելով, անշուշտ, թուրք պատվիրակների վկայությունների վրա: Իսկ պատվիրակության անդամ Ալի Ֆուադ փաշան, որը կոնֆերանսից հետո մնացել էր Մոսկվայում որպես Թուրքիայի դեսպան, հետագայում իր քաղաքական հուշերում գրում է. «Չիչերինի և Կարախանի հետ հանդիպումներից մենք հասկացանք, որ այդ ճանապարհով մենք որոշակի արդյունքների չենք հանգի: Եվ որպեսզի իզուր ժամանակ չկորցնենք, մենք Ազգությունների գործերի կոմիսար Իոսիֆ Ջուղաշվիլի-Ստալինից խնդրեցինք մեզ ընդունել»[1]:

[1] „Геноцид армян...," стр. 33.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[1] **Ե. Սարգսյան**, նշվ. աշխ. էջ 186:

Թուրք պատվիրակները քաջատեղյակ էին Ստալինի հակահայկական տրամադրություններին Մդիվանուց ստացած ինֆորմացիայի շնորհիվ և վստահ էին, որ Ստալինը կպաշտպանի իրենց շահերը: Այդպես էլ եղավ, նրա պահանջով Կարախանը հանվեց պատվիրակության կազմից, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագրի կապակցությամբ էլ հայտարարել էր. «Հայաստանի հարցը դուք ինքներդ լուծել եք: Եթե չլուծված ինչ-որ բան դեռ մնացել է, ապա դա ևս դուք ինքներդ լուծեք...»[1]:

Ստալինի նման վերաբերմունքը չէր կարող չոգևորել Թուրք պատվիրակներին, և նրանք օր-օրի ավելի համառ ու ավելի անզիջող էին դառնում: Փետրվարի 23-ի հանդիպման ժամանակ Յուսուֆ Քեմալը անդրադառնում է նաև Հայաստանի օկուպացված շրջանները մաքրելու վերաբերյալ Չիչերինի պահանջին և մերժում այն՝ հայտարարելով, թե դա կանեն միայն այն դեպքում, երբ կատարվեն պայմանագրի բոլոր կետերն ամբողջությամբ: Նա նաև փորձեց արդարացնել իր կառավարության կողմից Ալեքսանդրապոլի կոնֆերանսին Ռուսաստանի միջնորդության մերժումը ասելով, թե իրենք չէին կարող ընդունել այդ միջնորդությունը «քանի որ վճիռը, որ այդ ժամանակ դուք կընդունեիք, նախապես հայտնի էր, ամեն դեպքում մենք կարող էինք այդպես մտածել, և այդպիսով իրավաբանորեն ասած, արբիտրաժը անհնարին էր: Այն ժամանակ մենք դեռ չգիտեինք այն, ինչ դուք մեզ ասել եք այս օրերին և մենք մտածում էինք, որ ռուսական կառավարությունը մեզնից պահանջում է մաքրել վիլայեթները, որոնց մասին խոսք է գնում»[2]: Չիչերինը դա համարեց թյուրիմացություն, կոչ արեց վերացնել բոլոր թյուրիմացությունները, ավելացնելով. «...դրա համար մենք կառաջարկեինք հրավիրել Ադրբեջանի ներկայացուցչին, որը մուսուլմանական հանրապետություն լինելով, պետք է ձեզ լիակատար վստահություն ներշնչի: Դրա հետ մեկտեղ Ադրբեջանը որոշակի դեր է խաղում Կովկասում: **Ես իմացա, որ նրա կողմից (վիճելի – Է. Զ.) մարզերի հանձնումը Հայաստանին, ձեզ մոտ որոշ անհանգստություն է առաջացրել**»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ահա այսպես, դեռ մինչև կոնֆերանսի պաշտոնական բացումը, ոչ-պաշտոնական հանդիպումների արդյունքում Թուրքական պատվիրակությանը հաջողվեց լուծել իր համար առանձնակի կարևորություն

[1] Նույն տեղում, էջ 186-187:
[2] „Геноцид армян...", стр. 394.
[3] Նույն տեղում, էջ 397:

ունեցող հարցը: Հայ-Թուրքական հարաբերությունների վերանայման խնդիրը հանվեց կոնֆերանսի օրակարգից: Այդ է իրականությունը: Մինչդեռ մեր պատմագիտական գրականության մեջ (այդ թվում՝ հետխորհրդային) դեռևս հանդիպում ենք կարծիքների, որոնք շատ հեռու են իրականությունից: Առանձնապես տարօրինակ ու անհասկանալի է Կարսի խնդրում Գ. Գալոյանի հայտնած կարծիքը: Խոսելով այն մասին, որ Կարսը Բաթումի բանալին է և Չիչերինը կարևորում էր Կարսը Հայաստանին թողնելը, նա գրում է. «Այժմ, երբ Հայաստանում իշխանությունը կրկին իրենց ձեռքն էին վերցրել դաշնակցականները և Թուրքերին առաջարկել էին հայ-թուրքական հարաբերությունների հիմքում դնել Ալեքսանդրապոլի 1920թ. դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, Ռուսաստանը վարանում էր քննարկման դնել Կարսը Հայաստանին վերադարձնելու հարցը: Վախ կար, որ դրական լուծումը կարող էր ամրապնդել դաշնակցականների դիրքերը Հայաստանում: Մեր կարծիքով այդ էր պատճառը, որ Ռուսաստանը հրաժարվեց Կարսը Հայաստանին վերադարձնելու պահանջից»[1]:

Անհասկանալի է, թե ինչո՞ւ կոմունիստական Ռուսաստանի կողմից Կարսի վերադարձնելը կամրապնդեր ոչ թե հայ կոմունիստների, այլ դաշնակցականների դիրքերը: Եվ հետո, ինչո՞ւ է հեղինակը մոռացել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը հայ-թուրքական հարաբերությունների հիմքում դնելու մասին Անկարա ուղարկած Վրացյանի հեռագիրը տրվել է մարտի 18-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Մոսկվայում հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը վաղուց արդեն լուծվել էր և հենց մարտի 18-ին էլ Մոսկվայի կոնֆերանսը ավարտել էր աշխատանքները: Նախակոնֆերանսյան հանդիպումների ընթացքում քննարկվել էին նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի 5-րդ կետի (Թուրքերը փորձում էին համոզել, որ այն ուղղված է ոչ թե Ռուսաստանի, այլ Արևմուտքի դեմ), կնքվելիք պայմանագրի բնույթի և այլ հարցեր:

Իսկ ի՞նչ էր անում Բեկզադյանի պատվիրակությունը, որն, ի դեպ, շատ ավելի շուտ էր հասել Մոսկվա, քան Թուրքական և ադրբեջանական պատվիրակությունները: Նախ ասենք, որ հավաստի փաստեր չեն պահպանվել, ուստի և չենք կարող ասել, թե նրանք տեղեկություններ ունեին ծավալված հակահայկական արշավի մասին: Բայց անգամ եթե տեղյակ լինեին, միևնույն է, հակազդել չէին կարող, քանի որ, ինչպես տեսանք, Թուրք-ադրբեջանական բլոկի շահերն էին պաշտպանում

[1] **Գ. Գալոյան,** նշվ. աշխ., էջ 443-444:

նաև Ստալինը, Օրջոնիկիձեն և մի շարք այլ ազդեցիկ բոլշևիկներ: Բայց դա նաև չի նշանակում, թե պետք է ձեռքերը ծալած նստեին ու սպասեին: Մենք վերը տեսանք, թե քանի՜-քանի անգամ են Նարիմանովը, Շահթախթինսկին նամակներով դիմել Լենինին, Օրջոնիկիձեին, Ռկ(բ)կ Կենտկոմ, ծանոթացանք այդ նամակների հակահայկական բովանդակությանը: Մնում է զարմանալ, թե ինչո՞ւ Ադրբեջանի հեղկոմի նախագահը կարող էր իրեն նման շռայլություն թույլ տալ, իսկ Հայաստանի հեղկոմի նախագահը՝ ոչ: Մինչդեռ արխիվներում չենք հանդիպում Հայաստանի ղեկավարների՝ Լենինին հասցեագրած մի նամակի, որում բարձրացված լինեն հայ ժողովրդի շահերը շոշափող հարցեր: Կարծես թե այդ ամենը նրանց քիչ է հետաքրքրել, կարծես թե նրանց ցավ չէր պատճառել Հայաստանի անդամահատման կատարված փաստը: Ասել թե Հայհեղկոմի ղեկավարությունը մտահոգված չէր դրանով, մեղադրել նրանց հայրենասիրության և համարձակության պակասի մեջ, մանավանդ Մռավյանին և Կասյանին, որոնք իրենց կյանքով ու գործունեությամբ հակառակն են ապացուցել, ճիշտ չի լինի: Պարզապես պետք է ընդունենք, որ ոչ թե նրանց մեղքը, այլ դժբախտությունն էր, որ հարկադրված եղան գործել տնտեսական ու քաղաքական անասելիորեն ծանր պայմաններում և, ի լրումն այդ ամենի, Մոսկվայի կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման օրերին կորցրել էին իշխանությունը ու խրվել եղբայրասպան քաղաքացիական պատերազմի մեջ: Այնուամենայնիվ որոշ քայլեր կատարվել են, որոնք և ներկայացնում ենք ընթերցողի դատին:

Հայաստանի ազգային արխիվում պահվող մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Հայհեղկոմը նույնիսկ փորձել է Թուրքահայերից կազմված մի պատվիրակություն ուղարկել Մոսկվա՝ Հայկական հարցում կոնֆերանսի ընդունելիք որոշումների վրա ինչ-որ ձևով ազդելու նպատակով: Փետրվարի 13-ին Ա. Մռավյանը շտապ հեռագրում է Բաքու՝ ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ Մ. Աթաբեգյանին և խնդրում անհապաղ հեռագրել Մոսկվա՝ հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին ու հայտնել, որ **«մեզ համակրող և պաշտպանող Թուրքահայերի շրջանում լրջորեն քննարկվում է Թուրք-հայկական հարցի բարձրացումը Մոսկվայի կոնֆերանսում: Կարելի է կազմակերպել լուրջ ելույթներ և հատուկ պատվիրակություն դեպի Մոսկվա: Իմացեք ղեկավար կենտրոնների կարծիքը և հավանության դեպքում հեռագրեք»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 81, թ. 4:

Որ «ղեկավար կենտրոնները» հավանություն չէին տա, դա հասկանալի է: Բայց նաև հայտնի չէ, թե Բեկզադյանն այդ ուղղությամբ քայլ կատարե՞լ է, թե՞ ոչ: Հայտնի է միայն, որ փետրվարի 20-ին պատվիրակությունը հանդիպել է Զիչերինին և Կարախանին, խոսել կոնֆերանսից հայ ժողովրդի սպասելիքների մասին, ներկայացրել փաստաթղթեր օկուպացված շրջաններում Թուրք զինվորականության իրականացրած մասսայական ջարդերի ու հակախորհրդային գործունեության վերաբերյալ և այլն, սակայն Մռավյանի առաջարկության մասին նա հայտնել չէր կարող այն պարզ պատճառով, որ այդ նույն Թուրքահայերը փետրվարի 18-ին գրավել էին Երևանը և տապալել խորհրդային իշխանությունը: Ուշագրավ է, որ այդ լուրը Զիչերինը ստացել էր հայ պատվիրակների հետ հանդիպման ժամանակ[1]: Այդ օրը՝ փետրվարի 20-ին, հանդիպման մասնակիցները դեռևս չգիտեին Թուրքական պատվիրակության դիրքորոշման մասին և կարծում էին թե կոնֆերանսը միացյալ է լինելու: Այդ հանդիպման մասին միակ աղբյուրը Բեկզադյանն է, որը կոնֆերանսի ավարտից հետո Կարախանին հասցեագրած նամակում պահանջում է հետ վերադարձնել այն փաստաթղթերը, որ փետրվարի 20-ի հանդիպման ժամանակ հանձնել է նրան և որոնք պետք է «Ներկայացվեին ռուս-Թուրք-հայ-ադրբեջանական կոնֆերանսին»[2]: Կարախանին էր տրվել 12 փաստաթուղթ, որոնց շարքում Նախիջևանում Թուրքերի և ադրբեջանցիների հակահայկական գործունեության մասին Վելիբեկովի զեկուցագիրը, վկայություններ Ալեքսանդրապոլում և Կարսում տիրող դրության մասին և այլն: Իսկ երբ միացյալ կոնֆերանսը ձախողվեց, հայ պատվիրակները, այնուամենայնիվ, ռազմական էքսպերտ Բոբրիշչևի միջոցով անհրաժեշտ նյութեր էին մատակարարում հայ-Թուրքական սահմանագծման վերաբերյալ: Այդ մասին վկայում է ինքը՝ Ալ. Բեկզադյանը Մ. Աթաբեկյանին ուղարկած փետրվարի 18-ի նամակում[3]: Պատվիրակությունը նաև մի ընդարձակ զեկուցագիր հասցեագրեց «Զիչերինին, Լենինին, Ստալինին, Կրեստինսկուն», որում վիճակագրական տվյալներ էին ներկայացվում բոլոր գավառների վերաբերյալ և չեշտվում էր

[1] Այդ մասին հետագայում վկայել է Ալ. Բեկզադյանը, բայց հավանաբար քարոզչական նկատառումներով խոսել է ոչ թե լուր ստանալու, այլ Վրացյանի հեռագրի մասին, ինչը չի համապատասխանում իրականությանը (Վրացյանի հեռագիրը տրվել է մարտի 12-ին):

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 8, թ. 8:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25:

Կարսի մարզը և Սուրմալուի գավառը անպայմանորեն Խորհրդային Հայաստանին վերադարձնելու անհրաժեշտությունը: «Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացումը և կուլտուրական առաջադիմությունը, – ասված է նրանում, – հնարավոր է անպայմանորեն Թուրքիայի և Վրաստանի հետ դաշնակցական կառավարության վերջին տարածքային համաձայնագրերը անհապաղ չեղյալ հայտարարելու, ինչպես Վրաստանի, այդպես էլ Թուրքիայի կողմից բոլոր չեզոք գոտիները վերացնելու և նրան մինչև վերջին պատերազմի սկիզբը գոյություն ունեցող իրական սահմանների շրջանակներում լրիվ վերականգնելու դեպքում միայն»[1]: Զեկուցագրում նաև ցույց էր տրվում, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանները Հայաստանը դարձրել են անպաշտպան, նրա գլխավոր կենտրոնները՝ Երևանը և Ալեքսանդրապոլը վեր են ածվել սահմանային քաղաքների և դարձել անպաշտպան, քանի որ Արաքս և Արփաչայ գետերը լուրջ պաշտպանական դեր խաղալ չեն կարող:

Հայ պատվիրակները չէին կարող մոռացության տալ նաև Նախիջևանի հիմնախնդիրը, բայց չգիտես ինչու երկրամասը Հայաստանի կազմում թողնելու բացահայտ պահանջ չի դրվում: Ճիշտ է, երկրամասը Հայաստանի անբաժան մաս հայտարարելու մասին Ադրհեղկոմի հռչակագիրը համարում են «անօրինակ ակտ», հիշատակում Նախիջևանի մասին Հայհեղկոմի դեկլարացիան և հետևություն անում, թե Ադրբեջանի հետ վիճելի գոտիներում սահմանը **«երկու հանրապետություններում խորհրդային սոցիալիստական կարգերի հաստատումով պետք է կորցնի քաղաքական նշանակությունը և այսուհետ ծառայեն որպես սովորական վարչական սահման: Ի դեպ. վերջինը կանցկացվի համաձայն ինքնորոշվող ժողովուրդների ազատ կամաարտահայտության»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Հնարավոր չէ անտարբեր անցնել բոլշևիկյան հայ ղեկավար գործիչների մոտ ծայրահեղության հասած և համոզմունք դարձած «ինտերնացիոնալիստական» հայացքների կողքով: Ո՛չ վրաց, ո՛չ ադրբեջանցի կոմունիստների մոտ նման բան չեք գտնի: Ամեն մի թիզ հողի համար նրանք կռիվ էին տալիս, իսկ մերոնք խոսում «սահմանների քաղաքական նշանակության» կորստի մասին: Ո՛չ վրացիները, ո՛չ ադրբեջանցիները Ջավախքի և Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցը լուծելիս խոսք անգամ չասեցին այդ մարզերի ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի և կամաարտահայտության մասին: Բայց նման պահանջ չառաջադրեցին նաև Հայաստանի կոմունիստ ղեկավարները: Հենց այդ միակողմանի ինտերնացիոնալիզմը չէ՞ր այն պատճառներից մեկը (մի շարք այլ պատճառների շարքում), որ մեր ադրբեջանցի ու վրացի «եղբայրներին» հնարավորություն տվեց նորանոր կտորներ պոկել արդեն անդամահատված ու բզկտված Հայաստանի արյունածոր մարմնից: Իսկ եթե փորձենք հասկանալ, թե ինչն էր պատճառը, ինչու Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարության մոտ վերը նշված մտածելակերպը ավելի արտահայտված ու գերակայող էր, ապա նախ և առաջ պետք է հիշենք, որ նրանց մեծագույն մասը հայաստանցի չէր և կուսակցական-քաղաքական գործունեության մեջ էր ներքաշվել կա՛մ Ռուսաստանում, կա՛մ Բաքվում ու Թիֆլիսում:

* * *

Կոնֆերանսի պաշտոնական բացումը տեղի ունեցավ փետրվարի 26-ին[1]: Ողջունելով Թուրք պատվիրակներին՝ Չիչերինը հույս հայտնեց, որ բոլոր թյուրիմացությունները կհարթվեն և կստորագրվի պայմանագիր ռուս և թուրք ժողովուրդների բարեկամության և եղբայրության մասին: Նա հատկապես ընդգծեց, որ «եթե վերջին վեց ամսում Տաճկաստանի դրությունը հիմնավորապես փոփոխվեց, ապա... դրանում զգալի ծառայություն է արել Ռուսաստանի և Տաճկաստանի միջև եղած բարեկամական հարաբերությունը, որը ամրացրել է վերջինիս դրությունը: Այդ բարեկամական կապերը պետք է վավերացնել ձևական դաշնագրով»[2]:

Պատասխանելով Չիչերինին՝ Յուսուֆ Քեմալը ձգտում էր համոզել, որ դաշինքի մեջ մտնելով Ռուսաստանի հետ, իրենք այլ նպատակներ չեն հետապնդում, բացի Անտանտի դեմ պայքարից: Նա «թուրքի անկեղծությամբ» կոչ արեց «հավատալ թուրք ժողովրդին»: **«Այն ձեռքը, որը մեկնում է Թուրքիայի աշխատավորությունը Ռուսաստանի աշխատավորությանն, անկեղծ բարեկամության ձեռք է»**, – շարունակել է Յուսուֆ Քեմալը և անդրադառնալով պայմանագրի կնքման

[1] Նույն տեղում, թ. 11:

[2] Նույն տեղում, թ. 1:

[1] Այդ օրը պատվիրակներին ընդունել էր Լենինը և հավաստիացրել էր, որ անպայմանորեն պայմանագիրը կստորագրվի:

[2] «Ռուս-տաճկական կոնֆերենցիան», «Կոմունիստ» օրաթերթ, 9 ապրիլի 1921թ.:

անհրաժեշտությանը, ավելացրել. «Ռուսաստանի հետ գոյություն ունեցող բնական համաձայնությունը պետք է մանրամասն մշակել և հայտարարել ամբողջ աշխարհին: ...Այդ միությունը կլինի մի ուժ, որը կերաշխավորի ժողովուրդների ազատությունը: **Նրանք, որոնք այստեղ են գտնվում, չար ձգտումներ չունեն այս կամ այն տերիտորիայի նկատմամբ:** Նրանք ձգտում են ապահովել ժողովուրդների ազատությունը: Երկու ժողովուրդները կռվում են միևնույն իդեալի համար և եթե նրանց միջև հաշտություն կնքված չլիներ, այն ժամանակ մեղքը ընկնելու էր այն մարդկանց վրա, որոնց վրա էր ծանրացած հաշտություն կնքելու խնդիրը: Թուրքական դելեգացիան գիտակցում է այդ պատասխանատվությունը և ցանկանում է, որքան հնարավոր է, շուտ կատարել այդ խնդիրը»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Հավատացե՞լ է Զիչերինը Յուսուֆ Քեմալի խոսքերին, թե ուղղակի փորձել է օգտվել այդ հայտարարությունից՝ կրկին առաջ քաշելով Հայաստանի սահմանների վերականգնման հարցը: Ահա թե ինչ է գրում այս մասին Թուրք պատվիրակը Կարաբեքիր փաշային ուղարկած նամակում. «Նույնիսկ այն բանից հետո, երբ մենք համաձայնության եկանք Ստալինի հետ, Զիչերինը առաջին իսկ նիստում՝ մեր բանակցությունների ընթացքում, բարձրացրեց Հայաստանի հետ սահմանների հարցը և առաջարկեց վերականգնել 1914թ. սահմանները: Այդ նիստին Կարախանի փոխարեն մասնակցում էր Ջելալ Կորխմազովը: Նա Հայաստանում մեր ներկայացուցչին մեղադրեց իմպերիալիզմի մեջ և... **պնդեց, թե Կարսը և Արդահանը ոչ թե Թուրքական, այլ Թաթարական քաղաքներ են եղել»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ահա թե ինչի հանգեցրեց Կարախանին Կորխմազովով փոխարինելը: Կարսը հռչակվեց Թաթարական քաղաք, և դրանով իսկ ջուր լցվեց Թուրքերի ջրաղացին, որոնք վաղուց պնդում էին, թե Կարսը հայկական չէ, հետևապես հայերը նրա վրա որևէ իրավունք չունեն: Մնում է զարմանալ, թե ինչո՞ւ Թուրք պատվիրակը չնորհակալական խոսք չի ասում Կորխմազովի հասցեին:

Կոնֆերանսի առաջին նիստում կողմերը համաձայնվեցին, որ բանակցությունների հիմքում պետք է դրվի ռուս-թուրքական առաջին կոնֆերանսի ժամանակ (1920թ. հուլիս-օգոստոս) մշակված պայմանագրի նախագիծը, որը կարող է փոփոխության ենթարկվել ու լրացվել: Դրա համար էլ ստեղծվեցին համապատասխան հանձնաժողովներ՝ քաղաքական, իրավաբանական և խմբագրական: Կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց մինչև մարտի 18-ը, երբ վերջապես կողմերը ստորագրեցին Ռուսաստանի և Թուրքիայի միջև «բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը, որը սակայն թվագրեցին մարտի 16-ով[1], որպեսզի խաբեն Անգլիային, տպավորություն ստեղծեն, թե պայմանագրի ստորագրման ժամանակ Մոսկվայում իբրև չգիտեին, որ այդ օրը՝ մարտի 16-ին, Լոնդոնում ստորագրվել է առևտրական համաձայնագիր Անգլիայի և ՌԽՖՍՀ-ի միջև, որում տեղ էին գտել նաև քաղաքական պարտավորություններ (օրինակ, Արևելքի երկրներում հակաբրիտանական քարոզչություն չծավալել և այլն[2]):

Կոնֆերանսում քաղաքական հարցերից զատ քննարկվել են նաև տնտեսական, ֆինանսական, ռազմական և այլ հարցեր, որոնց մենք, հասկանալի պատճառով, չենք անդրադառնա: Այլ կփորձենք չշեղվել տարածքային խնդիրներից և հատկապես Նախիջևանյան հիմնահարցի շուրջ ծավալված պայքարից ու նրա լուծման գործընթացից: Դրա հետ մեկտեղ չենք կարող չշեշտել, որ տարածքային սահմանագծման հարցում Թուրք պատվիրակները ցուցաբերեցին աներևակայելի մեծ ախորժակ ու համառություն: Եվ դա անում էին այնքան անպատկառ պահվածքով, որ կոնֆերանսի պաշտոնական բացումից 2-3 օր հետո խորհրդային ղեկավար շրջաններում արդեն խոսվում էր կոնֆերանսի աշխատանքների խզման հնարավորության մասին: Մարտի 1-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Կրեստինսկուն հասցեագրած նամակում Զիչերինը գրում է. «**Ներկա պահին Թուրքիայի հետ հարաբերությունները հասել են լուրջ ճգնաժամի: Թուրքական պատվիրակությունը հայտարարել է, որ Ազգային ուխտը, ըստ որի Բաթումը, Արդահանը և Կարսը հայտարարվում են Թուրքական և այնտեղ թույլատրվում է միայն մի անգամ էլ հանրաքվե կատարել, և Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը Թուրքիային է հանձնում Հայաստանի զգալի մասը, իսկ նրա մնացած մասերը փաստորեն վերածում Թուրքիայի վասալ պրովինցիաների, պետք է անձեռնմխելի համարվեն»**[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

---

[1] Նույն տեղում:

[2] ,,Геноцид армян...", стр. 393.

[1] Տե՛ս **Рем Казанджян**, К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921г., Вестник общественных наук, Ер. ,1999, N 1, стр. 176-177.

[2] Արտգործմինիստր լորդ Քերզոնը որպես համաձայնագրի ստորագրման պայման առաջարկել էր պահանջել Ռուսաստանից՝ փոխելու քաղաքականությունը Հայաստանի հանդեպ: Սակայն այդ պահանջը տեղ չի գտել համաձայնագրում:

[3] ,,Геноцид армян...", стр. 406-407.

Ինչպես տեսնում ենք, ռուսական կողմը նախնական բանակցությունների արդյունքում ճանաչելով հանդերձ Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանները, այնուամենայնիվ չէր ճանաչում այդ պայմանագրի օրինականությունը: Ինչպես նաև չէր ուզում ճանաչել Թուրքական Ազգային ուխտի Բաթումին վերաբերող մասը: Նամակից նաև պարզ է դառնում, որ Չիչերինը այդ հարցերում զիջման գնալ չէր ուզում, թեկուզև դա հանգեցներ բանակցությունների խզմանը: Նա ելք էր փնտրում ու գտնում, որ բանակցությունների խզմանը որպես այլընտրանք կարող է լինել Անկարայում դեսպանի պաշտոնում մի երևելի դեմքի, մի խոշոր դիվանագետի նշանակումը: Դժգոհ Ուպմալից (ներկայացուցչության քարտուղար) և Մդիվանուց, որը շատ արագ ընկել էր Թուրքերի ազդեցության տակ, Չիչերինը առաջ է քաշում Լիտվինովի թեկնածությունը: «Քանի որ ռուս-թուրքական կոնֆերանսի խզման և Թուրքերի անհապաղ մեկնման հնարավորությունը չի վերացել, անհրաժեշտ է շտապել ընկ. Լիտվինովի նշանակման հարցում, – գրում է Չիչերինը, – քանի որ այդպիսի խոշոր դեմքի նշանակումը Անգորա, խաղաղության մեր ցանկության փայլուն ապացույցը կլինի և, եթե Թուրքական պատվիրակությունը մեկնի Ազգային ուխտի և Ալեքսանդրապոլի պայմանագրի պատճառով, ապա ընկ. Լիտվինովի նշանակումը բոլորին ցույց կտա, որ մենք խաղաղություն և բարեկամություն ենք ցանկանում Թուրքիայի հետ: Դա մի որոշ չափով կվերացնի Թուրքական պատվիրակության այստեղից գնալու ծայրահեղ վտանգավոր հետևանքները: Դրա համար էլ անհրաժեշտ է անհապաղ դա անել, քանի որ Թուրք պատվիրակները պահանջել են հաջորդ նիստը նշանակել հինգշաբթի և վերջը կարող է շատ շուտ լինել»[1]:

Բանակցությունները չխզվեցին, Թուրքերը չհեռացան Մոսկվայից: Ո՛չ մեր ձեռքի տակ եղած արխիվային նյութերում և ո՛չ էլ հրապարակի վրա եղած արխիվային փաստաթղթերում, ոչինչ չկա վերը նշված հարցերի վերաբերյալ կողմերի միջև կայացած քննարկումների մասին, որոնք ամենայն հավանականությամբ պաշտոնական բնույթ չեն կրել, որի համար էլ չեն սղագրվել, պաշտոնական արձանագրություններ չեն կազմվել: Բայցևայնպես, եթե փորձենք խորամուխ լինել, թե ինչու բանակցությունները չխզվեցին, ինչպես կարծում էր Չիչերինը, ապա նախ պետք է հիշենք, որ Թուրք պատվիրակները բանակցությունները խզելու ցանկություն բոլորովին էլ չեն ունեցել: Իսկ ճգնաժամային պահեր

[1] Նույն տեղում, էջ 407:

դիտավորյալ էին ստեղծում՝ լավ իմանալով, որ այդ կերպ կարող են ազդել ռուսների վրա և հարկադրել նորանոր զիջումներ անելու: «Մենք ելնում էինք նրանից, – գրում է Ալի Ֆուադ փաշան, – որ Խորհրդային կառավարությունը լցված էր մեզ հետ համաձայնության գալու ցանկությամբ: Մենք հույս ունեինք, որ այն ճնշման տակ, որ գործադրում էր ընկ. Ստալինը, և նաև մենք, արտաքին գործերի կոմիսարիատը կնահանջի բանակցություններում բռնած դիրքից և կհամաձայնի մեր տեսակետի հետ: **Շնորհիվ որոշ ճգնաժամային պահերի, որ մեզ հաջողվեց ստեղծել և մեր ճնշման,** ինչպես նաև նրանց առաջարկություններին հակազդելուն որպես հետևանք, Արտաքին գործերի կոմիսարիատի ներկայացուցիչները բանակցություններում իրենց գիծը արդյունավետ անցկացնել չկարողացան»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Կարծում ենք, որ Թուրք պատվիրակները բանակցությունները չէին խզի նույնիսկ այն դեպքում, եթե ռուսական կողմը պնդեր իր պահանջների վրա, քանի որ մարտի սկզբին Անկարայի համար պարզ էր դարձել, որ Լոնդոնի կոնֆերանսից սպասելիքներ չեն կարող ունենալ: Մարտի 3-ին Չիչերինին ուղարկած նոտայում Ահմեդ Մուհթարը մի անգամ ևս հավաստելով ռուսական կառավարության հետ բարեկամական դաշինքի մեջ մտնելու Թուրքերի ձգտման մասին, միաժամանակ անդրադառնում է Լոնդոնի կոնֆերանսին և հայտնում. «Մեզ առաջարկվել էր միմիայն ձևականությունը պահպանելու համար ստորագրել Սևրի պայմանագիրը, համաձայնել նրան, որ մեր ժանդարմերիային ղեկավարեն օտարերկրյա սպաները, համաձայնել մեր արևելյան սահմանների հարցը հանձնելու կոնֆերանսի հայեցողությանը, ինչպես նաև այսպես կոչված Քուրդիստանի հարցը..., համաձայնել մեր երկրի վրա օտարերկրյա ֆինանսական վերահսկողությանը, համաձայնել հանրաքվեի Սմիրնայում (Իզմիր) և Թրակիայում... Մենք մեր պատվիրակներին առաջարկում ենք մերժել բոլոր այդ պահանջները և խստորեն կանգնել Ազգային ուխտի հիմքի վրա»[2]:

Թվում էր, թե ռուսական կառավարությունը կօգտվի Լոնդոնի կոնֆերանսի ձախողման մասին տեղեկատվությունից և կչարունակի պնդել իր դիրքորոշման վրա: Բայց ոչ, իրադարձությունների հետագա ընթացքից դժվար չէ հետևություն անել, որ կողմերի մոտեցումներում պարզապես որոշ մեղմացում կատարվեց, որոշ կոմպրոմիս՝ եթե կա-

[1] Նույն տեղում, էջ 393:
[2] „ДВП СССР", М. 1959, т. 3, стр. 514.

*ելի է այդպես անվանել. Թուրքերը համաձայնում են քննարկումներ սկսել Բաթումի հարցում, իսկ ռուսները չպնդել Ալեքսանդրապոլի պայմանագիրը պաշտոնապես չեղյալ հայտարարելու վրա: Ահա թե ինչ է ասված այդ օրերի մասին Անկարա՝ Մղիվանուն ուղարկած Զիչերինի մարտի 4-ի հեռագրում.**«Այժմ առևտուր է գնում: Մենք տալիս ենք Կարսը և Արդահանը, բայց ոչ մի դեպքում չենք կարող տալ Բաթումը և պահանջում ենք քսանվերստանոց շերտ Ալեքսանդրապոլի երկաթգծից արևմուտք և Արաքսից հարավ: Բաթումում կլինի Վրաստանը, Ալեքսանդրապոլում և Երևանում՝ Հայաստանը, իսկ Նախիջևանը անմիջականորեն կախված կլինի Ռուսաստանից: Այդպիսին են մեր հիմունքները»*[1]:*

Ինչպես տեսնում ենք, առևտուրը դարձյալ արդեն խիստ անդամահատված ու բզկտված Հայաստանի հաշվին է կատարվում: Ըստ որում, առևտրի օբյեկտ է դառնում նաև Նախիջևանը: Արդյո՞ք դա տեղի է ունեցել Ալեքսանդրապոլի պայմանագրի չուրջը ծավալված դիսկուսիայի ընթացքում, թե՞ պարզապես Թուրք պատվիրակները պահանջել են ճանաչել իրենց իրավունքը նաև Նախիջևանի վրա, դժվար է ասել: Փաստը մնում է փաստ. մարտի առաջին օրերին տարածքային խնդիրների շարքում բանակցությունների սեղանին էր դրվել նաև Նախիջևանի հարցը: Իհարկե, դա անսպասելի չէր: Անսպասելին ու տարօրինակն այն է, որ հաստատակամություն ցուցաբերելով Բաթումը Վրաստանին թողնելու խնդրում, ռուսական ղեկավարությունը այդ նույնը չի անում Նախիջևանը Հայաստանի մաս ճանաչելու հարցում: Եվ դա այն դեպքում, երբ տարածքային հարցերում Թուրքիային կատարած բոլոր զիջումները տեղի էին ունեցել բացառապես Հայաստանի հաշվին:

Եթե հիշենք, որ Նախիջևանը Հայաստանի կազմում չթողնելու նպատակով այդ երկրամասը Ռուսաստանի հովանու տակ դնելու գաղափարը դեռ մինչև կոնֆերանսը առաջ էր քաշել Շահթախթինսկին, ապա կարող ենք արձանագրել, որ մարտի այդ առաջին օրերին նրա ծրագրի առաջին մասը իրականացել էր. Հայաստանը դուրս էր մղվել Նախիջևանին հավակնող երկրների շարքից: Այժմ արդեն բանակցությունների սեղանին դրված էր այն հարցը, թե Նախիջևանը Ռուսաստանի՞, թե՞ Թուրքիայի հովանավորությանը պետք է հանձնել: Ինչպես դա տեղի ունեցավ, ո՞վ է դրանում մեղավոր:

[1] *„Геноцид армян...", стр. 411.*

Նախ ասենք, որ ի տարբերություն ռուս-թուրքական առաջին կոնֆերանսի (1920թ. հուլիս-օգոստոս), որտեղ թե՛ պաշտոնական և թե՛ անդրկուլիսյան բանակցությունները վարում էին նույն մարդիկ (Զիչերին, Կարախան), այստեղ՝ ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում, գլխավոր հարցերը լուծվում էին ոչ թե պաշտոնական նիստերում, այլ անդրկուլիսյան բանակցություններում, որ վարում էին ոչ թե պատվիրակության անդամները՝ Զիչերինը կամ Կորխմազովը, այլ հիմնականում Ստալինը և մասամբ Շահթախթինսկին (հատկապես Բաթումի և Նախիջևանի խնդրում): Իսկ պաշտոնական նիստերում ուղղակի ամրագրում էին անդրկուլիսյան բանակցություններում ձեռք բերված համաձայնությունները: Այդ է պատճառը, որ մինչև մարտի 10-ը քաղաքական հանձնաժողովի նիստ չէր կայացվել: Այդ մասին ուշագրավ տեղեկություն կա 1921թ. ապրիլի 21-ին Ս. Տեր-Գաբրիելյանին գրած Զիչերինի մի նամակում. «Քաղաքական հանձնաժողովի նիստերը սկսվել են մեր և Թուրքերի միջև իրական բանակցությունների սկսվելուց համարյա երկու շաբաթ անց, - գրում է Զիչերինը: - Բանակցությունների հենց ամենաինտենսիվ շրջանը տեղի ունեցավ ոչ թե հանձնաժողովի նիստում, այլ մասամբ անդրկուլիսյան բանակցությունների միջոցով՝ ազդեցիկ ընկերների աջակցությամբ: Քաղաքական հանձնաժողովը բացվեց միայն այն ժամանակ, երբ հիմնական հարցերը վերջնականապես լուծված էին»[1]*: Նույն միտքը՝ այն է, գլխավոր հարցերը (հատկապես տարածքային) ոչ պաշտոնական բանակցություններում լուծելու և նոր պաշտոնական նիստերին ներկայացնելու մասին Զիչերինը ասել է նաև հաջորդ օրը՝ ապրիլի 22-ին Լեգրանին հղած հեռագրում: Բայց ո՛չ նամակում և ո՛չ էլ հեռագրում նա անուններ չի տալիս: Իսկ որ դա Ստալինն էր և մասամբ Շահթախթինսկին, այդ մասին տեղեկություններ կան Թուրք գործիչների մոտ և արխիվային որոշ փաստաթղթերում: Այդպիսի մի տիպիկ փաստաթուղթ է Ստալինի մարտի 6-ի նամակը Զիչերինին (նկատի առնելով փաստաթղթի կարևորությունը, այն մեջբերում ենք ամբողջությամբ).*

«Ընկ. Զիչերին,

Ձեր խղրանքի համաձայն հայտնում եմ Ձեզ Թուրքական պատվիրակներին արած իմ հայտարարությունների ճիշտ բովանդակությունը ՌԽՖՍՀ կողմից, իմ կարծիքով, հնարավոր զիջումների մասին.

Բաթումի օկրուգի մեծ մասը մնում է ՌԽՖՍՀ-ին, Արդվինը և

[1] *Նույն տեղում, էջ 498-499:*

Արդանուշը անցնում են Թուրքիային, ՌԽՖՍՀ և Թուրքիայի միջև նոր սահմանը անցնում է **մոտավորապես**[1] Լիման – Բորչխա – Ճորոխ գետ – Իմերխևի գետ գծով և այնուհետև դեպի արևելք մինչև Կարսի մարզի սահմանը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ ես խոսել եմ մոտավոր գծի մասին, քանի որ այդ մոտավոր գծի հիման վրա ճիշտ սահմանը պետք է որոշվի համապատասխան հանձնաժողովի կողմից:

Զինվորականները համաձայն չեն **Արդահանը** զիջելու Թուրքիային՝ համարելով այն Թիֆլիսի բանալին, այնուամենայնիվ ես (Ստալինը) հույս ունեմ կոտրել զինվորականներին և հասնել զիջումների այնպես, որ ՌԽՖՍՀ և Թուրքիայի միջև սահմանն անցնի **մոտավորապես** Կարսի մարզի և Թիֆլիսի նահանգի միջև հին սահմանի գծով, ըստ որում այստեղ ես նույն վերապահությունն եմ անում մոտավոր գծի հիման վրա ճիշտ սահմանի մասին, ինչպիսին արել եմ վերը՝ առաջին կետում:

Թուրքիան մաքրում է Ալեքսանդրապոլը, ըստ որում Ալեքսանդրապոլ – Ղամարլու երկաթգծի ամբողջ երկարությամբ (այդ գծից արևմուտք) ՌԽՖՍՀ օգտին ապահովվում է **մոտավորապես** 20 վերստ խորությամբ շերտ:

Նախիջևանի հարցում վերջին խոսքը տրվում է Ադրբեջանի ներկայացուցչին:

Ի. Ստալին»[2]:

Այսպիսին են այն սահմանները, որ առաջարկել էր Ստալինը Թուրքերին: Ուշագրավ է, որ Ստալինը խոսում է ոչ թե մի կողմից Թուրքիայի և մյուս կողմից Հայաստանի ու Վրաստանի միջև սահմանների մասին, այլ Ռուսաստանի և Թուրքիայի: Սահմանագծի նկարագրությունից դժվար չէ նկատել, որ Վրաստանը փաստորեն ոչինչ չի կորցնում (Արդվինը և Արդանուշը հազիվ թե կարելի է վրացական համարել), կորցնողը Հայաստանն է: Ու այդպես էլ պետք է լիներ, եթե հարցը լուծողները հակահայկական տրամադրություններով վաղուց աչքի ընկած Ստալինը և Շահթախթինսկին էին:

Ստալինի նամակում նշված 4 կետերից Հայաստանի շահերը շոշափում էին հատկապես 3-րդը և 4-րդը: Երրորդից պարզ է դառնում, որ Ստալինը ոչ Արևմտյան Հայաստանի հարց է դրել, ոչ նույնիսկ Կարսի: Բայց պահանջել է ՌԽՍՖՀ-ին (նույնն է թե Հայաստանին) վերադարձնել Ալեքսանդրապոլ – Ղամարլու երկաթգծից արևմուտք 20 վերստ խորությամբ մի շերտ: Դա, իհարկե, չէր կարող մեղմել Խորհրդային Հայաստանի ծանր դրությունը, բայց եթե այդ պահանջը կատարվեր, ապա գոնե Արփաչայը և Արաքսը սահմանային գետեր չէին լինի և նրանց ջրերը ազատորեն օգտագործելու հնարավորություն կառաջանար, ինչպես նաև Երևանը և Ալեքսանդրապոլը սահմանային քաղաքներ չէին դառնա, հետևապես ավելի ապահովված կլինեին արտաքին վտանգից և այլն: Դժբախտաբար այդ պահանջը ևս չիրականացավ, Թուրքերը մեծ վտանգ տեսան այդ պահանջի մեջ, համառորեն պնդեցին և հասան նրան, որ մարտի 9-ի հանդիպման ժամանակ այդ պահանջը հանվեց: Նրանք համաձայնեցին միայն զորք չպահել և ամրություններ չկառուցել Արփաչայից արևմուտք մինչև 8 և Արաքսից հարավ՝ 4 վերստ տարածության վրա[1]:

Նախիջևանի հիմնախնդրի լուսաբանության տեսակետից առավել ուշագրավ է Ստալինի նամակի 4-րդ կետը: Այն միանգամից լույս է սփռում այն հարցի վրա, թե ինչո՞ւ և ո՞ւմ ջանքերով մարտի առաջին օրերին Հայաստանը դուրս մղվեց Նախիջևանի երկրամասի վրա հավակնող երկրների շարքից և առաջ քաշվեց Ռուսաստանի հովանավորությանը հանձնելու խնդիրը, և թե ինչու ի վերջո Նախիջևանը դրվեց ոչ թե Ռուսաստանի, այլ Ադրբեջանի հովանավորության տակ: Սակայն այստեղ մի առեղծված կա, որի լուծումը հեշտերից չէ: Ինչո՞ւ Ստալինն իր կարծիքը չի ասում Նախիջևանի մասին այնպես, ինչպես դա անում է Բաթումի և մյուս տարածքների մասին: Զէ՞ որ նա շուրջ մեկ ու կես ամիս առաջ Նախիջևանը հաստատապես Հայաստանի մաս էր համարում (Ս. Տեր-Գաբրիելյանի հետ 1921թ. հունվարի 15-ի զրույցում): Ի՞նչ էր փոխվել այդ ընթացքում, ինչո՞ւ էր Թուրքերի հետ բանակցություններում Նախիջևանի խնդրի լուծումը թողնում Ադրբեջանի ներկայացուցչին: Դա առավել քան տարօրինակ է, քանի որ Ադրբեջանը Նախիջևանի վրա հավակնողների շարքում չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ ի լուր աշխարհի հանդիսավոր դեկլարացիայով Նախիջևանը հռչակել էր Հայաստանի մաս: Թուրքիան ևս Նախիջևանի վրա հավակնելու իրական հիմքեր չուներ, քանի որ միակ փաստարկը Ալեքսանդրապոլի պայմանագիրն էր, որը ապօրինի էր և չէր ճանաչվում ոչ Խորհրդային Հայաստանի և ոչ էլ Ռուսաստանի կողմից: Միակ երկիրը, որ չէր կորցրել իրավունքը Նախիջևանի վրա, այլ պարզապես

[1] Այս փաստաթղթի առանձին բառերի (1-ին, 2-րդ, 3-րդ կետերում) ընդգծումները Ստալինի կողմից են արված, 4-րդ կետի ընդգծումը մերն է:

[2] „Геноцид армян...", стр. 419.

[1] „ДВП СССР", т. 3, М. 1959, стр. 604.

ազգաբնակչությանն ինքնորոշվելու իրավունք էր վերապահել, դա Խորհրդային Հայաստանն էր: Մինչդեռ այդ ամենը մոռացության տրվեց, և Նախիջևանի խնդրի լուծումը դրվեց Շահթախթինսկու վրա, որը կոնֆերանսի մասնակից չէր ճիշտ այնպես, ինչպես և Բեկզադյանը: Իր այդ քայլով Ստալինը կանաչ լույս բացեց Նախիջևանյան հիմնահարցի ադրբեջանանպաստ լուծման համար:

Շահթախթինսկին հիմար մարդ չէր: Նա արդեն մի քանի ամիս ուղիներ էր փնտրում և հասկացել էր, որ Նախիջևանի հարցին ցանկալի լուծում տալու համար նախ հարկավոր է հիմնավորապես այն դուրս բերել Հայաստանի ենթակայությունից: Նախորդ չարաղրանքում արդեն տեսանք, որ դրան էր միտված նրա հայադավ գործունեությունը թե՛ Ալեքսանդրապոլում և թե՛ Նախիջևանում: Սակայն կարճ ժամանակ անց Շահթախթինսկին համոզվել էր, որ Ռուսաստանը ոչ մի կերպ Նախիջևանը չի դիջի Թուրքիային: Ու քանի որ հայտնի դեկլարացիայի պատճառով Ադրբեջանի մասին դեռևս խոսք լինել չէր կարող, Շահթախթինսկին հրապարակ է հանում Նախիջևանի երկրամասը Ռուսաստանի հովանավորությանը հանձնելու տարբերակը՝ քաջ գիտակցելով, որ դրան էլ չի համաձայնի Թուրքիան (կվախենա, որ ապագայում Ռուսաստանն այն կվերադարձնի օրինական տիրոջը՝ Հայաստանին), հետևապես հարցի լուծման միակ հնարավոր միջոցը, որը կբավարարի և՛ Ռուսաստանին, և՛ Թուրքիային, Նախիջևանի երկրամասը Ադրբեջանին հանձնելը կլինի:

Այսպիսին էր այն սցենարը, որ կիրառվեց Մոսկվայի կոնֆերանսում Նախիջևանի խնդրի լուծման գործում: Պարզ, հասարակ, բայց նաև արդյունավետ: Որտե՞ղ է այն մշակվել, արդյո՞ք Բաքվում՝ թուրքական պատվիրակության հետ Ադրբեջանի ղեկավարության ունեցած հանդիպումներում, թե՞ ավելի ուշ՝ Մոսկվայում, Ստալինի հետ Շահթախթինսկու հանդիպումներում, վստահաբար ոչ ոք չի կարող ասել: Մի բան ակնհայտ է. դարձյալ գործ ունենք թուրք-ադրբեջանյան հակահայկական դավադրության փաստի հետ, որն իրականություն դարձավ Ստալինի գիտությամբ ու հովանավորությամբ: Թե ինչ ընթացք ստացավ Նախիջևանյան հիմնահարցի քննարկումը կոնֆերանսի քաղաքական հանձնաժողովում ու ինչպիսին էր Չիչերինի դիրքորոշումը, կտեսնենք քիչ հետո, իսկ մինչ այդ տեսնենք, թե մարտյան այդ նույն օրերին թուրք զինվորականությունն՝ ի դեմս Կարաբեքիր փաշայի, ամենայն հավանականությամբ իր կառավարության հանձնարարությամբ, ինչպես էր օժանդակում մոսկովյան իր պատվիրակությանը առաջադրված խնդիրների լուծման համար:

Արխիվային փաստաթղթերը ցույն են տալիս, որ մոսկովյան բանակցությունների օրերին Անկարայի կարավարող շրջանները դարձյալ ակտիվացրել էին հակահայկական քարոզչությունը, տեղի-անտեղի ռուսական կողմին հիշեցնում էին, որ իրենք են գրավել Շահթախթիի շրջանը, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Նախիջևանի նկատմամբ հովանավորության իրավունք են ստացել և այլն: Մարտի 5-ին Կարաբեքիր փաշան մի նամակ է ուղարկում 11-րդ Կարմիր բանակի հրամանատարին, որում խոսելով իրենց միջև հաստատված բարեկամական հարաբերությունների մասին, որին սակայն փորձում են խանգարել հայ դաշնակցականները Օրդուբադի և Բոյուք-Դևայի[1] շրջանում, խնդրում հրահանգ տալ Նախիջևանի ռուսական ջոկատներին անխախտ պահել իրենց բարեկամությունը և ավելացնում, թե **«վերջին ժամանակներս մշտական բարեկամությունը Նախիջևանում և Շարուրում ոչ ամբողջովին է պահպանվել հայերի հետ (կնքած) մեր Ալեքսանդրապոլի պայմանագրի հիմքի վրա, պատճառը Շարուրի և Նախիջևանի կառավարման գործերում որոշ թյուրիմացությունն էր...»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ի՞նչ թյուրիմացության մասին է խոսքը, Կարաբեքիրը չի ասում, այլ մատնացույց է անում Ալեքսանդրապոլի պայմանագիրը, այսինքն՝ Նախիջևանի երկրամասի հովանավորությունը Թուրքիային անցնելը: Բայց դրա հետ մեկտեղ հայտարարում է, թե «այսուհետ Շահթախթիի թուրքական իշխանությունները պետք է լինեն կարմիր ուժերի իշխանության տակ» ու խնդրում այդ մասին համապատասխան հրաման արձակել:

Կարծում ենք նման առաջարկ անելով Կարաբեքիրը հետապնդում էր լոկ մեկ նպատակ. համոզել խորհրդային ղեկավարությանը, որ թուրքերը պատրաստ են միավորել իրենց ուժերը Կարմիր բանակի հետ, եթե Մոսկվան համաձայնի ռազմաքաղաքական դաշինք կնքել, ինչը խիստ ձեռնտու էր Անկարային, բայց ոչ Ռուսաստանին: Իսկ մեկ օր հետո՝ մարտի 6-ին Կարաբեքիրը հեռագիր է հղում 11-րդ բանակի հրամանատարին և ավելի հավակնոտ հայտարարություն անում. «Ես հենց նոր ծանուցում ստացա, որ Թուրքիայի կառավարության անունից Քյազիմ-բեյը ժամանել է Թավրիզ: **Նա կլինի նաև Նախիջևանում, որպեսզի այնտեղ կարգ ու կանոն հաստատի,** իսկ քանի որ Նախի-

[1] Հավանաբար վրիպակ է, պետք է լինի Բոյուք-Վեդի:
[2] „Геноцид армян...", стр. 417.

ջևանում մեր կողմնակիցները շատ մեծաթիվ են, ապա ես հուսով եմ, որ այդ վայրերի նկատմամբ **մեր բոլոր ցանկությունները կիրագործվեն և մեր բոլոր ընդհանուր թշնամիները կհայտնվեն ծուղակում,** քանի որ նրանց ջանադրաբար հետևում են ու որսում»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ի՞նչ է պատասխանել 11-րդ բանակի հրամանատարությունը, համաձայնե՞լ, թե՞ հերքել է «ընդհանուր թշնամիների»՝ հայերի չար դիտավորությունների մասին Կարաբեքիրի հեքիաթները, հայտնի չէ: Հայտնի է միայն, որ հաջորդ օրը Կարաբեքիրը մի նոր հեռագիր է ուղարկում 11-րդ Կարմիր բանակի հրամանատարին, որտեղ դարձյալ խոսում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաստատված «բարեկամական հարաբերությունների» մասին և անմիջապես ավելացնում. «...Դրա հետ մեկտեղ ափսոսում եմ, որ **դաշնակները Նախիջևանում խախտում են այդ երկու բարեկամների (միջև) հաստատված լավ հարաբերությունները**: Բարի եղեք Նախիջևանի կարմիր հրամանատարությանը տալ թուրքերի հետ միշտ լավ հարաբերություններ պահպանելու Ձեր հրահանգները և այն ժամանակ ամեն ինչ Շահթախթիում բարեհաջող կարելի է համարել: ...Համարձակվում եմ Ձեզ հավատացնել, որ Շահթախթիի և Նախիջևանի միջև (ընկած) տարածքում, մենք երկիրը օրինակելի կերպով ենք պահում»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ասում են, որ եթե սուտը համառորեն կրկնես, ապա չուտով ինքդ էլ կսկսես դրան հավատալ: Նախորդ շարադրանքում տեսանք, թե ինչպես փետրվարյան իր նամակներում Կարաբեքիրն աշխատում էր 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը համոզել, որ բոլոր հայերը դաշնակ են ու թշնամի: Հաջողվե՞ց դա նրան, թե՞ ոչ, հաստատապես ոչ ոք ասել չի կարող: Բայց որ ամենուրեք նրա աչքին դաշնակ էր երևում, դա հաստատ է և դրա ապացույցը այս հեռագրի ընդգծված տողերն են: Իսկ գուցե Կարաբեքիրը կարծում էր, թե Կարմիր բանակի հրամանատարությանը հայտնի չէ, որ 1918-1919 թվականների ջարդերից ու բռնագաղթից հետո Շարուր-Նախիջևանում հայեր չէին մնացել, բացի Աստապատում և մեկ-երկու այլ գյուղերում իրենց կիսաքաղց գոյությունը քարշ տվող մի քանի հարյուր հայերի՝ հիմնականում կանայք ու ծերունիներ: Ուրեմն որտեղի՞ց հայտնվեցին դաշնակները Նախիջևանում ու խախտեցին ռուս-թուրքական բարեկամությունը:

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 423:

Վերջապես, եթե ճիշտ է Կարաբեքիրը, ապա ինչո՞ւ Վելիբեկովի բազմաթիվ զեկուցագրերից և ոչ մեկում խոսք չկա Նախիջևանի տարածքում դաշնակների գործունեության մասին:

Ինչևէ, թե ինչպես արձագանքեցին խորհրդային ղեկավարները Կարաբեքիրի մարտի 7-ի հեռագրին, նմանապես հայտնի չէ: Միայն գիտենք, որ Օրջոնիկիձեն և Հեկկերը մարտի կեսերին Վելիբեկովին ուղարկած իրենց հեռախոսագրերում նրանից պահանջել են հարթել հարաբերությունները թուրքերի հետ[1]: Վելիբեկովին ռադիոգիր էր ուղարկել նաև Վեյսալ-բեյը, արտահայտել թուրքերի ջերմ վերաբերմունքը բոլշևիկների նկատմամբ, հույս հայտնել, որ հաստատված բարեկամությունը «կվերածվի սերտ միության և խնդրել էր ներել իրենց նախկին մեղքերը»[2]: Բայց հենց այդ նույն օրը Թիրքեչ գյուղում հավաքված խռովարարների խնդրանքով 20 ասկյարներից կազմված մի խումբ էր ուղարկել օգնության: Իսկ այդ խմբին հետ կանչելու Վելիբեկովի պահանջին էլ պատասխանել էր, թե այդ ասկյարների մասին ինքը ոչինչ չգիտի և, եթե այդ շրջանում այդպիսիք կան, ուրեմն դրանք դասալիքներ են:

Թիրքեչի խռովության մասին պատմվում է Վելիբեկովի 1921թ. մարտի 19-ի զեկուցագրում: Պարզվում է, որ դասալիք հռչակված ասկյարները Թիրքեչում և նրա շրջակա գյուղերում Վեյսալ-բեյի անունից զորահավաքի կոչ են արել և զավթել իշխանությունն այդ գյուղերում: Իսկ երբ զինկոմ Սոկոլովսկին ժամանել է կարմիրբանակայինների մի ջոկատով, ապա կրակել են նրանց վրա, սպանել զինկոմին և մի քանի զինվորների: Այնպես որ, Վելիբեկովը հարկադրված է եղել ավելի մեծաթիվ ուժեր ուղարկել խռովարարների դեմ: Զեկուցագրում նաև ասված է, որ մարտի 18-ին խռովությունն արդեն ճնշված էր և որ փախչելով Թիրքեչից, խռովարարներն ապաստան են գտել Շահթախթիում՝ Վեյսալ-բեյի ճամբարում: Իսկ գյուղացիների մեջ կատարված հարցումներն ու հետաքննությունները անառարկելիորեն հաստատել են, որ նրանք թուրքական կանոնավոր բանակի զինվորներ էին[3]:

Ինչպես տեսնում ենք, թուրք զինվորականությունը նույնիսկ Մոսկվայի կոնֆերանսի օրերին չէր դադարեցրել հակախորհրդային գործունեությունը, չէր հրաժարվել խռովության միջոցով երկրամասում իշխանությունը զավթելու նախկինում բազմիցս փորձած, բայց

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 87, թ. 24:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

անհաջողությամբ ավարտված փորձերը: Մնում է ավելացնել, որ Թիրքեչի խոովությունն այդ շարքի վերջին իրադարձությունն էր: Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո Նախիջևանի երկրամասում նման իրադարձություններ այլևս տեղի չունեցան: Թուրք-ադրբեջանական համագործակցությունն արդեն տվել էր իր պտուղները, կնքված պայմանագրով Նախիջևանը դրվել էր Ադրբեջանի հովանավորության տակ՝ առանց այդ հովանավորությունը երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին փոխանցելու իրավունքի: Գործն ավարտված էր, Բաքվում և Անկարայում կարող էին հանգիստ շունչ քաշել: Այժմ արդեն Անկարան կարող էր Վեյսալ-բեյին ու նրա գլխավորած զորամասին հետ կանչել Թուրքիա, ինչ և արվեց ապրիլին: Մենք էլ վերադառնանք կոնֆերանսի աշխատանքներին և տեսնենք, թե ինչպես ընթացան Նախիջևանի հարցի քննարկումները քաղաքական հանձնաժողովի նիստում:

* * *

Կոնֆերանսի պաշտոնական բացումից (փետրվարի 26) հետո ընդհուպ մինչև մարտի 10-ը քաղաքական հանձնաժողովի նիստեր չգումարվեցին, և տարածքային հարցերի շուրջ տեղի էին ունենում ոչ-պաշտոնական բանակցություններ (առավելապես զրույցների ձևով), որ հիմնականում վարում էին Ստալինը և նրա հանձնարարությամբ՝ Շահթախթինսկին: Զիչերինին ուղարկած Ստալինի մարտի 6-ի նամակից նաև տեղակացանք, որ Հայաստանին առնչվող տարածքային սահմանազծման խնդիրները լուծվել էին հօգուտ Թուրքերի: Չլուծված մնում էին միայն Բաթումի և Նախիջևանի հարցերը, որոնց շուրջ Թուրքերի հետ բանակցությունները Շահթախթինսկին էր վարում: Վերջապես մարտի 7-ին Շահթախթինսկին հպարտությամբ հայտնում է Զիչերինին իր առաքելությունը հաջողությամբ ավարտելու մասին և ավելացնում, որ ինքը երկարատև զրույց ունեցավ Թուրքերի հետ: «Նախիջևանի շրջանի և Բաթումի հարցը այժմ նրանց քիչ է հետաքրքրում, - ասված է Զիչերինին ուղարկած նամակում, - քանի որ նրանք համոզվել են, որ այդ օկրուգների մասին բոլոր վեճերն անօգուտ են...»[1]:

Ճի՞շտ էր արդյոք Շահթախթինսկին, թե՞ ոչ, կտեսնենք իր տեղում: Բայց որ նա խիստ գերագնահատում էր իր խաղացած դերը ու կարծում, թե Թուրքերի հետ բանակցությունների հարցում ինքը անփոխարինելի է, դա փաստ է, և երևում է նրա նամակի այն տողերից, որտեղ խոսում է այն մասին, թե Թուրքերի վրա ինչ հսկայական տպավորություն թողեց իր հայտարարությունն այն մասին, որ ինքը այլևս հնարավորություն չի ունենալու գոնե մի քիչ ժամանակ հատկացնել նրանց, քանի որ պիտի զբաղվի իր կառավարության կողմից նրա վրա դրված այլ հարցերի լուծմամբ[1]:

Իհարկե, նա չի ասում, թե այդ ինչ այլ հարցեր պիտի լուծի, ինչպես որ չի ասում, որ իր կառավարության կողմից իր վրա դրված գլխավոր խնդիրը՝ Թուրքերի միջոցով Նախիջևանը Ադրբեջանին վերադարձնելու խնդիրը, արդեն լուծել է: Դրա փոխարեն Զիչերինին տեղեկացնում է, որ Թուրքերը իրեն խնդրել են ստանալ Ստալինի համաձայնությունը՝ հանդիպելու իրենց հետ, որպեսզի հնարավորություն ունենան նրա հետ քննարկել համաձայնագրի բոլոր կետերը: Նույն օրը Զիչերինը նամակով դիմում է Ստալինին, հայտնում Թուրքերի խնդրանքը և վկայակոչելով Շահթախթինսկուն, տեղեկացնում, թե նրանք մեծ նշանակություն են տալիս երկաթգծից 20 վերստ հետ քաշվելու խնդրին՝ գտնելով, որ այդ պահանջը Կարսի ռազմական նշանակությունն ի չիք դարձնելու միտում ունի, իսկ Արաքսի հատվածում նրանք ձգտում են, որ հենց գետը սահման լինի: Զիչերինը միաժամանակ Ստալինի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ եթե Արաքսի վերաբերյալ Թուրքերի առաջարկն ընդունվի, ապա Սուրմալուի ավազակաբարո քրդերը հեշտությամբ կկարողանան անցնել գետը և թալանել հարակից շրջանները: Սակայն այս անգամ Թուրքերի խնդրանքը Ստալինը չի կատարել, հավանաբար, ինչպես Զիչերինն էր ենթադրում, «կուսակցական համագումարով[2] խիստ կլանված լինելու» պատճառով թեև, ինչպես Թուրք պատմաբան Սալահին է գրում, մարտի 3-ին Ստալինն իր մոտ էր հրավիրել Թուրք պատվիրակներին և ասել, որ եթե չկարողանան համաձայնության գալ արտգործժողկոմ Զիչերինի հետ, դիմեն իրեն[3]: Այդ օրերին Ստալինի և Թուրք պատվիրակների միջև հանդիպում չկայանալու մասին է վկայում նաև Լենինի մարտի 9-ի հետևյալ գրությունը Զիչերինին. «Ես խիստ անհանգստացած եմ այն բա-

[1] ՐԳԱՍՊԻ, ֆ. 558, օп. 1, е/х 3529, л. 1

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Խոսքը ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի մասին է:

[3] Տե՛ս **Գ. Գալոյան**, նշվ. աշխ. էջ 443:

նի համար, որ Թուրքերը ձգձգում են Բաթումի մասին համաձայնության ստորագրումը՝ ժամանակ շահելով, քանի դեռ նրանց զորքերը գնում են դեպի Բաթում: Մենք նրանց այդպիսի ձգձգումներ չպետք է թույլ տանք: Քննարկեք այսպիսի միջոց. դուք ընդհատում եք ձեր կոնֆերանսը կես ժամով՝ ինձ հետ խոսելու համար, իսկ Ստալինն այդ ժամանակ կխոսի Թուրքական պատվիրակության հետ բացեիբաց, որպեսզի պարզի գործը և ավարտին հասցնի հենց այսօր»[1]:

Լենինի ցուցումն իրականացվեց: Նույն օրը տեղի ունեցավ Ստալինի նոր հանդիպումը Թուրք պատվիրակների հետ, որն ավարտվեց նոր գործարքով և դարձյալ Հայաստանի հաշվին: Օրակարգից հանվեց Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ 20 վերստանոց մի տարածք Թուրքական զորքերից մաքրելու և Հայաստանին (ըստ Ստալինի՝ ՌԽՖՍՀ-ին) վերադարձնելու վերաբերյալ հենց Ստալինի կողմից նախորդ հանդիպման ժամանակ առաջ քաշված պահանջը: Դրա փոխարեն Թուրքերը պարտավորվեցին հրաժարվել Բաթում քաղաքի և նավահանգստի նկատմամբ հավակնությունից: Ո՛չ մեր արխիվներում և ո՛չ էլ քաղաքական գործիչների հուշերում, ոչինչ չի պահպանվել անդրկուլիսյան բանակցությունների մասին: Մինչդեռ Թուրք հեղինակների մոտ և հատկապես Ալի Ֆուադ փաշայի (Ջեբեսոյ) «Մոսկովյան հուշեր»-ում բավականաչափ նյութ կա: Ահա, օրինակ, ինչ է գրում նա մեզ հետաքրքրող հարցի մասին. «Որոշակի պայմանների և հանգամանքների առկայությամբ կովկասցիների օգտին Բաթում քաղաքից և նավահանգստից հրաժարվելու դիմաց մենք պահանջեցինք հետևյալը. **երկարացնել մեր սահմանները Կարսից արևելք ամբողջ տարածության վրա մինչև Արաքսի (Արփաչայի) հնահունը: Այդ կերպ կապահովվեր մեր անվտանգությունը և միաժամանակ տարածքի մի նշանակալից կտոր կմիացվեր մեր երկրին**: Մենք նպատակ էինք դրել հասնել մեր պայմանների բավարարմանը պայմանագրի շրջանակներում, որպեսզի վերջնականապես հաստատվենք, և միայն դրանից հետո, **վերջին պահին, որոշակի պայմաններով զիջենք Բաթումը, ըստ այդմ ձևացնելով, թե մենք զիջումներ ենք անում կովկասցիներին»**[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Մեր որոշ պատմաբաններ[3], վկայաբերելով Թուրք պատմաբան Թևֆիկ Բիլիքլիօղլուն, շարունակում են գրել ու խոսել այն մասին, որ կոնֆերանսում Բաթումի փոխարեն Թուրքերին առաջարկվել է Սուրմալուն, որ Սուրմալուն փոխանակել են Բաթումի հետ, մոռանալով, որ սահմանային հարցերը լուծող Ստալինը ո՛չ Կարսի և ո՛չ էլ Սուրմալուի պահանջ էր դրել: Նա պահանջել էր 20 վերստանոց մի շերտ Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ (այսինքն՝ Կարսի մարզի Արփաչային հարող հատվածը և Սուրմալուի գավառի Արաքսին հարող հատվածը), ինչը, ինչպես վերը տեսանք, Թուրքերը համարեցին իրենց անվտանգությանն ուղղված քայլ: Ուրեմն պետք է խոսել Բաթումի հետ ոչ թե Սուրմալուի, (կոնֆերանսում Սուրմալուի հարցը ընդհանրապես չի շոշափվել) այլ Ստալինի պահանջած 20 վերստանոց շերտի փոխանակման մասին: Զէ՞ որ պատվիրակության անդամը՝ Ալի Ֆուադը, ուղղակի գրում է, որ Բաթումի փոխարեն պահանջել են Կարսից արևելք ամբողջ տարածքը մինչև Արփաչայ և Արաքս: Այդ մասին ուղղակի վկայություն կա նաև մարտի 10-ի նիստում Չիչերինի հայտարարության մեջ: Խոսելով այն մասին, որ Բաթումը Կովկասի դուռն է, միակ հարմար նավահանգիստը և այն կենսականորեն անհրաժեշտ է ամբողջ խորհրդային աշխարհին, Չիչերինն այնուհետև անցել է հայ-թուրքական սահմանի հարցին՝ հայտարարելով, փե **«Ռուսաստանյան կառավարությունը չի պնդի սահմանը Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ անցկացնելու վրա**: Բայց ռազմական տեսակետից, ինչպես նաև քրդերի և այլ հրոսակախմբերի ասպատակություններից Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթգծի պաշտպանության անհրաժեշտությունը Ռուսաստանյան կառավարությանը հարկադրում է խնդրել Թուրքիային իր վրա պարտավորություն վերցնելու զորք չպահել և բլոկհաուզներ չկառուցել սահմանից հայտնի տարածության վրա մի շերտում, որի լայնությունը չի անցնի 8 վերստից և որը կարող է կրճատվել այնտեղ, որտեղ գետը հեռանում է երկաթուղուց»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ահա այսպես, մինչդեռ Չիչերինը մարտի 4-ի հեռագրում, իսկ Ստալինը մարտի 6-ի նամակում խոսում էին սահմանը երկաթգծից 20 վերստ հեռավորության վրա անցկացնելու մասին: Հազիվ թե ճիշտ կլինի փնովել Թուրք դիվանագետներին, նրանց վարքագիծը համարել խարդախ, անբարոյական և այլն: Նրանք իրենց առջև դրված խնդիրներն էին լուծում՝ նպատակին հասնելու համար միջոցների մեջ

[1] **В. И. Ленин**, Полн. собр. соч., т. 52, стр. 92.

[2] „Геноцид армян...", стр. 418.

[3] Տե՛ս, օրինակ, **Ե. Սարգսյան**, Դավաղիր գործարք, Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Եր. 1995, էջ 188:

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 17, թ. 14:

խտրություն չդնելով: Նախատինքի խոսք պետք է ուղղել ոչ թե նրանց, այլ խորհրդային դիվանագիտական ու քաղաքական գործիչներին, որոնք իրենց ուղեղներում մեխել էին միայն մի բան՝ անպայման պետք է պայմանագիր կնքել Թուրքերի հետ ու կանխել նրանց հնարավոր անցումը Անտանտի լագեր: Եվ դա այն դեպքում, երբ ակնհայտ էր դարձել, որ Անտանտան դեռևս չի ընդառաջում Թուրքերին և Լոնդոնի կոնֆերանսն էլ արդեն ձախողվել է: Այսպիսի պայմաններում թվում է, թե խորհրդային ղեկավարությունը պետք է օգտագործեր ստեղծված նպաստավոր իրադրությունը և այնպիսի կարևոր հարցերում, ինչպիսին տարածքային սահմանազատումն է, կոշտ դիրք պետք է որդեգրեր: Բայց ոչ, կոմունիստ ղեկավարները շարունակում էին պարել Թուրքերի դուդուկի տակ: Նույնիսկ Չիչերինն էր վազքի մեջ մտել և Թուրք-ֆրանսիական մերձեցման հնարավորության մասին մամուլում տեղ գտած որոշ կեղծ հաղորդումների ազդեցության տակ Ստալինի ու Թուրքերի հանդիպման նույն օրը՝ մարտի 9-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած նամակում խուճապահար գրում է, թե «մեզ հարկավոր է չտապ ավարտել Թուրքերի հետ» և առաջարկում «անհապաղ նրանց հետ համաձայնագիր ստորագրել՝ ընդունելով նրանց վերջին առաջարկությունը, որում մենք դեռ որոշ վերապահումներ ու բարելավումներ կմտցնենք, օրինակ՝ երաշխիք հրոսակախմբերի ասպատակությունների դեմ»[1]: Նամակում Չիչերինը նկարագրում է նաև համաձայնեցված սահմանը սկսած Բաթումից հարավ Սարպ գյուղից մինչև հայ-թուրքական սահմանը, որն անցնելու է Արփաչայ և Արաքս գետերով: Չիչերինը հատուկ ընդգծում է, որ դա Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանն է, և ավելացնում է, թե «Նախիջևանը հայտարարվում է ինքնավար մարզ Ադրբեջանի հովանավորության տակ»:

Մարտի 10-ին վերջապես գումարվեց քաղաքական հանձնաժողովի առաջին նիստը, որին ներկա էին թուրքական պատվիրակության անդամներ Յուսուֆ Քեմալ-բեյը, Ալի Ֆուադ փաշան, Ռզա Նուր-բեյը: Ռուսական կողմը ներկայացնում էին Չիչերինը և Կորխմազովը:

Նիստի նախագահ Յուսուֆ Քեմալ-բեյի առաջարկությամբ նախ քննարկման է դրվում սահմանային հարցը, որի շուրջ ծավալված վիճաբանությունները բավականին երկար են տևում: Սակայն վեճերը չէին վերաբերում այս կամ այն տարածքի պատկանելիությանը, այդ հարցերը լուծել էր Ստալինը: Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանագծի վերաբերյալ առաջինը կարծիք է հայտնում Չիչերինը: Նա հայտարարում է, որ իր կառավարությունը պատրաստ է ճանաչել թուրքական «Ազգային ուխտը», բայց «պահանջում է սահմանների հայտնի ուղղում» մասնավորապես Բաթումի հատվածում: Բաթումը համարելով Կովկասի դարպասը և միակ նավահանգիստը, որ կարող է ծառայել խորհրդային հանրապետություններին, Չիչերինը հայտարարում է, որ Բաթում քաղաքը, նավահանգիստը և նրանից հյուսիս ընկած հատվածը պետք է մնան Վրաստանին, իսկ սահմանը պետք է սկսվի Բաթումից հարավ գտնվող (շուրջ 10 կմ.) ծովափնյա Սարպ գյուղի մոտից:

Կայացած նախնական համաձայնությունը չխախտելով, թուրքական պատվիրակությունը չի առարկում Չիչերինին, բայց առաջ է քաշում որոշ նախապայմաններ. «1. Լայն ինքնավարություն բնակչության համար, 2. Մշակույթի, կրոնի և հողի ազատ օգտագործման մուսուլմանների իրավունքի ճանաչում, 3. Ազատ տրանզիտ՝ Թուրքիա գնացող և Թուրքիայից եկող ապրանքների և առևտրի ամեն կարգի առարկաների համար, նավահանգստի անվճար օգտագործում ու բոլոր տուրքերից ու մաքսերից ազատում»[1]:

Տաք վեճեր բորբոքվեցին հատկապես 3-րդ պահանջի՝ ազատ տրանզիտի շուրջ: Չիչերինը փոխադարձաբար պահանջում է խորհրդային հանրապետություններին ազատ տրանզիտի իրավունք տալ Փոքր Ասիայի որոշ նավահանգիստներում, սակայն Թուրքերը մերժում են՝ հայտարարելով, որ ազատ տրանզիտի իրենց պահանջը հիմնված է Բաթումը Վրաստանին զիջելու խնդրի հետ: Այդ վիճաբանությունները մեզ առանձնապես չեն հետաքրքրում, ուստի նրանց վրա կանգ չենք առնում, այլ բավարարվում ենք նշելով, որ ի վերջո ռուսական կողմը զիջեց և Թուրքերի առաջ քաշած պայմանները տեղ գտան Բաթումի վերաբերյալ հոդվածում: Կարծում ենք՝ ավելի ճիշտ կլինի ընթերցողին ծանոթացնել Անկարայի կառավարության երկդիմի վարքագծի մի նոր դրսևորմանը, որ բացահայտվեց այդ նույն օրերին:

Բանն այն է, որ Անկարան թեև քաջատեղյակ էր Բաթումի հարցում Ռուսաստանի դիրքորոշմանը, բայցևայնպես, ինչպես Նախիջևանի հարցում, այստեղ ևս փորձեց նրան կատարված փաստի առաջ կանգնեցնել: Դեռ փետրվարի 21-ին՝ օգտվելով վրաց մենշևիկյան կառավարության համար ստեղծված ծանր վիճակից[2], վերջնագրի կարգով

[1] ,,Геноцид армян...", стр. 426.

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 17, թ. 14:

[2] Փետրվարի 12-ին վրացիների կողմից օկուպացված Լոռու չեզոք գոտում ծագեց ապստամբություն Վրաստանի դեմ: Օգնության գնացին հայկական ուժերը և 11-րդ Կարմիր բանակը:

պահանջում է ճանաչել Թուրքիայի իրավունքը Բաթումի, Ախալքալաքի և Ախալցխայի վրա: Մարտի 10-ին՝ Մոսկվայի կոնֆերանսի քաղաքական հանձնաժողովի գումարման նույն օրը, Ահմեդ Մուհթարը Թուրքական մեջլիսում հայտարարում է. «...Այժմ ես պետք է հաղորդեմ ձեզ, որ վրաց կառավարության համաձայնությամբ արևելյան ճակատի մեր զորքերին հրաման է արձակված գրավելու Բաթումը: Բաթումի գրավումից հետո այնտեղ պլեբիսցիտ է կատարվելու, և եթե ազգաբնակչությունը ցանկանա, Բաթումը կլինի մերը»[1]: Նույն օրը Կարաբեքիրը հեռագրում է 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերին և հայտնում նշված շրջանները գրավելու վերաբերյալ իր զորքերին տված հրամանի մասին: Իսկ հաջորդ օրը՝ մարտի 11-ին Օրջոնիկիձեին հասցեագրած գրությունում տեղեկացնելով, որ ինքը գործել է իր կառավարությունից ստացած հրահանգների համաձայն, միաժամանակ իր կառավարությանն արդարացնելու այլ միջոց չի գտնում, քան դարձյալ մեղքը բարդել «չարամիտ» հայերի վրա: «Հայերը, որ ամենուրեք և ամեն տեղ վարել են ու մնում են մուսուլմանների նկատմամբ թշնամական հարաբերություններում, - ասված է այդ գրությունում, - տվյալ դեպքում նույնպես օգտվելով Վրաստանի տարածքում տեղի ունեցող ռազմական գործողություններից, կարող էին չարաշահել, և Բաթումի, Ախալցխայի ու Ախալքալաքի շրջանների բնակչությանը, որտեղ ինչպես հայտնի է, բնակչության մեծամասնությունը գերազանցապես մուսուլմանական է, նորից պատերազմի մեջ քաշել և մատնել աղքատության»[2]: Ըստ Կարաբեքիրի, «հենց մուսուլման բնակչությանն այդ անխուսափելի սարսափներից», ինչպես նաև ռուսական և վրացական զորքերի միջև ռազմական գործողություններից փրկելու նպատակ է հետապնդում իր կառավարությունը: Նա նույնիսկ Օրջոնիկիձեին առաջարկում է զորք չմտցնել այդ շրջանները:

Մարտի 11-ին թուրքական մի ջոկատ մտնում է Բաթում, իսկ Թիֆլիսում Անկարայի դիվանագիտական ներկայացուցիչ Քյազիմ-բեյը այն հռչակում է Թուրքիայի անբաժանելի մասը: Թուրքական ջոկատներ են հայտնվում նաև Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում:

«Կարմիր աստղ» օրաթերթում ուշագրավ ու մեզ՝ հայերիս համար ուսանելի, տեղեկություններ են պահպանվել այն մասին, թե վրացիները ինչպես կարողացան Բաթումը ձերբ պահել թուրքերի ոտնձգություններից: Օրջոնիկիձեի հանձնարարությամբ մարտի 16-ի գիշերը և 17-ի առավոտյան Վրաստանի հեղկոմի անունից Օրախելաշվիլին հեռախոսային խոսակցություն է ունենում Վրաստանի մենշևիկյան կառավարության նախագահի տեղապահ Լորդկիպանիձեի հետ[1], պահանջում բացատրություն Բաթում թուրքական զորքեր թույլատրելու համար, հայտնում Անկարայի կառավարության և Կարաբեքիրի արած հայտարարությունների ու հեռահար նպատակների մասին և վերջում ավելացնում. «Բաթումին անպայման վտանգ է սպառնում, միակ փրկությունն է անմիջապես մեր զորքերը մտցնել այնտեղ և ձեր բոլոր զորքերին ենթարկել մեր հրամանատարությանը՝ Բաթումը պաշտպանելու և Վրաստանի ձեռքին պահելու նպատակով: Ձեր կողմից համաձայնության և դատարկ վագոններ տրվելու դեպքում մեր զորքերն այսօր ևեթ կարող էին մտցվել Բաթում...»[2]: Հաջորդ օրն առավոտյան Լորդկիպանիձեն հայտնում է, որ ընդունում են Հեղկոմի առաջարկությունը և հենց նրանց տրամադրած վագոններով էլ Կարմիր բանակի զորամասերը նույն օրը երեկոյան (ժամը 23-ին) շարժվում են դեպի Բաթում և 18-ի առավոտյան մտնում քաղաք[3]:

Ահա այսպես երեկվա թշնամիները՝ վրաց կոմունիստներն ու մենշևիկները, որ ավելի քան մեկ ամիս արյուն էին հեղում մարտի դաշտերում, վճռական պահին համաձայնության եկան՝ հայրենիքի շահը գերադասելով ամեն ինչից: Կարծում ենք ընթերցողը կընդունի, որ հայրենասիրության դասական օրինակ է սա, որով հայ քաղաքական գործիչները դժբախտաբար չփայլեցին: Եվ որպեսզի մեր խոսքը կիսատ չմնա, ներկայացնենք նաև Ստալինի և Օրջոնիկիձեի կեցվածքն այս հարցում: Մարտի 19-ին Ստալինը հեռագրում է Օրջոնիկիձեին. «...աշխատիր ուժեղ հարվածով թուրքերին քշել Բաթումից, իսկ հետո դա բացատրել թյուրիմացությամբ: Նախաձեռնությունն իր վրա պետք է վերցնի հրամանատարությունը. Վրացական կառավարությունը պետք է լռի, մնա ստվերում»[4]:

Ստալինի այս զայրալից հեռագիրը հետևանք էր այն բանի, որ ռու-

[1] «Կարմիր աստղ», Թիֆլիս, 22 մարտի 1922թ.:
[2] ,,Геноцид армян...", стр. 438.

[1] Թեև 1921թ. փետրվարի 25-ին Կարմիր բանակը գրավել էր Թիֆլիսը և Վրաստանը հռչակվել էր խորհրդային հանրապետություն, բայց ռազմական գործողությունները կողմերի միջև դեռևս շարունակվում էին Արևմտյան Վրաստանի տարածքում:
[2] «Կարմիր աստղ», 20 մարտի 1921թ.:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] ,,Геноцид армян...", стр. 468.

սական զորամասերի Բաթում մտնելուց հետո էլ Կարաբեքիրը շարունակում էր համառել և թուրքական ջոկատը պահել Բաթումում: Օրջոնիկիձեն էլ Բաթումում գտնվող թուրքական ջոկատին «թյուրիմացաբար ուժեղ հարված» հասցնելուց առաջ մի բավականին կոչտ հեռագիր է ուղարկում Կարաբեքիրին, որում այսպիսի տողեր կան. «Լինելով Թուրքիայի հետ զինվորա-քաղաքական դաշինք կնքելու անկեղծ կողմնակից, ես պետք է անկեղծորեն հայտարարեմ, որ վերջին անցքերը ամենամեծ վտանգի են ենթարկում կայացած բոլոր համաձայնությունները: ...Ես զարմացած եմ, ես ի վիճակի չեմ հասկանալու վերջին անցքերը: ...Մեր զորքերը մտան Բաթում և ձեռնարկում են գրավելու Մոսկվայի կոնֆերանսում որոշված սահմանները, այն սահմանները, որոնք հայտնի են ձեզ և Անգորային: Բաթումն այսուհետ ոչ ոքի կողմից չի կարող վեճի նյութ դառնալ: Թյուրիմացություններից և ոչ ոքի համար, բացի մեր թշնամիներից, հարկավոր չեղող տարակարծությունից խուսափելու համար, դուք ձեր զորքերին դուրս կհանեք Բաթումից և այլ շրջաններից: Դրանով մենք ամբողջ աշխարհին կցուցադրենք մեր համաձայնագրերի ու մեր դաշնագրի սրբությունն ու անխախտելիությունը»[1]:

Վրաստանի շահերի պաշտպանության խնդրում վրաց քաղաքական ու կուսակցական գործիչների՝ թե՛ այդ օրերին և թե՛ դրանից հետո, ցուցաբերած անզիջում վարքագծի մասին ուրիշ այլ փաստեր էլ կան: Բայց կարծում ենք՝ վերը նշածն էլ բավարար է ճիշտ պատկերացում կազմելու համար: Միայն ավելացնենք, որ թուրքական զորքերից Ալեքսանդրապոլը և օկուպացված մյուս տարածքները մաքրելու հարցում նման վճռական պահանջ ոչ ոք չէր դնում ընդհուպ մինչև ապրիլի երկրորդ կեսը և թուրք զինվորականներն անարգել շարունակում էին թալանը, բռնաբարությունը և խաղաղ բնակիչների կոտորածը: Մեր պատմագիտական գրականության մեջ այդ ամենի մասին բավականաչափ հիմնավոր փաստեր կան: Բայց որպեսզի շատ չհեռանանք մեր բուն խնդրից՝ Նախիջևանյան հիմնահարցից, վերադառնանք կոնֆերանսի քաղաքական հանձնաժողովի մարտի 10-ի նիստին:

Ուշագրավ է, որ Նախիջևանի հարցը առաջ քաշեց ոչ թե Զիչերինը, այլ Յուսուֆ Քեմալը: Այն բանից հետո, երբ Զիչերինը հայտարարեց, որ իր կառավարությունը չի պնդում սահմանը Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ անցկացնելու վրա, բայց պահանջում է 8 վերստանոց ապառազմականացված գոտի երկաթուղու անվտանգությունը ապահովելու համար, Յուսուֆ Քեմալը պատասխանեց, որ թուրքական պատվիրակությունը համաձայն է սահմանի այդ հատվածում մշտական զորք չպահել, բայց գտնում է, որ այնտեղ պետք է ունենա իր վարչությունը և ոստիկանությունը: Յուսուֆ Քեմալ-բեյը նաև հայ-թուրքական սահմանի ամբողջ երկարությամբ 8 վերստանոց ապառազմականացված շերտի ստեղծումը համարեց մեծ զիջում և պահանջեց այն տարածել միմիայն Արփաչայի գոտու վրա, իսկ Արաքսի գոտում այն կրճատել մինչև 4 վերստ, պատճառաբանելով, թե Արաքս գետը կարող է դիտվել որպես բավարար պաշտպանություն և բացի դրանից, այդ գոտին 80-100 կմ երկարություն ունի և եթե անհրաժեշտություն առաջանա, ապա թուրքական զորքերի կողմից այդ շրջանի պաշտպանությունը խիստ կդժվարանա:

Յուսուֆ Քեմալը, իհարկե, չի ասել, թե ովքե՞ր են այդ ագրեսորները, ումի՞ց պետք է պաշտպանեն իրենց սահմանները, բայց պարզից էլ պարզ է, որ նկատի ուներ «իմպերիալիստ» հայերին: Դրա համար էլ նա խկույն ևեթ առաջ է քաշում Նախիջևանի հարցը ու հայտարարում, թե «թուրքական պատվիրակությունը գտնում է, որ հենց բնակչության կողմից թուրքական զորքերի հրավիրման փաստի ուժով Նախիջևանը գտնվում է Թուրքիայի հովանավորության տակ: Այնուամենայնիվ, նա համաձայն է այդ հովանավորությունը զիջել Ադրբեջանին՝ պայմանով, որ Ադրբեջանից պարտավորություն ստանա չվերագիջել այդ հովանավորությունը երրորդ պետության»[1]: Թուրք պատվիրակը չի ասում, որ երրորդ պետություն ասելով նկատի ունի Հայաստանը, թեև առանց դրան էլ պարզ էր, որ խոսքը Հայաստանի մասին է, մանավանդ որ անմիջապես ավելացրել էր, թե «թուրքական զորքերին դժվար կլինի անտարբեր նմալ, եթե դա նորից տեղի ունենա, ինչպես դա մի անգամ եղել է, և եթե նորից կրկնվի բնակչության կոտորածը»[2]:

Եթե սելը չի ճոռում, սելվորն է ճոռում: Նախիջևանահայության 1918 և 1919 թվականների ջարդերն ու բռնագաղթը մոռացած, երկրամասի հայաթափությունը մոռացած, Յուսուֆ Քեմալը մատնացույց է անում հայկական զորքերի 1920թ. հուլիսյան առաջխաղացումը Շարուրում, որի հետևանքով տեղի մահմեդական ազգաբնակչության մի մասը բռնել էր գաղթի ճանապարհը: Ըստ որում, գաղթում էին դեռ

[1] «Կարմիր աստղ», 22 մարտի 1921թ.:

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 17, թ. 19:

[2] Նույն տեղում:

մինչև հայկական զորքերի երևալը: Իսկ դա նշանակում է, որ ջարդեր տեղի ունենալ չէին կարող:

Զհակադարձել Յուսուֆ Քեմալին Զիչերինը չէր կարող, բայց զարմանալին այն է, որ Նախիջևանահայության ջարդերի փոխարեն սկսեց խոսել այն մասին, որ «ոչ մուսուլման ազգաբնակչության ջարդեր հավասարապես տեղի են ունեցել, օրինակ, Կարսում»: Մեղադրանքի խոսք ասել Զիչերինի հասցեին, ճիշտ չի լինի, քանի որ նույնիսկ հայտնի չէ, թե նա գիտե՞ր 1918 և 1919 թվականների նախիջևանյան իրադարձությունների մասին: Ուրիշ բան, որ Զիչերինը Նախիջևանի խնդրի քննարկումների ամբողջ ընթացքում, իսկ այն բավականին երկար է տևել, ոչինչ չասեց այն մասին, որ Նախիջևանը բուն հայկական տարածք է և չարունակում է մնալ այդպիսին, քանի որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի ճանաչվել ոչ Խորհրդային Հայաստանի, ոչ Ռուսաստանի կողմից, իսկ Ադրբեջանն էլ հանդիսավոր դեկլարացիայով այն հռչակել էր Հայաստանի անբաժանելի մաս: Ճիշտ է, վերջինս էլ իր հերթին Նախիջևանի ազգաբնակչությանը ինքնորոշման իրավունք էր տվել, բայց այն դեռևս ի կատար չէր ածվել: Այդ ամենի մասին նա հիանալի գիտեր, բայցևայնպես իսկույն համաձայնվում է, որ Նախիջևանը դրվի Ադրբեջանի հովանավորության տակ և առարկում միայն այդ հովանավորությունը երրորդ պետության չփոխանցելու պարտավորության դեմ:

Մենք այն կարծիքին չենք, թե Զիչերինն ի զորու էր փոխելու Կենտկոմի հանձնարարությամբ Թուրք պատվիրակների հետ Ստալինի կայացրած համաձայնությունները: Նա անում էր այն, ինչ նրան ասում էին: Բայց կարո՞ղ էր իր փաստարկներում օգտագործել այն իրողությունը, որ տվյալ պահի դրությամբ Նախիջևանը եթե ոչ փաստական, ապա իրավական դրությամբ Հայաստանի կազմում էր, որի վկայությունն է թեկուզ այն, որ Նախիջևանի արտակարգ կոմիսարը՝ Վելիբեկովը, իր բոլոր զեկուցագրերը նախ հասցեագրում էր ՀԿԿ Կենտկոմ և Հայհեղկոմ ու նոր միայն 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդին և մյուսներին: Եվ եթե Նախիջևանում Թուրքական զորքեր կան, ապա դրանք պարզապես օկուպանտներ են, ինչը Զիչերինն ասել չէր կարող, քանի որ հենց Ռուսաստանի համաձայնությամբ էին մտել այնտեղ: Նա կարող էր հերքել Յուսուֆ Քեմալի հիմնավորումները, և դա արեց. «Ռուսական պատվիրակությունը չի կարող ընդունել ձևակերպում, ըստ որի Թուրքիան զիջում է հովանավորության իր իրավունքը՝ նկատի առնելով այն, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չէր վավերացվել, իսկ բնակչության կողմից Թուրքական զորքերի հրավիրումը իրավաբանական արժանահավատության բնույթ չէր ստացել որպեսզի ծառայեր որպես այդպիսի հովանավորության հիմնավորում»[1]:

Նախիջևանի հարցի քննարկման ընթացքից դժվար չէ համոզվել, որ հարկադրված լինելով համակերպվել և ընդունել Նախիջևանը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելու Թուրքական առաջարկը, այնուամենայնիվ, Զիչերինը ձգտում էր բացառել այդ հովանավորությունն ապագայում չվերազիջելու մասին Թուրքական պահանջը: Եթե հիշենք, որ ընդհուպ մինչև կոնֆերանսի գումարումը նա միշտ էլ այն կարծիքին է եղել, որ Նախիջևանը Հայաստանի անբաժանելի մաս է, ապա նրա այդ ձգտումը հասկանալի կդառնա:

Դժբախտաբար այդ ուղղությամբ Զիչերինի գործադրած ջանքերն անհաջողության մատնվեցին: Գործին չօգնեց ոչ նրա այն մատնանշումը, որ ժողովրդական ինքնիշխանության արժանապատվությունը թույլ չի տալիս կենդանի էակների վրա իրավունքը վերազիջել մեկ ուրիշին, ոչ այն, որ պարտավորություն է դրվում մի պետության վրա, որը կոնֆերանսում ներկայացված չէ: Թուրքերի համառությունը կոտրել նրան չհաջողվեց. նրանք մերժեցին Զիչերինի առաջարկը՝ սահմանափակվել նրանով, որ «Նախիջևանը մշտական կապի մեջ կլինի Ադրբեջանի հետ և կօգտվի ինքնավարությունից՝ նրա հովանավորության տակ», առանց որևէ պարտավորություն հիշատակելու և պահանջեցին արձանագրության մեջ մտցնել հետևյալ ձևակերպումը. «Պայմանով, որ Ադրբեջանն այդ հովանավորությունը չի զիջում ոչ մի երրորդ պետության»[2]:

Ո՞ւմ գաղափարն էր դա, Շահթախթինսկո՞ւ, ով Ադրհեղկոմի հայտնի դեկլարացիան համարել էր դավաճանություն, թե՞ Թուրքերի, որոնք չէին հապաղել իրենց դժգոհությունը հայտնելու վիճելի տարածքների հարցի այդօրինակ լուծման համար: Ոչինչ հայտնի չէ, լռում են Թուրք հեղինակները, լռում են նաև ադրբեջանցիները: Ասենք դա էական էլ չէ: Էականն այն է, որ մի անգամ էլ բացահայտվեց, որ մեր թշնամիները շատ ավելի միասնական էին, շատ ավելի հետևողական Հայաստանն անդամահատելու հարցում, իսկ վերջինս էլ նախկինի պես մնացել էր միայնակ:

Քաղաքական հանձնաժողովի մարտի 10-ի նիստում քննարկված մյուս հարցերին, ինչպես նաև պայմանագրի նախագծի մի քանի հոդ-

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 18:

վածների քննարկումներին ու նրանց չուրջը կայացած համաձայնություններին մենք չենք անդրադառնա: Միայն ավելացնենք, որ այդ նիստում Նախիջևանի սահմանների խնդրին չէին անդրադարձել, այլ որոշել էին, որ ռազմական փորձագետները կորոշեն այդ սահմանները և կներկայացնեն հաջորդ նիստին, որի գումարումը նախատեսված էր մարտի 12-ին: Այդ է պատճառը, որ այդ օրվա նիստին մասնակցեցին նաև ռազմական փորձագետները՝ Բորբիչևը և Սամոյլոն ռուսական կողմից և Սեյֆի-բեյն ու Սաֆվետ-բեյը՝ թուրքական կողմից: Նիստին նախագահում էր Չիչերինը:

Թուրքական պատվիրակության առաջարկությամբ նախ քննարկվում է մարտի 10-ի նիստի արձանագրությունը: Յուսուֆ Քեմալը ներկայացնում է մի շարք ուղղումներ ու դիտողություններ, որոնց թվում քրդերի կողմից սահմանի խախտման հնարավորության, Կարսի մարզում ոչ մուսուլման ազգաբնակչության ջարդերի, կովկասյան հանրապետությունների սուվերենության և այլն:

Ըստ Յուսուֆ Քեմալի, անգլիացիները փորձել են քրդերին ոտքի հանել թուրքիայի դեմ, բայց հաջողություն չեն ունեցել: Քրդերը ձերբակալել են անգլիացի սպաներին ու քարոզիչներին, հանձնել իշխանություններին և հայտարարել թուրքիային իրենց նվիրվածության մասին: Ելնելով դրանից՝ Յուսուֆ Քեմալը հետևություն է անում, թե քրդերը խորհրդային հանրապետությունների նկատմամբ նույն վերաբերմունքն ունեն, ինչ և թուրքիան, հետևապես թուրքական պատվիրակությունը չի կարող համաձայնել քրդերի վերաբերյալ ռուսական պատվիրակության արած հայտարարության հետ:

Բավական երկարաշունչ էր թուրք պատվիրակի խոսքը Կարսի մարզում քրիստոնյա ազգաբնակչության ջարդերի մասին նախորդ նիստում Չիչերինի արած հայտարարության կապակցությամբ: Ըստ Յուսուֆ Քեմալի, դրանք կեղծ լուրեր են, որ տարածել են հայերը իրենց կողմից մուսուլմանների կոտորածը քողարկելու նպատակով: Նա հրապարակում է թվեր (մուսուլմանական գյուղերի ավերման և բնակչության բնաջնջման մասին), որոնք եթե ճիշտ լինեն, ապա Կարսի մարզում պետք է այլևս մուսուլման մնացած չլիներ:

Յուսուֆ Քեմալը ինչպես քրդերի, այնպես էլ Կարսի մարզի մուսուլմանների կոտորածի մասին արած իր հայտարարությունները պահանջում է մտցնել արձանագրության մեջ: Սակայն Չիչերինը չի առարկում միայն քրդերի հարցում, այն էլ վերապահում անելով, որ նրանց կողմից սահմանի խախտման դեպքում պատասխանատվությունն ընկնում է թուրքական կառավարության վրա: Ինչ վերաբերում է հայերի կողմից Կարսի մարզի մուսուլմաններին բնաջնջելուն, ապա նա հայտարարեց, որ հնարավոր չէ այդ հարցի չուրջ քննարկումներ սկսել, քանի որ ներկա չէ հայկական պատվիրակությունը, որը կարող էր այդ հարցի մասին տեղեկություններ հայտնել: Ուստի Չիչերինն առաջարկեց բավարարվել միայն նրանով, որ ռուսական պատվիրակությունն այն ընդունում է ի գիտություն:

Առանձնապես սուր բնույթ ստացան ու ձգձգվեցին կովկասյան հանրապետությունների սուվերենության մասին նախորդ նիստում Չիչերինի արած հայտարարության կապակցությամբ ծավալված քննարկումները: Բայնն այն է, որ տարածքային սահմանազատումների չուրջ կայացված համաձայնություններից հետո Չիչերինը հանդես էր եկել մի հայտարարությամբ, որում ասված էր. «...քանի որ այդ սահմանը պետք է հաստատվի, ինքնըստինքյան հասկանալի է, որ բոլոր չահագրգռված պետությունների սուվերենությունն իրենց սահմաններում լիովին կիրականացվի և որ մի կողմից թուրքիայի և մյուս կողմից Հայաստանի ու Վրաստանի միջև կնքվելիք պայմանագրերում ոչինչ չի կարող այն սահմանափակել»[1]: Դա համարելով համաձայնության էական պայման՝ Չիչերինն ընդգծել էր, որ ռուսական կառավարությունը չի կարող ճանաչել այնպիսի որոշում, ինչպիսին է զինված ուժերի սահմանափակում կամ վերահսկողության իրավունքի սահմանում և որ այդ ուղղությամբ թուրքիայի ձեռնարկած ամեն մի փորձ կհամարի իր դեմ ուղղված:

Դժվար չէ նկատել, որ Չիչերինի այս հայտարարությունն առանձնապես կարևոր էր Խորհրդային Հայաստանի համար, քանի որ փաստորեն ուղղված էր Ալեքսանդրապոլի պայմանագրի դեմ, որի օրինականության վրա թուրքերը դեռևս չարունակում էին պնդել: Թուրքական պատվիրակությունը չէր առարկել Չիչերինին, հայտարարել էր, որ ընդունում է ի գիտություն, որ Ռուսաստանը դեմ չէ թուրքիայի կողմից այդ հանրապետությունների հետ պայմանագրերի կնքմանը: Թվում էր, թե հարցը դրանով սպառվեց: Բայց մարտի 12-ի նիստում թուրքական պատվիրակությունը նորից է վերադառնում Հայաստանի և Վրաստանի սուվերենության խնդրին, ներկայացնում դեկլարացիա, որից պարզվում է, որ թուրքերն այդ հանրապետությունների սուվերենությունը չխախտելու իրենց պարտավորությունը տարածում են միմիայն երկու կետի վրա՝ 1. զինված ուժերի սահմանափակում, 2. վերահսկողության իրավունք:

---

[1] *Նույն տեղում:*

Համաձայնել Յուսուֆ Քեմալի առաջարկին և այդ դեկլարացիան մտցնել նիստերի արձանագրությունների մեջ՝ Չիչերինը չէր կարող: Սուվերենության իրավունքի խախտման հնարավորությունները բազմաթիվ են ու բազմազան: Հնարավոր չէ նախօրոք սահմանել, թե ինչը կհամարվի սուվերենության խախտում և ինչը՝ ոչ: Ուստի Չիչերինն ընդգծում է, որ ինքը ավելի ընդհանուր հայտարարություն է արել՝ ներառելով նաև այդ երկու դեպքերը և ավելացնում, որ խորհրդային հանրապետությունները Ռուսաստանի հետ այնպիսի սերտ դաշինքի մեջ են գտնվում, որ վերջինս չի հանդուրժի նրանց սուվերենության ամեն մի խախտում ընդհանրապես և այդ հարցում նրանք կստանան ռուսական կառավարության լիակատար աջակցությունը: Իրենց հերթին Թուրք պատվիրակները՝ ձգտելով սողանցք թողնել ապագայի համար, պահանջում են կոնկրետացնել և այժմևեթ որոշել, թե որոնք են այն դեպքերը, որ կարելի է սուվերենության խախտում համարել: Գործն այնտեղ հասավ, որ պահանջեցին պարզել, թե արդյո՞ք Հայաստանը, Վրաստանը անկախ պետություններ են, եթե անկախ են, կարո՞ղ են պայմանագրեր կնքել, իսկ Ռուսաստանը՝ որպես նրանց դաշնակից, կարո՞ղ է միայն խորհուրդներ տալ: Սակայն տարհամոզել Չիչերինին՝ Թուրքերին չհաջողվեց: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ սուվերենության հարցը այն եզակիներից էր, որում նա դրսևորեց կամք, համառություն և ի վերջո հասավ նրան, որ Թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ Չիչերինի հայտարարությունն ընդունում է ի գիտություն:

Արձանագրությունների հարցի չուրջ բանավեճերն ավարտելուց հետո միայն կոնֆերանսը ձեռնամուխ եղավ սահմանների վերաբերյալ ռազմական փորձագետների կազմած զեկուցումների քննարկմանը: Ըստ օրակարգի՝ դա նախավերջին հարցն էր, բայց դարձավ վերջինը, քանի որ Թուրքական պատվիրակության խնդրանքով պայմանագրի ռուսական նախագծի քննարկումը հետաձգվեց հաջորդ նիստին:

Ռազմական փորձագետները նախ հրապարակեցին ձևակերպումը, որը պետք է մտցվեր պայմանագրի տեքստի մեջ և ապա ճիշտ սահմանագիծը որոշող ակտ: Թուրք-վրացական և Թուրք-հայկական (Արփաչայի և Արաքսի գոտի) սահմանագծի չուրջ առանձնապես վիճաբանություններ չծավալվեցին: Ուղղակի ռուսական պատվիրակության խնդրանքով որոշվեց այդ ակտում զետեղել քաղաքական հանձնաժողովի մարտի 10-ի նիստի արձանագրության մեջ մտցված այն վերապահությունը, ըստ որի՝ Թուրքիան պարտավորվում էր Թուրք-հայկական նշված սահմանագոտում զինված ուժեր չպահել և ամրություններ

չկառուցել: Բայց երբ հրապարակվեցին Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանները, ապա պարզվեց, որ Թուրք փորձագետների պնդմամբ բուն Նախիջևանի գավառին է միացվել ոչ միայն Շարուր-Դարալագյազի գավառը, այլև Երևանի գավառի հարավ-արևելյան մասը՝ ընդհուպ մինչև Արարատ կայարանը: Դա առավել քան տարօրինակ էր, քանի որ նույնիսկ մուսավաթական Ադրբեջանը երբեք չէր հավակնել Երևանի գավառի որևէ մասի վրա և իր ծայրագույն սահմանը համարել էր Գայլի Դրունքը: Հենց այդ հանգամանքը նկատի ուներ Չիչերինը՝ հայտարարելով, որ փորձագետների գծած սահմանը գերազանցում է Ադրբեջանի մաքսիմում պահանջը և թեև «հարցը առաջնակարգ կարևորություն չունի՝ խորհրդային հանրապետությունների միջև սերտ կապերի գոյության նկատառումով, – չարունակեց Չիչերինը, – բայցևայնպես, նախընտրելի կլինի մնալ Շարուր-Դարալագյազի օկրուգի սահմաններում՝ որպես ազգագրական սկզբունքին առավել համապատասխանող»[1]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ Չիչերինի տոնը մեղմ է, հաշտվողական: Նա ոչինչ չի ասում այն մասին, որ այդ խեղճ ու կրակ Հայաստանին բոլոր կողմերից արդեն անդամահատել են, չի պահանջում չափավորել ախորժակը և վերջ տալ Թալանին: Այլ խոսում է խորհրդային հանրապետությունների համար այդ հարցի «առաջնակարգ կարևորություն» չունենալու մասին և դրանով իսկ Թուրք դիվանագետներին հնարավորություն տալիս պնդել իրենց պահանջի վրա: Յուսուֆ Քեմալը հայտարարում է, թե իբր հենց այդ մասերում են տեղի ունեցել այն «ցավալի իրադարձությունները», որոնք հանգեցրել են Թուրքական զորքերի հրավիրմանը և որ այդ չրջանը ամբողջովին մուսուլմաններով է բնակեցված: «**Թուրքիան վստահ է**, – ասել է Յուսուֆ Քեմալը, – **որ Խորհրդային Ադրբեջանը կանի իր իշխանության տակ գտնվող ամեն ինչ, որպեսզի կատարի իր պարտքը Թուրքիայի, Ռուսաստանի և մարդկության առաջ և դրա համար էլ ցանկալի է այդ տարածքի հովանավորությունը ևս նրան հանձնարարել**»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ահա թե որքան վերամբարձ ու նաև անպատկառ է եղել այն ոճը, որով Թուրք դիվանագետները խոսում էին իրենց ռուս կոլեգաների հետ: Կարծես վերջիններս երկնքից էին իջել, անգետ ու անտեղյակ,

[1] Նույն տեղում, գ. 21, էջ 54:

[2] Նույն տեղում:

որոնց կարելի է հեշտությամբ համոզել, որ մարդկության ճակատագիրը հենց այդ մի բուռ հողից է կախված: Յուսուֆ Քեմալի պատճառաբանությունը սակայն չէր համոզել Չիչերինին, և վերջինս առաջարկեց Նախիջևանի և Հայաստանի միջև սահմանը համարել ժամանակավոր, և եթե հետագայում այդ երկու պետությունների միջև անմիջական բանակցությունների միջոցով սահմանի որևէ փոփոխություն կատարվի, ապա այն չպետք է դիտվի որպես պայմանագրի խախտում:

Յուսուֆ Քեմալը համառում է, պնդում, թե այդ հարցը խիստ կարևոր է Թուրքիայի արևելյան սահմանի անվտանգության տեսակետից և պետք է վերջնական լուծում ստանա՝ բացառելով այդ կապակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև որևէ բանակցության հնարավորություն: Բայց չի բացատրում, թե այդ փոքրիկ հողակտորից ի՞նչ վտանգ կարող է ծագել Թուրքիայի համար այն դեպքում, երբ Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանները ձգվում էին մի քանի հարյուր կիլոմետր: Եվ ինչո՞ւ Հայաստանը Թուրքիային պիտի սպառնար հենց այդ տարածքից: Ուրեմն խնդիրը Թուրքիային սպառնացող վտանգի մեջ չէր, այլ Նախիջևանի հետ ընդհանուր սահման ունենալու ձգտման: Չէ՞ որ ակնհայտ էր, որ եթե Հայաստանի սահմանները ձգվեն մինչև Գայլի Դրունք, ապա Թուրքիան Նախիջևանի հետ ընդհանուր սահման չի ունենա ու չի կարողանա կապվել Ադրբեջանի հետ: Իսկ դա լուրջ խոչընդոտ կդառնա պանթուրքիզմի պլանների տեսակետից և Յուսուֆ Քեմալն իզուր էր կարծում, թե ռուսներին հեշտությամբ կմոլորեցնի նաև այս հարցում: Մոսկվայում վաղուց էին նկատել, որ Թուրքերը ձգտում են ամեն գնով կապվել Ադրբեջանի հետ: Դրանում լուրջ վտանգ տեսնելով՝ բոլշևիկյան ղեկավարներն էլ իրենց հերթին աշխատում էին զրկել Թուրքերին այդ հնարավորությունից: Հայաստանը գրավելու միջոցով Թուրքիայի և Ադրբեջանի միջև սեպ խրելու անհրաժեշտության մասին խոսել էր Ստալինը դեռևս 1920թ. նոյեմբերի 16-ին Վլադիկավկազից Լենինին հղած հեռագրում: Նման խոսակցություն տեղի էր ունեցել նաև նոյեմբերի 23-ին Ստալինի ու Օրջոնիկիձեի, և Ստալինի ու Լենինի միջև հեռախոսային ուղիղ կապի ժամանակ[1]:

Անտեղյա՞կ էր Չիչերինը Թուրքերի այդ ձգտմանը, իհարկե ոչ: Ուրեմն տրամաբանական էր, որ պետք է ավելի վճռական լիներ և հայտարարեր, որ պետք է հաստատել այն սահմանը, որը նախկինում պահանջել է Ադրբեջանը, քանի որ անհնար է կատարել սահմանագծի

[1] „Геноцид армян...", стр. 237, 250.

փոփոխություն առանց չահագրգռված կառավարությանն ու ազգաբնակչությանը հարցնելու:

Ճիշտ ու տեղին պատճառաբանություն է, խոսք չկա: Ափսոս, որ միան այդ փոքրիկ հողակտորի հարցում Չիչերինը Թուրքերին հիշեցրեց այդ հանրահայտ սկզբունքի մասին: Ինչևէ, համոզվելով, որ վիճաբանությունը շարունակելն անհեռանկար է, Չիչերինը կարծիքը չի փոխի, Թուրք պատվիրակները որոշում են հարցի լուծման այլ ուղի ընտրել: Յուսուֆ Քեմալն առաջարկում է ընդունել որոշում, ըստ որի՝ Շարուր-Դարալագյազը միացվում է Նախիջևանին, իսկ Երևանի գավառի վիճելի հատվածում (Քյոմուրլու-դաղ – 6930, Սարայ-բուլաղ – 8071, Արարատ կայարան) սահմանի վերջնական ճշտման խնդիրը թողնել Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողովին:

Չիչերինը չառարկեց, և կոնֆերանսը այդպես էլ որոշեց[1]: Անտարակույս է, որ երկու կողմերն էլ հույսը դրել էին Ադրբեջանի վրա: Ո՞ւմ կողմը կբռնի նա, ցեղակից Թուրքիայի՞, թե՞ դաշնակից Ռուսաստանի, ցույց պիտի տար մոտ ապագան:

Այսպիսի վախճան ունեցան Նախիջևանի հարցի քննարկումները մարտի 10-ի և 12-ի նիստերում: Ճիշտ է, այն շոշափվեց նաև մարտի 14-ի նիստում, բայց միմիայն պայմանագրի հոդվածների քննարկման ժամանակ և ստացավ հետևյալ վերջնական ձևակերպումը.

«Հոդ. 3. Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը սույն պայմանագրի I (c) հավելվածում նշված սահմաններում կազմում է ինքնավար տարածք Ադրբեջանի հովանավորության տակ՝ պայմանով, որ Ադրբեջանն այդ հովանավորությունը չի զիջում երրորդ պետության»:

Փոփոխություն չկատարվեց նաև Երևանի գավառի հարավարևելյան հատվածի խնդրում: Պայմանագրի 3-րդ հոդվածի շարունակության մեջ ասված է.

«Նախիջևանի տարածքի եռանկյունի կազմող գոտում, որ պարփակված է արևելքում Արաքսի հնահունի, իսկ արևմուտքում Դաղնա (3829) – Վելի-դաղ (4121) – Բահարդիք (6587) – Քյոմուրլու-դաղ (6930) լեռներով անցնող գծով, նշված տարածքի սահմանագիծը, որ սկսում է Քյոմուրլու-դաղ (6930) սարից, Սարայ Բուլաղ (8071) սարով անցնում Արարատ կայարան և ավարտվում Արաքսի հետ Կարասուի

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 54:

խաչման տեղում, կուղղվի Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակներից կազմված հանձնաժողովի կողմից»[1]:

Մնում է ընթերցողի ուշադրությանը ներկայացնել նաև I (c) հավելվածը: Ահա այն. «Նախիջևանի տարածք. Արարատ կայարան–Սարայ–Բուլաղ (8071) սար –Քյոմուրլու-դաղ (6839), (6930) – 3080– Սայաթ-դաղ (7868) – Գուրթ-գուլաղ (Գուրթ-գուլաղ) գյուղ – Գամեսուրդաղ (8160) – բարձունք 8022– Կյուկի-դաղ (10282) և նախկին Նախիջևանի գավառի արևելյան վարչական սահման»[2]:

*Սակայն Թուրքերի կողմից Նախիջևանի հարցի չհարկումը դրանով չավարտվեց: Ընդամենը երեք օր էր անցել այդ հարցի վերջնական ձևակերպումից, երբ մարտի 17-ին Թուրքական պատվիրակությունը Զիչերինին հասցեագրած նոտայում. մատնացույց անելով Նախիջևանի շրջանը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելու փաստը, առաջ քաշեց զավթողական մի նոր ծրագիր: Նոտայում ասված է, որ վերջերս Անկարայից հաղորդագրություն է ստացել, որում հատուկ ընդգծված է, որ Նախիջևանի տարածքը Թուրքիայի հովանավորության տակ վերցնելու բազմաթիվ պատճառների շարքում հատկապես կարևոր էր իմպերիալիստական պետությունների կողմից Թուրքիայի արևելյան նահանգների վրա հարձակման կանխարգելումը և «քանի որ Նախիջևանի տարածքը դրվել է Ադրբեջանի հովանավորության տակ համաձայն պայմանագրի, որ այս անգամ կնքվել է Ռուսաստանի և Թուրքիայի միջև, նա (Թուրքիայի կառավարությունը – Է. Զ.) հայտարարում է, որ հաշվի առնելով գոյություն ունեցող անհրաժեշտությունը, **իրեն պարտավորված է համարում պաշտպանել իր արևելյան սահմանները իմպերիալիստներից, իրականացնել Մակուի ռազմակալումը,** որը նա հարկադրված էվակուացրել էր իմպերիալիստական տերությունների ճնշման տակ»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Արևելքից եկող ո՞ր վտանգի մասին է խոսքը, ինչպես Նախիջևանի հարցի լուծման ժամանակ չէր ասվել, այնպես էլ այս նոտայում չի ասված, բայց առանց դրան էլ պարզ է, որ կողմերը նկատի են ունեցել Բրիտանական կայսրությունը: Բայց ո՛չ Թավրիզի նահանգում, ո՛չ Սալմաստում ու Խոյում, կամ էլ Մակուի հարևան որևէ այլ շրջանում, բրիտանական զորքեր չկային: Այդպիսիք (ոչ մեծ թվով) կային Իրաքում, որտեղից իսկապես կարելի էր ներխուժել հարավ-արևելյան Անատոլիա, եթե, իհարկե, նման ցանկություն լիներ: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ Անգլիայում նման ցանկություն չկար և դրան քաջատեղյակ էին Անկարայում: Վերջապես, եթե նույնիսկ Անգլիայում Թուրքիա ներխուժելու ցանկություն առաջանար, ապա ինչո՞ւ դա պետք է հեռավոր Մակուից իրականացնեին: Ավելի դյուրին չէ՞ր ափ ելնել Տրապիզոնում կամ որևէ այլ հարմար նավահանգստում և արագ շարժվել Անկարայի վրա: Մանավանդ, որ Թուրքիան ռազմական նավատորմ չուներ: Ուրեմն ո՞րն էր Մակուի խանությանը տիրանալու իրական նպատակը:

Նախ ասենք, որ քեմալական վերնախավի մոտ այդ մտադրությունը նոր չէր ի հայտ եկել, ինչպես նոտայում է ասված և կապ չուներ Նախիջևանի հարցի հետ: Այդ մասին նրանք մտածում էին դեռ այն ժամանակ, երբ կարծում էին, թե Նախիջևանը արդեն իրենցն է: Մակուն զավթելու Թուրքերի մտադրության մասին հայտնել էր Շահ-Թախթինսկին Ալեքսանդրապոլից Բաքու ուղարկած հեռագրում 1920թ. դեկտեմբերի 7-ին[1]: Այնպես որ խորհրդային ղեկավարության համար դա նորություն չէր, և նրանք չէին կարող չհասկանալ, որ Նախիջևանի դիմաց, Արաքսի մյուս ափին ընկած այդ կիսանկախ խանությունը[2] զավթելու Թուրքերի նպատակը ոչ թե ինչ-որ երևակայական վտանգից պաշտպանվելու ցանկությունն էր, այլ, – որ առավել հավանական է, – պանթուրքիզմի հեռահար նպատակների տեսակետից այդ խիստ կարևոր շրջանին տիրանալը:

Կարո՞ղ էին ռուսները համաձայնել Մակուն Թուրքերի կողմից զավթելուն: Թեև արխիվներում որևէ կոնկրետ բան չի պահպանվել, բայց մենք կարծում ենք, որ մերժել են: Նախ Ռուսաստանը Պարսկաստանի հետ հենց նոր (փետրվարի 26-ին) բարիդրացիական և եղբայրական հարաբերություններ պահպանելու մասին պայմանագիր էր ստորագրել[3] և իր դաշնակցի՝ Թուրքիայի կողմից Պարսկաստանի դեմ ուղղված ամեն մի քայլ վերջինս կդիտեր որպես պայմանագրի խախտում: Բացի այդ, Պարսկաստանի անվտանգությունը երաշխավորել էր

[1] ,,ДВП СССР", т. 3, стр. 598-599.

[2] Նույն տեղում, էջ 604:

[3] ,,Геноцид армян...", стр. 465.

[1] РГАСПИ, ф. 85, оп. 13, д. 143, л. 1-2.

[2] Շահական Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող խանությունների կիսանկախ վիճակը պայմանավորված էր կենտրոնական իշխանության թուլությամբ:

[3] Տե՛ս ,,ДВП СССР", т. 3, М. 1959, стр. 536-544.

նաև Անգլիան, հետևապես Մակուի գավթումը կարող էր առաջ բերել նրա միջամտությունը և նաև լարվածություն ռուս-անգլիական հարաբերություններում: Եվ վերջապես, ինչպես արդեն նշել ենք, դեռևս Թուրք-հայկական պատերազմի շրջանում խորհրդային ղեկավարության մոտ ձևավորվել էր կարծիք, որ չի կարելի թույլ տալ, որ Թուրքիան ընդհանուր սահման ունենա Ադրբեջանի հետ:

Ինչպես վերը նշեցինք, մարտի 14-ի և 16-ի նիստերում կոնֆերանսը հիմնականում զբաղված էր երկու կողմերի ներկայացրած պայմանագրի նախագծերի քննարկումով և առանձին հոդվածների վերջնական ձևակերպումով: Բայց դա էլ հեշտ ու հանգիստ չէր ընթանում, Թուրք պատվիրակներն անընդհատ նորանոր ուղղումներ էին առաջարկում, որի հետևանքով քննարկումներն ավելի ու ավելի ձգձգվում էին: Լինում էին նաև չնախատեսված դեպքեր ու քննարկումներ, երբ Թուրքերը առաջ էին քաշում առանձին հարցեր, փորձում խոսել թելադրողի դիրքերից, պահանջում անհապաղ լուծումներ: Այդպիսի դեպք տեղի ունեցավ մարտի 14-ի նիստում: Նիստը սկսելուն պես նախագահող Յուսուֆ Քեմալը հայտարարեց, որ ինքը գաղտնի հուշագիր պետք է հրապարակի, ուստի խնդրում է կարճ ժամանակով դահլիճում մնան միայն պատվիրակները (նիստին հրավիրված էին նաև փորձագետները): Հաջորդ օրը՝ մարտի 15-ին, Ստալինին ուղարկած նամակում հայտնելով կատարվածի մասին, Չիչերինը գրում է, թե ըստ էության այդ գաղտնի հուշագրի բովանդակությունը հանգում է նրան, որ «անցած տարի մենք նրանց հիասթափեցրել ենք, նրանց քիչ ենք տվել: ...Ակներև է, որ գործը հանգում է նրան, թե ինչքան մենք կտանք»: Չիչերինը նաև տեղեկացնում է, թե հուշագրում խոսվում է նաև իրենց բաժանելու Անտանտի ձգտումների, Անկարայի որոշ շրջանների տրամադրությունների մասին և ավելացնում, թե Թուրքերը գտնում են, որ «թանկ է ամեն ժամը, անհրաժեշտ է անմիջապես շոշափելի արդյունքի հասնել»[1]:

Անշուշտ, մեր խնդիրը չէ մանրամասնությունների մեջ մտնել տնտեսական խնդիրների շուրջ վարած բանակցությունների և այդ հարցում կողմերի դիրքորոշումների մասին: Միայն հակիրճ նկատենք, որ այդ հարցը պակաս կոնֆլիկտային չէր: Չիչերինի արտահայտությամբ օգնության հարցը վեր էր ածվել փորձաքարի: Թուրք պատվիրակները շատ համառ էին իրենց պահանջների մեջ: Տարածքային հարցերը հեշտությամբ իրենց օգտին լուծելով՝ նրանք այնուհետև եռանդուն կերպով ձեռնամուխ եղան տնտեսական խնդիրներին՝ պահանջելով զենք, զինամթերք, ոսկի: Ըստ որում, Թուրքերը ուղղակի աստղաբաշխական թվեր էին ներկայացնում[1] և չբարարվելով ռուսական կողմի բանավոր խոստումներով՝ ամեն գնով ձգտում էին գրավոր պարտավորություն կորզել: Մարտի 10-ին Ստալինին ուղարկած նամակում Չիչերինը հայտնում է, որ «Թուրքական պատվիրակությունը հայտարարել է, որ իմպերատիվ մանդատ ունի կնքելու գրավոր և ոչ թե բանավոր համաձայնագիր՝ մեր կողմից նրան զենքով և ոսկով օգնելու մասին» և ավելացնում, թե ինքը համոզված է, որ նրանք դա հիմա են հորինել, քանի որ նախկին հանդիպումներում և բանակցություններում այդ մասին խոսք չէր եղել: Նաև տեղեկացնում է, թե քանի որ մենք նրանց պահանջածի չափ զենք տալ չենք կարող, ուստի պնդում են, որ նրանց մեծ գումար տանք (150 մլն. ռուբլի ոսկով), որպեսզի իրենք այդ զենքը ձեռք բերեն[2]:

Ուշագրավ էր Չիչերինի դիրքորոշումը. իր կառավարության անունից օգնության խոստումներ անելով՝ նա միաժամանակ խուսափում էր կոնկրետ թվեր օգտագործելուց ու նաև վճռականորեն մերժում գրավոր պարտավորության մասին ամեն մի պահանջ: Նույն կերպ էր վարվել նաև մարտի 14-ի նիստում, ինչի մասին վկայություն կա Ստալինին ուղարկած մարտի 15-ի նամակում:

Մարտի 16-ի նիստում հարցերն արդեն լուծված էին, պայմանագիրն արդեն պատրաստ էր ստորագրելուն, պատրաստ էին նաև այդ կապակցությամբ փոխանակվող նոտաները: Այդ օրը Չիչերինը նաև Թուրքական պատվիրակությանը հայտնեց, որ կօգնեն զենքով ու զինամթերքով և նաև կտրամադրեն 10 մլ. ռուբլի ոսկով, որի կեսը կտրվի Բաթումից Թուրքական ջոկատի հեռանալուն պես, մյուս կեսը՝ ավելի ուշ:

Թուրք պատվիրակները չառարկեցին Չիչերինին, բայց նաև պայմանագիրը չստորագրեցին: Իսկ հաջորդ օրը նորից վերադարձան տնտեսական օգնության խնդրին՝ հայտարարելով, թե խոստացած օգնությունը քիչ է և պահանջեցին անպայման գրավոր հայտարարու-

[1] „Геноцид армян...", стр. 453.

[1] Ըստ ռազմական փորձագետների ներկայացրած պահանջի՝ շուրջ 100 հազ. հրացան, 600 գնդացիր, 24 ինքնաթիռ և այլն:

[2] Տե՛ս Рем Казанджян, „Вся правда о договоре еще впереди", Голос Армении, 26 апреля 2001 г.:

թյուն անել: Երկար վիճաբանությունները արդյունք չեն տալիս, Թուրքերը համառում են և առաջ քաշում պայմաններ՝ առանց որոնց բավարարման պայմանագիրը չեն ստորագրի: Այդ նույն օրը (17-ին) Լենինին հասցեագրած նամակում Չիչերինը այդ պայմանները հետևյալ կերպ է ձևակերպել.

«1. Ես պետք է խոստանամ, որ մի քանի տարվա ընթացքում մենք կտանք տարեկան 10 միլիոն,

2. Նրանք համաձայն են, որ զենքի մասին գրավոր հայտարարություն չլինի, բայց պնդում են մի քանի տարի տարեկան 10 միլ. տալու մասին գրավոր հայտարարության վրա, ըստ որում կարելի է գրել, որ դա երկրի տնտեսական վերականգնման համար է: Դա թշնամական ակտ չի լինի Անգլիայի դեմ, որն ինքն է նրանց վարկ առաջարկում: Այդ փողը պետք է զենքի համար, քանի որ մենք քիչ ենք տալիս, իսկ զենքը անհրաժեշտ է Անտանտից պաշտպանվելու համար:

Ամեն ինչ պատրաստ է ստորագրելու համար, պայմանագիրը կստորագրենք վաղը երեկոյան, բայց մինչև ստորագրելը նրանք ինձնից պիտի ստանան այդ թուղթը...»[1]:

Չիչերինը Լենինին տեղեկացնում է, թե Թուրք պատվիրակներն իրեն հայտնել են, որ Անկարան Լոնդոնում վարկեր ստանալու հնարավորություն ունի և որ այդ գրավոր հայտարարությունը պետք է «մեղմիսը հանգստացնելու և հակառակորդների բերանը փակելու համար»: Վերջում ավելացնում է, որ ինքը կողմնակից է այդպիսի մի թուղթ տալուն, քանի որ ամենամյա վարկավորումը ապագայի գործ է, մինչդեռ մեր օրերում ոչ մի բան կայուն չէ: Չիչերինը նաև խնդրել էր պատասխանել նույն օրը մինչև երեկոյան ժամը 6-ը, որպեսզի հասցնի նախապատրաստել հայտարարությունը և չհետաձգի պայմանագրի ստորագրումը, որը «կթվագրվի 16-ով, երբ մենք դեռ չգիտենք Կրասինի կողմից Անգլիայի հետ պայմանագրի ստորագրման մասին»[2]:

Սակայն այդ օրը Չիչերինը պատասխան չստացավ: Հարցը մտցվեց Քաղբյուրո, որի նիստը նշանակված էր մարտի 18-ին: Քննարկման դրվեց «Թուրքիայի մասին ընկ. Չիչերինի նամակը» և միաձայն որոշվեց «համաձայնել ընկ. Չիչերինի կարծիքի հետ»:

Այսպես Թուրքերը հաղթանակ տարան նաև այս հարցում: Չիչերինը, որ ընդամենը երեք օր առաջ՝ մարտի 14-ի նիստում, հոխորտալից

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

հայտարարել էր, թե «գրավոր պարտավորության մասին կարող եմ կտրականապես հայտարարել, որ կառավարությունը դրան չի գնա», ու այդ մասին խիստ հայտնել էր Ստալինին, այդ նույն Թուրք պատվիրակների ճնշման տակ հարկադրված եղավ անձամբ խնդրել Լենինին բավարարելու նրանց պահանջը: Քաղբյուրոյի նիստի նույն օրը՝ մարտի 18-ին պայմանագիրը, որը մեծադղորդ կերպով անվանել էին «բարեկամության և եղբայրության մասին», վերջապես ստորագրվեց, որը սակայն ինչպես արդեն նշել ենք, թվագրվեց մարտի 16-ով՝ Լոնդոնում Կրասինի ստորագրած համաձայնագրի ամսաթվով՝ կարծելով, թե դրանով կհամոզեն Անգլիային, որ կնքելով ռուս-թուրքական պայմանագիրը, իրենք դեռևս տեղյակ չէին Լոնդոնի համաձայնագրի ստորագրման մասին: «Թուրքիայի հետ մեր պայմանագիրը ստորագրվել է Ձեր կողմից համաձայնագրի ստորագրման օրը, քանի որ չէինք սպասում, որ Ձեր բանակցություններն այդքան չուտ կավարտվեն, - գրում է Չիչերինը Լոնդոն՝ Կրասինին[1] ուղարկած մարտի 20-ի հեռագրում: - Այդ պայմանագրի գլխավոր բովանդակությունը տարածքային սահմանազատումն է, որը կապ չունի Անգլիայի հետ մեր համաձայնագրի հետ: Զէ՞ որ Անգլիան չի կարող մեզնից պահանջել, որ մենք հետ վերցնենք Կարսի և Արդահանի գիջումը Թուրքիային, կամ էլ մենք պատերազմ սկսենք Թուրքիայի հետ, իսկ տարածքային սահմանազատումն անհրաժեշտ է պատերազմը կանխելու համար»[2]: Չիչերինը նույն կերպ (մարտի 16-ին ստորագրված) է ներկայացրել արտասահմանում գործող իր բոլոր ներկայացուցիչներին ուղարկած հեռագրերում, այդ թվում՝ Մդիվանուն:

Ահա թե որքան կեղծ ու փարիսեցիական է եղել բոլշևիկյան դիվանագիտությունը դեռևս այն հեռավոր ժամանակներում, երբ ամենուրեք խոսում ու գրում էին գաղտնի պայմանագրերը հրապարակելու, բաց դիվանագիտություն վարելու, արդար ու աղնիվ քաղաքականության, ազգերի ինքնորոշման իրավունքը հարգելու մասին և այլն: Իրականում բոլշևիկներն այդ ամենը ավելի կոպտորեն էին ոտնահարում, քան եվրոպական «իմպերիալիստական» անվանված դիվանագետները: Ինչ վերաբերվում է մեզ հետաքրքրող պայմանագրին, ապա քանի որ այն միջազգային դիվանագիտության մեջ հայտնի է մարտի 16-ի

[1] Լ. Կրասինը ՌԽՖՍՀ առևտրական ներկայացուցիչն էր Լոնդոնում, բայց իրականացնում էր նաև քաղաքական գործառույթներ:

[2] „ДВП СССР", т. IV, М.1960, стр. 11.

ռուս-թուրքական պայմանագիր անվանումով, և այլ ամսաթվի (մարտի 18) օգտագործումը կարող է թյուրիմացության տեղիք տալ, ուստի մենք ևս այդպես կանվանենք:

Ռուս-թուրքական պայմանագիրը բաղկացած է ընդարձակ պրեամբուլայից և 16 հոդվածներից: Պայմանագիրն ունի նաև երեք հավելվածներ: Պայմանագրի ստորագրումից հետո կողմերի միջև նոտաների փոխանակում կատարվեց փոխադարձ պարտավորությունների մասին (մեկը մյուսին տեղյակ պահել տարվող քաղաքականության ընդհանուր ուղղության մասին, օտար պետությունների հետ չկնքել այնպիսի պայմանագրեր, որոնք կարող են հակասել մյուս կողմի շահերին և այլն): Ստորագրվեց նաև առանձին համաձայնագիր, ըստ որի՝ Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային անվարձահատույց կերպով տրամադրում էր 10 մլ. ռուբլի ոսկով և օգնում զենքով:

Անիմաստ համարելով պայմանագրի բոլոր հոդվածների առանձին-առանձին քննարկումը, քանի որ այն դուրս է մեր հետապնդած խնդրի շրջանակներից, հակիրճ նշենք, որ չեղյալ էին հայտարարվում նախկինում կնքված բոլոր այն պայմանագրերը և միջազգային ակտերը, որոնք պարտադրվել էին պայմանավորվող կողմերին: Խորհրդային կառավարությունը հրաժարվում էր ցարական Ռուսաստանի Թուրքիայում ունեցած բոլոր արտոնություններից, կապիտուլյացիաների ռեժիմը վերացված էր հայտարարվում: Պայմանագրում հոդվածներ կային նաև Սև ծովի և Նեղուցների հարցի լուծման, երկաթուղային և փոստ-հեռագրական հաղորդակցության, հյուպատոսական համաձայնությունների կնքման մասին և այլն[1]: Թուրքիայի համար առանձնակի կարևորություն էր ստանում նաև ռազմագերիների և քաղաքացիական գերիների փոխանակության հարցը (հոդվ. 13): Ռուսաստանը պարտավորվում էր բոլոր թուրք ռազմագերիներին և քաղաքացիական գերիներին իր հաշվին հայրենադարձնել՝ հասցնելով նրանց մինչև Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը, Եվրոպական Ռուսաստանից և Կովկասից 3 ամսվա, իսկ Ասիական Ռուսաստանից՝ 6 ամսվա ընթացքում (սկսած պայմանագիրը ստորագրելու օրվանից)[2]: Սա մեծ օգնություն էր Անկարային, քանի որ կարճ ժամանակամիջոցում նրա բանակը կհամալրվեր տասնյակ հազարավոր զինվորներով:

Ընթերցողին առանձնապես կհետաքրքրեն պայմանագրի առաջին երեք հոդվածները (և նրանց համապատասխան հավելվածները), որոնք վերաբերում են տարածքային սահմանազատումներին և 15-րդը՝ որով Ռուսաստանը պարտավորվում էր քայլեր ձեռնարկել, որպեսզի Անդրկովկասյան հանրապետություններն անպայմանորեն ճանաչեն և Թուրքիայի հետ ապագայում կնքվելիք պայմանագրերում ընդունեն բոլոր այն հոդվածները, որոնք տեղ են գտել այս պայմանագրում և անմիջականորեն իրենց են վերաբերում: Այս հոդվածը թուրք պատվիրակների կողմից Ռուսաստանին պարտադրված քայլ էր, քանի որ տարածքային սահմանազատումներն այնքան անարդար էին, որ թուրքերը հիմք ունեին վախենալու, որ Հայաստանն ու Վրաստանը կարող են և ընդդիմանալ ու չընդունել գծված սահմանները:

Առաջին հոդվածում բացի Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանի նկարագրությունից (սկսվում է Բաթումից հարավ ծովափնյա Սարպ գյուղից, ձգվում դեպի արևելք՝ Վրաստանից Թուրքիայի օգտին անջատելով Բաթումի հարավային մասը և Արդվինի շրջանը, այնուհետև անցնում Արփաչայ և Արաքս գետերի հնահունով ու հասնում մինչև Ներքին Կարասու գետը, որով Թուրքիային են անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը), տեղ է գտել նաև Թուրքիա հասկացության բնութագրությունը (Թուրքիա ասելով կողմերը հասկանում են այն տարածքը, որ մտցված է Թուրքական Ազգային ուխտի մեջ) և Ռուսաստանի համաձայնությունը՝ չճանաչել Թուրքիայի վերաբերյալ որևէ միջազգային ակտ, որը չի ընդունվում Թուրքիայի ազգային կառավարության կողմից: Խոսքը, անշուշտ, Սևրի պայմանագրի մասին է:

Երկրորդ հոդվածն ամբողջովին վերաբերում է Բաթում քաղաքին և նրանից հյուսիս ընկած այն տարածքին, որ Թուրքիան համաձայնում էր թողնել Վրաստանին՝ պայմանով, որ բնակչությունը կօգտվի լայն ինքնավարությունից, կրոնական և մշակութային իրավունքներից, իսկ Թուրքիան էլ իրավունք կստանա օգտվելու ազատ տրանզիտից, Բաթումի նավահանգստից՝ առանց դրա համար հատուկ մաքսեր և տուրքեր վճարելու և այլն: Ինչ վերաբերում է երրորդ հոդվածին և I (c) հավելվածին, ապա այն ամբողջովին նվիրված էր Նախիջևանի հիմնախնդրին և քանի որ վերը արդեն ներկայացրել ենք, ուստի նորից չենք կրկնում:

[1] Նույն տեղում, հ. 3, էջ 597-602:
[2] Տես նույն տեղում, էջ 601:

* * *

Կոնֆերանսն ավարտվեց, կողմերը հանգստացած չունչ քաշեցին: Նրանցից յուրաքանչյուրը հավատացած էր, որ հաջողությունն իր կողմում է և աշխատում էր կնքված պայմանագիրը ներկայացնել որպես իր դիվանագիտական հաղթանակը: Ռուսները կարծում էին, թե Մոսկվայի պայմանագրով Թուրքիան ամուր կերպով կապել են իրենց սայլին և ապահովել երկար տարիների բարեկամություն ու համագործակցություն հակաիմպերիալիստական պայքարում: Արտասահմանում գործող իր պաշտոնական և ոչ-պաշտոնական ներկայացուցիչներին հասցեագրած գրություններում գործը հենց այդպես էր ներկայացնում Չիչերինը, արդարացնում Թուրքերին կատարած զիջումները (օրինակ, Ստոկհոլմ՝ Կերժենցևին ուղարկած հեռագիրը պայմանագրի ստորագրման արդեն հաջորդ օրը՝ մարտի 19-ին, Լոնդոն՝ Կրասինին հասցեագրած հեռագիրը մարտի 20-ին, անգլիացի լրագրողին (Ռենսոմին) տված հարցազրույցը մարտի 22-ին[1] և այլն):

Ցնծում էր Անկարան. կոնֆերանսից նա ավելին ստացավ, քան ակնկալում էր: Մարտի 21-ին Ահմեդ Մուհթարը Չիչերինին ուղարկած նոտայում իր անսահման գոհանակությունն էր հայտնում պայմանագրի ստորագրման կապակցությամբ և հայտարարում, որ դրանով հաջողությունների և ձեռքբերումների նոր դարաշրջան է սկսվում Թուրքիայի համար: Մարտի 30-ին խորհրդային տեղեկատվական բյուրոն Տրապիզոնից հաղորդում է, որ «պայմանագրի կնքումը մեծ խանդավառություն է առաջացրել Թուրք ժողովրդի մեջ» և որ ամեն քայլափոխի կարելի է լսել այսպիսի խոսքեր. «Հենց դրանում է կայանում Թուրքիայի և Թուրք ժողովրդի փրկությունը»[2]:

Իսկ ի՞նչ էր կատարվել իրականում, փորձենք ամփոփել:

1. Մոսկվայի պայմանագիրը քեմալական Թուրքիայի մեծագույն դիվանագիտական հաղթանակն էր: Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության էջերում հազիվ թե գտնվի նախադեպը, երբ պարտված ու ջախջախված երկրում նոր կազմավորված և իր գոյության համար օրհասական կռիվներ մղող մի կառավարություն իր կամքը թելադրի այն պետությանը, որից օգնություն և աջակցություն էր ակնկալում: Թվում էր, թե ձեռքերը պարզելուց և օգնություն խնդրելուց զատ Թուրքերը ուրիշ բան չպետք է անեին: Բայց ոչ, Մոսկվա ժամանած անատոլիական Թուրքիայի մի խումբ դիվանագետներ՝ տեսնելով, թե ինչ դյուրությամբ են խորհրդային ղեկավարները իրենց ճնշման տակ զիջում դիրքերը, բանակցություններում արհեստական ճգնաժամեր ու լարվածություն են առաջացնում, դրանց խզման երևույթականություն ստեղծում և ամեն գնով պայմանագիր կնքելու մոլուցքով բռնված բոլշևիկյան ղեկավարությանը հարկադրում աներևակայելի զիջումներ անել: Շատ թե քիչ կարևորություն ներկայացնող բոլոր հարցերը ի վերջո լուծվում են Թուրքերի օգտին: Նրանց պահանջով խորհրդային պատվիրակության կազմից հանվում է Չիչերինի տեղակալը՝ հայազգի Կարախանը, լիազորությունների բացակայության կեղծ պատճառաբանությամբ մերժվում է Խորհրդային Հայաստանի պատվիրակության մասնակցությունը կոնֆերանսին և Թուրք-խորհրդային միացյալ կոնֆերանսը վեր է ածվում ռուս-թուրքական կոնֆերանսի, ճանաչել են տալիս Թուրքական Ազգային ուխտը, Հայաստանի և մասամբ Վրաստանի հաշվին ընդարձակում Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանները, հարկադրում են Նախիջևանը հանձնել Ադրբեջանի հովանավորությանը, ստանձնել գրավոր պարտավորություն ռազմատեխնիկական ու ֆինանսական ամենամյա օգնություն ցույց տալու մասին և այլն: Նույնիսկ Բրեստում Թուրքերն այնքան չէին ստացել, որքան այստեղ: Եվ այդ բոլորը միայն մի բանի համար՝ պահել Թուրքերին իրենց կողմում, կանխել նրանց հնարավոր անցումը Անտանտի լագեր, որն, ի դեպ, 1921թ. սկզբի պայմաններում, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, բոլորովին էլ իրատեսական չէր:

2. Մոսկվայի կոնֆերանսը և կնքված պայմանագիրը խորհրդային դիվանագիտության ամենախայտառակ, ամենանվաստացուցիչ ու ձախողված դրվագներից է:

Մոսկվայի պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի խայտառակ գործարքն էր Հայաստանի և Վրաստանի թիկունքում, ավելի խայտառակ, քան նույնիսկ Մյունխենյան գործարքն է, քանզի եթե Մյունխենում ագրեսորին հագուրդ տալու համար զոհաբերում էին համարյա ամբողջությամբ գերմանացիներով բնակեցված Սուդետական մարզը, ապա Քեմալին զոհաբերած Կարսի մարզում պատկերը միանգամայն այլ էր: Մինչև Թուրքական ներխուժումները այստեղ էթնիկ ամենամեծ խումբը հայերն էին, Թուրքերը չնչին տոկոս ունեին, նույնիսկ մահմե-

[1] Տե՛ս „ДВП СССР", т. IV, М.1960, стр. 11, 13-14.

[2] Նույն տեղում, էջ 48:

դականները (Թուրքեր, քրդեր, Թաթարներ և այլն) ազգաբնակչության բացարձակ մեծամասնություն չեն կազմել[1]: Իսկ դա նշանակում է, որ Ռուսաստանի բոլշևիկյան կառավարողները չատ ավելի վաղ էին բռնել միջազգային իրավունքի հանրահայտ նորմերը ոտնակոխ անելու ուղին: Մոսկովյան գործարքը Մյունխենյան գործարքի նախադեպն էր:

Չիչերինի գլխավորած պատվիրակությունը նվաստացուցիչ դրության մեջ էր հայտնվել: Նա զրկվել էր ինքնուրույնությունից և փաստորեն Ստալինի, Շահթախթինսկու ու Թուրք պատվիրակների միջև անդրկուլիսյան բանակցություններում կայացված համաձայնությունները սրբագրելու ֆունկցիա էր միայն կատարում: Չիչերինի նախաձեռնությունները, կամքի դրսևորման փորձերը դեմ էին առնում Թուրք պատվիրակների դիմադրությանը, որոնք հետո բողոքով դիմում էին Ստալինին և նրա միջամտությամբ հարցերը լուծում իրենց օգտին: Խորհրդային ղեկավարությունը բանակցություններում ճկունություն չդրսևորեց, նպատակին հասնելու համար դիվանագիտական հնարքներ ու միջոցներ չգործադրեց: Միակ միջոցը, որ օգտագործում էր ցանկալի արդյունքի հասնելու համար, դա Թուրքական պատվիրակությանն ամեն ինչում ընդառաջելը, նրանց բոլոր պահանջները կատարելն էր:

Մոսկվայի կոնֆերանսը և կնքված պայմանագիրը խորհրդային դիվանագիտության ամենաաախողված դրվագների թվին է պատկանում, ավելի ձախողված ու ստորացուցիչ, քան նույնիսկ Բրեստ-Լիտովսկն էր: Որովհետև եթե Բրեստում թելադրողը հաղթական Գերմանիան էր, ապա այստեղ՝ հակաիմպերիալիստական զգեստ հագած և Ռուսաստանի օգնությամբ գոյատևող անատոլիական Թուրքիայի պատվիրակությունը: Մեծագույն զոհողությունների գնով կնքված պայմանագիրը չարդարացրեց խորհրդային ղեկավարության հույսերը: Շատ ժամանակ չէր անցել, երբ պարզվեց, որ Անկարան Մոսկվայի համար հավատարիմ դաշնակից չէ, որ նա գաղտնի բանակցություններ է վարում Անտանտի տերությունների հետ՝ նրա կողմն անցնելու հնարավորություններ փնտրում:

3. Մոսկվայի պայմանագրի կնքահայրը Ստալինն էր: Լենինի հանձնարարությամբ ստանձնելով իրավարարի դեր և փաստորեն մեկուսացնելով Չիչերինին, Ստալինը Թուրքական պատվիրակության հետ անդրկուլիսյան հանդիպումներում լուծում էր բոլոր վիճահարույց հարցերը (տարածքային, ֆինանսատնտեսական և այլն) հիմնականում Թուրքանպաստ դիրքերից և այնուհետև հանձնարարում Չիչերինին սրբագրել ձեռք բերված համաձայնությունները: Թուրք պատվիրակները խուսափում էին Չիչերինի հետ հարցերի քննարկումներից, բայց հաճույքով պահանջում էին հանդիպում Ստալինի հետ՝ վստահ, որ նա կընդառաջի իրենց: Պաշտոնական նիստերում միայն ճչտվում էին կայացված համաձայնություններին առնչվող հարցերը, տալիս համապատասխան ձևակերպումներ: Թուրք պատվիրակները, քաղաքական գործիչները և պատմաբանները, միակարծիք են այն հարցում, որ եթե չլիներ Ստալինի միջամտությունը, ապա հազիվ թե հնարավոր լիներ պայմանագրի ստորագրումը:

Թեև Ստալինի ու Թուրք պատվիրակների հանդիպումների մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել, և այն էլ միայն Թուրք հեղինակների մոտ, բայց դատելով բանակցությունների արդյունքներից, Ստալինը դիվանագիտական ունակություններով չի փայլել: Նա կամք ու համառություն է ցուցաբերել միմիայն Բաթումը Վրաստանին պահելու հարցում: Մնացած հարցերում Ստալինը հավատացել ու վստահել է Թուրքերի խոսքին, հեշտությամբ տեղի տվել, զիջել դիրքերը: Եվ այդ ամենը հանուն այն բանի, որ չձախողվի նրանց հետ պայմանագրի ստորագրումը, ինչը համարվում էր Անտանտի լագեր Անկարայի հնարավոր անցումը կանխելու անհրաժեշտ պայման: Ինքնահավան ու ինքնավստահ, իր համոզմունքների մեջ միշտ անկոտրում, նա երևակայել անգամ չէր կարող, որ Թուրք պատվիրակների հրամցրածը դիվանագիտական խաղեր են, որ նրանք կեղծում ու խաբում են և Ռուսաստանի վրա նայում որպես ժամանակավոր դաշնակցի, որին կարելի է կթել և այնուհետև թողնել: Պիտի անցնեին տասնամյակներ, որպեսզի «Ժողովուրդների հայրը» հասկանար, թե ինչ մեծ սխալ են թույլ տվել հայկական և վրացական տարածքները չռայլորեն բաշխելով Թուրքերին, պիտի փորձի պատժել նրանց, հետ բերել այն, ինչ այնպիսի թեթևամտությամբ զիջել էին, բայց ուշացած զղջումը արդյունք չտվեց: Թուրքերը իրենց դիվանագիտական հոտառությունը չէին կորցրել, նրանք վտանգը կանխազգացել էին և պատերազմի ավարտից երկու ամիս առաջ պատերազմ հայտարարել Գերմանիային: Ոչ մի կրակոց չէր արձակվել, բայց միևնույն է, ԱՄՆ-ի և Անգլիայի համար Թուր-

[1] Տես «Կովկասյան կալենդար», 1916, ՀԱԱ, ֆ. 4/114, ց 2, գ. 68, թ. 5.

քիան արդեն դաշնակից էր ու վայելում էր նրանց պաշտպանությունը:

4. Մոսկվայի կոնֆերանսում միայն մի զոհ կար: Դա Հայաստանն էր, որի փաստական բաժանումը Թուրքիան և Ռուսաստանը ավարտին հասցրին և պայմանագրային ընույթ հաղորդեցին: Լիազորությունների բացակայության կեղծ պատճառաբանությամբ մերժելով Ալ. Բեկզադյանի պատվիրակության մասնակցությունը կոնֆերանսին՝ Թուրք պատվիրակները Հայաստանին առնչվող բոլոր հարցերը Ստալինի օգնությամբ լուծեցին իրենց օգտին:

Ստալինի հայատյացությունն այնքան ակնհայտ էր, այնքան անթաքույց, որ Թուրք պատվիրակները հասկացել էին առաջին իսկ հանդիպումից և ամեն անգամ դիմում էին նրա օգնությանը՝ հենց որ Հայաստանին առնչվող հարցերում դժվարություն էր ծագում: Ստալինի միջոցով Չիչերինի տեղեկալ Կարսխանը հանվեց պատվիրակության կողմից, նրա օգնությամբ լուծեցին ոչ միայն Թուրքա-Հայաստանի, այլև Կարսի մարզի հարցը, նույնիսկ Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ 20 վերստանոց մի շերտ ՌԽՖՍՀ-ին թողնելու պահանջը, որ հենց ինքը՝ Ստալինն էր առաջ քաշել:

Ստալինը Թուրքերին ընդառաջեց նաև Նախիջևանի խնդրում՝ համաձայնելով, որ այդ հարցը լուծվի Շահթախթինսկու հետ բանակցություններում, քաջ գիտակցելով, որ այդ դեպքում Հայաստանի մասին խոսք լինել չի կարող:

Այդ ամենը կատարվեց Խորհրդային Հայաստանի թիկունքում: Ոչ՛ Հայաստանի իշխանություններին, ոչ՛ Մոսկվայում գտնվող Ալ. Բեկզադյանի պատվիարկությանը, ոչինչ չէր հաղորդվում կոնֆերանսի ընթացքի մասին: Հայաստանի պատվիրակության գոյության մասին ոչ ոք չէր հիշում, չէին հիշում նաև այն զեկուցագրերի մասին, որ պատվիրակությունը ներկայացրել էր Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը (Լենինին, Ստալինին, Չիչերինին, Կրեստինսկուն) և որոնցում առաջ էին քաշված հայ-թուրքական տարածքային սահմանազատման վերաբերյալ առաջարկություններ: Հայ պատվիրակներին չէին հիշում, նրանց հետ չէին խորհրդակցում նույնիսկ այն ժամանակ, երբ փորձագետները քարտեզի վրա սահմանագիծ էին անցկացնում և անհրաժեշտ էր լինում ճշտել սահմանի վրա գտնվող այս կամ այն գյուղի ազգային կազմը, նրա պատկանելիության նպատակահարմարությունը և այլն: Արդյունքում թույլ տրվեցին բազմաթիվ սխալներ, որ

հետո՝ Կարսի կոնֆերանսում, այդպես էլ ուղղել չկարողացան՝ Մոսկվայի պայմանագրից կառչած մնալու թուրքերի դիրքորոշման պատճառով:

5. Թեև Մոսկվայի կոնֆերանսի նախօրեին Նախիջևանի երկրամասը իրավական առումով դեռևս չէր դադարել Հայաստանի մաս լինելուց (Ադրհեղկոմը հանդիսավոր հռչակագրով այն ճանաչել էր Հայաստանի անբաժանելի մաս, Ալեքսանդրապոլի պայմանագիրը Խորհրդային Հայաստանը չէր ճանաչել, իսկ Նախիջևանի ազգաբնակչությանն ինքնորոշման իրավունք վերապահող Հայհեղկոմի հռչակագիրը դեռևս կյանքի չէր կոչվել), և Կովկասի ճակատագիրը տնօրինող բոլշևիկյան գործիչները (Ստալին, Օրջոնիկիձե, Կիրով) միանշանակ Նախիջևանը համարում էին Հայաստանինը, բայցևայնպես, կոնֆերանսում Նախիջևանի երկրամասի պատկանելիության հարցը լուծելիս Հայաստանի անունն անգամ չչոչափվեց և Ստալինի կամքով այդ հարցի լուծումը թողնվեց Թուրքական պատվիրակության հետ բանակցություններում Շահթախթինսկու հայեցողությանը՝ առանց վերջինիս որևէ կոնկրետ հրահանգավորում տալու (այդպես է Չիչերինին հասցեագրած նրա նամակում): Թե ինչու տարածքային բոլոր հարցերի վերաբերյալ իր վճռական դիրքորոշումն արտահայտած Ստալինը Նախիջևանի հարցում արդպես չի վարվում, միայն ենթադրել կարելի է: Ըստ երևույթին նա գիտեր, թե Շահթախթինսկու և թուրքերի գործարքը ինչով է ավարտվելու, բայց դրա պատասխանատվությունը ևս իր վրա վերցնել, հավանաբար, չէր ուզում, այն պարզ պատճառով, որ շատ ժամանակ չէր անցել այն օրից (չուրջ մեկ և կես ամիս) երբ հայտարարել էր, թե Նախիջևանը կլինի Հայաստանի կազմում:

6. Նախիջևանի երկրամասի պատկանելիության չուրջ թուրքական պատվիրակության հետ Շահթախթինսկու վարած բանակցությունների բովանդակությունը թանձր խավարի մեջ է: Այդ մասին որևէ հիշատակություն չկա ոչ թուրք, ոչ ադրբեջանցի հեղինակների մոտ: Նույնիսկ հայտնի չէ, թե այդ բանակցություններում քննարկվե՞լ է Նախիջևանը Ռուսաստանի հովանավորությանը հանձնելու Չիչերինի առաջարկությունը, թե՞ ոչ: Հայտնի չէ նաև, թե Նախիջևանը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելու վերաբերյալ թուրք-ադրբեջանական համաձայնությունը կայացել էր Բաքվո՞ւմ՝ Ադրբեջանի ղեկավարության հետ թուրք պատվիրակների հանդիպումների արդյունքում, թե՞ Մոսկվայում թուրքերի հետ Շահթախթինսկու բանակցու-

թյուններում: Մի բան անտարակույս է, Նախիջևանի հովանավորությունը երրորդ պետության չփոխանցելու մասին Ադրբեջանի վրա դրված պարտավորությունը Շահթախթինսկու մտքի արգասիքն էր: Նման հետևության համար հիմք կարող են ծառայել թե՛ Ադրհեղկոմի դեկլարացիայի նկատմամբ նրա վերաբերմունքը, թե՛ Օրջոնիկիձեին հասցեագրած նամակը և թե՛ ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած զեկուցագիրը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Նախիջևանի խնդիրը Կարսի կոնֆերանսում

Չիչերինի առաջ ծառացած խմդիրները. 1. Համոզել միջազգային հանրությանը, որ Թուրքիային արված տարածքային զիջումներն այլընտրանք չունեին, 2. Պարտադրել Անդրկովկասյան հանրապետություններին Մոսկվայի պայմանագրի հիմքի վրա պայմանագրեր կնքել Թուրքիայի հետ:

Հայաստանի խորհրդային ղեկավարության վերաբերմունքը Մոսկվայի պայմանագրի նկատմամբ: Ալ. Բեկզադյանի բողոք-նամակը Գ. Չիչերինին: Վերջինիս պատասխան գրությունները Ս. Տեր-Գաբրիելյանին և Բ. Լեգրանին: Հայկոմկուսի Կենտկոմի պլենումը հավանություն է տալիս Ալ. Բեկզադյանի պատվիրակության գործունեությանը, բայց նաև որոշում է նրա փոխարեն արտգործժողկոմի պաշտոնում նշանակել Ասք. Մռավյանին:

Նախապատրաստությունը Թուրքիայի հետ կոնֆերանսին: Հանրապետությունների ներկայացուցիչների Բաքվի մայիսի 7-ի խորհրդակցությունը: Կոնֆերա՞նս, թե՞ խորհրդակցություն. Հուսեյնովի և Բեկզադյանի բանավեճը: Խորհրդակցության որոշումները Թուրքիայի հետ կոնֆերանսում որպես մեկ միասնական կողմ հանդես գալու, Մոսկվայի պայմանագիրը որպես հիմք ընդունելու մասին և այլն: Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանագծի ճշտման խմդիրը, տեղացիների կարծիքը՝ հաշվի առնելու Շահթախթինսկու առաջարկության հեռահար նպատակը:

Նախիջևանին ամեն կերպ օգնելու Հայաստանի կառավարության դիրքորոշումը, աղահանքերի շահագործումը վերականգնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը: 15 միլ. ռուբլի վարկի տրամադրումը (մայիսի 31-ին), Մյասնիկյանի կողմից Նախիջևանին օգնելու հարցի բարձրացումը Կավբյուրոյի սեպտեմբերի 5-ի նիստում և 20000 ռ. ոսկով օգնությունը: Նախիջևանը Հայաստանի ազդեցությունից կտրելու Ադրբեջանի ղեկավարության ձգտումը և բողոքի գրությունները (հունիսի 12-ի և հոկտեմբերի 10-ի) Կավբյուրոյին՝ Հա-

յաստանի կողմից Նախիջևանի ներքին գործերին միջամտելու մասին:

Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի քննարկմանը ներկայացվելիք Հայաստանի կառավարության մեմորանդումը (հուշագիրը) և «Հայ-թուրքական պայմանագրի» նախագիծը: Նախիջևանի խնդիրը այդ երկու փաստաթղթերում: Եռանկյունի գոտու բաժանումը Հայաստանի և Նախիջևանի միջև: Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդհանուր սահմանի ապահովումը:

Կարսի կոնֆերանսը, սահմանագծային խնդիրները կոնֆերանսում: Հայկական պատվիրակության բոլոր պահանջների մերժումը թուրքերի կողմից: Նախիջևանի երկրամասի և «Եռանկյունի գոտու» բաժանման վերաբերյալ կայացված որոշումները:

Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարությունը չէր կարող չհասկանալ, որ «Բարեկամության և եղբայրության մասին» ռուս-թուրքական պայմանագիրն այնքան ապօրինի է, միջազգային իրավունքի տեսակետից այնքան խոցելի ու աննախադեպ, որ հարկ կլինի մեծ ջանքեր գործադրել կատարվածը արդարացնելու և միջազգային հանրության առաջ չքմեղանալու համար: Այստեղից էլ այն խնդիրները, որ կառավարությունը դրել էր Արտգործժողկոմատի առաջ.

1. Համոզել թե՛ իր դաշնակիցներին և թե՛ միջազգային հանրությանը, որ Թուրքիային կատարած տարածքային զիջումներն այլընտրանք չունեին, որ այդ կերպ միայն կարելի էր խուսափել մշտական պատերազմներից Կովկասում:

2. Պարտադրել Կովկասի խորհրդային հանրապետություններին Մոսկվայի պայմանագրի հիմքի վրա համապատասխան պայմանագրեր կնքել Թուրքիայի հետ և դրանով իսկ ամբողջացնել թուրք-խորհրդային հարաբերությունները:

Նախորդ գլխում արդեն նշել ենք, որ պայմանագրի ստորագրման արդեն հաջորդ օրերին Չիչերինը մի շարք գրություններ էր ուղարկել Լոնդոնի, Ստոկհոլմի, Անկարայի ռուսական ներկայացուցիչներին, որոնցում հայտնում էր պայմանագրի ստորագրման մասին, ներկայացնում այդ ակտի քաղաքական նշանակությունը, մեկնաբանում նրա առանձին հոդվածներ՝ հատկապես տարածքային սահմանազատման: Հասկանալի է, որ նպատակը միայն տեղեկատվական չէր: Ներկայացուցչությունները պետք է համապատասխան քարոզչական աշխատանք տանեին և հասարակական կարծիք ստեղծեին: Բայց դրանով

Չիչերինը չի բավարարվում, նա անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում թե՛ իսլամի աշխարհի համակրանքը շահելու, թե՛ եվրոպական մամուլի էջերում որոշակի քարոզչություն ծավալելու ուղղությամբ: Մարտի 20-ին Արևելքի ժողովուրդների «Քարոզչության և գործողության խորհուրդը», որի նստավայրը Բաքուն էր, հատուկ կոչով դիմում է Արևելքի ժողովուրդներին, մեկ առ մեկ ներկայացնում ստորագրված պայմանագրով Ռուսաստանի կողմից Թուրքիային արված զիջումները, շեշտում դրանց նշանակությունը ռուս և թուրք ժողովուրդների միջև դարավոր թշնամանքի վերացման ու եղբայրական կապերի հաստատման գործում և ավելացնում, թե Խորհրդային Ռուսաստանը այդ զիջումներին գնաց հանուն արդարության, նրա համար, որ մեկընդմիշտ վերջ տրվի Արևելքի ժողովուրդների երկպառակությանը և նրանց միավորի մեկ բարեկամական ընտանիքում[1]: Ու ոչ մի խոսք չի ասվում այն մասին, որ այդ զիջումները արվել են մեկ այլ ժողովրդի՝ հայ ժողովրդի ազգային շահերի զոհաբերման գնով:

Եվրոպայի հասարակական կարծիքի շոշափման և մամուլում նպաստավոր նյութերի զետեղման առումով ուշագրավ փաստաթուղթ է Գերմանիայում Խորհրդային Ռուսաստանի Արտգործժողկոմատի և Արտաքին առևտրի ժողկոմատի ներկայացուցիչ Կոպպին հասցեագրած Չիչերինի մարտի 20-ի նամակը[2]: Ներկայացնելով արևելյան քաղաքականության բնագավառում խորհրդային քաղաքականության հաջողությունները (պայմանագրերի կնքումը Իրանի, Աֆղանստանի, Թուրքիայի հետ), Չիչերինը առավելապես կանգ է առնում ռուս-թուրքական պայմանագրի վրա, Կարսի և Արդահանի հանձնումը թուրքերին՝ մեկնաբանում Անտանտի լագեր քեմալականների հնարավոր անցումը կանխելու և Կովկասում խաղաղություն հաստատելու դիրքերից, խնդրում անպայման տեղեկացնել հայտնի հրապարակախոսին[3] իրադրության լուսաբանության համար նյութեր ստանալու իր ցանկության մասին:

Նամակում Չիչերինը մի ուշագրավ դիտարկում էլ է անում: Խոսելով Թուրքիայի հետ տարածքային սահմանազատման հարցում ծագած դժվարությունների, Կարսը և Արդահանը զիջելու անխուսափելիու-

---

[1] *Տե՛ս „Геноцид армян...” т. 2, ч. 1, էջ. 469:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 469-471:*

[3] *Նամակում հրապարակախոսի անունը նշված չէ՝ հավանաբար գաղտնիության նկատառումով:*

թյան մասին՝ հանկարծ նա ավելացնում է, թե **«առանց Բաթումը Վրաստանին և Նախիջևանը Ադրբեջանին հանձնելու, Թուրքիայի հետ ոչ մի խաղաղություն հնարավոր չէր լինի»**: Չիչերինը դա համարում է ամենաէական ձեռքբերումը, որին իրենք կարողացան հասնել ու ստեղծում տպավորություն, թե հակառակ պարագայում պատերազմն անխուսափելի էր: «Սահմանը Արփաչայով ու Արաքսով անցկացնելը նույնպես ծանր զոհաբերություն է, – գրում է Չիչերինը, – **ըստ որում հայ կոմունիստներն այդ պայմանները նոր Բրեստ են անվանում»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Որ հայ կոմունիստները ճիշտ գնահատական են տվել, գուցե և ավելի մեղմ գնահատական՝ Հայաստանի տարածքային կորուստների տեսակետից (Սուրմալուի գավառը Բրեստի պայմանագրով չէր անցնում Թուրքիային), դա անվիճելի է: Դժբախտաբար, Չիչերինն անուններ չի տալիս և այդպես էլ անհայտ է մնում, թե ե՞րբ և ովքե՞ր են տվել այդ գնահատականը: Զէ՞ որ պայմանագրի ստորագրումից ընդամենը երկու օր էր անցել և այդ ընթացքում որևէ ղեկավար հայ գործիչ Չիչերինին չէր հանդիպել: Մնում է ենթադրել, որ աղբյուրը Բեկզադյանի պատվիրակությունն է, որը թեև կոնֆերանսին չէր մասնակցում, բայցևայնպես նրա ընթացքի մասին որոշ տեղեկություններ էր ստանում ռազմական էքսպերտ Բորրիչչևից: Այդ մասին վկայություն կա Ադրբեջանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ամբարեկովին ուղարկած Ալ. Բեկզադյանի մարտի 18-ի նամակում[2]: Հնարավոր է, որ հենց Բորրիչչևն էլ հայ պատվիրակներից լսած կարծիքը փոխանցել է Չիչերինին: Իսկ կնքված պայմանագրի կապակցությամբ Չիչերինին հասցեագրած բողոք-նամակը Բեկզադյանը ներկայացրել է չուրջ մեկ ամիս հետո՝ ապրիլի 15-ին: Թե ինչու այդքան ուշ (կոնֆերանսի նյութերը Բեկզադյանը ստացել էր կոնֆերանսի ավարտից անմիջապես հետո, իսկ Կովկաս հասել էր մարտի 31-ին), որոշակիորեն հայտնի չէ, թեև հնարավոր է, որ այդ ժամանակամիջոցում Բեկզադյանը փորձել է ստանալ Հայհեղկոմի կարծիքը: Ավելորդ չենք համարում նաև նշելու, որ բողոքի վերաբերյալ փաստաթղթերի թվագրման հարցում որոշ անհամապատասխանություն կա: Այսպես, արխիվային մի փաստաթղթում, որ թվագրվում է ապրիլի 11-ով և ամենայն հավանականությամբ ռադիոգիր է՝ վերնագրված «Ամբարեկովին, Շավերդովին՝

[1] Տե՛ս „Геноцид армян...", էջ. 470:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 68, թ. 25-26:

Հայաստանի հեղկոմի համար», Բեկզադյանը հայտնում է. «...կոնֆերանսից մեր պատվիրակությանը հեռացնելու և Թուրքիայի հետ պայմանագրի ծանր պայմանների կապակցությամբ մեր կողմից բողոք է ներկայացված, որն, իհարկե, պրակտիկ նշանակություն չի ունենա»[1]: Թե նշված փաստաթղթերից որի թվագրումն է ճիշտ, դարձյալ մնում է անհայտ:

Ինչևէ, անդրադառնալով բողոքին, նախ ասենք, որ այն բավականին ընդարձակ ու հիմնավորված մի փաստաթուղթ է, որում Բեկզադյանը ռուսական պատվիրակությանը մեղադրում է Հայաստանի հաշվին Թուրքիային տարածքային մեծ զիջումներ անելու, Թուրք պատվիրակների հակահայկական հայտարարություններին հակահարված չտալու, Հայաստանի պատվիրակությանն ամբողջովին մեկուսացնելու, նրա հետ չխորհրդակցելու ու նրան չլսելու մեջ՝ անգամ այն դեպքում, երբ քննարկվել են Հայաստանին առնչվող հարցեր: «Հայկական պատվիրակությունը, – գրում է Բեկզադյանը, – չի կարող լռության մատնել այն փաստը, **որ առանց նրա գիտության, մասնակցության ու համաձայնության քեմալական Թուրքիային զիջելով մի շարք հայկական տարածքներ, ռուսական պատվիրակությունը դրանով իսկ ոտնահարել է Խորհրդային Հայաստանի ճանաչված իրավունքները** և ծանր հարված է հասցրել նշված երկրի աշխատավոր զանգվածների կենդանի մարմնին»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Թվում է, թե այս վճռական բողոքին պետք է հետևեր հայտարարություն այն մասին, որ Հայաստանը չի ճանաչի Մոսկվայի պայմանագրով գծված սահմանները: Բայց դա տեղի չի ունենում, Բեկզադյանը շարունակում է մեղադրել ռուսական պատվիրակությանը անսկզբունքայնության և անհետևողականության մեջ, որպես օրինակ վկայակոչում է Նախիջևանի ու Շարուր-Դարալագյազի հարցը, ցույց տալիս, որ ռուսական պատվիրակությունը չի ցուցաբերել անհրաժեշտ հաստատակամություն և թույլ է տվել, որ Թուրքերը հանդես գան այդ շրջանի մուսուլմանների հովանավորի դիրքերից և հարցը լուծեն հօգուտ կրոնակից Ադրբեջանի: «Հայաստանի Խորհրդային Հանրապետության սուվերեն իրավունքների խախտումը չի կարող արդարացվել Արևելքում հեղափոխության գործի շահի մատնանշումով» – հայտարարում է Բեկզադյանը և շարունակում. «Կոնֆերանսի արձանա-

[1] ՀԱԱ, ֆ.114, ց. 1, գ. 85, թ. 3:
[2] Տե՛ս „Геноцид армян...", էջ. 496:

գրություններից կարելի է բերել մի չարք հղումներ (տե՛ս մարտի 10-ի և 12-ի արձանագրությունները), որոնք անառարկելիորեն ապացուցում են, որ ռուսական պատվիրակությունը ոչ միայն հաշվի է նստել Վրաստանի սուվերեն իրավունքների և Ադրբեջանի սուվերեն իրավունքների հետ այս կամ այն տարածքի նկատմամբ, այլև նրանց վերցրել է իր հովանավորության տակ և չափավորել է քեմալականների չափից ավելի գրգռված ախորժակը: **Ինչո՞ւ մենք դա չտեսանք անմիջականորեն Հայաստանին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ: Կարսի հարցը կոնֆերանսում ընդհանրապես չի դրվել»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Սրանք այն ամենը չեն, ինչ բովանդակված է Բեկզադյանի բողոքնամակում: Նրանում խոսվում է նաև ռուսական պատվիրակության մի չարք այլ սխալների ու թերությունների մասին: Բայց մենք դրանց վրա կանգ չենք առնի, նախ թեմայից շատ չշեղվելու և հետո համոզված ենք, որ վերը նշվածներն էլ բավական են այդ փաստաթղթի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար: Միաժամանակ ավելորդ չենք համարում նշելու, որ Բեկզադյանի բողոքի բովանդակությունից դժվար չէ կռահել, որ նա ստացել էր կոնֆերանսի ոչ բոլոր նյութերը (օր. տարածքային սահմանազատման վերաբերյալ Ստալինի՝ Զիչերինին ուղարկած մարտի 6-ի նամակը, Շահթախթինսկու և Զիչերինի միջև փոխանակված մարտի 6-ի և 7-ի գրությունները և այլն): Այդպես մտածելու հիմք է տալիս ու այն, որ Բեկզադյանն իր քննադատությունն ամբողջովին ուղղում է Զիչերինի դեմ ու ոչինչ չի ասում հիմնական դերակատարների մասին, և՛ նաև այն, որ Հայաստանի ազգային արխիվում Մոսկվայի կոնֆերանսի նյութերից առկա են միայն քաղաքական հանձնաժողովի արձանագրությունները:

Զիչերինը չէր կարող լռությամբ անցնել ներկայացված մեղադրանքների կողքով, նա պետք է հերքեր Բեկզադյանին, փորձեր ստեղծել տպավորություն, թե դիվանագիտական ծանր ու երկարատև պայքարի արդյունքում են կատարվել տարածքային զիջումները: Նա պարտավոր էր դա անել ոչ միայն թե՛ իրեն և թե՛ իր կառավարությանը պատմության առաջ արդարացնելու, այլև Հայաստանում կրքերի հնարավոր բորբոքումը կանխելու համար: Զէ՞ որ չէր բացառվում, որ Հայաստանի խորհրդային ղեկավարությունը, չնայած հանրապետության քաղաքական ու տնտեսական ծայրահեղ ծանր վիճակին, կարող

[1] Նույն տեղում, էջ 497:

էր հրաժարվել մոսկովյան պայմանագրով գծված սահմանները ճանաչելուց: Մինչդեռ ապրիլյան այդ նույն օրերին Զիչերինը արդեն եռանդուն աշխատանք էր ծավալել պայմանագրի 15-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ, այն է՝ ապահովել կովկասյան հանրապետությունների կողմից իրենց վերաբերող պայմանների ընդունումը: Դա առավելապես հենց Հայաստանին էր վերաբերում:

Բեկզադյանի հետ անձամբ բացատրվելու հնարավորություն չունենալով (նա արդեն մեկնել էր Մոսկվայից), Զիչերինը որոշում է գործել դիվանագիտական խողովակներով: Ապրիլի 21-ին նա մի նամակ է ուղարկում Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին, իսկ հաջորդ օրը՝ 22-ին ընդարձակ հեռագիր Հայաստանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լեգրանին: Երկուսն էլ նվիրված են Բեկզադյանի ներկայացրած բողոքին և բովանդակության առումով իրարից բոլորովին չեն տարբերվում: Զիչերինը ոչ միայն վճռականորեն մերժում է իրեն հասցեագրած մեղադրանքը, այլև իր հերթին մեղադրանքներ է ներկայացնում Բեկզադյանին: Խոսելով այն մասին, որ տարածքային զիջումները բոլորովին էլ ոչնչով չարդարացված նվեր չեն Թուրքիային, այլ ամենադաժան և երկար պայքարի արդյունք, Զիչերինը շարունակում է. «Դա չէր կարող անհայտ լինել հայկական պատվիրակությանը, քանի որ նրան հայտնվել է այդ պայքարի ելևէջների մասին: Նրան ավելին կհայտնվեր, եթե նա այն ժամանակ չխուսափեր ինձ հետ կապերից: Չնայած ինձ մոտ գալու և ինձ հետ կոնտակտի մեջ լինելու իմ պարզորոշ առաջարկին, հայկական պատվիրակությունը չգիտես ինչու դա չարեց և հարաբերությունն ինձ հետ վերսկսեց բավականին ուշ միայն, երբ գլխավոր հարցերն արդեն լուծված էին...»[1]:

Սա լուրջ մեղադրանք է, մանավանդ, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ Զիչերինը դրանով իսկ կատարվածի համար պատասխանատու է դարձնում նաև հայկական պատվիրակությանը: Բայց արդյո՞ք արդարացի էր Զիչերինը այդ մեղադրանքների հարցում: Դժբախտաբար նա չի ասում, թե ինչպե՞ս կամ ո՞ւմ միջոցով են հայ պատվիրակներին տեղեկություններ հաղորդել բանակցությունների ընթացքի մասին: Մնում է այդ բացը լրացնելու համար դիմել Բաքվում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ա.Թաբեկովին

[1] Նույն տեղում, էջ 499: Տե՛ս նաև **Գ. Գալոյան**, նշվ. աշխ., էջ 457:

ուղարկած Բեկզադյանի մարտի 18-ի հայտնի նամակին: «Այդ կոնֆերանսի ընթացքի մասին, որը մինչև այժմ ունեցել է 3 նիստ (ըստ որում՝ վերջինը պետք է լիներ երեկ), մենք մասնավոր կերպով տեղեկացել ենք Արտգործժողկոմատի միջոցով ՌԽՖՍՀ ռազմական փորձագետ ընկ. Բոբրիշչևի միջոցով, որին մենք սիստեմատիկ կերպով նյութեր ենք մատակարարել սահմանների և Հայաստանի ու Թուրքիայի միջև այդ սահմանների անցկացման ամենահնարավոր տարբերակների մասին, – գրում է Բեկզադյանը: – Առայժմ մեզ հայտնի է, որ թուրքերը գնահատելով իրենց օգտավետ դրությունը (նրանք պահանջել են նույնիսկ Բաթումը), մաքսիմալ պահանջներ են դնում, այդ թվում՝ Կարսը մարզի հետ, Բաթումի մարզը Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններով ու Սուրմալուի գավառը, բացի դրանից հսկայական քանակությամբ ոսկի...»[1]:

Ինչպես տեսնում ենք, Բեկզադյանը շատ բան չգիտեր և չէր էլ կարող իմանալ, քանի որ Բոբրիշչևը ընդամենը փորձագետ էր և չէր կարող տեղեկություններ ունենալ ինչպես անդրկուլիսյան բանակցությունների, այնպես էլ այն նիստերի մասին, որոնց չէին հրավիրում մասնակցել: Այդ ամենի, ինչպես նաև անդրկուլիսյան բանակցություններին «ազդեցիկ ընկերների» մասնակցության մասին հայ պատվիրակները իմացան միայն Ս. Տեր-Գաբրիելյանին Չիչերինի ուղարկած նամակից: Այնպես, որ Չիչերինը մեղանչում է իրականության դեմ՝ գրելով, թե Բեկզադյանն այդ ամենին տեղյակ էր: Բայց մի հարցում Չիչերինն, այնուամենայնիվ, արդարացի էր: Խոսքը հայ պատվիրակների պասսիվության մասին է: Ինչ խոսք, որ նրանք չպետք է նստեին ու սպասեին հրավերի, այլ պետք է օգտագործեին բոլոր հնարավորությունները (լեգալ, անլեգալ) քննարկվող հարցերի մասին տեղեկություններ հավաքելու և կապերի մեջ մտնելու ոչ միայն ռուսական պատվիրակության, այլև բոլոր այն գործիչների հետ, ովքեր այս կամ այն կերպ առնչվում էին բանակցություններին: Օրինակ, Բեկզադյանը քաջատեղյակ էր, որ Ադրբեջանի ներկայացուցիչ Շահթախթինսկին ոչ միայն ծանոթ է թուրք պատվիրակներին, այլև Մոսկվայում նրանց հետ գաղտնի բանակցություններ է վարում: Բայց փորձե՞լ է գոնե մի անգամ հանդիպել նրան ու ինչ-որ գաղտնիքներ կորզել: Կամ փորձե՞լ է հանդիպել թուրք պատվիրակներին՝ թեկուզ Չիչերինի կամ Կարախանի օգնությամբ, թուրք-հայկական անթիվ կնճռոտ հարցերի գոնե

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ. 68, թ. 26:

մի մասի հարցում նրանց տրամադրությունը պարզելու նպատակով: Թե՞ հետևելով Լևոն Շանթին, չի ցանկացել մեր ժողովրդի թշնամիների հետ նույն սեղանի չուրջը նստել, ինչը, անշուշտ, դիվանագետին վայել վարքագիծ չէր լինի:

Մենք համոզված ենք, որ Բեկզադյանն այդ ուղղությամբ քայլեր չի ձեռնարկել, այլապես նրա նամակներում գոնե մի ակնարկ կլիներ: Նա նաև չի պատասխանել Չիչերինի մեղադրանքներին: Ճիշտ է, 1921թ. մայիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի պլենումում, որին մասնակցում էին Մյասնիկյանը, Լուկաշինը, Մռավյանը, Երզնկյանը և ուրիշներ, Բեկզադյանը զեկուցել է Մոսկվայում իր գլխավորած պատվիրակության գործունեության մասին, բայց կազմված արձանագրությունն այնքան հակիրճ է, որ մեզ հետաքրքրող հարցում պարզություն չի մտցնում: Ուշագրավ է, որ թեև պլենումը հավանություն է տվել պատվիրակության գործունեությանը, բայց նաև այդ նույն նիստում որոշել է Բեկզադյանի փոխարեն Արտգործժողկոմի պաշտոնում նշանակել Ասքանազ Մռավյանին[1] (Բեկզադյանը մնում էր որպես պարենավորման և արտաքին առևտրի ժողկոմ):

Անցնելով ՌԽՖԱՀ արտգործժողկոմատի առաջ ծառացած երկրորդ խնդրին, ավելորդ չենք համարում սկզբից ևեթ չեշտելու, որ նրա իրագործման հարցում Չիչերինը ցուցաբերեց առավելագույն եռանդ ու հետևողականություն: Եվ դա հասկանալի է. Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը Ռուսաստանի կառավարության վրա ծանր պարտավորություն էր դրել՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր Կովկասյան հանրապետությունների կողմից իրենց վերաբերող կետերի անվերապահ ընդունումն ապահովելու համար: Ահա ինչու շուտով Կովկասը ողողվեց չիչերինյան հեռագրերով ու նամակներով: Նա չվարանեց նաև Անդրկովկասյան հանրապետությունների մոսկովյան ներկայացուցիչների մասնակցությամբ պայմանագրերի նախագծեր մշակել և բացատրական գրությունների ու Մոսկվայի կոնֆերանսի արձանագրությունների հետ մեկտեղ ուղարկել Թիֆլիս՝ հուսալով, որ տունդարձի ճանապարհին թուրքական պատվիրակությունը հենց այդտեղ էլ համապատասխան պայմանագրեր կկնքի բոլոր երեք հանրապետությունների հետ:

Չիչերինը նախապես հոգ էր տարել, որ Կովկասի խորհրդային հանրապետություններն ինքնագործունեությամբ չզբաղվեն և կնքվե-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 13, փ. 2, թ. 2:

լիք պայմանագրերում այնպիսի դրույթներ չամրագրեն, որոնք Ռուսաստանի համար անցանկալի կլինեն: Իսկ դրան կարելի էր հասնել կուսակցական կարգապահության պարտադրանքով: Ապրիլի 1-ին Չիչերինը նամակով դիմում է Լենինին, հայտնում, որ Թուրքերը կփորձեն կովկասյան հանրապետություններին սեպարատ պայմանգրեր պարտադրելու միջոցով նրանցից կորզել այնպիսի զիջումներ, որ չեն ստացել ռուսներից և ավելացնում, թե որպեսզի դա կանխվի «անհրաժեշտ է, որ Թուրքերի հետ առաջիկա բանակցությունների ժամանակ կովկասյան խորհրդային հանրապետությունները գործեն իրար հետ չափազանց համախմբված և մեզ հետ լիակատար կոնտակտի մեջ: Մինչդեռ երկյուղել կարելի է, որ այդ առումով ամեն ինչ չէ, որ բարեհաջող կարող է լինել՝ մասնավորապես Ադրբեջանի կողմից»[1]: Ելնելով դրանից, Չիչերինն անհրաժեշտ է համարում, որ Ռ(բ)Կ կենտկոմը վճռական որոշում ընդունի, որով կովկասյան հանրապետություններին կպարտավորեցնի Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերի նախագծերը նախապես ներկայացնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը և ստանալ նրա հավանությունը:

Լենինը Չիչերինի այս առաջարկությունը համարում է «անվիճելի» և հանձնարարում Մոլոտովին (Կենտկոմի քարտուղար) անմիջապես կապվել Քաղբյուրոյի անդամների հետ, ստանալ նրանց կարծիքը և դրական արդյունքի դեպքում անհապաղ ծածկագրով հաղորդել բոլոր երեք հանրապետություններին: Ապրիլի 3-ին Լենինի հանձնարարությունն արդեն կատարված էր[2]:

Չիչերինը չտապում էր, և պատճառը հասկանալի է. Յուսուֆ Քեմալի պատվիրակությունն իր առաքելությունը ավարտված համարելով՝ պատրաստվում էր մեկնել Մոսկվայից: Տունդարձի ճանապարհն անցնում էր Անդրկովկասով, և Չիչերինն ուզում էր, որ Թիֆլիսում գումարվի Թուրք-անդրկովկասյան կոնֆերանս, Մոսկվայի պայմանագրի հիմքի վրա կնքվեն համապատասխան պայմանագրեր բոլոր երեք հանրապետությունների հետ, որով և Թուրք-խորհրդային հարաբերությունները կամրողջանան: Դրա համար էլ չսպասելով իր առաջարկության վերաբերյալ Լենինի պատասխանին՝ իսկույն Մոսկվայում գտնվող վրաց գործիչների մասնակցությամբ Թուրք- վրացական պայմանագրի նախագիծ է մշակում, բացատրական գրություններ կազմում

[1] *„Геноцид армян...", стр. 478.*

[2] *Ուշագրավ է, որ Քաղբյուրոյի անդամներից միայն Տրոցկին էր ձեռնպահ մնացել:*

բոլոր այն խնդիրների վերաբերյալ, որոնք՝ ի տարբերություն Թուրք-վրացական պայմանագրի, տեղ պետք է գտնեին Թուրք-հայկական և Թուրք-ադրբեջանական պայմանագրերում:

Ապրիլի 4-ին Օրախելաշվիլին Մոսկվայից ռադիոգրեր է ուղարկում Թիֆլիս՝ Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Շավերդովին և տեղեկացնում. «...ուղարկում եմ. 1. Քաղվածքներ Մոսկվայի ռուս-Թուրքական կոնֆերանսի արձանագրություններից՝ Անդկովկասի խորհրդային հանրապետությունների ինքնիշխանության մասին: 2. Թուրքիայի հետ պայմանագրի նախագիծը Չիչերինի բացատրական գրության հետ մեկտեղ»[1]: Օրախելաշվիլին նաև հայտնում է, որ Չիչերինի հետ զրույցի ընթացքում բավականին շատ է խոսվել Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին, որ Չիչերինը մի քանի անգամ ընդգծել է, որ Թուրքերի հետ բանակցություններում պետք է «աներեր պահանջկոտ» լինել Ալեքսանդրապոլի պայմանագրի վերացման հարցում և որ Ռուսաստանը ոչինչի առաջ կանգ չի առնի, որպեսզի Թուրքերին հարկադրի հրաժարվելու այդ պայմանագրից:

Բացատրական գրությունները առավել հանգամանալից ներկայացված են Օրջոնիկիձեին՝ Օրախելաշվիլու հասցեագրած ռադիոգրում: Նրանում տեղ են գտել թե՛ հայ-Թուրքական և թե՛ Թուրք-ադրբեջանական պայմանագրերի հարցում չիչերինյան մոտեցումներն ու առաջարկությունները[2]: Մենք դրանց վրա չենք ծանրանա, թեմայից շատ չշեղվելու համար, այլ կանդրադառնանք միայն այն գրություններին, որոնցում շոշափվում է Նախիջևանի հարցը: Բայց նախ ասենք, որ հայ-Թուրքական պայմանագրի հարցում Չիչերինն առանձնապես կարևոր էր համարում այնպիսի կետերի առկայությունը, ինչպիսիք են նախկինում կողմերի միջև կնքված պայմանագրերի չեղյալ հայտարարման, սուվերենության փոխադարձ հարգման, ներման, գերիների վերադարձման մասին և այլն: Չիչերինը հատկապես երկար է կանգ առնում Ալեքսանդրապոլի պայմանագրի հարցի վրա, ըստ որում՝ համարյա բոլոր գրություններում: Մեջբերենք մի հատված Օրախելաշվիլու միջոցով Օրջոնիկիձեին ուղարկած ռադիոգրից. «Հայաստանի համար առանձին նշանակություն է ստանում նախկին բոլոր պայմանգրերի վերացման մասին հոդվածը, որով վերանում է նաև մինչև այժմ Թուրքիայի կողմից ճանաչվող Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ռուս-

[1] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 47:*

[2] *Տե՛ս նույն տեղում, թ. 47-50:*

Թուրքական կոնֆերանսի ժամանակ մենք միլիոն անգամ հայտարարել ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չենք ճանաչում, *և եթե Թուրքերը առաջ քաշեն այն, պետք է ամենավճռական կերպով հայտարարել, որ նա ուժի մեջ չէ:* ***...Ալեքսանդրապոլի պայմանագիրը այնքան հրեշավոր է, որ նրա ամեն մի մատնանշում պետք է ամենակտրուկ հակահարված ստանա,*** *կարելի է հայտարարել, որ Ռուսաստանյան հանրապետությունը ոչ մի բանի առաջ կանգ չի առնի, եթե Ալեքսանդրապոլի պայմանագիրը ճանաչելու համար Հայաստանին ստիպելու փորձը կրկնվի...»*[1] *(ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Մենք չիչերինյան տողերն ընդգծեցինք, որպեսզի ընթերցողն էլ տեսնի ու համոզվի, որ ինչպես կոնֆերանսում Հայաստանին առնչվող մի շարք հարցերի կապակցությամբ Բեկզադյանի բողոքի դեմ գրություններում, այստեղ ևս Չիչերինը մեղանչում է իրականության դեմ՝ գրելով, թե «ռուս-թուրքական կոնֆերանսի ժամանակ մենք միլիոն անգամ հայտարարել ենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չենք ճանաչում»: Նախորդ գլխում արդեն տեսանք, որ այդ մասին խոսք եղել էր միայն նախակոնֆերանսյան հանդիպման և կոնֆերանսի առաջին նիստի ժամանակ, բայց Թուրքերի վճռական բողոքից հետո հետագայում այդ հարցին այլևս չեն անդրադարձել: Վերջապես, ի՞նչ է նշանակում «չենք ճանաչում», եթե Հայաստանի սահմանները որոշելիս հիմք են ընդունվում Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանները: Չէ՞ որ եթե այդ պայմանագիրը «հրեշավոր» էր, իսկ դա իսկապես այդպես էր, ապա դա նախ և առաջ վերաբերում էր հաստատված սահմաններին, որոնցով երկիրը ծվեն-ծվեն էր արվել, նրա տարածքները խլվել էին, ռազմական տեսակետից դարձել անպաշտպան, իսկ տնտեսական տեսակետից անկենսունակ: Բայց ինչպես երևում է, Չիչերինը «հրեշավոր» ասելով նկատի ուներ միմիայն սուվերենության այն սահմանափակումները, որոնք տեղ էին գտել Ալեքսանդրապոլի պայմանագրում: Մինչդեռ ազգի կենսունակության հիմքը տարածքն է և ոչ թե սուվերեն իրավունքների այս կամ այն սահմանափակումները, որոնք, որպես կանոն, անցողիկ ու ժամանակավոր են լինում:

Անցնելով ապրիլյան այդ օրերին Նախիջևանի հարցի արծածումներին, նախ արձանագրենք, որ Չիչերինն այդ խնդրին անդրադարձել է ոչ միայն հայ-թուրքական պայմանագրի նախագծի կապակցությամբ

[1] *Նույն տեղում, թ. 47 շրջերես:*

գրված բացատրական գրությունում, այլև Ադրբեջանի արտգործժողկոմ Հուսեյնովին ուղարկած հրահանգներում: «Երբ վճռվեց, որ Նախիջևանը անցնում է Ադրբեջանի հովանավորության տակ, – գրում է Չիչերինը Հուսեյնովին, – Թուրքերը Նախիջևանի մարզի սահմանը որոշեցին ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի, այսինքն՝ Նախիջևանի օգտին ընդգրկեցին Երևանի մարզի հարավային եռանկյունի գոտին: Ռազմական փորձագետների սխալմունքի պատճառով, առանց մեր գիտության, դա ընդունվել էր սահմանի մասին ռազմական փորձագետների հատուկ հանձնաժողովում: Դրա համար էլ, երբ հարցը նորից անցավ կոնֆերանս, միակ բանը, որ մենք կարող էինք անել, դա հարավային եռանկյունի հատվածում սահմանի ուղղության բողոքարկելն էր: Երկար պայքարից հետո որոշվեց, որ Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի (ներկայացուցիչների – Է. Զ.) հանձնաժողովը վերջնականապես կճշտի սահմանն այդ վայրում...»[1]*:*

Նախորդ գլխում՝ Մոսկվայի կոնֆերանսի աշխատանքները վերլուծելիս, մենք արդեն տեսանք, թե ինչպես ծագեց և ինչ ընթացք ստացավ այդ «Եռանկյունի գոտի» կոչված տարածքի խնդիրը և կարող ենք հավաստել, որ Չիչերինն իսկապես անթերի է ներկայացնում խնդրի ծագումը: Դա իրոք այդպես է. Քաղաքական հանձնաժողովի մարտի 10-ի և 12-ի նիստերում նա իսկապես եռանդուն կերպով բողոքեց այդ տարածքը Նախիջևանի սահմանների մեջ մտցնելու դեմ և հասավ նրան, որ հարցի վերջնական լուծումը թողնվեց խառը հանձնաժողովի վերջնական որոշմանը: Բայց դրա հետ մեկտեղ Չիչերինը ոչինչ չի բացատրում և դրանով իսկ չի փարատում ընթերցողի տարակուսանքը, թե ինչո՞ւ բացառապես Հայաստանի հաշվին Թուրքերին կատարած մեծամեծ զիջումներում (Կարս, Արդահան, Սուրմալու և այլն), որոնք, ի դեպ, դարձյալ ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի են կատարվել, ռուսական պատվիրակությունը, փաստորեն, ծպտուն չհանեց, չբողոքեց ու սահմանագծի ամենաչնչին ուղղում չպահանջեց Հայաստանի համար խիստ կարևորություն ներկայացնող մի որևէ հատվածում (օր. Անիի ավերակների, Կողբի աղահանքերի և այլն), իսկ այստեղ՝ Հայաստանի և Նախիջևանի սահմանագլխին ընկած այդ մի փոքր տարածքի պատկանելիության հարցում նման ակտիվություն ցուցաբերեց: Ինչ խոսք, որ բոլոր կողմերից խուզված և նվազագույնի հասցված սահմաններում կծկված Խորհրդային Հայաստանի համար ամեն մի թիզ

[1] *„Геноцид армян...", стр. 492.*

հողատարածքն էլ էական նշանակություն էր ստանում և մենք պարտավոր ենք երախտիքի խոսք ուղղել Չիչերինին՝ Թուրքերի կողմից որոշակի նկատառումով Նախիջևանին միացրած Երևանի գավառի հարավ-արևելյան «Եռանկյունի գոտին» Հայաստանին վերադարձնելու հարցում ցուցաբերած հետևողականության համար:

Բայց արդյո՞ք Չիչերինին հենց Հայաստանի շահն էր հետաքրքրում, արդյո՞ք նա չէր կեղծում՝ Նախիջևանի արևմտյան սահմանի փոփոխման իր պահանջի հիմքում դնելով «Եռանկյունի գոտին» Երևանի գավառի մաս լինելու, կամ էլ Ադրբեջանի նախկին կառավարության կողմից այդ տարածքի վրա չհավակնելու փաստը: Անշուշտ, կեղծում էր ճիշտ այնպես, ինչպես կեղծում էր Յուսուֆ Քեմալը կոնֆերանսի Քաղաքական հանձնաժողովի մարտի 12-ի նիստում՝ հայտարարելով, թե այդ հարցը խիստ կարևոր է Թուրքիայի արևելյան սահմանների պաշտպանության տեսակետից, թե ինքը վստահ է, որ Ադրբեջանը ստանձնելով այդ տարածքի հովանավորությունը ևս, ամեն ինչ կանի, որպեսզի կատարի իր պարտքը Թուրքիայի, Ռուսաստանի և ողջ մարդկության առաջ: Մինչդեռ այդ վերամբարձ ոճի տակ թաքնված էր չատ հեռահար նպատակներ հետապնդող գաղափարախոսություն՝ պանթուրքիզմը, որն անհրաժեշտաբար պահանջում էր ապահովել ընդհանուր սահմանի առկայություն Ադրբեջանի հետ: Իսկ ստեղծված իրադրության պայմաններում դա կարելի էր իրականացնել միմիայն Նախիջևանի միջոցով: Բավական է մի հայացք նետել քարտեզին, դրանում համոզվելու համար: Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով տեր դառնալով Սուրմալուի գավառին, որի վարչական սահմանը Արաքսի աջ ափով ձգվում էր մինչև պարսկական սահմանը (մինչև Ստորին Կարա-սու գետը), Թուրքիան դրանով իսկ Նախիջևանի երկրամասի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորություն էր ստացել: Բայց դա կարող էր իրականանալ միայն այն դեպքում, եթե Նախիջևանի երկրամասի կազմում ընդգրկվեր ոչ միայն Շարուրի գավառակը, այլև Արաքսի ձախ ափով Գայլի Դրունքից դեպի արևմուտք տարածվող (մինչև Արարատ կայարան) Երևանի գավառի հարավային այն հատվածը, որը խորհրդա-թուրքական դիվանագիտական շրջանակներում սկսել էին անվանել «Եռանկյունի գոտի»:

Կռահե՞լ էր Չիչերինն այդ գոտու պատկանելիության հարցում թուրքական դիվանագիտության հետին ծալքերում թաքնված իրական նպատակը: Անշուշտ, կռահել էր, այլապես այդպիսի համառություն չէր ցուցաբերի: Ասենք, Կովկասում գործող բոլշևիկյան ղեկավար գործիչների համար Ադրբեջանի հետ ընդհանուր սահման ունենալու

թուրքերի մտադրությունը բոլորովին էլ գաղտնիք չէր: Թուրք-հայկական պատերազմի վերջին շրջանում թե՛ Ստալինը, թե՛ Օրջոնիկիձեն իրենց գրություններում չոչափել էին այդ խնդիրը և միանշանակ չեշտել, որ չի կարելի թույլ տալ, որ Թուրքիան Ադրբեջանի հետ ընդհանուր սահման ունենա: Չիչերինի նման թրծված դիվանագետը չէր կարող այդ մասին պարզորոշ արտահայտվել ո՛չ կովկասյան իր կոլեգաների (հատկապես ադրբեջանցի) և ո՛չ առավել ևս՝ Թուրքերի հետ: Նա պետք է խնդրի լուծման այլ միջոց գտներ: Ահա, օրինակ, ինչ է գրում Չիչերինը այդ կապակցությամբ Հուսեյնովին ուղարկած հրահանգում. «Նախկինում, երբ Շահթախթինսկին մեզ հետ խոսում էր Նախիջևանի մասին, նա Նախիջևանի մարզի ծայրագույն սահմանը համարում էր Գայլի Դրունքը: Մինչդեռ Եռանկյունի գոտին՝ այսինքն Երևանի մարզի հարավային եռանկյունի մասը, ընկած է Գայլի Դրունքից դուրս, այսինքն՝ հեռու նրանից, ինչին հավակնում էր Շահթախթինսկին»[1]:

Եթե Չիչերինի այս հրահանգը չլիներ, ապա այդպես էլ չէինք իմանա, որ ինչ-որ մի ժամանակ Հայաստանի թիկունքում, Շահթախթինսկին և Չիչերինը բանակցություններ են վարել, ինչի մասին ոչ մի հիշատակություն չի պահպանվել: Ափսոս միայն, որ Չիչերինը չի կոնկրետացնում, թե երբ էր դա տեղի ունեցել, կոնֆերանսի նախօրեի՞ն, թե՞ ավելի վաղ, չի ասում նաև, թե ինչով են դրանք ավարտվել: Դրա փոխարեն Հուսեյնովին հանձնարարում է անմիջապես նախնական քննարկում կազմակերպել, պարզել Ադրբեջանի կարծիքը և հայտնել իրեն: Նա գտնում է, որ պետք է Հայաստանի և Նախիջևանի միջև անցկացվելիք սահմանը նախապես որոշել, որպեսզի իրենք իմանան, թե ինչ առաջարկությամբ են Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները ներկայանալու Թուրքիայի մասնակցությամբ եռյակ հանձնաժողովին: Չիչերինը Հուսեյնովից պահանջում է այդ հարցը քննարկել նաև Հայաստանի ու Վրաստանի իր կոլեգաների հետ և ապահովել այդ սահմանի մասին ընդհանուր համաձայնություն, որպեսզի հնարավոր լինի եռյակ հանձնաժողովում այն պաշտպանել:

Ինչպես տեսնում ենք, Չիչերինը լրջորեն մտահոգված էր «Եռանկյունի գոտին» Հայաստանին վերադարձնելու հարցով, թեև հայ-թուրքական պայմանագրի վերաբերյալ բացատրական գրությունում այդ մասին պարզորոշ չի արտահայտվում, այլ բավարարվում է նրանով, որ հատուկ ընդգծում է, թե թուրք-հայկական պայմանագրում պետք

[1] Նույն տեղում, էջ 492-493:

է առանձին հոդված լինի, որ «երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Եռանկյունի գոտու տարածքի, որն ընկած է հնահունի (Արաքսի – Է. Զ.)... և այլն, պատկանելիության հարցը պետք է լուծվի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի երրորդ հոդվածի որոշման համաձայն»[1]:

*Եթե հիշենք, որ բացատրական գրությունները կազմելիս Ադրբեջանի և Հայաստանի միջև եռանկյունու վերաբերյալ որևէ համաձայնության մասին խոսք լինել չէր կարող, ապա հեշտ կլինի հասկանալ նման հոդվածի մասին Զիչերինի առաջարկությունը: Բայց դատելով Բեկզադյանի ստացած որոշ հաղորդումներից (Հայհեղկոմի համար նախատեսված ռադիոգիրը Բաքու՝ Ա.Թաբեկովին և Թիֆլիս Շավերդովին, Բեկզադյանի հետ Ա.Թաբեկովի հեռախոսազրույցը), այդ հարցը չոչափվել է Զիչերինի հետ Բեկզադյանի հետկոնֆերանսյան հանդիպման (օրն անհայտ է) ժամանակ: Հայաստանի ազգային արխիվում պահվող այդ փաստաթղթերից պարզորոշ երևում է, որ թե՛ Զիչերինին և թե՛ Բեկզադյանին առավելապես անհանգստացնում էր Շահթախթինսկու գործոնը, մարդ, որը կարող էր խառնել խաղաքարտերը և խախտել նախնական պայմանավորվածությունը: Ռադիոգրում ուղղակի ասված է. «**Զիչերինի հետ մեկտեղ անհրաժեշտ եմ համարում, որ Ադրբեջանի ներկայացուցիչը, որը ոչ մի դեպքում Շահթախթինսկին չպետք է լինի,** Շարուր-Դարալագյազի հարցում քվեարկի մեր պատվիրակի հետ միասին»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Իսկ Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Ա.Թաբեկովը Բեկզադյանի հետ հեռախոսազրույցից հետո Մռավյանին ուղարկած գրությունում ավելի լայն մեկնաբանություն է տալիս՝ գրելով. «Բեկզադյանը և Զիչերինը անհրաժեշտ են համարում, որ Շարուր-Դարալագյազի շրջանի հարցերում Հայաստանը և Ադրբեջանը հանդես գան միասնաբար, **ըստ որում Շահթախթինսկու թեկնածությունը՝ եթե Ադրբեջանի կողմից այն առաջադրվի, պետք է վճռական կերպով մերժվի**»[3] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Չի կարող տարօրինակ չթվալ, որ Զիչերինը՝ դեմ լինելով Շահթախթինսկու թեկնածությանը, այդ մասին բացահայտ չի արտահայտվում, Ադրբեջանի ղեկավարության առաջ նման պահանջ չի դնում, այլ փորձում է Նախիջևանին առնչվող հարցերում նրա հետագա մասնակցությունը կասեցնել Հայաստանի ղեկավարության միջոցով: Սա մի կողմից վկայում է բոլշևիկյան ղեկավարության հիերարխիայում Զիչերինի դիրքերի թուլության[1], մյուս կողմից՝ Նախիջևանի հարցում Շահթախթինսկու գործունեությունից նրա դժգոհ լինելու մասին: Բայց կարո՞ղ էր Հայհեղկոմը Ադրբեջանի առաջ նման պահանջ դնել, և ի՞նչ պատճառաբանությամբ պիտի առարկեր Շահթախթինսկու թեկնածության դեմ: Բեկզադյանն այդ կապակցությամբ որևէ կոնկրետ բան չի առաջարկում Հայհեղկոմին, այլ ռադիոգրի վերջում միայն ավելացնում է. «Շահթախթինսկուն մերժելու որպես առիթ տես Զիչերինի գրությունը և իմ ծածկագրերի հաղորդումները»[2]:

Դժբախտաբար, մեզ մատչելի արխիվներում Բեկզադյանի մատնանշած փաստաթղթերից և ոչ մեկը հայտնաբերել չհաջողվեց: Անհայտ է մնում նաև այն, թե Հայհեղկոմը, այնուամենայնիվ, Շահթախթինսկու թեկնածության մերժման ուղղությամբ որևէ փորձ կատարե՞լ է, թե՞ ոչ: Կարծում ենք՝ չի կատարել, իսկ եթե կատարել է, ապա անհաջող, քանի որ Շահթախթինսկին, ինչպես հետագա շարադրանքում կտեսնենք, դարձյալ ակտիվ դեր է խաղացել ինչպես «Եռանկյունի գոտու» խնդրի լուծման գործում, այնպես էլ Կարսի կոնֆերանսում՝ որպես Ադրբեջանի պատվիրակության ղեկավար:

Ապրիլյան այդ առաջին օրերին անկատար մնաց Զիչերինի մի այլ հանձնարարությունը ևս, որի իրականացումը նա դարձյալ Հայհեղկոմի վրա էր դրել: Բանն այն է, որ այդ օրերին (փաստաթուղթը թվագրված չէ, բայց բովանդակությունից երևում է, որ տրվել է ապրիլի առաջին օրերին) Զիչերինը մի հեռագիր էր ուղարկել Մռավյանին, որում բառացիորեն ասված էր հետևյալը. «Յուսուֆ Քեմալը այսօր-վաղը կարող է գալ Թիֆլիս: Անհրաժեշտ է անհապաղ Թիֆլիսում կազմակերպել երեք հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, համախմբված հանդես գալու համար: Ես Թիֆլիս եմ ուղարկել պայմանագրի նախագիծ՝ երեք հանրապետությունների համար տարբերակներով, և մոսկովյան արձանագրություններն ու քարտեզները: Թուրքերը ձգտելու են կազմակերպել առանձին բանակցություններ Թիֆլիսում, Երևանում և Բաքվում: Հարկավոր է խափանել այդ պլանը և ամեն ինչ կազմակերպել Թիֆլիսում»[3]:

Մռավյանն իսկույն կատարում է Զիչերինի հանձնարարությունը,

---

[1] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 31:*
[2] *Նույն տեղում, ց. 1, գ. 85, թ. 3:*
[3] *Նույն տեղում, գ. 105, թ. 14:*

---

[1] *Գ. Զիչերինը բոլշևիկյան կուսակցությանն անդամագրվել էր միայն 1918թ.:*
[2] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 3:*
[3] *Նույն տեղում, գ. 105, թ. 13:*

համապատասխան հեռագրեր է ուղարկում Թիֆլիս և Բաքու (Օրախելաշվիլուն և Հուսեյնովին), ամբողջությամբ ներկայացնում Չիչերինից ստացած հեռագրի բովանդակությունը և իր կողմից ավելացնում. «Առաջարկում եմ հանրապետությունների խորհրդակցությունը կազմակերպել հնարավորինս շուտ, դեռ մինչև Թուրքերի գալը: Խորհրդակցության ժամանակը որոշեք և հաղորդեք: Սպասում եմ շտապ պատասխանի»[1]:

Սակայն խորհրդակցություն այդպես էլ չգումարվեց: Ի՞նչն էր պատճառը. արդյո՞ք այն, որ Թուրքերը սպասածից ավելի շուտ ժամանեցին Կովկաս, թե՞ մեկ այլ բան, դժվար է ասել: Հուսեյնովից ընդհանրապես լուր չստացվեց: Իսկ Օրախելաշվիլին Շահվերդյանին հայտնել էր, թե «Թուրքերի հետ կոնֆերանսից առաջ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների խորհրդակցության վերաբերյալ ես հեռագրալարով խոսել եմ Հուսեյնովի հետ: Այդտեղ, իհարկե, դա համարում են ինքնըստինքյան հասկանալի, բայց որոշ նկատառումներով (Բաքուն համարվում է Արևելքի հեղափոխական կենտրոնը) գտնում են, որ խորհրդակցությունը և ընդհանրապես Թուրքերի հետ բանակցությունները ավելի լավ է Բաքվում կազմակերպել...»[2]:

Ինչպես տեսնում ենք, ամբիցիաները այն ժամանակ էլ որոշակի դեր էին խաղում:

* * *

Անդրկովկասյան հանրապետություններին Թուրքիայի հետ կոնֆերանսին նախապատրաստելուն զուգընթաց ապրիլի առաջին օրերին Չիչերինը եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ նաև Խորհրդային Հայաստանի օկուպացված տարածքները Թուրքական զորքերից մաքրելու գործին: Մոսկվայում վերջապես հասկացել էին, որ Հայաստանն իրենց ձեռքում պահելու համար բավական չէ միայն զինագրավում, անհրաժեշտ է բարձրացնել խորհրդային իշխանության հեղինակությունը: Իսկ դրա համար պետք է անեին այն, ինչ չէին արել 1920թ. դեկտեմբեր – 1921թ. հունվար ամիսներին՝ բավարարվելով միայն խորհրդայնացած Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը փոխելու և իրենց մասնակցությամբ հայ-թուրքական նոր կոնֆերանս գումարելու պահանջով: Պետք է վճռական պահանջ ներկայացնեին

[1] Նույն տեղում, թ. 24:

[2] Նույն տեղում, ց. 2, գ. 63, թ. 47:

Թուրքերին՝ մաքրելու Խորհրդային Հայաստանի օկուպացված տարածքները և հետ քաշվելու սահմանից այն կողմ: Այժմ արդեն դրա համար իրավական հիմք էին տալիս Մոսկվայի պայմանագրով հաստատված սահմանները, ինչպես նաև այն փաստը, որ ապրիլի 2-ին Կարմիր բանակի զորամասերը նորից գրավել էին Երևանը: Առանձնապես կարևորվում էր Ալեքսանդրապոլի և նրա շրջակայքի մաքրումը Թուրքական զորքերից այն պարզ պատճառով, որ առանց դրա Երևանի հետ երկաթուղային կապն ապահովել հնարավոր չէր: Հայաստանը նախկինի պես կտրված կմնար արտաքին աշխարհից և բացի այդ, կխափանվեր Երևան մտած Կարմիր բանակի մատակարարումը: Եվ եթե մինչ այդ՝ փետրվարյան ապստամբության շրջանում (1921թ. փետրվարի 18 – ապրիլի 2), ոչ միայն Թուրքերից Արփաչայի մյուս ափն անցնելու պահանջ չէին դնում, այլև անուղղակի կերպով հասկացնում էին, որ քանի դեռ ապստամբությունը ճնշված չէ, Ալեքսանդրապոլը դատարկել պետք չէ, ապա այժմ արդեն դիվանագիտական ուժգին գրոհ սկսվեց Անկարայի վրա: Բավական է նշել, որ հինգ օրվա ընթացքում (ապրիլի 4-8-ը), Չիչերինը Թուրքական կառավարությանը փոխանցելու համար տարբեր հասցեներով (Բաքու՝ Օրջոնիկիձեին, Անկարա՝ դեսպան Մդիվանուն, Մոսկվա՝ դեսպան Ալի Ֆուադ փաշային) 7 հեռագիր ու նոտա է հղել, որոնց մեջ ոչ միայն Թուրքական զորքերը Արփաչայից այն կողմ հետ քաշելու պահանջ կար, այլև սպառնալիք՝ Թուրքական զորքերի հետ Կարմիր բանակի զորամասերի ընդհարման ծանր հետևանքների մասին: Այդպիսի բովանդակություն ուներ, օրինակ, ապրիլի 8-ին Թուրքական կառավարությանը հաղորդելու նպատակով Օրջոնիկիձեի միջոցով Մդիվանուն ուղարկված հեռագիրը և նույն օրը Ալի Ֆուադ փաշային հասցեագրած նոտան[1]:

Ինչ խոսք, որ Թուրքերը նախկինի պես փորձում էին ձգձգել Չիչերինի պահանջի կատարումը՝ պատճառաբանելով, թե Ալեքսանդրապոլի պայմանագրի, – որը դեռ ուժի մեջ էին համարում քանի դեռ նոր պայմանագիր չի կնքվել, – ոչ բոլոր կետերն են կատարվել Հայաստանի կողմից: Այսպիսի պայմաններում Ռուսական կառավարությունը որոշում է օգտագործել նաև Կարմիր բանակի գործոնը: Ապրիլի 13-ին 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Հեկկերը սպառնալից ռադիոգիր է ուղարկում Թուրքական բանակի հրամանատարությանը, որում հայտնում է, որ իր կառավարությունից հրաման է ստացել անհապաղ հսկո-

[1] Տե՛ս «ДВП СССР», т. IV, էջ. 53,55.

ղության տակ առնել Թիֆլիս–Երևան երկաթգծի՝ Թուրքերի կողմից օկուպացված մասը և զգուշացնում, որ եթե մոտ օրերը պատասխան չստանա Մոսկվայի պայմանագրով գծված սահմաններից այն կողմ Թուրքական զորքերի հետքաշման ժամկետների վերաբերյալ, ապա ստիպված կլինի իր զորքերին հրաման տալ այդ շրջանները զենքի ուժով գրավելու մասին[1]: Այս սպառնալիքը անհետևանք մնալ չէր կարող և ապրիլի 15-ին Անկարայի կառավարությունը Կարաբեքիրին հանձնարարեց մեկ շաբաթվա ընթացքում մաքրել Ալեքսանդրապոլը[2]: Թե ինչ ազդեցություն էր թողել Հեկկերի ռադիոգիրը Անկարայում, երևում է նրանից, որ Թուրքիայի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ահմեդ Մուհթարը Չիչերինին, Ստալինին, Օրջոնիկիձեին հաստեագրած ապրիլի 14-ի հեռագրում հիշեցնելով հանդերձ, որ 16-րդ հոդվածի համաձայն Մոսկվայի պայմանագիրը ուժի մեջ պետք է մտնի վավերացրած օրինակների փոխանակումից հետո միայն (բացի 13-րդ հոդվածից, որը վերաբերում էր Թուրք ռազմագերիների հայրենադարձությանը և ուժի մեջ էր մտնում ստորագրման օրվանից), և որ Հայաստանում ծագած ապստամբության շրջանում ռուսական կառավարությունը չէր ցանկանում օկուպացված շրջանների մաքրումը, ինչն ակնհայտ դարձավ Ալեքսանդրապոլի մաքրման մասին կեղծ լուրերի կապակցությամբ Ալի Ֆուադ փաշային արված հանդիմանությունից, այնուամենայնիվ ավելացնում է, թե մեկ շաբաթվա ընթացքում՝ սկսած ապրիլի 15-ից, Մոսկվայի պայմանագրով որոշված սահմանագծից արևելք ոչ մի Թուրք չի մնա[3]: Նա նաև անդրադառնում է Հեկկերի սպառնալից տոնի կապակցությամբ իրենց վիրավորվածության հարցին, խնդրում սանձել նրան, բայց դա՝ ի միջի այլոց[4]:

Մենք հպանցիկ անդրադարձանք բռնազավթված տարածքները ազատագրելու գործում ռուսական կառավարության և հատկապես Չիչերինի ծավալած գործունեությանը՝ նախ, որովհետև մասամբ հեռու է մեր հետապնդած նպատակներից, և հետո՝ այդ թեման բավականին

[1] Տե՛ս **Ե. Սարգսյան**, Դավադիր գործարք..., էջ 181:

[2] Տե՛ս **Кемаль Мустафа**, Путь новой Турции, т. 3, М. 1934, էջ. 423:

[3] Ալեքսանդրապոլի էվակուացիան ավարտվել է ապրիլի 22-ին: Այդպես են գրում բոլոր նրանք, ովքեր առնչվել են այդ հարցին, բացառությամբ Գ. Գալոյանի, որը առանց որևէ աղբյուր նշելու գրում է, թե Թուրքական զորքերը Ալեքսանդրապոլից դուրս են բերվել 1921թ. մայիսի կեսերին (տե՛ս **Գ. Գալոյան**, նշվ. աշխ. էջ 463):

[4] Տե՛ս „Геноцид армян...", стр. 493-494:

լուսաբանված է մեր պատմագիտության կողմից: Ճիշտ նույն նկատառումով էլ չենք անդրադառնում Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառում Թուրք զինվորականության կատարած բարբարոսություններին՝ թալանին, բռնաբարություններին, խաղաղ բնակչության զանգվածային սպանություններին, որոնց զոհերի ընդհանուր թիվը հասնում է շուրջ 60 հազարի[1]:

Վերադառնալով Նախիջևանի խնդրին՝ նախ արձանագրենք, որ վերը հիշատակած չիչերինյան և ոչ մի փաստաթղթում Նախիջևանի տարածքից Թուրքական զորամասի դուրսբերման վերաբերյալ որևէ տեղեկություն չենք գտնում: Հարցի ընդհանուր դրվածքի դեպքում (Մոսկվայի պայմանագրով որոշված սահմաններից այն կողմ Թուրքական զորքերի հետքաշման) գուցեև դրա կարիքը չլիներ էլ: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ բոլոր այդ հեռագրերում ու նոտաներում հարցը կոնկրետ էր դրված՝ Թուրքական զորքերի դուրսբերում «հայկական տարածքներից», «Խորհրդային Հայաստանի օկուպացված շրջաններից», և այլն, մինչդեռ Մոսկվայի պայմանագրից հետո Նախիջևանի երկրամասը այլևս Հայաստանի մաս չէր: Անհետաքրքիր չէ նաև իմանալ, որ՝ ինչքանով որ կարելի է դատել ադրբեջանական պատմաբանների աշխատություններից, Թուրքիային նման պահանջ չի ներկայացրել նաև Ադրբեջանը, թեև նրանք, ինչպես հայտնի է, առանձնահատուկ հարաբերություններ ունեին: Ճիշտ է, ադրբեջանցի որոշ պատմաբաններ ուղղակի հայտարարում են, թե Ադրբեջանը և Նախիջևանը իբր նման պահանջ առաջադրել են, բայց առանց որևէ սկզբնաղբյուր վկայակոչելու: Այդպես է վարվում, օրինակ Գ. Մաղաթովը Նախիջևանում խորհրդային իշխանության հաստատմանը նվիրված իր աշխատությունում: Նա գրում է. «Մոսկվայի պայմանագրի համաձայն, Ադրբեջանի և Նախիջևանի հեղկոմների վճռական գործողությունների արդյունքում Նախիջևանի տարածքը 1921թ. ապրիլի երկրորդ կեսին մաքրվեց Թուրքական զորամասերից»[2]: Այդպես էլ անհայտ է մնում, թե ե՞րբ և ի՞նչ վճռական գործողություններ են ձեռնարկվել: Իսկ որ Շարուրում գտնվող Թուրքական զորամասը ապրիլի երկրորդ կեսին պետք է հեռացած լինի, դա երևում է Ահմեդ Մուհթարի վերը վկայակոչած ապրիլի 14-ի հեռագրից, որում խոսելով Ալեքսանդրապոլի գավառը մաքրելու մասին, միաժամանակ ավելացնում է, թե Կարաբեքիր

[1] Մանրամասն տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ. էջ 237-246:

[2] **Г. Мадатов**, նշվ. աշխ. էջ 109:

փաչային հրահանգ է տրված մեկ շաբաթվա ընթացքում՝ սկսած ապրիլի 15-ից, ամբողջովին էվակուացնել Մոսկվայի պայմանագրով որոշված սահմանից այն կողմ ընկած ողջ տարածքը:

Սահմանից այն կողմ Թուրքական զորքերի հեռանալը, կովկասյան հանրապետությունների սուվերենությունը չխախտելու վերաբերյալ Մոսկվայում ձեռք բերված համաձայնությունները, ինչպես նաև Ալեքսանդրապոլի պայմանագիրը չճանաչելու մասին Չիչերինի բազմաթիվ հայտարարությունները կոնֆերանսի օրերին և տունդարձի ճանապարհին բոլոր երեք հանրապետությունների հետ պայմանագրեր ստորագրելու վերաբերյալ Չիչերինի և Յուսուֆ Քեմալի միջև կայացած ջենտլմենական համաձայնությունը, թվում է, բավարար նախադրյալ էին Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի հարաբերությունները Մոսկվայի պայմանագրի հիմքի վրա կարգավորելու համար: Սակայն վերադառնալով Մոսկվայից՝ Թուրքական պատվիրակությունը դարձյալ փորձեց Հայաստանի հարցում սողանցք թողնել՝ Բաքվում, Հուսեյնովի հետ հանդիպման ժամանակ հայտարարելով, թե պատրաստ են առանձին-առանձին պայմանագրեր ստորագրելու Ադրբեջանի և Վրաստանի հետ, իսկ Հայաստանի հետ պայմանագիր կնքելու լիազորություն չունեն: Եվ քանի որ վերջիններս՝ կատարելով Չիչերինից ստացած հրահանգը, հրաժարվեցին սեպարատ պայմանագրեր կնքելու առաջարկությունից և պահանջեցին բոլոր երեք հանրապետությունների մասնակցությամբ կոնֆերանսի գումարում, ուստի Թուրքական պատվիրակությունն օգտվելով դրանից՝ հեռացավ Թուրքիա՝ կոնֆերանսի գումարման հարցը թողնելով անորոշ և, միաժամանակ, փորձեց պայմանագրերի չկնքման համար մեղքը բարդել կովկասյան հանրապետությունների վրա: Մեկնաբանելով Բաքվում կատարվածը, Հուսեյնովը Չիչերինին (պատճենը՝ Մռավյանին) ուղարկած ապրիլի 16-ի հեռագրում հայտնում է. «Ես նրան պատասխանեցի, որ մենք չենք կարող թույլ տալ, որ Ադրբեջանի և Թուրքիայի հարաբերությունները մեկ լինեն, իսկ Թուրքիայինը և Հայաստանինը՝ մի այլ, կամ Հայաստանինը և Վրաստանինը՝ մեկ ուրիշ: ...Ես, Մահմուդ Շևքեթին հայտնեցի, որ անդրկովկասյան հանրապետությունները պետք է միատեղ պայմանագիր կնքեն Թուրքիայի հետ»[1]:

Հենց այդ օրերին էր, որ Թուրք քաղաքական ու զինվորական գործիչները խոսքերը մեկ արած, հայտարարություններ էին անում,

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 88:

թե Ալեքսանդրապոլի պայմանագիրը դեռևս ուժի մեջ է: Անկարայում նաև չէին շտապում վավերացնել Մոսկվայի պայմանագիրը:

Չնայած իրադարձությունների նմանօրինակ զարգացմանը, չնայած այն բանին, որ կոնֆերանսի գումարման տեղի ու ժամանակի շուրջ որևէ կոնկրետ պայմանավորվածություն դեռևս ձեռք չէր բերվել, այնուամենայնիվ՝ կարծելով, թե կոնֆերանսի գումարումը մոտ օրերի խնդիր է, հանրապետությունները սկսեցին ակտիվ կերպով նախապատրաստվել կոնֆերանսին՝ առաջ քաշել առաջարկություններ, կազմել հուշագրեր, պայմանագրերի նախագծեր և այլն: Նախիջևանյան հիմնախնդրին առնչվող այդ փաստաթղթերի մի մասին մենք դեռ կծանոթանանք: Իսկ առայժմ հակիրճ նշենք, որ Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին նախապատրաստվելու առաջնահերթ խնդիրների շարքում հայտնվեց նաև Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների տնտեսական և քաղաքական միավորման հարցը և այս կամ այն չափով, ուղղակի թե անուղղակի, հանրապետությունների միջև սահմանների որոշման հարցը:

Անդրֆեդերացիայի կազմավորման, նրա տնտեսական ու քաղաքական նախադրյալների, Մյասնիկյանի միջոցով Կովկասի կոմունիստներին ուղարկած Լենինի հայտնի նամակի դրույթների մասին մեր պատմաբաններն այնքան շատ են գրել և այսօր էլ դեռ շարունակում են գրել, որ այդ հարցի վրա կանգ առնելը, կարծում ենք, անիմաստ կլինի: Միանգամայն ճիշտ դիքերից են մեկնաբանվում թե՛ միավորման պատճառներն ու անհրաժեշտությունը, թե՛ դժվարություններն ու խոչընդոտները: Միայն ավելացնենք, որ այդ ամենի հետ մեկտեղ չպետք է մոռացության տալ Թուրք անդրկովկասյան կոնֆերանսի գործոնը: Կոնֆերանսում միասնաբար, որպես մեկ պայմանավորվող կողմ, հանդես գալու և միասնական պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ էր որոշ իրավական հիմքեր ստեղծել: Թե որքան հրամայական էր դա, պարզորոշ ցույց էր տվել մոսկովյան բանակցություններում Անդրկովկասյան հանրապետությունների ինքնիշխանության վերաբերյալ Թուրք պատվիրակների համառ հարցադրումները:

Միավորման գործընթացը սկիզբ առավ ապրիլի վերջին օրերին (առաջնահերթությունը տրվել էր երկաթուղիներին ու արտաքին առևտրին) և կարճ ժամանակամիջոցում լայն թափ առավ՝ ընդգրկելով նորանոր բնագավառներ (վայրուտային միջոցները, արտաքին քաղաքանությունը և այլն): Այդ հարցերը որքան որ հետաքրքիր, բայցևայնպես դուրս են մեր ուսումնասիրության շրջանակներից: Բավարարվենք միայն նշելով, որ այդ ամենը հեշտ ու հանգիստ չէր անցնում, որ հատ-

կապես Վրաստանում, մասամբ Ադրբեջանում, քիչ չէին ընդդիմադիր ուժերը, որոնք երբեմն բացահայտ, երբեմն քողարկված, հանդես էին գալիս միավորման դեմ: Խորհրդահայ պատմաբանները քիչ էջեր չեն նվիրել այսպես կոչված «վրացական ուկլոնիստների» և ադրբեջանական ազգայնականների գործունեության լուսաբանմանը: Նաև ցույց են տվել, որ տնտեսական ռեսուրսներից զուրկ Հայաստանը առավել քան շահագրգռված էր Անդրֆեդերացիայի կազմավորման հարցում:

Սակայն կար մի բնագավառ, որտեղ ավելի շատ խոսում էին ոչ թե միավորման, այլ սահմանազատման մասին: Խոսքը հանրապետությունների ներքին սահմանների որոշման ու հաստատման մասին է, առանց որի ոչ մի միավորում հնարավոր չէր: Բայց դրա լուծումն էլ հեշտերից չէր: Հանրապետությունների խորհրդայնացումով անցյալից ժառանգություն մնացած տարածքային վիճելի հարցերը չվերացան: Ադրբեջանը և Վրաստանը չէին հրաժարվել Հայաստանի հաշվին ընդարձակվելու իրենց նախորդների քաղաքականությունից: Թուրքիայի օգնությամբ տեր դառնալով Նախիջևանին, Ադրբեջանն այժմ էլ հայցքը հառել էր Ղարաբաղին և Զանգեզուրին: Իսկ Վրաստանը անվերապահորեն իրենն էր համարում թե՛ Ջավախքը և թե՛ Լոռին:

Թե ինչպես լուծվեցին այս հարցերը կոմունիստական «ազգային քաղաքականության» դիրքերից, նմանապես բավականաչափ լուսաբանված է: Հետևապես հանրապետությունների միջև սահմանների որոշման խնդրին կանդրադառնանք այնքանով, որքանով որ դա կառնչվի Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանագծի ճշտման, կամ ինչպես ընդունված էր ասել, Եռանկյունի գոտու հարցին: Իսկ այն առաջին անգամ Անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների (Օրախելաշվիլի, Բեկզադյան, Հուսեյնով և Շահթախթինսկի) և Օրջոնիկիձեի ու Լեգրանի մասնակցությամբ քննարկվել է Բաքվի խորհրդակցությունում 1921թ. մայիսի 7-ին: Ինչպես տեսնում ենք, խորհրդակցությանը չէին մասնակցում հանրապետությունների առաջին դեմքերը՝ Մախարաձեն, Մյասնիկյանը, Նարիմանովը, որոնք կանչվել էին Մոսկվա: Չէր մասնակցում նաև Կիրովը, որը Կավբյուրոյի մայիսի 2-ի նիստի որոշումով նշանակվել էր հանրապետությունների միջև սահմանները ճշտող հանձնաժողովի նախագահ[1]: Իսկ խորհրդակցությունը նախագահող Մամիա Օրախելաշվիլու ներկայացրած օրակարգն այսպիսին էր.

[1] Տե՛ս РГАСПИ, ф. 64, оп. 2, е/х 1, л 57.[3]

«1. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ Անդրկովկասյան հանրապետությունների միացյալ կոնֆերանսը:

2. Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի տեղը և ժամանակը:

3. ԹԱՄԺ-ի կառավարության հետ Անդրկովկասյան հանրապետությունների բանակցությունների հիմքերը:

4. Անդրկովկասյան հանրապետություններից յուրաքանչյուրի հետ կապված հարցերի քննարկման կարգը:

5. Լրացումներ և փոփոխություններ ի զարգացումն Մոսկվայի պայմանագրի»[1]:

ՀՀ ազգային արխիվում պահվող այդ փաստաթղթի հետ ծանոթությունից ստացած առաջին տպավորությունն այն է, որ խորհրդակցության մասնակիցներին ոչ այնքան հետաքրքրել են օրակարգում դրված հարցերը, որքան այն, թե ինչպես պետք է անվանել այդ հավաքույթը՝ խորհրդակցությո՞ւն, թե՞ կոնֆերանս: Մատյան (журнал) վերնագիրը կրող այդ փաստաթուղթը բավականին ընդարձակ է (տպագիր 7,5 էջ) և կազմված է սղագրական արձանագրության ձևով[2]: Ներկայացված է բոլոր ելույթների հակիրճ բովանդակությունը, որից էլ պարզ է դառնում, որ օրակարգի հրապարակումից հետո առաջինը Հուսեյնովն է ելույթ ունեցել և բարձրացրել այն հարցը, թե պե՞տք է արդյոք խորհրդակցությունը դիտել որպես նախնական, որից հետո կգումարվի կոնֆերանս, թե՞ այն պետք է համարել Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանս: Նրան առարկեց Բեկզադյանը՝ հայտարարելով, որ խորհրդակցությունը չի կարելի կոնֆերանս անվանել, քանի որ կոնֆերանսի ընդունած որոշումները պարտադիր կատարման ենթակա են, ուստի կոնֆերանսից առաջ անհրաժեշտաբար պետք է հանրապետություններում քննարկվեն օրակարգային հարցերը, ընդունվեն համապատասխան որոշումներ, որոնք և կներկայացվեն կոնֆերանսի քննարկմանը: Բեկզադյանը[3] նաև ավելացնում է, թե խորհրդակցության օրակարգային հարցերը (Թուրքիայի հետ բանակցություններում միասնաբար հանդես գալու և այլն) կարելի է լուծված համարել, և որ միակ հարցը, որ պետք է լուծվի, դա Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանագծի ճշտումն է:

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 69:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 67-70:

[3] Փաստաթղթում Բեկզադյանի անվան սկզբնատառը „A"-ի փոխարեն ներկայացված է „M" տառով: Դժվար է ասել, թե նիստի քարտուղարի՞ սխալն է դա, թե՞ մեքենագրողի:

Բեկզադյանին Հուսեյնովը պատասխանում է ընդարձակ ելույթով, փորձում է ամեն կերպ հիմնավորել խորհրդակցությունը կոնֆերանս հայտարարելու անհրաժեշտությունը, առաջարկում ներկայացնել Երևանի կարծիքը օրակարգի հարցերի մասին, խոստանում Բեկզադյանին հեռախոսակապ ապահովել Երևանի հետ, և այլն: Մինչդեռ Բեկզադյանը Երևանի կարծիքն իսկապես չէր կարող ներկայացնել այն պարզ պատճառով, որ մինչ այդ Հայհեղկոմը այդ հարցերին չէր անդրադարձել: Արխիվային մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ Ադրբեջանի և Վրաստանի հետ սահմանների հարցը Հայհեղկոմը Մյասնիկյանի գլխավորությամբ (մասնակցում էին Մռավյանը, Մակինցյանը և Լուկաչինը) քննարկել է Բաքվի խորհրդակցությունից երկու օր անց՝ մայիսի 9-ի նիստում և որոշել Մռավյանի նախագահությամբ ստեղծել հանձնաժողով (անդամներ՝ Համբարձումյան, Կարագյոզյան, Լազյան և այլն) նախապատրաստելու համար Ադրբեջանի և Վրաստանի հետ սահմանների հաստատման հարցը և այնուհետև այն «հարուցելու հարևան հանրապետությունների կառավարությունների առաջ»[1]:

Խորհրդակցությունը Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանս հռչակելու Հուսեյնովի համառ պնդումները (նա ելույթ ունեցավ 5, Բեկզադյանը՝ 2, Օրջոնիկիձեն՝ 4, Լեգրանը՝ 4, Օրախելաշվիլին՝ 2 անգամ) չէին կարող չվկայել այդ հարցում Ադրբեջանի ղեկավարության չահագրգռության մասին: Դժվար չէր գուշակել, որ Ադրբեջանին հատկապես հետաքրքրում էր օրակարգի հինգերորդ կետը, այն է՝ Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանագծի որոշման հարցը, որի մասին կոնֆերանսի կայացրած որոշումը վերջնական կլիներ: Բայց Հուսեյնովի բոլոր փորձերն իզուր անցան, թեև այս կամ այն կերպ Հուսեյնովի առաջարկությունը պաշտպանեցին Օրջոնիկիձեն և Լեգրանը, բայցևայնպես Բեկզադյանը մնաց անդրդվելի և հայտարարեց, որ չի կարող համաձայնել ներկա խորհրդակցությունը կոնֆերանսի վերածելու առաջարկությանը, քանի որ Հայաստանի հեղկոմի համար Մոսկվայի պայմանագրի որոշ կետեր պարզ չեն և ուսումնասիրության կարիք ունեն:

Բեկզադյանի այս վճռական դիրքը չէր կարող իր ազդեցությունը չթողնել մասնակիցների վրա, և նույնիսկ Օրջոնիկիձեն տեղի տվեց ու արդյունքում ընդունվեց հետևյալ որոշումը. «Ներկա խորհրդակցությունը համարել նախնական, որից հետո՝ Մոսկվայից Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակների վերադառնալու և տեղերում, այսինքն՝ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում օրակարգի ներկա հարցերը ուսումնասիրելուց հետո, գումարել Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանս Երևան քաղաքում»[1]:

Այսպիսի վախճան ունեցավ Հուսեյնովի և Բեկզադյանի վեճը խորհրդակցությունը կոնֆերանսի վերածելու շուրջ, այսպես Բեկզադյանը կանխեց Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի լուծման հարցը «Եռանկյունի գոտու» հատվածում անմիջականորեն կոնֆերանսում: Բայցևայնպես խուսափել այդ հարցի քննարկումից չհաջողվեց: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ որոշում կայացվեց Թուրքիայի հետ բանակցությունների հիմքում Մոսկվայի պայմանագիրը դնելու մասին (դրանից առաջ ընդունվել էր որոշում Անդրկովկասյան հանրապետությունների, որպես մեկ միասնական կողմ, հանդես գալու և Թուրքիայի հետ կոնֆերանսի տեղի և ժամանակի մասին ու որոշվել, որ ցանկալի է այն գումարել Թիֆլիսում կամ Բաքվում, բայց դեմ չեն լինի նաև Կարսին): Այդ որոշումն ընդունելուց անմիջապես հետո նիստում նախագահող Օրախելաշվիլին առաջարկեց քննարկել նաև Նախիջևանի սահմանի մասին հարցը և ձայնը տվեց Շահթախթինսկուն, որն, ի դեպ, մինչ այդ օրակարգային հարցերի քննարկումներին չէր մասնակցել, ինչից դժվար չէ եզրակացնել, որ խորհրդակցությանը նա հրավիրված էր հենց Նախիջևանի հարցի կապակցությամբ:

Շահթախթինսկին իր խոսքն սկսեց Նախիջևանի խնդրի վերաբերյալ պատմական էքսկուրս անելով, բայց թե ինչ է ասել, մնում է անհայտ, քանի որ նիստի քարտուղարը այդ մասին ոչինչ չի նշել, այլ միայն հակիրճ արձանագրել է, որ Շահթախթինսկին «պատմական տեղեկանք է տալիս և ավելացնում, որ երբ ընկ. Չիչերինը հարցրեց իրեն, թե որտեղ ճիշտ կլինի անցկացնել Նախիջևանի հյուսիս-արևմտյան սահմանը Հայաստանի հետ, ինքը մատնացույց արեց Գայլի Դրունքը՝ որպես սահմանային կետ, թեև թուրքական օկուպացիոն զորքերը զբաղեցնում էին այդ կետից հյուսիս և արևմուտք ընկած տարածքը: Բայց պաշտոնական հանձնաժողովում մեր ռազմական մասնագետները սխալ են թույլ տվել Նախիջևանի սահմանը անցկացնելով հյուսիս-արևմուտքով և Նախիջևանի կազմում ընդգրկելով Երևանի

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 16-17:

[1] Նույն տեղում, գ. 21, թ. 67-ի շրջերես:

գավառի հարավային եռանկյունին»[1]:

Շահթախթինսկին չէր կեղծում, նա իսկապես Մոսկվայի կոնֆերանսի օրերին Զիչերինին այդպես էր պատասխանել՝ վկայակոչելով մուսավաթական կառավարությանը, որն իր ծայրագույն սահմանը համարել էր Գայլի Դրունքը: Բայց դատելով սահմանագծի անցկացման մասին Շահթախթինսկու առաջարկությունից, Բաքվի ղեկավարությունը մտադիր չէր բավարարվել Գայլի Դրունքով անցկացվող սահմանագծով: Դրա մասին է վկայում Շահթախթինսկու հետևյալ առաջարկությունը, որ նա արել է «Եռանկյունի գոտու» առաջացման պատմությունը ներկայացնելուց հետո. «Հույժ նպատակահարմար կլինի, եթե տեղում ճշգրիտ և անառարկելի սահմանն անցկացնեին տեղացի, գիտակ ընկերները»[2]: Եվ քանի որ տեղացիները ադրբեջանցիներ էին, ուստի հենց նրանք էլ պետք է որոշեին՝ ըստ Շահթախթինսկու, անառարկելի սահմանագիծը, որն, անշուշտ, հօգուտ Նախիջևանի կկտրեր Եռանկյունու մի հատվածը:

Շահթախթինսկուց հետո ելույթ ունեցող Լեգրանը խորհրդակցության մասնակիցներին հիշեցրեց, որ Մոսկվայի պայմանագրի համաձայն Նախիջևանի հյուսիս-արևմտյան սահմանի ճշտման նպատակով պետք է Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչներից ստեղծվի հանձնաժողով, «որը հայկական ու ադրբեջանական ներկայացուցիչների կոնտակտի արդյունքում հարցին այնպիսի լուծում կտա, ինչպիսին որ մեր կողմից կորոշվի»[3]:

Պարզ է, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև համաձայնության կայացումից հետո՝ Թուրքիան, հանձնաժողովում մնալով միայնակ, չէր կարող ազդել հարցի լուծման վրա: Բայց պարզ չէ մեկ այլ բան, թե արդյո՞ք Լեգրանը առաջարկել է հարցը լուծել անմիջականորեն խորհրդակցությունում: Արխիվային փաստաթղթում այդ մասին ոչինչ չկա: Սակայն նիստի քարտուղարը արձանագրել է Լեգրանից անմիջապես հետո ելույթ ունեցած Բեկզադյանից մի նախադասություն միայն, որտեղ ասված է, թե ինքը «չի կարող ճիշտ սահման նշել տեղանքին ծանոթ չլինելու պատճառով»[4]: Իսկ սա նշանակում է, որ այնուամենայնիվ Լեգրանը խոսքն ուղղել է Բեկզադյանին՝ ակնկալելով

[1] Նույն տեղում, թ. 68:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

նրանից պատասխան: Սա առավել ակնառու է դառնում Բեկզադյանի պատասխանից հետո Օրջոնիկիձեի առաջարկությունից. «...հանձնարարել Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչներին տեղում պարզել սահմանի ճիշտ անցկացման հարցը»[1], որից հետո ընդունվեց որոշում, որում ասված էր, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունները առանձնապես սուր են, պնդել, որ առաջին հերթին քննարկվեն պայմանագրային հարաբերությունների հաստատման հարցը Թուրքիայի և Հայաստանի միջև, այնուհետև Թուրքիայի ու Վրաստանի և հետո՝ Թուրքիայի ու Ադրբեջանի (4-րդ կետ): Իսկ օրակարգի 5-րդ կետի (փոփոխություններ և լրացումներ Մոսկվայի պայմանագրի մեջ) վերաբերյալ ընդունված որոշման մեջ ասված է, որ նկատի առնելով այն հանգամանքը, որ Մոսկվայի պայմանագրի երրորդ հոդվածով Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի ճշտման հարցը դրված է Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի վրա, և հետևապես այդ հարցը անխուսափելիորեն դրվելու է Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի առաջ, «անհապաղ ձեռնարկել միջոցներ Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների կողմից տեղում սահմանի ճիշտ անցկացման հարցի ուսումնասիրման համար՝ ***համաձայն ազգագրական սկզբունքի, ինչպես նաև այդ հարցի վերաբերյալ տեղական ազգաբնակչության մոտ ձևավորված կարծիքների***»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ):

Կարծում ենք, իմաստուն պետք չէ լինել հասկանալու, որ խորհրդակցության կողմից «ազգագրական սկզբունքի» և «տեղական բնակչության կարծիքի» հիման վրա Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի անցկացման մասին հարցադրումը կդառնա այն հիմքը, որը հնարավորություն կտա սահմանն անցկացնել ոչ թե Գայլի Դրունքով, ինչպես որ Զիչերինն էր նախատեսել, այլ դրանից արևմուտք և դրանով իսկ Երևանի գավառի հարավարևմտյան մասից՝ Եռանկյունի գոտուց կկտրվի և Նախիջևանին կմիացվի մի որոշ հատված:

Այսպիսի վախճան ունեցավ Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի ճշտորոշման հարցի քննարկումը Բաքվի խորհրդակցությունում: Այսպես, Բեկզադյանի համառ պնդումը խորհրդակցությունը կոնֆերանսի չվերածելու հարցում, ինչպես հետագայում կտեսնենք,

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, շրջերես:

*չրջվեց հենց Հայաստանի դեմ: Մինչդեռ խորհրդակցությունից 4 օր անց՝ մայիսի 11-ին Ասքանազ Մռավյանի հետ հեռախոսային խոսակցության ժամանակ, պատասխանելով խորհրդակցության կողմից ընդունված որոշումների վերաբերյալ վերջինիս հարցին, Ալ. Բեկզադյանը ոչինչ չի ասում ո՛չ Հուսեյնովի հետ իր բանավեճի մասին (խորհրդակցությունը կոնֆերանս հռչակելու վերաբերյալ) և ո՛չ էլ Եռանկյունի գոտում սահմանի որոշման գործում «ազգագրական սկզբունքի» և «տեղի ազգաբնակչության ձևավորված կարծիքը» հաշվի առնելու վերաբերյալ խորհրդակցության ընդունած որոշման մասին: **«Նախիջևանը, Դարալագյազը Հայաստանից սահմանազատող Եռանկյունու հարցում,** – ասել է Ալ. Բեկզադյանը, –**Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին** (խորհրդակցությունը – Է. Զ.) **հանձնարարել է ներկայացնել իրենց նախագծերը առաջիկա կոնֆերանսին,** ինչպես նաև հանձնարարել է Հայաստանին և Ադրբեջանին այդ կոնֆերանսին ներկայանալ պատրաստի նախագծերով՝ Մոսկվայում մշակված վրաց-թուրքական պայմանագրի օրինակով»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Եթե ընդգծված տողերը համեմատենք խորհրդակցության ընդունած որոշման հետ, ապա կտեսնենք, որ Բեկզադյանն իսկապես խուսափել է «ազգագրական սկզբունքի» և «տեղական ազգաբնակչության կարծիքը» հաշվի առնելու մասին խոսելուց: Իսկ դա նշանակում է, որ Բեկզադյանը կա՛մ նշանակություն չի տվել խորհրդակցության որոշման այդ կետին, կա՛մ էլ իսկապես նա ծանոթ չէր այդ տեղամասի ազգագրական պատկերին, ինչպես որ հայտարարեց խորհրդակցության ժամանակ:

Ա. Մռավյանի և Ալ. Բեկզադյանի հեռախոսային այս խոսակցության ժամանակ չոչափվել է նաև Անդկովկասյան հանրապետությունների միջև սահմանագծերի անցկացման հարցը, ինչի մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն որոշում էր կայացրել Մայիսի 2-ի նիստում[2]: Ըստ այդ որոշման՝ պետք է ստեղծվեր հանձնաժողով երեք հանրապետությունների ներկայացուցիչներից՝ Ս. Կիրովի գլխավորությամբ, որը սահմանագծման աշխատանքները պետք է ավարտեր մինչև հունիսի 1-ը և այն ներկայացներ Կավբյուրոյի հաստատմանը: Մռավյանը Թիֆլիսում գտնվող Ալ. Բեկզադյանի ուշադրությունն է հրավիրում Ախալքալաքի վրա, հանձնարարում հայտնել Դանուշ Շահվերդյանին (Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչը Վրաստանում) Ախալքալաքի գավառի վերաբերյալ վիճակագրական նյութերի հավաքման մասին, որին Բեկզադյանը պատասխանում է, որ Ախալքալաքի և Լոռու չեզոք գոտու վերաբերյալ միջոցներ կձեռնարկեն, նաև տեղեկացնում, որ երկու շաբաթից Կիրովը Թիֆլիսում կլինի, հետևապես մինչ այդ անհրաժեշտ է գործուղել մեկին՝ որպես Հայաստանի լիազոր ներկայացուցիչ, սահմանների հաստատման հանձնաժողովի համար[1]:

Հանրապետությունների միջև սահմանների որոշման աշխատանքները հատկապես պետք է անհանգստացնեին Խորհրդային Հայաստանի ղեկավարներին, քանի որ բոլոր կողմերից խուզված հանրապետությանը նոր մարտահրավերներ էին սպասում: Ադրբեջանը Թուրքիայի օգնությամբ տեր դառնալով Շարուր-Նախիջևանին, այժմ էլ աչքը գցել էր հայաբնակ Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի վրա, իսկ Վրաստանը Լոռու չեզոք գոտու դիմաց բացահայտորեն պահանջում էր ամբողջովին հայերով բնակեցված Ախալքալաքի գավառը: Այսպիսի պայմաններում մայիսի 23-ին Հայկոմկուսի Կենտկոմի պլենումը, որին ներկա էին Մյասնիկյանը, Լուկաչինը, Ազատյանը, Մակինցյանը, Մռավյանը, Բեկզադյանը, Կարինյանը և Խաչիևը, լսում է երեք հանրապետությունների միջև սահմանագծի անցկացման հանձնաժողովի համար ներկայացուցիչ ուղարկելու հարցը և որոշում գործուղել Ալ. Բեկզադյանին[2]: Իսկ ընդամենը հինգ օր հետո՝ մայիսի 28-ին նույն կազմով Հայկոմկուսի Կենտկոմի պլենումը լսում է Լուկաչինի զեկուցումը «1. Զանգեզուրի մասին, 2. երեք հանրապետությունների սահմանների մասին, 3. դրամանիշների պատրաստման էքսպեդիցիայի մասին, 4. Նախիջևանի երկրամասի հետ հարաբերությունների մասին, 5. մաքսատների հանման մասին և 6. տնտեսական միավորման ձևերի մասին» հարցերը և որոշում հանձնարարել Մյասնիկյանին ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի նիստում պաշտպանել Հայկոմկուսի Կենտկոմի տեսակետը նշված հարցերի վերաբերյալ[3]:

Թե ինչպես Մյասնիկյանը կատարեց Հայկոմկուսի Կենտկոմի պլենումի որոշումը հանրապետությունների միջև սահմանների ճշտման հարցում, այստեղ չենք քննարկի, քանի որ դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից, թեև արժեր խոսել նրա պասսիվ կեցվածքի

[1] *ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 53, թ. 109:*
[2] *Տե՛ս РГАСПИ, ф. 64, оп. 2, е/х 1, л 57.*

[1] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 53, թ. 109:*
[2] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, փ.1, գ. 15, թ. 3:*
[3] *Տե՛ս նույն տեղում, թ. 4:*

մասին՝ հատկապես Լեռնային Ղարաբաղի և Ախալքալաքի գավառի պատկանելիության հարցերում: Ինչ վերաբերում է Նախիջևանի երկրամասի հետ հարաբերությունների հարցին, ապա Հայաստանը ոչ միայն ձգտում էր նորմալ հարաբերություններ պահպանել Նախիջևանի հետ, այլև իր սուղ միջոցներից բաժին էր հանում նրան, ամեն կերպ ձգտում օգնել: Այսպես, մայիս ամսին երկու անգամ Հայաստանի ղեկավարությունը անդրադարձել է Նախիջևանին օգնելու խնդրին: Մայիսի 14-ին (1921թ.) Նախիջևանի հեղկոմի նախագահ Կադիմովից ստացված հեռագրի առթիվ Հայաստանի արտգործժողկոմը դիմում է Հայհեղկոմի նախագահ Մյասնիկյանին հետևյալ գրությամբ. «Աչքի առաջ ունենալով Նախիջևանի և Գողթան գավառների տնտեսական ծանր դրությունը, կարծում եմ, որ Պարսկաստանում գնած ցորենից կարելի է բաց թողնել Նախիջևանի հեղկոմին մի քանի հարյուր փութ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ եմ համարում հրավիրել Հայաստանի առողջապահության և սոցիալական ապահովության կոմիսարիատներին միջոցներ փնտրել հիշյալ գավառներին հասցնելու բժշկական և ուրիշ տեսակի օգնություն»[1]: Իսկ մայիսի 31-ին ժողկոմխորհի նախագահության նիստում լսվում է «Նախիջևանի հեղկոմին 15 մլն. ռուբլի բաց թողնելու խնդիրը և որոշվում.

ա) Բաց թողնել Նախիջևանի հեղկոմին 15 մլն. ռուբլի վարկ,

բ) Բաց թողնել այդ գումարը մի քանի նվագով (ա. 5 մլն.),

գ) Պահանջել Պարժողկոմից և ֆինժողկոմից մինչև այժմ Նախիջևանի հեղկոմին ուղարկած ապրանքների ու դրամների, ինչպես նաև այնտեղից ստացված ապրանքների հաշիվը»[2]:

Ինչպես տեսնում ենք, Նախիջևանի երկրամասը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելուց հետո էլ Հայաստանը շարունակում էր նրան օգնելու իր այն քաղաքականությունը, որ որդեգրել էր Կասյանի գլխավորած Հեղկոմը դեռևս 1920թ. դեկտեմբերին՝ հանրապետության աղքատիկ բյուջեից անվերադարձ հատկացնելով 20 մլն ռուբլի: Այն ժամանակ դա քաղաքական ենթատեքստ ուներ: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Հայաստանը այս անգամ, փաստաթղթում ոչինչ չի ասված: Բայց եթե նկատի առնենք այն իրողությունը, որ Կողբի աղահանքերը Թուրքիային անցնելուց հետո Հայաստանը չահագրգռված էր Նախիջևանի աղահանքերով, ուստի դժվար չէ գուշակել, որ նպատակը

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 87, թ. 8:

[2] Նույն տեղում, գ. 17, թ. 52:

աղահանքերի չահագործմանը նպաստելն էր, որոնք փաստորեն չէին գործում: Դա երևում է նաև «Գ» կետի բովանդակությունից (պահանջվում էր ներկայացնել նաև Նախիջևանից ստացված ապրանքների հաշիվը): Իսկ Նախիջևանը Հայաստանին միմիայն աղ կարող էր մատակարարել:

Առաջ անցնելով ասենք, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը հետագայում էլ շարունակեց Նախիջևանին տնտեսական օգնություն ցույց տալու գործը՝ նպաստելով նրա տնտեսական զարգացմանը: Մասնավորապես սեպտեմբերի 5-ին Կավբյուրոյի նիստում Մյասնիկյանի առաջարկությամբ լսվեց Նախիջևանին օգնելու հարցը և ընդունվեց որոշում.

«ա) Աղի հարցը կարգավորելու համար ուղարկել հանձնաժողով՝ ենթարկելով այն Կավբյուրոյի ԿԿ-ի տնտեսական բաժնին:

բ) Նախիջևանի երկրամասի վերաբերյալ բոլոր տնտեսական որոշումները իրականացնել նրա ԺՏՄ-ի (ժողտնտխորհի) միջոցով:

գ) **Ընդունել ընկ. Մյասնիկովի (Մյասնիկյանի) առաջարկությունը և Հայաստանի ԿԿ-ին առաջարկել բաց թողնել Նախիջևանի երկրամասի համար 20 000 ռ. ոսկով:**

դ) Առաջարկել Կավբյուրոյի ԿԿ-ին իր միջոցներից բաց թողնել Նախիջևանի երկրամասի համար 20 000 ռ. ոսկով:

ե) Հատկացվող ոսկին գլխավորապես պետք է օգտագործվի բնակչության համար անասունների գնման նպատակով:

զ) **Ընդունել ընկ. Մյասնիկովի առաջարկությունը և Հայաստանի ԿԿ-ին առաջարկել ամենալուրջ ուշադրություն դարձնել Նախիջևանի երկրամասին մանուֆակտուրայով և դրամանիշներով օգնելուն:**

է) Առաջարկել Միացյալ Արտառևտրին (обвнешторг-ին[1]) հատկացնել Նախիջևանի երկրամասին ամսական տասը վագոն հացահատիկ:

ը) Նախիջևանի երկրամասի բոլոր հայտերը անցկացնել обвнешторг-ով:

թ) Ընկ. Կազիևին ազատել աշխատանքից Նախիջևանի երկրամասում և առաջարկել Ադր. ԿԿ-ին առաջադրելու մեկ ուրիշ թեկնածություն»[2] (ընդգծումը մերն է – Է. Զ):

[1] Обвнешторг-ը (միացյալ արտառևտուր) ստեղծվել է 1921թ. հունիսի 2-ին Բաքվում Ֆ. Մախարաձևի, Ալ. Մյասնիկյանի և Ն. Նարիմանովի կողմից ստորագրված համաձայնագրով, որով միավորվում էր Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի արտաքին առևտուրը:

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, փ.3, գ. 68, թ. 22:

Ահա այսպես. Հայաստանը չարունակում է օգնել Նախիջևանի տնտեսական զարգացմանը, ինչը չենք կարող ասել Նախիջևանի հովանավոր պետության՝ Ադրբեջանի մասին: Դա այնքան ակնառու էր դարձել, որ Լեգրանը դեռևս մայիսի 27-ին Ադրբեջանի արտգործժողկոմ Մ. Դ. Հուսեյնովին հասցեագրած նամակում խոսելով այն մասին, որ անհրաժեշտ է ավելի սերտ կապ պահպանել իր հետ (ապրիլին Լեգրանը նշանակվել էր ՌՍՖՍՀ լիազոր նորկայացուցիչ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում), ապահովել մշտական տեղեկատվություն Ադրբեջանի գործերի մասին, ուղարկել Բաքվի մայիսի 7-ի խորհրդակցության արձանագրությունը և այլն, և այլն, միաժամանակ ավելացնում է. «...**հատկապես անհրաժեշտ է ժամանակին մեզ հայտնել այն ամենի մասին, ինչ ձեռնարկվում է Ձեր և Ադրբեջանի ԺՏԿ-ի կողմից Նախիջևանի վերաբերյալ**»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Իսկ ի՞նչ էր ձեռնարկում Ադրբեջանը: Պարզվում է, որ Ադրբեջանի ղեկավարությանն ավելի շատ հետաքրքրում էր ոչ այնքան Նախիջևանի տնտեսական զարգացումը, որքան նրան Հայաստանի ազդեցությունից զերծ պահելու հարցը: Այդ մասին են վկայում այն մի շարք գրությունները, որ Ադրբեջանի ղեկավարությունը ուղարկել է Կավբյուրոյի ղեկավարությանն ամեն անգամ, հենց որ Հայաստանը Նախիջևանին օգնելու նախաձեռնությամբ է հանդես եկել: Այսպես, Նախիջևանին 15 մլն ռուբլի վարկ տրամադրելու Հայաստանի կառավարության մայիսի 31-ի որոշմանը հետևեց Ադրբեջանի արտգործժողկոմ Հուսեյնովի հունիսի 12-ի հեռագիրը՝ «Երևան, արտգործժողկոմ Մռավյանին, Թիֆլիս՝ ընկ. Օրջոնիկիձեին և ընկ. Լեգրանին», իսկ Կավբյուրոյի սեպտեմբերի 5-ի նիստում Մյասնիկյանի՝ Նախիջևանին օգնելու մասին հարցադրմանը հետևեց հոկտեմբերի 10-ի բողոքի նամակը Կավբյուրոյին:

Հուսեյնովի հեռագրում խոսվում է այն մասին, որ «Երևանի որոշ ընկերների գործունեության հետևանքով», որոնք իբրև թե «թույլ կողմնորոշվելով ստեղծված միջազգային իրադրության մեջ և անբավարար պատկերացում ունենալով Նախիջևանի նկատմամբ մեր ընդհանուր քաղաքականության հարցում», ստեղծվել է մի դրություն, որը հղի է անբարենպաստ բարդությամբ Մոսկվայի պայմանագրի համաձայն Նախիջևանի երկրամասի հարցի լուծման գործում: Այնուհետև վկայաբերելով երկու աննշան փաստ (Հայաստանի Կարմիր բանակի

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 241:

ռեգիստրացիոն բաժնի պետ Յուզբաշևի պահանջը Ջուլֆայում անտակտ պահվածքի պատճառով ձերբակալված Հաջի Սաֆիի ազատ արձակման և Շանգիրեի կալվածքի մի մասի օգտագործման նպատակով Հայաստանի Հողժողկոմի կողմից Ծատուրյանցներին տրված մանդատի մասին), հետևություն է անում, թե Հայաստանից գործուղված մարդիկ իրենց այնպես են պահում, որ կարծես թե Նախիջևանը դուրս չի եկել Հայհեղկոմի ենթակայությունից ու ավելացնում. «...Հազիվ թե կարելի է հուսալ, որ որոշ ընկերների նման գործողությունները **աննկատ կմնան սահմանակից շրջանների թուրքական հրամանատարության ուշադրությունից և նրանց կողմից առաջ չեն բերի Նախիջևանի երկրամասի նկատմամբ հավակնության փորձ՝ Մոսկվայի պայմանագիրը չօգտագործելու պատրվակով**»[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Դարձյալ թուրքական գործոն, դարձյալ սպառնալիք, որն այժմ արդեն հնչում է Ադրբեջանի Արտգործժողկոմի շուրթերից: Սակայն նկատի առնելով այն հանգամանքը, որ հասցեատերերը անպատասխան են թողել Հուսեյնովի այս հեռագիրը, պետք է ենթադրել, որ թուրքական սպառնալիքը որևէ կերպ չի ազդել նրանց վրա: Գուցե այդ է պատճառը, որ Կավբյուրո ուղարկած հոկտեմբերի 10-ի գաղտնի նամակում այլևս չի օգտագործվում թուրքական գործոնը, այլ ուղղակի խոսվում է այն մասին, որ հայկական կառավարությունը իր համար «բավարար չափով չի պարզել Հայաստանի և Նախիջևանի երկրամասի փոխհարաբերությունների բնույթը», խառնվում է Նախիջևանի ներքին գործերին՝ այդ միջամտությունը հասցնելով մինչև մանր խնամակալության աստիճանի և դարձյալ վկայակոչում երկու դեպք. 1. Հայաստանի կողմից Նախիջևան գործուղված ռեգիստրացիոն բաժնի ներկայացուցիչ Սայադյանի գործունեությունը, որն իբր գործում է միանգամայն ինքնուրույն, առանց հաշվի նստելու տեղական իշխանությունների և կուսակցական կազմակերպության հետ և 2. Իբրև թե Հայաստանի Կոմերիտմիության ԿԿ-ի կողմից Նախիջևանի Կոմերիտմիության կազմբյուրոյի պատասխանատու քարտուղար նշանակված Ռզա Ախունդովի գործունեությունը, որն իբր զբաղված է կեղծ տեղեկություններ հաղորդելով Հայկոմկուսի Կենտկոմ՝ Նախիջևանի ներքին դրության մասին և այլն, ու դարձյալ առանց տեղական կուսակցական կազմակերպության գիտության[2]: Իսկ վերջում ավելաց-

[1] Նույն տեղում, գ. 14, թ. 101:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց.1, գ. 116, փ. 5, թ. 31:

նում է. «Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմը նման երևույթը համարում է աննորմալ և խնդրում է Կավբյուրոյին համապատասխան ցուցում տալ Հայկոմկուսի Կենտկոմին Նախիջևանի և Հայաստանի փոխհարաբերությունների բնույթի մասին ու բացատրել, որ նոր ազատագրված հանրապետություններում առավել արգասաբեր խորհրդային և կուսակցական շինարարության համար անհրաժեշտ է բարեկամական սերտ հարաբերությամբ աշխատանք և որ Հայկոմկուսի Կենտկոմը Նախիջևանի տարածքում իր ամեն մի միջոցառում պետք է իրականացնի Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ-ի գիտությամբ և համաձայնությամբ»[1]:

Ինչ խոսք, որ հունիսյան հեռագրի համեմատությամբ այս գաղտնի նամակն իր բովանդակությամբ ավելի մեղմ է, նրանում չկա Մոսկվայի պայմանագրի և Թուրքական սպառնալիքի մասին հիշեցում: Ինչո՞վ բացատրել: Հավանաբար այդ սպառնալիքի նկատմամբ Կավբյուրոյի ղեկավարության արհամարհական վերաբերմունքով: Բայցևայնպես չի կարող զարմանք չպատճառել այն համառությունը, որով Ադրբեջանի ղեկավարությունը փորձում էր հեռու պահել Հայաստանը Նախիջևանից, կտրել նրանց միջև ամեն մի կապ: Թեև, հանուն արդարության, պետք է նշել, որ այս գաղտնի նամակն էլ չէր արժանացել Կավբյուրոյի ղեկավարության առանձնակի ուշադրությանը, ինչի մասին կարող է վկայել թեկուզ այն փաստը, որ այդ նամակը Հայաստանի ղեկավարությանն է հանձնվել չուրջ երկու ամիս անց՝ դեկտեմբերին: Հայկոմկուսի Կենտկոմի դեկտեմբերի 29-ի նիստում լսվում է Հայաստանի կողմից Նախիջևանի ներքին գործերին միջամտելու Ադրբեջանի բողոքի մասին հարցը և որոշվում «ամենվճռական կերպով հերքել» ներկայացված մեղադրանքը՝ հատուկ նամակով ուղղված Կավբյուրոյին, Ադրկոմկուսի ԿԿ-ին և Նախիջևանի երկրկոմին[2]: Իսկ նամակում, որի տակ դրված է Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար Լուկաշինի ստորագրությունը, հայտնվում էր, որ «ոչ մի միջամտություն Նախիջևանի ներքին գործերին, առավել ևս մանր խնամակալություն, ՀԿԿ ԿԿ-ի կողմից չի եղել: Միակ «միջամտությունը» դրսևորվել է Կենտկոմի քարտուղար ընկ. Լուկաշինի կողմից Ձեր կողմից հիշատակված Սայադյանի հետ կանչման դեպքում՝ նրա աշխատանքի մասին ինֆորմացիա ստանալուց հետո»: Այնուհետև մատնանշելով այն փաստը, որ

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 15, փ. 1, թ. 48:

Սայադյանը Նախիջևան էր գործուղվել պատերազմական իրադրության պայմաններում, և այն էլ՝ ոչ թե ՀԿԿ Կենտկոմի, այլ ռեգիստրացիոն բաժնի կողմից, իսկ Ախունդովը գործուղվել է Նախիջևան ոչ թե Հայաստանի, այլ «Կոմերիտմիության Կավբյուրոյի Կենտկոմի գիտությամբ, համաձայնությամբ և կարգադրությամբ», Հայկոմկուսի Կենտկոմը ափսոսանք է հայտնում «Ադրբեջանի պատասխանատու քաղաքական ղեկավար Կիրովի նամակի կապակցությամբ», որը հիմնված է կեղծ տեղեկատվության վրա և առաջարկում է **«Նախիջևանի հետ կապված թյուրիմացությունների, խոսակցությունների և կոնֆլիկտների վերջնական վերացման նպատակով ստեղծել կուսակցական-քննչական հանձնաժողով և կեղծ ինֆորմացիա ներկայացնելու համար մեղավորներին ենթարկել օրինական պատասխանատվության»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):

Ճիշտ է, հանձնաժողով չստեղծվեց և կեղծ տեղեկատվության հեղինակները չպատժվեցին, բայց նաև Լուկաշինի վճռական բողոքը ևս անհետևանք չանցավ: Ամեն դեպքում մի որոշ ժամանակ ադրբեջանական ղեկավարությունը դադարեց Նախիջևանի ներքին գործերին միջամտելու ուղղությամբ Հայաստանի կառավարությանը մեղադրանքներ ներկայացնելուց: Միաժամանակ տեղին ենք համարում մատնանշել, որ հայկական կողմը ցուցաբերում էր նրբանկատություն և նույն կերպ չէր պատասխանում Ադրբեջանի ղեկավարությանը: Մինչդեռ իրականում Հայաստանն ավելի հիմքեր ուներ բողոքելու Նախիջևանի կողմից իր ներքին գործերին միջամտելու առումով: Այսպես, արխիվային մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ հուլիսի 30-ին ՀԽՍՀ ժողկոմխորհը որոշում է կայացրել վեղիբասարցիներին 4000 արշին մանուֆակտուրա բաժանելու մասին և այդ նպատակով Վեղի է գործուղել Բ. Էֆենդիևին և Կ. Այվազյանին, որոնք օգոստոսի 7-ին կազմակերպել են միտինգ ու նաև ելույթ ունեցել ընթացիկ մոմենտի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների փոխհարաբերությունների մասին: Սակայն ելույթներից անմիջապես հետո վեղիբասարցիները հայտարարել են, որ իրենք ցանկանում են միանալ Նախիջևանին, որտեղից ստանում են աղ, հաց և այլն: Եվ միայն Վեղիբասարի Կարմիր տաբորի հրամանատար Աբաս Կուլի բեկի սպառնալից ելույթից հետո վեղիբասարցիները՝ կես ժամ առանձին խորհրդակցելուց հետո հայտարարել են, թե իրենք մոլորված են եղել

[1] Նույն տեղում, թ. 251:

և միմիայն այժմ իրենց պարզ դարձավ, որ «Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Նախիջևանի երկրամասը, դրանք երկու եղբայրներ են, ուստի մենք այսօրվանից միանում ենք Խորհրդային Հայաստանին»[1]: Իսկ հոկտեմբերի 14-ին Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմատում Վեղիբասարից ստացված մի գրության մեջ ասված է, որ տեղի ազգաբնակչության մեջ հակահայկական ուժեղ տրամադրություններ կան, որոնք արդյունք են Նախիջևանից ուղարկված գաղտնի գործակալների ակտիվ գործունեության և որպես օրինակ վկայակոչում են հենց այդ օրերին Նախիջևանից Վեղիբասար 8000 փութ աղի ուղարկումը, ինչը մեծապես օգտագործվել է հակահայկական ագիտացիա մղելու համար: «Ահա տեսնում եք, – ասում են գործակալները բնակիչներին, – Հայաստանի խորհրդային իշխանությունը ձեզ ոչինչ չի տալիս, իսկ Նախիջևանի խորհրդային իշխանությունը ձեզ ամեն ինչ է տալիս և եթե դուք միանաք Նախիջևանին, ապա այն ժամանակ ամեն ինչ կստանաք»[2]:

Տեղյա՞կ էր արդյոք Ադրբեջանի ղեկավարությունը Հայաստանի տարածքում նախիջևանցիների այդ գաղտնի գործակալների գործունեության մասին, թե ոչ՝ միանշանակ պատասխանել չենք կարող: Բայց որ Կարսի կոնֆերանսի օրերին վեղիբասարցիների պատվիրակության Կարսում հայտնվելը և Վեղու շրջանը Նախիջևանին միացնելու ուղղությամբ աշխատանք տանելը պատահական չէր և կատարվել էր ոչ միայն Նախիջևանի, այլև Ադրբեջանի ղեկավարության գիտությամբ, իսկ գուցեև գաղտնի հրահրանքով, դա անառարկելի է[3]: Այդ փաստին դեռ կանդրադառնանք:

Վերադառնալով Եռանկյունի գոտու խնդրին, հարկադրված ենք արձանագրել, որ արխիվներում շատ չնչին բան է պահպանվել Նախիջևանի հյուսիս-արևմտյան հատվածում սահմանի ճշտման գործընթացի մասին: Նախ ասենք, որ Չիչերինին այլևս չէր հետաքրքրում այդ հարցը, նա կարծես թե բավարարվել էր այդ կապակցությամբ ապրիլին տրված հանձնարարություններով և չէր հետևում գործընթացին՝ նույնիսկ երբ դրանք խախտվում էին: Այսպես օրինակ, Ադրբեջանի կողմից Եռանկյունի գոտու հարցի լուծումը հանձնարարված էր Շահթախթինսկուն, ինչի մասին վկայություն կա Լեգրանի՝ Ադրբեջանի արտգործժողկոմ Հուսեյնովին ուղարկած մայիսի 27-ի նամակում: «**Ինչ որ բան անո՞ւմ է ընկ. Շահթախթինսկին**, – հարցնում է Լեգրանը Հուսեյնովին, – **Բեկզադյանի հետ միասին պարզելու համար Նախիջևանի մարզի հյուսիսային սահմանի ուղղման հարցը**» (ընդգծումը մերն է – Է. Զ.): Մինչդեռ, ինչպես արդեն վերը տեսանք, Չիչերինը դեմ էր Շահթախթինսկու թեկնածությանը ինչպես Եռանկյունի գոտու խնդրի լուծման, այնպես էլ Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին նրա մասնակցության հարցում, ինչի մասին նա պարզ արտահայտվել էր Բեկզադյանի հետ զրույցում, իսկ վերջինս էլ այդ մասին հայտնել էր Շավերդովին և Աթաբեկովին հասցեագրած հեռախոսագրում: Բայց ինչպես երևում է, Շահթախթինսկին Ադրբեջանի համար անփոխարինելի գործիչ էր որպես դիվանագետ, ուստի և նրան է հանձնարարում ոչ միայն Հայաստանի հետ Նախիջևանի հյուսիս-արևմտյան սահմանի ճշտման հարցը, այլև իր երկիրը Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսում ներկայացնելու պատիվը: Իսկ Հայաստանի ղեկավար գործիչները, ինչպես երևում է, կա՛մ մոռացության էին տվել Չիչերինի կարծիքը, կա՛մ էլ ուղղակի չէին փորձել հակադրվել Ադրբեջանին՝ դա համարելով նրա ներքին գործը:

Ինչևէ, թե ինչպիսի լուծում ստացավ Եռանկյունի գոտու հարցը Կարսի կոնֆերանսում, կտեսնենք քիչ հետո, իսկ առայժմ ծանոթանանք Հայաստանի ազգային արխիվում պահվող երկու փաստաթղթերի, որոնցում չոչափված է մեզ հետաքրքրող հարցը: Դրանցից առաջինը ,,Մեմորանդում" (հուշագիր) է՝ Կարսում Թուրքիայի հետ առաջիկա կոնֆերանսում քննարկման համար Հայաստանի կողմից առաջարկվող հարցերի: Իսկ երկրորդը՝ «Պայմանագրի նախագիծ Հայաստանի և Թուրքիայի միջև»: Երկու փաստաթղթերն էլ թվագրված չեն, բայց դատելով նրանց բովանդակությունից (հատկապես Նախիջևանի հարցում) դժվար չէ ենթադրել, որ «Մեմորանդումը» կազմվել է ավելի վաղ՝ դեռ մինչև Եռանկյունի գոտու հարցում Ադրբեջանի և Հայաստանի միջև համաձայնության կայացումը՝ հավանաբար հունիսին: Այսպես օրինակ, քաղաքական հարցեր բաժնում[1] նախատեսվում էր սահման-

[1] Նույն տեղում, գ. 32, փ. 3, թ. 82:

[2] Նույն տեղում, գ. 65, փ. 3, թ. 6:

[3] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, էջ 281:

[1] «Մեմորանդում»-ն ուներ տնտեսական հարցերի մի ամբողջ շարք՝ Թուրքիային որոշ տոկոս հատկացնելու պայմանով Հայաստանին իրավունք վերապահել շահագործելու Կարսի մարզում՝ Օլթիի քարածխի, Կաղզվանի մկնդեղի հանքերը և Սարիղամիշի անտառները, Սուրմալուի գավառում՝ Կողբի աղահանքերը, եթե դրանք չվերադարձվեն Հայաստանին: Առաջ էր քաշված նաև Թուրքիայի հետ արտաքին առևտրի (կողմերի առավել բարենպաստման սկզբունքով), վերաբնակեցման հարց (հայրենիք անարգել վերադառնալու սկզբունք) և այլն (մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 167-168):

ների ուղղում երեք մասերում. ա) Սուրմալուի գավառում (առաջարկվում էր Կողբի աղահանքերի շրջանը թողնել Հայաստանին), բ) Նախիջևանի երկրամասի հատվածում և գ) Արփաչայի չեզոք գոտում (առաջարկվում էր այն ընդլայնել և այնտեղ մտցնել խառը Թուրք-հայկական վարչություն):

Մեզ հետաքրքրողը „Բ" կետն է, որտեղ ասված էր, որ առաջարկվում է **«Նախիջևանի երկրամասի նկատմամբ հովանավորությունը հանձնել Հայաստանին կամ էլ հաստատել նոր սահման Քյանդը-Խոկ-Ազնաբերդ-Սուլթան-բեկ գծով և այնուհետև ուղիղ գծով մինչև Կյուկիդաղ լեռը»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.): Մեմորանդումը նաև անդրադառնում էր երկրամասի հովանավորությունը Հայաստանին հանձնելու պահանջի հիմնավորմանը՝ արձանագրելով, որ Մոսկվայի պայմանագրով Նախիջևանի երկրամասի առանձնացումը որպես ինքնավար միավոր «Հայաստանը զրկում է՝ առաջին, միակ հարմար ուղուց, որը նրա կենտրոն Երևանը կապում է Դարալագյազի և Զանգեզուրի հետ (Բաշ-Նորաշեն-Արփի-Քեշիշքենդ ճանապարհը), Երկրորդ, կորցնում է հարուստ բամբակի և աղի շրջանները և երրորդ՝ անմիջական կապը Պարսկաստանի հետ»[2]: Ինչ վերաբերում է Քյանդը-Խոկ-Ազնաբերդ-Սուլթան-բեկ գծով անցկացվելիք սահմանագծին, ապա թեև դրա համար Մեմորանդումը որևէ բացատրություն չի տալիս, բայց նայելով քարտեզին՝ դժվար չէ հասկանալ, որ նրա կազմողները նկատի են ունեցել Արփա գետի ջրերով ոռոգվող Շարուրի դաշտի այդ հատվածը (Շահթախթիից հյուսիս-արևմուտք), որտեղ կային բամբակի հարուստ պլանտացիաներ:

Այսպիսին է Մեմորանդումի Նախիջևանին վերաբերող մասը: Քննարկվե՞լ է այն Ադրբեջանի հետ բանակցություններում, թեկուզ, ասենք, Եռանկյունի գոտու հարցի կապակցությամբ: Կարծում ենք, որ ո՛չ: Այդ մասին ոչ մի հիշատակություն չի պահպանվել ո՛չ արխիվներում, ո՛չ էլ մամուլում: Հիշատակություն չի պահպանվել անգամ Եռանկյունի գոտու բաժանման չուրջ Բեկզադյանի և Շահթախթինսկու միջև բանակցությունների մասին: Կարծես թե դրանք չեն էլ եղել: Իսկ որ Եռանկյունի գոտին ոչ թե ամբողջությամբ է տրվել Հայաստանին, ինչպես Զիչերինն էր ասում, այլ բաժանվել է Նախիջևանի և Հայաստանի միջև և այն էլ դեռ մինչև Կարսի կոնֆերանսը, դա երևում է

[1] Նույն տեղում, թ. 167:
[2] Նույն տեղում:

«Հայաստանի և Թուրքիայի միջև պայմանագրի նախագծից»՝ կազմված Հայաստանի կառավարության կողմից: 14 հոդվածներից բաղկացած այդ փաստաթղթի 3-րդ հոդվածը նվիրված է Նախիջևանի երկրամասի կարգավիճակին: Նրանում ասված է, որ «երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը ներկա պայմանագրի I (B) հավելվածում նշված սահմաններում կազմում է ինքնավար տարածք Ադրբեջանի հովանավորության տակ»[1]:

Սա առաջին պաշտոնական փաստաթուղթն է, որում արձանագրված է Խորհրդային Հայաստանի համաձայնությունը Նախիջևանի երկրամասը Ադրբեջանի հովանավորության տակ դնելուն և միաժամանակ չեղյալ է հայտարարված այդ հովանավորությունը Հայաստանին հանձնելու վերաբերյալ Մեմորանդումում առաջ քաշված պահանջը: Բայց պարզվում է, որ դա միակ զիջումը չէ, որ կատարել է Հայաստանը Նախիջևանի հարցում: I (B) հավելվածում Նախիջևանի երկրամասի տարածքի նկարագրությունից պարզ է դառնում, որ Հայաստանի կառավարությունը հրաժարվել է նաև Մեմորանդումում առաջ քաշված մյուս պահանջից (սահմանագիծը անցկացնել Քյանդը-Խոկ-Ազնաբերդ-Սուլթան-բեկ գծով), և որ առանձնապես կարևոր է՝ զիջել նաև Եռանկյունի գոտու հարցում՝ համաձայնելով նրա բաժանմանը այնպես, որ իրեն բաժին է ընկել միայն նշված գոտու հյուսիսային մասը (Արարատ կայարանից մինչև Արազդայան կայարան) մնացածը (Արազդայանից մինչև Գայլի Դրունք վայրը) թողնելով Նախիջևանին: Ահա Հայաստանը Նախիջևանից բաժանող սահմանագիծը, որ նշված է պայմանագրի նախագծի I (B) հավելվածում. «Գյուղ Ուրմիա-կայ. Արազդայան (միայն) – լեռ Դաշ-Բուրուն (4108) – լեռ Բոհարսրխ (6607) – լեռ 6629 – լեռ Քյոմուրլու-դաղ (6639) – լեռ 3080 – լեռ Սայթ-դաղ (7868) - գյուղ Կուրթ-կուլաղ-լեռ Գամեսուր-դաղ (8160) – լեռ 8022 – լեռ Կյուկի-դաղ (10282) և Նախիջևանի գավառի նախկին արևելյան վարչական սահմանը»[2]:

Ի՞նչ բացատրություն կարող ենք տալ նշված սահմանագծին: Եթե Մեմորանդումում առաջ քաշված պահանջներից նահանջելը կարելի է բացատրել Մոսկվայի պայմանագրի պարտադիր լինելու պայմանով, ապա նույն բանն ասել Եռանկյունի գոտու մասին չենք կարող: Մոսկվայի կոնֆերանսի նյութերին ծանոթանալիս մենք տեսանք, որ Թուր-

[1] Նույն տեղում, թ. 155:
[2] Նույն տեղում, գ. 23, թ. 37

քական պատվիրակության հետ Զիչերինի երկար բանավեճից հետո կողմերը ի վերջո համաձայնեցին, որ Գայլի Դրունքից հյուսիս-արևմուտք ընկած Եռանկյունի գոտու հատվածը (նույնն է թե՝ Երևանի գավառի հարավ-արևմտյան մասը) համարվում է վիճելի և նրա պատկանելիության հարցը կլուծվի Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից: Իսկ երբ Բաքվի խորհրդակցությունը (մայիսի 7-ին) Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին հանձնարարեց լուծել այդ հարցը և միասնական կարծիքով հանդես գալ Թուրքիայի հետ կայանալիք կոնֆերանսում, ապա մի պահ թվաց, թե գոնե այդ հարցը կլուծվի Հայաստանի օգտին, առավել ևս, որ խորհրդակցությունում Շահթախթինսկին հայտարարեց, որ Ադրբեջանը միշտ էլ իր ծայրագույն սահմանը համարել է Գայլի Դրունքը: Բայց դա տեղի չունեցավ, ինչպես արդեն նշեցինք Արազդայանից Գայլի Դրունք հատվածը մնաց Նախիջևանի կազմում: Ինչո՞վ բացատրել, արդյո՞ք դա արդյունք էր «տեղացի, գիտակ ընկերների» կողմից սահմանագծի ճշտման՝ ինչպես դա, հավանաբար, հրամցրել է Շահթախթինսկին իր հայ գործընկերոջը, թե դարձյալ գործ ունենք Թուրքական գործոնի հետ, ավելի ճիշտ Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդհանուր սահման ունենալու երկուստեք ձգտման հետ: Եվ, թեև ադրբեջանցի պատմաբաններն այդ հարցին երբեք չեն անդրադարձել (ո՛չ նախկինում՝ խորհրդային ժամանակաշրջանում, և ոչ էլ մեր օրերում), իսկ մեր արխիվներում էլ բացարձակապես ոչինչ չի պահպանվել, բայցևայնպես կարծում ենք, որ այս հարցում ևս, ինչպես որ Նախիջևանի հարցի լուծման գործում ընդհանրապես, մենք գործ ունենք Թուրք-ադրբեջանյան ընդհանուր սահմանի ստեղծման փաստի հետ: Դրանում կհամոզվենք, երբ կանդրադառնանք Կարսի կոնֆերանսին ու կտեսնենք, թե ինչպես համարյա առանց առարկության Կարաբեքիր փաշան համաձայնվեց Հայաստանի և Նախիջևանի երկրամասի միջև սահմանագծի նման փոփոխության հետ:

* * *

Կարսի Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսը[1] (1921թ. սեպտեմբերի 26 – հոկտեմբերի 13) քննարկել է մի շարք քաղաքական ու տնտեսական հարցեր, որոնց վրա մենք կանգ չենք առնի, նախ որովհետև այդ հարցերն ամենայն մանրամասնությամբ լուսաբանված են հայ-թուրքական հարաբերություններին նվիրված մեր գրքում[1], և հետո՝ դրանք դուրս են մեր հետաքրքրությունների շրջանակից: Ուստի կանգ կառնենք միմիայն սահմանագծային հարցերի վրա, հատկապես Նախիջևանի խնդրի հարցում:

Տանտիրոջ իրավունքով բացելով կոնֆերանսը և ողջունելով Անդրկովկասի պատվիրակներին «թուրքական հողի վրա», Կարաբեքիր փաշան թուրքական պատվիրակության անունից խկույն երկու առաջարկ արեց.

1. Նիստերի արձանագրությունները կատարել ֆրանսերեն լեզվով և հետո թարգմանել թուրքերեն, ռուսերեն, հայերեն և վրացերեն:

2. Դաշնագրերը կնքել բոլոր երեք հանրապետությունների հետ առանձին-առանձին պայմանագրերով[2]:

Ֆրանսերենը միջազգային հարաբերությունների լեզու էր, հետևապես ընդունելի: Ինչ վերաբերում է Կարաբեքիրի երկրորդ առաջարկին, ապա այն անընդունելի էր կովկասցիների համար: Ուստի և պատասխան ելույթում Յակ. Գանեցկին մերժում է Կարաբեքիրի երկրորդ առաջարկությունը, մատնացույց է անում Անդրկովկասյան հանրապետություններում տեղի ունեցող տնտեսական ու քաղաքական միավորման փաստը և թուրքերին առաջարկում Անդրկովկասը դիտել որպես մեկ միասնական կողմ և համապատասխան պայմանագիր կնքել նրա հետ: Սակայն Կարաբեքիր փաշան մերժում է Գանեցկու առաջարկությունը՝ հայտարարելով, թե իր պատվիրակությունը Անդրկովկասյան հանրապետությունների հետ միասնական պայմանագիր կնքելու իրավունք չի ստացել իր կառավարությունից, հետևապես ստիպված են դիմել Անկարային և սպասել նրա պատասխանին:

Պայմանագրի ձևի մասին վիճաբանությունները (առանձին-առանձին, թե՞ ընդհանուր) կողմերի միջև շարունակվեցին հետագա մի շարք նիստերի ընթացքում և բավականին համառ բնույթ ստացան: Ամեն անգամ նիստերում դեմ առնելով կովկասյան պատվիրակների համառ պնդումներին՝ թուրքական պատվիրակությունը հետաձգում էր հարցի լուծումը՝ հայտարարելով, թե ստիպված է նորից դիմել Անկարային, իսկ հաջորդ նիստին նորից էր առաջ քաշում առանձին պայմանագրերի

[1] Թուրքական պատվիրակության ղեկավարն էր Կարաբեքիր փաշան, Ռուսաստանը ներկայացնում էր Յակ. Գանեցկին, Հայաստանը՝ Մռավյանը և Մակինցյանը, Վրաստանը՝ Էլիավան և Սվանիձեն, Ադրբեջանը՝ Շահթախթինսկին և Աբիլովը:

[1] Տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922), Եր. 1979, էջ 265-305:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, 19 հոկտ. 1926թ.:

գաղափարը՝ ըստ որում վկայակոչելով ոչ միայն հարցի իրավական կողմը, այլ նաև Մոսկվայի պայմանագիրը, որտեղ խոսք չկար Անդրկովկասի հանրապետությունների հետ միասնական պայմանագիր ստորագրելու մասին: Կոնֆերանսի չորրորդ նիստը (սեպտ. 30-ի) ամբողջովին զբաղվեց պայմանագրի ձևի հարցով: Գանեցկու ելույթը նվիրված էր միասնական պայմանագրի թե՛ իրավական և թե քաղաքական նշանակության հարցին: Նա համոզիչ կերպով ցույց տվեց, որ իրավական տեսակետից ոչ մի տարբերություն չկա կոլեկտիվ և առանձին պայմանագրերի միջև: Ինչ վերաբերում է հարցի քաղաքական կողմին, ապա այն ավելի շատ ձեռնտու պետք է լինի Թուրքիային, որովհետև աշխարհին ցույց են տալիս, որ իրենք միավորվում են և միասնական, ամուր ու եղբայրական դաշինք են կնքում թուրք ժողովրդի հետ: Պատասխան խոսքում Կարաբեքիր փաշան կեղծ գոհունակություն է հայտնում Անդրկովկասյան հանրապետությունների նման ձգտման համար, բայց միաժամանակ փորձում առանձին պայմանագրեր կնքելու գաղափարը այլ կերպ պարտադրել: Նա առաջարկում է պայմանագիրը բաժանել երկու մասի՝ առաջին մասում զետեղել ընդհանուր բնույթի հոդվածները, որոնք վերաբերում են բոլոր հանրապետություններին, իսկ երկրորդ մասում՝ ըստ առանձին հանրապետությունների, սկսած սահմաններից և այնուհետև նրանցից յուրաքանչյուրին վերաբերող մյուս հոդվածները: Սակայն Կարաբեքիրի այս փորձն էլ չանցավ (վտանգ կար, որ պայմանագրի երկրորդ մասը կդառնա առանձին հանրապետություններին՝ հատկապես Հայաստանին, պարտադրվող պայմանագիր), ուստի և կովկասցիները մերժեցին այդ փորձը ևս: Այդժամ թուրքական պատվիրակության ղեկավարը հայտարարեց, որ իր կառավարությունը «պայմանագրի իրավաբանական կողմն ապահովելու նպատակով ցանկալի է համարում, որ իրեն հայտնեն գոյություն ունեցող միասնության ինչպես ձևի, այնպես էլ այն մասին, թե ինչքանով է այն վերաբերում արտաքին ներկայացուցչությանը: Նա անհրաժեշտ է համարում գոյություն ունեցող միասնությունը ներքին հարց համարել այնքան ժամանակ, քանի դեռ իրեն այդպիսի հայտարարություն չի արվել...»[1]:

Անդրկովկասյան պատվիրակները հավաստիացրեցին թուրքերին, որ համապատասխան հայտարարություններ կարվեն: Եվ իսկապես, հոկտեմբերի 1-ին Սվանիձեն, Շահթախթինսկին և Մռավյանը առանձին հայտարարություններ ուղարկեցին Անկարայի կառավարությանը՝ երեք հանրապետությունների տնտեսական և քաղաքական միասնության մասին: Նույնը հաստատող հեռագիր ուղարկեց նաև Զիչերինը, որից հետո Անկարան տվեց իր համաձայնությունը միասնական պայմանագիր կնքելու մասին[1]: Պայմանագրի ձևի մասին մոտ հինգ օր տևած բանավեճը ի վերջո ավարտվեց խորհրդային պատվիրակների հաղթանակով, որը միաժամանակ առաջին և վերջին հաղթանակն էր: Մնացած բոլոր հարցերը (սահմանագծային, տնտեսական) լուծվեցին թուրքական պատվիրակության օգտին, որը ցուցաբերեց համառություն, անզիջում վարքագիծ հատկապես Հայաստանին վերաբերող հարցում:

Մոսկվայի պայմանագրով գծված սահմանները բավականին ընդհանուր բնույթ էին կրում: Պատճառն այն ժամանակ (1921թ. փետրվար-մարտ) Հայաստանում և Վրաստանում պատերազմական վիճակն էր, որը զրկել էր սահմանները տեղում ճշտելու հնարավորությունից: Այդ բացը պետք է լրացներ Կարսի կոնֆերանսը, որի համար էլ ստեղծվել էր սահմանագծային հանձնաժողով (նրանում Հայաստանը ներկայացնում էր Վլ. Թամրուչին), որն իր հերթին բաժանվել էր երկու ենթահանձնաժողովի՝ թուրք-հայկական և թուրք-վրացական սահմանագծի ուսումնասիրման և ճշտման համար: Մենք, ինչպես որ վերը նշել ենք, կանգ կառնենք թուրք-հայկական սահմանագծի հարցի վրա:

Հենց սկզբից ասենք, որ թուրք պատվիրակները սահմանների որոշման հարցում խստորեն կառչում էին Մոսկվայի պայմանագրից և պահանջում ոչ մի փոփոխություն չմտցնել նրա մեջ: Միաժամանակ օգտվելով այն բանից, որ պայմանագրում չէր ասված, որ քարտեզի և տեքստի միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է տեքստին, պնդում էին, որ սահմանների վրա նշված բոլոր գյուղերը պատկանում են իրենց: Այնուամենայնիվ հայ և վրաց պատվիրակներին հաջողվեց որոշ ուղղումներ մտցնել սահմանագծի մեջ, որոնք թեև իրենց չափերով նշանակալից չէին, բայց կարևոր էին, որովհետև վերաբերում էին Վրաստանի սահմանում Բաթումի, իսկ Հայաստանի սահմանում՝ Ալեքսանդրապոլի հատվածին (ճշտորեն հաստատվեց սահմանագիծը Ճորոխ գետի ձախ ափով, Հայաստանին մնացին Մեծ Աղրաբա լեռան հյուսիս-արևմտյան լանջերը, Իրիչ գյուղից հյուսիս-արևելք ընկած սարահարթը): Սակայն մի շարք տեղամա-

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 125:

[1] Մանրամասն տե՛ս **Է. Ա. Զոհրաբյան**, նշվ. աշխ., էջ 265-275:

սերի չուրջ համաձայնություն չկայացվեց (Սարպ գյուղը, սահմանը Սաբաուր գյուղի շրջանում, Քավթառեթի գյուղը՝ Թուրք-վրացական սահմանում և Նոր Կիզիլդաշ ու Վարթանլու գյուղերը, Անին, Կողբը՝ հայ-թուրքական սահմանում) և որոշվեց հարցը փոխադրել կոնֆերանսի պլենում: Ըստ որում, Անիի և Կողբի պատկանելիությունը վիճելի չէր, երկուսն էլ գտնվում էին Թուրքիային անցած տարածքներում: Հայաստանի համար պատմամշակութային խիստ կարևոր արժեք ներկայացնող Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները, որոնք գտնվում են Արփաչայի անմիջականորեն աջ ափին, Մոսկվայի պայմանագրով Արփաչայը սահմանագիծ ընդունելով, մնացել էին Թուրքական մասում: Հայաստանի կառավարությունն էլ կարծելով, թե դա թյուրիմացության արդյունք է, և հեշտ շտկելի (չէ՞ որ ընդամենը մեկ-երկու քառ. կմ. տարածքի մասին է խոսքը), մտցրել էր իր կազմած «Հայ-թուրքական պայմանագրի» նախագծի սահմանների մեջ:

Երբ անցում կատարվեց Անիի խնդրին, Կարաբեքիր փաշան հայտարարեց, որ ինքը դեմ չի Անիի ավերակները Հայաստանին թողնելուն, բայց պետք է այդ մասին հարցում անի կառավարությանը: Նա առաջարկեց Արփաչայը ընդունել որպես վերջնական սահմանագիծ և ապա Անկարայի դրական պատասխանի դեպքում մի առանձին հոդված ընդունել, որտեղ կասվի, որ Թուրքիան Անին զիջում է Հայաստանին: Նման մոտեցումը ընդունելի չէր Անդրկովկասյան պատվիրակության համար, քանի որ նույն պայմանագրում Անիի վերաբերյալ իրար հակասող երկու հոդված կլիներ, որոնցից մեկում ասվում է, որ Անին պատկանում է Թուրքիային (Արփաչայը սահմանագիծ ընդունելու դեպքում), իսկ մյուսում, որ Անին անցնում է Հայաստանին: Ուստի Գանեցկին առաջարկեց Անիի հարցը հետաձգել մինչև Անկարայի պատասխանի ստացումը: Բանավիճելով Կարաբեքիրի հետ՝ Գանեցկին մատնացույց է անում Եվրոպայում տիրող կարծիքը Հայաստանի սահմանների հարցում, ցույց տալիս, որ Եվրոպայում շատ լավ տպավորություն կթողնի Անիի զիջումը Հայաստանին և ընդգծում, որ Անիի հարցը էական նշանակություն ունի ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի համար: Կարաբեքիրը վերջապես զիջեց և Անիի հարցը հետաձգվեց մինչև Անկարայի պատասխանի ստացումը:

Սահմանային մյուս հարցերի քննարկման ժամանակ Թուրքական պատվիրակության առաջարկությամբ որոշվեց առաջնորդվել բնական սահմաններով՝ գետերով, ջրբաժաններով և այլն: Սա ճիշտ մոտեցում էր, և խորհրդային պատվիրակները չառարկելով հանդերձ ավելացրին, որ եթե սահմանագիծը գյուղերով է անցնում, ապա պետք է հաշվի

առնել տվյալ գյուղի տնտեսական, իսկ խառը բնակչություն ունենալու դեպքում նաև ազգագրական կազմը: Այդպիսին էր Քավթառեթի, Վարթանլու, Կիզիլդաշ գյուղերի հարցը, որոնց միջով գետ էր հոսում և Թուրք պատվիրակները պնդում էին, որ գետն ընդունվի իբրև սահման: Սակայն հայ և վրաց պատվիրակները՝ հարազատներին իրարից չկտրելու նպատակով, համաձայնեցին, որ նշված գյուղերի իրենց անցնող մասերը մնան Թուրքերին: Այդպես վարվելով, հույս ունեին փոխադարձ վերաբերմունքի Թուրքերի կողմից՝ հատկապես Անիի հարցում: Բայց շուտով պարզվեց, որ Թուրքերը ինչպես Անիի, այնպես էլ ընդհանրապես Հայաստանին վերաբերող ոչ մի հարցում որևէ զիջում անելու մտադրություն չունեն: Ահա թե ինչ է գրում Մռավյանը Մյասնիկյանին ուղարկած հոկտեմբերի 6-ի հեռագրում. «Երեկվա խորհրդակցությունը զբաղված էր հայկական հոդվածներով: Թուրքերը խիստ անհաշտվողականություն ցուցաբերեցին, հրաժարվեցին զիջել Անիի ավերակները, մերժեցին Կողբի կոնցեսիան[1], երկար համառում էին հայ-թուրքական պատերազմի մասնակիցների ամնիստիայի հարցում...Վեճերը խիստ տաք էին: Այսօր դրանք կշարունակվեն»[2]: Նույն բանն է ասված Զիչերինին ուղարկած Գանեցկու հեռագրում, որում շեշտված է, որ Թուրքերը չեն գնում փոխադարձ զիջման ճանապարհով, թեև անդրկովկասյան հանրապետությունները մի շարք հոդվածներում էական զիջումներ արեցին Թուրքերին[3]:

Հայաստանին առնչվող խնդիրների շարքում էր նաև Հայաստանի և Նախիջևանի միջև Եռանկյունի գոտու հատվածում սահմանի ճշտման հարցը, որն ըստ Մոսկվայի պայմանագրի պետք է լուծեր Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողովը: Եվ թվում էր, թե Թուրք պատվիրակները, որոնք բոլոր հարցերը լուծելիս կառչում էին Մոսկվայի պայմանագրից (այդպես մերժեցին Անիի ավերակները Հայաստանին հանձնելու հարցը), կօգտագործեն այդ հնարավորությունը, կպահանջեն հանձնաժողով ստեղծել, կփորձեն միջամտել Հայաստանի և Ադրբեջանի ներքին գործերին, կպնդեն Մոսկվայում իրենց առաջ քաշած սահմանագծի վրա: Սակայն դա տեղի չունեցավ: Ի զարմանս հայ, վրաց և ռուս պատվի-

[1] Անիի նկատմամբ Թուրքերի ցուցաբերած վերաբերմունքից հետո հայ պատվիրակները որոշել էին Կողբը Հայաստանին վերադարձնելու փոխարեն առաջ քաշել Կողբի աղահանքերի շահագործման պահանջ՝ կոնցեսիոն կարգով:

[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 137:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 231:

բակների, Կարաբեքիր փաշան շատ հանգիստ ընդունեց Գանեցկու հայտարարությունն այն մասին, որ Ադրբեջանն արդեն լուծել է Հայաստանի հետ Նախիջևանի սահմանի հարցը և եթե Թուրքական պատվիրակությունը չի առարկում, ապա հարցը կարելի է լուծված համարել: Մեջբերենք այդ կապակցությամբ Գանեցկու և Կարաբեքիրի երկխոսությունը, որը տեղի է ունեցել սեպտեմբերի 27-ին.

*«**Գանեցկի** – Սահմանների կապակցությամբ այստեղ պետք է ավարտել մի ձևական հարց ևս: Եռանկյունու վերաբերյալ հարցը: Ես ինձ թույլ եմ տալիս հիշեցնելու, որ այդ առթիվ ընդունված է որոշում, սահմանը հաստատում է հայկական, ադրբեջանական, թուրքական ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողովը: Ինչ վերաբերում է երկու անդրկովկասյան հանրապետություններին, ապա այդ հարցը լուծված է և հետևաբար ես կրկնում եմ, որ ամբողջ այդ հարցը կարելի է ավարտված համարել: Եթե թուրքական պատվիրակությունը համաձայն է, ապա սահմանի հարցը կարելի է հենց այստեղ համարել ավարտված:*

***Կարաբեքիր փաշա** – Թուրքական պատվիրակությունը ընդունում է Ադրբեջանի և Հայաստանի հաստատած սահմանը և վաղը կարելի կլինի վերջնականորեն դա ձևակերպել»*[1]:

Ճիշտ է, հաջորդ օրը Նախիջևանի մասին հոդվածը չձևակերպվեց, և ընդհանրապես մինչև հոկտեմբերի 3-ը այդ հարցին չանդրադարձան: Բայց ուշագրավը Կարաբեքիրի վերաբերմունքն է, նրան չի հետաքրքրում, թե ինչպիսի սահմանագիծ է անցկացվել, արդյո՞ք այդ վիճելի տարածքը բաժանվել է կողմերի միջև, թե ամբողջությամբ տրվել է կողմերից մեկն ու մեկին: Այդ ամենը կարծես թե նրան չէր հետաքրքրում, կամ էլ, որ առավել հավանական է, նա նախապես գիտեր կատարված բաժանման մասին: Նման ենթադրության համար հիմք կարող է ծառայել Շահթախթինսկու կապը Կարսի հետ:

Ընդհանրապես Կարսի կոնֆերանսի նյութերի հետ ծանոթությունը ցույց է տալիս, որ Նախիջևանի խնդիրը կողմերին առանձնապես չի հետաքրքրել: Արձանագրություններում համարյա ոչինչ չկա, շատ սուղ տեղեկություններ են պարունակում Գանեցկու՝ Չիչերինին ուղարկած և Մռավյանի՝ Մյասնիկյանին ուղարկած հեռագրերում: Ահա օրինակ, ինչ է գրում Գանեցկին Չիչերինին հոկտեմբերի 3-ին, այսինքն՝ այն նույն օրը, երբ ձևակերպվեց Նախիջևանի վերաբերյալ հոդվածը.

[1] *Նույն տեղում, գ. 21, թ. 137:*

«Տաք վեճեր եղան Նախիջևանի և Բաթումի հարցում, քանի որ թուրքերը պնդում էին, որ այդ հոդվածներից յուրաքանչյուրի համար հավելված կցվի պայմանագրին, որում ճշտորեն որոշված կլինեն այդ մարզերի ինքնավարության ընդհանուր հիմունքները, մշակված հենց այստեղ՝ կոնֆերանսում համապատասխան հանրապետությունների և թուրքերի հետ մեկտեղ: Վերջապես նրանք համաձայնեցին, որ հավելվածներ չեն լինի և կբավարարվեն միայն կոնֆերանսի նիստում Նախիջևանի և Բաթումի մարզերում գոյություն ունեցող կարգի մասին Ադրբեջանի և Վրաստանի կողմից տրված բացատրությամբ, որը կմտցվի արձանագրության մեջ»[1]: *Ինչ վերաբերում է Մյասնիկյանին հասցեագրած Մռավյանի հեռագրերին, որոնցում չոչափվում է Նախիջևանի հարցը, ապա դրանք երկուսն են՝ տրված հոկտեմբերի 4-ին և 5-ին: Առաջինում խոսելով նախորդ օրը (3-ին) թուրքերի հետ ունեցած երկու խորհրդակցությունների մասին և հայտնելով, որ «թուրքերը հատկապես համառում են Բաթումի հարցում», այնուհետև անցնում է Նախիջևանի խնդրին՝ ավելացնելով, որ «**նրանք** (թուրքերը – Է. Զ.) **ցուցաբերեցին մեծ հետաքրքրություն Նախիջևանի նկատմամբ: Ընդունված է մեր խմբագրությամբ հոդվածը**» և այնուհետև հեռագրի վերջում նորից է անդրադառնում Նախիջևանի խնդրին, ասելով, թե «այստեղ եկան վեղիբասարցիների ներկայացուցիչները՝ Նախիջևանին միանալու պահանջով: Մասնավոր կերպով հաջողվեց նրանց հանգստացնել»*[2] *(ընդգծումը մերն է – Է. Զ.): Թե ինչ հետաքրքրություն են ցուցաբերել թուրքերը Նախիջևանի նկատմամբ, Մռավյանը չի ասում: Այդ բացը լրացնում է Չիչերինին հասցեագրած Գանեցկու հոկտեմբերի 3-ի հեռագիրը, որից տեղեկանում ենք, որ թուրքերին հետաքրքրում էր Նախիջևանի ինքնավարության հարցը: Բայց դատելով այն իրողությունից, որ Նախիջևանին ինքնավարություն չնորհելու մասին հատուկ չի չեչտված Նախիջևանի վերաբերյալ հոդվածում, պետք է ենթադրել, որ թուրքերին այն չի հետաքրքրել այնպես, ինչպես Բաթումի հարցը, որի մասին մի առանձին պարագրաֆ է զետեղված (6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը), որով Վրաստանից պահանջվում է ապահովել Բաթումի մարզի համար «լայն տեղական ինքնավարություն»*[3] *և այլն:*

Իսկ հիմա տեսնենք, թե ինչ է ասված Նախիջևանին ինքնավար

[1] *Նույն տեղում, թ. 87:*

[2] *Նույն տեղում, գ. 23, թ. 55:*

[3] *«Документы внешней политики СССР», т. IV, М., 1960, էջ 423.*

տարածքի կարգավիճակ չունորհող Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածում և որքանով է այն «մեր խմբագրությամբ», ինչպես Մռավյանն է ասում.

***«Հոդված 5** – Թուրքական կառավարությունը և Հայաստանի ու Ադրբեջանի խորհրդային կառավարությունները համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ ներկա պայմանագրի 3-րդ հավելվածում ցույց տրված սահմաններում, կազմում է ինքնավար տարածք Ադրբեջանի հովանավորության տակ»*[1]*:*

Եթե համեմատելու լինենք ներկա հոդվածը Հայաստանի կառավարության ընդունած «Հայաստանի ու Թուրքիայի միջև պայմանագրի նախագծի» Նախիջևանին վերաբերող հոդվածի հետ, ապա երկու էական տարբերություն կտեսնենք. 1-ինն այն է, որ հայկական նախագծում ասված է, որ «Երկու պայմանավորվող կողմերը (այսինքն՝ Հայաստանը և Թուրքիան) համաձայն են, որ Նախիջևանի մարզը...», և այնուհետև ինչպես տեքստում: Երկրորդ տարբերությունն այն է, որ Ադրբեջանը Նախիջևանի նկատմամբ իր իրավունքներով հավասարեցված է Հայաստանին և Թուրքիային. «Թուրքական կառավարությունը և Հայաստանի ու Ադրբեջանի խորհրդային կառավարությունները համաձայն են...» և այլն: Եթե հիշենք, որ Մոսկվայի պայմանագրով Թուրքիան և Ռուսաստանը համաձայնեցին, որ Նախիջևանի երկրամասը դրվի Ադրբեջանի հովանավորության տակ «պայմանով, որ Ադրբեջանը այդ հովանավորությունը չի դիջի ոչ մի երրորդ պետության», այսինքն՝ Հայաստանին, ապա պարզ կդառնա, որ Ադրբեջանը չպետք է տեղ գտներ Հայաստանի և Թուրքիայի կողքին՝ Նախիջևանի ինքնավարությունը ճանաչողների շարքում: Պարզ է նաև, որ դա արված է Նախիջևանի նկատմամբ Ադրբեջանի իրավունքը ամրապնդելու նկատառումով: Միայն պարզ չէ, թե ո՞ւմ թեթև ձեռքով է դա կատարվել, արդյո՞ք Շահթախթինսկու, թե՞ Թուրքական պատվիրակության:

*Դատելով Մռավյանի հոկտեմբերի 5-ի հեռագրից՝ դա Շահթախթինսկու ձեռքի գործն է: Հեռագրի սկզբում խոսելով նախորդ օրվա նիստի լարվածության մասին և չեշտելով, որ «կոնֆերանսի վրա սավառնում է մեկը մյուսին չվստահելու ոգին» և, որ Բաթումի հարցում Թուրքերը շարունակում են համառել իրենց ծրագրի վրա, Մռավյանը վերջում հանկարծ մի նախադասությամբ անդրադառնում է Նախիջևանի հարցին՝ ասելով. «...**հիշում եմ մեր պայմանը** (դժվար ընթեռնելի է – Է. Զ.) **Նախիջևանի հարցի մասին, հայտնեցեք չիֆրով, հնարավոր է Շահթախթինսկուն կբերենք Երևան»**[1] (ընդգծումը մերն է – Է. Զ.):*

Շահթախթինսկուն իսկապես կոնֆերանսից հետո բերեցին Երևան, բայց թե ինչի մասին են խոսել, մնում է անհայտ: Միայն հայտնի է, որ հոկտեմբերի 15-ին, կեսօրին ժամը 12-ին, Շահթախթինսկին Մռավյանի և Մակինցյանի հետ մեկտեղ, Շահումյանի անվան բանվորական ակումբի բալկոնից ելույթ ունեցավ հավաքված բազմության (կարմիրբանակայիններ, բանվորներ և ծառայողներ) առջև և հավաստիացրեց, որ կոնֆերանսի արդյունքները բարենպաստ են երկու կողմերի համար էլ և որ պայմանավորվող կողմերը անկեղծ էին իրենց ձգտումներում[2]*:*

Մի կողմ թողնելով երկու կողմերի անկեղծ ձգտումների մասին կեղծ հայտարարությունը, որը սովորաբար հրապարակային ելույթների լեզու է, ասենք, որ Շահթախթինսկուն Երևան բերելու համար մի այլ հիմնավոր պատճառ էլ կարող էր լինել, դա վեղիբասարցիների պատվիրակության Կարս ժամանելը և Նախիջևանին միանալու պահանջ առաջ քաշելն է, որից հայկական կողմը, հասկանալի է, դժգոհ պետք է մնար: Եվ քանի որ Հայաստանի ղեկավարությունը տեղյակ էր Շահթախթինսկու նախորդ գործունեությանը Նախիջևանի հարցում, ուստի նա կարող էր կասկածել, որ վեղիբասարցիների այդ ելույթն էլ հրահրված էր Շահթախթինսկու կողմից: Անգամ եթե չի հրահրել, բայցևայնպես կարող էր կանխել, ինչը չէր արել:

Թե ի՞նչն էր իրական պատճառը Շահթախթինսկուց Մռավյանի դժգոհության, արդյո՞ք Նախիջևանի ինքնավարության հարցում Ադրբեջանին Հայաստանի և Թուրքիայի կողքին դնելը, թե՞ վեղիբասարցիների Կարս ժամանելը և Նախիջևանին միանալու պահանջը, այդպես էլ անհայտ է մնում:

Դառնալով «Նախիջևանի տարածքը» վերնագիրը կրող Կարսի կոնֆերանսում ընդունված 3-րդ հավելվածին, ապա պետք է արձանագրենք, որ այն ամբողջովին համընկնում է հայ-թուրքական պայմանագրի նախագծում տեղ գտած I (B) հավելվածին: Պարզապես առաջինում առկա են սահմանագծի նկարագրության որոշ մանրուքներ: Բայց որպեսզի ընթերցողն էլ համոզվի դրանում, մեջբերենք այդ երկու հավելվածները.

---

[1] *Նույն տեղում:*

[1] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 56:*

[2] *Տե՛ս „Правда Грузии", N = 189, 18 окт.1921г.*

Հավելված I (B) – Նախիջևանի տարածքը:

«Գյուղ Ուրմիա - Արազդայան կայարան (բացառապես) – լեռ Դաշ-Բուրուն (4108) – լեռ Բահարսդ (6607) – լեռ 6629 – լեռ Քյոմուրլու-դաղ (6639) – լեռ 3080 – լեռ Սայաթ-դաղ (7868) - գյուղ Գուրդ-գուլաղ - լեռ Գամեսուր-դաղ (8160) – լեռ 8022 – լեռ Կյուկի-դաղ (10282) և Նախիջևանի գավառի նախկին արևելյան վարչական սահմանը»[1]:

Հավելված III – Նախիջևանի տարածքը.

«Գյուղ Ուրմիա - այստեղից ուղիղ գծով՝ Արազդայան կայարան (թողնելով այն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը) - այնուհետև ուղիղ գծով դեպի արևմտյան Դաշ-Բուրուն լեռ (3142) - արևելյան Դաշ-Բուրուն լեռան ջրբաժան գիծ (4108) - անցնում է Ջհանամ-դարասի գետով «Աղբյուր»-ից (Բուլաղ) (հարավ) դեպի հարավ – ընթանում Բահարսդ լեռան ջրբաժան գծով (6607 կամ 6587) և այստեղից ընթանում է նախկին Երևանի օկրուգի և Շարուր-Դարալագյազի գավառի վարչական սահմանով և 6629 բարձունքով դեպի Քյոմուրլու-դաղ լեռ (6839 կամ 6930) և այստեղից դեպի 3080 բարձունք – Սայաթ-դաղ (7868) - Գուրդ-Գուլաղ (Գյուրդ-Գուլաղ) գյուղ - Գամեսուր-դաղ լեռ (8160) – 8022 բարձունք – Կյուկի-դաղ (10282) և նախկին Նախիջևանի օկրուգի արևելյան վարչական սահմանը»:[2]

Այսպիսին են սահմանները Հայաստանի և Նախիջևանի միջև, այսպես Երևանի գավառի հարավ-արևելյան մի հատվածը ևս կտրվեց Խորհրդային Հայաստանից և միացվեց Նախիջևանի երկրամասին, որով և ապահովվեց Թուրք-ադրբեջանական ընդհանուր սահմանի առկայությունը Ուրմիա գյուղից (Արաքսի ձախ ափին), մինչև Ստորին Կարասուի թափվելը Արաքս գետը (Արաքսի աջ ափին), ընդամենը չուրջ 9-10 կմ. երկարությամբ մի սահման, բայց անչափ կարևոր, քանի որ մեր օրերում (ԽՍՀՄ փլուզումից հետո) հենց սահմանի այդ հատվածով է ապահովվում Ադրբեջանի կապը Թուրքիայի հետ: Ուստի ճիշտ չէ մեր պատմագրության մեջ տեղ գտած այն կարծիքը, ըստ որի՝ Թուրքիան 30-ական թվականներին Իրանի հետ տարածքների փոխանակություն է կատարել Նախիջևանի հետ ընդհանուր սահման ունենալու համար: Թուրքիան Իրանից բաժանող սահմանագիծը հիմա էլ անցնում է Ստորին Կարասուով: Իսկ այդ նեղ շերտը (լեզվակը) նախկին Սուրմալուի գավառի այն հատվածն է, որը Արաքս գետը սահման ընդունելուց հետո անցել էր Թուրքիային:

Կարսի կոնֆերանսում Հայաստանին առնչվող մյուս հարցերին՝ տնտեսական (Կողբի աղահանքերի կոնցեսիայի, Ալեքսանդրապոլի դեպոյի թալանված գույքի վերադարձման), պատերազմի մասնակիցների ամնիստիայի, գաղթականների վերադարձի և այլն, մենք չենք անդրադառնում, նախ՝ որովհետև դուրս են մեր ուսումնասիրության թեմայի շրջանակներից և հետո՝ ինչպես արդեն նշվել է, այդ հարցերը ամենայն մանրամասնությամբ լուսաբանված են 1920-1922թթ. հայ-թուրքական հարաբերություններին նվիրված մեր գրքում: Ճիշտ նույն նպատակով չենք անդրադառնում նաև Վրաստանի (հատկապես Բաթումի հարցում) և Ադրբեջանի (նավթի մատակարարման) հետ առնչվող հարցերին, ինչպես նաև հոկտեմբերի 13-ին ստորագրված պայմանագրին, որի վավերացրած օրինակները փոխանակվեցին 1922թ. սեպտեմբերի 12-ին Երևանում:

* * *

Ամփոփենք այս գլխում շարադրվածը.

1. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո Չիչերինը լծվեց իր առաջ ծառացած երկու գլխավոր խնդիրների իրականացման գործին (1. համոզել միջազգային հանրությանը, որ Թուրքիային կատարված տարածքային զիջումներն այլընտրանք չունեին, 2. պարտադրել Անդրկովկասյան հանրապետություններին Մոսկվայի պայմանագրի հիմքի վրա պայմանագրեր կնքել Թուրքիայի հետ) և, եթե առաջին խնդրում հաջողություն չունեցավ, ապա երկրորդը հաջողությամբ իրականացրեց:

2. Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը դժգոհ մնաց Մոսկվայի կոնֆերանսի որոշումներից, ինչն իր արտահայտությունը գտավ Չիչերինին հասցեագրած Ալ. Բեկզադյանի բողոք-նամակում, ինչպես նաև Բեկզադյանի պատվիրակության գործունեությանը հավանություն տված Հայկոմկուսի Կենտկոմի մայիսի 19-ի պլենումի որոշման մեջ: Ինչ վերաբերում է Չիչերինի պատասխան գրություններին՝ ուղղված Ս. Տեր-Գաբրիելյանին և Բ. Լեգրանին, ապա դրանք անհամոզիչ էին, թեև նա այդ գրություններում բացահայտեց որոշ գաղտնիքներ՝ հարցերը անդրկուլիսյան բանակցություններում վճռելու, այդ գործում ղեկավար գործիչների մասնակցության և այլն:

3. Չիչերինը մտահոգված էր Երևանի գավառի հարավ-արևելյան

---

[1] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 37:*

[2] *«Документы внешней политики СССР», т. IV, էջ 429.*

հատվածը՝ այսպես կոչված Եռանկյունի գոտին (Արարատ կայարանից մինչև Գայլի Դրունք ընկած հատվածը) Նախիջևանին անցնելու խնդրով, քանի որ դրանով իսկ անմիջական կապ էր ստեղծվում Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Այդ է պատճառը, որ Բաքու՝ Հուսեյնովին ուղարկած հրահանգներում, խոսելով այն մասին, որ Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի վերջնական որոշումը Մոսկվայի պայմանագրով թողնված է Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի հայեցողությանը, միաժամանակ առաջ է քաշում այն միտքը, որ Գայլի Դրունքից հյուսիս-արևմուտք ընկած հատվածը (Եռանկյունի գոտի) Թուրքերն անարդարացիորեն են կտրել Հայաստանից: Քաջատեղյակ Մոսկվայի կոնֆերանսում Նախիջևանի ճակատագրի վճռման գործում Շահթախթինսկու խաղացած դերին՝ Չիչերինը միաժամանակ Բեկզադյանին խորհուրդ է տալիս Հայհեղկոմի միջոցով կանխել Շահթախթինսկու մասնակցությունը Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի ճշտման հարցին:

4. Բաքվի մայիսի 7-ի խորհրդակցությունը (մասնակցում էին Օրջոնիկիձեն, Լեգրանը, Օրախելաշվիլին, Հուսեյնովը, Շահթախթինսկին և Բեկզադյանը) ավելի շատ զբաղվեց տվյալ հավաքույթը կոնֆերանս թե խորհրդակցություն անվանելու Հուսեյնով-Բեկզադյան բանավեճով, քան օրակարգային հարցերով, որոնք արագ լուծում ստացան (Թուրքիայի հետ Անդրկովկասյան հանրապետությունների միացյալ կոնֆերանսի, բանակցությունները Մոսկվայի պայմանագրի հիմքի վրա վարելու և այլն): Խորհրդակցությունը կոնֆերանս հայտարարելու և օրակարգում դրված հարցերին լուծում տալու Հուսեյնովի ջանքերը ապարդյուն անցան: Առարկում էր Բեկզադյանը՝ վկայակոչելով այն փաստը, որ օրակարգային հարցերը չեն քննարկվել հանրապետություններում, հետևապես չի կարելի կոնֆերանս անվանել, որի որոշումները պարտադիր կատարում են պահանջում: Օրակարգի վերջին հարցի՝ Նախիջևանի և Հայաստանի միջև սահմանի խնդրի մասին զեկուցում է Շահթախթինսկին, որը տեղեկացնելով հանդերձ, որ ինքը Չիչերինին ասել է, որ ճիշտ սահմանը Գայլի Դրունքն է, միաժամանակ վերջում ավելացնում է, թե արդարացի կլինի, որ հաշվի առնվի նաև «տեղացի, գիտակ ընկերների կարծիքը»:

Թվում էր, թե Բեկզադյանը կհասկանա Շահթախթինսկու հեռահար նպատակը և կկառչի Գայլի Դրունքը սահման ճանաչելու գաղափարից, բայց ո՛չ: Ի պատասխան Շահթախթինսկուց հետո հանդես եկած Լեգրանի այն կարծիքի, որ «հարցին այնպիսի լուծում կտրվի, ինչպես որ մենք կորոշենք», նա հայտարարում է, որ ինքը «չի կարող ճիշտ սահման նշել տեղանքին ծանոթ չլինելու պատճառով»: Դրան հաջորդում է Օրջոնիկիձեի առաջարկությամբ ընդունված որոշումը. «Հանձնարարել Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին տեղում ճշտելու սահմանը՝ համաձայն ազգագրական սկզբունքի, ինչպես նաև այդ հարցի վերաբերյալ տեղական ազգաբնակչության մոտ ձևավորված կարծիքի»: Իսկ դա նշանակում էր, որ Ադրբեջանը կօգտվի այդ որոշումից և սահմանագիծը Գայլի Դրունքից առաջ կմղի դեպի հյուսիս-արևմուտք և ձեռք կգցի Եռանկյունի գոտու մի մասը ևս, ինչը և նա կատարեց հետագայում՝ Հայաստանի հետ սահմանն անցկացնելով Արազդայանով: Գայլի Դրունքից Արազդայան հատվածը պահելով իրեն՝ Ադրբեջանը դրանով իսկ ապահովեց կապը Թուրքիայի հետ[1]: Դա Շահթախթինսկու գծի հաղթանակն էր:

5. Չնայած իր տնտեսական ծանր դրությանը՝ Հայաստանն իր սուղ միջոցներից չարունակում էր բաժին հանել Նախիջևանին՝ նպատակ ունենալով ամեն կերպ օգնել նրան տնտեսությունը վերականգնելու, հատկապես աղահանքերի չահագործումը վերսկսելու գործում: Մայիս ամսին Հայկոմկուսի Կոնտկոմը իր նիստերում երկու անգամ անդրադարձել է Նախիջևանին օգնելու խնդրին և որոշում կայացրել (մայիսի 31-ին) 15 մլն. ռուբլու վարկ տրամադրել Նախիջևանին: Իսկ երբ սեպտեմբերի 5-ին Մյասնիկյանը Կավբյուրոյի նիստում բարձրացրեց Նախիջևանին տնտեսական օգնություն ցույց տալու հարցը, ապա այդ նույն նիստում հանձնարարվեց Հայաստանին բաց թողնել Նախիջևանի համար 20 հազ. ռուբլի ոսկով: Մինչդեռ այդ նույն ժամանակամիջոցում Ադրբեջանը զբաղված էր Նախիջևանը Հայաստանի ազդեցությունից կտրելու խնդրով, ինչի մասին են վկայում նրա երկու բողոքդիմումները Կավբյուրոյին (Հունիսի 12-ի և հոկտեմբերի 10-ի), որոնցում մեղադրում էր Հայաստանին Նախիջևանի ներքին գործերին միջամտելու մեջ:

6. Նախապատրաստվելով Կարսի կոնֆերանսին, Հայաստանի կառավարությունը մշակել էր Մեմորանդում (հուշագիր) և «Պայմանագրի նախագիծ Հայաստանի և Թուրքիայի միջև»: Զեթվագրված այդ երկու փաստաթղթերը Նախիջևանի հարցում խիստ տարբեր մոտեցումներ են նախանշում: Եթե Մեմորանդումով առաջարկվում է կա՛մ Նախիջևանի երկրամասի նկատմամբ հովանավորությունը հանձնել Հայաս-

[1] Պրոֆ. Ա. Հակոբյանը սխալմամբ Արազդայանը նույնացրել է Գայլի Դրունքի հետ (տե՛ս նրա «Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում», Եր., 2010 թ., էջ 306, 307):

տանին, կա՛մ էլ սահմանը անցկացնել Քյանդը-խոկ-Ազնաբերդ-Սուլ-թան-բեկ գծով մինչև Կյուկի-դաղ՝ համապատասխան հիմնավորում-ներով, ապա հայ-թուրքական պայմանագրի նախագծում խոսվում է այն մասին, որ երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նա-խիջևանի երկրամասը կազմում է ինքնավար միավոր Ադրբեջանի հո-վանավորության տակ: Ընդ որում պայմանագրի նախագծի հավելվա-ծում նշված սահմանները համընկնում են Կարսի պայմանագրով գծված սահմանագծին: Իսկ դա նշանակում է, որ Մեմորանդումը և հայ-թուրքական պայմանագրի նախագիծը տարբեր ժամանակում են կազմվել. Մեմորանդումը հավանաբար ապրիլին կամ մայիսին, իսկ պայմանագրի նախագիծը արդեն Եռանկյունի գոտու բաժանումից հետո (հունիսին կամ հուլիսին):

7. Կարսի կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը խստո-րեն կառչում էր Մոսկվայի պայմանագրից և պահանջում ոչ մի փոփո-խություն չկատարել նրանում: Այսպես մերժեցին Անիի ավերակները Հայաստանի սահմաններում թողնելու անրդկովկասյան պատվիրա-կության պահանջը, մերժվեցին նաև Կողբի աղահանքերի չահագոր-ծումը կոնցեսիոն կարգով Հայաստանին հանձնելու, Ալեքսանդրապոլի դեպոյի թալանված գույքը վերադարձնելու պահանջները և այլն: Ընդ-հանրապես թուրքերը շատ անզիջում էին Հայաստանին վերաբերող հարցերում և նրա կողմից առաջ քաշված և ոչ մի հարց լուծում չստա-ցավ: Միակ հարցը, որ թուրքերը չառարկեցին և շատ չուտ համաձայն-վեցին, դա Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի հաստատումն էր: Կարաբեքիրը չպահանջեց խառը հանձնաժողովի (Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի ներկայացուցիչների) ստեղծում, չփորձեց պաշտպանել թուրք փորձագետների գծած սահմանները Մոսկվայում, այլ իսկույն հանաձայնեց Գանեցկու առաջարկության հետ՝ ճանաչելու Ադրբեջանի և Հայաստանի կողմից գծված սահմանները: Իսկ դա նշա-նակում է, որ նա նախապես տեղյակ էր գծված սահմանների մասին:

8. Կարսի կոնֆերանսում Նախիջևանի վերաբերյալ հոդվածը տարբերվում է Հայաստանի կառավարության կազմած հայ-թուրքա-կան պայմանագրի նախագծից նրանով, որ ըստ վերջինի՝ Ադրբեջանի հովանավորության տակ Նախիջևանին ինքնավարություն չնորհողի դերում հանդես են գալիս Հայաստանը և Թուրքիան, մինչդեռ Կարսի պայմանագրի համապատասխան հոդվածում Հայաստանի և Թուր-քիայի կողքին ավելացված է Ադրբեջանի անունը: Դա նշանակում է, որ Ադրբեջանը Նախիջևանի նկատմամբ իր իրավունքներով հավասարեց-ված է Հայաստանին և Թուրքիային: Ուրեմն սխալվում էր Մռավյանը

հոկտեմբերի 4-ին հեռագրելով Մյասնիկյանին, թե «ընդունված է մեր խմբագրությամբ հոդվածը», իսկ 5-ին՝ թե «Շահթախթինսկուն կբե-րենք Երևան»: Ինչո՞վ էր դժգոհ Մռավյանը Շահթախթինսկուց, արդ-յո՞ք Նախիջևանի հարցում Ադրբեջանին Հայաստանի և Թուրքիայի հետ նույն հարթության վրա դնելուց, ինչը նա կարող էր անել թուր-քերի հետ գաղտնի համաձայնությամբ, թե՞ վեդիբասարցիների Կարս գալու և Նախիջևանին միանալու պահանջից, ինչը, անտարակույս, չէր կարող տեղի ունենալ առանց Շահթախթինսկու գիտության: Դրանք հարցեր են, որոնց պատասխանը արխիվներում հայտնաբերել մեզ չհաջողվեց:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մոսկվայի ռուս-թուրքական և Կարսի թուրք-անդրկովկասյան պայմանագրերով ստանալով Նախիջևանի երկրամասի նկատմամբ հովանավորության իրավունք, Ադրբեջանի ղեկավարությունը դրանով չբավարարվեց, այլ իսկույն ևեթ ձեռնամուխ եղավ երկրամասը ամբողջովին իրեն ենթարկելու, Ադրբեջանի անբաժան մաս դարձնելու խնդրի լուծման գործին: Դեռ նոր էր տեղի ունեցել Կարսի պայմանագրի վավերացրած օրինակների փոխանակությունը Երևանում (1922թ. սեպտ. 12-ին), երբ Ադրբեջանի ղեկավարությունը առաջ քաշեց Նախիջևանի երկրամասը ինքնավարության իրավունքով Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ ընդգրկելու մասին հարցը և այդ նպատակով դիմեց Խորհուրդների անդրկովկասյան առաջին համագումարի կազմկոմիտեին՝ խնդրելով այդ մասին համապատասխան որոշում կայացնել: Վերջինս էլ՝ ընդառաջելով Ադրբեջանի ղեկավարության խնդրանքին, այդ հարցը մտցրեց օրակարգ, որի արդյունքում 1922թ. դեկտեմբերին գումարված Խորհուրդների անդրկովկասյան առաջին համագումարը կայացրեց որոշում Նախիջևանի ԽՍՀ-ն ինքնավարության սկզբունքով վերակառուցելու մասին: Շուտով ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեն ևս անդրադարձավ այդ հարցին (1923թ. հունվարին) և որոշեց առաջարկել Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմին Խորհուրդների անդրկովկասյան առաջին համագումարի որոշման հիման վրա Նախիջևանի ԽՍՀ-ն վերակառուցել որպես ինքնավար մարզ Ադրբեջանական ԽՍՀ կազմում:

Թվում էր, թե դա առաջ կբերի Նախիջևանի եթե ոչ ազգաբնակչության, ապա գոնե ղեկավարության դժգոհությունը: Չէ՞ որ Նախիջևանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վեր էր ածվում ինքնավար միավորի և մտցվում Ադրբեջանի կազմի մեջ, որով խուզվում էին նրանց իրավունքները, ստանում ստորադաս կարգավիճակ: Բայց ո՛չ, փետրվարի 27-ին բացված Խորհուրդների համանախիջևանյան երրորդ համագումարը, քննարկելով Նախիջևանի ԽՍՀ-ն Ադրբեջանի կազմի մեջ ինքնավար միավորի իրավունքով մտնելու հարցը, որոշեց.

«1. Ճանաչել Նախիջևանի ԽՍՀ-ն Ադրբեջանական ԽՍՀ-ի անքակտելի մաս, որի կազմի մեջ մտնելը համարել կենսական անհրաժեշտություն.

2. Լուծարել Նախիջևանի Կենտգործկոմը և Ժողկոմխորհը և բոլոր ժողկոմատները,

3. Երկրամասի կառավարման համար ընտրել 17 անդամներից և 7 թեկնածուներից բաղկացած «Նախիջևանի երկրամասային գործադիր կոմիտե»,

4. Նախիջևանի ողջ երկրամասը իր ամբողջ ապարատներով մտցնել Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ ինքնավար երկրամասի իրավունքով»[1]:

1923թ. հունիսի 16-ին Ադրբեջանի Կենտգործկոմը որոշում կայացրեց Նախիջևանի երկրամասը Ադրբեջանին միացնելու մասին, ինչը սակայն իսկույն ևեթ առաջ բերեց Թուրքական կառավարության դժգոհությունը: Տասն օր էլ չէր անցել, երբ Մոսկվայում ստացվեց Թուրքական կառավարության բողոքի նոտան: ՌԽՖՍՀ կառավարությանը հասցեագրած 1923թ. հունիսի 25-ի նոտայում Նախիջևանի երկրամասի միացումը Ադրբեջանին որակելով որպես Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (1921թ. մարտի 16-ի) 3-րդ հոդվածի և Կարսի թուրք-անդրկովկասյան պայմանագրի (1921թ. հոկտեմբերի 13-ի) 5-րդ հոդվածի ուղղակի խախտում, Թուրքիայի արտգործմինիստրը գրում է. «Իմ կառավարության ցուցումով ես լիազորված եմ տեղյակ պահելու ՌԽՖՍՀ կառավարությանը, որ Թուրքիան այդ միացումը համարում է անվավեր այն պատճառով, որ այդ աննեքսիան հանդիսանում է վերոհիշյալ պայմանագրերի բացահայտ խախտում, և որ Թուրքիան վճռական կերպով բողոքում է այդ տարածքի անվերապահ միացման փաստի դեմ»[2]:

Թուրքիայի Արտաքին գործերի մինիստրության բողոքի նոտան անհետևանք չանցավ. Մոսկվայի ցուցումով Ադրբեջանի Կենտգործկոմի նախագահությունը ստիպված եղավ վերանայել իր որոշումը և 1924թ. փետրվարի 9-ին ընդունել հետևյալ որոշումը. «Նախիջևանի երկրամասը վերակառուցել Նախիջևանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ադրբեջանի ԽՍՀ պրոտեկտորատի տակ»[3]:

Այսպես Թուրքիայի միջամտությունը կանխեց Նախիջևանի երկրամասի միացումը Ադրբեջանին: Սակայն այդ վիճակը պահպանվեց

---

[1] *Г. Мадатов*, նշվ. աշխ., էջ 158:

[2] „Геноцид армян...", էջ 633:

[3] Նույն տեղում:

մինչև 1936թ. դեկտեմբերը, երբ ստալինյան սահմանադրությամբ Նախիջևանի երկրամասի կարգավիճակը կրկին փոխվեց և նա ինքնավար հանրապետության կարգավիճակով մտցվեց Ադրբեջանի կազմի մեջ:

1966թ. նորից առաջացավ Նախիջևանի կարգավիճակի փոփոխման անհրաժեշտություն: Բանն այն է, որ 1966թ. մայիսի 31-ին ԽՍՀՄ Արտաքին գործերի մինիստրությունը ԽՄԿԿ Կենտկոմի պահանջով նախապատրաստեց և Միջին Արևելքի երկրների բաժնի վարիչ Ս. Կիկոտևի և պայմանագրային-իրավական բաժնի վարիչ Օ. Խլեստովի ստորագրությամբ ներկայացրեց տեղեկանք «Նախիջևանի ԻԽՍՀ-ն խորհրդա-թուրքական պայմանագրերում»: Տեղեկանքում ներկայացնելով Մոսկվայի և Կարսի պայմանագրերի Նախիջևանին վերաբերող հոդվածները և ամփոփելով՝ հետևություն է արվում, թե «չարաղրվածի լույսի ներքո Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կարգավիճակի վերանայումը կնշանակի ետ կանգնել պայմանագրային պարտավորություններից, որ վերցրել է իր վրա Խորհրդային Միությունը վերը նշած համաձայնագրերով: Դրա հետ մեկտեղ այդ քայլը կարող է առաջ բերել խորհրդա-թուրքական հարաբերությունների բարդացում: Թուրքական կողմը կարող է Նախիջևանի կարգավիճակի վերանայումը որակել որպես կնքված պայմանագրերի խախտում և օգտագործել այդ հանգամանքը դրանք չեղյալ հայտարարելու համար»[1]: Այս ամենին հետևում է վերը նշված բաժինների եզրակացությունն այն մասին, որ իրենք նպատակահարմար չեն համարում Նախիջևանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության «կարգավիճակի փոփոխման ուղղությամբ ինչ-որ քայլերի ձեռնարկումը»:

Դժվար է ասել, թե ինչն է հարկադրել ԽՄԿԿ Կենտկոմին ստալինյան սահմանադրությամբ Ադրբեջանի կազմում ինքնավար հանրապետության կարգավիճակ ստանալուց 30 տարի անց անդրադառնալ Նախիջևանի կարգավիճակին: Արդո՞ք դա կապված էր նախապատրաստվող նոր սահմանադրության հետ (սահմանադրական հանձնաժողովը ստեղծվել էր Ն. Խրուշչովի ժամանակ և նրա գահընկեցությունից հետո այն գլխավորել է Լ. Բրեժնևը), թե՞ ղարաբաղցիների բողոքի՝ Ղարաբաղի Ինքնավար Մարզի կարգավիճակի մասին (1965-1966թթ. ղարաբաղցիները 40 հազար ստորագրություն էին հավաքել և դիմել ԽՄԿԿ Կենտկոմ ինքնավար մարզը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին փոխանցելու առաջարկությամբ): Ինչ էլ որ լիներ պատճառը, հետևանքը զրոյական է. Բրեժնևյան սահմանադրությամբ (1977թ.) ո՛չ Ղարաբաղի կարգավիճակը փոխվեց, ո՛չ էլ Նախիջևանի: Եվ այդ վիճակը պահպանվեց ընդհուպ մինչև Խորհրդային Միության փլուզումը:

Խորհրդային Միության փլուզմանը զուգընթաց ամբողջ Ադրբեջանում գրոհ սկսվեց արտաքին սահմանների վրա, որի արդյունքում պետական սահմանները քանդվեցին: Առաջինների շարքում էին նախիջևանցիները, որոնք ձեռնարկեցին պետական սահմանի և հատկապես Թուրքիայի հետ սահմանի քանդումը (Արազդայանից Գայլի Դրունք հատվածում), որով հնարավորություն ստեղծվեց Արաքսի վրայով կամուրջ կառուցելու և Իգդիրի շրջանի հետ աշխույժ կապերի մեջ մտնելու համար: Մեր օրերում Թուրքիան Նախիջևանի հետ սերտ առևտրատնտեսական կապեր է պահպանում: Նախիջևանը ողողված է Թուրքական արտադրության ապրանքներով: Իսկ Ադրբեջանի հետ տարածքային կապ չունեցող Նախիջևանն իր գյուղատնտեսական արտադրանքը (Նախիջևանը ինչպես որ եղել էր գերազանցապես գյուղացիական երկիր, այնպես էլ մնացել է), մեծ դժվարությամբ է իրացնում Թուրքիայում, քանի որ Թուրքիայի հարակից շրջանները նմանապես գյուղատնտեսական են (նախկինում իրացնում էին հիմնականում Հայաստանում): Իսկ եթե դրան ավելացնենք նաև այն, որ նախիջևանցիների մի զգալի մասը աշխատում է կենտրոնական Թուրքիայի քաղաքներում և արդյունաբերական այլ շրջաններում, ապա պատկերը միանգամայն պարզ կդառնա. Նախիջևանը աստիճանաբար վեր է ածվում Թուրքիայի սոսկական մի նահանգի: Առավել ևս, եթե իրականություն դառնա Արաքսի աջ ափով դեպի Նախիջևան տանող երկաթուղու կառուցման Թուրքիայի մտադրությունը, ինչի մասին տեղեկացվում է մամուլում:

[1] Նույն տեղում, էջ 632:

Зограбян Э. А.

НАХИЧЕВАНСКАЯ ПРОБЛЕМА В 1920-1921 ГГ.

РЕЗЮМЕ

После установления советской власти в Азербайджане (апрель 1920 г.) армяно-азербайджанские отношения ещё более обострились*. Используя присутствие 11-ой Красной Армии, Азербайджан начал говорить с Арменией языком ультиматума, пытаясь решить спорные территориальные вопросы в свою пользу. Вопросы территориального разграничения между Арменией и Азербайджаном были обсуждены на Московских русско-армянских переговорах летом (июнь-июль) 1920г. Архивные материалы, а также "воспоминания" члена армянской делегации А. Тертеряна показывают, что правительство России не было склонно удовлетворить территориальные притязания националистически настроенных бакинских руководителей. Выдвинув в начале переговоров схему разделения спорных областей "Карабах - спорный, Зангезур и Нахичевань -Армении", наркоминдел Г. Чичерин затем под давлением азербайджанских руководителей вынужден был отступить и во второй половине июня предложил новую схему "Карабах - Азербайджану, Зангезур - спорный, Нахичевань -Армении". Однако и эта схема не была реализована: Азербайджан и Турция (кемалистская) настаивали на неподписании договора с Арменией, и в начале июля переговоры были прерваны с тем, чтобы возобновить их уже в Ереване. Несмотря на такой исход, эти переговоры убедительно показывают, что летом 1920г. Москва твёрдо стояла на том, что Нахичеванский край есть неотъемлемая часть Республики Армения.

После подавления Майского восстания большевиков правительство Армении приступило к выполнению задач, необходимых для укрепления

* В своих предыдущих (*"Межнациональные столкновения в Ереванской губернии 1918 г."*, Ер., 2000 и *"Нахичеванская проблема и "союзники" Армении (1918-1920)"*, Ер., 2002) работах автором были описаны развернувшиеся события, в результате которых был завершен геноцид коренного населения - армян исторической Нахичевани. А начало геноцида было положено во время турецкой оккупации 1918 г.

внутреннего положения республики. Такой задачей правительство считало покорение населённых азербайджанцами мятежных районов (Зангибасар, Ведибасар, Шарур-Нахичевань), которые вооружились, организовали боевые отряды и не признавали власти правительства республики. 18-го июня Зангибасару был предъявлен ультиматум о выдаче турецких и азербайджанских агитаторов и признании власти республики. Не получив ответа, правительство послало войска, которые и очистили этот район от мятежников. То же самое произошло и с Ведибасаром: 11-го июля армянские войска начали наступление, 12-го заняли весь район, а 14-го перешли Волчьи Ворота (Гайли Друнк) и вступили в Шарурский район. Разгромленный турецкий отряд перебрался на правый берег Аракса, а азербайджанская конница и местные вооружённые силы оступили к г. Нахичевань. Потеряв возможность сопротивления, руководители Нахичевани прибегли к хитрости: начав переговоры с правительством Армении об условиях признания её власти, вместе с тем провозгласили советскую власть и обратились к находившимся в Зангезуре Красным войскам. 28-го июля передовые части Красной Армии вступили в Нахичевань, а 30-го командованию армянских войск предложили приостановить дальнейшее наступление. Так завершилась удачно начатая нахичеванская операция армянских войск.

Одним из главных вопросов в русско-армянских переговорах лета 1920г. являлся вопрос Шарур-Нахичевани. По заключенному в Тифлисе 10-го августа Соглашению о перемирии между Арменией и Россией было установлено, что спорные территории Карабах, Зангезур и Нахичевань временно, до окончательного решения их судьбы на азербайджано-армянской смешанной конференции с обязательным участием представителя России, занимаются русскими войсками, а Шарур остается за Арменией. Армения также получила право эксплуатации железнодорожной линии Шахтахты-Джульфа. Однако такое решение вопроса не устраивало ни Баку, ни Анкару. Под предлогом установления непосредственной связи между кемалистскими силами и вступившей в Нахичевань Красной Армией, они настойчиво требовали занять Шахтахты русскими или турецкими войсками. Председатель турецкой делегации Бекир Сами-бей на встрече с Лениным (14-го августа) настойчиво просил дать согласие, хотя бы устное, на занятие на территории Армении Шахтахты и Сарикамиша турецкими силами. По поручению Ленина Чичерин по телеграфу обсудил этот вопрос с Орджоникидзе и Кировым и дал положительный ответ турецкой делегации. Воспользовавшись этим, турецкие войска 23-го сентября перешли в общее наступление против Республики Армения.

Вопрос о спорных между Арменией и Азербайджаном территорий особенно остро стоял на октябрьских переговорах Б. Леграна с правительственной делегацией Армении в Ереване. Переговоры завершились 28-го октября. Был подготовлен проект мирного договора между РСФСР и Республикой Армения и подписан “Протокол заключительного постановления”, в одном из пунктов которого было сказано, что “правительства РСФСР и АССР признают незыблемые права Республики Армения на территории спорных областей - Нахичеванского и Зангезурского уездов и выведут из пределов этих уездов все войсковые части, находящиеся в подчинении командования РСФСР и АССР”. Однако созванное 4-го ноября в г. Баку совместное заседание Политбюро ЦК АКП(б) и Кавбюро РКП(б) с участием И. Сталина, не одобрило представленный проект договора и поручило Сталину вести по этому вопросу переговоры с Москвой. На следующий день, 5-го ноября, за подписью Сталина и Орджоникидзе в Москву была послана телеграмма, в которой говорилось, что проект договора не может быть подписан немедленно и нуждается в подробном рассмотрении и существенном изменении. Этим самым была поставлена точка на выработанном в Ереване проекте договора между РСФСР и Республикой Армения.

Турецко-армянская война, которую развернули кемалисты против Республики Армения в конце сентября 1920г., завершилась поражением последней. Правительство Оганджаняна вынуждено было принять тяжелые условия перемирия (18-го ноября), а также согласиться на созыв конференции в Александрополе для выработки условий мира и подписания договора.

Территориально-разграничительные вопросы были главными и вместе с тем самыми болезненными вопросами Александропольской конференции (25-го ноября - 2-го декабря). Работа конференции проходила по сценарию, заранее намеченному кемалистской дипломатией. Воспользовавшись безвыходным положением Республики Армения, кемалисты навязали ей непомерно тяжёлые условия мира. Армения вынуждена была не только отказаться от Севрского договора, но и уступить Турции Карскую область и Сурмалинский уезд. Не удовлетворившись таким расчленением, Турция заставила Армению отказаться также от Шарур-Нахичевани, которые по договору переходили под протекторат Турции. Отторжение Шарур-Нахичевани от Армении явилось результатом азербайджано-турецкой антиармянской политики.

Так называемая „наримановская декларация” от 1-го декабря 1920г. о передаче Армении спорных между Арменией и Азербайджаном территорий, была ничем иным, как простым пропагандистским актом, целью которой было способствование установлению советской власти в Армении. В действи-

тельности азербайджанское руководство никогда не отказывалось от идеи присоединения Карабаха, Зангезура и Нахичевани к Азербайджану. Изменились лишь методы достижения этой цели: лишившись силового метода, Нариманов и его окружение стали прибегать к таким средствам достижения цели, какими являются нефть и шантаж (в вопросе Карабаха), подкуп руководства (в вопросе Зангезура), единоверная и родственная Турция (в вопросе Нахичевани).

Вскоре после опубликования декларации в Нахичевань прибыл член Азревкома Б. Шахтахтинский и совместно с командиром турецкого отряда Вейсал-беем развернул широкую антиармянскую пропаганду среди населения края. На митинге, созванном в г. Нахичевань, Шахтахтинский объявил: «Азербайджан вас продал. Если бы я был в Баку, то не допустил бы этого... Теперь вы взирайте на турок. Они ваше единственное спасение. Крепко держитесь за них».

Достоверные архивные материалы показывают, что, ведя усиленную антиармянскую пропаганду среди населения, запретив всякое сообщение (железнодорожное и т. д.) между Ереваном и Нахичеванью, вместе с этим турецкие агенты Вейсал-бея в январе-феврале 1921г. в разных местах края организовали ряд антисоветских мятежей (в г. Нахичевань, в селах Джагри, Тиркеш, Карачух и т. д.) с целью захватить власть на местах, объявить о присоединении края к Турции и таким образом поставить Московскую русско-турецкую конференцию перед свершившимся фактом.

Хотя с заключением Александропольского договора и советизацией остальной части республики Армения фактически была разделена между Турцией и Советской Россией, однако окончательный её раздел был осуществлён только по Московскому русско-турецкому договору “О дружбе и Братстве”. Слепо доверяя лживым заявлениям турецких националистов о готовности бороться против западного империализма и стремясь любой ценой удержать турок на своей стороне, советское руководство по всем вопросам (политическим, экономическим и т. д.) шло навстречу им. Территориальные притязания турок были удовлетворены за счет Армении за её спиной.

Крёстным отцом Московского договора был И. Сталин. Спорные вопросы (особенно территориальные) разрешались не на пленарных заседаниях конференции, а на закулисных переговорах Сталина с турецкими делегатами. В письме Чичерину от 6-го марта 1921г., сообщая о содержании своих бесед с турками в вопросе территориальных уступок Турции со стороны РСФСР и решительно констатируя, что „большая часть Батумского округа остается за РСФСР”, а Карская область отходит к Турции, Сталин обращается также к

Нахичеванскому вопросу и заявляет, что „по вопросу о Нахичевани последнее слово предоставляется представителю Азербайджана”.

По поручению Сталина Шахтахтинский вел долгие переговоры с турками по вопросам Батума и Нахичевани и наконец убедил их, „что все споры об этих округах бесполезны”.

10-го марта конференция наконец приступила к официальному рассмотрению вопроса о границах. Российская делегация с самого начала заявила, что она готова признать турецкий „Национальный обет”, но требует произвести некоторое изменение границы, в частности в секторе Батума. После определения границы в секторе Батума конференция приступила к обсуждению вопроса о границах Армении, пожалуй, единственному вопросу, в котором Турция не шла на компромисс. Турки упорно настаивали на границах, определенных Апександропольским договором, считая их единственно верным решением вопроса. 10-го марта Чичерин вынужден был заявить, что „российское правительство не будет настаивать на проведении границы западнее Арпачая и южнее Аракса...”. Так был санкционирован отход Карской области и Сурмалинского уезда к Турции. Однако турки не удовлетворились этим и подняли вопрос о принадлежности Нахичевани. По заявлению Кемаль-бея, „в силу самого факта призвания населением турецких войск Нахичевань состоит под турецким покровительством. Тем не менее она согласна уступить это покровительство Азербайджану при условии получения от Азербайджана обязательства не уступать этого покровительства третьему государству”. Возражения Чичерина, что нельзя серьёзно говорить о покровительстве Турции над Нахичеванью, поскольку версия о призыве турецких войск не соответствует действительности, а Апександропольский договор не ратифицирован, и, наконец, обязательство возлагается на государство, которое не представлено на конференции, не увенчались успехом. Турки настаивали на своём, и последняя часть статьи о передаче Нахичевани под покровительство Азербайджана была сформулирована следующим образом: „при условии, что Азербайджан не уступит сего протектората третьему государству”, т. е. Армении.

Так Турция совместно с Азербайджаном осуществляла свою антиармянскую политику и добилась того, что Нахичеванский край также был отделён от Армении, завершив тем самым расчленение Армении. А когда 12-го марта на политической комиссии стали обсуждать границы Нахичевани, то выяснилось, что по настоянию турецких экспертов границы Нахичевани были определены по Апександропольскому договору, то есть к Нахичевани были присоединены не только Шарур-Даралагяз, но и южная часть бывшего Эри-

ванского уезда от станции Арарат до Волчьих Ворот (Гайли Друнк). Чичерин не мог согласиться с этим, т. к. с переходом этого треугольника к Нахичевани турки получают возможность установить общую границу с Азербайджаном. После многочасового спора стороны наконец пришли к компромиссному решению: точную границу установит комиссия из представителей Армении, Азербайджана и Турции.

Зная из опыта Московских переговоров о роли Шахтахтинского в деле решения судьбы Нахичевани, Чичерин даже пытался с помощью Армревкома отстранить Шахтахтинского от участия в вопросе определения границы между Нахичеванью и Арменией. 11-го апреля в телеграмме Шавердову и Атабекову Бекзадян предупреждал, что „вместе с Чичериным признаю необходимым, что по вопросу о Нахичевани, Шарур-Даралагязе представителем Азербайджана ни в коем случае не должен быть Шахтахтинский ...". А 12-го апреля в инструкциях Гусейнову Чичерин прямо указал, что граница между Арменией и Нахичеванью должна пройти у Волчьих Ворот (Гайли Друнк). Однако 7 мая при обсуждении на совещании в Баку Шахтахтинский, говоря о том, что „на вопрос Чичерина, где правильно провести границу Нахичевани с Арменией, он указал на Волчьи Ворота (Гайли Друнк)", но в конце добавил, что „было бы весьма рационально, если бы на месте провели точную и непререкаемую границу местные знающие товарищи", и когда был услышан ответ Бекзадяна о том, что он „не может указать точную границу в силу незнания местности", то по предложению Орджоникидзе совещание постановило: принять меры по изучению на месте представителями Азербайджана и Армении вопроса о правильном проведении границы в согласии с этнографическим принципом, а также с установившимися по этому вопросу взглядами местного населения". А это означало, что Азербайджан воспользуется этим, и определённая часть Треугольной зоны присоединит к Нахичевани.

Готовясь к конференции с Турцией, правительство Армении приняло два документа: 1. Меморандум, 2. Проект договора между Арменией и Турцией. Оба этих документов не датированы, но судя по содержанию, можно предположить, что Меморандум был составлен в апреле или в начале мая, а проект договора-уже после определения границы в Треугольной зоне (в июне или в начале июля). Об этом свидетельствует тот факт, что в Меморандуме выдвинуто предложение о передаче протектората над Нахкраем Армении. А в проекте договора указанная линия границы, разделяющая Армению от Нахичевани, точно совпадает с границей установленной на Карской конференции.

На конференции в Карее (26-го сентября - 13-го октября 1921г.) Турция

вновь продемонстрировала сущность своей антиармянской политики. Цепляясь за Московский договор, турки ни в одном вопросе, поднятом армянской делегацией, не шли на компромисс. Так были отвергнуты предложения о том, чтобы оставить в границах Армении развалины её средневековой столицы Ани, о концессии соляных копий Кульпы, о возвращении разграбленного имущества Апександропольского депо и т.д. Единственным вопросом, в котором турки проявили лояльность и не требовали создания комиссии из представителей Турции, Азербайджана и Армении для определения границы между Нахичеванью и Арменией, как об этом сказано в Московском договоре, был вопрос об установлении границы в Треугольной зоне. Как только Ганецкий объявил о решении этого вопроса между Арменией и Азербайджаном и добавил, что если турецкая делегация согласна, то вопрос можно считать законченным, Карабекир, не обсудив с товарищами и не поинтересовавшись установленными границами, в ответ объявил, что турецкая делегация принимает границы, установленные Азербайджаном и Арменией. Такое быстрое согласие Карабекира говорит о том, что он заранее знал, какая именно граница установлена. Он знал, что усилиями Шахтахтинского примерно половина Треугольной зоны оставлена Нахичевани (от станции Араздаян до Волчьих Ворот) и тем самым обеспечена общая граница Турции с Нахичеванью. И наконец, 3-го октября при оформлении статьи о передаче Нахичевани под протекторат Азербайджана выяснилось, что наряду с Арменией и Турцией упоминается и Азербайджан: „Правительство Турции и правительства Советской Армении и Азербайджана согласны, что Нахичеванская область образует автономную территорию под покровительством Азербайджана".

Чьей бы не была эта идея (Шахтахтинского или Карабекира), одно бесспорно: этой формулировкой Азербайджан по своим правам на Нахичевань приравнен к Армении и Турции.

E. A. Zohrabyan

NAKHIJEVAN PROBLEM IN 1920-1921

Summary

After the establishment of Soviet power in Azerbaijan (April 1920) Armenian-Azerbaijani relations became even more strained*. Capitalizing on the presence of the 11th Red Army, Azerbaijan took up the language of ultimatum, making an effort to resolve contentious territorial issues to its own advantage. Issues of territorial demarcations between Armenia and Azerbaijan were considered at Russian-Armenian talks in the summer (June-July) of 1920. The archives materials as well as the "Memoires" of a member of the Armenian delegation A. Terteryan reveal that the Russian government was not inclined to satisfy the territorial claims of Azeri nationalist leaders. At the beginning of the talks People's Commissar for Foreign Affairs G. Chicherin suggested a draft on the issue of the disputed regions ("Karabakh – disputable, Zangezur and Nakhijevan – to Armenia"). However, he was obliged to alter his position late in June and propose a new draft "Karabakh to Azerbaijan, Zangezour – arguable, Nakhijevan – to Armenia". However, this draft was not implemented either. Azerbaijan and Kemalist Turkey insisted on not signing an agreement with Armenia and early in July the negotiations were suspended: with an intention to resume in Yerevan. Despite such an outcome the negotiations reveal that in the summer of 1920 Moscow's position on Nakhijevan being an integral part of Armenia was quite firm.

After the suppression of the Bolshevik May Revolt, the government of Armenia embarked on the fulfillment of the tasks necessary for strengthening the internal situation in the Republic. Among such tasks were considered the subjugation of the Azeri-populated rebellious regions (Zangibasar, Vedibasar, Sharur-Nakhijevan) which had armed, formed combatant squads and refused to recognize the authorities of the Republic. Having received no response the government sent troops and

* The previos works (*"The Intestine War in the Province of Yerevan, 1918"*, Yerevan, 2000 and *"The Nakhijevan Issue and "Allies" of Armenia (1918-1920)",* Yerevan, 2002) of the autor describe the events that resulted the end of the genocide of the native people - Armenians in Historical Nakhijevan. Actually, a real genocide with all its manifestations was carried out. It had began during the Turkish occupation in 1918.

mopped up the region. The same happened in Vedibasar: the Armenian forces launched an offensive on July 11, on July 12 they occupied the whole region, on July 14 crossed the Wolves' Gates (Gaili Drunk) and entered Sharur region. The defeated Turkish detachment got over the right bank of the Araks, while the Azeri cavalry and local armed forces retreated to the town of Nakhijevan. Having lost the possibility of resistence, the authorities of Nakhijevan resorted to cunning: they started talks with the Armenian government on the conditions of the recognition of its authority and at the same time proclaimed Soviet power and turned to the Red Army in Zangezur. On July 28 the advanced detachments of the Red Army entered Nakhijevan and on July 30 the commanders of the Armenian troops were ordered to halt the further attack. The Nakhijevan operation which had started so successfully came to an end.

The issue of Sharur-Nakhijevan was one of the major issues at Russian-Armenian talks in the summer of 1920. According to the August 10 agreement between Armenia and Russia signed in Tiflis on August 10 it was settled that the disputed territories of Karabakh, Zangezur and Nakhijevan would be deployed by Russian troops while Sharur would remain in the territory of Armenia until the final decision at a joint Azerbaijani-Armenian conference with the participation of a Russian envoy.

Armenia was also granted the right to exploit the railway route Shakhatakhty – Julfa. However, such a decision was acceptable neither to Baku nor Ankara. Under the pretext of establishing direct connection between Kemalist forces and the Red Army in Nakhijevan, they persistently required deployment of Russian or Turkish forces in Shakhtakhty. On August 14 the head of the Turkish delegation Bekir Sami-Bey insistently required Lenin to give at least his verbal consent to deployment of Turkish forces on the Armenian territories of Shakhtakhty and Sarikamish. On Lenin's behalf Chicherin discussed by telegraph the issue with Orjonikidze and Kirov and gave the Turkish delegation a positive response on September 23. Taking advantage of this opportunity the Turkish forces struck an offensive against the Republic of Armenia.

The problem of the territories disputed between Armenia and Azerbaijan stood particularly acute during the October talks of B. Legran with the government delegation of Armenia in Yerevan. The talks were concluded on October 28. A peace treaty between the RSFSR and the Republic of Armenia was drafted and they signed a protocol of the final resolution, one of the provisions of which stated that "the governments of RSFSR and ASSR recognize the inalienable rights of the Republic of Armenia on the territories of the disputed regions of Nakhijevan and Zangezur and will withdraw from the above territories their forces that are under

the control of the RSFSR and ASSR. However, the joint meeting of Politbureau of the Central Committee of ACP and the Caucausian Bureau of RCP with the participation of Stalin disapproved of the draft agreement and charged Stalin to hold talks with Moscow on the above issue. On November 5 a telegram, bearing signatures of Stalin and Orjonikidze was sent to Moscow; it stated that the draft agreement could not be immediately signed and needed thorough consideration as well as considerable alteration. This telegram put an end to the draft agreement between the RSFSR and the Republic of Armenia, drawn up in Yerevan.

The Turkish-Armenian war, unleashed by the Kemalists against the Republic of Armenia at the end of September of 1920 ended with the defeat of Armenia on November 18. The government of Ohanjanyan was obliged to accept harsh conditions of the ceasefire; it also had to agree to convene a conference in Alexandrapol in order to work out peace conditions and sign an agreement. The territorial demarcation issues were the main and the most painful issues at Alexandrapol conference (November 25 - December 2). The conference was planned in advance according to the scenario of the Kemalist diplomacy. Taking advantage of the desperate condition of the Republic of Armenia the Kemalists imposed excessively harsh peace conditions. Armenia was forced not only to renounce the Treaty of Sevres but also yield Kars region and Surmalu district to Turkey. The latter was not satisfied with this dismemberment and forced Armenia to yield Sharur-Nakhijevan as well, which passed under the protectorate of Turkey. Seizure of Sharur-Nakhijevan from Armenia was the result of the Azerbaijani-Turkish anti-Armenian policy.

The so-called Declaration of Narimanov (December 1, 1920) on the transfer of the disputed territories to Armenia was nothing but an act of propaganda, whose aim was to contribute to the establishment of the Soviet power in Armenia. In fact, the Azerbaijani authorities never renounced the idea of joining Karabakh, Zangezur and Nakhijevan to Azerbaijan. The only change was in the methods resorted to achieve the goal. Narimanov and the circle of people around him resorted to such means as the oil, blackmail (in case of Karabakh), bribary of authorities (in case of Zangezur), kindred Turkey (in case of Nakhijevan).

Soon after the publication of the declaration, a member of Azrevkom B. Shakhtakhtinsky arrived in Nakhijevan and together with the commander of the Turkish squad Veisel-Bey launched a broad anti-Armenian propaganda among the population of the region. At a meeting convened in Nakhijevan Shakhtakhtinsky announced, “You were sold by Azerbaijan. If I had been in Baku, I would not have allowed that. Now you should regard Turks. They are your only salvation. Hold fast to them”.

Reliable archives materials reveal that carrying out intensive anti-Armenian

propaganda among the population, forbidding any communication between Yerevan and Nakhijevan in January-February 1921 the Turkish agents of Veisel Bey organized a number of anti-Soviet mutinies in different parts of the region (in Nakhijevan, in the villages Jagry, Tirkesh, Karachuk, et.), aimed at seizing power declaring the unification of the region with Turkey and thus confronting the Moscow Russian-Turkish conference with a fait accomli.

Although due to the conclusion of the Alexandrapol Treaty and the sovietization of the rest of the republic Armenia was actually divided between Turkey and Soviet Russia the final devision was accomplished only by the Moscow Russian-Turkish Agreement on “friendship and fraternity”. The blind faith in the mendacious announcements of Turkish nationalists about their readiness to fight against western imperialism together with the urge to keep the Turks on their side at all costs led the soviet leadership to meet them halfway in all issues (political, economic, etc.). the territorial claims of the Turks were fully satisfied at the expense of Armenia behind its back.

I. Stalin was the godfather of the Moscow Agreement. Vexed issues (the territorial ones in particular were resolved) through his secreet negotiations with Turkish delegates rather at the plenary sessions of the conference. In his letter to Chicherin (March 6 1921) Stalin informed the latter about the contents of his talks with Turks on the issue of territorial concessions to Turkey on the side of RSFSR, stating firmly that “the greatest part of Batum region remains to RSFSR while Kars region goes to Turkey”. As regards the Nakhijevan issue, Stalin states that “the last word on the Nakhijevan issue belongs to the government of Azerbaijan”.

On behalf of Stalin Shakhtakhtinsky held long negotiations with Turks on the issues of Batum and Nakhijevan and finally convinced them “that all disputes on these regions are useless”.

On March 10 the conference finally started the formal consideration of the borders issue. At the very outset the Russian delegation announced that it was ready to admit Turkish “national vow” but demanded certain changes of borders, particularly in Batum area. Having defined borders in Batum area the conference proceeded to discuss the issue of the borders of Armenia, perhaps the only issue regarding which Turkey rejected any concession. The Turks stubbornly insisted in the borders settled by Alexandrapol Treaty considering them the only right solution. On March 10 Chicherin was obliged to announce that “the Russian government will not insist on extending borders to the West of Arpachay and to the south of Araks”. Thus transition of Kars region and Surmalu district to Turkey was sanctioned. However, the Turks were not yet satisfied and raised a question on Nakhijevan ownership. According to Kemal Bey “by virtue of the fact of the population’s summoning

the Turkish troops, Nakhijevan is under the patronage of Turkey. Nevertheless, Turkey consents to yield the patronage to Azerbaijan on one condition: Azerbaijan should pledge not to yield patronage to a third country". Chicherin objected that it was not serious to speak about the Turkish patronage over Nakhijevan, as the population's summoning the Turkish troops was not true, the Alexandrapol Treaty was not ratified and finally the obligation rested with the state which was not presented at the conference. However, his objections did not yield success and the final part of the provision on the transition of Nakhijevan under the patronage of Azerbaijan was formulated as follows "on condition, that Azerbaijan should not yield the above protectorate to a third state", i.e. to Armenia.

Thus Turkey, together with Azerbaijan, accomplished their anti-Armenian policy and ensured the separation of Nakhijevan region from Armenia. Hence the dismemberment of Armenia was accomplished. When on March 12 the borders of Nakhijevan were considered at the political commission, it turned out that under the pressure of Turkish esperts the borders of nakhijevan were defined according to Alexandrapol Treaty, i.e. not only Sharur Daralagyaz, but also the southern part of the former Erivan district (from Ararat station to Wolves' Gates - Gaili Drunk) were joined to Nakhijevan. Chicherin could not agree to this, as with the transition of that triangle to Nakhijevan the Turks were getting an opportunity to establish common frontiers with Azerbaijan. After a dispute that lasted for many hours the sides finally came to a compromise decision: the exact borders were going to be defined by a committee consisting of representatives of Armenia, Azerbaijan and Turkey.

Arising from the experience of the Moscow talks about Shakhtakhtinski's role in the fate of Nakhijevan Chicherin even tried by the help of Armrevcom to remove Shakhtakhtinsky from participation in proceedings related to border determination between Nakhijevan and Armenia. On April 11 in the telegram to Shaverdov and Atabekov Bekzadyan warned: "like Chicherin I consider it necessary that regarding the issue of Nakhijevan, Sharur Daralagyaz Shakhtakhtinsky be not the representative of Azerbaijan on any account". On aparil 12 Chicherin directly instructed Huseinov that the borderline between Armenia and Nakhijevan should be drawn at Wolves' Gates (Gaili Drunk). However, on May 7, while discussing the matter at the meeting in Baku, Shakhtakhtinsky referred to Chicherin's instruction on graw-ing the border at Wolves' Gates (Gaili Drunk) and then added that it would be most rational to have the accurate border drawn by local competent people. Bekzadyan replied that he "couldn't specify the accurate borderline " due to the lack of knowledge of the area. Then, in accordance with Orjonikidze's proposal, the meeting made a resolution: make arrangements for the place to be studied by the representatives of Azerbaijan and Armenia and draw the border in accordance with ethnographic principles, as well as with the established views of the local populations on the matter. This meant that Azerbaijan would take advantage of that and would join part of the Triangle Zone to Nakhijevan.

Getting ready for the conference with Turkey the government of Armenia adopted two documents: 1. Memorandum, 2. Draft agreement between Armenian and Turkey. Neither of the documents bears a date. However, judging from the contents, one can assume that the memorandum was drafted in April or early May and the draft agreement – in June or early July (after the border at the Triangle Zone was defined). This is evidenced by the fact that the memorandum proposes to transmit the protectorate Nakhijevan region to Armenia while the borderline dividing Armenia and Nakhijevan, mentioned in the draft agreement fully coincides with the one worked out at the Kars conference.

At the conference in Kars (September 26 – October 13 1921) Turkey once again demonstrated the essence of its anti-Armenian policy. Clinging to the Moscow Agreement the Turks did not make compromises on any of the issues raised by the Armenian delegation. The proposal to leave the ruins of the medieval capital Ani in the territory of Armenia was rejected together with a number of others. The only issue around which the Turks demonstrated loyalty and did not demand a commission of representatives of Turkey, Azerbaijan and Armenia for defining the border between Nakhijevan and Armenia was the issue of defining the borderline in the Triangle Zone. As soon as Hanetzki announced about the decision of the mentioned issue between Armenia and Azerbaijan, adding that the Turkish delegation did not mind, the matter could be considered resolved, Karabekir, without any consultations with his colleagues, announced that the Turkish delegation accepted the borders drawn by Azerbaijan and Armenia. Karabekir's hasty agreement proves that he knew beforehand what border had exactly been drawn. He knew that thanks to Shakhtakhtinsky's efforts about half of the Triangle Zone was given to Nakhijevan (from Arazdayan station to Wolves' Gates - Gaili Drunk), thus providing a common border of Turkey with Nakhijevan. And finally, on October 3, while formulating the provision on transfer of Nakhijevan under protectorate of Azerbaijan it turned out that, along with Armenia and Turkey, Azerbaijan was mentioned as well. "The government of Turkey and the governments of Soviet Armenia and Azerbaijan agree that Nakhijevan region forms an autonomous territory under the protectorate of Azerbaijan".

Regardless of the author of the idea (be it Shakhtakhtinsky or Karabekir) one thing is doubtless: this formulation equals Azerbaijan with Armenia and Turkey as regards its rights over Nakhijevan.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ.....5

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1920 Թ. ՄԱՅԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ).....7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Ադրբեջանի խորհրդայնացումը և վիճելի տարածքների հարցը հայ-ադրբեջանական և Մոսկվայի ռուս-հայկական բանակցություններում: Շարուրի վերամիավորումը Հայաստանին (1920թ. մայիս-հուլիս).....9

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Նախիջևանյան հիմնահարցը Թիֆլիսի օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրում և Մոսկվայի ռուս-թուրքական առաջին կոնֆերանսում 81

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Իրադրությունը Շարուրի ճակատում Թուրք-հայկական պատերազմի չրջանում: Նախիջևանյան հիմնահարցը Ալեքսանդրապոլի կոնֆերանսում 149

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՇԱՐՈՒՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ - 1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ) 221

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ
Իրադրությունը Շարուր-Նախիջևանում Հայաստանում խորհրդային իշխանության առաջին ամիսներին: Թուրք-ադրբեջանյան հակահայկական և հակախորհրդային խժդժությունները (1920թ. դեկտեմբեր-1921թ. փետրվար).....223

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
Նախիջևանյան հիմնահարցը Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում 269

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
Նախիջևանի խնդիրը Կարսի կոնֆերանսում 351

ՎԵՐՋԱԲԱՆ 408

Зограбян Э. А. - Нахичеванская проблема в 1920-1921 гг. (РЕЗЮМЕ).....413
E. A. Zohrabyan - Nakhijevan Problem in 1920-1921 (Summary).....420

ԶՈՀՐԱԲՑԱՆ ԷԴԻԿ ԱՐՏԵՄԻ

ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
1920 Թ. ՄԱՅԻՍ – 1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հրատ. խմբագիր՝ **Լ. Գ. Մանուկյան**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բղոյան**
Կազմի ձևավորումը՝ **Կ. Հ. Ավագյանի**
Համակարգչային ձևավորումը՝ **Ա. Աղուզումցյանի**

Ստորագրված է տպագրության 06.12.2010 թ.:
Չափսը 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Հրատ. 25.0 մամուլ, տպագր. 26.8 մամուլ + 1 թ. ներդիր,
պայմ. 24.9 մամուլ: Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 101:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52